



ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐՐՈՐԴ. ԳԻՐԺ



Ե Ր Ե Ղ Ա Ն





ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891-99.09 (075)

Հ-94

ՅՅՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐՐՈՐԴ ԴԻՐՔ

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՋԵՌՆԱՐԿ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՅԻ

X ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

Հաժանություն է ստացել Հայկական ՍՍՌ Լուսավորության
մինիստրության կողմից

85/30
A $\frac{\pi}{31310}$



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԱ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1954

Տղազբվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Նախագահության որոշմամբ:

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿԻ ԵՐՐՈՐԴ ԴԻՐՔԸ ԴԻՆԷԼ ՆՆ.

Պրոֆ. **Հ. Մելիքյան** (Ներածություն, ֆիլ. դիտ. թեկնածուներ Ա.ս. Ասատրյան («Հակոբ Հակոբյան»), Ա. Խնկիլյան («Սովետական գրականությունը ժողովրդական տնտեսության վերականգնման և ինդուստրացման տարիներին»), Գ. Ստեփանյան («Մովսես Արագի»), պրոֆ. Ն. Դսլաբյան («Եղիշե Չարենց»), ֆիլ. դիտ. թեկնածուներ Ա. Ջաֆարյան («Սովետահայ գրականությունը առաջին հնդավյակների տարիներին»), Էդ. Խոփչյան («Դերենիկ Դեմիրճյան», «Ստեփան Ջորյան»), և Գյուլնազարյան («Սովետահայ գրականությունը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին»), Ս. Աշաբաբյան («Նաիրի Ջորյան», «Սովետահայ գրականությունը հետպատերազմյան ժամանակաշրջանում»), Ս. Մանուկյան («Դեղամ Սարյան»):

Խմբագրությամբ

Է.Գ. ԹՈՓՉՅԱՆԻ, Ջ. ՂՈՒԿԱՍՅԱՆԻ, Ս. ԱՂԱՐՍՏՅԱՆԻ

АРМЯНСКАЯ ЛИТЕРАТУРА

Пособие для 10 класса

средних школ

Книга третья

СОВЕТСКАЯ ЛИТЕРАТУРА

(На армянском языке)

Изд. Академии наук Армянской ССР

Ереван — 1954

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեոլյուցիան արմատական շրջադարձ էր մարդկության պատմության մեջ:

Հոկտեմբերյան ռեոլյուցիայի տարբերությունը անցյալի ռեոլյուցիաներից այն է, որ Հոկտեմբերյան ռեոլյուցիան ոչ թե փոխարինեց շահագործման մի ձևը մի ուրիշ ձևով, այլ ոչնչացրեց մարդու կողմից մարդու ամեն մի շահագործում, ոչնչացրեց շահագործող դասակարգերը, հաստատեց պրոլետարիատի դիկտատուրա, սկիզբ դրեց կոմունիստական հասարակարգի կառուցմանը:

Հոկտեմբերյան ռեոլյուցիան հեղաշրջում էր ժողովրդի ոչ միայն նյութական-տնտեսական կյանքի, այլև հոգևոր կուլտուրայի մեջ, արվեստի և գրականության մեջ:

Դեռևս 1905 թ. գրած «Պարտիական կազմակերպություն և պարտիական գրականություն» աշխատության մեջ Վ. Ի. Լենինը հանճարեղ կերպով բացահայտել է սոցիալիստական գրականության ուղղությունը և խնդիրները:

«Այդ ազատ գրականություն կլինի,— գրել է Վ. Ի. Լենինը,— որովհետև ո՛չ թե շուրջ և ո՛չ էլ կարիերան, այլ սոցիալիզմի գաղափարը և դեպի աշխատավորությունը տաժած համակրանքը նորափոր տված կհավաքագրեն նրա շարքերը: Այդ կլինի ազատ գրականություն, որովհետև նա կծառայի ո՛չ թե հագեցած հերոսուհուն, ո՛չ թե ձանձրացող ու ճարպակալումից տառապող «վերին տաք հա-

վարին», այլ միլիոնավոր ու տասնյակ միլիոնավոր աշխատավորների, որոնք երկրի ծաղիկը, նրա տեժը, նրա ապագան են կազմում: Այդ կլինի մարդկության ռեկուլցիտն մոթի վերջին խոսքը առցիալիստական պրոլետարիատի փորձով ու կենդանի աշխատանքով բեղմնավորող ազատ գրականություն...»¹:

Լենինի պահանջը ժողովրդի շահերը արտահայտող ռեկուլցիտն գրականություն ստեղծելու մասին՝ լայնորեն կենսագործվեց Հոկտեմբերյան ռեկուլցիայի հաղթանակից հետո:

Սոցիալիստական ռեկուլցիայի հաղթանակով ստեղծարար աշխատանքի կոշված ժողովրդական մասսաների շարքերից առաջ եկան գրողները և արվեստագետների նորանոր կազմերը:

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը, կատարելով Լենինի ավանդը, բոլոր պայմաններն ստեղծեցին սովետական երիտասարդ գրականության ծաղկման համար:

Սոցիալիզմի կառուցման տարիներին Կոմունիստական պարտիայի ղեկավարության և ամենօրյա հոգատարության շնորհիվ սովետական գրականությունն արագ աճեց և սլատմական շատ կարճ ժամանակամիջոցում դարձավ աշխարհի ամենաառաջավոր և ամենաբարձրարվեստ գրականությունը:

Ծառայելով սոցիալիզմի կառուցման մեծ գործին, սովետական գրականությունը օգտագործեց կլասիկ գրականության լավագույն տրադիցիաները և աճեց ու ձևավորվեց իբրև բուրժուական նոր որակի գրականություն, լենինիզմի գաղափարներով տոգորված, կոմունիստական պարտիականության, սովետական հայրենասիրության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի գրականություն: Սովետական գրականությունը մշակեց ստեղծագործական նոր սկզբունքներ և մարդկության գեղարվեստական զարգացումը բարձրացրեց նոր աստիճանի:

**Սովետական գրականության հիմքը
սոցիալիստական
իրականությունն է**

Սովետական գրականության համաշխարհային նշանակությունը այն է, որ նա ճշմարտացիորեն արտացոլում է աշխարհի ամենադեմոկրատական հասարակարգի՝ սովետական հասարակարգի առաջընթացը, սովետական

մարդկանց հերոսական պայքարը կոմունիզմի կառուցման համար:

¹ Վ. Ի. Լենին, Ծրկեր, հատոր 10, էջ 44—45:

Նոր է սովետական գրականության պատկերած իրականությունը, նոր է նրա թեմատիկան, նոր են նրա հերոսները: Սովետական գրականությունը պատկերում է սոցիալիզմի բոլոր հաղթանակները նվաճողին՝ սովետական մարդուն:

Սոցիալիզմը ազատագրեց աշխատանքը: Աշխատավոր ժողովուրդը, իր ձեռքը վերցնելով պետության դեկը և դառնալով երկրի նյութական հարստության տերը, երկիրը վերակառուցողը, աշխատանքային աշխարհի սխրագործություններ կատարեց, որոնց նմանը հասարակական ուրիշ սիստեմում երեւակայել անգամ չէր կարելի: Կոմունիստական շաքաթօրյակները, հարվածաչնություն և ապա առաջավորների շարժումը նշանավորեցին աշխատանքային իսկական հերոսականության դարազլուխը մարդկության պատմության մեջ:

Սովետական գրականությունը պատկերում է սոցիալիստական աշխատանքի մեջ վերափոխվող մարդուն, աշխատանքի հմայքը և դեղեցկությունը, աշխատանքը ներկայացնում է իբրև փառքի, պատվի և արիության դործ: Այն ցույց է տալիս, որ անհատն իր երջանկությունը գտնում է սովետական հասարակության և Հայրենիքի համար կատարած աշխատանքի մեջ:

Սովետական գրականությունը հաստատում է սոցիալիզմի առավելությունը կապիտալիզմի հանդեպ, ցույց տալով, որ սոցիալիզմը անհատի շահերը համատեղել է կոլեկտիվի շահերի հետ և դրանով իսկ անհատի դարգացման համար բացառիկ պայմաններ ստեղծել:

Սովետական գրականությունը արտացոլում է Սովետական Միության ժողովուրդների բարեկամությունը, նրանց փոխադարձ նվիրվածությունը, միասնական պայքարը կոմունիզմի համար՝ ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ:

Սովետական գրականությունը պատկերում է Կոմունիստական պարտիայի ղեկավար դերը մեր բաղմազգ սոցիալիստական պետության ստեղծման ու կոմունիզմի կառուցման գործում, ցույց է տալիս պարտիայի և ժողովրդի միասնությունը, պարտիայի իմաստուն ղեկավարությամբ ձեռք բերված համաշխարհային հաղթանակները մեր երկրի տնտեսության, գիտության և կուլտուրայի բնագավառներում:

Սովետական գրականության առաջ մղող գաղափարը սովետական հայրենասիրությունն է:

Մենք իրավունք ունենք հպարտանալու և հպարտանում ենք նրանով, որ մեզ է հրջանկություն վիճակվել սկսել Սովետական պետության կառուցումը, զբանով իսկ սկսել համաշխարհային պատմության նոր դարադրույթը,— ասել է մեր մեծ աւսուցիչ Վ. Ի. Լենինը:

Պատկերելով սոցիալիզմ կառուցող մարդու սոցիալիստական վերածնությունը աշխատանքի մեջ, սովետական գրականությունը անուղեք պայքար է մղում բուրժուական անհատապաշտության, կարիերիզմի և ազգային սահմանափակության դեմ, օգնում մարդկանց շինտակցությունից կապիտալիզմի մնացուկների վերացմանը, սոցիալիստական հոգեբանության և բարոյականության ամրապնդմանը:

**Սովետական
գրականության
կոմունիստական
պարտականությունը**

Սովետական գրականության ղեկավար սկզբունքը կոմունիստական պարտականությունն է:

Գրականության պարտականությունն սկզբունքը Վ. Ի. Լենինը լուսաբանում է «Պարտական կոմունիստականության և պարտական գրականության» նշանավոր հոդվածում: Լենինը ցույց է տվել, որ բուրժուական գրողներն ու տրվեստագետները կեղծում են, երբ ասում են, թե գեղարվեստական ստեղծագործությունը չի ենթարկվում հասարակական կյանքի ուղղեցությունը, վեր է կանգնած դասակարգերից ու դասակարգային պայքարից, և իրենք իրեն թե «ազատ ստեղծագործողներ» լինելով՝ «կախումն չունեն» շահագործող դասակարգերից, ծառայում են «մարտ» արվեստին: Վ. Ի. Լենինը գրում է. «Փողի իշխանության վրա հիմնված հասարակության մեջ, այն հասարակության մեջ, որտեղ աղքատության և մատնված աշխատավորության մասնանները և պարտաբեկություն են առնում մի բոլոր հարուստներ, չի կարող իրական և իսկական «ազատություն» լինել»: Վ. Ի. Լենինն ընդգծում է, որ «Հասարակության մեջ ապրել և հասարակությունից ազատ լինել չի կարելի: Բուրժուական գրողի, գեղարվեստագետի, գերասանահոսագետությունը լոկ քողարկված (կամ կեղծավորաբար քողարկվող) կախումն է փողապարկից, կաշառոտից, ռոճիկից»¹:

Խմայերիալիզմի դարաըջանում բուրժուազիան իր ռեալիզմի քաղաքականությամբ բացարձակապես ավերում է իսկական գրականությունը և արվեստը:

¹ Վ. Ի. Լենին. Երկեր, հատոր 10, էջ 44:

Դիմականներն անելով բուրժուադիայի քաղաքականությունը դրականության բնագավառում և առաջադրելով ռեուլյուցիոն պրոլետարիատի հետ բացահայտորեն կապված գրականություն և արվեստ ստեղծելու հանճարեղ ծրագիրը, ինչինը գրել է. «Գրականությունը պետք է դառնա պարտիական: Որպես հակակշիռ բուրժուական բարքերին, որպես հակակշիռ բուրժուական ձեռնարկատիրական, շարժիական մամուլին, որպես հակակշիռ բուրժուական գրական կարիերիզմին ու ինդիվիդուալիզմին, «աղայական անարխիզմին» և շահամուլությանը, — սոցիալիստական պրոլետարիատը պետք է առաջադրի պարտիական գրականության սկզբունքը, զարգացնի այդ սկզբունքը և հնարավորության չափ ավելի լրիվ և ավելի ամբողջական ձևով կենսագործի այն»¹:

Գրականության պարտիականության լենինյան սկզբունքը սուլոբունում է, որ գլխական գործը չի կարող լինել առանձին գրողի անհատական գործ, նա պետք է դառնա պրոլետարիատի ռեուլյուցիոն պարտիայի հիմնական աշխատանքի բաղադրացի մասը, պարտիական աշխատանքի մյուս, մասերի հետ անխզելիորեն կապված մի օղակը: Գրականությունը պետք է արտահայտի ռեուլյուցիոն, կոմունիստական աշխարհայացքը, հագեցված լինի առաջավոր պարտիական դադարիարեներով, պետք է ծառայի միլիոնավոր աշխատավորներին:

Այսպիսով, գրականության պարտիականության լենինյան սկզբունքը պաշտպանում է գրականության ամենալարժք ժողովրդայնության գաղափարը, հաստատում է, որ գրականությունը աշխատավորական լայն մասսաների սեփականությունն է և դաստիարակելով ջրանց կոմունիստական ոգով, դառնում է կյանքի ռեուլյուցիոն վերափոխման հզոր զենք: Կոմունիստական պարտիականությանը հագեցված գրականությունը նոր դարագլուխ է ակում մարդկության գեղարվեստական զարգացման պատմության մեջ:

Աշակելով գրականության պարտիականության սկզբունքը, ինչինը միաժամանակ ընդդեմ է գեղարվեստական ատեղծագործության յուրահատկություններու: «Անվիճելի է, — գրել է ինչինը, — որ գրական գործն ամենից քիչ է ենթարկվում մեքենայական հավասարեցման, համահարթման, մեծամասնության գերիշխանությանը փոք-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 10, էջ 40:

բամասնության վերաբերմամբ: Անվիճելի է, որ այս գործում անուղա-
ման անհրաժեշտ է ապահովել անձնական նախաձեռնության, ան-
հատական հակումների առավել ազատութիւնը, մաքի ու երևակա-
լության, ձևի ու բովանդակութեան ազատութիւնը»¹:

Գրականութեան պարտիականութեան սկզբունքի բացահայտումով
լինինը մարքսիստական էսթետիկան բարձրացրել է նոր աստիճանի:

**Սովետական գրա-
կանութեան մերօր
սոցիալիստական
ռեալիզմն է**

Ընդհանրացնելով սովետական գրականու-
թեան փորձը և զարգացման առանձնահատ-
կութիւնները, Ի. Վ. Ստալինը ցույց է տվել, որ
այդ մեթոդը սոցիալիստական ռեալիզմն է:

Սոցիալիստական ռեալիզմի հիմքը դրել է
Մաքսիմ Գորկին դեռևս նախասովետական ժամանակաշրջանում:
Կանգնած լինելով բանվոր դասակարգի ռեուլյուցիոն պայքարի դիրքի-
քում, Գորկին հիմնադրեց պրոլետարական գրականութիւնը, իր երկե-
րում ճշմարտացի պատկերելով նոր աշխարհի համար կռիւղների հե-
րոսական պայքարը:

«Մայրը» վեպում Գորկին կերտեց բանվոր ռեուլյուցիոններների
կերպարները՝ գեղարվեստական կենդանի պատկերների միջոցով ցույց
տալով, որ շահագործող դասակարգերը, որքան էլ կատաղորեն կռվեն
ռեուլյուցիայի դեմ, դնում են դեպի կործանում, և ապագան պատկա-
նում է ժողովրդին, Պավել Վլասովի դասակարգին: «Մայր» վեպը սո-
ցիալիստական ռեալիզմի գրականութեան ցայտուն արտահայտութիւնն
էր: Այդ նույն շրջանում հայ գրականութեան մեջ սոցիալիստական
ռեալիզմի սկզբնավորողը բանաստեղծ Հակոբ Հակոբյանն էր:

Սակայն սոցիալիստական ռեալիզմի մեթոդի հաստատումը, նրա
հիմնական սկզբունքների դրսևորումը և թշուրեղացումը կատարվեց
Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեուլյուցիայի հաղթանակից
հետո, սոցիալիստական շինարարութեան պրոցեսում:

Ո՞րն է սոցիալիստական ռեալիզմի մեթոդի էությունը:

Սովետական Գրողների Միութեան Կանոնադրութեան մեջ աս-
ված է.

«Սոցիալիստական ռեալիզմը լինելով սովետական գեղարվես-
տական գրականութեան և քննադատութեան հիմնական մեթոդը, ար-
վեստաբանից պահանջում է իրականութիւնը պատկերել ճշմարտա-
ցի, պատմականորեն կոնկրետ՝ իր ռեուլյուցիոն զարգացման մեջ:

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 10, էջ 41:

Հետո այդմ, իրաւանութեան գեղարվեստական պատկերման ճշմարտացիութիւնը և պատմական կոնկրետութիւնը պետք է զուգորդեն աշխատավորներին սոցիալիզմի ոգով գաղափարապէս վերափոխելու և դաստիարակելու խնդրի հետ»:

Սովետական դրողների համամիութենական առաջին համագումարում Ա. Ա. Ժդանովն իր ելույթում բացատրելով սոցիալիստական ռեալիզմի հիմնական դժերը, ասաց, որ սոցիալիստական ռեալիզմը պահանջում է լավ ճանաչել կյանքը, իրականութիւնը պատկերել ոչ թե մեռած, սխալաստիւթիւն, ոչ թե իբրև «օբյեկտիվ ռեալականութիւն», այլ իր ռեալիտետի զարգացման մեջ:

Սոցիալիստական ռեալիզմը գրողից պահանջում է պատկերել սովետական հասարակութեան տիպական մարդկանց, ստեղծել նրանց վառ կերպարները, վեր հանել նրանց հոգեւոր քաղձը հասկնալիութիւնները, ցույց տալ նրանց կոմունիզմի շինարարների մարդկային արժանապատիւթեան ամբողջ վեհութեամբ, այնպէս, որ նրանք արժանի լինեն օրինակ դառնալու:

Մարքսիստական-լենինյան էսթետիկայի այս հիմնական դրույթի էութեանն իր ամբողջ խորութեամբ պարզաբանել է ընկեր Մալենկովը պարտիայի XIX համագումարում տված զեկուցման մեջ: «Մեր նկարիչները, դրողները, արվեստի աշխատողները, — ասել է ընկեր Մալենկովը, — կերպարներ ստեղծելու փրենց առեղծագործական աշխատանքներում պետք է մշտապէս հիշեն, որ տիպական է ոչ միայն այն, ինչ ամենից հաճախ է հանդիպում, այլ այն, ինչ առավելագույն լիակատարութեամբ ու սրութեամբ է արտահայտում տվյալ սոցիալական ուժի էութիւնը: Մարքսիստական-լենինյան հասկացողութեամբ տիպականը ամենեւին էլ չի նշանակում ինչ-որ վիճակադրական միջին: Տիպականութեւնը համապատասխանում է տվյալ սոցիալ-պատմական երևույթի էութեանը, այլ ոչ թե պարզապէս հանդիսանում է ամենից ավելի տարածված, հաճախ կրկնվող, սովորական երևույթ: Կերպարը դիտակցաբար չափազանցելը, սրելը, չի բացառում տիպականութիւնը, այլ ավելի լրիվ է բացահայտում և ընդգծում այն: Տիպականը ռեալիստական արվեստի մեջ պարտիականութեան դրսևորման հիմնական ոլորտն է: Տիպականութեան պրոբլեմը միշտ էլ քաղաքական պրոբլեմ է»:

Սոցիալիստական ռեալիզմը գրողից պահանջում է մերկացնել կեղծ մարդկանց, խարաղանել հասարակութեան մեջ տեղ գտած

արատները, պայքարել մարդկանց պիտակցութեան մեջ կապիտալիզմի մնացորդները հաղթահարելու համար:

Իրականութեան ճշմարտացի պատկերման սկզբունքը սոցիալիստական ռեալիզմը ժառանգել է անցյալի ռուս կլասիկ դրականութեան ից Լ. մյուս ժողովուրդների դրականութեաններից, վարդապետելու ու նոր բովանդակութեան տալով այդ սկզբունքին:

Սոցիալիստական ռեալիզմի մեթոդի հիմքը մարքսիզմ-լենինիզմի աշխարհայացքն է, Կոմունիստական պարտիայի աշխարհայացքը: Սոցիալիստական ռեալիզմը նպահանջում է յայնքն արտացոլել մարքս-լենինյան ուսմունքի լույսի տակ, Կոմունիստական պարտիականութեան դիրքերից: Այս մեթոդով սովետական դրականութեանն ստեղծեց բազմաթիվ բարձրարժեք երկեր, որոնք ջերմ ընդունելութեան դոտան մեր ժողովրդի մեջ: Այդպիսի երկեր են, օրինակ, Վ. Մայակովսկու «Լենին», Հ. Հակոբյանի «Բոլշևիկ է Շիր-Կանալը», Ե. Ջարենցի «Լենինն ու Ալին» պոեմները, Դ. Ֆուրմանովի «Չապաև»-ը, Ա. Ֆադեևի «Ջախջախում»-ը և «Նրիտասարդ գլարդիա»-ն, Վ. Ատաևի «Մոսկվայից հեռու»-ն, Մ. Բուբենովի «Սպիտակ կեչի»-ն, Մ. Շոլոխովի «Հերկած խոպան»-ը, Պ. Պալլենկոյի «Նրջանկութեան»-ը, Գ. Նիկոլաևայի «Հունձ»-ը, Ն. Ջարյանի «Հացաւան»-ը և այլն:

Սոցիալիստական ռեալիզմի պահանջը՝ իրականութեանն իր ռեալիստիկ դարդացման մեջ պատկերելու մասին, զորողին հնարավորութեան է տալիս նայել առաջ, տեսնել ապագան և արտացոլել իրականութեանը, ինչպես Մաքսիմ Գորկին է ասում, նայելով նրան ապագայի բարձունքներից:

«Սովետական դրականութեանը պետք է կարողանա ցույց տալ մեր հերոսներին, պետք է կարողանա նայել մեր վազվան», — ասում է ընկեր Ժյանովը:

Սովետական գրականության բազմազգ բնույթը

Սովետական գրականութեանը բազմազգութեանը դրականութեան է: Նա ստեղծվում է սովետական պետութեան մեջ միավորված ժողովուրդների լեզուներով, բայց նրա բովանդակութեանը միասնական սոցիալիստական է: Մարդկութեան պատմութեան մեջ այն առաջինն է, որ տասնյակ ժողովուրդների լեզուներով, ազգային տարբեր ձևերի մեջ տարածում է ամենառեալիստիկ դաշաւարներ, պայքարում է աշխատավոր մարդկութեան ընդհանուր երջանկութեան համար:

Սովետական բաղմամբ զուգորակա հոգիները ստեղծվում է սովետական ժողովուրդների անցյալի կուլտուրական ժառանգության քննադատական վերամշակումով, լավագույն տրագիցիաների յուրացումով, և միաժամանակ բուրժուական նացիոնալիզմի ու ամեն տեսակ ալլ թշնամական դադափարախոսությունների ռեցիդիվների դեմ մղվող անհաշտ պայքարում:

Լենինը յուրօրինակում էր, որ դասակարգային հասարակության պայմաններում ամեն մի ազգի մեջ կա «...աշխատավոր և շահագործվող մասսա, որի կյանքի պայմաններն անխուսափելիորեն ծնունդ են տալիս դեմոկրատական և սոցիալիստական իրեոլոգիայի: Բայց յուրաքանչյուր ազգի մեջ կա նաև բուրժուական (ինչ մեծ մասամբ նաև սեահարյուրյակային ու կղերական) կուլտուրա—և այն էլ ոչ թե «տարրերի» միայն, այլ տիրապետող կուլտուրայի ձևով»: Հետևապես, բացատրում էր Լենինը,— նորը կերտելու համար «...մենք յուրաքանչյուր ազգային կուլտուրայից վերցնում ենք միայն նրա դեմոկրատական և նրա սոցիալիստական տարրերը, վերցնում ենք դրանք միայն և անպայման իբրև հակաօլիգո յուրաքանչյուր ազգի բուրժուական կուլտուրայի, բուրժուական նացիոնալիզմի»¹:

Լենինի այս ցուցումը սովետական ժողովուրդի համար ղեկավար սկզբունք է անցյալի ժառանգության օգտագործման և սոցիալիստական նոր կուլտուրայի կերտման գործում: Լենինի տեսմունքը սոցիալիստական կուլտուրայի մասին սոցիալիզմի կառուցման շրջանում շարունակեց ու զարգացրեց Ի. Վ. Ստալինը:

Ի. Վ. Ստալինը ցույց տվեց սովետական ժողովուրդների ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրաների բուռն զարգացման ուղիները՝ կապելով դրանք սոցիալիստական նոր ազդերի կաղմամբուման պատմական պրոցեսի հետ, որ տեղի է տնենում սյուրիտարական դիկտատուրայի և սոցիալիզմի բազայի վրա մեր երկրում:

Ի. Վ. Ստալինն առում է. «Մենք պրոլետարական կուլտուրա ենք կառուցում: Այս միանգամայն ճիշտ է: Բայց ճիշտ է նաև այն, որ իր քաղաքակրթությամբ սոցիալիստական՝ պրոլետարական կուլտուրան, նախած լեզվի, կենցաղի և այլն տարրերով, արտահայտման զանազան ձևեր ու եղանակներ է ընդունում սոցիալիստական շինարար-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 20, էջ 10:

բուժյան ասպարեզ ներքաշված զանազան ժողովուրդների մոտ: Իր բուժանդակութեամբ պրոլետարական, ձևով ազգային, — այսպես է այն համամարդկային կուլտուրան, դեպի որն ընթանում է սոցիալիզմը»¹:

Իրենց ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրաների կառուցման համար օգտագործելով սեփականատիրական կարգերի պայմաններում ստեղծված առաջավոր գրականությունը, սովետական ժողովուրդները միաժամանակ իսկական համաժողովրդական փառք են ստեղծում իլլաստիկ դրոշմների համար: Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության քաղաքականության շնորհիվ մեծ գրողների հոբելյանները դառնում են համաժողովրդական տոներ:

Սովետական բոլոր ժողովուրդներն են հպարտանում Ռուսթավելու և Նիկամիի, Պուշկինի և Աբովյանի, Չեքովի և Երմոլովի, Մոսկովցի և Զամատինի, Տոլստոյի և Գոբոլու հանձարներով:

Սովետական ժողովուրդը, ղեկավարվելով Լենինի և Ստալինի ուսմունքով, ժառանգել է ոչ միայն իր, այլև աշխարհի բոլոր լեզուներով ստեղծված պրոգրեսիվ գիտության, կուլտուրայի ու գրականության գանձերը: Իսկ զառամյալ բուրժուական հասարակությունը որդեգրել է խավարամտությունը և ձգնում է մարդկությանը ետ տանել դեպի մոռալ միջնադարը, դեպի ստրկատիրությունը: Ժամանակակից բուրժուազիային առնելի տևանքներն են անցյալի մեծ հումանիստները, անցյալի ազատագրող գիտականները, գրողները, արվեստագետները: Կապիտալիստական Անգլիայում աղավաղում են Շեքսպիրին, մերժում են Բումբա Մորին և Բայրոնին, Իսպանիայում արգելվում է Սերվանտեսը, Ֆրանսիայում անբարոյական-դեկադենտական գրչակներին բարձր են դասում անցյալ դարի սլանժալի ռեալիստներից, իմպերիալիստական Ամերիկայում Լինչի դատաստան են տեսնում «անհարազատ հանդուցյալ» Մարկ Տվենի հետ, նրա ստեղծագործության մեջ տեսնելով Միացյալ Նահանգների հիմքերը քանդող պրոպագանդա:

Գրողի աշխարհայացքը, քաղաքական ձգտումները և էսթետիկական ըմբռնումները արտահայտվում են նրա ստեղծագործության մեջ, Գրական երկի մեջ արտահայտված գաղափարները մի անհատի անձնական պրակտիկայի պտուղները չեն, այլ իրենց

Սովետական գրողի տեղը հասարակական կյանքում

¹ Ստալին, երկեր, հատոր 7, էջ 152:

մեջ կրում են նրան սնող, ոգեշնչող սովետական իրականության, ժողովրդի կենսափորձի արդյունքները և կոմունիստական աշխարհայացքի բնորոշ գծերը: Բուլղոլիյն այլ է գրողի դերը բուրժուական հասարակարգում: Բուրժուական գրողները, մանավանդ կապիտալիստական հասարակության նեխման շրջանում, իրենց երկերում, իբրև բարձր առաքինություն, դրվատում են իշխողների հակամարդկային արարքները և միաժամանակ կատաղորեն կուրծք ծեծում, թե՛ «մենք ազատ և անկախ արվեստ ենք ստեղծում»: Մինչդեռ այդ միևնույն բուրժուական հասարակության մեջ միշտ էլ, եթե գրողն իսկական մեծ արվեստագետ է և չի ձգտում հաճոյանալ շահագործող դասակարգերին ու կյանքն արտացոլում է ճշմարտացիորեն, — իշխողների կողմից ենթարկվում է հազար ու մի զրկանքների, այդպիսի շատ գրողների (Պուշկին, Աբովյան, Ջերնիշևսկի, Նալբանդյան և այլն) բռնակալությունը դավադրաբար կամ բացարձակ կերպով սույնն է: Շահագործողների կառավարությունը չինական պարիսպ էր կանգնեցնում առաջավոր գրողի ստեղծագործության և ժողովրդի միջև, որպեսզի ազատագրական դադափարները չթափանցեն հասարակության մեջ:

Գրական աշխատանքը, ինչպիս և մեր երկրում կոմունիզմի հաղթանակի համար կատարվող ամեն տեսակ աշխատանք, պատվի, փառքի և արիության դործ է, իսկ գրողը՝ հասարակական դործիչ: Սովետական գրողները դուրս են եկել աշխատավոր ժողովրդի ծոցից, ժողովրդի հետ սնվել են բոլշևիզմի դադափարներով և նվիրված աշխատում են կոմունիզմի կառուցման համար: Նրանք կոչված են իրենց գեղարվեստական երկերով օգնել սովետական պետությանը՝ դաստիարակելու կոմունիզմի շինարարների նոր սերունդը:

Պատկերելով հասարակայնորեն ակտիվ, աշխատանքում ու կենցաղում ազնիվ մարդկանց, գրողը ոգեշնչում է ընթերցողներին առաջ գնալու, հավասարվելու իր պատկերած կերպարներին, այսինքն՝ լավագույն մարդկանց:

Ահա թե ինչու Ի. Վ. Ստալինը սովետական գրողներին անվանել է «մարդկային հոգու ճարտարապետներ»: Սրանով հենց ցույց է տրված սովետական գրողների ժողովրդական մեծ դերը կոմունիզմի կառուցման գործում:

Երբ ֆաշիստական Գերմանիան ուխտագրուժ կերպով հարձակվեց Սովետական Միության վրա, բազմաթիվ գրողներ ռազմիկի հա-

մազգեեստ հազան և գնացին ռազմաճակատ՝ իրենց կյանքով պաշտպանելու Սոցիալիստական Հայրենիքը, նրա ազատությունը, փառքը, պատիվը: Սովետական մոտ ութ հարյուր գրող, քննադատ ու գրականագետ շորս տարի շարունակ ռազմաճակատներում հաղորդակից եղան Սովետական Բանակի մարտական կյանքին: Շատերը իրենց լավագույն երկերը գրեցին հենց «ոտքի վրա»՝ զինվորական բլինդաժներում: Խոր ատելություն է կուտակված նրանց երկերում գեպի թշնամիները: Իսկ Հայրենիքի սերը ուժ և գեղեցկություն է հաղորդում նրանց ստեղծագործություններին: Նրանց խոսքը կոտւմ է հուշս, հավատ և հաղթանակ:

Պատերազմում շատ գրողներ ընկան հերոսի մահով: Զոհվածների թվում են՝ Վլադիմիր Ստավսկին, Եվդենի Պետրովը, Արկադի Հայդարը, Թաթուլ Հուրչանը:

Հայրենիքը բարձր է գնահատում իր գրողներին: Բազմաթիվ գրողներ կառավարության կողմից պարգևատրվել են շքանշաններով: Շատերն արժանացել են Ստալինյան մրցանակի:

Հայրենական պատերազմի հաղթական ավարտումից հետո սովետական գրողները խանդավառ պայքարում են կոմունիզմի կառուցման համար՝ իրենց երկերում ճշմարտացի պատկերելով մեր ժողովրդի շինարարական ջանքերը և մեծ պայքարը՝ ամբողջ աշխարհում խաղաղությունը պաշտպանելու համար:

**Կոմունիստական
պարտիան սովետա-
կան գրականության
կազմակերպիչն ու
ղեկավարն է**

Պրոլետարական գրականությունը միշտ եղել է բուլշեիկների պարտիայի և նրա առաջնորդ մեծ լենինի ուշադրության կենտրոնում: Ռևոլյուցիոն գրականությունը դիտելով որպես համապրոլետարական գործի մի մասը, Վ. Ի. Լենինը առանձին հոգատարություն է ցուցաբերել այդ գրականության հիմնադիր Մ. Գորկու նկատմամբ: Ի՞նչ Մ. Գորկին և՛ մեր իրականության մեջ Հ. Հակոբյանը իրենց ստեղծագործության զարգացման ու տարածման համար շատ բանով են պարտական բուլշեիկների պարտիային և բուլշեիկյան մամուլին:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից հետո Սովետական Միության Կոմունիստական պարտիան և նրա Կենտրոնական Կոմիտեն ամենօրյա հոգատարությամբ են շրջապատում սովետական գրողներին: Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և Սովետական կառավարությունը իրենց բազմաթիվ որոշումներով ու

ցուցումներով դաստիարակում և օգնում են սովետական գրողներին՝ սոցիալիստական ռեալիզմի գրականության մեթոդը մշակելու գործում: Կոմունիստական պարտիայի անմիջական ղեկավարությամբ մեր երկրում ստեղծվում է ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական գրականություն, որն ամբողջովին ծառայում է սովետական ժողովրդի շահերին:

Նրկրում սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրից Կոմունիստական պարտիան անհաշտ պայքար է մղում գրականության մեջ բուրժուական ռեակցիոն իդեոլոգիայի ամեն տիպի դրսևորումների դեմ:

Դեռևս 1920 թ. կոմերիտմիության անելիքների մասին իր պատմական ճառում և պրոլետկուլտի մասին որոշման նախագծում, Վ. Ի. Լենինը խիստ քննադատության է ենթարկում այն գրողներին և գրականագետներին, որոնք պրոլետարական կուլտուրան պաշտպանելու անվան տակ դեհեկացնում էին մարքսիզմը, գրականությունը կտրում քաղաքականությունից, ժխտում անցյալի կլասիկ ժառանգությունը:

1925 թ. հունիսի 18-ին պարտիայի Կենտրոնական Կոմիտեն որոշում է ընդունում «Պարտիայի քաղաքականության մասին գեղարվեստական գրականության բնագավառում», որը հսկայական դեր է կատարում՝ Կոմունիստական պարտիայի շուրջը համախմբելով բոլոր տաղանդավոր գրողներին, օգնելով նրանց ստեղծագործական ճիշտ ուղիներ գտնելու գործում և ջախջախիչ քննադատության ենթարկելով խորթ, բուրժուական հոսանքները գրականության մեջ:

1932 թ. ապրիլի 23-ին պարտիայի Կենտրոնական Կոմիտեն որոշում է ընդունում «Գրական գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին», որը զարգացման լայն ճանապարհ է բացում գրականության համար: Մինչև Կենտրոնական Կոմիտեի որոշումը, Սովետական Միության մեջ, ինչպես և Հայաստանում, գործում էին գրականության և արվեստի առանձին կազմակերպություններ՝ ասոցիացիաներ, այսպես կոչված «Պրոլետարական գրողների ասոցիացիա», «Աշխատավորական գրողների միություն» և այլն: Կազմակերպության այս ձևը երեսնական թվականների սկզբներին արգելակում էր գրականության և արվեստի զարգացումը: Կենտրոնական Կոմիտեի որոշմամբ լուծարքի են ենթարկվում այդ գրական խմբակցությունները և բոլոր սովետական գրողները միավորվում են գրողների մեկ միասնական միության մեջ: Այս միավորումն ավարտում է սովե-

տական գրողների 1-ին համագումարը, որը տեղի ունեցավ 1934 թ. օգոստոսին, Մոսկվայում: Իր բացման խոսքում Մ. Գորկին բացահայտում է Սովետական գրողների Միության իմաստն ու նշանակությունը: «Դրա նշանակությունն այն է, — ասում է Գորկին, — որ մեր բոլոր ռեսպուբլիկանների բազմացեղ ու բազմալեզու գրականությունը հանդես է գալիս որպես միասնական ամբողջություն»: Միաժամանակ Մ. Գորկին նշում է, որ այդ հանգամանքը չի բացառում ստեղծագործական ձգտումների և գեղարվեստական հնարանքների տարբերությունը:

Ա. Ա. Ժդանովը համագումարում կարգացած իր ճառում բացահայտում է սովետական գրականության հաջողությունների նախադրյալները: Նա ընդգծում է, որ «Սովետական գրականության հաջողությունները պայմանավորված են սոցիալիստական շինարարության հաջողություններով: Նրա աճումը մեր սոցիալիստական կարգի հաջողությունների և նվաճումների արտահայտությունն է»:

Գրականության և գրողների նկատմամբ Կոմունիստական պարտիայի իմաստուն քաղաքականության և ջերմ հոգատարության արտահայտություններից մեկն էլ լավագույն ստեղծագործությունների համար գրողներին Ստալինյան մրցանակներ շնորհելու պրակտիկան է, որ կիրառվում է 1939 թվականից: Մրցանակները ոգևորում են սովետական գրողներին, բարձրացնում նրանց պատասխանատվության զգացումը և հեղինակությունը մասսաների մեջ:

Հայրենական Մեծ պատերազմից հետո պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և Սովետական կառավարությունը արվեստի և գրականության մասին ընդունած իրենց որոշումներով ու ցուցումներով ապահովում են սովետական գրականության ստեղծագործական նոր վերելքը: «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսադրերի մասին» (1946 թ. օգոստոսի 14-ին), «Դրամատիկ թատրոնների ռեպերտուարի և նրա բարելավման միջոցառումների մասին» (1946 թ. օգոստոսի 26-ին), «Մեծ կյանք» կինոֆիլմի մասին» (1946 թ. սեպտեմբերի 4-ին), «Մուրադելու «Մեծ բարեկամություն» օպերայի մասին» (1948 թ. փետրվարի 10-ին) որոշումները օգնում են մեր գրողներին իրենց ստեղծագործությունների գաղափարական մակարդակը բարձրացնելու և արվեստի մեջ վարպետանալու գործում:

Պարտիայի ղեկավարությամբ սովետական գրականությունը դառնում է խաղաղության համար սովետական ժողովրդի և ողջ աշ-

խարհի դեմոկրատական ուժերի մղած պայքարի կարևոր զենքերից մեկը, դառնում է իսկական ժողովրդական, հայրենասիրական գրականություն, որն իր գաղափարական-գեղարվեստական խորությամբ նմանը չի ունեցել մարդկության պատմության մեջ:

**Սովետական
գրականության
համաշխարհային
նշանակությունը**

Սովետական տաղանդավոր գրողները ստեղծագործությունները վաղուց արդեն դուրս են եկել մեր երկրի սահմաններից, թարգմանվել են բազմաթիվ լեզուներով և դարձել աշխարհի ժողովուրդների սեփականությունը: Ինչպես երկրների դեմոկրատական խավերի համար սիրելի անուններ են դարձել Մ. Գորկու, Վլ. Մայակովսկու, Մ. Շոլոխովի, Ալ. Տոլստոյի և բազմաթիվ այլ սովետական գրողների անունները: Սովետական գրականությունը համաշխարհային հռչակ է ստացել: Այս բանը բացատրվում է սովետական գրականության նոր բովանդակությամբ և մեծ գաղափարը գեղեցիկ ձևի մեջ մարմնավորելու սովետական գրողների վարպետությամբ:

Սովետական գրականությունը գեղարվեստորեն պատկերում է աշխարհում առաջին սովետական երկրի ծնունդը, Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեվոլյուցիան և քաղաքացիական կռիվները, վերարտադրում է մեր երկրի նախապատերազմյան շրջանի կյանքը, սոցիալիստական շինարարությունը, արտացոլում է Հայրենական Մեծ պատերազմը, երբ սովետական անձնուրաց մարդիկ փրկեցին աշխարհի ժողովուրդներին և համաշխարհային կոլտուրան ֆաշիստական հորդանքերից: Սովետական գրականությունը պատկերում է հետպատերազմյան էտապում մեր ժողովրդի խաղաղ ստեղծագործական աշխատանքը, նրա պայքարը հանուն խաղաղության և դեմոկրատիայի: ամբողջ աշխարհում: Սովետական գրականությունն առաջինն է ստեղծում աշխարհի գրական կերպարներ, որոնք հակասության մեջ չեն հասարակական կարգի հետ, որոնց շահերը պայմանավորվում են հասարակության ընդհանուր շահերով: Մեր գրականությունն ստեղծում է իրենց երկրի տերը դարձած սովետական ստեղծագործող մարդկանց կերպարներ, արտացոլում է այն նոր զգացումները, հույզերը, բնավորության գծերը, որոնցով օժտված է սովետական մարդը: Սովետական գրականությունը ցույց է տալիս, թե մեր երկրում ինչպես է զարգացել ժողովուրդների բարեկամության գաղափարը, մտել

կյանքի, կենցաղի մեջ, դարձել սովետական ավգերի անքակտելի եղբայրություն:

Սովետական զեղարվեստական գրականությունը ղենք է աշխարհի դեմոկրատական մասսաների ձեռքում՝ նոր պատերազմի անվտանգության հրձիգների դեմ՝ հաճախ խաղաղության և ժողովուրդների համագործակցության նրանց մղած պայքարում: Այն ոգեշնչում և հռետակար է տալիս կապիտալիզմի ճիրաններում տառապող ժողովուրդներին, սովորեցնում է սոցիալիստական հասարակարգ ստեղծելու համար անձնուրաց պայքար մղելու արվեստը:

Վիթխարի է սովետական գրականության ազդեցությունը կապիտալիստական երկրների դեմոկրատ զրոգների ստեղծագործության վրա: Մոտ անցյալում այնպիսի դեմոկրատ զրոգներ, ինչպիսիք են Հ. Բարբյուսը, Ռ. Ռոլանը, Մարտին Անդերսեն Նեկսեն և շատ ուրիշներ, իրենց վրա կրել են Մ. Գորկու ազդեցությունը: Սովետական ժամանակակից գրականության բարերար ազդեցությունն է նկատվում արևմտաեվրոպական և ամերիկյան դեմոկրատ զրոգներին՝ Թ. Դրայզերի, Հովարդ Ֆաստի, Լուի Արագոնի, Ալբերտ Մալցի, Ժորժի Ամադուի, Պաբլո Ներուդայի և շատ ուրիշների ստեղծագործության վրա: Հայրենական Մեծ պատերազմից հետո ժողովրդական դեմոկրատիայի երկրների գրականությունը աճում ու զարգանում է սովետական գրականության ստեղծած պայծառ տրադիցիաների ստեղծագործական յուրացմամբ: Չինական, հունգարական, չեխական, լեհական և մյուս երկրների զրոգները սովետական զրոգների նման ձեռնամուխ են եղել իրենց ժողովուրդների կյանքը, սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարն արտացոլելու գործին: Այդ խնդրում նրանց հսկայական օգնություն է ցույց տալիս սովետական զրոգների փորձը, սովետական հարուստ, գաղափարապես հագեցած և բարձրարվեստ գրականությունը: Ժողովրդական դեմոկրատիայի երկրների զրոգներն ու քննադատները իրենց ելույթներում և հոգովածներում միշտ նշում են սովետական գրականության մեծ ազդեցությունը իրենց ստեղծագործության վրա: Այսպես, օրինակ, չինական «Գրականություն և արվեստ» ժուռնալում տպագրված հոգովածներից մեկում գրված է.

«Սովետական գրականությունը մեր մեծ եղբայրն է, որից մենք մշտապես սովորում ենք... Նա ամրապնդում է մեր խիղախությունը, մեր մեջ հաստատակամություն է առաջացնում, որն օգնում է մեզ կատարել մեր առջև դրված խնդիրները:

Հավասարվե՛նք սովետական գրականությանն ու արվեստին»:

Սովետական գրականության համաշխարհային խոշոր նշանակությունն ավելի լավ հասկանալու համար պետք է նկատի ունենալ, թե ինչ վիճակի մեջ է աշխարհագրական գրականությունը: Այդ գրականությունն ամբողջովին ծառայում է նոր պատերազմի հրձիգների շահերին, ատելություն է քարոզում Սովետական Միության և ժողովրդական դեմոկրատիայի երկրների նկատմամբ, ճգնում է պատերազմի սարսափի մեջ պահել ժողովրդին: Մարդուն դադար համարելով, սեակցիոն գրողները դավաբանում են գոյությունը, մարդասպանությունը, սեռական այլանդակությունը: Ամերիկայի ժամանակակից սեակցիոն գրականության մեջ առատորեն տարածված են արյունոտ, կոշմարային թեմաները:

Սովետական գրողների պատմական դերի մասին Մ. Գորկին ասել է.

«Մենք հանդես ենք գալիս որպես կործանման դատապարտված աշխարհի դատավորներ, և որպես մարդիկ, բոլոր հաստատում են ռեոլյուցիոն պրոլետարիատի իսկական հումանիզմը, այն ուժի հումանիզմը, որ պատմությամբ կոչված է աշխատավորների ամբողջ աշխարհը ազատագրելու նախանձից, ազահունջությունից, գոհակությունից, հիմարությունից, այն բոլոր այլանդակություններից, որոնք դրերի ընթացքում ազավաղել են աշխատանքի մարդկանց»:

Ահա այսպիսին է սովետական գրականությունը, սրա մեջ է առաջին հերթին նրա համաշխարհային խոշոր նշանակությունը:

Սովետահայ գրականության ակունքները
Սովետահայ գրականությունը սովետական գրականության մի անբաժան հատվածն է, որը զարգանում է նույն օրինաչափություններով, օժտված է նույն առանձնահատկություններով:

Սովետահայ գրականության պատմությունն սկսվում է Հայաստանում սովետական կարգերի հաստատումով:

Իսկ ինչ վերաբերում է սովետահայ գրականության ակունքներին, ապա նրանք առաջացել են դեռ մինչև Հոկտեմբերյան Մեծ ռեոլյուցիան:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին ռեոլյուցիոն շարժումների կենտրոնը Արևմուտքից տեղափոխվեց Ռուսաստան:

Սկսվեց ռուս ժողովրդի ազատագրական շարժման նոր և ամենաբարձր էտապը՝ պրոլետարական էտապը: ✕

լենինը հիմնեց Ռուսաստանի բանվորական մարքսիստական մամուլը, ստեղծեց բանվոր դասակարգի նոր տիպի պարտիա՝ Կոմունիստական պարտիան և բանվորական շարժումը՝ ղինեց մարքսիզմի ռևոլյուցիոն թեորիայով:

Ռուսաստանի պրոլետարիատը, ղինված մարքսիզմ-լենինիզմի գաղափարներով, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ տապալեց բռնակալական կարգերը և ազատագրեց Ռուսաստանում ապրող ժողովուրդներին սոցիալական և ազգային ճնշումներից:

Բանվոր դասակարգի ռևոլյուցիոն պայքարն արտահայտում էր Ռուսաստանի բոլոր ժողովուրդների սոցիալական, սովետային և ինտերնացիոնալ ձգտումները:

Այդ պայքարին նվիրվեցին Ռուսաստանի պետական սահմաններում գտնվող ճնշված ժողովուրդները, որոնց թվում և հայ ժողովրդի առաջավոր զավակները:

Լենինյան «Իսկրա»-ի սկզբունքներով քսաներորդ դարի սկզբում նրանք ստեղծեցին մարքսիստական-լենինյան հայ մամուլը: 1902 թ. Ստեփան Շահումյանի խմբագրությամբ, հայերեն լեզվով Թիֆլիսում սկսում է հրատարակվել «Պրոլետարիատ» թերթը: 1903 թ. այս թերթը միանում է Ի. Վ. Ստալինի խմբագրությամբ հրատարակվող վրացական «Բրձոյա» (սպքար) թերթի հետ: Նոր թերթը սկսում է հրատարակվել հայերեն և վրացերեն, հետագայում նաև ռուսերեն լեզուներով «Պրոլետարիատի կոիվը» վերնագրով:

Այս պարբերականները, ապա նաև «Կայծ», «Նոր խոսք» (1906 թ.), «Օրեր» (1907 թ.), «Պայքար» (իր գոյության առաջին շրջանում, մինչև 1917 թ. մայիս ամիսը) թերթերը մեծ դեր խաղացին հայ աշխատավորության գաղափարական դաստիարակության գործում:

«Պրոլետարիատի կոիվը» առաջին հայ պարբերականն էր, որ տպագրել է Լենինի և Ստալինի աշխատությունները, դասակարգային պայքարի ռևոլյուցիոն գաղափարներով լուսավորել հայ աշխատավորության գիտակցությունը:

Մարքսիստական հայ մամուլը ղեկավարում էին Լենինի մերձավոր աշակերտներ ու ղինակիցներ Ստեփան Շահումյանը և Սուրեն Սպանդարյանը:

Շահումյանը և Սպանդարյանը ռևոլյուցիոն ակնհավոր դործիչներ էին, կոիված պարտիական պայքարի լենինյան դպրոցում: Նրանք պայքարում էին հայ բուրժուական պարտիաների և կղերական-

նության դեմ, մերկացնում նրանց ռեալիցիոն, հակաժողովրդական, հակաաշխատավորական էությունը:

Շահումյանը գրում էր, որ «...ներկա հասարակության մեջ ճշմարտությունը համապատասխանում է միայն պրոլետարիատի դասակարգային շահերին, իսկ բուրժուազիայի շահերը հենվում են միմիայն և ամբողջովին ստի ու կեղծիքի վրա»¹:

Այդ «ստի ու կեղծիքի արյունոտ իշխանություն» հաղթահարման համար անհրաժեշտ էր Ռուսաստանի բոլոր ազգերի պրոլետարներին ուժերի միացումը:

Բանվոր դասակարգի պայքարը պրոլետարական, սոցիալիստական ռեվոլյուցիայի համար՝ իր մեծ ազդեցությունն ունեցավ Ռուսաստանի ժողովուրդների կուլտուրաների, գրականությունների և արվեստների վրա: Այդ պայքարը արձագանք գտավ նաև հայ կուլտուրայի, գրականության և արվեստի մեջ:

XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ խոշոր գրողները իրենց ստեղծագործություններում ռեալիստորեն վերարտադրելով կյանքը, դիմակաղերծ արին ազգային բուրժուազիային, ցույց տալով բուրժուական իրականության քաոսը և նեխումը:

Առաջավոր հայ գրողները հետևեցին ռուս գրականությանը, կիրառելով նրա լավագույն տրադիցիաները և, առաջին հերթին, ճշմարտությանը հավատարիմ լինելու սկզբունքը:

Նրանք քննադատեցին գիշատիչ նավթարդյունաբերողների, խարդախ կապալառուների և կաշառակեր շինովնիկների, ծախու փաստաբանների և անսկզբունք ժուռնալիստների ոճմալը, ծաղրեցին հումանիզմի մասին փքուն ճառ ասող բուրժուական կեղծ բարեգործներին և ազգի անունը շարչիական գործերում շահագործող կեղծ ազգասերներին, խավարամիտ, որկրամոլ կղերին և բուրժուական կոսմոպոլիտ ինտելիգենցիային ու սնասլարծ նաղիոնալիստներին: Քննադատեցին հետադիմական ռոմանտիկների հենարանը՝ նահապետականությունը, ռեալիստորեն պատկերեցին հասարակ ժողովրդի սոցիալական և ազգային հարստահարված վիճակը: Առաջավոր գրողները ցույց տվեցին, որ հայ հարուստները, ինչպիսի մեծ նալբանդյանն էր գրում՝ իրենց շատ լավ են զգում և անխոցելի են հալ օտար ռեբռնակալների իշխանության մեջ»:

Բանվոր դասակարգի ռեվոլյուցիոն պայքարում սկզբնավորվեց

¹ Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 141:

պրոլետարական գրականութիւնը: Ռուս հանճարեղ գրող Մաքսիմ Գորկին իր ստեղծագործութեամբ ամբողջ աշխարհին աղբարարեց պրոլետարական գրականութեան ծնունդը: Լենինը բուրժուական մամուլի հարձակումներից պաշտպանում էր պրոլետարական մեծ գրողին, նրա ստեղծագործութիւնը գնահատելով իբրև մարդկութեան դեղավետական զարգացման նոր դարագլխի սկիզբ:

Բանվոր դասակարգի ռևոլյուցիոն պայքարում՝ ռուս ռևոլյուցիոն գրականութեան աղբեցութեամբ, ծնվեց հայ պրոլետարական գրականութիւնը:

Բանվորական մամուլում իր մարտական երգերով հանդես եկավ բանաստեղծ Պրոլետարը՝ Հակոբ Հակոբյանը, նոր, բանվորական թեմատիկա և նոր, պրոլետարական-դասակարգային պայքարի դուղափարներ բերելով հայ գրականութեան մեջ:

Միքայել Նալբանդյանի ռևոլյուցիոն-դեմոկրատական ստեղծագործութեան լավագույն տրագիցիաները շարունակեցին ու զարգացրին բանվոր դասակարգի ազատագրական պայքարին նվիրված գրողները և հրապարակախոսները: Նալբանդյանի ազատութեան հրդեհեղջեց Հակոբյանին: Հակոբյանը արտացոլեց պրոլետարիատի անհաշտ պայքարը ցարիւմի և բուրժուազիայի դեմ:

Պրոլետարիատի պոետը այդ դադափարը բոլշևիկյան կրքոտութեամբ արտահայտում է «Մե՛կ էլ, մե՛կ էլ», «Հեղափոխութիւն», «Կաթսավարը», «Մեռա՜ն, չկորան» և այլ բանաստեղծութիւններում:

Հակոբյանը խստիվ հակադրվեց բուրժուական աղբայնական գրականութեանը, հայտարարելով՝ «կոշտացած ձեռքերի», «կարմիր փարնան», «բանվորական հեղափոխութեան» գրականութեան ծնունդը:

Պրոլետարական կովին նվիրված ռևոլյուցիոն երգերով ասպտրեզ եկավ Շուշանիկ Կուրդինյանը: Բանվորական հուլիսներով տոգորված պատմվածքներով հանդես եկան Մովսէս Արաւիկն, Մադաթ Պետրոսյանը և ուրիշները:

Բոլշևիկյան հայ մամուլը ամբողջ ուժով պաշտպանում էր պրոլետարական գրական շարժումը, բացատրելով, որ այդ ուղիւթիւնը ամենակենսունակն է արդի գրականութեան մեջ:

Լենինի աշակերտներ և ղինակիցներ Շահումյանը և Սպանդարյանը՝ հայ գրականութեան մեջ կիրառում են մարքսիստական-լենինյան էսթետիկայի սկզբունքները, ցույց տալով բուրժուական գրական քննադատութեան ռեակցիոն բնույթը և սնանկութիւնը:

Շահումյանը և Սպանդարյանը բարձր են գնահատում Հակոբյանի ռեուլյուցիոն պոեզիան:

Սպանդարյանը Հակոբյանին հակադրում է բուրժուական ազգայնական գրականությանը և Հակոբյանի ծառայությունը համարում է հայ գրականության մեջ «համամարդկային նոր մոտիվներ մտցնելը»: Բոլշևիկ հրապարակախոսը համամարդկային է համարում Հակոբյանի երգի մոտիվները, որովհետև նրանք խոսում են «աշխատավոր մարդու տառապանքների, տանջանքների և ձգտումների մասին»¹:

Շահումյանը հոգատարությունը հետևում է Հակոբ Հակոբյանի տաղանդի զարգացմանը, քաջալերում հայ պրոլետարական պոեզիայի հիմնադրի գործունեությունը, պաշտպանելով նրան նացիոնալիստների հարձակումներից:

Ստեփան Շահումյանը սկիզբ է դնում հայ գրականության մարքաստական զննահատմանը: 1902 թ. Ղազարոս Աղայանի հոբելյանին Շահումյանը հանդես է գալիս մի ծրագրային ճառով, խստիվ հակադրվելով հայ բուրժուական ու մանր բուրժուական ազգայնական հոսանքներին:

Դիմակազերծ անելով բուրժուական ինտելիգենցիայի կեղծ հոգատարությունը դեպի հայ գրականությունը, Շահումյանը գրում է, որ «նա, ով ուղում է, որ հայ ժողովուրդը գրականություն ունենա, նա սլիտի ամենից առաջ կռիվ հայտարարի այն պայմանների, քաղաքական այն կարգերի դեմ, որոնք արգելում են ժողովրդի—այդ հասարակական օրգանիզմի ազատ, բնական զարգացումը»: Գրողն ինքը պետք է ունենա «հասարակական դավանանք», «գործունեության ծրագիր», եթե նա ցանկանում է իսկական գրականություն, «իդ կոչման ծառայող հասարակական-ժողովրդական գրականություն» ստեղծել:

Շահումյանը պայքարում է ազգայնական ուժանտիզմի դեմ, ցույց տալով նրա վնասակար լինելը գրականության, ժողովրդի և հենց գրողների համար:

Մեծ նշանակություն ունեն Շահումյանի հոգվածները Տոլստոյի և Գրեկու մասին: Շահումյանը Գրեկուն պաշտպանում է մենշևիկներից ու կադետներից, գրողի տաղանդի ծաղկումը կապում բանվոր դասակարգի ռեուլյուցիոն պայքարի հետ: Շահումյանը փաստ է համարում պրոլետարական գրականության ստեղծումը և Գրեկուն զննահատում իբրև «պրոլետարական գրականության զարդն ու պարծանքը»:

¹ Ս. Սպանդարյան, Հոգվածներ, էջ 267:

ՊՐԱԿՏԱՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՅԻՄԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Հոկտեմբերյան ռեուլյուցիայից հետո, քաղաքացիական կոիվների տարիներին նոր շրջան սկսվեց այն գրողների ստեղծագործական կյանքում, որոնք կապված էին բանվոր դասակարգի պայքարի հետ։ Ռեուլյուցիայի հաղթանակը նրանց համար բերեց նոր թեմաներ, ղինեց նոր գաղափարներով, նրանց երկերին հաղորդեց հերոսական կոիվների շունչն ու պաթոսը։ 1918—1920 թվականներին մենշևիկները, մուսավաթիստները ու դաշնակները գերմանա-թյուրքական զավթիչների օգնությամբ Անդրկովկասը կտրել էին Ռուսաստանից և երկիրը հակասովետական պայքարի սլացողարմ դարձրել, սակայն Անդրկովկասի ժողովուրդները հոգով ու սրտով Սովետական Ռուսաստանի հետ էին։

Հայ ժողովրդի առաջավոր զավակները Հոկտեմբերյան ռեուլյուցիայի հաղթանակների մեջ էին տեսնում Արևմուտքի մեծ պետությունների կողմից խաբված հայ ժողովրդի ազատության երաշխիքը և անձնուրաց կոլում էին սովետական կարգերի համար։

Դեմոկրատական առաջավոր հայ ինտելիգենցիան ամենուրեք իր ուժն ու եռանդը նվիրեց սոցիալիստական ռեուլյուցիայի պաշտպանությանը։ Այս ինտելիգենցիայի առաջին շարքերում էին հայ պրոլետարիական պոեզիայի հիմնադիր Հակոբ Հակոբյանը և Վահան Տերյանը։

Այդ տարիներին Ռուսաստանում և Անդրկովկասում Կոմունիստական պարտիայի ջանքերով լույս տեսան սովետական հայ պարբերական մամուլի առաջին օրգանները։ Մոսկվայում 1918 թ. սկզբից լույս տեսավ Հայկական գործերի կոմիսարիատի օրգան «Կոմունիստ» շաբաթաթերթը, որին ակտիվորեն աշխատակցում էր Վահան Տերյանը։ Տերյանն իր ուժերը նվիրեց լենինիզմի գաղափարների սրտազգաճանաչին։ Նա թարգմանեց ու հրատարակեց լենինի «Պետություն և հեղափոխություն» հանձարեղ աշխատությունը, ասյա զրից իր «Ի՞նչ է սոսում լենինը գյուղացիներին» ճշանավոր գրքուկը։

Ի. Վ. Ստալինի հանձնարարությամբ Տերյանը մի զեկուցում գրեց «Թյուրքահայաստանի մասին»։ Նրա եռադուռն մասնակցությամբ կազմվեց Թյուրքահայաստանի անկախության մասին Սովետական կառավարության դեկրետի նախագիծը։

Սովետական հայ պարբերական մամուլի անդրանիկ օրգանի՝ «Կոմունիստ»-ի և «Կարմիր դրոշակ»-ի էջերում Տերյանը լուսաբանում է հայ ժողովրդի ծանր վիճակը, մերկացնում հայ բուրժուական պարտիաների դավաճանական քաղաքականությունը ժողովրդի հանդեպ, նրանց ստորաքարշ համաձայնությունը գիշատիչ իմպերիալիստների հետ և ցույց է տալիս, որ բազմաշարժար Հայաստանի ազգային ազատագրման հաստատուն ուղին Հոկտեմբերյան ռևոլյուցիայի ուղին է, սովետական կարգերի ուղին։ Տերյանին է պատկանում այն թևավոր խոսքը, թե՛ «Ուլ Սովետական Ռուսաստանի հետ չէ, նա հայ ժողովրդի թշնամին է»։

Տերյանը չի սահմանավաճվում միայն պետական ու հրապարակախոսական գործունեությամբ։ Ռեվոլյուցիայից նոր լիցք ստանալով, նա շարունակում է իր գեղարվեստական ստեղծագործական աշխատանքը։ Նրա պոեզիայում զարգանում ու տիրապետող է դառնում քաղաքական լիրիկայի գիծը։

Տերյանը երգում է Հոկտեմբերը, «Կարմիր, արյունաբորբ ազատության դրոշը», դեմոկրատիայի «մրրկուն ու հրկեզ» երթը՝ կործանվող հին աշխարհի փողոցներով։ Նա ողջունում է ռեվոլյուցիայի գալը «երկաթ քայլով» և տեսնում, թե ինչպես «ահաբեկ աստղերի» նման՝

Թափվում են թագերն հնօրյա,
Եվ գահերը լինում են կործան։

Տերյանի ազդ շրջանի պոեզիան հագեցած է ռեվոլյուցիոն լավատեսությամբ։ Նա աներկբա հավատում է աշխատավոր ժողովրդի ուժին, նրա գործի հաղթանակին, չնայած բազում և բյուրավեն են թշնամիները։ Շատ բնորոշ է դիշատիչ ինտերվենտների դեմ դրած նրա պատասխանը.

Մեր թշնամին բերում է «տանկեր»,
Բերում է ցեղեր սևամորթ,
Կեռ դաշտններով դալիս են,
Ծռալ գնդերով դալիս են։
Թող գան...

Մեր կրակի գեմ՝ անդոր են,
Մեր դրոշի դեմ՝ կխորտակվեն,
Մենք մութ աշխարհում ջահ ենք,
Մենք տանջված երկրին՝ դրոշ։
Թող գան...

Տերյանը երգում է Սովետական Հայրենիքի պաշտպանությունը, գրելով, որ մեր Հայրենիքը «մութ աշխարհում» վառված անմարելի մի ջահ է, հետևապես անալարտելի:

Տերյանը գործվանքով երգում է բուլեհիկյան պարտիայի պանծալի գործիչ Ստեփան Շահումյանին:

Պրոլետարական գրականության վետերան Հակոբ Հակոբյանի ստեղծագործության մեջ փայլատակում է ազատության «կարմիր գարունը»: Հակոբյանը Անդրկովկասի ծանր պայմաններում պարտիական-հասարակական աշխատանքը զուգակցում է դեղավեժատական ստեղծագործությանը, երգում է պրոլետարական ռևոլյուցիայի ասպետներին, արդարության կռիվը բռնության դեմ:

Հակոբյանը կերտում է իր «Կարմիր գալերեան», երգում Լենինին, Լենինի և Ստալինի անձնվեր զինակից Շահումյանին: Պոետը ցասումով պատկերում է Միջին Ասիայի ավազուտներում անգլիական իմպերիալիստների կողմից գնդակահարված՝ Բաքվի կոմոմնայի գործիչներին եղեռնական մահը:

Հակոբյանը խանդավառ երգում է Հոկտեմբերյան ռևոլյուցիան, պատկերելով այն որպես կյանքի վերածնություն, որպես «կարմիր գարուն».

Այրել միայն կարմիր գարնան...

Կովել միայն կարմիր գարնան...

Մեռնել միայն կարմիր գարնան....

Պրոլետարական պոետը գրում է «Դաշնակը ընկավ...» բանաստեղծությունը, դիպուկ պատկերներով վերարտադրելով այդ «հրեշի» կործանումը, որը, վերջին ժամին, երբ մահ էր զգում, «ձեռքերը լվաց կարմիր արյունով կոմոմնարներին»:

Հակոբյանը նվիրվում է սովետական Գոր կուլտուրայի և գրականության շինարարությանը:

Քաղաքացիական կռիւների տարիներին ռևոլյուցիայի հետ էին Շուշանիկ Կուրդինյանը, Մովսես Արազին, Անուշավան Վարդանյանը, Մադաթ Պետրոսյանը և երիտասարդ դրոշմների մի տմբողջ սերունդ, որոնց մեջ հատկապես աչքի էր ընկնում Նդիշե Չարենցը:

Քաղաքացիական կռիւների տարիներին իշխող գրական ժանրը պոեզիան էր, բանաստեղծությունը: Այդ շրջանում պոեզիայի ժանրն

էր իշխում նաև ռուսական սովետական գրականութեան մեջ: Նոր, ռե-
լյուցիոն իրականութիւնից ստացած թարմ տպավորութիւնները,
արագ, հակիրճ զգացմունքով արտահայտելու պահանջը մղում էր դեպի
չափածոն, նպաստելով քաղաքական լիրիկայի ծաղկմանը:



Հիմք ընդունելով գրականութեան զարգացման պրոցեսի անխզելի
կապը երկրի տնտեսական ու քաղաքական կյանքի հետ, կարելի է
նշել սովետահայ գրականութեան զարգացման հետեւյալ էտապները.

1. Սովետահայ գրականութիւնը ժողովրդական տնտեսութեան
վերականգնման և երկրի ինդուստրացման տարիներին:

2. Սովետահայ գրականութիւնը առաջին հնգամյակների տարի-
ներին:

3. Սովետահայ գրականութիւնը Հայրենական Մեծ պատերազմի
տարիներին:

4. Սովետահայ գրականութիւնը հետպատերազմյան շրջանում:

Սովետահայ գրականութիւնը այս բոլոր էտապներում ապրում է
անընդհատ զարգացման պրոցես: Ղեկավարելով Կոմունիստական
պարտիայի որոշումներով, յուրացնելով անցյալի ժառանգութեան լա-
վագոյն տրադիցիաները, սովորելով ռուս մեծ ժողովրդի գրականու-
թիւնից, սովետահայ գրականութիւնը ճշմարտացիորեն արտացոլում
է սովետական կյանքի բնորոշ գծերը, վերարտադրում է սոցիալիստա-
կան հարաբերութիւնների հաղթանակը՝ հնի դեմ մղվող համառ, ան-
հաշտ պայքարում:



ՀԱԿՈՒ ՀԱԿՈՒՅԱՆ

(1866—1935)

ԿՅԱՆՔԸ ԵՎ ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

**Մանկության և
պատանեկության
տարիները**

ընտանիքում:

Հայ պրոլետարական գրականության հիմնադիր Հակոբ Հակոբյանը ծնվել է 1866 թ. մայիսի 29-ին Գանձակ քաղաքում (այժմ Կիրովաբադ, Ադրբեջանական ՍՍՌ), արհեստավորի ընտանիքում:

Հակոբյանի հայրը, իր արհեստից ստացած եկամուտով դժվարությամբ էր ապահովում ընտանիքի աղքատիկ ապրուստը: Նշվածական կարիքի ու անապահովության ծանր պայմաններում Հակոբյանը մի կերպ ստանում է նախնական կրթություն: Յոթ տարեկան էր, երբ նրան ուղարկում են սովորելու Ծովի ազի անունով մի նահապետական կնոջ մոտ, «որի վարժարանը հիշեցնում էր տեր-թողիկյան դպրոցը» — ինչպես գրել է Հակոբյանը հետագայում:

Մի տարի հետո, Հակոբյանն ընդունվում է Գանձակի ժխական

դարոցը: Այստեղ երկու տարի սովորելուց հետո, հռահնում է ծեծի ենթարկվելու պատճառով: Այնուհետև նա ընդունվում է Գանձակի գիմնադրան, որտեղ սովորում է մինչև 5-րդ դասարանը: Հնարավորություն չունենալով այլևս շարունակելու իր ուսումը, Հակոբյանը գիմնադրայի 5-րդ դասարանն էլ կիսատ է թողնում և 1886 թ. փետրերվարին դուրս է գալիս դպրոցից:

... Բայց կարճ մնացի ուսումնարանում,
Աղբառի բախտը, դե, ի՛նչ է լինում...—

ասում է Հակոբյանն իր «Նամուս ու դեյրավ» ուտանավորում:

Գիմնադրայում սովորելու վերջին երկու տարիները Հակոբյանի համար թե՛ գրական զարգացման և թե՛ հասարակական-քաղաքական դիտակցության հասունացման տարիներ էին: Նախդուն ընթերցանության շնորհիվ Հակոբյանն այդ տարիներին պալի ծանոթություն ուներ և՛ Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Ղ. Աղայանի, Պ. Պռոշյանի և ուրիշ գրողների կյանքի ու ստեղծագործության հետ: Նրանց երկերը խանդավառ պատանուն ներշնչում էին ազատություն ու հայրենասիրություն և սովթանական ու ցարական բռնակալության նկատմամբ անհաշտ առեւթույն:

Պատանի Հակոբյանը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում նաև ուս գրականության նկատմամբ: Գանձակի ուսական գիմնադրայում սովորելով ուսերեն լեզուն, նա կարդում է Ա. Պուշկինի, Մ. Լերմոնտովի, Ն. Նեկրասովի, Ի. Տուրգենևի, Ն. Գոգոլի, Լ. Տոլստոյի երկերը:

Հայ և ուս գրողների ազդեցությամբ գիմնադրատ Հակոբյանը երազում է դառնալ բանաստեղծ: 1884 թ. սեպտեմբերից նա պահում է իր «Օրագիր-հիշատակարան»-ները, որտեղ դրի է առնում օրվա անցուղարձը, իր տպավորությունները, ինչպես և ինքնուրույն ու թարգմանական առաջին փորձերը: Հակոբյանի այդ «Հիշատակարան»-ներում հանդիպում ենք Պուշկինի «Ձմեռվա երեկո» բանաստեղծության թարգմանության փորձին, Լերմոնտովի սպանության մասին իր լսած տեղեկություններին և այլն:

1885 թ. Գանձակում կազմակերպվում է աշակերտական ինքնազարգացման խմբակ, որի պարբերաբար գումարվող ժողովներում շոշափվում են նաև քաղաքական հարցեր: Գիմնադրատ Հակոբյանն էլ այդ խմբակի անդամ էր և ակտիվ մասնակցում էր խմբակի հավաքույթներին, որոնցից մեկում նա ռեֆերատ է կարդում սովթանական

Թյուրքիայի ճնշման տակ հեծող Արևմտյան Հայաստանի դրության մասին:

Արդեն 19 տարեկան էր Հակոբյանը, երբ ստիպված դուրս է գալիս գիմնազիայից: Գանձակում աշխատանք չգտնելու պատճառով 1886 թ. սկզբին նա թողնում է հայրենի քաղաքը և գնում Թիֆլիս, որն հետագայում ապագա բանաստեղծի համար դառնում է «օջախ հարազատ, երկրորդ հայրենիք» — ինչպես գրում է Հակոբյանն իր «Թիֆլիս» պոեմում:

Թիֆլիսում նա աշխատանքի է ընդունվում իբրև դեղագործի աշակերտ: 1887 թ. սկզբին գնում է Բաքու, որտեղ մեկ տարի ևս աշխատում է դեղատանը: Բայց հետո հրաժարվում է դեղագործության մեջ մասնագիտանալու իր մտադրությունից և այնուհետև ընկնում է Բաքվի նավթագործարանային աշխարհը (Սև քաղաք)՝ աշխատելով մեծ մասամբ որպես հաշվապահի օգնական: մինչև 1893 թ. վերջը:

Հաշվապահությունը անհրապույժ մի զբաղմունք էր բանաստեղծական հակումներ ունեցող երիտասարդի համար, բայց, այնուամենայնիվ, հենց այդ զբաղմունքի շնորհիվ նա առիթ ու հնարավորություն ունեցավ մոտիկից ծանոթանալու բանվորական-գործարանային աշխարհին, որը և դարձավ Հակոբյանի համար շատ հարազատ աշխարհ, ապագա պրոլետարական ռևոլյուցիոն բանաստեղծի ստեղծագործական ոգևորության հիմնական աղբյուրը:

1889 թ. Հակոբյանը հրավիրվում է աշխատակցելու «Հուլս» անունով ձեռագիր ամսագրին, որ հրատարակում էր Բաքվի ռեալական դպրոցի աշակերտական միությունը: «Հուլս»-ում ապագրվեցին նրա մի քանի ոտանավորները՝ «Ուխտ բարեկամության» և այլն:

«Հուլս»-ի շուրջ համախմբված երիտասարդներն ոմնենում էին իրենց գրական հավաքույթները: Այդ հավաքույթներում ուսումնասիրվում էին Բելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Պրսարևի, Ուսպենսկու, Շիլլերի ստեղծագործությունները:

1894 թ. Հակոբյանը վերադառնում է Թիֆլիս: Այստեղ նա ծանոթանում ու մտերմանում է հրապարակախոս Ավ. Արասխանյանի հետ և դառնում նրա խմբագրությամբ հրատարակվող «Մուրճ» ամսագրի հիմնական աշխատակիցներից մեկը:

Դեռ Բաքվում եղած ժամանակ, Հակոբյանը հետզհետե աճող հետաքրքրություն է ցուցաբերում բանվորների ծանր վիճակի նկատմամբ: Բաքվից հետո Թիֆլիսում ևս, ավելի քան 5 տարի (1894—1899), նա

մշտապես առիթ ունեւր հաղորդակից լինելու գործարանային-բանվորական կյանքին: Այդ տարիներին նա աշխատում է նաև «Россия» սոսալհովագրական ընկերութան մեջ և ապա մեխանիկական գործարանում հաշվապահի պաշտոնով:

Ժամանակի հայ գրողներից ոչ ոք այնքան մոտիկից չէր տեսել ու չէր ճանաչում գործարանային աշխարհը, որքան Հակոբյանը:

Այդ տեսակետից ուշադրութեան արժանի է «Մուրճ»-ում (1894 թ.) տպագրված Հակոբյանի հոդվածը՝ «Բանվորների սոսալհովագրումը Ռուսաստանում դժբախտ դեպքերից» վերնագրով: Դա այն ժամանակվա գործարանային բանվորների ծանր, դժոխային կենսապայմանների մի փաստալից ուսումնասիրություն է, լի ուշադրավ դիտողություններով ու մտքերով, ինչպես բանվորների գրություն, նույնպես և բանվորների ու գործարանատերերի շահերի հակադրության վերաբերյալ:

Նկարագրելով գործարանային բազմաթիվ դժբախտ դեպքեր՝ Հակոբյանը գտնում է, որ Ռուսաստանում ու Անդրկովկասում ամենուրեք «բանվորների աշխատանքը դժոխային պարապմունք է»:

1899 թ. Թիֆլիսում լույս տեսավ Հակոբյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն: Դրանից դեռևս տարիներ առաջ Ղազարոս Աղայանն իր կազմած «Ուսումն մայրենի լեզվի» դասագրքում սիրով ղեանդում է Հակոբյանի առաջին շրջանի լավագույն բանաստեղծությունը՝ «Նամուս ու ղեյրաթ»-ը, որով և նշվում է բանաստեղծի հաստատուն մուտքը գրականության մեջ:

1901 թ. Հակոբյանն ընդունվում է աշխատանքի Թիֆլիսի Առևտրական բանկում հաշվապահի օգնականի պաշտոնով: Այստեղ նա աշխատում է շատ երկար ժամանակ՝ մինչև Վրաստանում սովետական կարգերի հաստատումը:

Դարասկզբին Անդրկովկասում տարեցտարի Ռևոլյուցիոն գործու-
նեւոյան սկիզբը
ալիւլի ու ալիւլի է ծավալվում մասսայական բանվորական շարժումը: Ի. Վ. Ստալինի ղեկավարութեամբ ձեւորվում են ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները:

Ռևոլյուցիոն շարժման ղեկավար կենտրոնը Թիֆլիսն էր: Այստեղ է սկսվում նաև Հակոբ Հակոբյանի ռևոլյուցիոն գործունեությունը:

1900 թ. Թիֆլիսի երկաթուղային արհեստանոցների բանվորության հետ Հակոբյանը մասնակցում է մայիսյան կյան տոնակատա-

րությանը: Նա հայ բանվորութեան համար ուսանողներից թարգմանում է մի շարք ռեւոլյուցիոն երգեր, ինչպես՝ «Ինտերնացիոնալ», «Մարսելյոզ», «Վարշավյանկա», «Անվախ ընկեր», «Մահվան քայլերդ» և այլն: Հակոբյանի շնորհիվ է, որ հայ բանվորներն առաջին անգամ իրենց մայրենի լեզվով լսում ու երգում են այդ երգերը, որոնք հետո (1906 թ.) տպագրվում են «Կայծ» և «Նոր խոսք» բոլշևիկյան թերթերում:

1904 թ. Հակոբյանն ընդունվում է ՌՄԳ(բ)Պ շտաբերը, և այնուհետև նրա կյանքն ու ստեղծագործությունն անխզելիորեն կապվում են պրոլետարիատի ռեւոլյուցիոն պայքարի հետ: Նա հանդես է գալիս որպես բոլշևիկ ռեւոլյուցիոններ, քաղաքական գործիչ՝ հմտությամբ ու հավատարմությամբ կատարելով Բիֆլիսի ընդհատակյա բոլշևիկյան կազմակերպությունների հանձնարարությունները: Նա ակտիվորեն մասնակցում է ռեւոլյուցիոն գրականության ու թուղիկների թարգմանության և տարածման գործին, քաղաքական ազդեցության և պարտիայի կազմակերպական աշխատանքներին:

Այդ ժամանակվանից, գրում է Հակոբյանը, «գրականությունն ու հեղափոխությունը ինձ մոտ ընթանում են սերտ կերպով միացած»: «...նա որոշակի չեմ կարող ասել, ավելի շուտ բանաստեղծ եմ եղել, թե՞ հեղափոխական գործիչ, ո՞րն է եղել առաջինը, ո՞րն է գերակշռել, հեղափոխականը՝ գրականին, թե՞ գրականը հեղափոխականին, զբժվարանում եմ ասել»:

Նվ իրոք, 1904—1905 թվականներից սկսած Հակոբյանն իր ստեղծագործությունը դիտում է իբրև ռեւոլյուցիոն սոցիալ-դեմոկրատական պարտիական աշխատանքի բաղկացուցիչ մասը: և

2. Հակոբյանը Ռուսական առաջին ռեւոլյուցիայի տարի- ներին և ռեակցիայի շրջանում

Ռուսական առաջին ռեւոլյուցիայի շրջանում Հակոբյանը ծավալեց պարտիական եռանդուն գործունեություն:

1906 թ. ապրիլից Ստ. Շահումյանի և Ս. Սուլանդարյանի ղեկավարությամբ հրատարակվում է բոլշևիկյան «Կայծ» թերթը, որի փակվելուց հետո՝ «Նոր խոսք» թերթը: Հակոբյանն ակտիվորեն աշխատակցում է այդ թերթերին, որպես բոլշևիկ բանաստեղծ: Առաջին անգամ այդ թերթերում են տպագրվում նրա «Ամբոխն իմ աշխարհը», «Հեղափոխություն», «Մայիսմեկյան երգ», «Պրոլետարիատին», «Մեռան, չկորան» և այլ բանաստեղծությունները:

Պարտիայի 4-րդ, «միավորիչ» համագումարից հետո Հակոբյանն ընտրվում է Թիֆլիսի ռաջոնական կոմիտեի անդամ:

1906 թ. Հակոբյանը հրատարակեց իր «Աշխատանքի երգեր» ժողովածուն, իսկ մեկ տարի հետո, սլավոնական միութենական կոմիտեի հրատարակությամբ, լույս տեսավ նրա «Հեղափոխական երգեր» ժողովածուն՝ Պրոկիսար ծածկանունով:

Հակոբյանի հենց այդ երկու խնամադիպ ժողովածուներով էլ նշանավորվում է գրական նոր հոսանքի՝ ռեուլյուցիոն պրոլետարական ուղղության սկզբնավորումը, նրա հաստատուն մուտքը հայ գրականության մեջ:

1905 թ. ռեուլյուցիայի սլավոնականից հետո, ռեակցիայի տարիներին, աներևակայելի ծանր պայմաններում էր ընթանում ռեուլյուցիոն աշխատանքը: Բայց, չնայած դրան, Հակոբյանն աներբե մնաց բոլշևիզմի դիրքերում թե՛ որպես ռեուլյուցիոն գործիչ, թե՛ որպես բանաստեղծ:

Յարական տատկանությունն անընդհատ հետապնդում էր բոլշևիկ բանաստեղծին:

1908 թ. Հակոբյանը կանչվում է Թիֆլիսի ժանդարմական վարչություն. նրան նկարում են, վերցնում մատների դրոշմը: Այնուհետև նրա բնակարանը քաղաքաց (1908—1909) ենթարկվում է խուզարկության՝ ռեուլյուցիոն գրականություն, թերթեր ու թուղիկներ դռնելու նպատակով: Բայց ցարական ժանդարմներին չէր հաջողվում Հակոբյանին բռնել «հանցանքի» մեջ: Եվ նա հաջողությամբ շարունակում էր ալիկի եռանդուն գործել թե՛ լեզալ և թե՛ անլեզալ պայմաններում:

Շուտով սկսվում է ռեուլյուցիոն նոր վերելքը: Հակոբյանը ռեուլյուցիոն բանաստեղծի սլաշառատեսությամբ, դեռ 1909 թ. կանխավզում է ռեուլյուցիայի նոր արևածագը, պատկերելով այն իր «Նոր առավոտ» պոեմում:

1912—1914 թվականներին Հակոբյանը նորից ու նորից ենթարկվում է ցարական ժանդարմերիայի հետապնդմանը: Իմպերիալիստական պատերազմի առաջին օրերին, 1914 թ. օգոստոսին, Հակոբյանը քանտարկվում է, բայց շուտով արձակվում:

1917 թ. սկզբին նա ավարտում է իր «Հավասարություն» պոեմը:

**Հ. Հակոբյանը
ռևոլյուցիայի հաղ-
թանակից հետո**

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռե-
լյուցիայի հաղթանակից հետո Հակոբյանը
նվիրվում է Անդրկովկասում սովետական կար-
գերի հաստատման համար մղված պայքարին:

Հակոբյանը մասնակցում է բոլշևիկյան «Պահակ» և «Նոր ուղի»
թերթերի հրատարակման ու խմբագրման գործին: «Պահակ» թերթում
տպագրվեցին բանաստեղծի նոր գրած մի քանի տառնավորները՝
«Վ. Ի. Լենինին», «Ստ. Շահումյանին», «Մարգարե հմ ես» և այլն:

1921 թ. փետրվարին, երբ Վրաստանում հաստատվեց Սովետա-
կան իշխանություն, Հակոբյանը Ռեկոմի անդամ էր և իշխանություն
դրավման հաջորդ օրը նշանակվեց Թիֆլիսի բանկերի կոմիսար:

1922 թ. Հակոբյանը կազմակերպեց Վրաստանի պրոլետարական
գրողների Ասոցիացիայի հայկական սեկցիան, որի աշխատանքը գըլ-
խավորում էր ինքը: Նույն թվականին Հակոբյանի խմբագրությամբ
սկսեց հրատարակվել «Դարբնոց» գրական ամսագիրը:

1923 թ. ամբողջ Անդրկովկասում տոնվեց Հակոբ Հակոբյանի
գրական գործունեության 30-ամյակը: Սովետական Վրաստանի և Սո-
վետական Հայաստանի կառավարությունները Հակոբյանին շնորհե-
ցին ռեսպուբլիկայի ժողովրդական բանաստեղծի պատվավոր կոչու-
մը: Այդ հոբելյանի առթիվ Հակոբյանի ընտրի բանաստեղծություննե-
րի ու պոեմների ժողովածուները լույս ահապահեցին վրացերեն, ադրե-
բեջաներեն ու ռուսերեն լեզուներով: Անդրկովկասի ժողովուրդները
պատվով պսակեցին պրոլետարիատի դասակարգային կովի, նրա
տանջանքների և հաղթանակի ոգևորված երգչին: Հակոբյանի հոբելյա-
նը նշվեց նաև Մոսկվայում:

Ավելի խանդավառված, ասեղծագործական նոր հեռանդով լցված,
բոլշևիկ բանաստեղծը արձագանքեց նաև սոցիալիզմի կառուցման
դառաջընթացի կյանքին ու պայքարին («Աստվածները խոսեցին», «Բու-
շևիկ է Շիր-Կանալը», «Վոլխովսարոյ» և այլն):

Հակոբյանը մեռավ 71 տարեկան հասակում, 1937 թ. նոյեմբե-
րի 13-ին, Թբիլիսիում:

ՆԱԽԱՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

2. Հակոբյանի ասեղծագործությամբ սկզբնավորվում է հայ պրո-
լետարական գրականությունը:

1912 թ. Սուրեն Սպանդարյանը Հակոբյանի մասին գրել է: «Այս հեղինակը պատկանում է այն սակավաթիվ հայ բանաստեղծների թվին..., որոնք վաղուց հրաժարվել են «թմբեկա-հայրենասիրական» թեմաներից և համամարդկային բնույթ կրող բոլորովին նոր մտքի մեջ են մտցրել հայ սոսնձիայի ու դրականության մեջ: Հայ գրականության մեջ Հ. Հակոբյանն առաջինն էր, որ խոսեց աշխատավոր մարդու տառապանքների ու ձղտումների մասին»:

Հակոբյանին, իբրև նոր տիպի բանաստեղծի, շատ բարձր է գնահատել նաև Ստ. Շահումյանը: 1916 թ. դրած իր մի հոդվածում նա Հակոբյանին բնութագրում է իբրև ճանաչված բանաստեղծ մի ամբողջ հասարակական խավի՝ դիտակցության եկող հայ բանվորության համար: Հակոբյանը հայ բանվորության ցավերի և ուրախությունների արտահայտիչն է, նրանց աշխատանքի ու կռվի երգիչը: Հենց այդ է պատճառը, որ բուրժուական-ազգայնական քննադատները մեծ կարծիք չունենալով նրա բանաստեղծական տաղանդի մասին, արժանի չեն համարել հիշելու նրան հայկական Պառնասոսում, — նշում է Շահումյանը:

Եվ իրոք, հայ բուրժուական-ազգայնական քննադատությունը միշտ էլ արհամարհանքով անցնում էր Հ. Հակոբյանի կողքով: Պրոլետարիատի երգչի ու լույսը լոռն մարտական սոսնձիան, իր նոր թեմատիկայով ու նոր գաղափարներով, չէր կարող դուր գալ բուրժուական ու մանր բուրժուական էսթետներին, ազգայնական ողբասացներին:

1916 թ. գրած «Ազգայիններին» բանաստեղծության մեջ Հակոբյանը պատասխանել է իր գաղափարական այդ հակառակորդներին ու միաժամանակ ճիշտ կերպով բնութագրել իր ուրույն տեղը հայկական պոեզիայում: Բանաստեղծն ասում է.

Ես երգեցի գործարանի սև աշխատանք
Եվ ճարճառված պողպատ մեջքերն անիվի տակ,
Ստեղծագործ հրաշքները կոշտ ձևերի,
Հաղթանակող թափը նրանց վեհ պայթարի:

Բայց հարկ է նշել, որ Հակոբյանն սկզբից նեթ Վաղ շրջանի ստեղծագործությունը հանդես է եկել ու չէր էլ կարող հանդես գալ իբրև պրոլետարիատի ու լույսը լոռն պայթարի երգիչ: Մինչև իր հիմնական ուղին գտնելը, Հակոբյանն անցնում է նախապատրաստական մի շրջան, որի ընթացքում նա կանգնած էր պրոդ-

դեմով ղեմնկրատական գրականության դիրքերում, հիմնականում նույն
այն դժի վրա, որտեղ միանում էին Հակոբյանի ժամանակակից մյուս
բանաստեղծները՝ Հովհ. Հովհաննիսյանը, Հովհ. Թումանյանը, Ավ.
Իսահակյանը:

Հակոբյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն հրա-
տարարվել է 1899 թ. Թիֆլիսում:

Բանաստեղծի այդ ժողովածուում իշխում են սիրո և բնության
երգերը, խնչպես և հայ ժողովրդի ծանր կյանքի ու հայրենասիրական
մոտիվները:

Բանաստեղծը բուռն սեր է արտահայտում իր ճնշված հայրենի-
քի ու ժողովրդի նկատմամբ: Նրա վշտի ու հուքեկան տառապանքի
աղբյուրը ոչ միայն հայրենի ժողովրդի անապատ վիճակն էր, այլև
նրա հետամոնացությունը, որի մեջ խարխալում էին մասնավորապես
աշխատավոր գյուղացիները: «Գեղջուկի վայրը», «Գյուղական բալ-
լադ», «Քրդի շունը», «Չարդ տանեմ» բանաստեղծություններն այդ են
պատկերում:

Բայց Հակոբյանի նույն այդ վաղ շրջանի ստեղծագործության
մեջ կան և այլ մոտիվներ, որոնցով նա որոշակիորեն տարբերվում ու
ահմանադծվում է իր նախորդներից ու ժամանակակիցներից: Այդ
սենսակետից շատ ցայտուն մի օրինակ է նրա ժողովրդական «Նամուս
ու ղեյրաթ» բանաստեղծությունը՝ դրված 1895 թ., որտեղ բանաստեղ-
ծը հարադատորեն նկարագրել է 80—90-ական թվականների համար
տիպական գործարանային հայ բանվոր արհեստավորի բարոյական
կերպարը և դրանով իսկ արտահայտել իր հոգեհարազատությունը
«մտրժ ու սալի» հետ ընկերացած աշխատավորներին:

«Նամուս ու ղեյրաթ»-ը Հակոբյանի այդ վաղ շրջանի ստեղծագոր-
ծության մեջ այն նոր խոսքն է, որ նախանշում է բանաստեղծի հետա-
գա ինքնուրույն ուղին հայկական պոեզիայում:

900-ական թվականների առաջին տարիները հասարակական-քա-
ղաքական կյանքի նոր էտապի, նոր էպոխայի սկիզբն էին Ռուսաս-
տանում ու Անդրկովկասում, երբ արդեն սկսված պրոլետարական
ռեյոլյուցիոն շարժումն իր բուռն վերելքն է ապրում:

Հասարակական կյանքի զարգացման այս նոր էտապի սկիզբն էր
արտահայտությունն է ունենում նաև Հակոբյանի աշխարհայացքի ու
ստեղծագործության մեջ: Տեղի է ունենում վճռական բեկում, անցում
պեպի «մտայնացիոն պրոլետարական դեմոկրատիզմի» դիրքերը:

**Քանաստեղծի
հասարակական
կոչումը**

Հակոբյանի ստեղծագործության նոր էտապն սկսվում է «Ամբոխի կոչը» (1902 թ.) բանաստեղծությամբ:

Այս բանաստեղծությամբ Հակոբյանն արտահայտում է պոեզիան ժողովրդի կյանքի և պայքարի արտահայտությունը դարձնելու դադափարը և կոչ է անում իր ժամանակակից բանաստեղծներին «վիշտը շոշող ու փայփայտող երգի» փոխարեն, երգելու սոցիալական բողոքի և ցասման երգ, ընդդեմ բռնության ու ճնշման:

Ի հակադրություն բուրժուական գրականության մեջ 900-ական թվականների սկզբից աճող հոսսետեսական տրամագրություններին, Հակոբյանն առաջադրում է մարտական պոեզիայի, վիշտ ու կարիքի մեջ տառապող ժողովրդին արիություն ներշնչող պոեզիայի պահանջը: Ի հակադրություն «արվեստն արվեստի համար» ռեալիստն տեսության, Հակոբյանն առաջադրում ու կենսագործում է պոեզիան, գրականությունը կյանքին, ժողովրդին ի սպաս դնելու, ժողովրդի կենսական պահանջներին ծառայեցնելու սկզբունքը: Եվ հենց այդ էլ կազմում է Հակոբյանի այս նոր, ռեալիստիկ շրջանի ստեղծագործության դադափարական հիմքը:

Ռուսական առաջին ռեալիստիկայի նախօրյակին Հ. Հակոբյանը նորից է անպարագառնում բանաստեղծի կոչման հարցին: Այդ մասին է փաստում «Ամբոխն իմ աշխարհը» բանաստեղծությունը, որը հեղինակի ստեղծագործական մանիֆեստն է՝ գրված նրա պոեզիայի զարգացման նոր շրջանի սկզբին:

Բանաստեղծն այստեղ այն միտքն է զարգացնում, որ՝ ինչքան էլ դրավիչ լինեն բնության հրաշալիքները, ժողովրդի հետ օրդանապես կապված բանաստեղծը չի կարող և իրավունք չունի նրանցով տարվելու ու կտրվելու «մայր հողից»:

Բանաստեղծը խորապես զգում և փոխակցում է, որ «երկրից վերանալ» չի կարող, որովհետև իր կյանքով ու արյունով կապված է իրեն ծնող ժողովրդի հետ:

Հողին ձուլված է նրա հոգու մեջ,

Ջրերս կապված նրա ջրերին,

Մի այլ ճանապարհ

Գոյություն չունի երեք ինձ համար...

Եվ իրոք, Հակոբյանի ուժն այն է, որ նա հոգեպես ձուլված լինելով աշխատավոր ժողովրդի հետ, իր մարտաշունչ երգերով նրան

ցիւց է տալիս փրկության ճիշտ ճանապարհը — դասակարգային պայ-
քարի ճանապարհը:

Հայ գրականության մեջ Հակոբյանն առաջինը իր ստեղծագոր-
ծությամբ իրականացրեց կենինի առաջադրած պարտական գրակա-
նության սկզբունքը, ստեղծեց մեղանում «պրոլետարիատի հետ բաց-
որոշ կապված գրականութիւնը»: Հետեւելով կենինի իմաստուն պատ-
գամին, Հակոբյանը 1905 թ. սկսած իր ստեղծագործութիւնը դիտում
է՝ իբրև ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատական աշխատանքի բաղկա-
ցուցիչ մասը, քայլ առ քայլ արձագանքելով պրոլետարիատի ռևո-
լյուցիոն պայքարին, պոեզիայում մարմնավորելով կոմունիստական
պարտիայի իդեանները:

Հակոբյանը որպէս պոետ-ռևոլյուցիոններ դեմ դնուց տիրապետող
բուրժուական գեղագիտական սկզբունքներին: Նա մերժեց այդ սկզբ-
քունքները և իր ստեղծագործական պրակտիկայում հետևողականո-
րեն կիրառեց իրականության գեղարվեստական պատկերման այն
ճկղբունքը, ըստ որի բանաստեղծության նյութ կարող է լինել այն
ամենը, ինչ որ կենսական նշանակութիւն ունի աշխատավոր ժողովրդ-
դի համար. կապված է ժողովրդի կյանքի ու ազատագրական պայքարի
հետև նպաստում է այդ պայքարի զործին:

Գրական այդ նոր սկզբունքը կենսագործելու համար Հակոբյա-
նի ստեղծագործական մոտքին ուղղութիւն էր տալիս լենինյան իմաս-
տուն գաղափարը գրականության պարտականության մասին:

Ոգեշնչված այդ գաղափարով, Հակոբյանը որպիս պոետ-նորա-
գար, պոեզիայի նյութ դարձրեց բուրժուական դրողների ու գեղագետ-
ների կողմից արհամարհված մի ամբողջ նոր աշխարհ, — բանվորների
կյանքն ու աշխատանքը, պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարը ցա-
րիզմի ու կապիտալիզմի դեմ՝ հանուն սոցիալիզմի:

Հայ գրականության մեջ առաջին անգամ Հա-
կոբյանի շնորհիվ բանվորը դարձավ գեղար-
վեստական ստեղծագործութիւն կենտրոնա-
կան հերոս, որի կերպարը բանաստեղծը զծա-
գրում է ռեալիստական ճշմարտությամբ և ումանալիական խանդա-
վառությամբ:

Բայց բանվորի բանաստեղծական կերպարը Հակոբյանի ստեղծա-
գործության մեջ անընդհատ զարգացել է՝ համաձայն այն էության-

րի, որ անցել է ռևոլյուցիոն պրոլետարական շարժումն Անդրկովկասում:

Բանվորի գեղարվեստական կերպարի այդ էվոլյուցիան Հակոբյանի պոեզիայում ակնառու կդառնա, խոր համեմատենք, օրինակ, դարբնի պատկերումը «Նամուս ու ղեյրաթ» (1895 թ.) և հետագա՝ ռևոլյուցիոն շրջանում գրված բանաստեղծություններում:

«Նամուս ու ղեյրաթ»-ում գծագրված դարբինը բնութագրվում է իր աշխատասիրությամբ և «նամուս ու ղեյրաթի» իր բարոյախոսությամբ: Նյութական անապահովության պատճառով նա շատ կարճ է մնացել ռևոլյուցիոնարանում և հոր պատվերով սովորել է արհեստ՝ դարբնություն: Եվ այնուհետև նա «ընկերացել է մուրճ ու սալի հետ», «քրտինքը ղեմքից կաթ-կաթ ծորակով» աշխատում է և հենց այդ էլ նա համարում է «նամուս ու ղեյրաթ», — պատիվ, ազնվություն ու ջանասիրություն: Նա սիրում է իր արհեստը և խարժեք անտրտունջ ասելում է նրա «վաստակով համեստ»:

Բայց դրանից մեկ տասնամյակ հետո դրած բանաստեղծություններում դարբնի կերպարը հիմնովին տարբերվում է «Նամուս ու ղեյրաթ»-ի դարբնից: Հիշենք «Դարբնի երգը» բանաստեղծությունը (1905 թ.):

Այստեղ արդեն պատկերված է ռևոլյուցիոն բանվոր դարբինը, որը գիտակցում է իր ուժը և պայքարի է դուրս եկել «լավ օրվա» համար: Այս բանաստեղծության մեջ դարբնի վերաբեր ռևոլյուցիոն պայքարի գաղափարով է համակված: Դարբինը կոչ է անում իր ընկերոջը իրենց «բախար կոկու» մասին, այն մասին, որ իրենց մուրճի հետ հարվածից «շանթի տարափ փուլի շուրջը», «լուսավորվի աշխարհը»: Դարբինը տեսնում է, որ «մոտ է ահա լավ օրը» և այդ գիտակցությամբ խանդավառված, նա դորժի է կոշում՝

Այնպես թափով սալին զարնենք,
Որ գողգոթա աշխարհը:

Բանաստեղծն այժմ տեսնում է դարբնին մարտնչողների շարքերում, «խումբ-խումբ բանվոր ընկերների» հետ միասին, որոնց «հաղթ երգերի արձագանքը» «սարսափ է ազդում թշնամուն» («Մայիսմեկյան երգ», 1906 թ.): Դարբինը արդեն հասել է դասակարգային «վեհ գիտակցության»:

Դարբնի կերպարը գաղափարական ավելի խոր ընդհանրացման և հասնում «Նոր առավոտ» և «Կարմիր ալիքներ» պոեմներում:

Այսպիսով, դարբնի կերպարի մեջ բանաստեղծը բնութագրում է բանվորին թե՛ որպես «կյանքի անվեր շարժող միջնարկ» ուժի, և թե՛ որպես «դարբինն իր կյանքի», որի հարվածից է կախված նաև ամբողջ մարդկության ապագան:

**Ռեկուլցիայի ար-
ձագանքը Հակոբ-
յանի լի իկալում**

Հակոբյանի պոեզիայի լավատեսության հիմքը պրոլետարիատի ու նրա ավանդարդի՝ բոլշևիկների պարտիայի նկատմամբ ունեցած հավատն է, հասարակության ռեկուլցիոն վերափոխման գաղափարը: Բանվորի կերպարը դարձարանային ստեղծագործական աշխատանքի մեջ պատկերելուն ղուղընթաց Հակոբյանը բանվորին պատկերում է նաև ռեկուլցիոն պայքարում: Նրա պոեզիայում դարբին բանվորի կերպարի հետ միաժամանակ, բարձրանում է նաև բանվոր-ռեկուլցիոների, ռեկուլցիայի առաջամարտիկի կերպարը:

1905 թ. հոկտեմբերի 17-ին, ցարական մանիֆեստի առթիվ նա գրում է իր նշանավոր «Մե՛կ էլ, մե՛կ էլ» բանաստեղծությունը և նույն օրը վարդում է Թիֆլիսի բանվորական Նախառվվա արվարձանում կազմած միտինգում:

Ցարի խաբեբայական մանիֆեստին բանաստեղծը հակադրում է ռեկուլցիոն պայքարի գեղարվեստական խոսքի մանիֆեստը: Նա կոչի է կոչում բանվորներին, ռեկուլցիայի գործի առաջամարտիկներին, նրանց ոգևորում հաղթանակի հավատով:

Հե՛յ, ձեզ մատաղ, բանվոր տղերք,
Մե՛կ էլ, մե՛կ էլ մի զա՛րկ տվեք,
Մի զա՛րկ տվեք ցարի զահին,
Որ խորտակվի՝ նա հիմնովին:

Բանաստեղծի համար պարզ է, որ ռեկուլցիայի հիմնական շարժիչ ուժը պրոլետարիատն է, նրանից է կախված ռեկուլցիայի բախտը, այդ պատճառով նա իր խոսքը «բանվոր տղերքին» է ուղղում:

Բանաստեղծն անձամբ մասնակցելով ռեկուլցիային, իր ստեղծագործության մեջ անմիջականորեն անդրադարձնում է նրա ուժն ու հզորությունը և կոչ անում ժողովրդին կրճելով պաշտպանելու նրան: «Հեղափոխություն» բանաստեղծության մեջ նա ցնծադին բացազանջում է.

Երկունքի միջից մանուկը ծնվեց Մեծ Աղատության,
Ընկե՛ր, իմ ընկե՛ր, ահա մանուկը հեղափոխության.
Փորձության ժամին երգվի՛ր կրճբովը պաշտպանել նրան:

Ռուսական առաջին ռևոլյուցիան պարտութեամբ վերջացավ: Վրաս-
հասան սոտորիայինյան ռեակցիայի ծանր տարիները: Ռեակցիան հար-
ձակում սկսեց բոլոր զժերով, այդ թվում և իդեոլոգիական: Ճակա-
տում: Գրականության մեջ տիրապետող դարձան «մոդայական գրող-
ները», իրենց անկումային ստեղծագործությամբ: Անկումայնությունից
վերծ շմնաց նաև պարտիական ինտելիգենցիայի մի մասը:

Հակոբյանն իբրև բողջեիկ բունաստեղծ հավատարիմ մնաց դրա-
կանության պարտիականության սկզբունքին, աների կանգնեց պրո-
լետարական ռևոլյուցիայի դիրքերում: Ռեակցիայի և իմպերիալիս-
տական պատերազմի տարիներին նա դադար հաղթանակի մասին էր
երգում, հույս էր ներշնչում վհատվողներին, որ վեներ վայր չդնեն,
այլ պատրաստ լինեն նոր ու վերջին հաղթական գրոհին: Նրա այս
շրջանի ձեռքերը ժամանակավորապես պարտված ռևոլյուցիայի ար-
թուն ու խիղաս պահալի երբեք են, որոնցով նա պրոլետարիատի
բանակի մարտիկներին «հոգու արիություն» է ներշնչում, աղքատու-
րում իր անհողդողդ կյանքի ու վճռականության մասին՝ կանգնած
մնալ ռևոլյուցիայի պաշտպանության դիրքերում: Այդ իմաստն ունի
«Պահակը» (1913 թ.) բանաստեղծությունը.

Թող կորչե՞ն ոգիք լրուն, վարանոտ,
ես կանգուն եմ դեռ իմ դիրքի վրա.
Եվ ինչպես պահակ, մինչ լույս առավոտ,
Պիտի հսկեմ վես բարձունքը նրա:

Ռևոլյուցիայի «վես բարձունքը» հսկող անվահեր «պահակը» չի
վախենում թշնամու «մահադավ» զնդակից, որովհետև հավատում է
բանվոր դասակարգի հաղթանակին.

...Եվ եթե հանկարծ թշնամին կյանքիս
Մթին անկյունից մահադավ լարի,
Ոչինչ... կմտնեմ ժպիտը դեմքիս,
Նշան հավատո գալիք հաղթ օրի:

Հոսահատության ոչ մի նոտա չի հնչում Հակոբյանի քնսրից:
Ռևոլյուցիայի ժամանակավոր պարտությունը նա չի ընդունում հոգու
ընկճվածությամբ:

Բոլշևիկ բանաստեղծը խորապես մերապրելով զոհված մարտիկների կորստի վիշտը, չի բնկնվում այդ վշտի ծանրության տակ՝ «Ազատության դինսկորներն անապարտ են» իրենց մահվան մեջ, իսկ բանաստեղծը լսում ու լսելի է դարձնում նրանց վրեժի կոշող ձայնը։

Ահա ռեուլյուցիայի անձնալուծ մարտիկների հերոսական մահվան ծանր տեսիլը՝ ցնցող պատկերներով տրված «Նահատակները» բանաստեղծության մեջ (1908 թ.)։

Հերոս նահատակները վերականգանանում են՝ ցարական դահլիճների կողմից խոշտանգված դեմքերով ու մարմնով, նրանք իրենց անհայտ գերեզմաններից շարք-շարք բարձրանում, շարժվում, «գալիս են, գալիս...»։

Գալիս են, գալիս... նայեր այն ձորին,

Վերջ չկա ծայրին...

Գալիս են նրանք ան կմախքների

Ծով գլուխներով,

Գալիս, փրվելու մյուս ակիքների

Հառաչանքներով.

Նրանց բիրերը կախաղանների

Չվանից պայթած,

Նրանց կրծքերը համադարկերից

Ծակոտված, ջարդված,

Մեկի բերանից դեռ թարմ արյունը

Կաթ-կաթ ծորալիս,

Մյուսի ճակատին վերքի բերանը

Սև-սևին տալիս,—

Գալիս են, գալիս...

Հերոս նահատակները կենդանի մնացածներին վրեժի են կաշում։ Նրանք բողբոջում են իրենց դահլիճների դեմ և «նրանց բողբոջից... քարերն են հուլվում», նրանք կարծեք թե կենդանի դայրույթով որոտում են ու նրանց ահռելի որոտումներից «ցնցվում է երկինք»։ Բանաստեղծը տեսնում է հաղթանակի հեռանկարը, նա կանխազգում է ռեուլյուցիայի «իննեբորդ ակիքի» բարձրացումը։

«Նոր առավոտ»

պոեմը

Լեռնակցիայի տարիներին ու ռեուլյուցիոն շարժման նոր վերելքի նախօրեին Հակոբյանը գրեց «Նոր առավոտ» (1909 թ.) և «Կարմիր ակիքներ»

(1911 թ.) պոեմները, իսկ հետո «Հավասարություն» պոեմը (1916—1917)։ Այդ երկերը բնութագրում են պոետի անողորմաբանական զար-

դաջման առավել բարձր աստիճանը, երբ Հակոբյանն այլևս չի բավարարվում լիրիկական ժանրի փոքրածավալ երկերով: Հարկավոր էր դիմել պոեմի ժանրին՝ իրականությունը, կյանքը գեղարվեստական ավելի չափն ընդգրկումներով պատկերելու համար:

Ինչպես Հակոբյանի ռուլյուցիոն քաղաքացիական լիրիկան, նույնպես և նրա պոեմները ստեղծագործական թարմ մտքի ինքնատիպ արտադրանքներ են: Եթե XIX և XX դարերի հայկական պոեզիայում եղած գերազանցապես սոցիալական պոեմների համեմատությամբ Հովհ. Թումանյանն ստեղծեց նոր տիպի, հիմնականում ռեալիստական բնույթի պոեմներ, ապա Հակոբյանն էլ ինքնուրույնություն է հանդես բերում՝ ստեղծելով միանգամայն նոր տիպի, սոցիալիստական ռեալիզմի պոեմներ: Նրա պոեմները նվիրված են ամենաառաջավոր դասակարգի՝ պրոլետարիատի կյանքին ու պայքարին:

Հակոբյանի առաջին մեծ պոեմը՝ «Նոր առավոտ»-ը, նախ տրավելեց 1909 թ. «Գեղարվեստ» հանդեսում և ապա՝ 1910 թ. լույս տեսավ առանձին գրքույկով:

«Նոր առավոտ»-ն իր ժանրային բնույթով լիրիկական-խոհական պոեմ է, որ կոնկրետ սյուժե չունի: Պոեմում գլխավոր դործող անձը՝ հերոսը՝ ինքը բանաստեղծն է, որ նկարագրում, պատկերում է իրական կյանքը և խորհրդածում իր նկարագրածի շուրջը: Բայց բանաստեղծի խոսքն ու խորհրդածություններն ուղղված են մի այլ անձի, որին բանաստեղծը դիմում է, որի հետ խորհրդածում, վիճում է և որի ներկայությունն ղգալի է ամբողջ պոեմում, բայց նա հանդես չի բերված իբրև ակտիվ գործող անձ: Դա բանաստեղծի երազած կինը կերտված է, որին հրավիրում է նա իր հետ միասին ակտիվորեն մասնակցելու «չարքաշ մարդկության», — այսինքն բանվոր դասակարգի ու ողջ աշխատավոր ժողովրդի ազատագրական պայքարի վեհ գործին:

Պոեմի առաջին մասի (1—5 զբոսները) բովանդակությունը՝ սիրո և գեղեցկի նոր ըմբռնումն է՝ օրդանապես միացած բանվոր դասակարգի ճնշված վիճակի պատկերման ու նրա ազատագրական պայքարի ռուլյուցիոն գաղափարին: Կյանքի իմաստի և սիրո ու երջանկության վերաբերյալ լիրիկական խորհրդածություններին հաջորդում է իրական կյանքի նկարագրությունը: Պոեմի երկրորդ մասում (6-րդ զբոսից սկսած) պատկերված է կասիտալիստական դործարանը և բանվորի, թեև անազատ ու ծանր, բայց հրաշագործ աշխատանքը դործա-

բանում: Գործարանի ու յանվորի մտեղծարարական աշխատանքի նկարագրությանը միահյուսված են պոեմի լիրիկական հերտափ (այսինքն՝ բանաստեղծի) խորհրդածությունները, որոնցով հեղինակն իր ակտիվ վերաբերմունքն է ցուցաբերում և սարտահայտում իր ռեալիստիկ զգացքը իրականության նկատմամբ: Պոեմում կապիտալիստական գործարանի պատկերման միջոցով բանաստեղծը ցայտուն կերպով ցույց է տալիս հասարակության երկու հակոտնյա դասակարգերի՝ պրոլետարիատի ու բուրժուազիայի անհաշտ հակադրությունը, բուրժուական հասարակարդում տիրող սոցիալական անուսպանիղմը՝ դրանով իսկ արտահայտելով ռեալիստիկ սոցիալարի անհրաժեշտությունը գաղափարը:

Բանաստեղծն իր սիրած աղջկան ասում է.

— Գնանք գործարան,
Դեպի կարիքի, բաղց ու տանջանքի
Այն եռուն քուրան.
Այնտեղ կտեսնես ղրկանքի որդուն,
Ուր ինքն աշխատում, ուրիշն է ուտում:

Պոեմի 7-րդ գլխում գործարանի ներքին կյանքը պատկերելու համար, բանաստեղծը դիմում է ղեղեցիկ բնություն, և մռայլ, դաժանատես գործարանի հակադրությանը: Բանաստեղծն ասում է, որ այնտեղ՝ գործարանում «չկան ծառ ու ծաղիկներ— բաղել ու խոտեր, հավքերի նվազ, դուլ-դուլ աղբյուրներ և տշալ-վարդեր», «չես տեսնիլ այնտեղ լուսնյակ գիշերի լուսաշող ամպեր»:

Այնտեղ ծառի տեղ ցցված են խրոխտ
Նրկաթն սյուներ,
Բաղել խոտի տեղ՝ ցանցերի փշոտ
Պողպատն լարեր.
Գեղախոս թռչնոց երգի փոխարին
Կըլան ալյտեղ
Ճախարակների ղնդային որոտ,
Եվ խնթ փոկերի համերգը ահեղ:

Բանվորներն «այնտեղ խնդրվում են շողու ամպերից», «պաղ աղբյուրի տեղ՝ քրտինք ամեն օր, վարդի փոխարեն ծորում, քամվում է արյուն սրտերից»:

Իսկ դործարանի «արհեստանոցի աղյուս պատերը խոնավ ու թաց են, «կարծես բանվորի քրտինքով են թրջված»:

Գործարանի այդ արտաքին նկարագրովթյունից հետո, պոեմի հաջորդ գլխում, նույնպիսի վառ, ցայտուն շտրիխներով նկարագրվում է նուև դործարանի ներսը՝ բանվորի ծանր ստրկական աշխատանքը կապիտալիստական դործարանում:

Ահա «կաղնի—բանվորը» «կորացած մեջքով»: Բանաստեղծը արվարձանում ասում է.

Ա՛խ, շատ եմ տեսել նրան, իմ ընկեր,
Սկայած երես, ծխի մեջ կորած,
Ու դեռ հասակը երեսուն չառած՝
Կամ մեքենան է ճխլում իր թաթում —
Ոտքերը փշրում, բաղուկը հատում,
Կամ ալ հեղուկը ալրում, փոթոթում...

Գործարանային աղետների ծանր տպավորությունը չի հեռացնում, այլ ավելի է սրում բանաստեղծի ուշադրությունը բանվորի ըստիճադործական աշխատանքի վրա, ներկայացնելու այն, որպես հերոսություն, մեծագործություն, որ կատարում է բանվորը իր յլանքն սմեն վայրկյան վտանգի տակ դնելով: Հ. Հակոբյանը բանվորի ծանր աշխատանքային առօրյան պատկերում է այնպիսի կոնկրետությամբ, որ նկարիչը կարգաւում՝ կարող է նկարել, իսկ քանդակագործը՝ քանդակել:

Ես տեսա նրան, սիրելի ընկեր,
Մի մթին գիշեր,

Քուրան էր վաւում, փնշում կատաղած,
Ամեն անկյունից, որպես վիշապներ,
Կարմիր կրակը լեզուներ հանած՝
Օգը լիզելով երկաթն էր ծամում,
Ծուփ-ծուփ շիկանում,
Եվ նրա դիմաց դարբինը կանգնած,
Ալ բոցի գուլնից թափ, եռանդ առած,
Չորցած մատներով երկաթն էր կռում,
Եվ պողպատ մեջքով համառին ծոռում—
Կռում ու կռւում...

Եվ մինչ մի նոր ձև, մի կյանք չէր տալիս
Անշունչ մետաղին՝ չէր հանգստանում:

Տալով բանվորի հերոսական այս ցայտոմն դիմանկարը, այնուհետև, որպես ընդհանրացում և իր նկարագրության խմաստավորում՝ բանաստեղծն անմիջապես ավելացնում է.

Եվ խորհում էի... ահա, թե ուր է
Ձգտում բանվորի ստեղծող ոգին,
Ահա թե ինչու կարմիր ալ գույնը
Նա սիրեց այնպիս խանդավառագին,
Ու թեև կաթ-կաթ քրտինքն է ծորում
Մրոտ ճակատից,
Բայց էլի մի իր, մի գործ է ձուլում
Անշունչ երկաթից,
Մի հոյակապ գործ,
Որով կոփվում է իր կամքը երկաթ,
Սուլում ու բովում հավատն անհաղթ:

Այսպիսով Հակոբյանը ռեուլյուցիոն լավատես հայացքով է լուսավորում իր պատկերած մոալ աշխարհը: Կոպիտալիստական գործարանը՝ «գրկանքի որդւո»՝ բանվորի համար ոչ միայն տանջարան է, այլև դասակարգային պայքարի դպրոց: Բանվորի աշխատանքը գործարանում՝ նրա սոցիալական ուժն ու կենսունակութունն է ցույց տալիս, միաժամանակ և նրա իրավունքը՝ ազատ ու երջանիկ ապագայի նըկատմամբ:

Բոլշևիկյան պարտիայի ականավոր գործիչներ Ստ. Շահումյանն ու Սուրեն Սպանդարյանը շատ բարձր են գնահատել հայ պրոլետարական պոեզիայի այս նշանավոր երկը՝ «Նոր առավոտ» պոեմը:

Սուրեն Սպանդարյանը «Նոր առավոտ» պոեմի մասին գրել է առանձին գրախոսություն (տպագրված է Բիֆյիսի բոլշևիկյան «Листок копее́нка» անունով թերթում՝ 1911 թ. ապրիլին): Սպանդարյանը նախ տալիս է Հ. Հակոբյանի ընդհանուր բնութագիրը, որպես նոր տիպի բանաստեղծի, որպիս պրոլետարիատի կյանքի ու ռեուլյուցիոն պայքարի երգչի, նշելով նրա ստեղծագործության արմատական տարբերությունը բուրժուական-ազգայնական գրողների ստեղծագործություններից: Սպանդարյանն այնուհետև քննության է առնում «Նոր առավոտ»-ը և նշում, որ այստեղ պատկերված է «անհատական և հասարակական ձգտումների ընդհարումը» և որ «առանձնապես հաջող ու գունեղ են պոեմի այն տեղերը, ուր սինթետիկ ձևով նկարագրվում են ժամանակակից գործարանները և հանքահորերը, բանվորների աշխատանքը, նրանց ուժը և նրանց հույսերը»:

Սպանդարյանի այս խոսքերում բացահայտվում է Հակոբյանի պոեմի թե՛ դադափարական բովանդակությունը և թե՛ նրա գեղարվեստական արժեքը:

Ստ. Շահումյանը 1910 թ. կարդալով պոեմի առանձին հրատարակությունը, որ իրեն էր ուղարկել հեղինակը, մի նամակով ողջունում է բանաստեղծին: Նա միաժամանակ ուղարկում է նրան պոեմի իր կարդացած օրինակը՝ բազմաթիվ դրվատական ու քննադատական դիտողություններով, որ մատիտով կատարել էր ինքը պոեմի գրեթե բոլոր էջերի լուսանցքներում:

«Նոր առավոտ»-ի հետագա հրատարակությունները զգալիորեն տարբերվում են 1910 թ. հրատարակությունից: Ծանոթանալով Շահումյանի քննադատական ուղենիշ դիտողություններին, բանաստեղծն այնուհետև վերանայում ու վերամշակում է իր պոեմը՝ վերացնելով բոլոր այն թերությունները, որ նկատել էր Շահումյանը՝ զխավորապես պոեմի լեզվի ու ոճի մեջ: Շահումյանը Հակոբյանի երկի հիմնական թերություններն էր համարել՝ սեղ-սեղ արևմտահայերենի ու գրաբարի լեզվաձևերի գործածությունը, չմշակված ու անորոշ արտահայտությունների և ավելորդ բառերի ու տողերի առկայությունը, պոեմի անհաջող վերջավորությունը և այլն:

Բայց քննադատական այս դիտողություններն անելով պոեմի առանձին թերությունների մասին, Շահումյանը միաժամանակ հիացմունք է արտահայտել «Նոր առավոտ»-ի մասին:

Շահումյանին դուր են եկել պոեմի առավելապես լիրիկական հատվածները, ինչպես և դործարանն ու բանվորի ստեղծագործական սշխատանքը պատկերող մասերը, որոնք հատկանշվում են խորը հուղականությամբ, առողջ օպտիմիստական կենսազգացողությամբ և ինքնատիպ պատկերներով, գեղեցիկ փոխաբերություններով ու համեմատություններով:

«Նոր առավոտ» պոեմում՝ Հակոբյանը, ի հակադրություն ռեալիստիկ շրջանում տիրապետող անկումային գրականության, ռևոլյուցիայի գաղափարն է արտահայտում, կանխազգուս գալիքի «նոր առավոտը» և արձագանքելով Մ. Գորկու «Մրկահավի երգին»՝ ռևոլյուցիոն փոթորկի երգն է երգում:

«Նոր առավոտ»-ից մի քանի տարի հետո Հակոբյանը գրում է նրա «Զ-րդ ցիկլը» համոլիսացող «Կարմիր ալիքներ» (կամ «Փոթորիկ») պոեմը: Այս երկում հեղինակը պատկերել է Անդրկովկասի բազմազգ

պրոլետարիատի պայքարը բոլշևիկների պարտիայի գլխավորութեամբ, ռուսական առաջին ռեւոլյուցիայի տարիներին:

1917 թ. սկզբին գրած «Հավասարութուն» պոեմն իր դադափարակաւ բովանդակութեամբ «Նոր առաւիտ»-ի և «Կարմիր ալիքներ»-ի օրգանական շարունակութունն է:

Այս պոեմով Հակոբջանը, դեռևս ռեւոլյուցիայի հաղթանակից սուաջ, գեղարվեստորեն պատկերել է ապագա սոցիալիստական հասարակութունը՝ իբրև մարմնավորված իրականութուն:

Բանաստեղծն իր ստեղծագործական ֆանտազիայի հիմքում ունեցել է մարքսիզմ-լենինիզմի ուսմունքը անդասակարգ սոցիալիստական հասարակարգի էութեան ու բնույթի մասին:

Մտել եմ, ահա մի նորեկ աշխարհ—
Մտել եմ սքանչ հերիաթի դռնով,
Այստեղ ամեն ինչ նոր է ինձ համար,
Նոր ու կատարյալ իր վեհութիւնով...:

Այսպես է սկսվում «Հավասարութուն» պոեմը: Այնուհետև բանաստեղծը փորձում է պատկերել սոցիալիստական հասարակարգը մարդկային նոր հարաբերութիւններով, կյանքի և աշխատանքի նոր պայմաններով, բարձրագույն զարգացման հասած տեխնիկայով ու կուլտուրայով, իսկ այդ ամենի կենտրոնում՝ շահագործումից, ճնշումից ու կաշկանդումից լիովին ազատ մարդուն, իր ֆիզիկական ու հոգեկան-մտավոր կարողութիւնների անարգել զարգացման հնարավորութիւններով:

...Նվ աշխատանքը, որ բիւ էր առաջ,
Զրկանք ու տանջանք,
Այժմ դարձել է նոր մարդու համար
Հոգու զվարճանք,—

ասում է բանաստեղծը՝ երազելով սոցիալիզմի հաղթանակը:

Այս «Նորեկ աշխարհում» վաղուց արդեն վերացել է փողի տիրապետութունը, «ձուլլ ոսկիների լեռները» «ծառայում են այժմ որպէս արձանների պատվանդան միայն»:

«Հավասարութուն» պոեմն այն նշանակութունն ունի, որ անշուշտագործաւ համար մարտնչող բանվորն ու դուռնացին նրանում տեսնում էին իրենց ծանր, զրկանքով ու զոհերով լի պայքարի հեռանկարը, որից նոր հոռնդ էին ստանում:

«Հավասարություն» պոեմը Հ. Հակոբյանի մեծարժեք երկերից է, որով ավարտվում է նրա դրական գործունեության մինչհոկտեմբերյան շրջանը:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

1917—1921 թվականներին Հակոբյանը գրում է մի քանի բանաստեղծություն, դրանք են՝ «Աշխատանքի էլեգիաներ» շարքից՝ «Սև ոսկին» ու «Ալավի տակ», որտեղ նկարագրում է Բաքվի բանվորների ստրկական ծանր աշխատանքն այդ տարիներին և կոչ է անում բանվորներին՝ «նավթատիրոջ բուկը սեղմել թաթերի մեջ»՝ տեղի դառնալու իրենց կյանքին ու աշխատանքին:

Այդ թվականին է գրված նաև «Վ. Ի. Լենին» վերնագրով բանաստեղծությունը, որը ռևոլյուցիայի անմահ առաջնորդի կենդանության օրով նրա մասին գրված առաջին բանաստեղծություններից մեկն է սովետական պոեզիայում:

Քաղաքացիական պատերազմի հաղթական ավարտումը և սովետական կարգերի հաստատումը ամբողջ Անդրկովկասում, հզոր Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության ստեղծումը և սոցիալիզմի հիմքի հաղթական կառուցման սկիզբը նոր հեռանկարներ են բաց անում բոլշևիկ բանաստեղծի համար: Սկսվում է նրա ստեղծագործական կյանքի նոր շրջանը՝ սովետական գրականության հիմնադրման ու հետագա զարգացման համար մղվող պայքարի շրջանը, որի ընթացքում Հակոբյանը հավատարիմ մնաց իր ստեղծագործական դավանանքին՝ գրականության ռևոլյուցիոն զաղափարայնության ու ժողովրդայնության սկզբունքին, իր պոեզիան ամբողջովին ի սպաս դնելով սոցիալիզմի կառուցման վեհ գործին:

Այս շրջանի նրա ստեղծագործությունն աչքի է ընկնում թեմատիկ բազմազանությամբ: Ցարիզմի ու կապիտալիզմի դեմ մղված ռևոլյուցիոն պայքարի երգիչը այժմ հանդես է գալիս որպես Սովետական Հայրենիքի ժողովրդական բանաստեղծ, ազատ աշխատանքի, սոցիալիզմի հիմնադրման առաջին մեծ կառուցումների, սովետական բազմազգ ժողովրդի աշխատանքային հերոսության երգիչ՝ խորապես համակված սովետական հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի ոգով:

Անդրկովկասյան ժողովուրդների եղբայրությունն ու ստեղծարար աշխատանքը, ռևոլյուցիոն պայքարի դրվագների վերհուշը, կոմունիս-

տական պարտիայի անվանի գործիչների հերոսական կերպարները ոգեշունչ նկարագիրը, սոցիալիզմի հիմնադրաման առաջին մեծ կառուցումների խանդավառ պատկերումը — ահա հիմնական դժերով այս է Հակոբյանի սովետական շրջանի ստեղծագործության պատմական ու գաղափարական բովանդակությունը:

Անխզելիորեն կապված լինելով սովետական իրականության հետ, մշտապես զգալով ու վերապրելով սոցիալիզմի հաղթանակի համար մղվող պայքարն իր դժվարություններով ու հաղթանակներով և որպես այդ պայքարի անձնվեր զինվոր, — բոլշևիկ բանաստեղծը Լրբեք ետ չի մնացել կյանքի առաջընթացից: Նրա ստեղծագործական հղացումները միշտ համընթաց են եղել սովետական կյանքին, սոցիալիստական շինարարությանը: Անդրադարձնելով ներկան, նրա հայացքը միշտ ուղղված է եղել գալիքին, ներկայի մեջ տեսնելով կոմունիզմի հաղթանակի հաստատուն նախագրյալները:

Սովետական Հայրենիքի նկատմամբ անհուն սիրո ու հպարտության հորդահոս զգացմունքի արտահայտություններ են «Կարմիր հայրենիքիս մեկոդիաներից» շարքի բանաստեղծությունները («Բաքոս», «Դյանչա», «Երևան» և այլն), որոնք միաժամանակ համակված են սոցիալիստական շինարարության պաթոսով, մոռալ ու խիստ անցյալի և նոր, սովետական կյանքի ցայտուն հակադրությամբ:

Քաղաքների վերակառուցման ու բարեկարգման, էլեկտրակայանների ու ջրանցքների շինարարության ոգեշունչ պատկերներում բանաստեղծը գծադրում է հայրենի երկրի վերավոխումը, նրա նոր, լուսագեղ ու կենսաշունչ բնանկարը: Այս բնույթի բանաստեղծություններից հիշենք «Ձորագետում» (1930 թ.), «Ռիոնգէս»-ը (1932 թ.), «Աճում ենք» (1930 թ.) և այլն:

Բանաստեղծությունների մի այլ շարքով («Պրոլետարի երգը», «Իմ սերը», «Չաթախը», «Մետաքսագործարանը», «Տեքստիլ բանվորի երգը» և այլն) Հակոբյանը մեր պոեզիայում սկզբնավորել է սոցիալիստական աշխատանքային լիրիկան, որն արտահայտում է սովետական երկրի աշխատավորների խանդավառությունը, նրանց կենսազվարթ տրամադրությունը, նրանց հույզերն ու խոհերը, կապիտալիստական ստրկական կարգերից ազատագրված աշխատավորների բերկրանքը, ազատ աշխատանքի երջանկության ասլորումները:

Սովետական արդիականության մոտիվների հետ է սերտորեն առնչվում նաև ռեռլուցիոն անցյալի վերհուշը, որը նշանակալից տեղ

է գրաւում Հակոբյանի հետհոկտեմբերյան շրջանի ստեղծագործութեան մեջ: Անդրադառնալով ռեուլյուցիոն անցյալին, Կոմունիստական պարտիայի անցած ուղտն, բանաստեղծը վառ է պահում ռեուլյուցիայի հերոսական տրագիցիաները, որպէսզի նորեկ աշխարհի երիտասարդ սերունդը խորապէս դաստիարակվի այդ տրագիցիաների ոգով, պրոլետարական ինտերնացիոնալիզմի, բուլշեիզմի ոգով: Համակված այդ ազնիվ զգացումով, բուլշեիկ բանաստեղծը ջերմ, հարադատ զգացմունքով վերհիշում ու պատկերում է մոտավոր անցյալի ռեուլյուցիոն պայքարի հերոսական դրվադները և այդ պայքարում փառքով պսակված անվանի գործիչների կերպարները: Հիշենք բանաստեղծութունների այն շարքը, որ նվիրւած է Կոմունիստական պարտիայի անվանի գործիչներին՝ «Սանիան Շահումյանին», «Քսանվեց էին», «Միլա Ջիւակայային», «Կամուլին», «Սերգո Օրջոնիկիձեին», «Գեորգ Աթարբեկյանին»:

**«Բուլշեիկ է Շիր-
Կանալը» և
«Վոլխովստոյ»
պոեմները**

Հակոբյանի հետհոկտեմբերյան շրջանի ստեղծագործութունների մեջ նշանակալից տեղ են գրաւում նրա պոեմները՝ «Բուլշեիկ է Շիր-Կանալը» (1924 թ.), «Վոլխովստոյ» (1925 թ.), «Լենինգրադյան պոեմ» (1929—1932) և այլն:

Բացառությամբ «Թիֆլիս»-ի, մասամբ և «Լենինգրադյան պոեմ»-ի, որոնց նշույթը մեծ մասամբ ռեուլյուցիոն անցյալն է, բուլշեիկներին կառնքի ու պայքարը ցարիզմի մոռաց տիրապետության շրջանում, — մյուսների թեման սոցիալիստական շինարարութեան է, ջրանցքների, էլեկտրակայանների կառուցումը, սովետական բանվորների ու գյուղացիների աշխատանքային սխրագործութիւնը, նրանց հայրենասիրութիւնը:

«Բուլշեիկ է Շիր-Կանալը» և «Վոլխովստոյ» պոեմները սոցիալիզմի առաջին մեծ կառուցումների արձագանքներն են սովետահայ պոեզիայում: Ինքը բանաստեղծն իր այդ պոեմները ճիշտ կերպով բնութագրել է իբրև «ժամանակի շինարարական էպոսի արտահայտութիւններ»:

Հակոբյանի հերոսը, նրա խանդավառ հերոսապատումների գործող անձը ռեուլյուցիայի հաղթանակի շնորհիվ վերածնվող սովետական ժողովուրդն է, իր հավաքական ստեղծագործական հզոր ուժով:

Բազմաթիվ գրողներ, մասնավորապէս քանաստեղծներ, խանդավառութեամբ արձագանքեցին Շիրակի ջրանցքի կառուցմանը, բայց

Հակոբյանի «Բոլշևիկ է Շիր-Կանալը» պոեմը ամենից ավելի ցայտուն ու արտահայտիչ բանաստեղծական երկն է, որ խորը հուղականությամբ և հարուստ պատկերավորությամբ արտահայտում է այդ կառուցման ընթացքն ու նշանակությունը:

Հակոբյանի պոեմն անմիջական ազդեցություն ունեցավ նաև մեր պոեզիայում: Այն ժամանակ դեռ երիտասարդ բանաստեղծ Գեղամ Սարյանի «Հեքիաթ Շիրակի մասին» (սկզբում «Շիրակի հարսանիքը» վերնագրով) պոեմը (1925 թ.) գրված է Հակոբյանի ազդեցությամբ:

Իր ժանրային առանձնահատկությամբ «Բոլշևիկ է Շիր-Կանալը» լիրիկական պոեմ է, նվիրված Հայաստանի սոցիալիստական շինարարության առաջնեկին, նրա խիղախ կառուցողներին:

Ետ արտահայտիչ է պոեմի վերնագիրը. «Բոլշևիկ է Շիր-Կանալը» բնութագրական արտահայտությամբ բանաստեղծը սիմվոլացնում է Սովետական Հայաստանի շինարարական առաջին խոշոր ձեռնարկման նշանակությունը, որպես կոմունիստների պարտիայի ստեղծարար մեծագործության մի կենդանի արտահայտություն:

«Բոլշևիկ է Շիր-Կանալը» պոեմն արժեքավոր է նրանով, որ այստեղ Սովետական Հայաստանի վերականգնման շրջանի տռաջին մեծ շինարարության նշանակությունը բացահայտված է բանաստեղծական պատկերման ժողովրդային ոճով:

Ջրանցքի կառուցման ընթացքն ու պատմությունը տրված է շատ հակիրճ կերպով: Այսպես, «Նախերդանք»-ի սկզբի սողերից իմացվում է, որ կառուցումը տեղի է մոտ երկու տարի («...յոթ հարյուր յոթ օրվա միջոցում») և որ ջրանցքի շինարարությունը համաժողովրդական բլանդ է ունեցել, այնտեղ լսվել է «հալար հաղարների քլումբների երգը», «եղել են միլիոնավոր պայթյուններ... սկաններ», իսկ հաղթանակը նվաճվել է՝ շնորհիվ «աշխատանքի հերոսների» մեծագործ ջանքերի, որոնք «Արփուշայի ժեռ սուփերին զրոհ տալով... դիրքից դիրք գրավել, իրար են միացրել թոննեղները»:

Բոլշևիկ է Շիր-Կանալը — մի աժդահա հեքիաթային,
Ետրթը նրա ջուր է խմում պաղ ակունքից Արփաշայի,
Դուխը հաղթ թաղել է խոր կանաչագույն դուլալ գետում,
Պոչը հեռու կապսի ծոցում, ալիքներն է հեռուն նետում:

Մեծ ու մեծ է Շիր-Կանալը, կամարածև, գեղեցկաթով,
Փաթավել է, ո՞նց է գրկել Շիրահարթը երկու թաթով:
Մի խանդավառ կարոտ ունի, էն ծարավը սիրած յարի,
Որ կարծես թե սեր ու խանդի կարոտն է հազար տարի:

Նորակառույց ջրանցքի մեջ բանաստեղծը տեսնում է Վուլս ապա-
գան Հայաստանի»:

Այդ պայծառ հեռանկարներով են խանդավառված Շիրակի դաշ-
տավայրի բոլոր դժուղերը, որոնք անհուն ցնծությամբ ձայն են տալիս.
հաղորդում են իրար.

...Թե դալիս է Շիր-Կանալը՝ բոլշևիկը Հայաստանի:

Դարերով անջրդի հողերը ոռոգելու, կենդանացնելու հետ միասին
Արփուշայի (Ախուրյանի) ջրերը էլեկտրական լույսի հորդ աղբյուր են
դառնում, որ «հսկա ուժով»—

Պիտի շարժե ու փոթորկի գործարաններ ու ֆարրիկներ,
Ջրաղացներ, սղոցարան, ալեկոծի հող ու ցանքեր...
Այն երկիրը, որ դարերով քարացել էր ու ցամաքել՝
Այսօրից ետ սլիտի երգի աշխատանքի հզոր երգեր:

Հակոբյանի այս ողբշունչ պոեմը հայ ժողովրդի ազգային վերա-
ծննդի առաջին բանաստեղծական արձագանքն է մեր պոեզիայում:

Իր ժանրային առանձնահատկությամբ «Բոլշևիկ է Շիր-Կանալը»-ին
նման է «Վոլխովտորոյ»-ը: Այստեղ մեծ ոգևորությամբ պոետը
կերում է Սովետական Միության էլեկտրիֆիկացիայի առաջնեկի կա-
ռուցումը, որպես լենինյան նախագծումների իրականացման առաջին
նշանակալից քայլը:

Հակոբյանին խորթ է ազգային սահմանափակությունը, նրա ըս-
տեղծագործական ոգևորության աղբյուրը մեծ Միությունն է, լայնա-
ծավալ սոցիալիստական մեծ Հայրենիքը, որի հաղթանակների ու փառ-
քի խանդավառ երգիչն էր Հակոբյանը: Սովետական Հայաստանն ու
Անդրկովկասը նա դիտում էր որպես միութենական Հայրենիքի օրգա-
նական մասը: Այստեղ՝ Անդրկովկասում կատարվող շինարարությունը
նա իմացտավորում էր միութենական կյանքի հեռունկարի մեջ, իսկ
Միության մյուս վայրերի մեծ կառուցումների մեջ նա տեսնում էր
նաև իր հարազատ Անդրկովկասի ու Հայաստանի բարգավաճման ու
ծաղկման հեռանկարը:

Եթե Շիր-Կանալի բանաստեղծական պատկերումով հեղինակը
սիմվոլացնում է Սովետական Հայաստանն իր վերածննդի ընթացքի
մեջ, ապա Վոլխովի հիգրոէլեկտրականի կառուցման պատկերումով,
բանաստեղծը սիմվոլացնում է լենինյան մեծ նախագծումների իրա-

կանացման հաղթական ընթացքն իր հմայիչ հեռանկարներով, սոցիալիզմի հաղթանակի և հետագայում կոմունիզմի իրագործմանը անցնելու պայծառ հավատով:

1920-ական թվականների սկզբին Վոլխով գետի ամրին հիդրոէլեկտրակայանի կառուցումն ու նրա նշանակությունը նյութ դարձնելով իր պոեմի համար՝ Հակոբյանը գեղարվեստորեն մարմնավորում է լենինի իմաստուն միտքն այն մասին, որ «էլեկտրիֆիկացիա + սովետական իշխանություն = կոմունիզմ», այսինքն Սովետական երկրի սոցիալիստական տնտեսության լիակատար էլեկտրիֆիկացիան ապահովում է կոմունիզմի իրականացումը:

Ելնելով անմահ լենինի հանձարեղ մտքից, բանաստեղծը Վոլխովստրոյի ճշանակությունը դիտում է իբրև սոցիալիզմի հաղթական կառուցման ակնառու վկայություն, իբրև հետագա նորանոր մեծ կառուցումների շղթայի առաջին մի օղակը, որի իրականացումը բանաստեղծին համակում է անսահման ոգևորություն: Վոլխովստրոյի նշանակությունը նա իմաստավորում է սոցիալիզմի հաղթական կառուցման, մեր «մեծ գալիքի» կոմունիզմի հեռանկարով:

Վոլխովստրոյը մի հիմնարար մեծ գալիքի շենքերից.

Վոլխովստրոյը կարմիր դրոշ, որ պարզեցինք այսօրից.

Վոլխովստրոյը հիմքը զարկեց այն հիասքանչ բարիքի,

Որի անունն է կոմունիզմ — խորհուրդը մեր գալիքի:

Բանաստեղծն անձամբ դիտել է Վոլխովդէսի հերոսական շինարարությունը, ինչպես և բոլոր այն կառուցումները (Շիրակի ջրանցքը, Զագէսը, Զորագէսը, Դնեպրոգէսը և այլն), որոնց ոգեշունչ արձագանքը կա Հակոբյանի պոեզիայում: Դա հնարավորություն է տվել բանաստեղծին ստեղծելու իր դիտած օբյեկտի կոնկրետ ու ճշմարտացի գեղարվեստական պատկերը՝ գաղափարական խոր ու լայն ընդհանրացման հետ միասին:

Հակոբյանի ստեղծագործական ոգևորության ու ներշնչման աղբյուրը ոչ միայն երկրի ինդուստրացման ու էլեկտրիֆիկացման համար մղվող պայքարն էր, այլև սովետական դեպի վերափոխումը, կոլտրեստեային սոցիալիստական շինարարությունը:

«Կարմիր աստղիկ» վերնագրով պոեմում (գրված 1934 թ.) բանաստեղծը մինչ այդ մեր պոեզիայում չընդամենը նոր թեմա է մշակում: Պոեմում պատկերված է գյուղական մի որբ աղջկա յայնքի վերընթաց ուղին:

Սոցիալիստական աշխատանքային մրցության հրաշագործ ուժի պատկերմանն է նվիրված նաև «Արևն ու աշխատանքը» վերնագրով շափածո ղրուցը, որ գրել է բանաստեղծը կյանքի վերջին շրջանում՝ (1935 թ.), երբ լրանում էր նրա 70-ամյակը: Եվ շնայած այդ հասակին՝ ռևոլյուցիայի երգիչ-վեստերանը լցված էր նոր եռանդով, ոգևորված իր ստեղծագործական նոր հղացումներով: Նա ծրագրել էր ավելի խոր և ավելի լայն ընդգրկումներով պատկերելու սովետական իրականությունը, սոցիալիստական շինարարության պոստական մեծագույն հաջողությունները, բոլշևիկների հզոր պարտիայի մեծագործությունները: Նա որոշել էր լրացնել—ամբողջացնել «Լենինգրադյան պոեմ»-ը, որը, ըստ բանաստեղծի հղացման, լինելու էր Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի նախապատրաստման ու հաղթանակի գեղարվեստական մի տարեգրություն:

Այս հղացումներն է՛լ ավելի են շեշտում Հակոբյանի հետհոկտեմբերյան շրջանի ստեղծագործության հիմնական ուղղությունը,— այն է՝ գրականությունը ի սպաս դնել սոցիալիզմի հաղթանակի գործին:



Հակոբյանի պոեզիայի պատմական ու գաղափարական բովանդակության հիմնական հատկանիշն այն է, որ իրականության բանաստեղծական պատկերման մեջ սոցիալիզմի գաղափարը միացած է բանվոր դասակարգի ռևոլյուցիոն պայքարի գաղափարին:

Եվ դա՝ սոցիալիստական ռեալիզմի, իբրև պրոլետարական գրականության ստեղծագործական մեթոդի հիմնական հատկանիշն է նախահոկտեմբերյան շրջանում:

Հակոբյանը սոցիալիստական ռեալիզմի սկզբնավորողն է հայ գրականության մեջ նրանով, որ նա իր պոեզիայում իրականությունն արտացոլում է ռևոլյուցիոն ճշմարտացիությամբ՝ կյանքը դիտելով պրոլետարիատի աշխարհայացքի՝ մարքս-լենինյան ուսմունքի լույսի տակ:

Իբրև սոցիալիստական ռեալիզմի սկզբնավորման շրջանի արտահայտություն՝ Հակոբյանի պոեզիայի հիմնական հատկանիշներից մեկը ռևոլյուցիոն ժողովրդայնությունն է, որն իր որակով, իր գաղափարա-

կան բովանդակությամբ տարբերվում է նրան ժամանակակից մշուս գրողներին ստեղծագործության ժողովրդայնությունից:

Հակոբյանի պոեզիայի ժողովրդայնությունն հիմնական արտահայտություններն են հասարակության ամենապրոգրեսիվ դասակարգի՝ պրոլետարիատի կյանքի ու պայքարի ճշմարտացի պատկերումը ռևոլյուցիոն աշխարհայացքով և լեզվի ու ոճի, գեղարվեստական արտահայտչական միջոցների մատչելիությունն ու հարազատությունը ամենալայն մասսաների համար և առաջին հերթին բանվորների համար:

Իր ստեղծագործության, իր լեզվի ու ոճի ժողովրդայնության մասին Հակոբյանը գրել է հետևյալը.

«Հենց գրիչ բռնելու առաջին օրից խուսափել եմ բարձրագույն, խրճողված, դժվարամարս, ճոռում ոճի գործածումից և նոր գիտակցությունն եկող հայ բանվորության հետ խոսել եմ պարզ, հասկանալի ու մատչելի լեզվով»:

Եվ իրոք, Հակոբյանի պոեզիայի ժողովրդայնության հիմնական գծերից մեկը նրա լեզվի ու ոճի պարզությունն է, բանվորների ու լայն աշխատավորական մասսաների համար լիովին մատչելի ու հասկանալի լինելը:

Իր նախորդների ու ժամանակակիցների համեմատությամբ (մասնավորապես նախասովետական շրջանում) Հակոբյանի ստեղծագործությունը տարբեր է ոչ միայն իր թեմատիկայով և աշտահայտած գաղափարներով-իդեալներով, այլև իրականության գեղարվեստական սրտացուման իր մեթոդով, իր ոճով ու պատկերավորման առանձնահատկություններով: Իբրև ինքնատիպ ստեղծագործող, իբրև նոր թեմատիկայով նոր գաղափարների ու իդեալների արտահայտիչ՝ Հակոբյանը չէր կարող սահմանափակվել այն բառապաշարով, որ օգտագործել էին իր նախորդ շրջանի և իր ժամանակակից գրողները:

Հակոբյանը հայ պոեզիայի լեզուն զգույն զգալիորեն համարում է նոր բառերով ու արտահայտություններով: Դրանց գործածությունը թելադրվում էր այն նոր բնագավառների արտացուման անհրաժեշտությամբ, որոնք առաջին անգամ դառնում էին պոեզիայի նյութ ու թեմա: Գործարանը, բանվորի կյանքն ու պայքարը, ռևոլյուցիան երգելու համար, Հակոբյանը պետք է գործածեր նոր բառեր, որոնք առաջ չկային հայ պոեզիայի բառապաշարում:

Հիշենք, օրինակ՝ մուրն ու սալ, կաքսավար, շոգեկաքսա, ճնոց, գործարան, նավթահանք, անասնաբուժություն, մուրհաբ, մետաղակուռ, բուրա, մեխաղե զանգված, կաշվե գոգնոց, զլանակ, դազգյան, շշակ, սուլիչ, մեքենա, մեքենավար, բանվոր, պրոլետարիատ, բուրժուա, կապիտալ, դրամատուն (==բանկ), սեյֆեր, ձուլարան, ձուլածո, հալոցք, հալք, վազրան, ծխենելույզ, հանքահոր, պղնձահանք, գետնահարկ, գործադու, էտապ, նրաբուխ և բազմաթիվ այլ բառեր ու արտահայտություններ:

Սոցիալիզմի հիմնադրման ու կառուցման ժամանակաշրջանում հայոց լեզուն համարվում է երկրի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքում տեղի ունեցած մեծ վերափոխություններն արտահայտող համապատասխան նոր բառերով ու արտահայտություններով, ինչպես նաև վաղուց գործածվող բառերի վերաիմաստավորումով: Հակոբյանն առաջինը պոեզիայի մեջ համարձակորեն օգտագործեց այդ նոր բառերն ու արտահայտությունները, առանց որոնց անհնար կլինեին նոր էպոսայի, նոր կյանքի գեղարվեստական պատկերումը:

* *

Հակոբյանն իր կյանքով ու ստեղծագործությամբ անխղձիորեն կասկած է սոցիալիզմի կառուցման դարաշրջանի հետ, սովետական գրականության սկզբնավորման ու հետագա զարգացման պատմության հետ:

Հակոբյանի ստեղծագործության լավագույն էջերը թարգմանված են Միության ժողովուրդների լեզուներով (ռուսերեն, վրացերեն, ուկրաիներեն, ադրբեջաներեն, բելոռուսերեն, էստոներեն և այլն): Նա մտել է մեր բազմազգ սովետական դրականության մեջ, որպես այդ գրականության նշանավոր ներկայացուցիչներից մեկը:

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ
ԵՎ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ
(1920—1929)

1920 թվականի նոյեմբերի 29-ին Հայաստանի աշխատավորու-
թյունը, Սովետական Ռուսաստանի օգնությամբ և Կոմունիստական
պարտիայի ղեկավարությամբ, տապալեց դաշնականների ատելի լուծը և
հաստատեց Սովետական իշխանություն: Հայ ժողովուրդը, որ օտար-
երկրյա իմպերիալիստների վարձկան դաշնակցական կառավարության
շրջանում հասել էր կործանման դուռը, սովետական վարչերի շնոր-
հիվ ազատվեց ազգային և սոցիալական դարավոր ստրկությունից և
ձեռք բերեց իր ազատությունն ու անկախությունը:

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ բացվեց մի նոր
և իր նշանակությամբ աննախընթաց ժամանակաշրջան՝ սոցիալիզմի
մասնակաշրջանը:

Ռուս մեծ ժողովրդի օգնությամբ և Կոմունիստական պարտիայի
իմաստուն ղեկավարությամբ հայ աշխատավորությունը սկսեց վերա-
շինել իր ավերված երկիրը, վերականգնել քայքայված ժողովրդական
տնտեսությունը, ծավալել սոցիալիստական շինարարությունը:

Ղեկավարվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով, Սովետական Հա-
յաստանի կառավարությունը նախ և առաջ ձեռնարկում է երկրի էկեկ-
տրիֆիկացիայի և ոռոգման գործին. 1922 թ. հոկտեմբերին սկսվում
են Շիրակի ջրանցքի կառուցման աշխատանքները, նույն թվականի
նոյեմբերի 29-ին, Հայաստանում սովետական կարգերի հաստատ-
ման երկրորդ տարեդարձին, բացվում է Էջմիածնի ջրանցքը, 1923 թ.
սկսվում է Երևանի առաջին հիդրոէլեկտրակայանի կառուցումը, 1925 թ. բաց-

վում է Շիրակի՝ Լենինի անվան ջրանցքը, 1927 թ. Դուլխին սկսվում է Ձորագետի մեծ հիդրոէկայանի կառուցումը:

Էլեկտրիֆիկացիայի բազայի վրա դարգանում է նաև արդյունաբերությունը. 1924 թ. հիմնադրվում է Լենինականի Ֆեքստիլ գործարանը, 1927 թ. սկսում են գործել Երևանի Կարբիդի և ալլ գործարաններ: Շինարարական այս աշխատանքներում Հայաստանի աշխատավորությունը եղբայրական օգնություն է ստանում ռուս մեծ ժողովրդից:

Ժողովրդական տնտեսավձյան վերականգնման ու բարգավաճման հետ զուգընթաց բարձրանում է նաև Սովետական Հայաստանի կուլտուրան:

1920 թ. դեկտեմբերի 5-ից Երևանում սկսում է լույս տեսնել «Կոմունիստ» օրաթերթը, որը հետագայում վերանվանվում է «Խորհրդային Հայաստան» (այժմ՝ «Սովետական Հայաստան»): Հայաստանի Ռեկոմի (ռեուլցիոն կոմիտե) նույն թվականի դեկտեմբերի 6-ի դեկրետով հայոց լեզուն հայտարարվում է պիտական լեզու: Պետականացվում են կուլտուրական և դպրոցական բոլոր հաստատությունները: 1921 թ. հունվարի 23-ին հիմնադրվում է Երևանի Պետական համալսարանը (այժմ՝ Վ. Մ. Մուստովի անվան), իսկ հունիսի 10-ին՝ Հայաստանի պետական հրատարակչությունը (Հայպետհրատ): Նույն թվականի սեպտեմբերի 21-ին Հայաստանի Ժողովրդավետը որոշում է ընդունում անգրագիտությունը վերացնելու մասին: Ստեղծվում են Հնությունների պահպանության կոմիտե, Արվեստների տուն, Գիտությունների ինստիտուտ և գիտության ու կուլտուրայի ալլ հաստատություններ:

Պատմական մեծ հեղաշրջումների բովում, ռուս տվետական գրականության բարերար ազդեցությամբ սկսում է ձևավորվել սովետահայ գրականությունը:

Սովետահայ գրականությունը ձևավորվել ու Դրական կազմակերպությունները և գաղափարական պայքարը սոցիալական վերականգնման և ինդուստրացման տարիներին գրականության բնագավառում մղվող պայքարը գերազանցապես տեղի ունեւ ալլ հարցի շուրջը, թե ի՛նչ բնույթ է ունենալու նոր ըստեղծվող գրականությունն ու արվեստը: Այս հիմնական հարցի նրկստմամբ ունեցած իրենց վերաբերմունքով էլ տարբերվում էին այդ

տարիներին Սովետական Հայաստանում առաջ եկած գրական կազմակերպություններն ու խմբակցությունները Այսպես, օրինակ, 1921 թ. Խրւսեւում կազմակերպված «Հայ գեղարվեստական գրականության աշխատավորների միությունը», որի անդամներն էին բուրժուա-նացիոնալիստական գաղափարախոսության ազդեցության տակ գտնվող մի շարք գրողներ, ժխտում էր սոցիալիստական կուլտուրայի ստեղծման հնարավորությունը Հայաստանում: Այդ կազմակերպության ներկայացուցիչները հենվում էին այն սխալ դրույթի վրա, թե քանի որ Հայաստանը գերազանցապես գյուղացիական երկիր է և բանվորությունը բնակչության չնչին տոկոսն է կազմում, մեզանում խոսք լինել չի կարող պրոլետարական-սոցիալիստական արվեստի ու գրականության մասին: Ժխտելով պրոլետարիատի գրականություն ստեղծելու հնարավորությունը, այդ կարգի մտածողները փաստորեն հանգում էին բուրժուա-նացիոնալիստական գրականության վերականգնման գաղափարին:

Կոմունիստական պարտիան հիմնովին ջախջախեց բուրժուա-նացիոնալիստական այդ «տեսությունը», ցույց տալով, որ գրականության պրոլետարական-սոցիալիստական բնույթը որոշվում է նոր, սոցիալիստական իրականության արտացոլմամբ և գրողի աշխարհայացքով:

Իր էությանմբ բուրժուա-նացիոնալիստական բնույթ էր կրում նաև 1925 թ. կազմակերպված «Նույեմբեր» գրական խմբակցությունը, քանի որ վերջինիս ղեկավարները ելնելով Հայաստանի իբրև թե «առանձնահատուկ» պայմաններից, առաջադրում էին սովետահայ գրականության մեջ «ազգային գծերի խտացման» պահանջը:

Գրական այդ խմբակցությունները արտահայտում էին նէպ-ի (նոր տնտեսական քաղաքականության) շրջանում աշխուժացած բուրժուական տարրերի տրամադրությունները: Հիշյալ կազմակերպություններից բացի, գոյություն ունեւ «Հայաստանի աշխատավորական գրողների Միությունը», որտեղ համախմբված էին «ուղեկիցները» (Դ. Դեմիրճյան, Ստ. Զորյան, Միք. Մանվելյան և ուրիշներ), այսինքն այն գրողները, որոնք իրենց գրական գործունեությունն սկսած լինելով Հոկտեմբերյան ռեւոլյուցիայից առաջ, Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո մտել էին պրոլետարական գաղափարախոսության ոգով վերակառուցվելու ուղին:

Սովետական Հայաստանում աշխատավորական միջավայրից ելած գրական երիտասարդությունը, կանգնած լինելով պրոլետարական գրականության դիրքերի վրա, անհաշտ սպաքար էր մղում բուրժուանացիոնալիստական գաղափարախոսության ամեն տեսակ արտահայտությունների և խորթ կոնցեսսիաների դեմ:

Պրոլետարական-սոցիալիստական գրականության համար սպաքարող գրական աչդ երիտասարդությունը համախմբվել էր 1922 թ. նրեանում լույս տեսնող գրական-գեղարվեստական և քննադատական-տեսական «Մուրճ» ամսագրի շուրջը (Ն. Զարյան, Ա. Վշտունի, Հ. Սիրան և ուրիշները): «Մուրճ»-ի շուրջը համախմբված այդ գրողները ՌԱՊՊ-ի (Российская Ассоциация пролетарских писателей — Ռուսաստանի պրոլետարական գրողների Ասոցիացիա) օրինակով հիմնադրում են Հայաստանի պրոլետարական գրողների Ասոցիացիան, որը 1927 թ. սկսում է հրատարակել իր օրգանը՝ «Գրական դիրքերում» ամսագիրը:

Սակայն, ինչպես Ռուսաստանի պրոլետարական գրողների Ասոցիացիան (ՌԱՊՊ), այնպես էլ Հայաստանի Պրոլետարական Գրողների Ասոցիացիան միատարր չէր: Ասոցիացիայի մեջ մուտք էին գործել տրոցկիստական և բուրժուանացիոնալիստական տարրեր, որոնք պարտիայի լենինյան գծին հակառակ, քայքայիչ աշխատանք էին տանում արվեստի և գրականության բնագավառում: Նրանք խեղաթյուրում էին պարտիայի քաղաքականությունը, խանդարում էին սովետական գրականության զարգացմանը: Սկզբունքային պայքարը վեր էին ածում խմբակային անսկզբունք վեճերի. հալածում էին աղերսվորեն Սովետական իշխանության կողմն անցած, աստիճանաբար վերակառուցվող հին գրողներին, անվստահության մթնոլորտ ստեղծում նրանց շուրջը. սխալ ուղղություն էին տալիս երիտասարդ գրողներին, վերջիններիս մեջ արմատավորելով անապարժություն և տարածելով այն սխալ մտայնությունը, թե երիտասարդ գրողի համար էսկանը բանվորական կամ գյուղացիական-աշխատավորական ծագումն է, կոմունիստ կամ կոմերիտական լինելը, իսկ տաղանդը, աշխատանքը և վարպետությունը երկրորդական հանդամանքներ են: «Ռապսոլականները» կոպիտ կերպով խեղաթյուրում էին պարտիայի քաղաքականությունը նաև գրական ժառանգության հարցում. նրանք փորձում էին ժխտել կլասիկ գրականության քննադատական յուրացման լենինյան տեսությունը:

**Պարտիայի քաղա-
քականությանը գրա-
կանության
բնագավառում**

Կոմունիստական պարտիան միշտ էլ առաջ-
նակարգ նշանակություն է տվել արվեստի և
գրականության հարցերին: Գրականության դե-
կավարման հարցը պարտիան միշտ էլ համա-
րել է իր ամենօրյա աշխատանքի մի մասը:
Ուշադիր հետեւելով սովետական գրականության զարգացման ընթաց-
քին, պարտիան ղեկավար սկզբունքներ և ուղղություն է տվել նրան,
պարզաբանել սոցիալիստական հասարակարգի զարգացման յուրա-
քանչյուր էտապում գրականության առաջ զրված կարեւորագույն խն-
դիրները:

Կոմունիստական պարտիայի քաղաքականությունը գրականու-
թյան բնագավառում հստակորեն ձևակերպված է մի շարք պատմա-
կան որոշումներում:

Պարտիայի 11-րդ համագումարը (1922 թ.) խիստ անհրաժեշտ
է համարում բանվորա-գյուղացիական երիտասարդության համար ըս-
տեղծել աշխարհի գրականություն, որը կարողանա հակադրվել բուր-
ժուական գրականության ազդեցությանը և նպաստել երիտասարդու-
թյան կոմունիստական դաստիարակության գործին:

1924 թ. մայիսին տեղի ունեցած պարտիայի XIII համագումարը
առանձնահատուկ ուշադրություն է դարձնում ինչպես մամուլի, աշխ-
պես էլ հատկապես գեղարվեստական գրականության զարգացման
հարցերին: Համագումարը նշում է, որ անհրաժեշտ է օժանդակի
բանվորական և գյուղացիական-աշխատավորական մասսաների ծոցից
առաջ եկած գրողներին, բարձրացնել նրանց քաղաքական և գեղար-
վեստական զարգացման մակարդակը, մամուլի էջերում սիստեմա-
տիկ քննարկել նրանց երկերը, ցույց տալ սխալները, օգնել, որ նրանք
լիովին ըմբռնեն սովետական կարգերի էությունը և հաղթահարեն
բուրժուական նախապաշարոտները: Համագումարը նշում է, որ գրա-
կան ո՛չ մի ուղղություն, դպրոց կամ խումբ չի կարող և չպետք է
հանդես գա պարտիայի անունից: Համագումարը գրողներին քաջալե-
րում է՝ ծավալել ստեղծագործական մրցություն՝ սովետական նոր
կյանքն ու նրա համար մղվող պայքարը ճշմարտացի և բարձր ար-
վեստով պատկերելու համար:

Ժողովրդական տնտեսության վերականգնման և սոցիալիստական
ինդուստրացման շրջանում պարտիան սովետական գրականության
կարեւորագույն խնդիրներն էր համարում նէպ-ի տարիներին ակտի-

վացած բուրժուական գաղափարախոսության ազդեցության հաղթահարումը, տրոցկիստների և պարտիայի այլ թշնամիների դրական «սեսուլությունների» ջախջախումը:

Այս խնդիրների հաջող լուծման գործում վճռական նշանակություն ունեցավ 1925 թ. հունիսին Ռուսաստանի Կոմունիստական Պարտիայի Կենտրոնական Կոմիտեի՝ «Պարտիայի քաղաքականությունը գեղարվեստական գրականության բնագավառում» բանաձևը:

Կենտկոմը նշում էր, որ ինչպես մեր կյանքի բոլոր բնագավառներում, այնպես էլ գրականության մեջ շարունակվում է դասակարգային պայքարը. «Դասակարգային հասարակության մեջ, — ասված է պաշտոնական ձևով, — չկա և չի կարող լինել շեղոք արվեստ, թեև արվեստի և մասնավորապես գրականության դասակարգային բնույթը ընդհանրապես արտահայտվում է անսահմանորեն ավելի բազմապիսի ձևերով, քան, օրինակ, քաղաքականության մեջ»:

Սովետական գրականության զարգացման գլխավոր խնդիրը Կենտկոմը համարում է աճի, որ գրողների աճող կադրերը աստիճանաբար դրվին «սյուրռեալական գաղափարախոսության ռեժիմի վրա»: Կենտկոմը պահանջում է հոգատար վերաբերմունք «ուղեկից» գրողների նկատմամբ, որպեսզի նրանք ըստ հնարավորին արագ անցնեն կոմունիստական գաղափարախոսության դիրքերը: Պարտիան անհրաժեշտ է համարում ստեղծել առողջ, սկզբունքային քննադատություն, անդիջում և հետևողական պայքար խորթ, թշնամական գաղափարախոսությունների դեմ: Պրոլետարական գրողները պետք է նվաճեն հեգեմոնիա (գերիշխանություն) քրոնաջան աշխատանքով բարձր վարպետության հասնելու և իրենց կոմունիստական աշխարհայացքը խորացնելու ճանապարհով:

Ջարգացնելով Վ. Ի. Լենինի ուսմունքը ազգային կուլտուրայի մասին, Ի. Վ. Ստալինը 1925 թ. մայիսի 18-ին Արևելքի աշխատավորների կոմունիստական համալսարանում ունեցած ելույթում բացահայտում է սովետական բազմազգ պետության ժողովուրդների ստեղծած կուլտուրայի, ինչպես նաև գրականության՝ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական բնույթը: Ի. Վ. Ստալինը նշում է, որ կոմունիստական պարտիայի խնդիրն է՝ զարկ տալ սովետական ժողովուրդների ազգային նոր կուլտուրաների զարգացմանը, անհաշտ պայքար ծավալելով մեծապետական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի արտահայտությունների դեմ:

Սովետական ողջ գրականությունը, այդ թվում նաև սովետահայ գրականությունը, ձևավորվեց ու զարգացավ անշեղորեն առաջնորդվելով Կոմունիստական մեծ պարտիայի, նրա իմաստոճ առաջնորդ Վ. Ի. Լենինի և Լենինի գործի շարունակող, նրա աշակերտ Ի. Վ. Ստալինի ուղենիշ ցուցումներով:

Սովետական կարգերի հաստատումով նոր էջ Սովետահայ գրականության զարգացման համար բացվեց, հիմնովին փոխվում է նախ և ժողովրդական տնտեսության վերականգնման և ինդուստրիալիզմի տարիներին և արտադրության թեմատիկան և դադարակալական բովանդակությունը. գրականությունը արտացոլում է սովետական նոր կյանքը իր նոր հերոսներով:

Սովետահայ գրողների համար ստեղծագործական ներշնչումների աղբյուր են հանդիսանում Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, քաղաքացիական կռիվները և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, իրենց բախտի ու աշխատանքի տերը դարձած բանվորն ու ղյուղացին, սոցիալիստական շինարարությունը, հնի դեմ մղվող պայքարը և հնի փլատակների վրա ստեղծվող նոր կյանքն ու կենցաղը, դաշույնային ճնշված ժողովուրդների պայքարն իմպերիալիզմի լծի դեմ՝ հանուն իրենց ազատության և անկախության:

Սովետական դարաշրջանի առաջադրած այս հրատապ խնդիրներին են նվիրում իրենց ստեղծագործությունները հայ պրոլետարական գրականության սկզբնավորողներ Հ. Հակոբյանը, Արադին, Մ. Պետրոսյանը, Ա. Վարդանյանը, գրական ասպարեզ մտնող երիտասարդ գրողներ Ն. Զարյանը, Ա. Վշտունին, Ալազանը, Գ. Մահարին, Գ. Սարյանը, Սիրասը, Վ. Նորենցը, Արաքսը, Սարմինը և ուրիշները: Մեծ է եղել մանավանդ Հ. Հակոբյանի դերը սովետահայ գրականության սկզբնավորման, երիտասարդ գրողների համախմբման ու դաստիարակման գործում: Սովետահայ երիտասարդ բանաստեղծներից շատերը իրենց ստեղծագործական զարգացման ընթացքում ներշնչվել ու սովորել են ռուս առաջավոր սովետական գրողներից, հատկապես Մ. Գորկուց, Վլ. Մայակովսկուց, ինչպես նաև Հ. Հակոբյանից:

Սովետական կարգերի հաղթանակից հետո Հ. Հակոբյանը իր մի շարք ստեղծագործություններում, հատկապես «Քոլչևիկ է Շիր-կանալը» և «Աստվածները խոսեցին» պոեմներում պատկերում է սոցիալիստական շինարարությունը, երկրի էլեկտրիֆիկացիայի լենինյան պլան-

իւի կենսադործման առաջին քայլերը, սովետական մարդկանց աշխատանքային խանդավառութիւնը:

Կապիտալիստական կարգերում ճնշված, ոտնահարված աշխատավորների վերափոխումը, իրենց մարդկային արժանապատուլթյան և իրավունքների ակտիւլ պաշտպանությանը հասնելը Մ. Արազին պատկերել է «Ընկեր Մուկուշը» և «Աչքը վախեցած Հանեսը» պատմըվածքներում:

Քսանական թվականների սկզբից գրական բեղմնավոր գործունեութուն է ծավալում Նիդեջ Չարենցը, որի տաղանդն արդեն ընդհանուր ճանաչում էր դտել Հոկտեմբերյան ռեուլյուցիային նվիրված մի շարք պոեմներուլ («Սոմա», «Ամբոխները խեղադարված», «Երեք ռադիոպոեմ» և այլն):

Ն. Չարենցի այդ շրջանի ստեղծագործութիւններն ոմնեն թեմատիկ լայն ընդգրկում. նրանք պատկերում են համաշխարհային պատերազմը, Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեուլյուցիան, քաղաքացիական կռիւները և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, միջազգային ռեուլյուցիոն շարժումը և պրոլետարիատի մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի կերպարը («Ամենապոեմ», «Մաճկալ Սաքոյի պատմութիւնը», «Իմ ընկեր Լիպոն», «Ստամբուլ», «Կոմունարների պատը Փարիզում», «Բալլադ Վլադիմիր Իլյիչի, մոեթիկի և մի գուլգ կոշիկի մասին», «Լենին քեռին», «Լենինն ու Ալին»):

Ն. Չարենցն այս տարիների իր լավագույն ստեղծագործութիւններում հաղթահարում է նախկին երկերի զգալի մասին հատուկ վերացականութիւնը. դրա լավագույն ապացույցներից են հատկապես Վ. Ի. Լենինին նվիրված բալլադները և «Մաճկալ Սաքոյի պատմութիւնը»: Խորապես ռեալիստական այդ բալլադներում Չարենցին հաջողվել է պատկերել Լենինի ճշմարտացի ու հմայիչ կերպարը՝ մի քանի բնորոշ դժերուլ. բանաստեղծը կարողացել է ստեղծել համապատասխան սյուժե, գտել է արտահայտչական ցայտուն միջոցներ՝ պատկերելու Լենինի սերտ կապը Ժողովրդի հետ, նրա մեծ հոգատարութիւնը ժողովրդի կարիքների նկատմամբ և այն ջերմ, սրտաբուխ սերը, որ, անկախ ազգութիւնից ու դավանանքից, ամբողջ աշխարհի աշխատավորները տածում են դեպի իրենց մեծ ուսուցիչն ու առաջնորդը:

Ռեմատիկ լայն ընդգրկում ոմնեցող, բազմաժանր իր ստեղծագործութիւններում, դեղարվեստական մեծ վարպետությամբ Չարենցը արտահայտում է Հոկտեմբերյան ռեուլյուցիայի բարիկադներում և քա-

ղաքացիական հերոսական ճակատամարտերում հաղթանակած աշխատավոր մասսաների պաթոսը և նոր կյանքի կառուցման էնտուզիազմը: Մյուս կողմից, Չարենցը մերկացնում է դաշնակցական նացիոնալիզմի «տեսությունն» ու պրակտիկան («Երկիր Նաիրի», «Խըմբապետ Շավարշը»):

Իր լավագույն ստեղծագործություններով Չարենցը դառնում է սովետահայ գրականության կենտրոնական դեմքերից մեկը, մեծ չափով նպաստում է սովետահայ գրականության, մասնավորապես պոեզիայի զարգացմանը:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեվոլյուցիան և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում դադարաբաշխական բեկումն են առաջ բերում հայ կուսակի գրականության տյնպիսի աղանալոր ներկայացուցիչների ստեղծագործական կյանքում, ինչպիսին Շիրվանզադեն և Ավետիք Իսահակյանն են: «Մորդանի խնամին» կոմեդիայով (1926) Շիրվանզադեն մերկացնում և սպանիչ ծաղրի է ենթարկում մահվան ջղաձգումների մեջ դալարվող կոմսոբուկուլցիոն էմիգրացիային: Ավ. Իսահակյանը գրում է «Սասմա Մհեր» վիպերգը (1922), վարպետորեն խորացնելով հայ ժողովրդական էպոսում եղած սոցիալական հակամարտության մոտիվները:

Դ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը և Մ. Մանվելյանը իրենց ստեղծագործությունների լավագույն մասով պատկանելով հայ գրականության դեմոկրատական հոսանքին, սովետական կարգերի հաստատման սկզբից սկսում են ստեղծագործորեն վերակառուցվել և ակտիվորեն մասնակցել սովետահայ գրականության ստեղծման գործին: Ժողովրդական անտեսության վերականգնման և ինդուստրիալիզմի տարիներին նրանք հանդես են գալիս սովետահայ գրականությունը հարստացնող մի շարք ստեղծագործություններով: Դեմիրճյանը գրում է «Քաջ Նաղար» նշանավոր կոմեդիան, սովետական մարդկանց նոր կենցաղն ու հոգեբանությունն արտացոլող «Մանոթներ» (1927), «Նրանց Ժպիտը» (1929) պատմվածքների շարքը, «Ռաշիդ» պատմվածքը և Եւրիշ երկեր: Ստ. Զորյանը ստեղծում է Հայաստանում քաղաքացիական կռիվների շրջանը պատկերող իր լավագույն արձակերկերը՝ «Հեղկոմի նախագահը» և «Գրադարանի աղջիկը» (1925): Մ. Մանվելյանը «Մի գլխարկի պատմություն» (1929) և այլ պատմվածքներում պատկերում է շահագործող դասակարգերի մահացման

սլորոցեսը և ցայտուն գծերով վերարտադրում անցյալի «այրող հուշերը»:

Ժողովրդական տնտեսության վերականգնման և ինդուստրացման շրջանում սովետական դրականությանը առաջադրած հարցերին յուրովի արձագանքում է հայ սլորոցետարական արձակի հիմնադիրներից մեկը՝ Մադաթ Պետրոսյանը:

ՄԱԴԱԹ
ՊԵՏՐՈՍՅԱՆ
(1837—1931)

Մովսէս է Իջևանի շրջանի Կոթի գյուղում: Սովորել է Թիֆլիսի «Արհեստավորաց դպրոցում»: Տնտեսապէս հնարավորություն չունենալով ուսումը շարունակելու, աշխատանքի է անցնում

Ալմալայի ջրմուղում: Իրկար տարիներ աշխատելով որպէս մեքենավար, Մ. Պետրոսյանը մոտիկից ծանոթանում է բանվորների ծանր կյանքին, որը հետագայում ղեկավարութեան նկարագրել է իր մի քանի պատմվածքներում:

Մ. Պետրոսյանը դրական գործունեությունն սկսել է 1896 թ. «Մուրճ» ամսագրում տպագրած ակնարկներով, ուր նկարագրում է հայրենի Կոթի գյուղի գյուղացիության տնտեսական ծանր վիճակը: Նրա առաջին գեղարվեստական գործը «Մի վտոր հացի համար» պատմվածքն է, որ տպագրվել է 1903 թ. նույն ամսագրում: Այդ պատմվածքում պատկերելով բանվորի կերպարը, հեղինակը ցույց է տվել նրա մարդկային բարձր հատկությունները, ի հակադրություն կապիտալիստական աշխարհում տիրող անասնական էգոիզմի. մեքենավար Դավիթն իր վրանքը զոհում է՝ հարցուրաւոր մարդկանց փրկելու համար:

Մ. Պետրոսյանի պատմվածքների առաջին ժողովածուն լույս է տեսնում 1906 թ., երկրորդը՝ 1911 թ.: Եթե իր առաջին պատմվածքներում Պետրոսյանը նկարագրում էր դեռևս դասակարգային գիտակցության չեկած բանվորների, որոնք բուրժուական դժոխային իրավակարգում ելք չգտնելով, ծալրահեղ հուսահատության էին մատնվում («Մեքենավարի հիշատակարանից»), ապա հետագայում նա պատկերում է ակտիվ, պայքարող բանվորների կերպարները:

Սովետական կարգերը ստեղծագործական նոր եռանդ են հաղորդում Մ. Պետրոսյանի գրչին. իր նոր պատմվածքների և վիպակների միջ նախառեղուցիոն անցյալին նա հակադրում է սոցիալիստական ներկան, պատկերում սովետական կարգերի համար բանվոր-ռեւոլյուցիոներների մղած աննկուն պայքարը («Մեր հաղթանակը», «Հռոմիւս-

րի 9-ը», «Գաղտնի ծրարը»), սոցիալիստական շինարարությունը և երկրի ինդուստրացումը («Զագնիսի բանվորը», «Նոր դարբնոց» և այլն)։

ՄԻՔՍՍԵՆ
ՄՍԵՎԵՆՍԵՆ
(1877—1944)

Ծնվել է Ադուլիսում. սովորել է նախ Թիֆլիսի քաղաքային դպրոցում և ապա էջմիածնի Գեորգյան ճեմարանում, որը սակայն տվարտելու հնարավորություն չի ունեցել։ Դեռ պատանեկության շրջանից նրա մեջ դրսևորվում է բուռն հակում դեպի թատրոնը։ 17—18 տարեկան հասակից Մանվելյանը նվիրվում է բեմին։ Գրել սկսել է նույնպես վաղ, սակայն գրական ասպարեզ է մտել 1903 թ. «Էսքիզներ» ժողովածուով, որին հաջորդում են «Պատմվածքները» (1906), «Դրամատիկական էտյուդները» (1913) և այլ երկեր։

Մ. Մանվելյանի նախասովետական շրջանի պատմվածքների հերոսները կոպիտալիստական ցարական դաժան կարդերում տառապող լճատակի» մարդիկ են, որոնց նկատմամբ հեղինակն արտահայտում է խոր կարեկցանք ու սեր։ Մանվելյանը առաջին հայ արձակագիրներից էր, որ իր ստեղծագործության մեջ պատկերեց բանվորների կյանքը 1900-ական թվականների սկզբներին («Սև քաղաքում»)։

1921 թ. անդամությունով Նրեան, Մանվելյանը մեծ եռանդով նվիրվում է սովետահայ թատրոնի և գրականության բարդավաճման գործին։ Առաջնակարգ տեղ գրավելով սովետահայ արտիստների շարքում, Մանվելյանը միաժամանակ իր լավագույն պատմվածքներով հարստացնում է սովետահայ դեղարվեստական արձակը։

Սովետական շրջանի իր պատմվածքներում ու վիպակներում Մանվելյանը պատկերում է մուսյլ անցյալը («Պատկերներ ցարական բանակից», «Նղսան մոքիքը»), դրան հակադրելով սովետական պայծառ իրականությունը, աշխատավոր մարդու ազատագրումը շահագործումից ու կեղեքումից («Անապատը կծաղկի»), ցույց առնելով նաև վերջին օրերն ապրող դասակարգային թշնամու հուսահատական ճիգերը և անասնական ատելությունը սովետական կարգերի նկատմամբ («Աշնան ճանճեր», «Աղա խոսքովը», «Ծեր գայլը»)։

Հայրենական Մեծ պատերազմի շրջանում, սովետական մյուս գրողների հետ Մ. Մանվելյանը ևս իր գրիչը նվիրեց սովետական ժողովրդի հերոսական պայքարը պատկերելու գործին («Կոլոտ Նրջոն», «Երկայնում»)։

Հայրենական Մեծ պատերազմի շրջանում, սովետական մյուս գրողների հետ Մ. Մանվելյանը ևս իր գրիչը նվիրեց սովետական ժողովրդի հերոսական պայքարը պատկերելու գործին («Կոլոտ Նրջոն», «Երկայնում»)։

Քաղաքացիական կոիվներին հերոսական, երկրի տնտեսության վերակառնման և սոցիալիստական շինարարության համար ամենուրեք ծավալված աշխատանքային խանդավառությունը մեծ չափով իրենց գեղարվեստական արտացոլումն են գտնում պոեզիայի մեջ, որ այդ տարիներին հանդիսանում էր տիրապետող գրական տեսակը։ Շարունակելով հայ պոեզիատրական պոեզիայի հիմնադիր Հ. Հակոբյանի տրադիցիաները, սովորելով ռուս ականավոր պոետներից և առաջին հերթին՝ Վլ. Մայակովսկուց, հանդես են գալիս Ն. Զարյանը, Ա. Վըշտունին, Գ. Սարյանը, Սարմենը, Ս. Տարոնցին և ուրիշները։ «Նոյեմբերյան օրերին» պոեմում Ն. Զարյանը երգում է սովետական կարգերի համար հայ աշխատավորության պայքարը անգլո-ամերիկյան վարձկաններ դաշնակցականների բռնակալության դեմ, Գ. Սարյանը («Շիրակի հարսանիքը») և Սարմենը («Իաշտերը ժպտում են») առանձին խանդավառությամբ պատկերում են Հայաստանում ծավալված ջրանցքաշինարարությունը։

Այդ տարիներին նոր ձևավորվող սովետահայ պոեզիայի մի քանի ներկայացուցիչների վրա որոշ ազդեցություն են դրածում գրական խորթ ուղղությունները, ինչպես, օրինակ, ֆուտուրիզմը։

Գրական այս ուղղության հետևողներն իրենց հայտարարելով «նոր արվեստի» ստեղծողներ, բացահայտ կերպով ժխտում էին անցյալի կլասիկ արվեստն ու գրականությունը, պնդելով, թե «պոեզիատրիա՛սը ապագայի ստեղծողն է և ոչ թե անցյալի ժառանգորդը»։ Խեղճությունով պարտիայի քաղաքականությունը կուլտուրական ժառանգության բնազավառում, ֆուտուրիստները հոխորտում էին, թե սովետական գրողները կլասիկ գրականությունից սովորելու ոչինչ չունեն, և նույնիսկ քարոզում էին «պայթեցնել» հին լեզուն և ստեղծել նորը։ Իրենց այս հայացքներով ֆուտուրիստները հարում էին «պրոլետուլոտ» («Պրոլետարական կուլտուրա») խմբակցությանը, որի հակապարտիական, հակաժողովրդական բնույթը վճռականորեն դատապարտել էր Վ. Ի. Լենինը դեռևս 1920 թվականին։

Ֆուտուրիստ պոետները ռևոլյուցիան պատկերում էին որպես հին աշխարհը հիմնիվեր քանդող մի փոթորիկ, ամենակործան մի ուժ, տարերային ու անկազմակերպ ամբռնների ընդլղում։ Նրանք երգում էին «համաշխարհային ռևոլյուցիան», բանաստեղծություններ ու պոեմներ էին նվիրում աստղերին ու մոլորակներին, հեռավոր երևակայական աշխարհներին։ Պարզ է, որ ռևոլյուցիայի այդպիսի պատ-

կերումը ամենահեռավոր գաղափար անգամ չէր տալիս Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեուլյուցիայի մասին: Վերացական կերպով էր պատկերվում նաև սոցիալիստական շինարարությունը. բանաստեղծություններում խոսվում էր գործարանային ծխնեկուղաների, մեքենաների, անիմլների ու մոկերի մասին, բայց բացակայում էր ռեուլյուցիայի շարժիչ ուժը հանդիսացող աշխատավոր մարդը իր հույզերով ու խոհերով, բացակայում էր սոցիալիստական հասարակության շինարարը իր աշխատանքային սխրագործություններ և մարդկային անհատականությունը:

Պարտիան ցույց տվեց, որ ֆուտուրիզմը բուրժուական-անկուսակալին ուղղություն է և ամբողջովին խորթ է սովետական դրականության ոգուն: Պարտիան սովորեցնում էր, որ սովետական դրականությունը պայքարելով ֆուտուրիզմի և բուրժուական անկուսակալին այլ հոսանքների դեմ, պետք է ճշմարտացի կերպով արտացոլի կյանքը, սովետական պետության ու ժողովրդի շահերը, աշխատավորությանը դաստիարակի կոմունիզմի ոգով:

Ժողովրդական տնտեսության վերականգնման և ինդուստրացման տարիներին սովետահայ պոեզիայի մեջ առաջնակարգ տեղերից մեկը դրավում էր ռեուլյուցիոն Արևելքի թեման. սովետահայ պոետները խանդավառությամբ էին երգում Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեուլյուցիայի ազդեցության տակ անպլո-ամերիկյան իմպերիալիզմի դեմ ըմբոստացած գաղութային ժողովուրդների պայքարը: Ռեուլյուցիոն Արևելքի թեմայի մշակումով առանձնակի տեղ է դրավում բանաստեղծ Ալուտ Վշտունին:

Ա.ՋԱՏ ՎՇՏՈՒՆԻ Ծնվել է 1894 թ. Վան քաղաքում, ուսուցչի ընտանիքում: Սովորել է ծննդավայրում, ապա Պոլսում և Փարիզում, 1914 թ. գալով Անդրկովկաս՝ Ռբիլիսի, իր դրական ընդունակություններով դրավում է Հովհ. Թումանյանի ուղադրությունը: Գրական գործունեությունն սկսում է 1915 թ. աշխատակցելով ժամանակի պարբերական մամուլին. նույն թվին լույս է տեսնում նրա բանաստեղծությունների առաջին ժողովածուն:

Այդ տարիներին հրիտասարդ բանաստեղծը դեռևս որոնողների մեջ էր, ենթարկվելով ժամանակի գրական անկումային ուղղությունների ազդեցությանը: Նրա բանաստեղծություններն արտահայտում էին անհատապաշտական արամադրություններ, վիրշու ա թախիծ: Սակայն Հոկտեմբերյան Մեծ ռեուլյուցիան վճռական բեկում է առաջացնում

Վշտունու ստեղծագործական կյանքում. այդ բեկմանը զգալիորեն նսպատեցում է նաև նրա ծանոթությունը և ասյա մտերմությունը Հակոբ Հակոբյանի հետ: Բանաստեղծն սկսում է երգել Հոկտեմբերյան սոցիալիստական Ռեուլուցիան, երկրի անտեսական և կուլտուրական կյանքում տեղի ունեցող մեծ հեղաշրջումները: Իր ստեղծագործական կյանքի այս նոր շրջանի սկզբում նա մասամբ ենթարկվում է ֆուտուրիզմի ազդեցությանը, որի արտահայտությունն են հանդիսանում «Շոգեկաուք» (1917 թ.) և «Զանգահար» (1919 թ.) բանաստեղծությունները: Իր հետագա գործերում նրան հաջողվում է հաղթահարել այդ վնասակար ազդեցությունը:

Քսանական թվականների սկզբից Ա. Վշտունին հանդես է գալիս ռեուլուցիոն Արևելքին նվիրված մի շարք բանաստեղծություններով ու պոեմներով՝ ամփոփված «Նոր Արևելք» (1923 թ.), «Սալամամե» (1924 թ.), «Արևելք հուր է հիմա» (1927 թ.) ժողովածուներում, որոնցով նա դրավում է իր ինքնուրույն և որոշակի տեղը սովետահայ պոեզիայի մեջ: Իր այդ ստեղծագործություններում Ա. Վշտունին պատկերում է Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեուլուցիայի օրինակով ողջնշված Արևելքի գաղութային և կիսագաղութային ճնշված ժողովուրդների զարթոնքը, նրանց ազատագրական պայքարը իմպերիալիստական պետությունների արյունոտ լծի դեմ:

Ռեուլուցիոն Արևելքին նվիրված Վշտունու ստեղծագործություններից ամենահաջողը «Ռամ-Ռոյ» պոեմն է (1925 թ.):

Բանաստեղծը պատկերում է գործադուլավոր շին բանվորների, նրանց կանանց և երեխաների ցույցը Շանհայում. անգլիական գաղութարարները հնդիկ զինվորներին հրամայում են կրակել ցույցարարների վրա. հնդիկ զինվոր Ռամ-Ռոյը հրաժարվում է այդ հրամանը կատարելուց, զիտակցելով, որ հնդիկ և շին աշխատավորները բախտակիցներ են և նրանց ընդհանուր թշնամին անգլիական իմպերիալիստներն են: Ռամ-Ռոյը հիշում է, որ անգլիացիներն այդպիսի արյունոտ հաշվեհարդար կատարում են նաև հնդիկ աշխատավորության հետ. սպանված շին մանկան գիպեր Ռամ-Ռոյին հիշեցնում է իր որդուն, անգլիական դահիճների կողմից նույն դաժանությամբ զնդակահարվող հնդիկ երեխաներին.

Գալարվեց սիրտը Ռամ-Ռոյի,
Հիշեց հայրենիքն իր Հինդ,

Պինդ շղթաներով շղթայված:
...Գալարվեց սիրտը Ռամ-Ռոյի,
Աչքերից կաթնք են հորդում:
Կարծես այն փոքրիկ լին տղան
Այնպես նման էր իր որդուն...
...Իր որդու սրտին էր կարծես
Այ կարմիր արյունը հորդում:

Անգլիացի սպայի հրամանով դնդակահարվում է ըմբոստ հնդիկ զինվոր Ռամ-Ռոյը, սակայն լին բանվորների գործադուլը շարունակվում է ավելի մեծ թափով: Ա. Վշտունին ռեալիստական Վառ դույններով և միաժամանակ լիրիկական ջերմությամբ է կերտել ավատատենչ հնդիկ զինվորի և լին մանկան կերպարները. բանաստեղծին հաջողվել է այս փոքրիկ, բայց հուղիչ պատմությամբ ընթերցողների մեջ առաջացնել խոր համակրանք գաղութային ճնշված ժողովուրդների նկատմամբ, և խոր ատելություն դեպի ժողովուրդների դահիճ հմպերիալիստական գաղութարարները:

Ա. Վշտունու հետագա տարիների ստեղծագործության մեջ առանձնապես աչքի է ընկնում «Ազրբայջան» բանաստեղծությունը, որի մեջ խանդավառությամբ արտահայտված է սովետական ժողովուրդների եղբայրության և համերաշխության գաղափարը:

Ա. Վշտունու ստեղծագործություններում իր արտացոլումն է դրսևել հայ ժողովրդի ոչ-հեռավոր անցյալը: «Պառլամենտը» դրամատիկական պոեմում բանաստեղծը մերկացնում է դաշնակցական կառավարության աղետաբեր քաղաքականությունը, բուրժուա-նացիոնալիստ «մինիստրների» ստորաքարշությունը արևմտյան կապիտալիստական պետությունների դիշակեր դիվանագետների առջև: «Լուսադեմին» պոեմում (1937 թ.) Ա. Վշտունին պատկերում է հայ աշխատավորության պայքարը դաշնակցական տիրապետության դեմ: Պետք է նկատել, սակայն, որ Վշտունու այս պոեմների կոմպոզիցիան կուռ չէ, կերպարները սխեմատիկ են:

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Ա. Վշտունին սովետական ժողովուրդների հերոսական պայքարին նվիրում է մի շարք բանաստեղծություններ, որոնցից նշանավոր են «Մոր նամակը», «Կոմանդիր յարը», «Կովկասյան քաջերը»: Ա. Վշտունու այս շրջանի ստեղծագործությունները առանձին գրքով լույս տեսան 1946 թվականին՝ «Սեր և ատելություն» խորագրով:

Ժողովրդական տնտեսության և ինդուստրացման շրջանում, պոե-
զիայի և արձակի հետ միասին, բայց համեմատաբար դանդաղ, սկը-
սում է զարգանալ նաև սովետահայ դրամատուրգիան:

Այդ տարիներին իրենց դրամատիկական երկերով հանդես են
գալիս Դ. Դեմիրճյանը («Քաջ Նազար»), Լ. Սաղաթելյանը («Մի կտոր
հողի համար») և Ան. Վարդանյանը («Բանդիտներ», «Դանել աղա»):
«Քաջ Նազար» կոմեդիան, որ մի սպանիչ ծաղր է միապետության և
լուրժուկան, այդ թվում նաև դաշնակցական պետական գործիչների
դեմ, 20-ական թվականների սովետահայ դրամատուրգիայի ամենա-
նշանավոր երկն է և բազմիցս բեմադրվելով, ջերմ ընդունելություն է
գտել թատերասեր հասարակաշնության կողմից: Լ. Սաղաթելյանի «Մի
կտոր հողի համար» դրամայի (1923 թ.) նյութը անցյալի հայ դուռա-
ցու ծայրահեղ սակավահողությունն ու աղքատությունն է և սրանցով
պայմանավորված կենցաղային քարացած ու ալյանդակ սովորույթու-
ները: Սակավահողության հետևանքով տեղի ունեցող բռնի ամուս-
նության թիման, իհարկե, նոր չէր: Հայ գրականության մեջ բազմա-
թիվ երկեր և կան այդ հարցին նվիրված: Սակայն սովետական կարգե-
րում վերհիշելով ոչ հեռու անցյալի մի մոռյալ էջը, հեղինակը ցույց
է տալիս, թե ինչպիսի չարիքից է ազատվել հայ աշխատավոր դուռա-
ցին Սովետական իշխանության շնորհիվ:

Ս.Ն.ՈՒՇՍ.Վ.Ս.Ն

Վ.Ս.ԲԴՍ.Ն.ՅՍ.Ն

(1879—1951)

Հայ պրոլետարական դրամատուրգիայի ըս-
կըզբնավորողը եղել է Անուշավան Վարդան-
յանը: Նա ծնվել է 1879 թ. Հին Նախիջևանի
Չանանար գյուղում: Տնտեսական ծանր պայմանները նրան սխտե-
մատիկ կրթություն ստանալու հնարավորություն չեն տվել. որպես
կոշկակար բանվոր Ա. Վարդանյանը տասնյակ տարիներ աշխատում
է Թիֆլիսում, Ադելխանովի կոշիկ գործարանում: 1900 թ. մասնակցում
է մարքսիստական բանվորական կազմակերպությունների ընդհա-
տակյա աշխատանքներին. այդտեղ էլ նա ծանոթանում և ապա մտեր-
մանում է Հ. Հակոբյանի հետ: 1907 թ. մտնում է Կոմունիստական
պարտիայի շարքերը, կատարելով ընդհատակյա ակտիվ աշխատանք
բանվորության մեջ:

Ան. Վարդանյանը դրամատուրգիական գործունեությունն սկսել
է 1905 թ. «Գործադուլ» պիեսով, որով հիմք է դրվում հայ պրոլետա-
րական դրամատուրգիային: Իր այդ դրամայում հեղինակը պատկե-
սում է իրենց դասակարգային շահերի պաշտպանության համար պայ-

բարող բանվորների կերպարները, արտահայտում նրանց զգացմունքներն ու խոհերը: Սակայն «Գործադուլը» բեմադրվում է միայն տարիներ հետո՝ 1912 թ., ջերմ ընդունելությոն գտնելով աշխատավորության կողմից: Հայ թատրոնի պատմության մեջ առաջին անգամն էր, որ բեմ էր բարձրանում բանվորը: Բուլժուական մամուլը բացահայտ թշնամանքով վերաբերվեց այդ դրամայի բեմադրությանը: Չնայած այդ թշնամանքին և բազմաթիվ այլ արդեվքներին, «Գործադուլ» դրաման աչնուհետև էլ բեմադրվում էր, վայելելով աշխատավորների ջերմ համակրանքը:

1913 թ. Ան. Վարդանյանը գրում է «Ուրվականներ» կամ «Սունդուկենց Գաբույի տանը» պիեսը, որի մեջ բանվորները բարձր դասահատելով Սոմդուկյանի պլուխ գործոցը՝ «Պեպոն», միաժամանակ զայրույթ ու ատելություն էին արտահայտում իրենց դասակարգային թշնամո՞ւ աշխատավոր մասնանիների արյուն-քրտինքը ծծող բուրժուազիայի դեմ:

Սովետական շրջանում Ան. Վարդանյանի դրիչը ավելի բեղմնավոր է դառնում. նա գրում է մի շարք նոր պիեսներ նվիրված սովետական կարգերի հաղթանակի համար հայ աշխատավորության մղած պայքարին և դաշնակցության մերկացմանը («Ազդանշան» կամ «Կարմիր պարտիզաններ») և կոլտնտեսային շինարարությանը («Դիրքերում», «Արաքսի ափին»):

Իրենց ազատության և անկախության համար սովետական ժողովուրդների մղած հերոսական պայքարի մի դրվագը Ան. Վարդանյանը պատկերում է «Կովկասի դարպասների մոտ» պիեսում:

**Ա.ԹԱԲԵԿ
ԽՆԿՈՅԱՆ
(1870—1935)**

Սովետահայ մանկական գրականության ըսկըզբնավորման և զարգացման գործում նշանակալից դեր են կատարում Աթաբեկ Խնկոյանը, Հայրապետ Հայրապետյանը և Սիմակ Սահակյանը, որոնք իրենց դրական գործունեությունն սկսելով 1905 թ. լույս տեսնող «Հասկեր» մանկական ամսագրում, Ղ. Աղայանի և Հովհ. Թումանյանի հետ միասին ներկայացնում էին ամսագրի դեմոկրատական թևը:

Ա. Խնկոյանը (Խնկո Ապեր) ծնվել է Սպիտակի շրջանի Ղարաբույա (այժմ Խնկոյան) գյուղում: Սկզբնական կրթությունն ստանում է գյուղում, տպա ավարտելով Ալեքսանդրապոլի (այժմ Լենինական) քաղաքային դպրոցը, երկար տարիներ ուսուցչություն է անում գյու-

ղական դպրոցներում: Այդ տարիներին նա մոտիկից ծանոթանում է հայ աշխատավոր գյուղացիության տնտեսական և իրավական ծանր վիճակին և կյանքից ստացած իր տպավորությունները, իր դգացմունքներն ու խոհերը արտահայտում է բանաստեղծություններում, որոնք 1890 թ. լույս են տեսնում «Բանաստեղծական փորձեր» վերնագրով:

Ա. Խնկոյանը որպես առակագիր և մանկական բանաստեղծ ձևավորվում ու հասունանում է «Հասկեր» մանկական ամսագրում, Ղ. Աղայանի և Հովհ. Թումանյանի բարերար ազդեցության տակ: Լաճերեն օգտագործելով ժողովրդական բանահյուսությունը, Խնկոյանը ստեղծում է առակների, լեդենդների և հեքիաթների մի ամբողջ շարք, ինչպես և թարգմանություններ ու փոխադրություններ է կատարում Պուշկինի և Կոլիովի ստեղծագործություններից:

Մյուս հայ դեմոկրատ դրողների հետ միասին, Աթաբեկ Խնկոյանը ևս ջերմորեն ողջունում է սովետական կարգերի հաստատումը Հայաստանում: Տեղափոխվելով Սովետական Հայաստան, նա եռանդով իր ամբողջ ուժերը նվիրաբերում է սովետահայ մանկական գրականության ստեղծման գործին: Միաժամանակ ակտիվ կերպով աշխատակցում է «Մաճկալ» գյուղացիական թերթին (1923—1932), իսկ 1929 թվականից՝ «Հոկտեմբերիկ» մանկական ամսագրին (այժմ «Պիոներ»):

Սովետական շրջանում Ա. Խնկոյանը ստեղծում է մի քանի տասնյակ մանկական բանաստեղծություններ ու պոեմներ: Իր այդ ստեղծագործություններում Խնկոյանը երգում է սովետական մանուկների երջանիկ կյանքը, նրանց աշխատանքն ու հանգիստը («Մենք պիոներ ենք», «Պիոներական քայլերդ», «Ընկեր»), պատկերում սոցիալիստական շինարարությունը («Զորագէտի երգը», «Տրամվայը Երևանում» և այլն):

Իր լավագույն ստեղծագործություններով Աթ. Խնկոյանը մանուկներին հաղորդակից է դարձնում սովետական կյանքի հրատապ, կարևորագույն խնդիրներին, գեղարվեստական խոսքի միջոցով նպաստում նրանց կոմունիստական դաստիարակության գործին: Աթ. Խնկոյանը հմայիչ պատմող է. նրա լեզուն պարզ է ու հստակ, համեմված ժողովրդական կենդանի ոճերով, առածներով ու ասացվածքներով, սրամտություններով ու հումորով:



Այսպիսով, 20-ական թվականներին սկզբնավորվում և սկսում է զարգանալ ձևով ազդային, բովանդակով՝ յայտարարող սոցիալիստական սովետահայ գրականությունը: Ղեկավարվելով Կոմունիստական պարտիայի իմաստուն ցուցումներով, անողորձ պայքար մղելով նացիոնալիզմի, ֆուտուրիզմի, ռասալականության և գրական այլ խորթ ուղղությունների դեմ, սովետական գրականությունը Հայաստանում դառնում է գերիշխող: Այդ տարիներին սովետահայ գրականությունը պատկերում է հայ ժողովրդի վերածնունդը, կերտում է քաղաքացիական կռիվների և սովետական նոր մարդկանց կերպարները, արտահայտում է սոցիալիստական շինարարության պայքարը, աշխատավորության միջազգային համերաշխության, սովետական ժողովուրդների եղբայրության գաղափարները:

Սովորելով սովետական առաջավոր ուսս գրողներից, սովետահայ գրողները հետզհետե նվաճումներ են ձեռք բերում նաև գեղարվեստական ձևի կատարելագործման, գրական վարպետության բնագավառում:

Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության ամենօրյա հոգատարության շնորհիվ, 20-ական թվականների վերջերին ստեղծվում են նախադրյալներ սովետահայ գրականության նոր վերելքի համար:



ՄՈՎՍԵՍ ԱՐԱԶԻ

Մովսես Արազու անունը անխզելիորեն կապված է հայ պրոլետարական գրականության սկզբնավորման հետ:

Դեռևս նախասովետական շրջանի ստեղծագործություններում, հետևելով գրական այն նոր ուղղությանը, որ ռուսական իրականության մեջ հիմնադրել էր Մաքսիմ Գորկին, Արազին իր ամբողջ գրական-հասարակական կյանքի ընթացքում ակտիվորեն մասնակցել է պրոլետարական գրականության զարգացման գործին:

Կյանքը

Արազին (Մովսես Հարությունյան) ծնվել է 1878 թ. Շուշիում (Վրացական ՍՍՌ, Շահումյան քաղաք): Այստեղ էլ նա ստացել է իր առաջին տպավորությունները գյուղից, որոնք հետագայում հարուստ նյութ են տվել գրողին՝ նախասովետական հայ գյուղը պատկերելիս:

Արազին նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի ծխական դպրոցում, այնուհետև ընդունվել է Թիֆլիսի ռեալական դպրոցը, որն ավարտել է 1898 թվականին:

Այդ տարիները նշանակալից էին բանվորական շարժման վերելքի, մարքսիզմի տարածման տեսակետից

Անդրկովկասի քաղաքներում արդյունաբերական կապիտալիզմի զարգացմանը զուգընթաց աճում էր բանվորական շարժումը, բանվորական շրջաններում լայն արձագանք էին գտնում մարքսիստական գաղափարները, կազմակերպվում էին առաջին մարքսիստական խումբակները:

Ռեուլյուցիոն տրամադրությունները թափանցում են աշակերտության մեջ: Թիֆլիսի հայ աշակերտության մեջ գործել է մի խմբակ, որը ղեկավարել է Ստ. Շահումյանը: Խմբակի նպատակն է եղել աշակերտներին կապել հասարակական-քաղաքական կյանքի հետ, նրանց համար ձեռք բերել քաղաքական դրականություն: Այդ խմբակի մեջ եղել է նաև Արազին:

Ավարտելով ռեալական դպրոցը, Արազին 1899 թ. մեկնում է Պետերբուրգ և ընդունվում Տեխնոլոգիական ինստիտուտը: Պետերբուրգում նա ավելի մոտիկից է ծանոթանում բանվորական շարժման հետ:

1890-ական թվականների վերջերից ռեուլյուցիոն շարժումը Ռուսաստանում վերիջ էր ապրում:

Ռեուլյուցիոն գաղափարներով տարված ուսանողները գաղտնի կերպով կարդում էին «Կոմունիստական մանիֆեստ»-ը, Վ. Ի. Լենինի «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշխատությունը, հետագայում՝ Լենինյան «Իսկրա»-ի համարները, որոնք անլեզալ կերպով թափանցում էին Ռուսաստան և անցնում ձեռքից-ձեռք:

1901 թ. Պետերբուրգի Կազանսկի մայր եկեղեցու հրապարակում կազմակերպվում է մեծ ցույց: Ուսանողական այդ ցույցին մասնակցելու համար շատերի թվում ձերբակալվում է նաև Արազին:

Ցարական բանտի սուրսավր չի ջլատում Արազու ռեուլյուցիոն հաստատակամությունը: Բանտից արձակվելուց հետո նա ավելի մեծ եռանդով է մասնակցում քաղաքական պայքարին: 1903 թ. Արազին նորից է ձերբակալվում, բանտարկվում և արքորվում Անդրկովկաս: Աքսորի ժամանակը լրանալուց հետո մեկնում է Պետերբուրգ, բայց արդեն անհնար է դառնում ուսումը շարունակել: 1905 թ. նա վերջնականապես վերադառնում է Անդրկովկաս:

Վրա է հասնում 1905 թ. ռուսական առաջին ռեուլյուցիան, որը ցնցում է ողջ Ռուսաստանը:

Ռեուլյուցիոն, սակայն, ժամանակավորապես սլարտվում է: Ցարական կառավարությունը դաժան հաշվեհարդար է կատարում բան-

վորները և ռուսացիներն զաղափարներով տողորված մտավորականութ-
յան հետ: Ռեակցիայի այդ տարիներին ավելի մոլեղին ձևով է
հանդես գալիս բուրժուական նացիոնալիզմը գրականության մեջ: Հայ
պրոլետարական պոեզիայի հիմնադիր Հակոբ Հակոբյանը հայ գրա-
կանության մեջ միակն էր, որ ինտերնացիոնալիզմի դիրքերից կոչ էր
անում բանվորներին անդամաձան շարունակել պայքարը ինքնակա-
լության դեմ:

Այդ օրերին է ահա, 1906 թ. վերջերին, որ դրական ասպարեզ է
մտնում Մովսես Արաղին: Այդ թվականի սեպտեմբեր ամսին «Մուրճ»
ամսագրում Ֆերնանդո ծածկանունով տպագրվում է նրա առաջին սա-
տիրական պատմվածքը՝ «Դոն Կարապետի արշավանքը դեպի Կղեր-
ստան» վերնագրով:

Հենց այդ առաջին գրվածքով Արաղին սահմանադատվում է ազ-
գայնական պահպանողական զաղափարախոսությունից և հանդես է
գալիս որպիս բուրժուական նացիոնալիզմի մերկացնողներից մեկը:
Նա իր սատիրական պատմվածքում ցույց է տալիս դաշնակցության՝
որպես հայ խոշոր բուրժուազիայի պարտիայի՝ հակառակորդական,
ավանտյուրիստական էությունը:

Ռեակցիայի տարիներին Արաղին աշխատակցում է Թիֆլիսի հայ
մամուլին:

1911 թ. հա Մ. Արաղյան ստորագրությամբ աշխատակցում է
«Արսր» ամսագրին՝ դրելով մի քանի պատմվածքներ՝ «Ջահելն ու ահե-
լը», «Վերջին երազը», «Մենավոր լապտերը»: Սրանց մեջ ամենաու-
շադրալի է «Վերջին երազը», որը լույս է տեսել 1912 թ. վերջին և
ակներևաբար իր վրա կրում է բանվորական շարժման վերելքի որո-
շակի ազդեցությունը: Պատմվածքի նյութը վերցված է ռեակցիայի
տարիների դեպքերից: Նախկին ուսանող Լևոնը ճանաչվել է բանտ և
տառապում է թոքախտով: Նա բանտից ազատվում և հայրենի գյուղ
է վերադառնում ծայր աստիճան քայքայված առողջությամբ: Մահա-
մեթն վիճակում Լևոնը երազում է ռուսացիայի համար մղվող
պայքարը: Լևոնը մեռնում է՝ իրեն պատկերացնելով հաղթողների
շարքում:

Առաջին իմպերիալիստական պատերազմի նախօրյակին Արա-
ղին, Հակոբ Հակոբյանի հետ միասին, զարկ է տալիս պրոլետարա-
կան գրականության զարգացմանը: Նրանք հրատարակում են «Կար-
միր մեխակներ» և «Բանվորի ալբոմ» ժողովածուները: Արաղին մաս-

նակցում է այդ ժողովածուներին՝ սեղմ, պարզ ու հաստով լեզվով գրված արձակ բանաստեղծություններով:

Այս շրջանում նա գրում է նախառեկուցիոն շրջանի իր դուլս գործոցը՝ «Արևը» արձակ բանաստեղծությունը, «Կիսատ տունը», ասպա «Կարմիր համբույրը», «Արյունոտ ծաղիկները», «Վերջին տերեւը» և այլն:

Արազին մեծ խանդավառությամբ է դիմավորում Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեկուցիայի հաղթանակը, որը պատկերված է նրա «Սովետական առավոտը» երկում:

Վրաստանում դեռ իշխանության դուլս կանգնած մենշևիկյան կառավարությունը 1920 թ. ձերբակալում է նրան ու նետում Քուլթայի-սի բանտը, որտեղից նա ազատվում է սովետական կարգերի հաստատումից հետո:

Երկար տարիների ընթացքում փայլալայած գաղափարների կենսագործումը տեսնելով սովետական պայմաններում, Արազին ամբողջովին նվիրվում է սովետական դրականությանը: Պարբերաբար լույս են տեսնում նրա ռեալիստական պատմվածքները: 1923 թ. Թիֆլիսում տպագրվում է նրա պատմվածքների առաջին ժողովածուն: Այնուհետև գրեթե ամեն տարի Թիֆլիսում կամ Երևանում հրատարակվում են Արազու նոր ժողովածուները: 1933 թ. Արազին լույս է ընծայում «Նուռի շողերով» և «Ջրվեժի ցուլքում» վիպակները, 1940 թ. «Այրվող հորիզոն» վեպը, որը մասամբ ունի ինքնակենսագրական բնույթ, պատկերում է ռեկուցիոն շարժումը 900-ական թվականներին Պետերբուրգում:

Հայրենական պատերազմի տարիներին Արազին գրում է մի շարք պատմվածքներ («Հայրենի հողը»; «Աշխենը», «Պրոֆեսորը» և այլն), որոնց մի մասը ամփոփում է 1944 թ. հրատարակված «Անհաղթները» ժողովածուի մեջ:

1937 թ. նա Երևանի քաղաքային Սովետի դեպուտատ էր, նույն թվականին ընտրվեց Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ:

1947 և 1951 թթ. նա վերընտրվեց Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ: Արազին պարգևատրվել է «Աշխատանքային Կարմիր Դրոշ» և «Պատվո նշան» շքանշաններով:

Արապու Նախասովետական շրջանի պատմվածքները հայ պրոլետարական արձակ գրականության առաջին երկերն են և իրենց գեղարվեստական արժանիքներով ու գաղափարական բովանդակությամբ արժանի են հատուկ ուշադրության: Այդ պատմվածքները գրված են խորը լիրիզմով, սլարդ լեզվով, անմիջական են, անկեղծ և սուպավորիչ:

**«Արևը» արձակ
բանաստեղծու-
թյունը**

Կապիտալիստական հասարակարդը դժոխային պայմաններ է ստեղծել աշխատավորների համար, հատկապես արդյունաբերական բանվորների համար, որոնք օրվա հացի կարոտ՝ իրենց

կյանքը քարշ են տալիս մեծ քաղաքի անարև, խոնավ նկուղներում:

Աշխատավորական ընտանիքի կործանումն է պատկերված Արազու «Արևը» արձակ բանաստեղծության մեջ (1913 թ.): Աշխատավորի երեք զավակներն էլ զոհ են գնացել զրկանքին ու թշվառությանը: Հեղինակը նկարագրում է այդ մարդու տառապանքները և ամենաբուռն ցասումն ու ատելությունը վերևի հարկում ապրող հարուստների նրկատմամբ, որոնք հանդիսանում են նրա նման հազարավորների ողբերգության պատճառը:

Արձակ բանաստեղծության վերջավորության՝ «Գնա՛, հայտնի՛ր աշխարհին, ասա՛, վերևի հարկը արևի շողերը խլեց, ստվեր գցեց ներքևի հարկին ու սպանեց էն ոսկեհեր աղջկան» տողերը ուժգին բողոք են ընդդեմ բանվորի արյան զոհով հղիացած հարուստ դասակարգի: «Արևը» արձակ բանաստեղծության մեջ երևում է հեղինակի անսահման սերը «ներքևի հարկերում» ապրող աշխատավորության և ատելությունը՝ հարուստների նկատմամբ:

Այլաբանական պատկերը Արազու այս շրջանի ստեղծագործությունների բնորոշ կողմերից մեկն է: Այդ բանը արտահայտվել է նաև այս գործում: Այնտեղ սոսկ արևից զրկվելու գաղափարը չէ, որ շեշտվում է: Արևը ներկայացված է որպես առհասարակ մարդկության ազատ, երջանիկ կյանքի սիմվոլ, որից զրկված է աշխատավոր մարդկությունը կապիտալիստական աշխարհում: Հեղինակը հանդես է գալիս ոչ թե որպես այդ փաստը պասսիվ արձանագրող, այլ մերկացնում է սոցիալական անարդարությունը և ատելության կոչ է անում վերևի հարկում ապրողների նկատմամբ:

«Կիսատ տունը»

Աշխատավոր ժողովրդի ազատագրության նըկատմամբ ջերմ հավատք, ապագա ռեուլուցիայի անխուսափելիութան դադաւարն է արծարծւում Արազու «Կիսատ տունը» պատմվածքում:

Այստեղ աշխատանքին տրված է 1905 թ. ռեուլուցիան: Հերոսը՝ Սարգիսը, աղքատ գյուղացի է, հողազուրկ և տնազուրկ: 1905 թ. ռեուլուցիայի օրերին նա փորձում է ձեռք բերել իր մարդկային իրավունքները: Պատմվածքում հեղինակը հարազատորեն վերաբարեւ է այն անսահման ոգևորութունը, վառ հուշերը, որով տագրված են եղել աշխատավոր գյուղացիները 1905 թ. ռեուլուցիայի ընթացքում, երբ, ինչպես հեղինակն է ասում, «ամեն ինչ շարժւեց», «երբ մութ խորշերից ձայնից դարավոր բողոքը, երբ բացվեցին փակ բերաններ» և մարդիկ կարծեցին, որ «էլ հարուստ, աղքատ» չի լինելու Այդ օրերին է, որ աղքատ գյուղացի Սարգիսը սկսում է իր «հալալ քրտինքով» տուն կառուցել: Սակայն ռեուլուցիան ժամանակավորապես պարտւում է, տունը կիսատ մնում, գյուղի հրապարակում դարձյալ իրենց դիրքերն են դրավում վաշխառուները:

Արազին արտահայտելով աշխատավոր գյուղացիութան այդ տարինների տրամադրութունները, անսահման հավատով է խոսում դաւիթ նոր ռեուլուցիայի մասին: Նրա հերոսը կուսկի հոխորտանքին պատասխանում է վստահ ու համարձակ. «Շատ մի եղակաւի — ասում էր — մի առվով որ ջուր ա գնացել՝ մին էլ կղնա... լալ իմանաս, էն օրերը էլի կզամն, տունս կշինեմ, քու աչքերդ էլ կհանեմ»:

Արիութուն ու վճռականություն կա Արազու հերոսների մեջ: Բախտից հալածված այդ մարդիկ հուսաբեկ չեն ողբում իրենց դառն վիճակը, իրենց թախիծով ու վշտով չեն համակում շրջապատը, համբերություն ու հնազանդություն չեն քարոզում: Նրանք ըմբոստ են, մաքառող: Այգեկան Ակուրը («խորհրդավոր աշգին»), որը տարիներ շարունակ տեսել է, թե ինչպես հարուստ ալեխոհերը շահագործում են իր նմաններին, պայքարի ճանապարհը շատ որոշակի է տեսնում: Նա քաջ հավատացած լինելով, որ «էս աշխարհում մի ծուռ բան կա, մինչև չուղղվի, հանգստութուն չի լինի», այդ «ծուռ բանը» ուղղելու միջոցը համարում է ակտիվ զինված պայքարը:

Արազու այս շրջանի ստեղծագործութունների մեջ ուշագրավ է «Կարմիր համբույր»-ը, որը գրված է առաջին իմպերիալիստական պատերազմի ժամանակ, 1915 թ.: Այս արձակ բանաստեղծության մեջ

հուզիչ և ցնցող պատկերներով նկարագրված են պատերազմի ահա-
վոր հետևանքները: Նկարագրելով այդ քուլուրը, Արադին հանդես չի
գալիս որպես ամեն մի պատերազմ դատապարտող գրող, նա դեմ է
իմպերիալիստական պատերազմին, առաջ է քաշում այն ճիշտ դա-
յափարը, որ տարբեր խրամատներում գտնվող աշխատավոր մարդիկ
պատկանում են մուլն դատակարգին և ունեն մի ընդհանուր թշնամի՝
կոալիտալիզմը, որի դեմ պետք է դրոհել: Արադու հերոսը լի է այդ
թշնամու դեմ պայքարելու ցանկությամբ և վստահ է, որ հաղթանակը
իր դասակարգի կողմն է. «Ու կդա այն օրը... հաղթական կամարների
տակով մենք կանցնենք նոր կյանքի շարքերով»:

ԱՐԱԶՈՒ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արադու սովետական շրջանի ստեղծագործությունները բազմա-
շախ են իրենց թեմատիկայով: Սովետական կարգերի հաստատման
առաջին տարիներին Արադին պահպանելով իր հիմնական ժանրը՝
կարճ պատմվածքն ու արձակ բանաստեղծությունը, աստիճանաբար
անցնում է վիպակի, նույնիսկ ծավալուն վեպի:

Արադու ստեղծագործությունը արտացոլում է սովետական իրա-
կանություն բազմազան երևույթները:

Սովետական կարգերի հաստատման առաջին շրջանի համար
բնորոշ են Արադու «Նալիչայի երգը» և «Արծաթի տակ» երկերը,
որոնց մեջ վառ պատկերներով տրված է գործարանային դժոխքում
խամրած, իրենց ֆիզիկական ու հոգեկան արիությունը կորցրած
մարդկանց տառապանքը կապիտալիստական կարգերում:

Ավելի ուշագրավ են վերականգնման շրջանում Արադու գրած
ստեղծագործությունները՝ «Ընկեր Մուկուշը», «Աչքը վախեցած Հանեսը»,
«Հազար ղլխանին» և այլն, որոնց մեջ հեղինակը պատկերել է նախա-
ռեռլոյցիոն շրջանում տառապած, հալածված, հողեպես ընկճված,
իրավադուրկ մարդու աստիճանական վերափոխումը նոր հասարա-
կարդում:

«ԸՆԿԵՐ ՄՈՒԿՈՒՇ» պատմվածքը

Մաքսիմ Գորկու դրական գնահատականին:

Երկար տարիներ տառապած, շահագործված Մուկուշի՝ նոր կար-

«Ընկեր Մուկուշը» կարելի է համարել սովե-
տահայ դրականության ամենաաչառված գոր-
ծերից մեկը: Այդ պատմվածքը արժանացել է

գերում աստիճանաբար վերափոխվելը, դործարանային կոլեկտիվի մեջ վերածնվելը, հեղինակը տվել է ռեալիստական վառ գույններով: Տիպական են հատկապես Մոսկուլի դատողությունները սովետական կարգերի հաստատման առաջին օրերին: Մոսկուլի մոտ նոր կարգերի գաղափարը կապված է միայն տնտեսական պրոբլեմի լուծման, «հացի փայերի ավելացման» հետ: Հետագայում արդեն նա ըմբռնում է նոր հասարակարգը շատ ավելի լայն՝ իրավական, սոցիալական սահմաններում: Նա գիտակցում է, որ հասարակական նոր կարգերը ոչ միայն բերելու են իրենց հետ ապրուստի ավելի լայն միջոցներ, այլ որ այդ կարգերում իր և իր նման տառապած մարդիկ բարձրանալու են կյանքի հատակից: Եվ կյանքի այդ մեծ փոփոխությունը նա փորձում է տեսնել ընկեր բառի մեջ: Նա գիտակցում է, որ նոր հասարակարգը կերտողները, ստեղծագործողները լինելու են ինքը և իր նման բանվորները, դրա համար էլ ուզում է, որ գործարանում իրեն էլ ընկեր ասեն:

Այդ այն շրջանումն է, որ դասակարգային թշնամին դեռ կատարում է իր քայքայիչ աշխատանքը, զրպարտում ազնիվ աշխատողներին: Մոսկուլը զրպարտվում է որպես դող. սպառնում են նրան դատի տալ: Սակայն բանվորական կոլեկտիվը ազատում է նրան զրպարտության ցանցից, գտնում իսկական գողին: Բանվորները Մոսկուլին առնելով իրենց շարքերը, վերափոխում են նրան հողեպես:

Արագու կարևոր գործերից են «Զրվեժի ցուլքում» և «Լուսնի շողերով» վիպակները, որոնք վկայում են հեղինակի ստեղծագործական աճը և լայն կտավ ստեղծելու կարողությունը:

«Զրվեժի ցուլքում» վիպակը

«Զրվեժի ցուլքում» վիպակում արտացոլված է երկրի սոցիալիստական վերակառուցման համար մղվող պայքարը: Հեղինակն այնտեղ արծարծում է մի շատ կարևոր պրոբլեմ՝ սովետական մարդու հողեբանության կազմավորումը՝ կապիտալիզմի մնացուկների վերացումը մարդկանց գիտակցության միջից, նոր՝ կոմունիստական բարձր ու վեհ բարոյականության շաղկապումը ստեղծագործական աշխատանքի հետ:

Այս շատ բարդ խնդիրը լուծված է բուրժուական կենցաղի, սովորությունների, բարոյականության ուժեղ ազդեցությամբ սոցիալիստական կարգերը եկած ինժեներ Թարյանի աստիճանական վերափոխումով:

Վիպակի բովանդակությունը հետևյալն է.

Տեխնիկական հին ինտելիգենցիայի ներկայացուցիչ ինժեներ Թարյանի նախագծով կառուցվում է Գետաշենի կոմբինատը: Ամբողջովին իր կարիերայով ու անձնական հաշիվներով տարված Թարյանը անուշադրության է մատնում իրեն վստահված պատասխանատու գործը: Արդյունքը լինում է այն, որ կոմբինատը կանգնում է լուրջ ճեղքվածքի առաջ:

Բանվորական ամբողջ կոլեկտիվը, ինժեներա-տեխնիկական անձնակազմը քննադատում են Թարյանին, հրապարակի վրա են դնում նրա սխալները և այդ սխալների աղետալի հետևանքները, ցույց են տալիս փակուղուց դուրս գալու ճանապարհը: Աշխատանքը գնում է երկու ուղղությամբ, մի կողմից կոմբինատում նկատվող թերությունների վերացման, աշխատանքների բարելավման, սոցմրցման ու հարվածայնության ծավալման ուղղությամբ, մյուս կողմից իրեն՝ ինժեներ Թարյանին վերափոխելու ուղղությամբ: Կոլեկտիվի այդ լարված միասնամուտ աշխատանքը, որը գլխավորում է Մոսկվայից գործուղված Ժուռնալիստ Լիդան, պսակվում է հաջողությամբ: Կոմբինատը կատարում է իր առաջադրանքը: Զուգահեռ վերափոխվում է ինժեներ Թարյանը:

Վիպակի հաջողված կերպարներից է ինժեներ Թարյանը: Հեղինակը կարողացել է ցույց տալ նրա աստիճանական վերափոխման բարդ պրոցեսը: Վիպակի սկզբում նա մեզ ներկայանում է կոլեկտիվից կտրված, քանվորների վրա մի տեսակ արհամարհանքով նայող, սովորական մի քաղթենի, փառասեր, հարստանալու, ավելի փարթամ ապրելու տենչով տարված մի էգոիստ: Իր մասնագիտական հմտության շնորհիվ ձեռք բերված հաջողությունները, նվաճումները ոչ թե զարգացնում են նրա մեջ սոցիալիստական հասարակությանը օգտակար դառնալու զգացումը, այլ անձնական, ավելի փարթամ կյանքի հեռանկարը, «նախ և առաջ նյութականը» — այս է նրա սկզբունքը:

Կոլեկտիվից կտրված, նոր ու փարթամ ուժերի, այդ թվում տաղանդավոր ինժեներների, փորձառու վարպետների կարծիքը արհամարհող Թարյանը մոլորված է իր եսի ղրորտներում, ինքնահոսի է թողնլ շինարարության աշխատանքը: Նա չունի աշխատանքային կոնկրետ պլան, դանդաղաշարժ է, չի կարողանում ժամանակի հետ ընթանալ, չի մոտահոգված քանվորների կուլտուր-կենցաղային կարիքներով:

Թարգանի գիտակցութեան միջից բուրժուական մտածողութեան հետքերի վերացումը կատարվում է դժվար, ծանր աշխատանքով:

Նորի ընկալումը, սոցիալիստական գիտակցութեան արմատավորումը նրա միջից սրբում տանում է սեփականատիրական դատակարարի իդեոլոգիայի մնացուկ հանդիսացող դժերը՝ ռիսակալութունը, նախանձը, ատելութունը: Նա կարողանում է երևույթները գնահատել օբյեկտիվորեն, չափանիշ ունենալով արդեն հասարակական շահը, պետական մտեցումը:

Պատմվածքի մյուս ուշագրավ դեմքը Լիդան է: Մոսկվայից եկած աչդ կենսուրախ, իր ամբողջ էությունը սոցիալիզմի գործին նվիրված սուղիկը տողորված է նորի զգացումով, ողևորող է ու ողևարվող: Նրա համար անըմբռնելի են նեղ ու ճշմարիտ հաշիվները, կենցաղային խժրածանքներն ու անձնական շահի հետապնդումը: Նա անձնական երջանկությունը բացառապես տեսնում է հասարակականի, ընդհանուրի մեջ, սոցիալիստական աշխատանքի վերելքի մեջ: Լիդայի բնորոշ դրժերն են՝ անձնագոհ նվիրվածությունը Սովետական Հայրենիքին, սոցիալիստական աշխատանքին, անձնական շահի ստորադասումը հասարակականին, պարզությունն ու քնականությունը մարդկանց հետ իր ունեցած փոխհարաբերության մեջ: Նա իր գեղեցկության թուլանքով չէ, որ վերափոխում է Թարգանին, այլ իր գործնական աշխատանքով: Լիդան էնտուզիաստ է, աշխատանքային մարտիկ, կազմակերպող, նախաձեռնող, ողևորող և խանդավառող: Բանվորների շարքում քլունքը ձեռքին աշխատում է որպես բանվոր, տեխնիկական անձնակազմի հետ զրուցում է որպես բանիմաց ու հասկացող քաղաքացի ու իր ամբողջ խանդավառությունը վարակում շրջապատը: Նա ձեռնամուկ է լինում ինժեներ Թարգանին հեղաշրջելու բարդ ու դժվարին գործին և հասնում է հաջողության, կարողանում է նրան դարձնել սոցիալիստական գիտակցության եկած սովետական մասնադետ: Վիպակում, բացի Թարգանից, Լիդայից, հանդես են գալիս ինժեներներ Սարգանը, Վարդանյանը, պարտկուծի քարտուղար Շավարշը, Թարգանի կինը՝ Սոֆիան, Սարգանի ընկերուհի Աշխենը և շատ ուրիշները:

Հեղինակը, դժբախտաբար, իր ամբողջ ուշադրությունը բեռնելով ինժեներ Թարգանի և Լիդայի վրա, հնարավորություն չի ունեցել ամբողջացնելու, տիպականացնելու մյուս հերոսներին, որոնք դժագրքոված են աղոտ, ընդհանուր դժերով, չեն մնում ընթերցողի հիշողության

մեջ: Ընթերցողը նրանց մասին ավելի շատ լսում է հեղինակի դատողությունները, քան այդ մարդկանց տեսնում է կոնկրետ գործի մեջ: Այդպիսին է ինժեներ Սարյանը, որը հակադրված է Թարջանին՝ որպես անձնազուհ, եռանդուն, շնորհալի նոր մասնագետ: Լիդայի հոգևածններում նա բնութագրվում է որպես «բրոնզե ինժեներ», սակայն այնպես էլ վիպական չի երևում, թե ինչով է նա արժանացել այդ բրոնզե մանր: Նա սովորի նման գալիս ու անցնում է՝ մերթ շինարարական օբյեկտը դիտելիս, մերթ իր հին բնկերուհու ջերմ վերաբերմունքին տնիմաստ անտարբերությամբ պատասխանելիս, մերթ Լիդայով հիանալիս և մերթ էլ արտադրական խորհրդակցությունում խոսելիս:

Թույլ է գծադրված նաև պարտիտական կազմակերպություն քարտուղար Շավարշը, որին նույնպես չենք տեսնում կոնկրետ աշխատանքում:

Վիպակի սկզբում Թարջանը հանդես է գալիս որպես երեսաների տեր մի հայր, նա վազմել է իր ընտանիքը, սիրում է երեխաներին և հանկարծ թողնում է նրանց՝ առանց հոգեկան որևէ ապրումի, դժվարությամբ: Վիպակում թույլ է գծված Թարջանի կնոջ կերպարը:

«Լուսնի շողերով» պատմվածքում հեղինակը պատկերել է կոլտնտեսային շինարարությունը, գյուղատնտեսության մեքենայացումը, կուլակության լիվիդացումը, այլ խոսքով՝ այն հիմնական խնդիրները, որոնց լուծումով պայմանավորված էր սոցիալիստական սեկտորի հաղթանակը գյուղում:

Պատմվածքում հանդես են գալիս սովետական նվիրված հայրենասեր երիտասարդ գիտնականները, պրակտիկանտներ Գուրգենն ու Հասմիկը, որոնց օժանդակում է հին ռեվյուցիոներ Միքայելը:

Սովխոզի դիրեկտոր Միքայելը կոփվել է բանվորական շարժումների մեջ, պաշարել է սովետական կարգերի հաստատման համար:

Վիպակում կենդանի է նկարագրված հատկապես կոլեկտիվացմանը նվիրված ժողովը: Հանդես են գալիս կուլակների դրդումով ժողովին մասնակցող մարդիկ՝ իրենց էգոիստական, սեփականատիրական պահանջներով, որոնց հիմքում ընկած է ատելությունը Սովետական իշխանության նկատմամբ: Հանդես են գալիս գյուղական չքավորները, այն մարդիկ, որոնք պաշտպանն են նոր հասարակարգի:

Արադին «Լուսնի շողերով» վիպակում ներկայի հիման վրա փորձել է պատկերել ապագան: Սակայն պետք է նշել, որ նրան չի հաջող-

վել ճիշտ պատկերացում տալ ասպագայի մասին: Նրա պատկերած հասարակարգում բացակայում է հիմնականը՝ մարդը իր ստեղծագործական աշխատանքով:

«Այրվող հորիզոն» վեպը Արադու ամենածավալուն դործն է: Վեպի մեջ արտացոլվում են 1890-ական թվականներին Պետերբուրգում ծավալված ուսանողական ռևոլյուցիոն շարժումները և այդ շարժումներին հայ ուսանողության մասնակցությունը:

Որպես ժամանակակից ու մասնակից այդ շարժումներին, հեղինակը ջերմ ու կենդանի պատկերներով նկարագրել է ուսանողական կյանքը Պետերբուրգում:

Համալսարանի պատերից ներս և դրսում, ամենուրեք, շրջում է սև կառեփի ուրվականը, վխտում են լրտեսները: Քաղաքական այս ծանր, խստագույն ու հեղձուցիչ մթնոլորտը ջլատում է մարդկանց ուժն ու եռանդը:

Նույն Պետերբուրգում առկա է, սակայն, մի այլ աշխարհ, բանվորական և ուսանողական պայքարի աշխարհը, ազատության ձգտող, Եզատության համար մաքառող մարդկանց աշխարհը, որը, շնայած դժվարին պայմաններին, ներքին դավաճանների առկայությանը, օրեցօր ընդարձակվում է, իր ոլորտի մեջ առնում նորանոր մարդիկ, անձնուրաց երիտասարդներ և դառնում մի երկաթյա բռնեցք՝ ուղղված բռնապետության դեմ:

Հակառակ ցարական պաշտոնական օրենքի սահմանած խստություններին, այդ աշխարհում տիրում է ազատասիրությունը. ջերմ ընկերասիրությունը, անձնագոհությունը: Այնտեղ բոլոր ժողովուրդներին պատկանող ուսանողները եղբայրացել են, հանդես են գալիս նույն սկզբնաբան պաշտպանությամբ, պայքարում են նույն ընդհանուր թշնամու դեմ:

Այս վեհ ու սրբազան պայքարի ֆոնի վրա է, որ Արադին կերտել է իր ռևոլյուցիոն հերոսների կերպարները: Ռուս ռևոլյուցիոն ուսանողներ Վերան, Պետրովը, ռևոլյուցիոն բանվորներ Սոկոլովը, Շիրովը, հայ ուսանողներ Գարունյանը, Լևոնյանը, Ալմազովը և ուրիշները գծված են կենդանի գույներով: Նրանք՝ ընդհանուր գործի մեջ հանդես բերելով իրենց անձնուրաց մասնակցությունը, մնալով հանդերձ ռևոլյուցիային զինվորագրված մարտիկներ, ունեն իրենց անհատական որոշակի հակումներն ու բնավորության շեշտված գծերը:

Վեպում մի շարք հատվածներ — ուսանողական ցույցի, Վերայի հետ սահնակով դեպի կղզին գիշերային ճանապարհորդության, Վերայի հրաժեշտի րոպեների, Լևոնյանի ձերբակալության նկարագրությունները և այլն, գրված են ջերմ շնչով և խորապես տպավորիչ են:

Հատկապես հուզիչ է վեպի վերջում նկարագրված տեսարանը: Դեպի Սիրիր արքայոված ուսանողները և բանվորները վազոնի պատուհաններից տեսնում են բոցավառվող, այրվող հորիզոնը, իմանում են, որ ապստամբ գյուղացիները այրում են կալվածատերերի ունեցվածքը: Ուսանողներից մեկն ասում է.

— Կալվածատիրոջ գլխակը այրվում է:

Մյուսը պատասխանում է.

— Ոչ, այրվում է հին Ռուսաստանը:

Հայրենական պատերազմի տարիներին Արագու գրած պատմվածքների ու ակնարկների մեջ ուշադրության է արժանի «Հայրենի հողը»:

Պատերազմն սկսվելուց ընդամենը մեկ շաբաթ հետո գրված այդ պատմվածքում Արագին հայրենիքի նկատմամբ անսահման սերը մարմնավորել է մի պտղունց հայրենի հողի մեջ, որը իր հետ ռազմաճակատ է տարել մարտիկը և երգվել է արյան գնով պաշտպանել այն:

Արագու համար Հայրենիքը սահմանափակ աշխարհագրական հասկացողություն չէ, նրա հերոսը այդ մի պտղունց հողի մեջ չի տեսնում միայն իր ծննդավայրը՝ գյուղը կամ առհասարակ Սովետական Հայաստանի տերիտորիան, այլ անժայռածիր ողջ սովետական երկիրը, որի ամեն մի կտոր հողը պաշտպանելու է դուրս հիկել հայ մարտիկը:

«Գնացինք, նանի,— գրում է նա իր մորը,— տեսանք շատ ժողովուրդներ... դրանք մեր մեծ Միության ժողովուրդներն են, որ ապրում են եղբայրական սիրով: Այս Միության մեջ ենք և մենք, սա այն երկիրն է, որտեղ առաջին անգամ բացվել է մարդկային երջանկության՝ կոմունիզմի լույսը... Ճանաչե՛ք, նանի, հայրենիքի հողը... և քո տված մի պտղունց հողն էլ այս մեծ երկրից է...»:

Այդ նույն հայրենասիրական գաղափարներն են ոգևորում ու աշխատանքային սխրագործության մղում գյուղում Աշխենին, քաղաքում Վերդինին (համանուն պատմվածքներում), որոնք, փոխարինելով

ռազմաճակատ մեկնած իրենց ամուսիններին, թիկոճքում կատարած իրենց անձնագրո՞ւ աշխատանքով օգնում են ռազմաճակատում ֆաշիզմի դեմ կռվող ամուսիններին:

Արագու «Խնճուկքը», «Հրամանը», «Ալեքը» և «Ատելութուն» պատմվածքները պատկերում են գերմանական ֆաշիզմի դեմ մղվող պայքարում պարտիզանական ջոկատների կատարած հայրենասիրական սխրագործությունները:

Արագին 1950 թ. լույս ընծայեց «Հաղթական ծիւեր» վեպը: Այդ գործը՝ սովետահայ գրականության մեջ առաջինը շոշափել է շատ կարևոր մի հարց՝ պայքարը հանուն միջուրինյան ագրոբիոլոգիայի հաղթանակի:

Հայրենական Մեծ պատերազմի օրերին թիկոնքային քաղաքի տենդոտ ու լարված աշխատանքը վեպում պատկերված է հարազատությամբ: Թիկոնքայինների աշխատանքային սխրագործությունները, ռազմաճակատին նրանց ցույց տված ամենօրյա օժանդակությունը, ռազմաճակատի շարքերը համալրելու համար պարբերաբար ֆերոնտ մեկնող երիտասարդության անախսքնեղ խանդավառությունը, — այս բոլորը տրված են ռեալիստական վրձինով, վարակող հայրենասիրական զգացումով:

Թիկոնքայինների այդ անձնվեր աշխատանքի ֆոնի վրա են գրծված վեպի մի քանի հերոսները, մասնավորապես պրոֆեսոր Մադաթյանի ընտանիքի անդամները՝ ինքը Մադաթյանը, կինը՝ Սիրանուշը, աղջիկը՝ Անահիտը:

Սակայն, «Հաղթական ծիւեր» վեպը ունի թերություններ: Ամենից առաջ՝ վեպի պոռնոցքը կազմող հարցը՝ պայքարը հանուն միջուրինյան բիոլոգիայի հաղթանակի, չի բացահայտված հերոսների կոնկրետ գործերով:

Վեպի թերություններից պետք է համարել մի քանի հերոսների թույլ դժագրումը, նրանց արարքների անհամոզիչ մնալը: Այդպիսիք են Մադաթյանի հարսի՝ Էմմայի, ճրա մոր՝ Սուսանայի և Վարդգեսի կերպարները:

Արագու լեզուն պարզ է, սահման: Նրա պատկերները կոնկրետ են, անմիջական, հեշտ ըմբռնելի: Սիմվոլիկ վերնադրերի տակ («Լուսնի շողերով», «Ջրվեժի ցոլքում», «Այրվող հորիզոնը» և այլն) նա նկարագրում է խորապես իրական կյանքը՝ ռեալիստական արտահայտչական միջոցներով:

Մովսէս Արապիւն սովետահայ արձակի ակամաւոր ներկայացուցիչներից է: Նրա նախասովետական տարիների ստեղծագործությունները, Մ. Պետրոսյանի և ուրիշների երկերի հետ միասին, կազմում են հայ պրոլետարական արձակի առաջին հոծածը:

Արազու աչգ ժամանակաշրջանի պատմվածքներում և արձակ բանաստեղծություններում արտացոլվել է աշխատավոր մարդու ծանր վիճակը, զրկանքներով լի կյանքը կապիտալիստական պայմաններում և նրա բողոքը աչգ անիրավացի կարգերի դեմ:

Արազին իր ստեղծագործական կարողությունները լիովին դրսևւորելով Սովետական իշխանության տարիներին, հանդես եկավ որպէս սովետական ժողովուրդների երջանիկ այսօրվա ու է՛լ ավելի պայծառ վաղվա համար մղվող պայքարն արտացոլողներից մեկը:

Արազու մի շարք պատմվածքներ ու վիպակներ սովետահայ արձակ գրականության լավագույն նմուշներից են և ունեն մնայուն արժեք:



ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

(1897—1937)

Եղիշե Չարենցը սովետական ժամանակաշրջանի նշանավոր բանաստեղծներից մեկն է։ Գրական գործունեությունն սկսելով նախառևոյություն շրջանում, Ե. Չարենցը ստեղծագործական մեծ վերելք է ապրում քսանական թվականներին։ Այդ և հետագա տարիներին ըստեղծած իր մի շարք բարձրարժեք գեղարվեստական երկերով նա հարըստացրել է սովետահայ գրականությունը՝ դառնալով նրա առաջատար գեմքերից մեկը։ Ե. Չարենցի լավագույն ստեղծագործությունները տոգորված են ռևոլյուցիոն պաթոսով, ջերմ ու անկաշառ հավատով դեպի կոմունիզմի հաղթանակը։

Կյանքը

Եղիշե Չարենցը (Եղիշե Սողոմոնյան) ծնվել է 1897 թվականին, Ղարս քաղաքում։ Այստեղ էլ նա ստանում է իր նախնական և միջնակարգ կրթությունը։

1914 թ. իմպերիալիստական պատերազմի տարիներին պատանի պոետը, տարերայնորեն ենթարկվելով պատերազմի հետևանքով բորբոքված նացիոնալիստական տրամադրություններին, մեկնում է ճակատ։

Տեսնելով պատերազմի արհավիրքները, պոետը հիասթափվում է

պատերազմից և մի շարք ստեղծագործություններում՝ «Դանթեական սոնետներ», «Ազգային երազ» և այլն, արտահայտում իր հիասթափությունը, միաժամանակ ծաղրի ենթարկում դաշնակցական ազգային իդեոլոգիան և կամավորական շարժումը:

1915 թ. վերջերին պոետը պատերազմի դաշտից ընկնում է Մոսկվա: Ռուսական առաջավոր կուլտուրայի այդ օրրանն իր վիթխարի դեպքերով ցնցում է պոետին: Նա ականատես է լինում փետրվարյան, ապա Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեվոլյուցիային: Ռեվոլյուցիան խորը ազդեցություն է թողնում քաղքենիական շրջապատից դժգոհ, որոնող պոետի հոգեբանության վրա: Նրա անհատապաշտական պատրանքները հետզհետե տեղի են տալիս նոր, ռեվոլյուցիոն զգացմունքներին:

1918—19 թթ. Չարենցին մենք տեսնում ենք արդեն Կարմիր Բանակի շարքերում:

Ակտիվ մասնակցությունը քաղաքացիական կռիվներին վճռական նշանակություն է ունենում Չարենցի թե՛ աշխարհայացքի, թե՛ ստեղծագործության հետագա զարգացման գործում: Պոետը կանգնում է Հոկտեմբերյան սոցիալիստական ռեվոլյուցիայի դիրքերի վրա և դառնում նրա երգիչը: Նա սկսում է հասկանալ, որ իր ժողովրդի փրկության միակ ուղին սոցիալիստական ռեվոլյուցիայի ուղին է:

1919 թ. վերջերին Չարենցը գալիս է Հայաստան, ուր տիրապեսում էին դաշնակցական ոհմակները: Չարենցը չերմ համակրանքով է վերաբերվում Մայիսյան ապստամբությանը, բանվորական ցույցերին, 1920 թ. չերմորեն ողջոճում է սովետական կարգերի հաստատումը Հայաստանում և մտնում Կոմունիստական պարտիայի շարքերը:

Հակառեվոլյուցիոն դաշնակցությունը 1921 թ. կազմակերպում է փետրվարյան տխրահռչակ ավանտյուրան: Չարենցը որպես մարտիկ կռվում է թշնամու դեմ Ղամարլուի ֆրոնտում և Կարմիր զորքերի հետ մտնում է Սրեան:

1922 թ. պոետը մեկնում է Մոսկվա՝ սովորելու, ապա վերադառնում է Սովետական Հայաստան ու ակտիվ կերպով մասնակցում երկրի կուլտուրական շինարարության գործին:

1924 թ. Սովետական Հայաստանի կառավարության որոշումով Չարենցը գործուղվում է արտասահման, լինում է Տաճկաստանում, Ֆրանսիայում, Իտալիայում, Գերմանիայում և այդ երկրներից ստացած տպավորությունների հիման վրա գրում է մի շարք պոեմներ ու

բանաստեղծություններ, ինչպես «Էենինն ու Ալին», «Ստամբուլ», «Մյուր-դե-Ֆեդերե», «Էլեգիա՝ դրված Վենետիկում» և այլն:

Վերագառնալով արտասահմանից, Չարենցը շարունակում է մասնակցել Հայաստանում ծավալված կուլտուրական շինարարությանը, նրա ակտիվ մասնակցությանը հրատարակվում են հայ, ռուս և եվրոպական խոշորագույն կլասիկների և ժամանակակից մի շարք գրողների ստեղծագործությունները: 1934 թ. Հայաստանի սովետական գրողների պատգամավորության կազմում նա մասնակցում է Սովետական գրողների համամիութենական առաջին համագումարին, նվեր տանելով Գորկու արձակ բանաստեղծությունների հայերեն ժողովածուն, որ մեծ վարպետությամբ թարգմանիչ էր ինքը:

Այս շրջանում Չարենցը հրատարակում է իր երկու նշանավոր ժողովածուները՝ «Էպիքական լուսաբաց» և «Նրիկեր» դեպքվում է Գյոթեի «Ճառաստ»-ի թարգմանությամբ և այլ աշխատանքներով:

Պետեր վախճանվում է 1937 թվականի նոյեմբերին:

Չարենցի ստեղծագործությունը հիմնականում կարեղի է բաժանել երկու շրջանի՝ նախաեռյուցիոն և ռեպլյուցիոն: Վերջին շրջանն իր հերթին բաղկացած է երկու էտապից, առաջին՝ անմիջական ռեպլյուցիոն մարտերի և քաղաքացիական կռիվների, երկրորդ՝ սոցիալիստական շինարարության շրջան:

**Չարենցի նախա-
ռեպլյուցիոն շրջանի
ստեղծագործու-
թյունները**

Եղիշե Չարենցը որպես պոետ հրապարակ է իշել 20-րդ դարի առաջին քառուղին: Նրա բանաստեղծությունները տպագրվել են 1912 թ. սկսած: Չարենցը որպես պոետ ձևավորվեց այն ժամանակ, երբ համաշխարհային մասշտաբով տեղի էին ունենում վիթխարի դեպքեր, որոնք իրենց արտահայտությունն էին գտնում նաև հայ իրականության մեջ:

Իմպերիալիստական պատերազմից ստացած իր անմիջական տրդավորությունները Չարենցը մարմնավորել է 1915—16 թթ. դրած իր առաջին պոեմներից մեկում, որ կոչվում է «Դանթեական առասպել»:

Նկարագրելով պատերազմի սարսափները, պոետը հարցնում է.

Ինչո՞ւ է երազն այս աշխարհավեր
Կախվել մեր գլխին այսպես կոտորեն,
Ինչո՞ւ են փռվում այսքան ցավ, ավեր,
Հողմերը այս շար կ'որ պիտի լռեն:
Եվ ո՞վ է լարում այսպիսի դավեր—
Կյանքը դարձնում նզովյալ գեհն:

Ի՞նչ առաջադրած հարցի պատասխանը պոետը չի կարողանում տալ, ֆերտն խանգարում է ֆանր բուրժուական դադարախախտությունը: Սակայն «Դանթեական առասպել»-ում արդեն Չարենցը հանդես է գալիս իրեն հատուկ թափով, ինքնուրույն և թարմ պատկերներով:

Ստեղծագործության առաջին իսկ շրջանից Չարենցն իրեն դրսև-վորում է որպես հարուստ անհատականությամբ օժտված բանաստեղծ: Էպիկական ստեղծագործություններից բացի, գրում է նաև լիրիկա-կան պոեմներ ու բանաստեղծություններ, որոնք կրում են Տերյանի պոեզիայի ազդեցությունը: Այդ ստեղծագործությունների թվին են պատկանում «Հարգապալի ճամփորդներ», «Երեք երգ տխրադալուկ աղջկան», «Երեք», «Ծիածան» և այլն, որոնց մեջ դրսևորվում են պոետի նախառեղյուցիոն շրջանի անհատապաշտական տրամադրու-թյուններն ու անորոշ որոնումները:

Սակայն, Տերյանի նման, Չարենցը ևս իր ստեղծագործություն-ներում կրելով առողջ տենդենցներ, երազում էր «արևի ոսկին», տեն-չում նրա «հրաշքը խնդոն»: Այդ իսկ պատճառով մեր իրականության մեջ դարդասցող ու հզորացող պրոգրեսիվ ուժերի բարերար ազդեցու-թյամբ աստիճանաբար հաղթահարում է սիմվոլիզմի ազդեցությունը:

Հոկտեմբերյան սոցիալիստական ռեվոլյուցիան
Չարենցի ռեվոլյուցիոն նոր էտապ բաց արեց մարդկության պատմու-
շրջանի ստեղծագործ թյուն, փոխպես և ժողովուրդների դրականու-
ծությունները թյուն պատմության մեջ: Եղիշե Չարենցը, այդ
«անհանդիստ» ու որոնող պոետը, որ դեռևս «Դանթեական առաս-
պել»-ում հուստիաբվել էր իմպերիալիստական պատերազմից և ելք
էր որոնում, իր հայացքն ուղղում է դեպի պրոլետարական ռեվոլյու-
ցիան: Նա ընկնում է այդ ռեվոլյուցիայի հորձանքի մեջ և դառնում ռե-
վոլյուցիոն իրադարձությունների հրդիչը:

Ու հոգիս հրդեհին տվի,
Որ լափվի բոցերում դեղին —

գրում է բանաստեղծը:

Չարենցի անցումը ստեղծագործության առաջին շրջանից դեպի երկրորդը կատարվում է ներքին հակասություններով, վայրէջքներով ու վերելքներով:

Չարենցի ստեղծագործության մեջ դեպի ռեվոլյուցիոն թեմատի-կան ու տրամադրություններն անցնելու կարևոր օղակներից մեկը 1918 թվականին գրած «Սոմա» լիրիկական պոեմն է:

Պոեմը գրված է քաղաքացիական կռիվների անմիջական ազդեցության տակ և ռոմանտիկական բնույթ ունի։ Այդօրինակ ռոմանտիզմը բնորոշ էր ոչ միայն Չարենցի, այլև այդ շրջանի բազմաթիվ պոետների ստեղծագործության համար։ Պոեմում ռեուլյուցիան իր բանաստեղծական մարմնավորումն է ստացել աղատության դիցունհի Սոմայի կերպարում, որին մեծ ոգևորությամբ գովերգում է պոետը։

«Սոմա»-ում ռեուլյուցիան դեռևս պատկերված է որոշ վերացականությամբ, տարերայնորեն, դեռևս պոետն այդ էտապում չի տեսնում նրա ստեղծարար ուժը, սակայն ռեուլյուցիան պաթոսը տրված է մեծ թափով ու անկեղծությամբ։

«Սոմա»-ում արդեն իսկ հանդես են գալիս Չարենցի հաջորդ՝ «Ամբոխները խելագարված» պոեմի տարրերը։ Այս պոեմը գեղարվեստական տեսակետից մի քայլ առաջ էր պոետի ստեղծագործության մեջ։

«Ամբոխները խելագարված»

«Ամբոխները խելագարված» պոեմը նույնպես գրված է 1918 թ., երբ պոետը դառնում էր Կարմիր Բանակի շարքերում։ Եթե «Սոմա»-ն

գերազանցապես լիրիկական պոեմ է, ապա այստեղ տիրապետում է էպիկական տարրը։ Պոեմում Չարենցն արտահայտում է միլիոնավոր աշխատավորների ատելությունը դեպի հին աշխարհը։

Այն հարցին, թե ովքեր են խելագարված ամբոխները, պոետը տալիս է հետևյալ բացատրությունը.

Քաղաքներից ու գյուղերից, ստեպներից հեռու ու մոտ
Եկել էին նրանք նորից՝ հուսովառված ու կրակոտ.

Ով քաղաքից էր հեռացել— նա թողել էր մշուշը ծեր,—

Մշուշը, որ կյանքի վրա միաշաղախ ամպ էր դարձել,

Ով եկել էր գյուղից հեռու— նա թողել էր հողը խոնավ,

Որի վրա կյանքը հլու ոչ մի ոսկի հասկ չծնավ։

Չարենցի կողմից ամբոխները փոխաբերական իմաստով են անվանված՝ «խելագարված» — շեշտելու համար ժողովրդի ատելությունը դեպի հին աշխարհը։

Պոեմում դեռևս պարզորոշ կերպով չեն պատկերվում ռեուլյուցիայի շարժիչ ուժերը, սակայն պոեմը թե՛ իր իդեալական, և թե՛ գեղարվեստական արժանիքներով նոր խոսք էր ոչ միայն Չարենցի, այլև մեր ամբողջ պոեզիայի մեջ։

Պոեմը սկսվում է լիրիկական սեղմ, բայց զգացմունքների տե-

ասկետից հորդառատ մի նախերգանքով, որով պոետը «կյանքի, մահի այս ամենի աղջամուղջում, ողջակիզվող հոգիներին» իր ռեուլուցիոն ողջույնն է հղում: Այդ ողջույնից հետո նա էպիկական շնչով նրկարագրում է քաղաքացիական կռիւի էպիզոդներէից մեկը, այն ճակատամարտը, որ Կարմիր զորքերը մղում էին կայարանը և հնամյա քաղաքը թշնամու ձեռքից խլելու համար: Պոետում ծավալվող դեպքերի նկարագրության ընթացքում պոետը հանդես է գալիս ոչ թե որպէս կողմնակի դիտող, այլ մղվող ճակատամարտի ակտիվ մասնակից:

Ճակատամարտը ծավալվում է անծայր, անսահման, լայնատարած դաշտերում այն պահին, երբ «տրեւ բոքը մայր էր մոռնում արեւմուտքում»: Պոետը քնանկարը կարողացել է վարպետորեն ձուլել ճակատամարտի նկարագրության հետ, հմտորեն օդտագործել այն՝ ռեվոլյուցիայի ուժն ու նշանակութունը բացահայտելու համար:

Չարենցի այս շրջանի ստեղծագործության՝ այդ թվում և «Ամբոխները խելագարված» պոեմի մասին խոսելիս, պետք է նշել, որ հատկանշականը նրա երկերում ռեուլուցիոն պաթոսն է՝ միաձուլված ժողովրդական էպոսի պարզության հետ:

«Ամբոխները խելագարված» պոեմի գլխավոր հերոսը ժողովուրդն է: Չարենցի պոեմում «Ամբոխները», կարծես թե դուցազնական մի-մի Իլյա Մուրոմեց են, որոնք ռուսական լայնածավալ ստեպներից գոտեմարտի են ելել հին աշխարհի դեմ:

Եթե «Սոմա»-ում ստեղծած պատկերները վերացական էին, ապա «Ամբոխները խելագարված» պոեմում նա արդեն կոնկրետից գնում է դեպի ընդհանուրը:

Քաղաքացիական կռիւներից առնված մի էպիզոդի սեղմ նկարագրության հիման վրա Չարենցը կատարում է բանաստեղծական խոշոր ընդհանրացումներ: Ռեուլուցիոն ժողովրդի անսահման ուժը պոետը արտահայտել է հետևյալ տողերում.

Ու աշերտում նրանց կապույտ, ուր իջել է դիշերը մուժ —
Հազար բողբոջ կա կրակոտ, ու արշալույս, ու առավոտ,
Նրանց ձգված մկաններում ուժն է նստել խոնավ հողի

Եթե ուզեն արեններին նոր տնայ կտան ու նոր ուղի.
Եթե ուզեն՝ արեգակներ կշարտեն կրկինքն ի վեր,
Եթե ուզեն վար կրեքեն կրկինքներից արեգակներ...
Եթե ուզեն կամբով արի ու աշխարհի հրով վառված —
Ինչե՞ր միայն չեն կատարի ամբոխները խելագարված:

Բանաստեղծական երկրորդ խոշոր ընդհանրացումը, որ սիմվոլի նշանակություն է ստանում և բխում է պոեմի իդեալիստիկ փառալուստական էությունից, մարմնավորված է արևի պատկերում: Մայրա-
ֆոնին՝ «արյունաքամ մայր է մտնում հազարամյա արևը հին» — դա հանդիսանում է հին, մեռնող աշխարհի սիմվոլը: Պոեմը վերջանում է լուսաբացի նկարագրությամբ: «Կարմրածուխ», «հրաշուշան» հորի-
զոնում, Արևելքում բռնկվում է «նոր լույսով վառված» արևը — դա պայքարում ծնված նոր աշխարհի սիմվոլն է, և պատահական չէ, որ բանաստեղծը պոեմն ավարտում է հետևյալ տողերով.

Հոծ խմբերով հազարանուն, արեգակի հրով վառված՝
Դեպի արևն էին դնում ամբոխները խելագարված:

«Ամբոխները խելագարված» պոեմից հետո Չարենցը հանդես է գալիս «մադիոպոեմներ» («նաիրի երկրից», «Դեպի ապագան», «Բրոն-
զե թևերը կարմիր գալիքի») ստեղծագործություններով: Դրանք մեծ թափով ու բարձր արվեստով գրված լիրիկական պոեմներ են, որոնց մեջ բանաստեղծը արտահայտում է իր ռևոլյուցիոն խոհերն ու զգաց-
մունքները: Հիշյալ պոեմներում դրսևորվել է Չարենցի անսահման հա-
վատը ռևոլյուցիայի հաղթանակի նկատմամբ:

«Երգ ժողովրդի մասին»

Չարենցի ստեղծագործության մեջ հետզհետե տիրապետող է դառնում սոցիալիստական
ռեալիզմը, որ պայմանավորված է իրականու-
թյան խորը ճանաչողությամբ և պոետի դադափարական հասունու-
թյամբ:

Ռեալիստական այդ տենդենցների զարգացման տեսակետից բը-
նորոշ է 1920 թ. գրված «Երգ ժողովրդի մասին» էպիկական պոեմը:

Այդ ստեղծագործության մեջ Չարենցը պատկերում է ռուս հե-
րոսական ժողովրդի կյանքը նրա պատմական անցյալից մինչև Հոկ-
տեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիան ներառյալ: Այստեղ ևս
ժողովուրդը հանդես է գալիս որպես հավաքական կերպար: Պոետը,
ռեալիստական գույներով նկարագրելով ժողովրդի ճնշված դրությունը
անցյալում, նրան չի պատկերում որպես պասսիվ ուժ, այլ տալիս է
ռուս ժողովրդի ակտիվ ու հերոսական պայքարը իր սոցիալական
ազատագրության համար: Ժողովուրդը հանդես է գալիս որպես պատ-
մության կերտող: Պոեմում լայն կերպով դեղարվեստական արտացո-

լում են ստացել ուս գյուղացիության հերոսական ընդվզումները ճորտատիրական կարգերի դեմ:

Գյուղացիական ռեուլյուցիոն աչդ. «ալեծով» շարժումների ֆոնի վրա նա կերտել է Ստեփան Ռազինի, Պոպաշևի կերպարները, պատկերել նրանց տրագիկական վախճանը: Պոետը ճիշտ է ըմբռնել գյուղացիական շարժումների պարտության պատճառները:

Կասիտալիզմի վարդապետը Ռուսաստանում, բանվոր դասակարգի ռեուլյուցիոն պիտակցության վարդապետն պրոցեսը, 1905 թ. ռեուլյուցիան, նրա պարտության պատճառները, իմպերիալիստական պատերազմը, Հոկտեմբերյան սոցիալիստական ռեուլյուցիան Չարենցը վերարտադրել է ռեալիստորեն և գեղարվեստական խտացած գույներով: Անցումները պատմական յուրաքանչյուր խոշոր իրադարձությունից մյուսին պոեմում կատարվում են անբռնազրոսիկ և ինքնաբերական կերպով:

Այստեղ Չարենցը «Ամբոխները խելագարված» պոեմի համեմատությամբ, ղգալի չափով ազատագրվում է ռեուլյուցիայի տարերային ըմբռնումից, ավելի հստակ ու ճիշտ է պատկերում սոցիալիստական ռեուլյուցիայի շարժիչ ուժերը, բանվոր դասակարգի հեղեմոն դերը, նրա դաշինքը աշխատավոր գյուղացիության հետ:

«Երգ ժողովրդի մասին» պոեմը աչքի է ընկնում հանդարտ էպիկականությամբ. թման մարմնավորելու համար Չարենցը հատկապես օգտագործել է ռուսական բլիկնանների ձևը, որը նրան հնարավորություն է տվել խտացնելու պատմական դեպքերի նկարագրությունը և պատմական իրողություններն արտահայտել գեղարվեստական ամբողջականության մեջ:

Պոեմի հավաքական կերպարը՝ ուս ժողովուրդը, գեղարվեստորեն պատկերվում է կոնկրետ դժերով, իր աղգային ու կենցաղային առանձնահատկություններով, Հերոսականությունը, ռեուլյուցիոն թափն ու խորությունը, դիմացկունությունը, ազնվությունը, պարզությունը կազմում են ժողովրդի կերպարի հիմնական հատկանիշները:

Ռեուլյուցիոն թեմատիկայով գրված Չարենցի «Ամենապոեմ» պոեմների մեջ իդեական բովանդակությամբ և գեղարվեստական վարպետությամբ առաջնակարգ տեղերից մեկն է գրավում «Ամենապոեմ»-ը:

Այս ստեղծագործության մեջ Չարենցն իրեն լիովին դրսևորում է որպես մեր ժամանակի ռեուլյուցիոն ամենախոշոր պոետներից մեկը:

Պոեմում արժարժեք է պատերազմի, սոցիալիստական ռևոլյուցիայի և դրա հետ կապված՝ հայ ժողովրդի ազդային ու սոցիալական ազատագրության հարցը:

Պոեմը սկսվում է լիրիկական նախերգանքով, որը հանդիսանում է հոյակապ հիմն բանվոր դասակարգի և աշխատանքի մասին: Բանվոր դասակարգը պատմության կերտողն է և նրա երդը հզոր է ու ստեղծարար: Այդ երգի, ստեղծագործ աշխատանքի պաթոսը Չարենցը արտահայտել է զեղարվեստական մեծ ընդհանրացումով, աշխարհը պատկերելով որպես բանվոր դասակարգի, աշխատավորների երգ, նրանց աշխատանքի արդյունքը.

Երգել են
Եվ երգը նրանց,
Դարերի սարսափից անահ—
Կանգնել է վիթխարի, հաստատ,
Նրանց երգը—
Աշխարհը ահա:

Դեպքերն ու դեմքերն այս պոեմում ռեալիստական խտացման ու տիպականացման են ենթարկված: Պոետը կարողանում է մի քանի շտրիխով, պատկերավոր կերպով բացահայտել այս կամ այն երևույթի էական սոցիալական հատկանիշները:

1914 թ. համաշխարհային պատերազմի դիշառիչ բնույթը, նրա ավերածությունները Չարենցը զեղարվեստական խոշոր ընդհանրացումներով մերկացրել է հետևյալ պատկերում.

Հնամյա արևին մոտիկ
Արևի հարազատ միակ
Քայքայվում էր կարծես տոթից՝
Աշխարհը նեխած մի դիակ:

Պոետը բացառիկ վարպետությամբ մերկացրել է նույնպես և կապիտալի հրեշավոր, դիշառիչ էությունը.

Եվ նրանց դիերի վրայով,
Հոնդոնից մինչև Կապուտան
Անցնում էր երկաթե քայլերով
Մի հրեշ՝ անունը կապիտալ:

Հայ ժողովրդի տրագիկական վիճակը իմպերիալիստական պատերազմի օրերին նույնպես իր ցայտուն արտահայտությունն է ստացել պոեմում:

Չարենցի գրչին հատուկ է նաև սուր սատիրան, որ արտահայտվել է նաև այս պոեմում: Սատիրական գույներով են նկարագրված խանութպան Համոն և վարժապետ Սողոն, որի կերպարում պոետը ծաղրել է կոնտրոկուցիոն դաշնակցությանը: Սողոն աչքի է ընկնում իր բխամտությամբ, քաղաքական անհեռատեսությամբ, ժողովրդի հանդեպ տաժաժ ատելությամբ: Պոետը մի քանի շտրիխով մերկացրել է դաշնակցությանը, ցույց տվել նրա նացիոնալիստական պատրանքների սնանկությունը: «Ամենապոեմ»-ի մեջ Չարենցը ռեալիստորեն բացահայտել է ոչ միայն իմպերիալիստական պատերազմի գիշատիչ բնույթը, այլև ճիշտ կերպով ցույց է տվել պատերազմից դուրս գալու ելքը: Այդ ելքը սոցիալիստական ռևոլյուցիան է: Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիայի թափը, նրա մեծությունը, նրա փրկարար նշանակությունը պոետն արտահայտել է իր տաղանդի ամբողջ հղորդությամբ: Սոցիալիստական ռևոլյուցիայի նկարագրության ֆոնի վրա, պոետը գծադրում է մեծ լենինի կերպարը, որը միլիոնների ուժով խորտակում է հին աշխարհը և գծում պատմության առաջընթացի ուղին:

Սոսկովը ծփաց փողփողում
Ինչպես մի բոսոր դրոշակ—
Պարզեց արնավառ աշխարհին
Մի կարմիր խնդության նշան:
Ու հլած հողմերից այս վառ,
Որպեսզի խորտակե այս հինը
Լեռնացալ որպես ղեկավար,
Ու կանգնեց լենինը:

Պոեմի մեջ առանձնակի տեղ է դրավում նաև հայ ժողովրդի ազատագրության հարցը: Չարենցը նկարագրում է, թե ինչպես հայ ժողովուրդը Շիրակի դաշտից արձագանքում է Հոկտեմբերյան ռևոլյուցիայի կոչին:

Պոեմի վերջում նկարագրված է, թե ինչպես «հնամյա Նաիրին» Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի շնորհիվ ազատագրվում է դարավոր կապանքներից: Հաղթանակում է բյուրանոն Պողոսը, լծվում գալիքի երթին և բյուրերի հետ միասին՝

Այս երկրագունդը հին
Քաշում է դեպի ասպաքան:

Պոեմն ավարտվում է լիրիկական վերջերսով, որի մեջ բանաստեղծը դարձյալ հիշեցնում է Հոկտեմբերյան ռեուլյուցիայի համաշխարհային նշանակութիւնն մասին, հնչեցնում նրա ստեղծարար ուժի, սոցիալիստական աշխատանքի և պրոլետարական ինտերնացիոնալիզմի հզոր հիմնը:

«Ամենապոեմ»-ում կարեւորն այն է, որ ի տարբերութիւն «Ամբոխները խելագարված» պոեմի, այստեղ պոետը խորապէս դիտակցում է, որ ռեուլյուցիան ոչ միայն խորտակում է հինը, այլև կառուցում է նորը: Հնի խորտակումը՝ նորի կառուցման նախապայմանն է հանդիսանում:

Ժողովրդացնութիւնը հանդիսանում է «Ամենապոեմ»-ի, ինչպէս և Չարենցի մյուս լավագույն ստեղծագործութիւնների ամենաբնորոշ հատկանիշներից մեկը: Բանվոր դասակարգը, ժողովուրդը, բուրժուան հասարակ մարդիկ նրա ստեղծագործութիւններում հանդէս են գալիս որպէս պատմութիւն կերտողներ:

**ԼԵՆԻՆԻ ԿԵՐԱՐԸ
ՋԱՐԵՆԳԻ ՍՏԵՂԾԱ-
ԳՈՐԾԱՐՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Չարենցը իր ստեղծագործութիւններում մեծ վարպետութեամբ կերտել է սոցիալիստական ռեուլյուցիայի անմահ առաջնորդ Վ. Ի. Լենինի կերպարը, որը հանդէս է գալիս ոչ միայն Լենինին նվիրված առանձին գործերում, այլև Չարենցի բազմաթիվ այլ ստեղծագործութիւններում:

Լենինը Չարենցի ստեղծագործութիւններում պատկերված է իր լիթիսարի գործունեութիւնն ընդամենը բաղմբանդութեամբ: Բանաստեղծի երկերում Լենինը հանդէս է գալիս որպէս աշխատավորների հոգատար հայր, որպէս ռեուլյուցիոն մարտերի կազմակերպիչ, սոցիալիստական ռեուլյուցիայի առաջնորդ, սոցիալիստական շինարարութեան ոգեշնչող, գաղութային ճնշված ժողովուրդների հույսի փառոս:

Պոետը հստակ կերպով պատկերում է այն անխորտակելի կապը, որ գոյութիւն ունի բանվոր դասակարգի, պարտիայի և Լենինի միջև.

Լենինը—
Ուղեղն էր մեր դասի.
Մեր դասի հոգին էր.

Նրա ամեն ժառանգ
Հոսում էր մեր դասի արյունը:
Նրա մկանն ամեն,
Ամեն բջիջը մի
Դասակարգի համար եռում էր, պայքարում էր,
Լենինը—
Գե որպես երկրագունդը,
Այսինքն աշխարհը՝
Որ հավաքել է կյանքն իր ջղերում:
Լենինը
Հավաքել է իր մեջ—
Հիսուն հազար սերունդ
Ռանվորական, իհարկե,
Ռանվորական սերունդ:

Լենինի կերպարը Չարենցը կերտել է նաև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի անմիջական մարտերի հորձանքում: Այդ տեսակետից բնորոշ է «Հոկտ. 25—26, 1917» ֆրագմենտը: Բանաստեղծության սկզբում տրված վե Պետրոգրադի նկարագրությունը:

Մարդկային մի հոծ բազմություն, մի շտեպնված բանակ՝ զինված թնդանոթներով, զնդացիրներով և ռումբերով պատրաստվում է հարձակման, նա վճռում է պատմության ճակատագիրը: Աշխատավոր մարդկանց այդ մեծ և հերոսական պայքարը կազմակերպում և ոգեշնչում է Լենինը:

Լենինին նվիրված ստեղծագործությունների մեջ հատուկ տեղ է գրավում «Չուգունեի մարդը»: Այս բանաստեղծության մեջ նկարագրված է Լենինի արձանը Զադէսում: Պոետը ցույց է տվել, թե ինչպես սոցիալիստական նոր հարաբերությունների հիման վրա սոցիալիստական շինարարության մարտիկները լենինյան ուժով սանձում են բնության տարերքը և ծառայեցնում այն սովետական ժողովրդի բարօրության գործին:

«Չուգունեի մարդը» բանաստեղծության մեջ Լենինի արձանը հանդես է գալիս որպես սոցիալիստական շինարարության սիմվոլ:

Լենինի պարզությունը, նրա մարդկայնությունը, նրա ջերմ սերը դեպի ժողովուրդը, դեպի աշխատավոր դյուղացին, պոետը մեծ հուզականությամբ արտահայտել է «Բալլադ Վլադիմիր Իլյիչի, մոտիկի և մի զույգ կոշիկի մասին» երկում:

Քաղաքացիական կռիվների ծանր օրերն են. Լենինը նստած իր գրասեղանի առաջ՝ ընթացք է տալիս դեպքերին.

Կիտեւել է հոնքերը ներքե,
Ռերթում է, քրքրում, ջոկում,
Պսպղում է ճակատը լույսի պեմ,
Ինչպես ահագին կրկրագունդը:

Լենինը զբաղւած է ռեուլուցիայի համար բախտորոշ բաղմամբիւ
գործերով: Այդ պահին, կողքի սենյակում լսվում է աղմուկ. քարտու-
ղարը մի մուժիկի, որ ցանկանում է տեսնել Իլյիչին, համոզում է
չմտնել Իլյիչի առանձնասենյակը: Լենինը, լսելով աղմուկը, բաց է
աճում դուռը և տեղեկանում, որ մուժիկն անցել է ահագին ճանա-
պարհ, նրան հարկավոր է մի գուլգ կոշիկ, նա դիմել է ուրիշներին՝
մերժել են և որոշել է դիմել Իլյիչին: Իլյիչը ուշադիր լսում է մու-
ժիկին.

Ծիծաղում է քահ-քահ Իլյիչը,
Խորամանկ խինդ է աչքերում,
Րոթում է մուժիկին,
Հետո,
Վերցնում է մի թուղթ, գրում է.—
Ում որ հարկն է.—
«Տալ մուժիկին մի զուլգ կոշիկ»:
Վերցնում է մուժիկը գլխարկը
Հեռանում է հանելու՜ լիռը:

Մի դեպքի նկարագրությամբ Չարենցը ցույց է տալիս Լենինի
մեծությունը: Առօրյայի մեջ էականը տեսնելու ճանաչողական աշն
կարողությունը, որ պոետի ռեալիզմի հիմնական հատկանիշներից
մեկն է, արտահայտվել է նաև այս բալլադում:

Չարենցը խորը ռեալիզմով կարողացել է պատկերել ժողովրդի
և առաջնորդի անխորտակելի կապը: Նա Լենինի կերպարը տվել է
աշնպիսի կոնկրետությամբ և խոշոր ընդհանրացումով, որ ընթերցողը
տեսնում, զգում է Լենինի ներկայությունը, լսում է նրա խոսակցու-
թյունը մուժիկի հետ: Ռեալիստական ու կոնկրետ է տրված նաև մու-
ժիկի կերպարը:

Պատկերավորությունը, ջերմ հուզականությունը կազմում են այս
բալլադի բնորոշ հատկանիշները:

«Լենին քեռին» բալլադում Չարենցը նկարագրում է, թե ինչպես
Լենինը Կարմիր հրապարակում բանվորներին,— որոնց մեջ և Իվանի

հորը,— ճանապարհում է դեպի լեհական ճակատ։ Ութ տարեկան իվանը նախօրոք իմանալով այդ մասին, գնում է Կարմիր հրապարակ Լենինին տեսնելու համար։ Բաղմության մեջ իվանը չի կարողանում տեսնել Լենինին. տեսնելու համար ոտքը դնում է մի բանվորի գրպանը, չհանդիպելով բանվորի դիմագրուծյանը՝ բարձրանում-նստում է մի այլ բանվորի վզին և տեսնում Լենինին, որը կանգնած տրիբունի վրա, հրոսպարակում հավաքված բաղմուհադար ժողովրդի հետ միասին «Ինտերնացիոնալ» է երգում։ Լենինի անսահման պարզությունը, նրա անխորտակելի կապը միլիոնավոր մասսաների հետ արտահայտված է նաև այս բալլադում։

«Լենինն ու Ալին» պոեմում պատմվում է, թե ինչպես թյուրք չարքա թրավար Ալին սիրում է Լենինին։ Լենինի և նրա գործերի մասին Ալուն պատմել է մի ռուս նավաստի։ Լենինի մահվան տխուր լուրը ցնցում է Ալուն, և նա, իր կյանքը վտանգի տակ դնելով, գրսում հրսկող թյուրք ոստիկանից գաղտնի մտնում է Տրապիզոնի սովետական հյուպատոսարանը և սովետական հյուպատոսին իր խոր վիշտն ու ցավակցությունն է հայտնում Լենինի մահվան առթիվ։ Այս ամբողջ դործողությունը պոետի գրչի տակ ռեալիստական, հոգեբանական, դեղարվեստական բարձր մարմնավորում է ստացել։ Պոետը վարպետորեն գտել է համապատասխան ոճ և պատմելաձև։ Ալու կերպարի միջոցով պոետը տիպականացրել է արևելյան ճնշված ու հարստահարված ժողովուրդների սերը դեպի Լենինը, դեպի Սովետական Միությունը։

Ա՜յ, Մոսկվայում հենց այդ

Ապրում է արևադաշ Լենինը։

Նա, որ մեծ է, ինչպես ամենամեծ խալիֆ։

Բայց այնպիսի խալիֆ,

Որ հասկանում է միշտ ֆոխարայի հալից,

Այս է պատճառը հենց,

Որ սիրում է նրան Տրապիզոնցի Ալին։

Չարենցն իր ստեղծագործության հետագա տարիներին նույնպես գրում է մի շարք բանաստեղծություններ Լենինի մասին։ Այս բանաստեղծությունների մեջ հատուկ տեղ է գրավում «Մահվան քայլերը».

Մենք փող զարկինք և արձագանքն ահավոր

Նրկրի՜ք հրկիր որոտաձայն շառաչեց,

Նվ սրտերում միլիոնավոր, բյուրավոր

Ըմբոստությունն ահագնացավ ու աճեց։

* * * * *

Եվ Թափորի ելած բազմաթիվ զինուորիկներ,
Բոլոր բմբուսոս բանակների առաջում—
Արդեն ննջած Առաջնորդի պանծալի
Անձնագրորդ դիակառն է շառաշում...

.

Եվ լուռ ննջած առաջնորդի դագաղի
Երթին ելած բազմաթիվ զինուորիկներ
Երգում տվին պայծառ լուռ կատուդի—
Մինչև վերջին, մինչև վերջին հաղթանակ...

Պոեմը կարողացել է մահվան քայլերդի միջից հնչեցնել հաղթանակի մարտակոչը:

Մահվան հաղթահարման, կյանքի հաղթանակի դորկիական օպտիմիստական աշխարհազդացությունը է նկարագրել Չարենցը առաջնորդի մահը: Մահվան տրագիկումը, խորը վիշտը պոեմը հաղթահարում է կենսի անմահությունով, նրա կերպարի հերոսականությունով: Հովհ. Հովհաննիսյանից և Հովհ. Թումանյանից

Բալլադներ

հետո Չարենցը հանդիսանում է մեր պոեզիայի մեջ բալլադի խոշոր վարպետը:

Թումանյանի բալլադներին նշույթը, սյուժեն գերազանցապես վերցված է ժողովրդական ստեղծագործությունից և նրա վարպետությունը այդ ժանրի ասպարիզում այն էր, որ նա, հարազատ մնալով ժողովրդական ստեղծագործության անուններին, հղկում էր վերցված սյուժեն, սրում նրա սոցիալական բովանդակությունը:

Չարենցի բալլադները ևս աչքի են ընկնում իրենց խորը իդեալականությամբ, հուղականությամբ ու սյուրռեալությամբ: Պարզությունը նա ժառանգել է հատկապես Թումանյանից, սակայն այդ պարզության մեջ ևս նա հանդես է գալիս իր փնդնափայ գեմբով: Չարենցը գրել է մի շարք բալլադներ, որոնց մեջ իրենց վարպետությամբ աչքի են ընկնում «Իմ ընկեր Լիպոն», «Բալլադ գնդապետ Տոմսոնի, կոմերիտ սղի և դործագողի մասին», «Բալլադ 26-ի մասին» և այլն: Վերջինիս մեջ Բաբլում ծավալվող սոցիալիստական շինարարության ֆոնի վրա, կերտվում է 26 կոմունարների հերոսական կերպարը: Պոեմը ցույց է տալիս, որ 26 հերոսական ու պայծառ կոմունարների հիշատակը անջնջելի կերպով դրոշմվել է ինչպես ողջ սովետական ժողովրդի, նույնպես և Բաբլի բանվոր օրասկարզի սրտում: Կոմունարներ-

ըը հարազատ են Բաքվի աշխատավորությանը, նրանց պայքարի կամք, տոկունություն են ներշնչում: Կոմունարների ոգևորիչ ձայնը լսվում է մեքենաների փոկերի աղմուկի միջից, նրանք ծանոթ ու հարազատ են Բաքվի աշխատավորությանը:

Հատկապես հաջողությամբ է նկարագրված քսանվեց կոմունարների հաղթական երթը Բաքվում ծավալվող սոցիալիստական շինարարության առօրյայի ֆոնի վրա: Ընթերցողը կարծես զգում ու տեսնում է քսանվեց կոմունարների հաղթական այդ երթը.

Քսանվեց հոգի են նրանք—
նվ խոհուն մտազրազ են բոլորը:—
Լևզեից դնում է նա —
նրկաթյա կարմիր կոմանդորը:
Քայլերով հաստատ, համաշափ,
Հետևում են նրան ընկերները,
Ընթանում են քայլերով շտապ,
Շտապում են դեպի վիշկաները:

Պոետը ցույց է տվել, թե ինչպես հերոսական մահով նահատակված քսանվեց կոմունարներն իրենց գործով ապրում են մեր կյանքում և հանդիսանում են Բաքվի բանվորական մասսաների աշխատանքային էնտուզիազմի ներշնչողները:

Հուլիս, լիրիկական տոնով է գրված «Լիմ ընկեր Լիպոն» բալլադը, որը պոետը միաժամանակ անվանել է «Բալլադ մանկության բախտալի, պայքարի և հերոսության մասին»: Բալլադում, իրեն հատուկ խտացած ու սեղմ տողերով, պոետը նկարագրում է իր ընկեր Լիպոնի՝ քաղաքացիական կռիվների հերոս Լիպարիտ Մխչյանի մանկությունը: Այդ մանկությունը տխուր է: Ընթերցողի առաջ պատկերապես է չքավոր, վտիտ, կապուտալյա և ոտաբոպիկ Լիպոն, մանկական բախտալի չարխի առջև: Պոետը հետագայում դեպքերի հորձանքում կորցնում է մանկության ընկերոջը, որովհետև՝

Պատերազմներ եղան մեծ, պայքարներ բազում—
նվ ամբողջ կյանքը փոխվեց, ինչպես երազում:
Դասակարգեր ընկան հին ու ելան նորերը—
Օրեր վառվառ ու անգին, անմոռաց օրեր...:

Այդ օրերին, ինչպես հայտնի է, պոետը Ղամարլուի ձակատում որպես մարտիկ մասնակցում է կոնտրռեւոլյուցիոն դաշնակցական

հորդանների դեմ մղվող քաղաքացիական պատերազմին: Այդտեղ նա պատահում է իր մանկության ընկեր Հիպոլին, որը դարձել էր դինվորական կոմիսար՝ «գնդի ռեին»: Պոետը նրան հիշեցնում է «Նաիրյան Կարսի», նրա մանկության ու բախտախաղի շարժի մասին, Լիպա-րիտը պատասխանում է.

Դե, էն շարիւր... նա չկա... չկա... հիմա մենք
Ուրիշ շարիւր պիտի այս աշխարհում շարժենք:
Բախտախաղ չէ, սակայն սա, այլ կոիվ ու կամք.
Լուսաբացին մենք պիտի առաջանանք...

Լուսաբացին Երեանի վերադարձման համար կազմակերպված գրոհի ժամանակ ղոհվում է Լիպարիտը.

Լուսաբացին մեր բանակը հաղթական
Քաղաք մտավ, հետը կարմիր մի դազաղ...

Անգլիական իմպերիալիզմի դադանային դեմքը, նրա ստոր պայ-քարը Սովետական իշխանության դեմ, պոետը մերկացրել է «Բալլադ գնդապետ Տոմսոնի, կոմերիտ տղի և դործագողի մասին» բալլադում: Այստեղ պոետը վերաբրտադրում է Բաքվի բանվոր դասակարգի հերոսական պայքարը անգլիական ինտերվենտների դեմ: Բալլադում խիզախ կոմերիտական պայծառ դեմքը միաձուլվում է Բաքվի պրոլե-տարիատի հերոսական պայքարի հետ:

**Ջարենցի
քաղաքական
սատիրան**

Ջարենցի ստեղծագործության մեջ հատուկ տեղ է գրավում քաղաքական սատիրան, որ ունի սուր ու սպանիչ բնույթ: Այդ սատիրան առա-

ջին հերթին ուղղված է հայ բուրժուական հա-կառույցություն պարտիայի՝ դաշնակցության դեմ: Պոետը ցույց է տալիս, թե ինչպիսի կործանարար հետևանքներ է ունեցել այդ պար-տիայի հակաժողովրդական գաղափարախոսությունն ու դործունենու-թյունը հայ ժողովրդի համար:

Դաշնակցության «պետականության» մոռյլ և մղձավանջային պատկերը Ջարենցը ռեալիստորեն վերաբրտադրել է «Խմբապետ Շա-վարշը» սյունում: Պոեմի կենտրոնական կերպարը խմբապետ Շավարշն է, որի միջոցով պոետը բացահայտել է դաշնակցական «պետակա-նության», խմբապետականության հրեշավոր հատկանիշները: Խմբա-պետ Շավարշի արտաքին դիմանկարը գծադրված է վարպետորեն և համապատասխանում է նրա ներքին սոցիալական գիշատիչ էությանը:

Խմբապետ Շավարշի «ազգաշեն» գործոճանությունն արտահայտվում է նրանում, որ նա մի ամբողջ թյուրբական գյուղ կոտորում է այնպես, որ «լուսինը լողում է արյան մեջ», «Իսկ գյուղը դիակ էր կարծես, կապված՝ իր ձիու ասպանդակից»:

Խմբապետ Շավարշի գաղանալին կերպարը հանդես է գալիս դաշնակցական տիրահաղակ տիրապետության մղձավանջային ֆոնի վրա: Այդ ֆոնը նույնպես տրված է խորը ռեալիզմով: Պոետը կարողացել է այդ կերպարի մեջ արտահայտել դաշնակցության տիրապետության շրջանի այլանդակությունները:

Մեր երիտասարդությունը, որ չի տեսել դաշնակցականների զազրելի լուծը, կարգալով Չարենցի այս պոեմը, կոնկրետ կերպով կայատկերացնի, թե ինչպիսի դաժան ու այլանդակ, մղձավանջային կարգերից է ազատել նրան Սովետական իշխանությունը:

«Խմբապետ Շավարշ»-ից բացի Չարենցը դաշնակցության դեմ գրել է նաև մի շարք բանաստեղծություններ, որոնք քաղաքական սատիրայի ցայտուն օրինակներ են մեր պոեզիայի մեջ: Այդ բանաստեղծություններից հատկապես պետք է նշել «Դաշնակցականներին»-ը, որի մեջ պոետը ճիշտ կերպով բացահայտում է դաշնակցության հակաժողովրդական էությունը: Նա ցույց է տալիս, թե ինչպես դաշնակցությունը, լծվելով եվրոպական իմպերիալիզմի, ցարերի ու հայրենի տերերի կառքին, փորձել է խեղդել հայ ժողովրդի ըմբոստացող ոգին:

«Կապկազ թամաշա»-ում սատիրան դառնում է ավելի ծավալուն և սուր՝ ուղղված Անդրկովկասի կոնտրռևուլցիոն պարտիաների՝ դաշնակների, մենշևիկների ու մուսավաթների և նրանց տերերի՝ իմպերիալիստների դեմ: «Կապկազ թամաշա»-ում պոետը ոչ միայն քաղաքական սատիրայով մերկացնում է ազգամիջյան կռիվներ կազմահրպող անդրկովկասյան կոնտրռևուլցիոն պարտիաները, այլև հանդես է գալիս որպես անդրկովկասյան ժողովուրդների եղբայրության շատագով:

Իմպերիալիզմի՝ որպես պատերազմի հրձիգի, որպես պրոգրեսիվ մարդկության և նրա կուլտուրայի թշնամու հրեշավոր էությունը Չարենցը գեղարվեստական ուժով մերկացրել է իր մի շարք ստեղծագործություններում: Այդպիսի խորը, տիպականացված մերկացումներ մենք գտնում ենք «Ամենապոեմ»-ում, «Երեք ռադիոպոեմ»-ներում, «Խաղաղության ռադիո», «Կոմալմանախ», «Մյուր դե-ֆեդերե» և մի շարք այլ ստեղծագործություններում:

«Խաղաղության ռադիո»-ում պոետը հանդես է գալիս որպես աշխատանքի և խաղաղության բանականների կամքի երգասաց: Նրա երգը հնչում է որպես խաղաղության ռադիո՝ ուղղված պատերազմի հրձիգների դեմ:

«Խաղաղության ռադիո»-ում պոետը, մերկացնելով պատերազմի հրձիգներին, միևնույն ժամանակ արտահայտում է սովետական ժողովրդի անխորտակելի պատրաստակամությունը՝ պաշտպանելու իր Հայրենիքը:

Չարենցի ստեղծագործության մեջ հատուկ տեղ է գրավում սատիրան՝ ուղղված ամերիկյան իմպերիալիզմի դեմ: Ամերիկյան իմպերիալիզմը, կեղծ դեմոկրատիան, դոլարի տիրապետությունը մերկացնող ծաղրի են ենթարկված Չարենցի «Տիրապետողների դեմքը» սատիրայում: Պոետն առաջին հերթին ծաղրում ու մերկացնում է այսպես կոչված ամերիկյան «դեմոկրատիան», որը հիմնված է դոլարի տիրապետության վրա.

Կարդացել էք,
Լսել եք երևի,
«Ամերիկա»,
«Դեմոկրատիա»,
«Իրախոս»,
«Եղեմ»,

— Դրախտ է, իհարկե,
Միլիարդեր եք Լքե.

.

Կհանդիպի ձեզ ինքը— միտք դուրսը,
Իսկ էդ միտքը էնտեղ
Մարդ չէ՝ հո հասարակ—
Պրեզիդենտ:

Ամերիկյան իմպերիալիզմի դեմ ուղղված Չարենցի այս ստեղծագործության վրա զգացվում է Մ. Գորկու ամերիկյան իմպերիալիզմի դեմ ուղղված քաղաքական պամֆլետների ազդեցությունը:

«Երկիր Նաիրի»
Չարենցը հանդես է ելել նաև արձակի ասպարեզում, որի մեջ հատկապես նշանակալից է «Երկիր Նաիրի» վեպը:

«Երկիր Նաիրի» վեպը ուղղված է բուրժուական նացիոնալիզմի,

դաշնակցության դեմ: Հեղինակը սալտինիչ սատիրայով մերկացնում է դաշնակցության հակաժողովրդական էությունը:

Վեպում ցույց է տրված, թե ինչպես իրեն «ռևոլյուցիոն» հոր-ջորջող դաշնակցությունը կապված է «մովթ տան», ցարական պահ-նորդական բաժանմունքի հետ և կատարում է նրա հանձնարարու-թյունները՝ ուղղված ժողովրդի ռևոլյուցիոն շարժման դեմ: Վեպում ծաղրի է ենթարկված նաև կամավորական շարժումը: Հեղինակը նկա-րագրել է դաշնակցական տխուր ճակ «պետությունը», ցույց տալով նրա «ռազմական» ուժի, այդ «պետականության» փտած հիմքերի քայ-քայլումը: Վեպում տիպական գծերով վերարտադրված է ժողովրդի ծանր, օրհասական դրությունը դաշնակցության լծի տակ:

«Ծրկիր Նաիրի» վեպը մեր գրականության մեջ նորություն էր ոչ միայն իր բովանդակությամբ, այլ և ձևով, գեղարվեստական առանձ-նահատկություններով:

Ամենից առաջ պետք է նշել, որ «Ծրկիր Նաիրին» քաղաքական-սատիրական վեպ է: Այս երկի սատիրական բովանդակությամբ էլ պայմանավորվում է նրա ձևը:

Ո՞րն է Չարենցի սատիրայի ռեսլիդմը՝ արտահայտված այս վե-պում: Այդ ամենից առաջ դրսևորվել է երևութների և կերպարների տիպական սոցիալական էությունը՝ սատիրական միջոցներով մեր-կացնելու մեջ:

Դաշնակցության ռեակցիոն էությունը Չարենցը վեպում բացա-հայտել է մի շարք բացասական, տիպական կերպարների միջոցով, ինչպես մազուլիի Համոն, գավառական վարժապետ Վառդգյանը, բժիշկ Սերգեյ Կասպարիչը: Դաշնակցական աղբակուլտում ծնված այս եր-րորդությունը շրջապատված է ախպիսի անձնավորություններով, որ-պիսիք են՝ գեներալ Ալյոշը, առևտրական Հաջի էֆենդի Մանուկֆը, հաշտարար դատավոր Օսեփ Նարիմանովը և ուրիշներ: Հեղինակը միաժամանակ ցույց է տալիս, թե ինչպես նացիոնալիզմի իդեոլո-գիայի ցանցում խճճվել էին մանր-բուրժուական որոշ տարրեր, որոնց տիպիկ ներկայացուցիչներն են Մեռեյի Ենոքը, վարսավեր Վասիլը, կոշկակար Սիմոնը:

Վեպի կերպարների մեջ կենտրոնական տեղ է գրավում Մազուլիի Համոն՝ «Աուլս» նավթարդյունաբերական ընկերության տեղական գրա-սենյակի կառավարիչը և միաժամանակ՝ դաշնակցության տեղական կենտրոնի ղեկավարը: Բնորոշ է այն, որ Համո Համբարձումովիչը

նավթի մեծածախ վաճառքով զբաղվելու պատճառով ստացել է Մա-
լուլի Համո խիստ դիպուկ ծաղրանունը: Բնորոշ է այն, որ Մալուլի
Համոն, «ընթացք է» տալիս ինչպես «ազգային գործերին», նույնպես և
նավթի վաճառքին: Պոետը կարողացել է մի քանի դժերով բացահայ-
տել Մալուլի Համոյի սոցիալական դիշատիչ էությունը. այսպես,
օրինակ, պատերազմի ժամանակ դաշնակցական տեղական կենտրոնի
«հայրենաբաղձ» կոչի հետ միաժամանակ լույս է տեսնում Մալուլի
Համոյի հայտարարությունը նավթի գների բարձրացման մասին: Կամ
այն ժամանակ, երբ «ոսոխը» կոտորում է հայ ժողովրդին, «հայրենա-
սեր» Մալուլի Համոն իր և իր տերերի շահերի համար մեծ քանա-
կությունը նավթ է վաճառում այդ «ոսոխին»՝ հայ ժողովրդին ավելի
հոանդուն կերպով բնաջնջելու համար:

Չարհնցը իր ռեալիստական սատիրայով վարպետորեն մերկաց-
րել է բուրժուազիայի դիմակները, ցույց տվել դաշնակցության և նրա
դորձակից Մալուլի Համոյի «հայրենասիրության» կեղծ էությունը:

Ինչպես ողջ դաշնակցությունը, նույնպես և նրա «ականավոր»
ներկայացուցիչ Մալուլի Համոն, վեպում հանդես է գալիս որպես
ցարիզմի պնակալեզ. նա սողում է ցարական գավառապետի ոտների
տակ: Ցարական իշխանության և Մալուլի Համոյի խայտառակ գոր-
ծարքները հեղինակը մերկացրել է գավառապետի կողմից նրան
դրած նամակում:

Սատիրական ռեալիստական գույներով են նկարագրված նաև
մյուս կերպարները, որոնք պատվում են դաշնակցական «կենտրոնի»
և Մալուլի Համոյի շուրջը: Գեներալ Ալյոշը, Օսեփ Նարիմանովը,
Հաջի էֆենտի Մանուկոֆը, Մեռելի Ննոքը, վարսավեր Վասիլը, տելե-
ֆոն Սեթոն, խաչագող տեր Հուսիկը և բազմաթիվ այլ կերպարներ
կերտված են ռեալիստական վարպետությամբ:

«Երկիր Նաիրի» վեպը աչքի է ընկնում կերպարների ոչ միայն քա-
նակով, այլև բազմազանությամբ: Հեղինակը այդ կերպարները կեր-
տելիս չի մտնում նրանց կյանքի մանրամասնությունների մեջ, այլ
տալիս է բնորոշ արտաքին ու ներքին դեմք և ընթերցողի հիշողության
մեջ տպավորում այդ կերպարները:

Չարհնցը այդ վեպում տալիս է ոչ միայն մի քաղաքի կենցաղի
հիանալի նկարագրությունը, այլև այդ քաղաքի պատմության ֆոնի
վրա արծարծում է հասարակական կյանքի կարևորագույն մի շարք
հարցեր: Սակայն վեպը ղերծ չէ թերություններից:

«Երկիր Նաիրի» վեպում դեռևս հստակ պատկերացում չկա ժողովրդի և բուրժուազիայի հայրենասիրության արմատական տարբերության մասին. Չարենցը ամբողջ որոշակիությամբ չի տեսնում այն ռեոլյուցիոն ուժերը, որոնք Հայաստանը փրկեցին դաշնականների անարգ լծից:

«Երկիր Նաիրի»-ն մեր գրականության մեջ նորություն է ոչ միայն քաղաքական բուլանդակությամբ, այլև ժանրային առանձնահատկություններով:

Մի շարք անգամ Չարենցը իր այս գործը անվանում է «Պոեմանման վեպ»: Վեպը, լինելով սատիրական, միաժամանակ իր մեջ պարունակում է ջերմ լիրիկական տարրեր, լիրիկական զեղումներ ու «շեղումներ»: Եթե սատիրան ուղղված է քաղքենիական կենցաղի, նացիոնալիստական իդեոլոգիայի և նրա կրողների դեմ, ապա հեղինակը լիրիկական ջերմ զեղումներով նկարագրում է հայրենի քաղաքի հասարակ մարդկանց. «Երկեր Նաիրի» վեպում լիրիկան հեղինակի հայրենասիրական տրամադրությունների արտահայտման կարևորագույն միջոցներից մեկն է:

Վեպում արտահայտվում է նաև հեղինակի խոր վիշտը իր ժողովրդի անցյալ մռայլ կյանքի նկատմամբ, նրա խոր ատելությունը գեպի ժողովրդի արտաքին և ներքին հարստահարողները:

Լեզվի և ոճի մեջ հեղինակը նույնպես զրսևորել է իր վարպետությունը: Վեպը գրված է Չարենցին հատուկ պարզ, մաքուր, հարուստ լեզվով ու պատկերավոր ոճով: Բարբառային բառերն ու արտահայտությունները նա օգտագործում է չափի այնպիսի զգացումով, որ դրանք չեն խախտում վեպի ոճական միասնությունը: Նրանք միայն միջոց են հանդիսանում կենցաղի և կերպարների կոլորիտը ընդգծելու համար: Ժողովրդական դարձվածքները Չարենցը վարպետորեն օգտագործել է կերպարների տիպականացման համար:

Չարենցը «Երկիր Նաիրի»-ն գրելիս օգտագործել է ինչպես Գոգոլի, Շչեդրինի, նույնպես և Հ. Պարոնյանի երգիծանքի հարուստ փորձը, նրանց երգիծանքի ձևերը, մերկացնելու ուժգնությունը, երգիծական կերպարներ ստեղծելու վարպետությունը: Վեպի պոեմանման ձևը մոտ է Գոգոլի «Մեռած հոգիներ»-ին, իսկ սյուժեի զարգացումը Շչեդրինի «Մի քաղաքի պատմությունը»:

**ԻՆՏԵՐՆԱԳԻՈՆԱ-
ԼԻԳԱՐ ԵՍՈՎԵՏԱԿԱՆ
ԽԱՅՐԵՆԱՅԻՐՈՒ-
ՐՅՈՒՆԸ**

Քննադատելով նացիոնալիստական պարտիա-
ներին, իմպերիալիզմը, իմպերիալիզմի դա-
րաշրջանի բուրժուական անկումային կուտու-
րան, ի հակադրություն այդ բոլորի՝ պոետն իր
ստեղծագործություններում խորօստ կերպով

հնչեցնում է Սովետական Միության ժողովուրդների, ամբողջ աշխարհի
աշխատավորների եղբայրության ու համերաշխության հղոր երգը:
Սովետական բարձր հայրենասիրությունը և պրոլետարական ինտեր-
նացիոնալիզմը հանդիսանում են Չարենցի պոեզիայի էությունը:

Ինտերնացիոնալիզմը նրա պոեզիայի մեջ արտահայտվել է ռազ-
մապիսի կոնկրետ ձևերով: Բազմաթիվ ստեղծագործություններում նա
իր անսահման սերն է արտահայտել դեպի ռուս հերոսական ժողո-
վուրդը, բանաստեղծուրեն արտահայտել նրա համաշխարհային առա-
ջատար նշանակությունը: Այս տեսակետից բնորոշ է «Երգ ժողովրդի
մասին» էպիկական պոեմը, որտեղ մեծ թափով պատկերված է ռուս
ժողովրդի դարավոր պայքարը իր ազատագրության համար:

«Ամենապոետ»-ում նա արտահայտել է ռուս պրոլետարիատի
ռեուլյուցիոն թափը, ցույց տվել նրա առաջատար դերը Հոկտեմբերյան
սոցիալիստական Մեծ ռեուլյուցիայի մեջ:

Դեպի ռուս ժողովուրդը, դեպի նրա արվեստն ու գրականությունն
ունեցած Չարենցի ջերմ սերը ցայտուն կերպով դրսևորվել է նաև
«Էպիքական լուսաբաց»-ում, Հենինգրադին նվիրված մի շարք բա-
նաստեղծություններում և այլ երկերում:

Պոետի ստեղծագործություններում զեղարվեստական մարմնա-
վորում է ստացել նաև անդրկովկասյան ժողովուրդների եղբայրության
գտնաբերում: Բաքվի պրոլետարիատի ռեուլյուցիոն պայքարը նա զո-
վերգել է «Բալլադ գնդապետ Տոմսոնի, կոմերիտ տղի և գործադուլի
մասին», իսկ աշխատանքային հերոսականությունը՝ «Բալլադ 26-ի
մասին» ստեղծագործություններում:

Պոետն իր սրտաբուխ խոսքն է ասել նաև եղբայրական Վրաստա-
նի մասին: Զերմ հուզականությամբ է գրված «Տաղ սրտառուլ եղբայ-
րական Վրաստանին» բանաստեղծությունը, որ նվիրված է Վրաստա-
նում սովետական կարգերի հաստատման 15-ամյակին:

Չարենցը երգել է Սովետական Միության ժողովուրդների, ամ-
բողջ աշխարհի աշխատավորների եղբայրական միասնությունը՝ իմ-
պերիալիզմի դեմ մղվող պայքարում: «Ամենապոետ»-ը, «Ռադիո-

սյոնիստները», «խաղաղության ռադիոն», «Կոմունիստների պատր. Փարիզում», «Լենինն ու Սկին», «Ստամբուլ» և բազմաթիվ այլ ստեղծագործություններ տողորված են լենինյան ինտերնացիոնալիզմի գաղափարով:

Ինտերնացիոնալիզմով և սովետական հայրենասիրությամբ է ներթափանցված սյոնիստ ռեուլյուցիոն շրջանի ողջ ստեղծագործությունը:

Սակայն հայրենիքի ու հայրենասիրության թեման հատուկ տեղ է դրավել Զարենցի ստեղծագործության բոլոր շրջաններում: Սեր դեպի ժողովուրդը, դեպի նրա պատմությունը, դեպի նրա կուլտուրան, հայրենի բնության գովքը. հանդիսացել են սյոնիստ ստեղծագործության հիմնական մոտիվները: Բայց հայրենասիրությունը նրա ստեղծագործության տարբեր էտապներում գաղափարական տարբեր երանգներով է արտահայտվել:

Նախառեուլյուցիոն շրջանում սյոնիստ, աղեկատու մորմոքով ողբալով իր ժողովրդի ծանր վիճակը, երազում էր նրա փրկությունը, սակայն նրա համար դեռևս անորոշ էին ժողովրդի ազատագրման իսկական ուղիները: Ստեղծագործության ռեուլյուցիոն շրջանում Զարենցի հայրենասիրական քնարը հնչում է նոր ուժգնությամբ ու թափով: Պոետը Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեուլյուցիայի մեջ տեսնում է ողջ աշխատավոր մարդկության, ինչպես և իր ժողովրդի ազատագրության իրագործումը:

Այս շրջանում սյոնիստ հայրենասիրական սյոնիստ հարստանում է իր ժողովրդի ազատագրական ուղու նկարագրությամբ: Ստեղծագործության այս էտապում հայրենիքի գաղափարը և հայրենասիրությունը նրա ստեղծագործության մեջ միաձուլվում է Հոկտեմբերյան ռեուլյուցիայի, սոցիալիզմի գաղափարի հետ: Հոկտեմբերյան ռեուլյուցիան, լենինը հայ ժողովրդին ցույց են տալիս նրա լուսավոր ուղին, նրան սպաքարի են կոչում «հայրենի» և օտար շահագործողների դեմ:

* * *

Զարենցի ստեղծագործության երրորդ շրջանը սկսվում է 1928 թ.: Այս շրջանի նրա ստեղծագործությունները հիմնականում խոհական են, որի տարրերը առկա էին նախորդ շրջանի վերջին տարիների երկերում: Խոհականությունը տիրապետող է ինչպես 1930 թ. հրապարակ-

ված «Էպիքական լուսաբաց», նույնպես և «Գիրք ճանապարհի» ժողովածուում, որ լույս է տեսել 1933 թ.:

«Էպիքական լուսաբաց»

«Էպիքական լուսաբաց»-ը սովետական կյանքի առաջընթացի նոր էտապի բանաստեղծական արտահայտությունն է: Այդ շրջանում քաղաքացիական կռիվները վաղուց վերջացել էին: Գյուղում և քաղաքում ծավալվել ու ծավալվում էր սոցիալիստական վիթխարի շինարարություն: Այդ շինարարության հիման վրա առաջացել էին քաղաքական, կուլտուրական նոր պրոբլեմներ: Ռևոլյուցիայի և սոցիալիստական շինարարության բովում ծնվել ու ծնվում էր սոցիալիստական մարդը իր նոր խոհերով ու զգացումներով: Լայն կերպով վերագնահատման էր ենթարկվում անցյալի կուլտուրական ժառանգությունը: Գրականության և արվեստի ֆրոնտում կրքոտ կերպով քննության էին ենթարկվում սոցիալիստական նոր արվեստի հարցերը:

Արտաքին հարաբերությունների ասպարեզում ստեղծվել էր ուժերի նոր դասավորում: Զախողվելով սովետական երկրի դեմ կազմակերպված ինտերվենցիայում, կապիտալիստական աշխարհը դիմում էր պաշարի նոր մեթոդների: Երկրի ներսում նոր ձևեր էր ընդունում դասակարգային պայքարը: Այս բոլոր նոր պրոցեսներն ու երևույթները չէին կարող իրենց դեղարվեստական արտահայտությունը չստանալ մի այնպիսի առաջավոր պոետի ստեղծագործության մեջ, որպիսին Զարենցն էր:

Զարենցը խորապես կապված էր իր դարի հետ, իր բանաստեղծական տաղանդի ուժով շոշափում էր իրականության դարկերակը, մեր առօրյայում տեսնում էր ռևոլյուցիոն զարգացման հեռանկարը և կարողանում էր խորը կերպով արձագանքել կյանքում տեղի ունեցող նոր պրոցեսներին:

«Էպիքական լուսաբաց»-ում պոետի ստեղծագործությունը, երբեք չկորցնելով իր ներքին մարտունակությունը, դառնում է ավելի լայնահուն, խոր, «հանդարտ»: Մի շարք բանաստեղծություններում՝ «Երգ մաքառումի», «Ես այն չեմ այլևս», «Թուղթ բանաստեղծ բարեկամիս»՝ զրված Երևանից, «Խոհ», «Էպիքական առավոտ», «Մուսայիս», «Այրած երգեր», «Օվկիանի հրդը» բանաստեղծություններում ամփոփված են Զարենցի տեսակետները արվեստի ու գրականության մասին: Այդ բանաստեղծություններում պոետը խորը խոհականությամբ և բարձր արվեստով մի կողմից ամփոփում է իր ստեղծագործության անցած

էտապի փորձը, մյուս կողմից՝ կատարելով ընդհանրացումներ, նշում է նրա զարգացման հեռանկարները. այլ կերպ ասած՝ առաջադրում է սովետական իրականությանն արժանի, սոցիալիստական ռեալիզմի մեթոդով կլասիկ պոեզիա ստեղծելու պահանջը, որ հաջողությամբ կենսագործում է հենց ինքը մի շարք բանաստեղծություններում: Պոետը խորապես գիտակցում է, որ կյանքի հարաճուն ընթացքը պետք է վերարտադրել ոչ թե կրկնելով հին ձևերը, այլ պետք է որոնել, գտնել նոր պրոցեսներն արտացոլող նոր ձևեր: Սովետական կյանքի նոր պրոցեսների ճանաչողությունն ու մեծ զգացողությունը հանդիսանում է Չարենցի պոեզիայի գաղափարական, ինչպես և գեղարվեստական զարգացման շարժիչ ուժը:

«Էպիքական լուսաբաց»-ում թե՛ իր պարզությամբ ու խորությամբ, և թե՛ իր ժանրային առանձնահատկություններով հատուկ տեղ է բռնում «Չափածո նովելներ» շարքը:

Այդ շարքի գործերից է «Անակնկալ հանդիպում Պետրոպոլիսյան ամրոցում» նովելը, որը նվիրված է բոցաշունչ ռեուլյուցիոն-դեմոկրատ Միքայել Նալբանդյանի հիշատակին:

Պոետը նկարագրում է Պետրոպոլիսյան մռայլ ու դաժան ամրոցը, որտեղ բանտարկվել են բազմաթիվ ռեուլյուցիոններն, ապա ջերմ հուզականությամբ ու բանաստեղծական կոնկրետությամբ պատկերում իր հանդիպումը Մ. Նալբանդյանի հետ.

— Դուք ինձ մոռացել եք, բարեկամ...

.

— Ի՞նչ է,— ասում է,— չեք մտաբերում
Տարիներում այն մեթ իմ բարբառած
Շունդալից երգերն ըմբոստության մասին.—
Մաքառելով անցա ուղին ես իմ,
Պայքարելով այն սև բռնության դեմ...

Ճանաչելով Նալբանդյանին, պոետը պարզում է իր ձեռքերը և, որպես հարաղատի, ցանկանում է գրկել նրան: Նալբանդյանի գեղարվեստական դիմանկարը իր կենդանի, կոնկրետ գծերով, խորը տրագիկվում ու լիրիկվում մեր պոեզիայի լավագույն կերպարներից մեկն է:

«Գանգրահեր տղան»

«Գանգրահեր տղան» չափածո նովելում բանաստեղծական մեծ ուժով պոետն իր տխուր մանկությանը հակադրում է նոր սերունդների պայծառ մանկությունը: Կենսալսինդ գույներով նկարագրում է պիո-

Ներական գտրնանային ուրախ երթը՝ կանաչազարդ ճանապարհներով,
Զանգու գետի ափերով: Պիոներների այդ ուրախ երթը անցնում է հին
ցանկապատով ցանկապատված մի գերեզմանոցի կողքով, ուր «անա-
նուն, անդիր քարեր վաղուց մոռացված ննջում են այնտեղ»: Այդ պա-
հին մի կապտաշյա գանգրահեր պիոներ բաժանվում է պիոներական
վաշտից, նա իր ջինջ, պայծառ աչքերով նայում է գերեզմանաքարին,
ապա, մի հին քարի վրայից քերելով փոշին, կարդում է՝ «Եղիշե Չա-
րենց,— բանաստեղծ ծնված Մակու քաղաքում»: Դանդրահեր տղան
կարդալով այս տապանագիրը, կարծես ինչ ոչ բան է հիշում, ժպտում
է և ապա՝ մի բաղեղ քաղելով, դարձյալ միանում է պիոներական
զվարթ շարքին:

Ծիծաղով հնչուն ու արծաթաձայն՝

Միտնում է նա կրկին շարքերին,

Եվ հուշի նման հավիտյան անցած՝

Մնում է հանգում մի կորած շիրիմ...

Պոետը դիմելով դանգրահեր տղային, ասում է.

Լսում ես՝ այդտեղ իմ սիրտն է թաղած,—

Կոխստիր նրան քայլերով բո լույս,

Օհ, դու, գալիքի գանգրահեր տղա,

Մեր լավ գալիքի ոսկեհեր մանուկ...

Այս բանաստեղծությունն ունի խորը փիլիսոփայական բովան-
դակություն: Պոետն այստեղ արծարծել է կյանքի ու մահվան, անշնորհ
և գալիք սերունդների հաջորդականության հարցը, մի հարց, որ ար-
ծարծվել է համաշխարհային պոեզիայի մեջ և գերադասցապես լուծ-
վել պեսիմիստորեն:

Չարենցը գնում է կյանքի միջոցով մահը հաղթահարելու գորկիա-
կան ուղիով: Պոետի օպտիմիստական աշխարհազգացողությունն
արտահայտված է դարնան պայծառ գույների, պիոներական վաշտի
արծաթաձայն հնչյունների, կյանքի սիմվոլ հանդիսացող Բզնգուն
արևի զնգուն շողերով:

Նա ժխտում է մահը և հաստատում ապագա սերունդների հաղ-
թանակող կյանքը, նոր մեկնաբանություն տալով կյանքի ու մահվան
փոխհարաբերության «հավիտենական թեմային»: Կյանքը հաղթում է
մահվան, քանի որ մշտապես հանդես են գալիս նոր, լուսավոր սերունդ-

ներ, որոնք ընթանում են կյանքի հաղթական ուղիով և պոետը իր սիրտը, իր երզը կապում է այդ նոր սերունդների հետ: Ահա այս է «Գանգ-րահեր տղան» շափածո նովելի գաղափարական բովանդակությունը:

«Էպիքական լուսաբաց»-ը գեղարվեստական նոր նվաճում էր Չարենցի ստեղծագործության մեջ, որն առաջին հերթին հաստատում էր, որ պոետը խորապես ճանաչում է սովետական իրականությունը, իր պոեզիայով ընթանում է մեր կյանքի, մեր կուլտուրայի առաջավոր շարքերում:

«Էպիքական լուսաբաց» ժողովածուի ամենաբնորոշ գործերը Չարենցը գրել է Լենինգրադում, որն իր աշխատանքային հերոսականությունից խորը ազդեցություն է թողել գրողի ստեղծագործության վրա: Լենինգրադը նա անվանում է «Աշխատանքի մայրաքաղաք», «հավիտյան ստեղծագործիչ»: Պոետն այստեղ սովորում է լինել «տոկուն», «անդուլ» կերպով գնալ «սերունդների ճանապարհով»: Պոետն աշխատում է իր խոհերը, իր երգը, իր պոետական խոսքը կռել այնպես, «որ նա տոկա, կիզվի ու անդադար չողա սերունդների սրտում»: Նրա այս էտապի ստեղծագործական նշանաբանը սերունդների համար մեծ, մնացուն պոեզիա ստեղծելու հարցն է, սովետական կլասիկայի հարցը:

Չարենցը հաստատում է, որ սովետական կլասիկ պոեզիայի հիմքը պետք է կազմի մեր կյանքի բազմակողմանի ու խորը ճանաչողությունը, սոցիալիստական շինարարության մեծ առօրյան, նոր մարդու հարուստ ներքնաշխարհը:

Պայքարի «զենքը փոխելու», նոր էտապին համապատասխան վերականգնման հենթարկվելու այս պրոցեսը, որը դեռևս 1925 թ. սկսվել էր Չարենցի ստեղծագործության մեջ, «Էպիքական լուսաբաց»-ում դառնում է տիրապետող: Պատահական չէ, որ պոետը «Էպիքական լուսաբաց»-ը ամփոփում է հետևյալ մարտական տողերով.

Եվ կերգեմ կրկին:— Եվ ոչ մի ժանիք

ինձ չի բաժանի լենինյան դարից,

Ինչպես ոչ մի ուժ ինձ չի բաժանի,

Իմ շունդալից, պայծառ քնարից...

«Էպիքական լուսաբաց»-ում պոետը հասնում է նաև լեզվի ու ոճի նոր բարձրության: Խորությունը, սլարզությունը և պատկերավորությունը կազմում են նրա ոճի հիմնական հատկանիշները:

Մինչև «Էսլիքական լուսաբաց»-ը Չարենցը իր ստեղծագործական ճանապարհին ենթարկվել է մի շարք ազդեցությունների: Սկզբում նրա վրա իր մորմորուն երգով ազդել է Վ. Տերյանը, Չարենցը հետագայում հաղթահարել է Վ. Տերյանի ազդեցությունը, պահպանելով և զարգացնելով նրա արվեստի լավագույն փորձն ու տրագիցիաները: Այս Չարենցը խորապես ուսումնասիրում ու յուրացնում է Սայաթ-Նովայի պոեզիայի բովանդակությունն ու ձևը:

Միաժամանակ Չարենցի ստեղծագործությունը օրգանապես կապված է հատկապես ռուսական սովետական գրականության հետ: Ուժեղ է պրոլետարական հանճարեղ գրող Մ. Գորկու ազդեցությունը Չարենցի ստեղծագործության վրա: Չարենցի օպտիմիստական աշխարհադրացողությունը այդ ազդեցության ամենացայտուն արտահայտությունն է: Չարենցի պոեզիան ամենից ավելի մերձենում է սովետական ժամանակաշրջանի տաղանդավոր բանաստեղծ Մայակովսկու ստեղծագործությանը: Այս վերաբերում է ամենից առաջ նրանց ստեղծագործության բովանդակությանը, կոմունիստական պարտիականությանը, ինչպես և դեղարվեստական արտահայտչականությանն ու ձևերին:

Բայց այս ազդեցություններով հանդերձ Չարենցը խորապես ինքնատիպ բանաստեղծ է, որ զարգացնելով հայ գրականության բանաստեղծական առաջավոր տրագիցիաները, առաջ է մղել այն, հարուստացնելով նոր դադափարներով և գեղարվեստական նոր ձևերով:

«Էսլիքական լուսաբաց»-ից հետո Չարենցը 1933 թ. հրատարակում է «Գիրք ճանապարհի» ժողովածուն: Հակասական և բարդ են այս ժողովածուում արտահայտված տրամադրությունները:

Ժողովածուում տեղավորված մի շարք պոեմներում, շոշափելով հայ ժողովրդի պատմության, նրա անցած ուղիների հարցը («Պատմության քառուղիներով» պոեմների շարքը), Չարենցը հայ ժողովրդի պատմության գնահատության մեջ կատարել է նացիոնալ-նիհիլիստական մի շարք սայթաքումներ: «Պատմության քառուղիներ» պոեմում թերահաճատված է ժողովրդի դերը պատմության մեջ, անտեսված է դասակարգային պայքարը անցյալում, պատմական պրոցեսների գնահատմանը պոետը այստեղ մոտենում է մեխանիստորեն՝ անտեսելով նրա զարգացման բարդությունը: Այս պոեմում ապագան նույնպես դժագրվում է մշուշապատ: Վերոհիշյալ սխալները, սակայն, էսպես չեն առնչվում Չարենցի ստեղծագործության էությանն ու ոգուն:

Չարենցի սովետական ժամանակաշրջանի պոեզիան ղարգացել է սոցիալիստական ռեալիզմի ճանապարհով: Ռեալիզմի ռոմանտիկան կազմել է նրա ռեալիստական պոեզիայի բաղկացուցիչ մասը, որի միջոցով պոետը մեր իրականությունը դիտել է իր ղարգացման հեռանկարի մեջ:

Կոմունիստական պարտիականությունը կազմել է նրա պոեզիայի հիմնական ոգին, որն ամենից առաջ արտահայտվել է նրա վերսբեռմունքի մեջ դեպի կյանքը, նրա անհուն սիրո մեջ դեպի սովետական ժողովուրդը և անսահման առեւտության մեջ՝ դեպի ժողովրդի թշնամիները:

Իր գրական գործունեությունը սկսելով 1912 թ., Եղիշե Չարենցն անցել է թեև ոչ լայնքան երկարատև, սակայն խիստ հետաքրքիր մի ուղի: Այդ ուղին եղել է հակասություններով լի, սակայն միշտ էլ նա ընթացել է հակասությունների հաղթահարման վերընթաց ճանապարհով: Նա իր բոլոր ներվերով կապված էր սովետական իրականության հետ, արտահայտում էր մեր ժամանակի գաղափարներն ու տրամադրությունները:

Չարենցը որպես արվեստագետ մի կետի վրա չէր կանգնում, չէր կրկնում իրեն և ուրիշներին, անվերապահորեն մերժում էր շարունը:

Չարենցի ստեղծագործությունը խորապես ժողովրդային է: Բանվոր դասակարգը, ժողովուրդը, հասարակ մարդիկ նրա լավագույն ստեղծագործություններում հանդես են գալիս որպես պատմության կերտողներ, իրենց ուսերի վրա կրում պատմությունը:

Հանդես գալով նախառևոյացիոն շրջանում, Չարենցը որպես բանաստեղծ աճեց ու հզորացավ, ստեղծագործական բարձր վարպետության հասավ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի շնորհիվ: Չարենցի ստեղծագործությունը Սոցիալիստական ռևոլյուցիայի արգասիք է: Նա, ինչպես նշել է ընկեր Ա. Ի. Միկոյանը՝ «իր ստեղծագործությունը նվիրել էր մասսաների ռևոլյուցիոն գործունեության գովերգմանը և մեր պարտիայի ու Սովետական պետության հիմնադիր մեծ լենինին»: Այստեղից բխում է ռևոլյուցիոն պաթոսով և սովետական հայրենասիրության տոգորված Չարենցի պոեզիայի մեծ նշանակությունը սովետական ժողովրդի համար:

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿՆԵՐԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Նրեսնական թվականների առաջին տարիներին սովետական ժողովուրդը, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, պայքար է ծավալում կապիտալիստական տարրերի դեմ ամբողջ ճակատով՝ քաղաքում և գյուղում: Համատարած կոլեկտիվացման իրականացումով մանր սեփականատիրական գյուղացիական տնտեսությունները փոխադրվում են սոցիալիզմի ուղու վրա. վերացվում է կուլակությունը որպես դասակարգ, դրանով իսկ ոչնչանում է կապիտալիզմի վերականգնման հնարավորությունը մեր երկրում: Այս մեծագույն հեղաշրջումը իր հետևանքներով և նշանակությամբ հավասարազոր էր 1917 թվականի Հոկտեմբերյան ռևոլյուցիային:

Գյուղի սոցիալիստական վերակառուցման պատմական մեծ խնդիրը լուծվում է արդյունաբերության աննախընթաց վերելքի պայմաններում և դրա շնորհիվ: Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն Լենինի աշակերտ և նրա գործի մեծ շարունակող Ի. Վ. Ստալինի գլխավորությամբ ջախջախելով պարտիայի գլխավոր գծի՝ երկրի ինդուստրացման և կոլեկտիվացման դեմ դուրս եկած ժողովրդի թշնամիներին՝ տրոցկիստներին և բուխարինականներին, շարունակում է մեր երկիրը անշեղորեն տանել Լենինի գծած ճանապարհով: Բանվոր դասակարգի հերոսական աշխատանքով երկու հնգամյակում երկիրը դառնում է ինդուստրիալ հզոր երկիր: Դա հնարավորություն է տալիս ասպահովելու գյուղատնտեսությունը մեքենաներով, ամրապնդելու կոլտնտեսային կարգը գյուղում, ուժեղացնելու բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության հետ:

Երկրի վերափոխութեանը զուգընթաց վերափոխվում են բանվոր դասակարգն ու կոլտնտեսային գյուղացիութիւնը: Աշխատավորների մէջ մշակվում են սոցիալիստական կոլեկտիվիստական հարաբերութիւններ, սոցիալիստական վերաբերմունք աշխատանքի, հասարակական և հանրային սեփականութեան նկատմամբ:

Այս վերափոխման բնորոշ արտահայտութիւնն էր սոցիալիստական մրցութեան հայրենասիրական շարժման ծավալումը ամբողջ Սովետական Միութեան մէջ: Միլիոնավոր աշխատավորներ՝ բանվորներ և կոլտնտեսականներ, ներգրավվում են սոցիալիստական մրցութեան մէջ, սոցիալիստական մրցութիւնը դառնում է սովետական մարդկանց աշխատանքի մեթոդը: Երեսնական թվականների կեսերին սոցիալիստական մրցութիւնը իր բարձրագույն արտահայտութիւնն է գտնում առաջավորների շարժման մէջ: Արդյունաբերութեան, ինչպէս և գյուղատնտեսութեան առաջավորները՝ խորտակելով աշխատանքային հին նորմաները, սահմանում են աշխատանքի արտադրողականութեան նոր նորմաներ:

Սոցիալիստական Հայրենիքի բարօրութեան համար մղած պայքարում բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիութեան և ինտելիգենցիայի համագործակցութիւնը վերաճում է սովետական ժողովուրդների բարոյա-քաղաքական միասնութեան:

Սովետական ժողովրդի ձեռք բերած նվաճումների հիման վրա 1937 թ. ընդունվում է Սովետական նոր Կոնստիտուցիան (Հիմնական օրենքը):

Ապահովելով սոցիալիզմի պատմական հաղթանակը ՍՍՄՄ-ում, սովետական ժողովուրդը ձեռնամուխ է լինում պարտիայի ու կառավարութեան առաջադրած նոր խնդիրների կենսագործմանը՝ կոմունիստական հասարակութեան կառուցմանը մեր երկրում:

Սովետական Միութեան ժողովուրդների եղբայրական ընտանիքում սոցիալիզմի կառուցման, սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու ճանապարհին բարգաւաճում է Սովետական Հայաստանը: Շահագործումից, ազգային հալածանքներից և ճնշումից ազատագրված հայ ժողովուրդը՝ եղբայրական ժողովուրդների օգնութեամբ, հետամնաց գյուղացիական Հայաստանը դարձնում է առաջավոր արդյունաբերութեան, էլեկտրաէներգիայի և սոցիալիստական գյուղատնտեսութեան երկիր: Կառուցվում են Հայաստանի էներգետիկայի գիգանտները՝ Զորագէսն ու Փանաքեռգէսը, ստեղծվում են

միութենական և տեղական նշանակություն ունեցող արդյունաբերական խոշոր ձեռնարկություններ Երևանում, Լենինականում, Կիրովականում:

Գործարանների և ֆաբրիկաների, բարձրագույն դպրոցների, գիտության և կուլտուրայի հաստատությունների իր լայն ցանցով Երևանը դառնում է ռեսպուբլիկայի արդյունաբերական և կուլտուրական իսկական կենտրոն: Ընդհանուր պարտադիր յոթնամյա կրթության կիրառումով վերանում է անգրագիտությունը Հայաստանում: Պատրաստվում են տարբեր մասնագիտության հազարավոր կադրեր:

Հայ ժողովրդի սոցիալիստական կուլտուրայի աննախընթաց ծաղկման պայմաններում արժեքավորվում և համաժողովրդական ճանաչման է արժանանում նրա դարավոր կուլտուրան: 1939 թվականին «Սասունցի Դավիթ» հայկական էպոսի հազարամյա հոբելյանը, Պուշկինի, Շեվչենկոյի, Ռուսթավելու հոբելյանների նման, վեր է ածվում ամբողջ սովետական կուլտուրայի տոնակատարության: Նշելով այս փաստը, «Պրավդան» «Սասունցի Դավիթ» էպոսին նվիրված իր առաջնորդող հոդվածում պարզաբանում է, որ հայ ժողովրդի ստեղծագործությունը սովետական կուլտուրայի միջոցով մտնում է համաշխարհային կուլտուրայի գանձարանը, իր արժանի տեղը գրավում «Լիտական»-ի և «Ուկրաինական»-ի, ռուս ժողովրդի դյուցազնական էպոսի և ժողովրդական ստեղծագործության այլ գանձերի կողքին:

Էպոսի տոնակատարությանը հաջորդում են հայկական արվեստի տասնօրյակը, ապա՝ 1941 թվականին սովետահայ զրականության տասնօրյակը Մոսկվայում. համաշխարհային առաջավոր կուլտուրայի կենտրոնը բարձր է գնահատում հայ ժողովրդի ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական արվեստն ու դրականությունը:

Գրական կազմակերպությունների վերակառուցումը. սովետական գրողների համագումարը

Առաջին հնգամյակների տարիները սովետահայ գրականության բուռն զարգացման ժամանակաշրջան էին: Մեկը մյուսի ետեից երևան են դալիս գեղարվեստական բարձրարժեք երկեր՝ Ն. Զարյանի «Ռուշանի Քարափը» պոեմը, «Հացավան» վեպը, Գ. Դեմիրճյանի «Ներգլար» վիպակը, «Ընկերները» պատմվածքն ու «Երկիր հայրենի» դրաման, Ստ. Զորյանի «Մի կյանքի պատմություն» վեպը, Ն. Զարյանի և Գ. Սարյանի բանաստեղծությունները և այլ գործեր: Հանդես է գալիս գրական մի նոր սերունդ՝ Ս. Վահունի, Հր. Քոչար, Գ. Սևունց,

Աղավնի, Վ. Գրիգորյան, Թ. Հուրյան, Քր. Թափալցյան, Հ. Շիրազ, Ա. Գրաշի և ուրիշներ, որոնք մասնակցում են սովետահայ գրականության զարգացմանը:

Գրականության վերելքը Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ցուցաբերած ամենօրյա հոգատարության արդյունք էր, լենինյան ազգային քաղաքականության արդյունք, որ մշտապես պահանջել և պահանջում է ամենայն խնամքով աճեցնել սովետական ժողովուրդների ազգային կուլտուրան և գրականությունը: Պարտիան բարձր է գնահատում գրականության դերը աշխատավորների կոմունիստական դաստիարակության գործում և կոնկրետ միջոցառումներ է ձեռնարկում նրա զարգացումն ապահովելու ուղղությամբ:

1932 թ. ապրիլի 23-ին Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն որոշում է ընդունում «Գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին»: Այս որոշումը ստեղծագործական հետազոտական զարգացման լայն ճանապարհ է բացում գրականության համար:

Մինչև Կենտրոնական Կոմիտեի հիշյալ որոշումը, Միության մեջ, ֆինչպես և Հայաստանում, գործում էին գրականության և արվեստի առանձին կազմակերպություններ՝ ասոցիացիաներ, խմբակցություններ, որոնց մասին խոսվել է նախորդ գլուխներում: Կազմակերպական այս ձևը երեսնական թվականների սկզբներին արգելակում էր գրականության և արվեստի զարգացմանը: Խմբակային պայքար մղելով միմյանց դեմ, այդ կազմակերպությունները մոռացության էին մատնում սոցիալիզմի շինարարության ամենակենսական խնդիրները:

Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն նշում է, որ գրական աչք ասոցիացիաներն ու խմբակցությունները «կարող են սովետական գրողներին և գեղարվեստագետներին սոցիալիստական շինարարության խնդիրների շուրջը մեծագույն չափով մոբիլիզացնելու միջոցից վերածվել խմբակային ներփակություն սահմանելու միջոցի, կտրվել ժամանակակից քաղաքականության խնդիրներից, սոցիալիստական շինարարությանը համակրող գրողների և գեղարվեստագետների մի նշանակալից խմբից»:

Սովետական երկրի տնտեսական և կուլտուրական հաջողությունները վերափոխող ազդեցություն էին գործել անցյալից եկող ինտելիգենցիայի վրա, նա արդեն հավատում և համակրում էր սոցիալիզմի

հաղթանակին: Մյուս կողմից աշխատավորների միջավայրից աճել էին բավականաչափ գրական կադրեր: Ահա թե ինչու Կենտրոնական Կոմիտեն անհրաժեշտ էր գտնում բոլոր գրողներին համախմբել գրողների մեկ միասնական միություն մեջ:

Այդ որոշման համաձայն ամբողջ Սովետական Միության մեջ, այդ թվում և Հայաստանում, լիկվիդացվում են պրոլետարական գրողների սոցիալացիան, Աշխատավորական Գրողների Միությունը և մյուս խմբակցությունները և ստեղծվում է Գրողների մեկ միասնական Միություն:

Սովետական գրողներին միասնական միություն մեջ միավորելու աշխատանքը ամբողջացնում և ավարտում է Սովետական Միության գրողների առաջին համագումարը: Դրան նախորդում է Հայաստանի գրողների առաջին համագումարը, որտեղ քննության են առնվում սովետահայ գրականության գրողության, թեմատիկայի, լեզվի և այլ հարցեր. համագումարը ընտրում է պատվիրակություն, որը Ալեքսանդր Շիրվանզադեի ղեխավորությամբ մասնակցում է Սովետական գրողների առաջին համագումարին:

Սովետական գրողների առաջին համագումարը հրավիրվում է 1934 թ. օգոստոսին՝ Մոսկվայում: Համագումարին ներկա էին Գերմանիայի, Ֆրանսիայի, Չինաստանի, Դանիայի, Ճապոնիայի և այլ երկրների առաջավոր, դեմոկրատական գրականության ներկայացուցիչները:

Բաց անելով համագումարը, Մաքսիմ Գորկին հպարտությամբ նշում է սովետական գրականության համաշխարհային նշանակությունը, այն, որ սովետական գրականությունը աշխարհին ներկայանում է որպես առաջին սոցիալիստական երկրի բազմազգ ժողովուրդների գրականություն:

Իր ընդարձակ ղեկուցման մեջ Մ. Գորկին ցույց է տալիս, որ սովետական գրականությունը հանդիսանում է անցյալի առաջավոր կուլտուրայի օրինաչափ զարգացումը: Գորկին բացատրում է, որ սովետական գրականության ստեղծագործական մեթոդը սոցիալիստական ռեալիզմն է, որի էությունն է՝ ճշմարտացիորեն արտացոլել սովետական ժողովրդի կյանքը, հաստատել նրա առաջընթացը, և զրանով իսկ նպաստել սովետական մարզկանց կոմունիստական դաստիարակության դործին: Ընդգծելով, որ սովետական գրականության հերոսը նոր մարդն է, ստեղծագործական աշխատանքի մարդը, Գորկին պարզա-

բանում է, թե ինչպիսի մեծ հաջողությունների կարող է հասնել սովետական գրականությունը այդ նոր մարդու հոգեկան և բարոյական հարուստ ներքնաշխարհի պատկերումով:

Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի անունից համագումարում հանդես է գալիս Ա. Ա. Ժդանովը՝ Նշելով, որ սովետական գրականությունը ամենազաղափարական, ամենաառաջավոր և ամենառեկուլցիոն գրականությունն է աշխարհում, Ժդանովը բացատրում է, որ սովետական գրողների խնդիրն է ճանաչել կյանքը, ճշմարտացիորեն ցույց տալ սոցիալիզմի շինարարներին, պատկերել նրանց աշխատանքով ստեղծվող ներկան և ապագան:

Կենտրոնական Կոմիտեի անունից Ա. Ա. Ժդանովը գրողներին կոչ է անում համառ աշխատանքով բարձրացնել իրենց գաղափարական մակարդակը, գրական վարպետությունը, տիրապետել լեզվի կուլտուրային, ստեղծել գաղափարապես հագեցված, գեղարվեստական տեսակետից լիարժեք երկեր:

Համագումարը հսկայական նշանակություն է ունենում սովետական գրողների գաղափարական միասնության ամրապնդման գործում: Համագումարից հետո գրողները առավել պատասխանատվությամբ են ձեռնարկում մարքսիզմ-լենինիզմի ուսումնասիրությունը, առավել սրովյալմբ է ընթանում պայքարը բուրժուական իդեոլոգիայի, բուրժուական նացիոնալիզմի արտահայտությունների դեմ:

Սովետահայ գրողները ամրապնդում են ստեղծագործական կապերը եղբայրական ժողովուրդների գրողների, սովետական ռուս գրողների հետ: Վ. Մայակովսկու, Մ. Շոլոխովի, Ալ. Տոլստոյի, Ա. Ֆադեևի և մյուսների երկերից նրանք սովորում են սովետական կյանքը պատկերելու գեղարվեստական նոր միջոցներ, սոցիալիստական ռեալիզմի մեթոդը կիրառելու հմտություն:

Ինչպես միշտ, ստեղծագործական վարպետության հարցերում նրանց հստակ կողմնորոշում է տալիս Մաքսիմ Գորկին: Գորկու հոգևածները՝ սոցիալիստական ռեալիզմի, լեզվի, արձակի և դրամատուրգիայի մասին, կլասիկ գրականության լավագույն տրադիցիաների օգտագործման և այլ հարցերի վերաբերյալ, սովետահայ գրողներին օգնում են հաղթահարելու նյն դժվարությունները, որոնք երևան են գալիս նրանց ստեղծագործական աշխատանքի ընթացքում:

Գրողների գաղափարական գեղարվեստական դաստիարակության գործում միովենական մամուլի հետ միասին, մեծ աշխատանք է կա-

տարում ռեսպուբլիկայի պարտիական, ինչպես և գրական մամուլը («Գրական թերթ»՝ հիմնադրված 1932 թ., «Սովետական գրականություն և արվեստ» ամսագիր՝ սկսվում՝ «Խորհրդային գրականություն» 1934 թ.): Գրական յուրաքանչյուր երևույթ, նոր երկ արձագանք է գտնում մամուլում, վերլուծվում են նրա առավելություններն ու թերությունները, որը օժանդակում է գրողին բարձրացնելու իր վարպետությունը: Այս բոլորը ունենում է այն հետևանքը, որ գրականությունը հաղթահարում է վերացականության տարրերը և թեմատիկայի միակողմանիությունը: Գրականության հիմնական նյութը դառնում է սովետական մարդը իր հարուստ և բազմաբովանդակ կյանքով. պատկերվում է այդ նոր մարդու բնավորության կազմավորումը, սոցիալիստական վերաբերմունքը աշխատանքի և հասարակական սփյուռման նկատմամբ, ջերմ հայրենասիրությունը, ամեն տիպի խոշորագույն հաղթահարելու պատրաստակամությունը: Երեսնական թվականներին զգալիորեն ընդարձակվում է սովետահայ գրականության թեմատիկան:

Սոցիալիստական շինարարության արտացոլումը

Այս շրջանում սովետահայ գրականության հիմնական թեմաները սոցիալիստական շինարարության հաջողություններն էին, այն մեծագույն վերափոխությունները, որ կատարվում էին մեր երկրում՝ քաղաքում և գյուղում: Ստեղծված գեղարվեստական արժեքների թվում նշանակալից տեղ են գրավում մասնավորապես կոտնտեսային թեմաներով գրված երկերը:

Սոցիալիստական արդյունաբերությանը, նոր քաղաքների ու գործարանների կառուցողներին նվիրված աշխարհներին հաջորդում են գեղարվեստական ծավալուն գործեր: Երեսնական թվականների առաջին տարիներին լույս են տեսնում Ստ. Զորյանի «Ապիտակ քաղաք» վեպը, Արաբսի «Զիմմի» վիպակը, բեմադրվում է Դ. Դեմիրճյանի «Ֆոսֆորային շող» դրաման:

Վեպի նյութը դարձնելով նախկին գավառական, հետամնաց քաղաքներից մեկի վերակառուցումը, Ստ. Զորյանը պատկերում է սովետական մարդկանց ողևորությունը, շինարարական աշխատանքների մեծ թափը Հայաստանում: Իր դրամայում Դ. Դեմիրճյանը ներկայացնում է սոցիալիստական արդյունաբերության ամրապնդման համար սովետական ինտելիգենցիայի և բանվորների մղած պայքարը վնասարարների դեմ:

Հաջորդ տարիներին հրապարակվում է Արաղո՛ւ «Ջրվեժի ցուքում» վիպակը, որտեղ վերարտադրվում է վերափոխության այն բարդ պրոցեսը, որ ապրում է տեխնիկական ինտելիգենցիան բնության հարստությունները նվաճելու և օգտագործելու համար ծավալված պայքարում: Նույնանման պրոցեսներ է արտացոլում Գ. Սևունցը իր «Ծովախորշում» վիպակում, որ նվիրված է Բաքվի նավթարդյունաբերության օբյեկտներից մեկի՝ Իլիչի անվան ծովախորշի կառուցողներին:

Սոցիալիստական շինարարությունը, նրա հերոսների խոհերը, զգացումներն ու ձգտումները առավել հաջողությամբ պատկերվում են այդ տարիների սովետահայ լիրիկայում: Ն. Զորյանի, Գ. Սարյանի, Ա. Վշտունու, Սարմենի, Ս. Տարոնցու, Ս. Վահունու, Վ. Գրիգորյանի և մյուսների բանաստեղծություններում գովերգվում են կառուցվող քաղաքները, հիդրոէլեկտրակայաններն ու գործարանները, ստեղծագործական աշխատանքը, այդ աշխատանքը կազմակերպող և ոգեշնչող Կոմունիստական պարտիան:

Բայց երեսնական թվականների սովետահայ գրականությունը առանձին ուժով և խորությամբ արտացոլում է գյուղի սոցիալիստական վերակառուցումը՝ բացահայտելով նրա վերափոխող դերը հայ գյուղացու կյանքում: Սովետահայ գրողները արձագանքում են կոլտնտեսային շարժմանը նրա բոլոր էտապներում, ստեղծում գեղարվեստական բարձրարժեք երկեր այդ էտապներից յուրաքանչյուրի մասին՝ սկսած գյուղատնտեսական առաջին արտելների կազմակերպումից մինչև համատարած կոլեկտիվացումն ու կոլտնտեսային կարգի ամրապնդումը գյուղում:

Քսանական թվականների վերջերին լույս են տեսնում Դ. Դեմիրճյանի «Ռաշիդ» և Ստ. Զորյանի «Վարդաձորի կոմունը» վիպակները: Դրանց մեջ վերարտադրվում են համատարած կոլեկտիվացմանը նախորդող իրադարձությունները: Որոշակի նվաճում հանդիսանալով մեծ գրականության համար, այդ երկու երկերն էլ ունեն լուրջ թերություններ: Դ. Դեմիրճյանը չափից ավելի ընդգծելով լեռնային գյուղի առանձնահատկությունները, ներկայացնում է այն մեր ողջ երկրում տեղի ունեցող իրադարձություններից կտրված, որի հետևանքով գյուղացիական լայն շերտերի սոցիալական կուլակության դեմ վիպակում կրում է անկազմակերպ բնույթ: Ստ. Զորյանը, չնկատելով կուլակության դործադրած սոցիալական դերը, դասակարգային սոցի-

քարը պատկերում է թույլ կերպով, համարյա որպես ավարտվող երևույթ:

Դասակարգային սուր պայքարը իր նոր ձևերով համատարած կոլեկտիվացման, ինչպես և հետագա տարիների ժամանակաշրջանում գեղարվեստական մեծ ուժով արտացոլված է Ն. Զարյանի «Ռուշանի քարափը», «Սաքո Միկինյան» պոեմներում և «Հացավան» վեպում: Հաջորդաբար հրապարակված այս երկերում Զարյանը վերարտադրում է կոլտնտեսային կարգի աստիճանական հաղթանակը: Հեղինակը բացահայտում է դյուղացիության միջավայրում արմատավորվող մարդկային նոր, սոցիալիստական հարաբերությունները, ստեղծում նոր մարդկանց կերպարների մի ամբողջ շարք:

Գյուղի սոցիալիստական վերակառուցման խնդիրներն են արծարծվում նաև Արազու «Լուսնի շողերով» վիպակում և Քր. Թախլացյանի «Կյանքի արշավույթը» վեպում:

Ինդուստրացման և կոլեկտիվացման թեմաներով գրված երկերի հետ միասին սովետահայ գրողները այդ տարիներին գեղարվեստական արժեքավոր գործեր են ստեղծում նաև այլ թեմաներով:

Քաղաքացիական կռիվների արտացոլումը

Մեր ժողովրդի ռեզիստցիոն անցյալի գեղարվեստական վերարտադրության խնդիրը սովետական գրականության ամենակենսական խնդիրներից մեկն է: Պատկերելով այն անձնուրաց պայքարը, որով ձեռք է բերվել և պահպանվել սովետական երջանիկ ներկան, գրականությունն օգնում է պարտիային և կառավարությանը՝ դաստիարակելու մասսաներին Սովետական Հայրենիքի նկատմամբ նվիրվածության ոգով:

Սովետահայ գրողները երեսնական թվականներին հաճախ անդրադարձել են քաղաքացիական կռիվների, Հայաստանում սովետական կարգերի հաստատման դեպքերին, այդ թեմաներով ստեղծել տարբեր ժանրի բազմաթիվ գործեր:

Ցարիցիների հեռոսական պաշտպանության դեպքերի հիման վրա Ն. Զարյանը գրում է «Իշուցադնադիրը» էպոպեան, գեղարվեստորեն բացահայտում Կոմունիստական պարտիայի դերը Սովետական Հայրենիքի պաշտպանության կազմակերպման գործում: Ն. Զարյանի, Գ. Սարյանի, Հ. Շիրազի, Ս. Վահունու, Ս. Տարոնցու ստեղծագործություններում հաջողությամբ պատկերվում են քաղաքացիական կռիվների սլարտիզանը, Սովետական Բանակի մարտիկը, հրամանատարն

ու կոմիսարը, նրանց մարտական սխրագործությունները: Այս տեսակետից հատուկ ուշադրության են արժանի Ս. Վահունու բալլադները. չեմք լիբիզմով գրված նրա «Բալլադ պարտիզանի, նրա կնոջ և ձիու մասին» ստեղծագործությունը սովետահայ գրականության լավագույն գործերից մեկն է: «Հենակավորը» բանաստեղծության մեջ Ս. Տարոնցին պատկերում է քաղաքացիական կռիվների հերոսին, վերադարձված Սովետական Հայրենիքի համար անձնվիրաբար մարտնչելու նրա պատրաստակամությունը: «Լուռեցի Ավադը» պոեմով Տարոնցին փորձում է ներկայացնել ռևոլյուցիոն պայքարի մեծ ուղի անցած հայ բանվորի կերպարը:

Քաղաքացիական կռիվների հերոսականությունը վարպետորեն է պատկերել Դ. Դեմիրճյանը իր «Ընկերները» պատմվածքում: Նկարագրելով երկու երիտասարդների անձնուրաց պայքարը, նվիրվածությունը ռևոլյուցիայի գործին, Դեմիրճյանը վերարտադրում է դաշնակցության լծից ազատագրվելու և Սովետական Ռուսաստանին միանալու հայ ժողովրդի անկոտրելի ձգտումը: Քաղաքացիական կռիվները Հայաստանում ստեղծագործական նյութ է հանդիսացել նաև սովետահայ արձակի, ինչպես և դրամատուրգիայի այլ ներկայացուցիչների համար:

Նրեսնական թվականների կեսերին բեմադրվում է Վ. Վաղարշյանի «Օղակում» դրաման, որի մեջ պատկերվում են քաղաքացիական կռիվները Զանգեզուրում: Հեղինակը մերկացնում է դաշնակցական կառավարության և դաշնակցություն պարտիայի արյունահեղ, թալանչիական գործունեությունը Հայաստանում: Ցույց տալով այն անօրինակ ճնշումը, որին ենթարկվում է հայ և ադրբեջանցի պոլիտացիությունը, Վաղարշյանը վերարտադրում է եղբայրական երկու ժողովուրդների լաճող ցասումն ու համատեղ պայքարը սովետական կարգերի հաստատման համար: Դրամայում հաջողությամբ է ներկայացված գյուղացիության ուժեղացող համակրանքը կոմունիստների, Կարմիր Բանակի նկատմամբ, որի օգնությամբ ժողովուրդը ազատագրում է Հայաստանը:

«Օղակում» պիեսի որոշ հերոսներ գծագրված են մակերեսորեն, լեզուն առանձին դեպքերում խճողված է Ղարաբաղի բարբառի անհարկի գործածությամբ: Այս թերություններով հանդերձ Վ. Վաղարշյանի պիեսը նշանակալի երևույթ էր այդ տարիների սովետահայ դրամատուրգիայի մեջ:

Դաշնակցության տիրապետության դեմ մղած հայ ժողովրդի պայքարն է արտացոլել նաև Ա. Գուլակյանը այդ տարիներին գրած իր «Արշալույսին» դրամատում: Պիեսի համար նյութ են ծառայել 1920 թ. իրադարձությունները Դիլիջանի գավառում: Հեղինակը պատկերում է կոմունիստների անձնվեր դործունեությունը, դեղարվեստորեն ցույց է տալիս, որ Սովետական իշխանության մեջ հայ ժողովուրդը տեսնում էր իր փրկությունը և որ այդ փրկությունը նա գտավ ռուս ժողովրդի եղբայրական օգնությամբ:

Գուլակյանի պիեսի լուրջ թերությունն այն է, որ ներկայացնելով քաղաքացիական կոնֆլիկտի հերոսներին, հեղինակը նրանց փոխհարաբերությունների մեջ մտցնում է սենտիմենտալիզմի տարրեր:

Երեսնական թվականներին սովետահայ գրականությունը ստեղծում է նաև հայ ժողովրդի պատմական հեռավոր ժամանակաշրջաններն արտացոլող երկեր. դրանց մեջ նշանակալից է Դ. Դեմիրճյանի «Երկիր հայրենի» դրաման: Դրամայի գործողությունը կատարվում է XI դարում: Հեղինակը պատկերում է հայ ժողովրդի պայքարը բյուզանդական զավթիչների և հայ աղնվականության այն տարրերի դեմ, սրունք փորձում են Անին վաճառել օտարերկրյա բռնակալներին: Դիմելով անցյալի այս հերոսական դրվագներին, Դեմիրճյանը անմիջականորեն արձագանքում է սովետական ժողովրդի հայրենասիրական գաղափարներին, բորբոքում է ասեկությունը դեպի իմպերիալիստական դադոթարարները: Այդ պատճառով սովետական հանդիսատեսը ջերմությամբ է ընդունում Դեմիրճյանի պիեսը, որը Հայրենական պատերազմի ընթացքում ևս չէր իջնում մեր թատրոնների բեմից:

Ժողովրդի կյանքի և պայքարի գործին անմիջականորեն մասնակցելը, նրա կենսական պահանջներին արձագանքելը սովետական, գրականության զարգացման ամենահիմնական նախապայմանն է: Այդ մասնակցությամբ է գնահատվում գրողի դերը ժողովրդի կյանքում: Այս ըմբռնումը դեղարվեստական մեծ ուժով արտահայտել են Ջորենյը «էպիքական լուսաբաց»-ում և Ն. Զարյանը «Ֆիրդուսի» պոեմում:

Սոցիալիստական շինարարության բոլոր ճակատներում ժողովրդի անձնուրաց պայքարին ակտիվորեն մասնակցելու նշանաբանով է ընթանում սովետահայ գրողների գրական գործունեությունը: Նրանցից ամեն մեկը ստեղծագործական իր ուրույն ձայնով մասնակցում է սոցիալիզմի կառուցման և ամրապնդման գործին:

Քսանական թվականների վերջերին սովետահայ արձակի ասպարեզն է մտնում Արաքսը։ Արաքս Ավետիսյանը ծնվել է 1903 թ. Ղարաքիլիսայում (Կիրովական), ռուսացի ընտանիքում։ Սովետական իշխանություն առաջին տարիներին նա ավարտում է միջնակարգ դպրոցը Թբիլիսիում, ապա կոմբիտական աշխատանք կատարում Հայաստանի տարբեր շրջաններում։ Որոշ ժամանակից հետո նա ստանում է նաև բարձրագույն կրթություն։ Կոմերիտական աշխատողի իր բազմազան ապավորությունները Արաքսը վերարտադրել է «Կոմերիտական պատմվածքներ», «Ալվանը», «Նարգոն» և այլ գործերում։ Այս պատմվածքների նյութը վերակառուցվող դշուզն է, վերափոխվող մարդիկ. դրանց մեջ Արաքսը առանձնակի տեղ է հասկացնում մասնավորապես կնոջ կյանքում տեղի ունեցող փոփոխություններին։ Նա ցույց է տալիս, որ կինը, գեղջկուհին, ճանաչելով իր իրավունքները, դառնում է սովետական հասարակության ակտիվ քաղաքացի։

Նույն այս գաղափարն է առաջ քաշված 1931 թ. լույս տեսած Արաքսի «Զիմմի» վիպակում։ Զիմմին, որ աղքատ ծնողների աղջիկ է, դառնում է հարվածաշին բանվորուհի, կոմունիստ. նա ակտիվորեն մասնակցում է գործարանի կյանքին վերաբերող բոլոր հարցերի լուծմանը։ Զիմմին մենակ չէ, նրա նմանները շատ են գործարանում. այդ նրանք են մերժում և մերկացնում դիրեկտորի և գլխավոր ինժեների առաջարկը, որ արվում է բանվորների ստեղծագործական նախաձեռնությունը ճնշելու նպատակով, նրանց ուժերով է կազմակերպվում հասարակական սեփականության պահպանումը, սոցիալիստական մրցության ծավալման գործը։

Արաքսը վիպակում ներկայացնում է քանվորական կոլեկտիվ, որ պայքարում է բարձր արտադրանք ապահովելու համար։ Բայց նա չի կարողանում պատկերել այդ կոլեկտիվը կազմող առանձին մարդկանց՝ նրանց հոգեբանության և ձգտումների ամբողջ բազմազանությունը։ Հեղինակին չի հաջողվում անհատականացնել իր հերոսներին։

Հասարակական և զրուկան դգալի աշխատանք է կատարում Արաքսը Հայրենական պատերազմի ժամանակաշրջանում։ Այդ տարիներին հրապարակված իր գործերում նա պատմում է ռազմաճակատի և թիկունքի սովետական մարդկանց սխառագործությունների մասին։

Հայրենական պատերազմի հաղթանակի առթիվ գրած «Օհան հայրիկը» պատմվածքում Արաքսը վերարտադրում է ծերունի Օհանի

մարդկայնությունը. էգոիստական բոլոր զղացումներից վեր կանգնած սովետական մարդը՝ Օհան հայրիկը, որի միակ որդին զոհվել է ռազմաճակատում, բաց սրտով է ընդունում պատերազմից վերադարձած հարևանին, սիրում նրան ինչպես հարազատ որդուն:

Արաքսի հետպատերազմյան շրջանի գործերից ուշադրավ է նաև «Արձանը» պատմվածքը: Հետաքրքրական է պատմվածքի գեղարվեստական մտահղացումը. Արսենը քանդակում է ռազմաճակատի իր մարտական ընկերների սխրագործությունները, ստեղծում խիզախ մարտիկների կերպարներ: Հանկարծ պարզվում է, որ առավել խնամքով կերտված մարտիկի արձանը ներկայացնում է այն երիտասարդին, որին սիրել է Արշալույսը: Իսկ Արշալույսը այն աղջիկն է, որին սիրում է քանդակի հեղինակը՝ Արսենը: Աղջիկը ճանաչում է քանդակի մեջ կենդանացած իր սիրածին: Արսենի համար այսուհետև Արշալույսը իր զոհված ընկերոջ սիրած աղջիկն է. նա ավելի քան հրեւէ, ամբողջ խորությունբ զգում է մեր ժամանակի մարդկանց բարձր առաքինությունները՝ ընկերոջ հերոսականությունը, Արշալույսի մեծ սերը, սովետական մարդկանց ազնվությունն ու վեհությունը կատարելապես պատկերելու արվեստագետի մեծադույն պատասխանատվությունը:

Այս շրջանում Արաքսը դրոմ է բազմազան թեմաներով այլ պատմելվածքներ ևս, մասնակցում սովետահայ մանկական դրականության զարգացման գործին. մանկական պատմվածքների նրա ժողովածուները լայնորեն ծանոթ են մեր մանուկ ընթերցողներին:

ՍԱՐՄԵՆԸ

Սարմենը (Արմենակ Սարգսյան) ծնվել է 1901 թվականի Արևմտյան Հայաստանի Ռշտունիք գավառի Պախլանց գյուղում:

Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին թյուրքական ենիչերիները ավերում են նաև Սարմենի հայրենի գյուղը: Կորցնելով հարազատներին, նա կոտորածներից փրկված համադյուղացիների հետ դադթում է Անդրկովկաս, ապաստանում սկզբում Գանձակի (Կիրովաբադ), ապա Ալեքսպոլի (Լենինական) որբանոցներում:

Շուտով վերջ է տրվում նրա որբանոցային ծանր կյանքին: Հայաստանում հաղթանակում է Սովետական իշխանությունը: Լենինականում Սարմենն ավարտում է միջնակարգ դպրոցը. հենց այստեղ էլ նա ստանում է իր բանաստեղծական առաջին մղումը և 1925 թ. հանդես գալիս «Դաշտերը ժպտում են» ոտանավորների գրքույկով: Այնու-

հետև նա շարունակում է կրթությունը Երևանի պետական համալսարանում և, ավարտելով պատմագրական ֆակուլտետը, զբաղվում է գրական և մանկավարժական աշխատանքով:

Իր ժողովրդի կյանքում առաջացած արմատական հեղաշրջումը Սարմենը պատկերում է երեսնական թվականների կեսերին հրապարակած «Թուիչք» ժողովածուում, ինչպես և հետագա տարիների ստեղծագործությունների մեջ:

«Թուիչք»-ը մի փորձ է պատկերելու Հայաստանի անցյալը, սովետական ներկան և ապագան:

«Հերոսապատում» բանաստեղծության մեջ Սարմենը վերարտադրում է քաղաքացիական կռիվները Հայաստանում, փորձում ցուցադրել Ղուկաս Ղուկասյանի հերոսական կերպարը: Բանաստեղծական ջերմությամբ նա գովերգում է այդ պայքարով ստեղծված սովետական կարգերը, սոցիալիստական շինարարության մեծ թափը.

Ինչպե՞ս սառնությամբ է պիկական
Երգեմ վերելքը մեր վիթխարի,
Երբ դասակարգը իմ հաղթական
Փոխել է ընթացքը հին աշխարհի:
Նրբ տաս տարում կտրում ենք անցյում
Տարածությունը մի ձիգ դարի,—

գրում է նա:

Սոցիալիզմի կառուցման պայթյունը ոգեշնչում է բանաստեղծին պատկերելու մեր երկրի ապագան. «Սևան քաղաք» բանաստեղծության մեջ և «Լաթիֆե» պոեմում նա ստեղծում է ապագայի մի շարք գունեղ պատկերներ: Լաթիֆեն, համանուն պոեմի հերոսուհին, որ մասնագիտությամբ ճարտարապետ է, պոետին ուղեկցում է դեպի լեռնային քրդական գյուղը: Պոետը հիացած է գյուղի բազմահարկ և շքեղ շենքերով, այգիներով և կոլտոկրական հաստատություններով: Ահա և սկսումա-աղագրական թանգարանը. այստեղ պահպանվող «հին սայլը», «արորը ծուլիդ», «ձեթի ճրագը», ցնցոտիները հագին, մահակը ձեռին հովվի քանդակը ներկայացնում են «անցած մի դար»: Թանգարանից դուրս միանգամայն նոր աշխարհ է, կոմունիստական հասարակության մարդկանց աշխարհը, որոնք հմտորեն օգտագործում են գյուղատնտեսական նորագույն մեքենաները և վիճում միջազգային խնդիրների շուրջը:

Բայց, նկարագրելով այս վերափոխությունները՝ քրդական գյուղի, Սեան քաղաքի արտաքինը, հեղինակը չի կարողանում ստեղծել մարդկանց կենդանի կերպարներ։ Նրա հերոսուհու մարդկային հատկությունները հայտարարվում են և ոչ թե բացահայտվում գործողությունների միջոցով։

Սարմենի ստեղծագործական հետագա հասունացմանը մեծ շնորհով օգնում է ժողովրդական «Լենին փաշա» էպոսի, ինչպես և ժողովրդական բանահյուսության այլ նմուշների մշակումը։ Այդ մշակումներից հաջողված է «Խանդութ Խաթուն» պոեմը, որի մեջ նա կարողացել է պահպանել ժողովրդական ստեղծագործության սլատերաւովորությունը և էպիկական շունչը։

Միաժամանակ Սարմենը հանդես է գալիս բանաստեղծությունների նոր ժողովածուներով, որոնց մեջ դավերգում է ազատ աշխատանքը, սովետական ժողովուրդների բարեկամությունը, Սոցիալիստական Հայրենիքը։

Բանաստեղծի հայրենասիրությունը բուռն կերպով արտահայտվում է Հայրենական պատերազմի ժամանակաշրջանում։ «Հայրենիք» բանաստեղծության մեջ, նկարագրելով հայ ժողովրդի դարավոր պայքարը օտարերկրյա զավթիչների դեմ, պոետը հուզմունքով պատմում է, որ հայ ժողովրդին հայրենիք տվեց Հոկտեմբերյան ռեյուցիան։ Սարմենը խորը լիրիզմով է բնութագրում Հոկտեմբերյան ռեյուցիայի նշանակութունը մեր ժողովրդի համար։

Մեր սիրտը թնդաց, մեր կյանքը դարձավ խորն ու իմաստուն
Օվկիանոս կարեց մեր ուժի, հույսի յճակը փոքրիկ,
Ողբի և որբի երկիրը դարձավ մեծ ցնծության տուն,
Ծնվեց մի ազատ, անսպառ հայրենիք։

«Թուրք» բանաստեղծության մեջ ֆաշիզմի սպառնալիքը համեմատելով թունտ թրի հետ, հեղինակը լիրիկական ջերմությամբ թվարկում է սովետական տարիներին ձեռք բերած հայ ժողովրդի նվաճումները, ռալմաճակատի հայ մարտիկներին կոչ անում հանուն այդ մեծ նվաճումների պաշտպանության՝ անխնա կերպով բնաջինջ անել թըշնամուն։ Սարմենը ճիշտ էպիտետներ և համեմատություններ է գտնում մեր ժողովրդի հատկությունները բնութագրելու և թշնամու նկատմամբ իր ատելութունն արտահայտելու համար։ Այդ տարիներին գրված «Այց գյուցադուններին», «Գովք» և այլ բանաստեղծություններում

Սարմենը փառաբանում է սովետական մարտիկներին պարագործությունները, դրվատում ժողովրդի հերոսական աշխատանքը թիկունքում:

Սարմենի հետպատերազմյան շրջանի երգերը նվիրված են սովետական ժողովրդի ստեղծագործ աշխատանքին, նրա լսալաղ կյանքին: Այդ թեմաներով գրված բանաստեղծությունների հետ միասին Սարմենը վերարտադրում է այն արհամիրքները, որոնց ենթարկվել է հայ ժողովուրդը համաշխարհային առաջին պատերազմի օրերին:

«Կառավարական տան առջև» բանաստեղծության մեջ կառավարական քանդակազարդ տան նկարագրությամբ Սարմենը արտահայտում է այն գաղափարը, որ սովետական ժողովուրդներին ընտանիքում իրականացել է հայ ժողովրդի դարավոր երազանքը՝ հայրենիք և սեփական պետականություն ունենալու մասին, սոցիալիստական բուլանդակությամբ վերածնվել նրա ազգային կուլտուրան: Նա ընդգծում է, որ ժողովուրդների եղբայրական ընտանիքում հայ ժողովուրդը վերջնականապես փրկվել է կոտորածներից և ազգային հալածանքներից:

Բայց միշտ էլ, որ Սարմենին հաջողվում է այդպիսի կոնկրետությամբ մարմնավորել իր մտահղացումները: Բանաստեղծության նյութ դարձնելով հաղթանակի կամուրջը, նա չի կարողանում շոշափելի, հստակ պատկերով բացահայտել, թե Հաղթանակի կամուրջի հետ կապված կոնկրետ ի՞նչ գաղափար է ցանկանում մատուցել ընթերցողին. ստացվում է ինչ որ կամուրջի վերացական գովերգություն:

Սարմենի ստեղծագործության մեջ հատուկ տեղ են գրավում այն բանաստեղծությունները, որոնք ձայնագրվել են կոմսյուլիտորների կողմից և լայն մասսայականություն են վայելում:

Երեսնական թվականներին գրականության

ՔՐԻՍՏՈՓՈՐ

ԹԱՓՈՒԼՔՔԱՆ

ասպարեզ են իջնում նոր արձակագիրներ: Ընթերցողների ուշադրության է արժանանում

Քրիստափոր Թափալցյանը:

Թափալցյանը ծնվել է 1911 թ. Արևմտյան Հայաստանի Բուլանլիսի գավառի Կոփ գյուղում, գյուղացու ընտանիքում: Նրա հինգ տարին դեռ էլի լրացել, երբ նրա ծնողները, փախչելով թյուրքական չաթաղանից, հաստատվում են Անդրկովկասում: 1923 թ. նրանք փոխադրվում են Լենինական. այստեղ Թափալցյանը ստանում է միջնակարգ կրթություն, այնուհետև զբաղվում է մանկավարժական աշխատանքով: 1933 թ. նա ընդունվում է Երևանի պետական համալսարանի

Ֆիլոլոգիական ֆակուլտետը և ուսանողական տարիներին ավարտում իր գրական առաջին գործը՝ «Վիկտորիա» վեպը, որ հրապարակվում է 1937 թ.:

Վիկտորիան, վեպի հերոսուհին, նախկին առևտրականի աղջիկ է, քաղքենի, թեև կրթություն է ստացել սովետական դպրոցում: Եվ ահա նա մեկնում է գյուղ աշխատելու Աշխատանքի ընթացքում, ուսուցիչների և շրջանի սյարտիական աշխատողների միջավայրում նա վերափոխվում է, խզում հարաբերությունները սովետական կարգերին թշնամանքով վերաբերվող հոր, ինչպես նաև պորտաբույժ երիտասարդի հետ, որին սիրում էր, և դառնում է նոր մարդ:

Թեև երբեմն մակերեսորեն, Թափալցյանին հաջողվել է վերադարձադրել Վիկտորիայի վերափոխությունը, ինչպես և այդ տարիներին ծավալված կուլտուր-լուսավորական աշխատանքը գյուղում: Հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես պարտիայի ղեկավարությունը նոր ստեղծվող սովետական ինտելիգենցիայի ջանքերով աստիճանաբար վերացվում է անդրադիտությունը գյուղում: Բայց այս խնդիրները երիտասարդ արձակադիրը չի վարդապետում ղուդակցել հասարակական աշխատանքի մեծ վերափոխությունների հետ, որոնք իրականացվում են համատարած կոլեկտիվացման տարիներին: Վեպում թույլ է պատկերված դասակարգային պայքարը: Կուլակության բացահայտ և թաքնված հարձակումները, որոնց նպատակն էր վիժեցնել կոլեկտիվացումը՝ հեղինակը ներկայացնում է որպես անկյուններում տեղի ունեցող պասսիվ փոփոխված:

Նշված խնդիրներին Թափալցյանը անհամեմատ խորն է անդրադառնում 1939 թ. լույս տեսած «Կյանքի արշալույսը» վեպում: Այստեղ վերադարձադրվող դեպքերը վերաբերում են համատարած կոլեկտիվացմանը հաջորդող ժամանակաշրջանին, երբ հիմնական խնդիրը գյուղում կոլտնտեսային կարգի ամրապնդումն էր:

Կոլտնտեսության ամրապնդման նպատակին են ուղղված Թափալցյանի վեպում նկարագրվող գյուղի կոլտնտեսականների և սյարտիական ու կոմերիտական ակտիվի ջանքերը: Տեսնելով կոլտնտեսության տնտեսական հաջողությունները, կոլեկտիվ աշխատանքի առավելությունները, կոլտնտեսության մեջ են մտնում վերջին մենատնտեսները: Հեղինակը ցույց է տալիս, որ աշխատավոր գյուղացիությունը կոլտնտեսային ուղին համարում է աղքատությունից փրկվելու միակ ելքը:

Սա կատաղեցնում է սոցիալիզմի թշնամիներին. նախկին կոլակ իռքան, տեր Նազանը, կոլտնտեսության մեջ բուն դրած դաշնակցական տարրերը՝ Լյուվոն, Ռուբենը և մյուսները ձգտում են ներսից պայթեցնել կոլտնտեսությունը: Եվ որովհետև բացահայտ պայքարի միջոցով իրենց նպատակին չեն կարող հասնել, դիմում են պայքարի այլ ձևերի. գաղտնի կերպով կոտորում են կոլտնտեսության անասունները, հրդեհում դեղերը, փորձում շարքից հանել պարտիական ակտիվ գործիչներին, աշխատավոր մենատնտեսներին հեռու պահել կոլտնտեսությունից:

Թափալցյանը նկարագրում է ծանր պայքարով ձեռք բերված հաղթանակը, այդ հաղթանակի համար մարտնչող մարդկանց՝ Արսենին, Հովսեփին, Աշոտին և մյուսներին, վերաբարձրում նրանց հասարակական ձգտումները, հոգեբանությունը, կենցաղը: Սակայն հենց այստեղ էլ, տուրք տալով նատուրալիզմին, հեղինակը վեպը ծանրաբեռնում է կենցաղային ավելորդ մանրուքներով, ձգձգում է վեպը:

Հեղինակն անփույթ է նաև լեզվի նկատմամբ. հմտորեն օգտագործված ժողովրդական հյուլթեղ դարձվածքներն ու արտահայտությունները հաճախ լուծվում են խճողված, անհարթ նախադասությունների մեջ:

Հիմնականում նույն այս բնույթի թերություններ ունի նաև Թափալցյանի «Պատերազմ» վեպը, որի առաջին հատորը հրատարակվել է 1946, իսկ երկրորդը՝ 1949 թվականին:

Քրիստափոր Թափալցյանը սովետահայ գրականության մեջ առաջիններից մեկն էր, որ փորձեց դեղարվեստական լայն կտավի վրա պատկերել Հայրենական պատերազմի իրադարձությունները: «Պատերազմ» վեպի առաջին հատորում նկարագրվում է մինչպատերազմյան խաղաղ կյանքը Հայաստանում, սոցիալիստական քաղաքն ու գյուղը իրենց բազմաղան ներկայացուցիչներով: Երկրորդ հատորում վերաբարձրվող դեպքերը արտացոլում են Հայրենական պատերազմի առաջին շրջանը, երբ Սովետական Բանակը, նահանջելով նախապատրաստվում էր վճռական, ջախջախիչ գրոհների: Հեղինակը ցույց է տալիս սովետական մարդկանց հայրենասիրությունը, նահանջի ծանրությունը, ֆաշիստական զավթիչներին Հայրենիքից օր առաջ դուրս շարժելու պատրաստակամությունը, ստեղծում հայրենասեր մարտիկներին՝ Վոլկովի, Արամի և մյուսների կերպարները:

«Պատերազմ» վեպն անավարտ է. լույս տեսած առաջին երկու

հատորում արտահայտվել են լուրջ վրիպումներ. կոնֆլիկտները արկա-
կան չեն, առանձին հերոսներ օժտված չեն սովետական ձրիտա-
սարդին հատուկ դրական գծերով, արատներ ունի վեպի կառուցվածքը:



Առաջին հնգամյակների տարիներին սովետահայ գրականու-
թյունն ապրում փ նոր վերելքի ժամանակաշրջան: Գրականության
հիմնական բովանդակությունը դառնում է սովետական բազմաբովան-
դակ կյանքը, սովետական մարդկանց հարուստ ներքնաշխարհը: Ըն-
դարձակվում է գրականության թեմատիկան, բարձրանում է գրողների
գրական վարպետության մակարդակը. ստեղծվում են տարբեր ժանրի
մի շարք բարձրարժեք երկեր, որոնք սովետական կյանքի իրենց լայն
ընդգրկումով, գաղափարական խորությամբ և գեղարվեստական լիար-
ժեք ձևով հաստատուն տեղ են դրավում սովետահայ գրականության
սլատովության մեջ:





ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Սովետահայ գրականության ականավոր վարպետ Դերենիկ Դեմիրճյանն անցել է ավելի քան հիսնամյա ստեղծագործական ուղի։ Նրա առաջին բանաստեղծությունները տպագրվել են դեռևս անցյալ դարի վերջերին, երբ Ռուսաստանում և Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման և բանվորական շարժման հողի վրա սկսել է լայնորեն տարածվել մարքսիզմը։

Պատմական այդ ժամանակաշրջանում հայ գրականության մեջ ավելի խորացավ հակադրությունը և պայքարը դեմոկրատական տենդենցների և բուրժուական նացիոնալիզմի միջև։ Հակառակ նացիոնալիստական գրականության, որը հրահրում էր ազգային թշնամանք, ձգտում էր հեռու պահել հայ աշխատավորական մասսաներին Անդրկովկասի պրոլետարիատի ռեվոլյուցիոն շարժումներից, հայ ռեալիստական գրականության վարպետները՝ Աղայանը, Թումանյանը, Շիրվանդադեն և ուրիշները, ընթանում էին ուղի գրականության լավագույն տրադիցիաների ուղիով, հայ ժողովրդի ազատագրության հարցը կապում ուռն մեծ ժողովրդի պատմական բախտի հետ։ Դ. Դեմիրճյանը հայ մեծ ռեալիստների կրտսեր ժամանակակիցն էր։ Հեռու լինե-

լով նացիոնալիստական գաղափարախոսությունից, թեև անհետևողականորեն, որոնումներով և սայթաքումներով, բայց նա գնում էր դեմոկրատական դրականության հետքերով: Հաղթահարելով իր վաղ շրջանի բանաստեղծություններին հատուկ անկումային տրամադրությունները, իր սխալ և վերացական ըմբռնումները կյանքի մասին, Դեմիրճյանը նախաստիճական շրջանի իր հաջողված գործերում ճշտորեն վերարտադրեց հայ ժողովրդի սոցիալական և ազգային ճնշման մի քանի բնորոշ գծերը:

Դեմիրճյանի ինքնատիպ տաղանդը բուռն կերպով դարգացավ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից հետո: Սովետական կարգերը արվեստագետի համար ստեղծեցին բոլոր պայմանները սերտորեն կապվելու ժողովրդի հետ և դեղարվեստորեն արտահայտելու հայ ժողովրդի նոր կյանքի գծերը: Դեմիրճյանը ակտիվորեն մասնակցել է սովետահայ գրականության զարգացման գործին, իր պատմվածքների, դրամաների և վեպերի մեջ կերտել սոցիալիզմ կառուցող մարդու կերպարը:

Կյանքը

Դերենիկ Դեմիրճյանը ծնվել է 1877 թ. Ախալքալաքում: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի հայոց ծխական դպրոցում: 1892 թ. նա ընդունվում է Էջմիածնի Կեդրյան ճեմարանը, որտեղ ուսանելու տարիներին արդեն նրա առաջին բանաստեղծությունները տպագրվում են «Տարազ» և «Մուրճ» ամսագրերում: Աշակերտական խռովություններին մասնակցելու համար Դեմիրճյանը հեռացվում է ճեմարանից: Նա գնում է Թիֆլիս, շարունակում ուսումը Ներսիսյան դպրոցում և 1897 թ. ավարտում է միջնակարգ կրթությունը:

Դժվարություններով է անցել Դեմիրճյանի երիտասարդությունը: Նա զրկված էր ուսուցչության մեջ դասավորվելու հնարավորությունից, որովհետև ցարական կառավարության հրահանգով փակված էին հայկական դպրոցները, և երիտասարդ գրողը իր նյութական կարիքները հոգալու համար հարկադրված էր տարբեր աշխատանքներ կատարել, ինչպես օգերեւութաբանական կայանի դիտող, հեռավոր խուլ գյուղի փոստակայանի կառավարիչ, հայկական բարեգործական րեկերության տեխնիկական քարտուղար և այլն: Չնայած հոգեմաշ աշխատանքին, նա միաժամանակ սովորում և ստեղծագործում էր: Դեմիրճյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն լույս տեսավ 1899 թ.: Բարձրագույն կրթություն ստանալու նպատակով Դե-

միրճյանը 1905 թ. մեկնում է Շվեյցարիա, սովորում Ժնևի համալսարանի բնագիտական ֆակուլտետում, միաժամանակ հետևում գրականության և մանկավարժության դասախոսություններին և ուսանում է կոնսերվատորիայում: 1910 թ. Դեմիրճյանը վերադառնում է Թիֆլիս և ուսուցչական աշխատանքի անցնում Հովնանյան դպրոցում, դասավանդելով հայոց լեզու և գրականություն:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո Դեմիրճյանը փոխադրվում է Երևան և զբաղվում բացառապես ստեղծագործական աշխատանքով: Սովետական գրականությանը մատուցած ծառայությունների համար Դեմիրճյանը պարգևատրվել է Լենինի և Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշաններով:

1953 թ. նա ընտրվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ:

ԳԵՄԻՐՃՅԱՆԻ ՆԱԽԱՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Իր ստեղծագործական կյանքը Դեմիրճյանը սկսել է որպես բանաստեղծ: Նրա վաղ շրջանի բանաստեղծությունների և պոեմների համար բնորոշ էին վշտի, միայնության և հուսահատության տրամադրությունները: Իրականությունից դժգոհ բանաստեղծը ձգտում էր հասկանալ կյանքում տիրող անարդարության, չարիքի, մարդկային վշտի պատճառները: Բայց նրա այդ ձգտումը արտահայտվում էր վերացական, մեծ մասամբ սիմվոլիստական պատկերների միջոցով, որոնք ընթերցողին հեռացնում էին մարդկային իրական փոխհարաբերություններից և ոչ միայն չէին օգնում, այլև սովելի մթադնում էին իրական կյանքի ճանաչման հնարավորությունը: Այդպիսի բնույթ են կրում Դեմիրճյանի վաղ շրջանի պոեմները և բանաստեղծությունները:

Դեմիրճյանի պոեզիայի մեջ արժեքավոր դործ է «Լենկ-Թեմուր» պոեմը, որտեղ հեղինակը գեղարվեստորեն վերարտադրում է հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական էջերից մեկը՝ արևելյան բռնակալ Լենկ-Թեմուրի արշավանքը Հայաստան: Բանաստեղծը նկարագրում է Լենկ-Թեմուրի սոսկալի կոտորածները և ավերածությունները. բռնակալը չի կարողանում ընկճել ժողովրդին, որը արյունոտ նվաճողին ուղղում է այս իմաստուն խոսքերը՝ նվաճողները կգան ու

կգնան, բայց հավերժորեն կապրի ժողովուրդը՝ կյանք ստեղծողը: Բանաստեղծը գրում է.

Փանի գիշերներ եկել են անցել,
Սև բուերի պես հայոց աշխարհից...
Նրթան ու չգան անցած գիշերներ,
Կանցնի այս մեկն էլ հայոց աշխարհից...

Այս հավատը բնորոշ էր մեր ժողովրդի համար, ժողովուրդ, որը դարերի ընթացքում արիաքար պաշտպանել է իր աղատությունն ու անկախությունը, որն օտարերկրյա նվաճողների ավերածություններին և նախճիրին հակադրել է ոչ միայն իր ռազմական կորույր, այլև շինարարական անխոնջ ոգին, ասրելու և ստեղծագործելու անսահման ուժը:

Իր ստեղծագործական կյանքի հետագա տարիներին Դեմիրճյանը գրեց մի շարք պատմվածքներ, ինչպես «Ավելորդը», «Տերտերը», «Ստամբուլը», «Խանութպանը», «Ժպիտը» և այլն: Այդ պատմվածքներում գրողը պատկերում է մասնավոր սեփականատիրական կարգերում խեղանդամված մարդկանց: Դեմիրճյանի այս գործերում արդեն նկատվում է Ն. Վ. Գոգոլի ստեղծագործական հնարքների ազդեցությունը, հատկապես կերպարները երգիծական երանդով տիպականացնելու արվեստի մեջ: Գրողի արվեստի այս գիծը ավելի ցայտուն կերպով հանդես է գալիս սովետական շրջանի երկերում:

Թոթափելով իր բանաստեղծություններին հատուկ հոգեւոեսական տրամադրությունները, արձակի մեջ Դեմիրճյանը դրսևորում է մարդկային փոխհարաբերությունների և հոգեբանության նուրբ իմացություն: Իր առաջին պատմվածքներից մեկում («Ավելորդը», 1915 թ.) հեղինակը նկարագրում է առաջին համաշխարհային պատերազմի տարիներին սովթանական Բյուրքիայի կազմակերպած կոտորածը և հայերի տեղահանությունը իրենց հայրենի ավանդական հողերից: Վաճառական Հաճի աղան, որ ասրել է տաճիկական բռնակալության շատ արհավիրքներ, լսելով որ տաճիկները մոտենում են հայրենի քաղաքին, որոշում է հեռանալ, ազատել ունեցվածքը: Նա գալթում է իր ընտանիքով, փրկում նաև հարստությունը, ամայացած քաղաքում թողնելով անսահման բարի անդամալույծ քրոջը, նրան համարելով «ավելորդ»:

Նրբ ուսական բանակը՝ ճորից ետ է վերցնում քաղաքը, վերադառնում են գաղթողները, պարզվում է, որ Սրբունը անհետ կորել է:

Հաճի աղան սկսում է տանջվել, նա զգում է, որ հարստության համար զոհել է հարազատ քրոջը և սարսափում է աստծու պատժից: Հաճի աղան ցանկանում է ազատվել խղճի հետապնդումից, փողով գնել հարստանալու համար կորցրած մարդկային հատկությունները:

Հարստություն կուտակելու կիրքը Հաճի աղայի մարդկային զգացմունքները փոխարինել է մասնավոր սեփականատիրական զգացմունքներով, այդ պատճառով նա իր անհատական շահից վատ ոչինչ չի տեսնում: Միանգամայն այլ հատկություններով է օժտված Սրբունը. նա բարի է և մարդասեր: Հրաժեշտի պահին, երբ Հաճի աղան դաժան անտարբերությամբ թողնում է նրան, իր գործած ձեռնոցները Հաճուն մեկնելով, Սրբունն ասում է. «ձեռքերդ անցու, ճամբան չըմսիս»: Սրբունը և Հաճի աղան հակադրություններ են, անդամալուծորվեհանում է իր խորը մարդկայնությամբ, իր ջերմ սիրով դեպի մարդը, իսկ Հաճի-աղան նսեմանում՝ իր դաժան հակամարդկային արարքով:

Շահամոլության և կեղծիքի մեջ վաճառականին չի զիջում հոգևորականը: Աշխուժանում է բթամիտ տեր Հմայակը («Տերտերը»), իմանալով, որ մեռնում է իր «մրցակիցը», և իրեն պիտի անցնեն նրա ծխերը: Նստած մեռնողի կողքին, նա ներքին հրժվանքով հաշվում է սպասվող եկամուտները: Տերտերն իր էությունամբ նույն Հաճի աղան է՝ կրոնավորի զգեստով, նրա մեջ խտացված է նույն էգոիզմն ու երեսպաշտությունը:

Դեմիրճյանն իբրև արձակադիր հանդես եկավ այն ժամանակաշրջանում, երբ թուլացել էր քննադատական ռեալիզմը հայ գրականության մեջ, կորցրել սոցիալական հակասությունները խորը և բազմակողմանի վերարտադրելու իր հատկությունը: Դատապարտելով բուրժուական հասարակությանը, ուր տրոհում էր մարդկային անհատին հոգեպես և ֆիզիկապես, բայց իր աշխարհայացքի սահմանափակության պատճառով ժամանակի իրականության մեջ չտեսնելով ցարիզմի և բուրժուադիայի դեմ մարտնչող իսկական մարդկանց, Դեմիրճյանն իր հայացքն ուղղում էր դեպի պատմական անցյալը, պատմության մեջ էր որոնում հերոսներ: Դեմիրճյանի աշխարհայացքի այս առանձնահատկությունը արտահայտվել է նրա դրամատուրգիայի մեջ:

Նախասովետական շրջանում Դեմիրճյանը գրել է «Վասակ», «Դատաստան» և «Հովնան մեծատուն» դրամաները: «Վասակ» դրամայում

Դեմիրճյանը փորձել է նկարագրել 5-րդ դարում պարսկական բռնակալության դեմ հայ ժողովրդի մղած պայքարը: Սակայն դրամայի մեջ ճիշտ չէին մեկնաբանված ժողովրդական պայքարի իսկական պատճառները, Վասակի դործունեության դավաճանական բնույթը և Վարդան Մամիկոնյանի անձնազոհ ծառայությունը հայրենիքին:

Գեղարվեստական և դադափարական տեսակետից ավելի հաջողված է «Պատաստան» դրաման, որի նյութը նույնպես պատմական բնույթ է կրում: Դրամայում նկարագրվող դեպքերը տեղի են ունենում Հին Ջուղա քաղաքում, որն առևտրական կապերի մեջ էր հեռավոր երկրների հետ և որտեղ արդեն մոտք էին գործել բուրժուական հարաբերություններն իրենց սոցիալական և բարոյական նորմերով: «Պատաստան» դրամայում Դեմիրճյանը գեղարվեստորեն բացահայտում է նոր աշխարհազգացման, մարդու բնական ձգտումների և մարդկանց կյանքի վրա ծանրացած միջնադարյան կրոնական նախապաշարմունքների հակասությունը: Նաղաշի, Թանգիկի, Սիրվարդի, Պողոսի վերաբերմամբ հեղինակը ցույց է տալիս, որ ամենուրեք տիրապետում են աշխարհիկ հակումները, մինչդեռ առերևույթ իշխող կրոնական դադափարները ուղղված են մարդու իսկական էության դեմ:

Պատմական ընթացիկայի միջոցով արտահայտած աշխարհիկ կյանքի պաշտպանությունը, իր ժամանակաշրջանի գրականության համար առաջադիմական նշանակություն ունեւ. այն ուղղված էր կրոնական իդեաներով տոգորված սիմվոլիստական, անհատապաշտական ռեալիզմի գրականության դեմ:

Արևմտահայության կոտորածը և աքսորը 1915 թվականին, որ ոճորագործ հետևողականությամբ իրականացրեց թյուրքական կառավարությունը, նկարագրության նյութ է դարձել Դեմիրճյանի «Հովնան մեծատուն» դրամայի համար: Հարուստ Հովնանի տանը հարսանիք է, խրախմանք, և հանկարծ գուլժ է տարածվում, որ հայերը պետք է տեղահանվեն և ուղարկվեն Սիջադես: Հովնանը չի հավատում, նա միամտորեն ապավինում է Թյուրքիայի «արդարությանը», բայց հայության կոտորածի լուրը շուտով դառնում է դառն իրողություն: Հովնանն ըմբռնում է, որ «պալիս է մարդ դադանը, որ ժողովրդի արմատն է պոկում»: Համակերպվելով արհավիրքին, Հովնանը հասնում է դավաճանության, նա ծախում է իր հարազատներին, իր ողորմելի գոյությունը պահպանելու համար: Խորենը, Հերիքը և ուրիշները, ոչ թե հնադանդում, այլ կոկում են թյուրքական վայրագությունների դեմ,

ներանք ժողովրդի իսկական զավակներն են, ժողովուրդ, որ հերոսաբար ղիմադրում էր թյուրքական արյունոտ յաթագանին: «Հովնան մեծատուն» դրամայում նկատվում են անկումային գրականության տարրեր, դրաման տոգորված է հուսահատական տրամադրությամբ, հեղինակը ելք չի տեսնում թյուրքական բռնակալության ճիրաններում տառապող ժողովրդի համար:

ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Սոցիալիստական ռևոլյուցիան արմատական բեկում առաջացրեց Դեմիրճյանի ստեղծագործության մեջ: Փոխվեց ոչ միայն նրա ստեղծագործության բովանդակությունը, այլև գեղարվեստական ձևը: Նախկին խեղաթյուրված մարդկանց փոխարեն Դեմիրճյանի գործերում այժմ հանդես են գալիս ամուր և առողջ մարդիկ՝ համակված աշխատանքային մեծ պայծասով, հումանիզմով, անհագորդ սիրով դեպի զիտությունը և լուսավորությունը, նոր վերաբերմունքով դեպի սոցիալիստական սեփականությունը: Այդպիսի հերոսներ են նրա՝ կայարանի Ակոբը, Մերկեն, Աբդուլը, Սաթոն, Նիդյարը, Ռաշիդը և շատ ուրիշները: Մարդու դաստիարակության պրոցեսը սոցիալիզմի պայմաններում՝ սովետական գրականության հիմնական թեմաներից մեկն է: Դեմիրճյանը այդ խնդրին մոտեցել է անհատի հոգեբանության մեջ կատարվող վերափոխումների տեսակետից, իր ամեն մի նոր գործում հաշտարարելով սովետական մարդու բնավորության մի նոր գիծը: Դեմիրճյանը տեսանելի կոնկրետությամբ նկարագրում է սովետական մարդու բնավորության նոր դժերի ձևավորումը, նրա նվիրվածությունը Սովետական պետությանը, մեր դարաշրջանին և նրա առաջավոր իդեալներին:

Դեմիրճյանի հերոսի ստեղծագործական կարողությունները ուղղված են աշխարհի վերափոխմանը: Սոցիալիստական աշխատանքի մեջ մարդը դուրս է գալիս նեղ անհատականության սահմաններից, նա փոխում է աշխարհը, սոցիալիստական աշխատանքի մեջ փոխվում է և ինքը՝ մարդը: Սովետական մարդու գործունեության այդ հիմնական հատկությունը Դեմիրճյանը գեղարվեստորեն վերարտադրել է իր մի շարք պատմվածքների մեջ:

Ժողովրդական տնտեսության վերականգնման և երկրի սոցիա-

լիստովան ինդուստրացման համար մղվող պայքարի ժամանակա-
շրջանը Դեմիրճյանի համար սովետական կյանքի ճանաչման և նոր
թեմատիկայի ստեղծագործական յուրացման ժամանակաշրջան էր:

Այդ տարիներին Դեմիրճյանը մամուլում հաճախ հանդես էր դա-
լիս նոր մարդկանց նվիրված ակնարկներով ու կարճ պատմվածքնե-
րով: Այդ նախապատրաստական մի աշխատանք է սովետական կյան-
քի զեղարվեստական ավելի խոր ընդհանրացումների համար:

Դեմիրճյանի ստեղծագործական զարգացման համար բնորոշ են
նաև այդ տարիներին գրած սրամիտ ֆելետոնները, որոնց մեջ նա
մերկացնում էր անդլո-ամերիկյան իմպերիալիզմի գիշատիչ բնույ-
թը, ծաղրում էր բյուրոկրատիզմը, կրոնական նախապաշարումները,
կապիտալիզմի մնացորդները կենցաղում և մարդկանց գիտակցու-
թյան մեջ: Ցույց տալով հնի և նորի պայքարը, Դեմիրճյանը սպանիչ
երգիծանքով դատապարտում էր հինը, հետամնացը և ջերմորեն
պաշտպանում էր նորը և առաջավորը, որպես սովետական կյանքի
հարաձուռն հաղթանակի արտահայտություն: Բայց Դեմիրճյանը միան-
գամից չաղաթվեց հին հայացքներից և կյանքի թյուր ըմբռնողությու-
նից: Այդ ցույց է տալիս 1922 թ. գրված «Միայն մեկը» պատմվածքը,
որտեղ հեղինակը նկարագրում է իմպերիալիստական պատերազմի
աղետները:

Այդ պատմվածքն ունի գաղափարական լուրջ թերություններ, հե-
ղինակին չի հաջողվել ցույց տալ նկարագրվող պատերազմի իմպե-
րիալիստական թալանչիական բնույթը և պատերազմի մասնակից աշ-
խատավոր մարդկանց ռեպրեսիոն գիտակցության աճումը: Գնահա-
տելով այդ բնույթի պատմվածքները, Ի. Վ. Ստալինը գրում է. «Գրա-
շուկայում կան շատ գեղարվեստական պատմվածքներ, որոնք նկա-
րագրում են պատերազմի «սարսափները» և դարշանք են ներշնչում
զեպի ամեն մի (ոչ միայն իմպերիալիստական, այլ ամեն մի այլ)
պատերազմ: Դրանք բուրժուա-պացիֆիստական պատմվածքներ են,
որոնք մեծ արժեք չունեն: Մեզ հարկավոր են այնպիսի պատմվածք-
ներ, որոնք ընթերցողներին իմպերիալիստական պատերազմի սար-
սափներից տանում են զեպի այդպիսի պատերազմներ կազմակերպող
իմպերիալիստական կառավարություններին հաղթահարելու անհրա-
ժեշտությունը»¹:

¹ Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 12, էջ 197:

«Միայն մեկը» պատմվածքից հետո Դեմիրճյանը գրում է մի շարք նոր գործեր, որոնց հիմնական բովանդակությունը սոցիալիստական ռևոլյուցիայի հետևանքով մարդկանց կյանքի մեջ ստեղծված մեծ հեղաշրջման առանձին արտահայտություններն էին: Այդ թեման են արտահայտում «Մերկեն», «Աբդուլը», «Սաթոն», «Նարգիզը» և ուրիշները: Հակառակ «Միայն մեկը» պատմվածքի անանուն հերոսի, որը շահագործման և ճնշման պայմաններում մոլորվել է, մանրացել, կորցրել իր մարդկային կոչումը և սեփական անունը, սովետական կարգերի պայմաններում անցյալում ճնշված և կեղեքված մարդիկ վերածնվում են, հանդես գալիս մարդկային բնության իրենց ողջ գեղեցկությամբ: Չէ՞ որ իրենց կյանքի նախասովետական շրջանում անանուն մարդիկ են եղել նաև Մերկեն, Աբդուլը, Նարգիզը և մյուսները. այդ պատճառով շատ բնորոշ է, որ միայն սովետական կարգերում ապրելով իսկական կյանքը, ծերուկ Մերկեն մահվան պահին խորապես ափսոսում է, որ ավելի շուտ չեն եկել սովետական կարգերը:

«Սաթոն» պատմվածքում Դեմիրճյանը պատկերում է հասարակ, աշխատավոր կնոջ վերափոխությունը: Պատմվածքի սկզբում Սաթոն երկվուղաժողովրամբ կատարում է տնային աշխատողի իր ծանր պարտականությունը և այդ պարտականություններից դուրս օրե էլ այլ հանջ չունի: Նրան թվում է, թե Սմբատյանները իրեն շնորհ են արել և ձգտում է տքնաջան աշխատանքով հատուցել նրանց: Սմբատյանների ընտանիքում դեռևս շարունակվում են պահպանվել հին աշխարհի օրենքները. Սաթոն կոչված է աշխատելու, իրենք՝ վայելելու: Բայց նրանք դիտեն, որ իրենց ընտանիքից դուրս օրենքները փոխվել են, այդ պատճառով էլ ամեն կերպ ջանում են Սաթոնի հեռու պահել արտաքին աշխարհից, զրկել մարդկանց հետ շփվելու հնարավորությունից: Այդ բանը չի հաջողվում: Սովետական կյանքի սկզբունքները անխուսափելիորեն դառնում են Սաթոնի սեփականությունը. նա ճանաչում է աշխատանքի մարդու իր իրավունքներն ու արժանապատիվությունը, վերափոխվում և ակտիվորեն մասնակցում սոցիալիստական հասարակության կառուցմանը: Սաթոնի և Սմբատյանների՝ մասնավորապես տիկին Սմբատյանի բարոյական պայքարը ավարտվում է Սաթոնի լիակատար հաղթանակով: Դեմիրճյանը բացահայտում է, որ շնորհ են անում ոչ թե Սմբատյանները, այլ Սաթոն՝ աշխատանքի մարդը, որն իր աշխատանքով պահպանել է Սմբատյանների տիպի պորտաբուծների գոյությունը, որ այժմ արդեն ժամանակները փոխ-

վել են՝ միլիոնավոր Սաթոններ, գիտակցելով իրենց ուժը, հանդես են գալիս կյանքի, երկրի տիրոջ իրենց իրավունքների պաշտպանությամբ:

Աբդուլը՝ համանուն պատմվածքի հերոսը, իսկական կյանքի ըմբռնմանը հասնում է սոցիալիստական աշխատանքի մեջ: Նա եկել է Պարսկաստանից և որպես բանվոր աշխատում է Նրեանի բամբակագործ գործարանում: Աբդուլի կյանքը Պարսկաստանում անցել է տաժանակիր աշխատանքի և մշտական քաղցի մեջ: Քաղցին զոհ են դնում նրա կինը և որդին, հարազատները և բարեկամները, քաղցը նրան արտաքսել է հայրենի երկրից: Իսկ սովետական երկրում նա դառնում է իր աշխատանքի տերը, ըմբռնում նախկին և այժմյան աշխատանքի տարբերությունը: «Այստեղ գործն ուրիշ տեսակ էր: Նախ՝ նա տաժանք չէր, այլ աշխատանք: Ապա և այդ գործը նրան բարեկամ էր և ոչ սոսկալիսի դաժան թշնամի, որը լիկում է, ծեծում, հյուծում, տանում դերեզման»:

Աբդուլը եկել էր այն մտադրությամբ, որ որոշ դումար վաստակեր և վերադառնար Պարսկաստան, բայց սովետական կյանքի պայմաններում փոխվում է Աբդուլը, նրա հոգում ավելի ու ավելի օտարանում է Պարսկաստանը, վայրենի շահագործման ու կեղեքման երկիրը: Սոցիալիստական աշխատանքը բարձրացնում է նրան, կասկած բանվորական կոլեկտիվի և գործարանի հետ, դարձնում գիտակից քաղաքացի: Աշխատանքը նրա համար դառնում է պատվի դործ: «Աբդուլը սլարդ տեսնում էր, որ այս իր գործարանը կապված է քաղաքի մյուս գործարանների հետ, քաղաքինը մյուս քաղաքների հետ և բոլոր աշխատանքի արդյունքը մանր գետերի պես հոսում լցվում է մի մեծ արդյունքի՝ ծովի մեջ և այդ ծովը պրոլետարական պետությունն է»:

Պրոլետարական պետությունն իր հարադատ պետությունն է,— այս գաղափարը Աբդուլին մղում է անձնագործության: Նա իրեն նետում է գործարանում բռնկված հրդեհի բոցերի մեջ, ազատելու իր ընկերներին և փրկելու համայնական սեփականությունը:

Սովետական հարուստ և բազմաբովանդակ կյանքը իր մի շարք կողմերով, կարմիր Բանակի մարտիկների և սովետական սահմանապահների կյանքը, դասակարգային պայքարը գլուղում, մարդկանց հոգեբանության վերափոխումը սոցիալիստական շինարարության մեջ և այլն, անդրադարձել է Դեմիրճյանի երկերում:

Նոր մարդու ձևավորման պրոցեսը Դեմիրճյանը բնորոշ գծերով արտահայտել է «Նիդչար» վիպակում, որը սովետահայ գրականության

նվաճումներից մեկն է: Դեմիրճյանը ցույց է տալիս, թե ինչպես ադրբեջանուհին հաղթահարում է սեփականատիրական կարգերից ժառանգություն մնացած ընտանեկան, կենցաղային և կրոնական նախապաշարումները, աովորում և դաստիարակվում է կոմերիտմիության շարքերում, դառնում հասարակական ակտիվ աշխատող: Բայց Նիգյարը հեշտությամբ չի անցնում կյանքի այդ ճանապարհը: Նրա ամուսինը՝ Ասադը ամեն կերպ արգելակում է կնոջը շփվել հասարակական կյանքի հետ: Ասադի հետամնաց ծնողները անպատվություն են համարում այն, որ Նիգյարը դուրս է գնում առանց չադրայի, խոսում է օտար տղամարդկանց հետ, հաճախում է ադրբեջանական կանանց ակումբը: Նիգյարը ղժվարին կացության մեջ է: Նա երկու աշխարհ է տեսնում. «Մեկը հին, խավար հեքիաթի ջադուներով ու հրեշտակներով լի աշխարհը, ուր կա կեղծիք, նախանձ, տարփանք, ատելություն, բռնություն... մյուսը իրական, ընկերական, պարզ և ազատ՝ գրքերի, մտքի և գործի աշխարհը, ուր ամենքը հավասար են. իրար պաշտպանում են, շինարարում են, մաքրում երկրի երեսը»: Նիգյարը վճռականորեն գնում է դեպի շինարարություն, ժողովուրդների բարեկամության աշխարհը, ուր նա ազատվում է անցյալի անիծյալ նախապաշարումներից և ձեռք է բերում իր մարդկային բնության ողջ գեղեցկությունը: Սովետական մարդու վերափոխման պրոցեսը Դեմիրճյանը նկարագրել է նաև «Ռաշիդ» վիպակում: Սովետական կարգերի շնորհիվ Ռաշիդը բարձրացել է անհայտությունից, ճնշումից ու դաժան շահագործումից և դարձել հասարակական դեմք: Նա ամբողջ էությամբ նվիրված է չքավոր հողագործի գյուղացիների պաշտպանության գործին, նոր գյուղի կառուցման գործին, դրա մեջ տեսնելով իր և իր նման մարդկանց կյանքի հեռանկարները:

Հայ ժողովրդի ռեուլյուցիոն գիտակցության աճումը և նրա պայքարը սովետական կարգերի հաստատման համար Դեմիրճյանը ճշտորեն նկարագրել է «Ընկերները» պատմվածքում: Հեղինակն արտահայտում է այն իդեան, որ արդարացի պայքարի գիտակցությամբ տոգորված մարդիկ արհամարհում են մահը, դրսևորում մեծ անձնազոհություն և խիզախություն: Պատմվածքի հերոսները՝ Գուրգենը և Ղևոնդը անբաժան ընկերներ են, նրանք անհունորեն սիրում են միմյանց: Քաղաքացիական կռիվների տարիներին նրանք ընդունվում են կոմերիտմիության շարքերը և դառնում են պարտիզաններ: Հրամանատարությունը հանձնարարում է երիտասարդ պարտիզաններին խիստ կարևոր

մի նամակ հասցնել ընդհատակում աշխատող կոմունիստներին և պայթեցնել ռազմական նշանակություն ունեցող մի կամուրջ, որով հակառակորդը պատրաստվում էր փոխադրել իր հրետանին, կասեցնել Կարմիր Բանակի զորքերի հարձակումը: Հանձնարարությունը դեռևս չկատարած, ընկերները դերի են ընկնում դաշնակցական բանդայի ձեռքը: Հարքած սպան քննությունը ոչինչ չի կարողանում պարզել: Բանտարկված ընկերներին սպան տալիս է ատրճառակ մի փամփուշտով և առաջարկում՝ կենդանի կմնա և վաղատվի նա, ով կսպանի մյուս ընկերոջը: Այս առաջարկը անհեթեթ է թվում միմյանց ջերմորեն սիրող ընկերներին:

Երկարատև տանջանքներից հետո, երբ ամեն մեկը ցանկանում է դուզվել և ազատել մյուսին, ընկերներից մեկը՝ Գուրգենը ինքնասպան է լինում: Ազատվում է Ղևոնդը և ընկերոջ վրեժը լուծելու որոշումով գնում կատարում է հրամանատարության առաջադրանքը: Գուրգենի խնքնասպանությունը սխաղործություն է, անձնադոհություն կլանքի համար: Միանգամայն արդարացի է նա, երբ ընկերոջն ասում է. «...տեղ կա պետք է ասյրել, տեղ կա պետք է մեռնել, մի կարծի թե ամեն ասյրել ասյրել է»: Ռեուլուցիայի հաղթանակի գործին ամբողջ կյանքով նվիրված մարդու համար նման գիտակցությունը բնական է: Գուրգենը հասկանում է իր կատարած անձնադոհության նշանակությունը: Դեմիրճյանը ճշտորեն ցույց է տվել, որ արդարացի պատերազմի մեջ են ծնվում խիզախ և անձնուրաց մարդիկ, որ հերոսության նախապայմանը ջերմ հայրենասիրությունն է:

Դեմիրճյանի գրաժաները

Սովետական շրջանում Դեմիրճյանը գրել է սովի լի քան 10 դրամա, որոնցից մեծ մասի նյութը սովետական կյանքն է, ինչպես «Յոսֆորային շող»-ը, «Կապուտան»-ը, «Նապոլեոն Կորկուտյան»-ը և ուրիշները: Դեմիրճյանի դրամատուրգիայի մեջ առանձնակի տեղ են գրավում «Քաջ Նազար» կոմեդիան և «Երկիր հայրենի» պատմական դրաման:

«Քաջ Նազար»-ը սովետական ժամանակաշրջանում Դեմիրճյանի գրած առաջին դրամատիկական երկն է: Հովհ. Թումանյանից և Ալ. Իսահակյանից հետո ժողովրդական այդ նշանավոր հեքիաթը Դեմիրճյանը մշակել է նոր սկզբունքներով՝ ընդգծելով և զարգացնելով հեքիաթի հատկապես քաղաքական բովանդակությունը: Մուլ, վախկոտ և պարծենկոտ Նազարը պատահականությունների բերումով դառնում

է «Հերոս» և հետո թաղավոր: Նազարը ժողովրդին վերաբերվում է բու-
լոր բուլթ միապետներին և ժամանակակից բուրժուական սեփական
խեղկատակներին հատուկ արհամարհանքով: Բայց երկար չի տևում
բախտի խաղը. պատահականորեն ձեռք բերված դահլիճ տապալվում է,
հաղթում է ժողովուրդը: Պահպանելով հեքիաթի ազգային կոլորիտը,
Դեմիրճյանը խորացրել և ընդհանրացրել է նրա բովանդակությունը,
ցույց տալով, որ Նազարի կյանքի ուղին տիպական է շատ բնակալ-
ների համար: «Բաջ Նազար»-ը ոչնչացնող մի սատիրա է ժողովրդի
բռնակալների, միապետների, պատահականորեն իշխանության գլուխ
անցած բախտախնդիրների մասին:

Դեմիրճյանի դրամատիկական հաջողված երկերի թվին է պատ-
կանում «Փոսֆորային շող»-ը: Պիեսը արտահայտում է 1930-ական
թվականների վերջին մեր արդյունաբերության զարգացման մեջ գո-
յություն ունեցող դժվարությունները, սովետական մարդկանց պայ-
քարը արդյունաբերության մեջ բուն դրած վնասարարների և դիվեր-
սանտների դեմ: Պիեսի բովանդակությունը հետևյալն է. սովետական
ավտոգործարանի նոր ղեկավարությունը վանգնած է լուրջ դժվարու-
թյունների առաջ: Գործարանում գոյություն ունեցող վնասարարական
կազմակերպությունը քայքայում է արտադրությունը և արգելակում
կառավարական առաջադրանքների կատարումը:

Գործարանի դիրեկտոր Ռադինի կնոջ քույրը՝ Գալինան կոնտր-
ռուկյուցիոն կազմակերպության անդամ է և դիվերսիոն աշխատանք
է կատարում գործարանում: Գործարանի տեխնիկական ղեկավարը՝
ինժեներ Բերնացկին սիրահարվում է Գալինային, իսկ վերջինս օգ-
տագործում է այդ սերը և Բերնացկուն մղում վնասարարության
ուղին: Գալինան ձեռքակալվում է: Բանվորական կոլեկտիվի օգնու-
թյամբ վնասարարները մերկացվում են և գործարանը դուրս է գալիս
դժվարություններից:

Դեմիրճյանը ճշտորեն ցույց է տվել, որ սոցիալիստական հար-
ձակմանը կատաղորեն դիմադրում էր դասակարգային թշնամին, բայց
Սովետական իշխանության ինդուստրացման և կոլեկտիվացման քա-
ղաքականության հետևողական կիրառումը հողմացրիվ արեց բուր-
ժուական ինտելիգենցիայի վնասարարական դավերը:

Ժամանակակից թեմայով գրված մի քանի պիեսներից հետո, Դե-
միրճյանը նորից դիմում է պատմական թեմատիկային, վերարտա-
դրելով հայրենիքի պաշտպանության համար հայ ժողովրդի մղած

հայրենասիրական պայքարի զրվագներից մեկը: Հայտնի է, որ միջին դարերում ժողովրդական հայրենասիրությունը ավելի ցայտուն կերպով դրսևորվել է արտաքին նվաճողների դեմ մղած պատերազմների ընթացքում: Սովետական ժողովուրդը սիրում և դնահատում է ջերմ հայրենասիրությամբ տոգորված անցյալի այդ հերոսական տրագիցիաները, որոնք դեղարվեստական ճշմարտացիությամբ վերարտադրվեցին միայն սովետական գրականության մեջ:

«Երկիր հայրենի» պատմական դրամայում Դեմիրճյանը նկարագրում է հայոց պատմության XI դարի առաջին կեսի մի քանի բնորոշ իրադարձությունները: Հունական օրիննաացիայի կողմնակիցները՝ տերություն խնամակալ Վեստ-Սարգիսը, կաթողիկոսը և մյուսները, որոնք դավաճանաբար Անին վաճառել էին Հունաց Մոնոմախ կայսրին, սարկորեն ընդունում են նրա դեսպանին և հակառակ ժողովրդի կամքին, կրկին նորոգում են Անիի վաճառման հետևարը: Պետական ինքնուրույնության այդ ամոթալի վաճառքը կանխելու համար հայրենասիր սպարապետ Վահրամ Պահլավունին և նրա համախոհները Անի են բերում և դահ բարձրացնում հայաժական վիճակում գտնվող պատանի Գադիկին: Իր գործունեության առաջին խսկ քայլից Գադիկ Ջ-րդը վճռական միջոցների է դիմում Անիի ինքնուրույնությունը պաշտպանելու համար: Նա պատռում և շեղյալ է հայտարարում Անիի հետևարը, բանտարկում է Վեստ-Սարգսին և մյուս դավադիրներին, համախմբում է ռազմական ուժերը և ջախջախում բյուզանդացիներին և սելջուկների զորախմբերը:

Ինչպես ցույց է տալիս սյուժեն, «Երկիր հայրենի» դրամայում կերպարները բախվում են ոչ թե ընտանեկան, կենցաղային հարաբերությունների մեջ, այլ պետական գործունեության ոլորտում, ուր որոշվում է հայրենիքի և ժողովրդի պատմական բախտը: Այդ հանգամանքը պայմանավորում է դրամայում հանդես եկող բնավորությունների տիպական գծերը, նրանց քաղաքական հայացքները և ձգտումները:

Դեմիրճյանը մի քանի բնորոշ գծերով պատկերում է կերպարների գործունեության պատմական միջավայրը: Այդ հայ կուլտուրայի զարգացման այն շրջանն էր, երբ ծաղկում էր Անին իր սքանչելի ճարտարապետությամբ և տարբեր արվեստներով, երբ ընդդեմ միջնադարյան եկեղեցական ճնշման, երկրով մեկ տարածվում էր թոնդրակեցի-

ների շարժումը, որպես ժողովրդական զանգվածների սոցիալական ռոզոքի արտահայտություն:

Դեմիրճյանի պիեսների մեծագույն մասը բեմագրվել է մեր ռեսպուբլիկայի թատրոններում, հարստացրել նրանց ռեպերտուարը, հուզել և ոգևորել սովետական հանդիսատեսին:

**ԴԵՄԻՐՃՅԱՆԻ
ՍՈՒԳԾԱԳՈՐԾՈՒՅՈՒՆՆԵՐ
ԽԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ
ԱՅԱՏՈՒՆԵՐԱԳՄԻ
ՄԱՐԻՆԵՐԻՆ**

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին նոր աստիճանի բարձրացավ Դեմիրճյանի սոսկագործությունը և տոգորվեց սոցիալիստական Հայրենիքի պաշտպանության դադափարներով: Նա որոնեց և գտավ նոր ձևեր, արտահայտչական նոր միջոցներ՝ բացահայտելու սովետական ժողովրդի հզորությունը, նրա պայքարի վեհությունը և անհուն հայրենասիրությունը: Դեմիրճյանի՝ Հայրենական պատերազմի շրջանի հաջողված պատմվածքները, ինչպես՝ «Խոշտանգվածի ավանդը», «Անխուսափելին», «Վերագարձ», «Մնողները», ճշտորեն արտահայտում են ռուս ժողովրդի անպարտելի ուժը, նրա կամքը և տոկունությունը: «Մնողները» պատմվածքում Դեմիրճյանը նկարագրում է, թե ինչպես պատերազմի բռնում Սովետական Բանակի կապիտան Չերկասովը տիրապետում է ատելության գիտությանը: Ֆաշիստներից ետ վերցրած հայրենի գյուղում, հայրենի տանը կապիտան Չերկասովը տեսնում է իր ծնողների խոշտանգված դիակները: Անմեղ մարդկանց գազանային սպանությունը կապիտանի հոգին լցնում է նոր իմացություններով: «Պատերազմը խստացավ նրա համար, դառավ մարդկության համար մղվող մի գերագույն գործ, մեծ, ընդարձակ, համաշխարհային: Նա այդ բոլորն, ասենք, լավ գիտեր, երբ պատերազմը սկսվել էր: Բայց հիմա նա խորապես զգաց այդ: Խեղդված ծնողի դուրս ընկած աչքերում նա տեսավ այնպիսի մի բոլոր, այնպիսի մի ցասում, որ նրա ողջ կյանքի համար բավական էր: Նա տեսավ անմոռանալին: Նվ եթե նա զսպեց իրեն, չգոռաց, այդ միայն այն մտքից էր, որ նա վճռեց վրեժխնդիր լինել, վճռեց ազատել գերված երկիրը, մարդկությունը»:

«Անխուսափելին» պատմվածքում գերմանական սպան, հարցաքննելով պարտիզանի հորը, սոսկում է նրանից: Գերմանական սպան ռուս գյուղացու հայացքի մեջ տեսնում է երկրի ողջ բնակչությունը: Նա ալյուր նախանձ է զգում, տեսնելով գյուղացու բարձր հասակը, ուղիղ փրանը, կոշտ ջլուտ մատները և այն համառ, պինդ կեց-

վածքը, որով նրա ունեւերը կսկել, տիրում էին հողին, այն հարուստ սեահողին, որի առատութեան մասին սպառն առասպելներ էր լսել: Նա շատ էր տեսել այդպիսի գլուղացիներ և հիմա իր դիմաց կանգնածը կարծես արտահայտում է նրանց բոլորի ուժը: Գերմանական սպան սարսափով դիտակցում է, որ անհնարին է հաղթել այս ժողովրդին:

Բայց նման պատմվածքների հետ Դիմիթրիանը դրել է նաև իդեալական և դեղարվեստական տեսակետից արատավոր գործեր, ինչպես «Կոորդինատները», «Բժիշկը» և «Մանրապատումներ»-ի մի մասը, որոնց մեջ զգացվում են ֆորմալիզմ և պեսիմիստական տրամադրութուններ:

«Վարդանանք» պատմավեպը

Սովետական ժողովուրդը բարձր է գնահատում պատմական անցյալի լավագույն տրադիցիաները, որովհետև «սովետական հայրենասիրության մեջ ներդաշնակուրեն զուգակցվում են ժողովուրդների ազգային տրադիցիաները և Սովետական Միության բոլոր աշխատավորների ընդհանուր կենսական շահերը»¹: Ազգային տրադիցիաների աչսպիսի ճշմարիտ գնահատութեան հիման վրա, Հայրենական պատերազմի տարիներին սովետական զրականութունը ստեղծեց մի շարք պատմական վեպեր, որոնք վերարտադրում էին ժողովրդի մղած հերոսական պայքարը հնագույն ժամանակներում օտարերկրյա նվաճողների դեմ և մեր մեծ նախնիների հայրենասիրութեան լավագույն օրինակներով սովետական մարդկանց ոգեշնչում արդարացի պատերազմի ընդդէմ ֆաշիստական օկուպանտների:

Սովետական զրականութեան զբաղման ղեկուս նախորդ ժամանակաշրջանում ելնելով մարքս-լենինյան պատմագիտութեան դրուշթներից Ա. Տոլստոյը («Պետրոս առաջին»), Ա. Չապիդինը («Ռազին Ստեփան»), Նովիկով-Պրիբոյը («Յուսիմա»), Սերգեև Յենսկին («Սեւ վաստոպոլյան սպարաբը») և ուրիշները մշակեցին սովետական պատմավեպի սկզբունքները, որոնց հիման վրա եղբայրական ժողովուրդների զրականութեան մեջ ստեղծվեց և զարգացավ պատմավեպագրութունը:

Օգտագործելով սովետական պատմավեպի նվաճումները և հայ պատմավեպագրութեան լավագույն տրադիցիաները, Հայրենական

¹ Ի. Վ. Ստալին, Սովետական Միութեան Հայրենական Մեծ պատերազմի մասին, Հայպետհրատ, 1945, էջ 169:

պատերազմի տարիներին Դեմիրճյանն ստեղծեց իր ամենախոշոր երկը՝ «Վարդանանք» պատմավեպը։ Այդ գործով նա սկիզբ դրեց սովետահայ պատմավիպագրությանը և նոր աստիճանի բարձրացրեց հայ պատմավեպի լավագույն տրագիցիաները։

Հայ ժողովրդի պատմության հերոսական էջերից մեկի դեղար-վեստական վերարտադրումով Դեմիրճյանը ստեղծեց ջերմ հայրենասիրությանը և արտաքին նվաճողների նկատմամբ խոր ատելությանը տոգորված մի վեպ, որն իր պատմական առաջավոր բովանդակությամբ արձագանքում էր սովետական ժողովրդի մղած հերոսական պայքարին։ Իր բաղմամբարյան պատմության ընթացքում արիաբար մարտնչելով արտաքին նվաճողների դեմ, հայ ժողովուրդը պաշտպանել է իր ազատությունն ու անկախությունը, իր կոլտուրան ու մայրենի լեզուն։ Այս իմաստով «Վարդանանք»-ը յուրատեսակ փիլիսոփայություն է հայրենի երկրի մասին, ժողովրդի ստեղծագործական սքանչելի ունակությունների, աննկուն ոգու և հերոսության մասին։

«Վարդանանք»-ի հիմքում ընկած է հայ ժողովրդի պատմական անցյալի կարևոր իրադարձություններից մեկը՝ 450—451 թթ. ազատագրական պատերազմը պարսկական բռնակալության դեմ։ Պատմական ժամանակաշրջանի բնորոշ փաստերի, դեմքերի և իրադարձությունների ընդհանրացումով Դեմիրճյանը հյուսել է վեպի ինքնատիպ սյուժեն։ «Վարդանանք»-ը տոգորված է իսկական պատմականությամբ, մի հատկություն, որը անհրաժեշտ նախապայման է պատմավեպի համար։ Վեպի մեջ պատմական դեպքերը սերտորեն հյուսվում են մարդկանց բախտի հետ, պամանավորում են բախտմաները և պայքարը հասարակական տարբեր դասերի միջև։ Հագկերտ Ջ-րդի չարագուշակ հրովարտակը հավատուրացության մասին մեծ տաղնալ է առաջացնում Հայաստանում, մարդիկ հասկանում են, որ դա սոսկ հավատի հարց չէ, որ հավատուրացության քողի տակ պարսկական բռնակալությունը ձգտում է ոչնչացնել հայ ժողովրդին։

«Վարդանանք»-ի մեջ ցայտուն գծերով վերարտադրվում են սոցիալական հակամարտությունները շահագործվող և շահագործող դասակարգերի միջև, նրանց տարբեր վերաբերմունքը օտարերկրյա բռնակալության նկատմամբ։ Անհամատեղելի են մի կողմից շինականների, մյուս կողմից իշխողների ու հողևորականների շահերը։ Տարբեր նշանակություն ունի նրանց համար հայրենիքը։ Տանջված շինականի համար հայրենիքը տաժանելի աշխատանքով ստեղծված,

իր և իր նախնիների արյունով պաշտպանված երկիրն է, այն հողը, որը դառն է, բայց միաժամանակ սիրելի, որովհետև կյանքի աղբյուր է նրա համար: Նախարարի «հայրենիքը» իր կալվածքն է, ֆեոդալական իրավունքի տիրապետության մե և դաժան շահագործման անձեռնմխելի արտոնություններով:

Այս տեսակետից պատահական չէ այն, որ թեև օտար նվաճողների դեմ մղվող պայքարում շինականների և նախարարների շահերը զուգահեռվում են, բայց շինականները. այնուհանդերձ խոր ատելություն են տածում նախարարների և հողետրակալների նկատմամբ, կասկածով են վերաբերվում արտաքին թշնամու դեմ ելնելու նրանց պատրաստակամությանը:

Վեպի կերպարները

Հայրենիքի պաշտպանության վերաբերյալ ձեռնարկվելով են երկու հակադիր ուղղություն. մեկը՝ սպարապետ Վարդան Մամիկոնյանի, մյուսը՝ մարդպան Վասակի դիսավորության մե: Վասակի քաղաքականությունը հանդիմ էր հայ ժողովրդի ինքնուրույնության ոչնչացմանը, օտարերկրյա բռնակալության շահերի պաշտպանությանը: Վարդանը վճռականապես դեմ էր հավատությանը, նա հասկանում էր, որ հավատի հարցը միայն պատրվակ է հայ ժողովրդին ինքնուրույնությունից զրկելու և ստրկացնելու համար: Այդ պատճառով նա թելադրում է Հազկերտի հրովարտակի մերժողական պատասխանը, ռազմական դաշինք է կռում հոների հետ, համախմբում է համակիր նախարարների զորքը, կազմակերպում է ժողովրդական աշխարհազորը, դիտակցելով, որ արտաքին նվաճողների դեմ մղվող կռվում, առանց ժողովրդի մասնակցության, անհնարին է հաղթել: Վարդանը կայեր է հաստատում հարևան ժողովուրդների՝ վրացիների և աղվանների հետ: Նա գիտե, որ պարսկական բռնակալությունը սպառնում է նաև հարևան ժողովուրդներին և այդ արհավիրքի դեմ պետք է դուրս գալ միացյալ ուժերով: «Մենք, վրացիները, աղվանները մի բախտի ժողովուրդ ենք,— ասում է Վարդանը,— ուրեմն մի ժողովուրդ ենք»: Անդրկովկասյան ժողովուրդների հարապատության այդ դադափարը վճռական նշանակություն է ունենում հաղթանակի համար: Դեմիթրիանը ցույց է տվել, որ Վարդանի ուժն այն է, որ նա կարողանում է դուրս գալ ֆեոդալական եկեղեցական մտայնության սահմաններից, զնալ դեպի ժողովուրդը, հասկանալ, որ հայրենիքի իսկական պաշտպանը աշխատավոր ժողովուրդն է:

Միանգամայն տարբեր դիրքերում է գտնվում Վասակ Սյունին: Ժողովրդին սպառնացող մահացու վտանգի պահին փառասեր իշխանին իր դիրքի և պաշտոնի հարցը ավելի է մտահոգում, քան ժողովրդի ճակատագիրը: Առերես համաձայնելով Վարդանի և մյուսների հետ, Վասակը գաղտնի դավեր է նյութում ապստամբների դեմ, նախապատրաստում Հայաստանը ինքնուրույնությունից զրկելու, պարսկական բռնակալությանը հանձնելու ոճրագործ ծրագիրը: Բայց ամենուրեք Վասակը հանդիպում է համառ դիմադրության: Նա չի կարողանում կոտրել շինականների անընկճելի ոգին, խեղդել իր կնոջ և դավակների հայրենասիրության և արժանապատվության զգացումը: Քաղաքական դավերը, ատելությունը և սարսափը ժողովրդի հանդեպ Վասակին ի վերջո հասցնում են դավաճանության և բարոյական անկման:

«Վարդանանք»-ի վարևոր արժանիքը ժողովրդի պատմական դերի վերարտադրությունն է, ժողովրդական կյանքի լաչն և բազմակողմանի ցուցադրումը կենդանի և տիպական կերպարների միջոցով: Վեպի հիմնական հերոսը հայ ժողովուրդն է, պարսկական բռնակալությունից դառնացած, բայց իր ինքնուրույնությունը պահպանելու անսահման ձգտումով լցված հայ ժողովուրդը:

Ջերմությամբ և մեծ արվեստով է կերտել Դեմիրճյանը ժողովրդի ընդերքից դուրս եկած հերոսներ Առաքելի, Խանդութի, Սահակի, Արթինի և ուրիշների կերպարները, որոնք արտահայտում են ժողովրդի հայրենասիրությունը, մտքերի և զգացմունքների հարուստ աշխարհը, բարոյական վեհությունը: Հիշենք, օրինակ, Արծվին, վեպի ամենահմայիչ կերպարներից մեկին: Արծվի պատկերացումով անձնագուհի կռիվը հայրենիքի համար նույնքան բնական է, ինչպես կյանքը:

Հայրենի հողի վրա նա շրջում է Անթեյի գիտակցությամբ և իր ժողովրդի կեցության հարատևությունը Արծվին անբաժանելի է համարում հայրենի հողից, իսկ ով սպառնում է ժողովրդի կյանքի բնական ընթացքին, պիտի ոչնչացվի: Նա այդպես է վարվում պարսիկ ղինվորի հետ, որն արգելում է ձիերին լողացնել Արաքս գետում, սպանում է ծալոված դավաճանին, որը ցանկանում է Վարդանին նետահարել, նա նույն վճռականությամբ կռվում է Ավարայրի ճակատամարտում իր հայրենիքի համար: Վեպի բոլոր հերոսներից Արծվին ամենից շատ է մոտենում մեր ժողովրդական էպոս «Սասունցի Դավթի» հերոսներին, ոչ միայն իսկական էպիկական հերոսին վայել

խիզախութեամբ, այլև անհուն սիրով դեպի հայրենիքը և ժողովուրդը։ Սոցիալիստական ռեալիզմի մեթոդը Դեմիրճյանին հնարավորութեան է տվել բացահայտելու, որ կրոնական երանգ ունեցող Վարդանանց պատերազմը իր բուն էությունը սոցիալական ազատագրական պատերազմ էր, ճնշված, հարստահարված ժողովրդի հերոսական պայքարը օտար և «հայրենի» բռնակալների դեմ։

Վեպի առաջին գլուխներից մեկում Դեմիրճյանը գեղարվեստական մեծ ուժով նկարագրել է պարսիկ հարկահանների դաժան կամայականությունների, էպիզոդներից մեկը՝ Վանքը կողոպտելուց հետո հարկահանները դուռը են մտնում և նորից պահանջում արդեն մի քանի անգամ վերցված հարկը։ Լիախաբար ծաղրելով և արհամարհելով շինականներին, հարկահանները խլում են նրանց հացի վերջին կտորը։ Պարսիկ բռնակալների այդ բարբարոսական քաղաքականության նպատակն էր սովամահության միջոցով հնազանդեցնել ժողովրդին։ Բայց սոսկալի տառապանքները ոչ թե ընկճում են շինականներին, այլ ավելի ու ավելի խորացնում են նրանց ատելությունը բռնակալության դեմ։ Շինական Առաքելը ասում է. «Գլուխը կբարձրացնի ու միկը. գլուխը կբարձրացնի հացոց աշխարհը։ Այնպես կբարձրանա, որ պարսիկը գույնը կզցի»։ Գլուխը բարձրացնում է ումիկը՝ լըցված ահավոր վայրույթով պարսկական բռնակալների դեմ։ Հողից ու տնից զրկված շինականներն ընդլվում են բռնության դեմ, և երկրով մեկ ծավալվում է տարերային ապստամբությունը։

Դեմիրճյանը ճշտորեն նկարագրել է, որ երազանքը ազատության, արդարության և խաղաղության մասին վստե է մնացել ժողովրդի մեջ տնտեսական և հոգևոր հարստահարության այդ մռայլ ժամանակներում անգամ։

Պարսիկ բռնակալների կողմից խոշտանգված Սահակ շինականը հուսով դիմում է Վարդան Մամիկոնյանին.

— «Գուլենք, սպարապետ, սերունդ-սերունդ կուվով զնանք՝ մի տեղ լույսը կբացվի...»

Վարդանը հուզված, լցված նայեց Սահակին, բազմությանը և գլուխը շարժեց տխուր.

— Ազատությունը դժվարին բան է, շինական... այո՞, զնանք սերունդ-սերունդ հասնենք...»։

Ապագայի այդ մեծ հավատով ևն սողողված «Վարդանանք»-ի լավագույն կերպարները։ Այդ հավատը ուժ է ներշնչում մի բոլոր ժողո-

վրբին՝ կռվի ելնել պարսկական հզոր տերության դեմ և պարտության մատնել իրենցից մի քանի անգամ թվով գերազանց պարսկական զորքը:

Վեսլի արվեստը և լեզու

Ռեսալիստական կլասիկ պրոզայից, հատկապես Գոգոլի պրոզայից Դեմիքճյանը ժառանգել է տիպականացման բարդ արվեստը, որը առավել մեծ չափով արտահայտվել է «Վարդանանք»-ի մեջ: Դեմիքճյանը չի տարվում նկարագրվող պատմական ժամանակաշրջանի բոլոր դեպքերի ընդգրկումով: Վերարտադրելով հնագույն ժամանակներում տեղի ունեցած իրադարձությունները, զրոգը առանձնացնում է էականը երկրորդականից, պատմական առաջավոր ձգտումը՝ հետամնացից:

Դեմիքճյանի վեսլում ավելի կամ պակաս մանրամասնությամբ նկարագրված են տասնյակ հերոսներ, շինականներ, նախարարներ, հոգևորականներ: Թե՛ պատմական դեմքերը և թե՛ ոչ պատմական կերպարները ցայտուն անհատականություններ են: Այդ հերոսները կենդանի մարդիկ են, միաժամանակ հասարակական որոշ դասերի ներկայացուցիչներ:

Վեսլում հանդես եկող կերպարների բնորոշ գծերը հեղինակը բացահայտում է նրանց անձնական կյանքի և հասարակական գործունեության մեջ: Վարդան Մամիկոնյանի կամքը և վճռականությունը մասնավոր կյանքում (նրա հրաժեշտը մոր հետ, հանդիպումը և զրույցը եղբոր հետ, Ավարայրի ճակատամարտի վճռական պահին սիրելի որդուն անխուսափելի մահվան ուղարկելը)՝ արտահայտվում է այնպես, ինչպես հասարակական կյանքում՝ Արտաշատի ժողովում, Հազկերտի առյուծի առաջ և այլն: Դեմիքճյանը վարպետորեն ցույց է տրվել իր կերպարների անձնական վարքագծի հասարակական-քաղաքական հիմքերը: Վեսլի հիմնական կերպարները որպես բնավորություններ ամբողջանում են հասարակական պետական դործունեության ոլորտում, առանց որի նրանք կդադարեին պատմական վեսլի կերպարներ լինելուց: Միհրնեսը, Հազկերտը, Նուսրավարտը կերտված են սատիրական մեծ ուժով, կերպարներ, որոնք ցայտուն կերպով արտահայտում են բռնակալության ողջ դաժանությունը, ենեզությունը և ներքին սնանկությունը:

Հարուստ և ինքնատիպ է Դեմիքճյանի լեզուն. բառերի վարպետ ընտրությամբ նա կարողանում է ամենաբազմազան նրբերանգներով

արտահայտել իր հերոսների ներքնաշխարհը, հոգեբանական թարգանցումները, իրադրություններն ու երևույթները նկարագրել շոշափիլի կոնկրետությամբ: Դեմիրճյանը հմտորեն է օգտագործում մեր լեզվի հարուստ քառապաշարն ու լեզվական հնարավորությունները, ժողովրդական հյուսիշ դարձվածքներն ու ասացվածքները: Սակայն «Վարդանանքը» ունի լեզվական լուրջ թերություններ. հեղինակը չափից շատ է օգտագործում գրաբարի հնացած քառապաշարն ու քերականական ձևերը, որը վնասում է դեղարվեստական տեքստի մատչելիությունը:

Սովետահայ քննադատությունը ցույց է տվել «Վարդանանք»-ի նաև գաղափարական սխալները: Վարդանանց պատերազմի մասին հայ պատմագրության տվյալների նկատմամբ անքննադատ վերաբերմունքը հեղինակին հասցրել է կրոնի նշանակության գերազնահատմանը, որի հետևանքով հայ ժողովրդի հայրենասիրական շարժումը վեպի առաջին հրատարակության մեջ սխալ կերպով ներկայացվում էր որպես նահատակություն հավատի համար: Բայց վեպի երկրորդ, վերամշակված հրատարակության մեջ Դեմիրճյանը հիմնականում վերացրել է այդ թիրությունները:

**ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ՍՈՒԿ-
ԾԱԳՈՐԾՈՒՅՈՒՆԸ
ԽՆԱՊԱՄՈՒՐԱՊՄԱՆ
ՄԱՐԻՆԵՐԻՆ**

Հետպատերազմյան տարիներին Դեմիրճյանը շարունակում է ակտիվորեն մասնակցել մեր երկրի կյանքին, սովետական մարդու հերոսական առօրյան, նրա վեհությունն արտահայտելու համար ղիմում է նոր թեմաների: Ողբ-շքնչված կոմունիզմի կառուցման վիթխարի հետանկարներով, Դեմիրճյանը իր պատմվածքներում, մամուլում շարունակաբար տպագրվող ակնարկներում և հոգվածներում վեր է հանում սովետական մարդկանց աշխատանքային հաջողությունները, հաստատում ոտեղծագործական աշխատանքի նրանց անկոտրելի ձգտումը:

Դեմիրճյանի վերջին տարիների ստեղծագործության մեջ նշանակալից է «Տունը» պատմվածքը: Հաստատուն բնակատեղ, հայրենի օջախ ունենալու երազանքը մշտապես ուղեկցել է հալածված, պանդուխտ հայ մարդուն: Այդ երազանքը սրտներում մեռել են «Տունը» պատմվածքի հերոս Արթինի հայրը, պապը: Նրանք, ինչպես և Արթինը, կառուցել են բաղմամբիվ տներ, ամեն անգամ կարծել, թե այն կլինի հաստատուն օջախ, բայց և ամեն անգամ տեղահան են արվել, բռնությունների տառապանքը Արթինին բե-

րել է այն համովման, որ ինքը տուն չի կարող ունենալ, քանի դեռ հայրենիք չունի: «Աս տունը մերը չէ»,— ասում է Արթինը սեփական քրտինքով Հալիսյում կառուցված իր տան մասին:

Արթինն ու նրա որդիները սեփական տուն՝ հայրենիք են գտնում փոխադրվելով Սովետական Հայաստան: Իր հերոսների կյանքում կատարված արմատական փոփոխությունները սովետական երկրում Դեմիրճյանը ներկայացնում է նրանց՝ մասնավորապես Արթինի որդիների, հայրենասիրական ըմբռնումների էվոլյուցիան պատկերելու միջոցով: Դեմիրճյանը գեղարվեստորեն արտահայտում է այն գաղափարը, որ աշխատավոր մարդու հայրենիքն աչն է, որտեղ հարգվում են նրա աշխատանքը, մարդկային ձգտումներն ու արժանապատվությունը: Միաժամանակ Դեմիրճյանը ցույց է տալիս, թե որքան մեծ է սովետական հայրենասիրություն հասկացողությունը, որքան լայն է սովետական մարդու համար հայրենիք ըմբռնումը:

Սովետական գրականության ստեղծագործական մեթոդի՝ սոցիալիստական ռեալիզմի կենսագործումով Դեմիրճյանը հասել է մեծ նվաճումների, սովետահայ գրականությունը հարստացնելով գաղափարական և գեղարվեստական տեսակետից արժեքավոր երկերով:



ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ

Սովետահայ նշանավոր արձակագիր Ստ. Զորյանի ստեղծագործական կյանքը սկզբնավորվել է 1905 թ. ռեուլյուցիայի պարտությանից հետո, ստուլիպինյան ռեակցիայի տարիներին: Զորյանը գերծ շմնաց այդ ժամանակի մոգայական ուղղությունների՝ փմվոլիզմի և իմպրեսիոնիզմի որոշ աղբեցություններից, բայց նա չգնաց անկումային գրականության ուղիներով. կապը ժողովրդի հետ, հայ և ռուս ռեալիստական գրականության տրադիցիաների օգտագործումը. ապահովեցին ռեալիզմի հաղթանակը նրա ստեղծագործության մեջ:

Զորյանն անցել է 40-ամյա ստեղծագործական ուղի, որի մեծ մասը ընթացել է սովետական իրականության պայմաններում: Զորյանի սովետական շրջանի ստեղծագործության մեջ արտացոլվել են մեր կյանքի մի շարք էական կողմերը, նրա ստեղծագործությունը սովետահայ գրականության կարևոր նվաճումներից մեկն է:

Կյանքը

Ստ. Զորյանը ծնվել է 1890 թ. Ղարաքիլիսայում (այժմ Կիրովական), գյուղացու ընտանիքում: Նրա մանկության տարիներն անցել են ծննդավայրում, որտեղ նա զրկված էր մայրենի լեզվով կրթություն ստանալու հնարավորու-

թյունից: Ցարական կառավարության հրահանգով փակվել էին հայկական դպրոցները, բայց մի շարք գյուղերում ու քաղաքներում գոյություն ունեին գաղտնի դպրոցներ, որտեղ հայ մանուկները շարունակում էին սովորել մայրենի լեզվով: Նման մի դպրոցում է իր նախնական կրթությունն ստացել Զորյանը, իսկ հետո սովորել է Ղարաքիլիսայի ռուսական դպրոցում:

Ռուսաց լեզվի իմացությունը նրան հնարավորություն տվեց ծանոթանալու համաշխարհային նշանակություն ունեցող ռուս գրականությանը: Քաղաքային դպրոցն ավարտելուց հետո Զորյանը գնում է Թիֆլիս, հուլյս ունենալով ընդունվել Ներսիսյան դպրոցը: Սակայն նյութական ծանր պայմանները նրան հարկադրեցին հրաժարվել այդ մտքից: Ֆիզիկական դոյուրությունն ապահովելու համար նա աշխատանքի անցավ Թիֆլիսի տպարաններից մեկում, որպես սրբագրիչի օգնական, և հետագա տարիների ընթացքում ռուսման թերին լրացրեց ինքնակրթական համառ աշխատանքով:

1909 թ. Զորյանը սկսեց աշխատակցել հայ պարբերական մամուլին, որը նրան հնարավորություն տվեց շփվելու հայ գրողների ավելի լայն շրջանի հետ: Այդ տարիներին պարբերական մամուլում տպագրվեցին Զորյանի մի շարք պատմվածքները, ինչպես՝ «Բարեկամներ», «Կատակ», «Շաքարաման», «Ճաշ», «Կամաց խոսեք», «Կասկած» և այլն, որոնք արժանացան գրական հասարակայնության ջերմ համակրանքին: Զորյանի առաջին պատմվածքները բարձր գնահատեցին նաև Թումանյանը, Շիրվանզադեն և Տերյանը: 1919 թ. Զորյանը Թիֆլիսից վերադառնում է Երևան, Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո նա լայն հնարավորություն է ստանում զբաղվելու ստեղծագործական աշխատանքով: Սովետական գրականությանը մատուցած ծառայությունների համար Ստ. Զորյանը պարգևատրվել է Աշխատանքային Կարմիր Դրոշի և Պատվո նշան շքանշաններով: Ստ. Զորյանը 1954 թ. ընտրվեց ՍՍՌՄ Գերագույն Սովետի ղեկպոստատ:

ՍՏ. ԶՈՐՅԱՆԻ ՆԱԽԱՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

1918 թ. լույս տեսավ Զորյանի պատմվածքների և նովելների առաջին ժողովածուն՝ «Տխուր մարդիկ» վերնագրով: Այդ ժողովածուում ընդգրկված պատմվածքները գրված են առաջին համաշխարհային պա-

տերազմի տարիներին, Երբ հայ ժողովրդին և նրա կուլտուրային սպառնում էր ոչնչացման վտանգը: Այդ տարիներին ավելի էր խորացել պայքարը հայ գեմոկրատական և նացիոնալիստական գրականության միջև, ավելի ևս ուժեղացել էին հուսալքությունը և անկումային տրամադրությունները:

Օգտագործելով մի կողմից Թումանյանի, մյուս կողմից Ա. Պ. Ջևխովի ստեղծագործական սրաղիցիաները, Ջորջյանը ստեղծեց զեղարվեստական նոր արժեքներ նախասովետական հայ գրականության մեջ:

Ջորջյանի նախասովետական շրջանի ուտեղծագործության մեջ, մասնավորապես «Տխուր մարդիկ» գրքում շին անդրադարձել իր ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական մեծ իրադարձությունները, բայց բուրժուական իրականության արատների մերկացումով Ջորջյանը հարստացնում էր հայ դեմոկրատական, ռեալիստական գրականությունը:

Անձուկ և սահմանափակ է ախուր մարդկանց աշխարհը. դրանք պատմության իսկական ընթացքից դուրս ընկած, բուսական կյանքով ասլորող մարդիկ են, որոնց գոյության ընթացքը կալորող են շեղել, անդամ կործանել առօրյա և աննշան կենցաղային դեպքերը: Մանր-բուրժուական հումանիզմի դիրքերից, երբեմն նուրբ հեղեանքով, երբեմն խորը կարեկցանքով Ջորջյանը նկարագրում է բուրժուական կյանքի պայմաններում խեղանդամվող, ամայացող մանր մարդուն: Ահա «Օրիորդ Մարիամը», Ջորջյանի վաղ շրջանի բնորոշ պատմվածքներից մեկը, որի հերոսուհին արդեն երիտասարդությունը կորցրած և ամուսնանալու ակնկալություններից հուսահատված մի աղջիկ է: Ընկերուհին նրան հույս է ներշնչում, թե ծանոթ հաշվապահը պատրաստվում է ամուսնության առաջարկ անելու, բայց հետո պարզվում է, որ դա սոսկ թյուրիմացություն է, որ հաշվապահը օրիորդ Մարիամի միջոցով ցանկանում է առաջարկ անել նրա ընկերուհուն: Այդ ինքնին աննշան թյուրիմացությունը մեծ արագիւմ է առաջացնում նրա փոքր կյանքի մեջ և զոկում ասլրելու հետագա ցանկությունից: Վճռական մարդը պատմիվածքի հերոսը, ուսանող Արշամը, որն իր սալրուտը հայլթալթում է մասնալոր դասերով և ասլրում է ծալրահեղ աղքատության մեջ, ամաչում է հարուստ վաճառականից պահանջել իր դասադիին: Ամիսներով կուտակված դալրուլթով «Վճռական մարդը» գնում է նախատելու անամոթ վաճառականին և պահանջելու իր դասադիին: Բայց հանդիպելով վաճառականին, նա կորցնում է «վճռականությունը» և ոչ

ձիայն չի ստանում իր վարձը, այլև ամօթից պարտք է տալիս իր վերջին կոպեկները:

Այդպիսին են սեփականատիրական հասարակությունից մերժված, իրենց պատշաճի մեջ ծվարած «տխուր մարդիկ»:

Զորքանի նախասովետական շրջանի ստեղծագործության մեջ հիմնական տեղ է դրավում հայ գյուղի նկարագրությունը, որի մի շարք բնորոշ գծերը նա դրսևորել է «Ցանկապատը» պատմվածքների շարքում:

Զորքանի նկարագրած գյուղը իր մի քանի կողմերով արդեն ծանոթ էր ընթերցողին Թումանյանի և նրա ժամանակակիցների ստեղծագործություններից. այդ աղբատության, կրոնական սնահավատության և սակավահողության մեջ տառապող հայ գյուղն էր, որտեղ օրըստօրե խորանում էր հակադրությունը և պայքարը շահագործողների և աշխատավոր գյուղացիության միջև, որտեղ մասնավոր սեփականատիրության կիրքը խեղդում և ոչնչացնում էր մարդկային անհատի լավագույն հատկությունները: Զորքանը տիպական գծերով վերարտադրում է, թե ինչպես մասնավոր սեփականությունը վերածվում է պաշտամունքի, և սեփականատիրական տենչը հաճախ հանդես է դալիս անհեթեթ ձևերով: Գրողը դատապարտում է այն փրականությունը, որտեղ մի կուժ ջրի համար կռվում և երկու բանակի է բաժանվում գյուղը («Ղաչադան»), կամ մի թզաչափ հողի համար ռիսերիմ թշնամիներ են դառնում և սերնդե-սերունդ վիճում են հարեանները, որոնց տարիների վեճը չի դադարում նույնիսկ այն պահին, երբ նրանք ամեն ինչ թողած գաղթում են հայրենի գյուղից («Ցանկապատ»):

Այդ մոռյլ իրականության մեջ սեփականատիրական կրքերից կուրացած մարդիկ իրենց անձնական շահից զատ ոչինչ չեն տեսնում: Հարստանալու տենչը ժամկոչ Անտոնի հոգում սպանել է մարդկային ամեն մի զգացում: Հիվանդագին փողասիրությունը և ծայրահեղ ժառտությունը դարձել են նրա գլխավոր հատկությունները: Նա ազբանոցներից հավաքում է անպետք իրեր, որոնք վաճառում է կամ պահում, իսկ գիշերը ծվարած իր փոքրիկ խցում՝ հաշվում է օրվա վաստակը, հրճվում իր կոպեկներով, դրա մեջ տեսնելով իր ամսյացած կյանքի իմաստը: Բայց պատահաբար կորցնելով տարիների ընթացքում կոպեկներով հավաքած գումարը, ժամկոչ Անտոնը կորցնում է նաև իր կյանքի և գոյության իմաստը: Կորուստը գտնելու խելացնոր և հուսահատ ջանքերը նրան հասցնում են մահվան: «Ժամկոչ Անտոնը» Զոր-

յանի նախասովետական շրջանի լավագույն պատմվածքներից է, որտեղ հեղինակը ճշտորեն վերարտադրում է ռեալիստական գրականության ծանոթ թեմաներից մեկը, ժլատությունը: Լինելով ինքնատիպ կերպար, ժամկոչ Անտոնը բնավորության հիմնական գծերով նմանվում է Պուշկինի ժլատ ասպետին, Բալզակի Գոբսեկին, Գոգոլի Պլյուշկինին և ուրիշներին, կերպարներ, որոնք գեղարվեստական արտասովոր ուժով արտահայտում են սեփականատիրական հասարակության արատները: Զուգահեռաբար կլասիկ կերպարների ընդհանրացման մեծ ուժը, ժամկոչ Անտոնի կերպարը, այնուամենայնիվ ճշտորեն արտահայտում է փողի խեղաթյուրող դերը սեփականատիրական հասարակության մեջ:

Կյանքի տարբեր հարցեր են շոշափվում Զորյանի «Պատերազմ» և «Խնձորի սպիտակ» պատմվածքների շարքում: Այդ պատմվածքներում ավելի է ընդարձակվում Զորյանի ստեղծագործական տեսադաշտը, կենցաղային թեմաներից նա ձգտում է անցնել հասարակական ընույթ կրող թեմաների վերարտադրմանը:

Զորյանը ճշտորեն նկատել է հայրենասիրության տարբեր արտահայտությունները իմպերիալիստական, անարդարացի պատերազմի ժամանակ: «Պան Պրժևիցկի» պատմվածքում գրողը համակրանքով է նկարագրում ծերունի լեհ հայրենասերին, որը ջերմորեն սիրում է հայրենի իրերը, նրա կուլտուրան և անհանգստանում է իր ժողովրդին սպառնացող վտանգով: Պան Պրժևիցկու հայրը զոհվել է հայրենիքը օտար նվաճողներից պաշտպանելու համար, նա նույնպես ցանկանում է իր վերջին ուժերը նվիրել հայրենիքի պաշտպանության դրժին, սակայն ծերունու խնդիրը մերժում են և նա վշտից մեռնում է, կրծքին դրած Միցկիեյի հատորը:

Այլ բնույթ ունի բուրժուազիայի հայրենասիրությունը: «Հայրենասերը» պատմվածքում Զորյանը ծաղրում է բուրժուական կեղծ հայրենասիրությունը, մերկացնում է բուրժուական ինտելիգենցիային, որն իբր թե մեկնում է ճակատ՝ հայրենիքը պաշտպանելու համար: Վագոնի իր ուղեկից զինվորներին, որոնք վերադառնում են իմպերիալիստական պատերազմի հեռավոր ճակատներից, «հայրենասերը» հորդորում է նորից գնալ կռվի: Բայց լսելով, որ թշնամիները Երբեմն հարձակվում են գնացքի վրա, «հայրենասերը» միանգամից կորցնում է իր ամբողջ պերճախոսությունը, շփոթվում, շտապով իջնում է գնացքից և ետ փախչում: Այս փոքրիկ պատմվածքում Զորյանը մի քանի բնորոշ գրծերով վերարտադրել է բուրժուական ինտելիգենտի կերպարը, որը

հայրենասիրության մասին կեղծ ֆրազներով փորձում է իր դասակարգի շահերը ներկայացնել որպես համազգային շահեր:

Զորյանի այդ տարիների ստեղծագործությանն և մեր դրականության լավագույն գործերից մեկը «Խնձորի այգին» վիպակն է, որտեղ հեղինակը ռեալիստական ճշմարտացի գծերով ցույց է տալիս սեփականատիրական հարաբերությունների հակամարդկային էությունը:

«Մահից ուժեղ», «Ծանր ժամեր» խորագրերի տակ ղետեղված պատմվածքները Զորյանը դրել է 1919—22 թվականներին, բայց դրանք հիմնականում արտահայտում են առաջին իմպերիալիստական պատերազմի և հետագա տարիների իրադարձությունները: Բնորոշ է այն հանգամանքը, որ այդ գործերում թեև նա ավելի մոտ է կանգնած սլաւամական իրականությանը, բայց ավելի ուրուշակի են դրսևորվում նրա աշխարհայացքի և մեթոդի ուժեղ ու թույլ կողմերը: «Մահից ուժեղ» պատմվածքում Զորյանը վերարտադրել է սիրո հմայքը, ուժը և ղեղեցկությունը, մարդկային ամենավեհ զգացմունքներից մեկը, որ մասնավոր սեփականատիրության պայմաններում ենթարկվում է խեղաթյուրման կամ կործանման: Այդ բախտը վիճակված է նաև ձկնորս Լեոնին, որը վճիտ, ամբողջ հոգին համակող սիրով սիրում է քաղաքից եկած սպիտակազգեստ աղջկան: Մարդկային բարձր և վեհ զգացմունքները ճշմարտացիորեն արտահայտող գործերի հետ Զորյանը նույն այդ տարիներին գրել է մի շարք պատմվածքներ, որոնք արատավոր են թե՛ զաղափարական և թե՛ ղեղարկեստական տեսակետից: «Սերը», «Մեղքը» և «Քնարիկը» պատմվածքներում ենթարկվելով բուրժուական ռեակցիոն հայացքների ազդեցությանը, Զորյանը սիրո զգացումը մեկնաբանել է որպես սոսկ բիոլոգիական ձգտում, ենթագիտակցական մի զգացմունք, որն անխուսափելիորեն հանգում է ոճրագործության: Գաղափարական տեսակետից արատավոր են նաև «Օհանի մահը» և «Երգիչ» պատմվածքները: Այդ գործերում Զորյանը չի կարողացել մերկացնել բռնակալական Խյուրբիայի կատարած սոսկալի ոճիրները ժամանակավորապես զրավված հայկական գյուղերում, իսկ հայ գյուղացիներին միանգամայն սխալ կերպով պատկերացրել է որպես հլու և հնազանդ մարդիկ. միակ բանը, որ նրանք կատարում են, դա պասսիվ բողոքն է, ինքնասպանությունը: Զորյանի հետագա տարիների ստեղծագործության մեջ հաղթանակեցին ռեալիզմի առողջ տարրերը: Նա կարողացավ ազատագրվել բուրժուական անկումային դրականության ազդեցությունից և ստեղծել հայրենասիրության ու հումանիզմի զաղա-

փարներով հաղեցած լավագույն դործեր, ինչպես «Ջրհորի մոտ», «Պատերազմ» և ուրիշ պատմվածքներ:

**«Պատերազմը»
պատմվածքը**

Զորքանի նախասովետական շրջանի ստեղծագործության լավագույն հատկությունների ամփոփումը «Պատերազմը» պատմվածքն է, որտեղ միաժամանակ որոշակիորեն նկատվում են գրողի դեմոկրատական հայացքների խորացումը և սովետական կարգերի նշանակությունը մեծանելու իդեալական նախադրյալները:

«Պատերազմը» պատմվածքում Զորքանը վերարտադրում է առաջին համաշխարհային պատերազմի աղետալոր հետևանքները աշխատավորական զանգվածների համար: Նկարագրվող իրականությունը մեզ ծանոթ է գրողի նախկին երկերից: Այդ չքավորության մեջ տառապող հայ գյուղն է, որը պատերազմի լուրը ընկալում է որպես մեծ արհավիրք: Աշխատանք և խաղաղություն երազող մարդիկ կարվում են հողից և նետվում պատերազմի հորձանքի մեջ: Մանր մտքերով են հեռանում ճակատ մեկնող երիտասարդները հայրենի Կաղնուտ գյուղից, նրանք բռնի կերպով ուղարկվում են անարդարացի պատերազմի, կարիքի մեջ և անօդանավան վիճակում թողնելով իրենց ընտանիքները: Տխուր և հուսահատ է Մաճկալանց Դավիթը, նա տանը թողնում է ծերունի ծնողներին և երիտասարդ կնոջը:

Հալարավոր իր նմանների հետ Դավիթը ընկնում է պատերազմի մեջ, լինում օտար վայրերում և տարիներ հետո վերադառնում է հայրենի տուն՝ հաշմանդամ դարձած: Չկա այլևս սիրելի կինը, նա ամուսնացել է ուրիշի հետ, իսկ ծերացած ծնողները հազիվ են քարշ տալիս իրենց գոյությունը: Պատերազմի մեջ ֆիզիկապես և հոգեպես քայքայված Դավիթը ավելի է հուսահատվում: Նա փորձում է գյուղական աշխատանքի մեջ փարատել իր վիշտը, բայց պարզվում է, որ հաշմանդամ ոտքով անկարող է աշխատել, որ ինքը պիտանի չէ այլևս ֆիզիկական աշխատանքի համար: Դավիթի հուսահատությունը վերածվում է զայրույթի, զայրույթ նրանց դեմ, որոնք զրկել են նրան մարդկային կյանքից և աշխատելու ունակությունից: Դեռևս չղիտակցված այդ զայրույթն է, որ նրան մղում է սպանելու տանուտեր Արսենին, վերջինիս մեջ տեսնելով իր դժբախտության պատճառը:

Զորքանը ճիշտ է նկատել անարդարացի պատերազմի հետևանքով գյուղացիական աշխատավորական մասսաների մեջ տեղի ունեցած քաղաքական հասունացումը, որը իրական կյանքում շատ ավելի խորն էր

և դիտակցված, քան այն տրված է Դավթի կերսյարում: Բայց չնայած դրան, Զորյանի պատմվածքում արտահայտվում է ժողովրդական մասսաների համար բնորոշ դժգոհությունը տիրող կարգերից, դժգոհություն, որը հետագայում վերածվեց դիտակցված պայքարի ցարական բռնակալության դեմ:

ՍՏ. ԶՈՐՅԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում սովետական կարգերի հաստատումով սկզբնավորվեց Զորյանի ստեղծագործական կյանքի նոր շրջանը: Երիտասարդ արձակագիրը հայ դեմոկրատական ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչների հետ անվերապահորեն անցավ Սովետական իշխանության կողմը, դիտակցելով, որ սովետական կարգերի հաղթանակը հայ ժողովրդի համար իսկական մարդկային կյանքի սկիզբն է: Ավելի խորը ուսումնասիրելով ուսս դրականությունը, հետևելով սովետական դրականության վարպետներին՝ Ա. Մ. Գորկու, Ա. Սերաֆիմովիչի, Դ. Ֆուրմանովի, Ա. Ֆադեևի և ուրիշների ստեղծագործական փորձին, սովետական թեմատիկայի գեղարվեստական յուրացման բնագավառում Զորյանը զգալի նվաճումների հասավ: Գրողի ստեղծագործական շրջադարձի առաջին բնորոշ արտահայտությունը «Հեղկոմի նախագահը» պատմվածքն է, գրված 1923 թ.: Այս պատմվածքում հեղինակը նկարագրել է Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի համար մղված պայքարի էպիզոդներից մեկը, արտահայտելով այն դադափալը, որ ռևոլյուցիայի շահը կոմունիստների համար բարձր է ամեն բանից, որ կոմունիստները սովետական կարգերի հաղթանակի համար անողոք կերպով ոչնչացնում էին հակառակույցի տարրերին: Պատմվածքի բովանդակությունը հետևյալն է. Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի առաջին ամիսներն են: Մեր երկրից դուրս չսլքված ռճրագործ դաշնակ թափթփուկները դեռևս շարունակում են դավերը և ավանտյուրաները նորաստեղծ Սովետական իշխանության դեմ: Կարված զրույցուն է դավառական փոքրիկ քաղաքում, որտեղ օր ու գիշեր աշխատանքային եռ ու զեռի մեջ է հեղկոմը և հատկապես նրա նախագահ, հին ռևոլյուցիոներ Օսեփը: Այդ տագնապալից օրերին հեղկոմը բանտարկում է Օսեփի կնոջ եղբայրներին, որոնք կապ են պահպանում Երևանի դաշնակ ավանտյուրիստների հետ: Դժվարին դրույթյան մեջ է հեղկոմի նախագահը: Ռևոլյուցիայի շահը պահանջում

է դնդակահարել հակառուլուցիոն տարրերին, բայց միաժամանակ Օսեփը հասկանում է, որ դրանից հետո սիրած կինը կհրաժարվի իրենից: Որոշ տարակուսանքից հետո Օսեփը գնում է հեղկոմի նիստին, որտեղ տրվում է հակառուլուցիոններին դնդակահարելու վճիռը: Օսեփը ուշ գիշերին վերադառնում է ատեն: Կինը՝ խմանալով հեղկոմի վճիռը, հուսանում է նրանից:

Այս պատմվածքն իր թեմայով, դադափարական բովանդակությամբ և դեղարվեստական կերպարների հատկություններով հիմնովին տարբերվում է Զորյանի նախասովետական շրջանի ստեղծագործություններից: «Հեղկոմի նախագահը» պատմվածքում արդեն այլևս չկա նախկին դործերին հատուկ թեմատիկ և իդեական սահմանափակությունը, մասնավոր սեփականատիրական կարգերից մերժված, կյանքի եւուղեներից հեռու կանգնած պասսիվ մարդկանց տանջանքը: «Հեղկոմի նախագահը» պատմվածքի հերոսը հասարակական կյանքով ապրող մարդն է, որը պատմության բախտը վճռող Կոմունիստական պարտիայի անդամ է, անցել է Կոմունիստական պարտիայի ուսուցիչի հերոսական գործունեության մեծ դպրոցը: «Օսեփը շատ անգամ էր ենթարկվել վտանգների, այն էլ ինչպիսի... ամուսնանալու օրից, պատերազմից առաջ, պատերազմի օրերին քանի անգամ էր խուզարկվել, բանտ նստել»: Օսեփի բնավորության լավագույն դժերը, սկզբունքայնությունը, հետեղականությունը, խուճապի շենթարկվելը կոփվել են ուսուցիչի տալիս մեջ: Նա հավատարիմ կերպով ծառայել է ժողովրդի դործին և խորապես գիտակցում է, որ ժողովրդի շահը պահանջում է անողոր լինել թշնամու նկատմամբ, այդ պատճառով թշնամիներին դնդակահարելու վճիռը կայացնելուց հետո նրա խիղճը միանգամայն հանդիստ է:

Նախկին դործերում ստեղծած կանացի բնավորությունների համեմատությամբ նոր դժերով է օժտված հեղկոմի նախագահի կինը՝ տիկին Վերգինը: Նա սիրում է Օսեփին, բայց կուրորեն, որովհետև չի հասկանում նրա կատարած գործի մեծ նշանակությունը: «Տիկին Վերգինը ուսուցիչայով, պարտիական գործերով հետաքրքրվում էր այնքան, որքան դա կապ ուներ իր ամուսնու կյանքի ապահովության հետ»: Սիրելով Օսեփին, Վերգինը հավատում էր, որ Օսեփը ինչ որ անում է, լավ է անում, մաքուր սրտով, արդար գործի համար: Սակայն երբ Օսեփը նույն արդարությամբ է վերաբերվում նրա կոմունիստական եղբայրների դործին, Վերգինը, նույնիսկ հասկանալով, որ պատիժները

ռևոլյուցիայի ժամանակ անխուսափելի են, այնուհանդերձ հեռանում է Օսեփից, չհաշտվելով այն մտքի հետ, որ իր եղբայրներին հեղկոմը փնդակահարել է՝ շարժվելով արդարության և ճշմարտության պահանջով:

**«Գրագարանի
աղչիկը» վիպակը**

Ստ. Զորյանի սովետական շրջանի ստեղծագործության լավագույն նվաճումներից մեկը «Գրագարանի աղչիկը» վիպակն է: Այս երկի մեջ Զորյանը ձգտել է վերարտադրել սովետական կարգերի հաստատման նախօրեին Հայաստանում տիրող ծանր կացությունը և բոլշևիկների պարտիայի հերոսական գործունեությունը աշխատավոր ժողովրդի ռևոլյուցիոն պայքարը կազմակերպելու համար: Վիպակում նկարագրված դեպքերը տեղի են ունենում գավառական փոքրիկ քաղաքում, դաշնակների ոճրագործ տիրապետության օրերին: Հին կարգերում իրավազուրկ և խավար կյանքով ապրած պառավ լվացատուհին դեպքերի իրեն հատուկ ըմբռնումով պատմում է իր աղջկա՝ Վիկտորիայի ռևոլյուցիոն գործունեության մասին, պատմության ընթացքում բնութագրելով նաև իրեն: Մոր խոսքերի մեջ դրսևորվում է աշխատավոր կնոջ կյանքի դառն պատմությունը, նրա կրած տառապանքները՝ ֆիզիկական և բարոյական գոյությունը պահպանելու համար:

Չքավոր լվացարարուհին մեծ դրկանքների գնով աղջկան ուսման է տալիս, հուսալով, որ դպրոցն ավարտելուց հետո նա կօգնի մորը, կթեթևացնի ընտանիքի ծանր վիճակը: Բայց Վիկտորիան դնում է մոր համար անհասկանալի ճանապարհով: Նա կապվում է կոմունիստների հետ, դառնում ընդհատակյա աշխատող: Կոմունիստական կազմակերպության շարքերում աճում և դաստիարակվում է Վիկտորիան, դառնալով խիզախ և տոկուն կոմունիստ: Արհամարհելով իրեն սպառնացող վտանգները, Վիկտորիան համարձակ կերպով հանդես է գալիս դաշնակների կրամայականությունների, ստի և կեղծիքի դեմ:

Մայիսմեկյան ցույցին նա խանդավառ ճառ է արտասանում և խիզախորեն մերկացնում դաշնակների դավաճառական գործունեությունը: «Ընկերներն՛ր, ասում է նա... էն, ինչ որ էստեղ խոսեցին, էդ բոլորը կեղծ է, որովհետև, ասում է,— խոսքով ուրիշ բան են ասում էս պարոնները, գործով ուրիշ բան են անում... Սրանք ասում են թե՛ բոլոր աշխատողները, բանվորները պետք է միանան, բայց, ասում է, իրանք չեն ուզում միանալ ուս բանվորների, մի խոսքով ուս խալխի հետ,

որ կալում են բոլոր մարդկանց բախտավորացնելու համար: Սրանք, ասում է, ոչ միայն չեն ուզում միանան նրանց, այլ, միեւն անգամ, օգնում են նրանց թշնամիներին: Ու սրանք, ասում է, ինչ որ ասում են, սուտ են ասում: Թող մեր ժողովուրդն էդ բանը լավ իմանա: Սրանք մեր ժողովրդի թշնամիներն են»:

Պառավ մայրը պատկերացում չունի ողջկա դործունեության նպատակների մասին, նա չի պատկերացնում, որ հնարավոր է կյանքի այլ կարգ: Այդպես սերունդներով ապրել են նրանք, նրանց պապերը և հայրերը, այդպես են ապրում և իրենք: Մայրը հասկացողություն չունի այն մասին, որ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեվոլյուցիան ազատագրելով աշխատավորությանը ճնշումից և շահագործումից, ազատագրել է նաև աշխատավոր կնոջը:

Մոր անզուլուծյան հետեանքով Վիկտորիային բանտարկում են: Մայրը ծանր է ապրում ահամա կատարած հանցանքը, նա դիմում է խալիֆա Մեխալին, տերտերին, դաշնակ կոմիսարին ողջկա ազատման համար, բայց դրանք մորը միայն անարդում և անպատվում են: Բախվելով այդ մարդկանց հետ, մոր հոգեբանության մեջ տեղի է ունենում բեկում, նա սկսում է հասկանալ Վիկտորիայի և նրա ընկերների մղած պայքարի արդարացիությունը: Կրկնապատկվում է և մոր սերը ողջկա հանդեպ. կյանքի փորձը և բնական խելը հնարավորություն են տալիս անզրպեա կնոջը տեսնելու նաև այն, ինչ որ դուրս է նրա տեսողության դաշտից, հասկանալու և երբեմն կոահելու այն, ինչի համար նա իր ընդհանուր զարգացումով դեռևս պատրաստված չէր: Հասնելով այն գիտակցությանը, որ կոմունիստները պայքարում են ժողովրդի ազատ և երջանիկ կյանքի համար, մոր մեջ, Վիկտորիայի և նրա ընկերների նկատմամբ տաժած խոր սիրո հետ միասին, առաջանում է բուռն ատելություն դաշնակ ոճրագործների նկատմամբ:

Վիպակում համազդիչ կերպով արտահայտվել է այն դադափարը, որ կոմունիստների կատարած դործը՝ դա ժողովրդի հարազատ դործն է:

«Գրադարանի աղջիկը» սովետահայ գրականության լավագույն երկերից մեկն է, որտեղ դեղարվեստորեն նկարագրված է հայ ժողովրդի մղած պայքարը սովետական կարգերի հաստատման համար: Վիպակի հիմնական թերությունն այն է, որ այդ դործի մեջ թույլ են նկարագրված կոմունիստների սերտ կապը ժողովրդի հետ և ռուս ժողովրդի եղբայրական օգնությունը հայ աշխատավորությանը՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար մղած պայքարում:

1925 թ. ՀամԿ(բ)Պ XIV համագումարում, Կենտրոնական Կոմիտեի քաղաքական հաշվետվության մեջ խոսելով չքավորական խմբեր կադմակերպելու անհրաժեշտության մասին, Ի. Վ. Ստալինն ասում է.

«...Այդ հարկավոր էր, որպեսզի վերադասված չքավորության փոշիացածությունը և հնարավորություն տանք նրան՝ կոմունիստների օգնությամբ կազմակերպվելու որպես ինքնուրույն քաղաքական ուժ, որը կարող է պրոլետարիատի համար կազմակերպված հենարան ծառայել գյուղում կուլակի դեմ մղվող պայքարում, միջակ դյուղացիության համար մղվող պայքարում»¹:

Այդ էր մեր երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում մեր պարտիայի քաղաքականությունը չքավոր գյուղացիության վերաբերյալ: Այդ խնդրին է անդրադառնում Զորյանը «Վարդաձորի կոմունը» պատմվածքում, նկարագրելով սովետահայ գյուղում տեղի ունեցող դասակարգային պայքարը և առաջին կոմունաների կազմակերպումը:

«Վարդաձորի կոմունը» պատմվածքի գլխավոր հերոսը՝ Զաքարենց Բենոն, տասը տարի ապրել է Ռուսաստանում և մասնակցել է քաղաքացիական կռիվներին: Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո նա վերադարձել է հայրենի գյուղը և Ռուսաստանում տեսած կոմունաների օրինակով ցանկանում է իրենց գյուղում հիմնել գյուղատնտեսական կոմունա: Բենոյին հաջողվում է համոզել մի քանի համագյուղացիների, և նրանք կազմակերպում են հինգ տնտեսությունից բաղկացած առաջին կոմունան Վարդաձոր գյուղում: Հեղինակը ճշտորեն ցույց է տվել մանր սեփականատիրական տարբերի, հին, արմատացած սովորությունների և նախապաշարոմների հաղթահարման մեծ դժվարությունները: Բենոն համառ պայքար է մղում իր ընկերների մասնավոր-սեփականատիրական ձեռուհիների դեմ: Հաճախ կոխվել է ծագում նրանց միջև, հողի ընկերություն մշակման հղանակին չհամակերպվելու պատճառով: Բայց կոմունայի աշխատանքը լավ արդյունք է տալիս, և, չնայած կուլակների կատաղի դիմադրությանը, կոմունան նոր համակիրներ է պրավում իր շարքերը: «Վարդաձորի կոմունը» պատմվածքում Զորյանը ձիշտ է նկարագրել վերականգնման շրջանի սովետական գյուղի մի քանի գծերը. ինչպես, օրինակ, մանր-սեփականատիրական հողերանությունը, կուլակների պայքարը չքա-

¹ Ի. Վ. Ստալին, Երկեր, հատոր 7, էջ 367:

վորների դեմ և այլն: Սակայն պատմվածքում բացակայում է պատմական այն ճշմարտությունը, թե ինչպես կոմունիստների օգնությամբ չքավոր գյուղացիությունը կազմակերպվում էր որպես ինքնուրույն քաղաքական ուժ՝ կուլակության դեմ, միջակ գյուղացիության համար մղվող պայքարում:

Մեր հրկրի սոցիալիստական ինդուստրացման ժամանակաշրջանը շինարարական բուռն վերելքի ժամանակաշրջան էր, որը բազմակողմանիորեն արտացոլվել է սովետահայ դրականության մեջ: Այդ գործերից մեկն է Զորյանի «Սպիտակ քաղաք» վիպակը:

«Սպիտակ քաղաք»-ում Զորյանը նկարագրել է շինարարական այդ վիթխարի պրոցեսի կոնկրետ արտահայտությունը Հայաստանի փոքրիկ քաղաքներից մեկում: Վիպակի գլխավոր հերոսը, քաղսովետի կոմունալ բաժնի վարիչ Տիգրանը, տողորված է փոքրիկ տներից, ծուռոճում ու փողոցներից կազմված քաղաք հիմնովին վերակառուցելու, նոր, լուսավոր փողոցներով, դեղեցիկ տներով ու հրապարակներով սպիտակ քաղաք ստեղծելու գաղափարով: Շինարարական աշխատանքի եռուզեռի մեջ Տիգրանը չի դիտակցում, որ մոռացության փ մատենել իր կնոջը՝ Աննային, որը հասարակական-քաղաքական կյանքից կտրված քաղքենիական հակամենքի տեր կին է: Աննայի այդ հակումները ավելի ևս բորբոքում է նրա ընկերուհին՝ Ռոզան, որը քաղքենիության վատթարագույն բարբերի մարմնացումն է: Ընտանեկան կյանքից ձանձրացած Աննան հանդիպում է սպիտակ քաղաքի նոր հատակագիծը նախադժոճ ձարտարապետ Միրյանին և ինչ-որ հետաքրքրական կյանքի նոր հեռանկարով կապվում է նրա հետ, որոշում է նույնիսկ թողնել ընտանիքը և հեռանալ: Բայց մոտիկից լավ ճանաչելով Միրյանին, Աննան հիասթափվում է նրանից, զղջում է իր արարքի համար, և նրան ներում է Տիգրանը: Զորյանն այս վիպակում վերարտադրել է մարդկանց հոգեբանության վերափոխման դժվարությունները սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում: Սակայն վիպակի մեջ արհեստական կերպով փ կապակցված ընտանեկան կենցաղային կոնֆլիկտը քաղաքի շինարարության թեմայի հետ: Սպիտակ քաղաքի ստեղծման պրոբլեմը ֆոն է դարձել կենցաղային դրամայի համար: Դրա հետևանքով, բացի Տիգրանից, սոցիալիստական շինարարության, նոր կյանքի ակտիվ կառուցողների կերպարները էպիզոդիկ բնույթ են կրում:

1932—35 թվականներին Զորյանը գրել է սովետական կյանքի մի քանի տիպական կողմերը պատկերող պատմվածքներ, ինչպես «Խու-

ժան Արշոն», «Սև Սեթոն», «Լիկկայանի ուսուցչուհին», «Թագուհին» և այլն: Առաջին երկու պատմվածքներում հեղինակը վերարտադրել է անցյալից մնացած մի տխուր ժառանգության՝ անապաստան երեխաների ապահովումը և դաստիարակությունը սովետական պայմաններում, նոր կյանքի և մարդկային նոր հարաբերությունների ազդեցությունը՝ անապաստան երեխաների վատ հակումները վերացնելու և նրանց հոգեբանության մեջ ընկերական, հասարակական ձգտումներ արմատավորելու գործում: «Լիկկայանի ուսուցչուհին» պատմվածքում Ջորջանը ցույց է տվել հասարակական ակտիվ աշխատանքի վերափոխող ուժը, աշխատանք, որ իմաստավորում է կյանքը, մարդկանց համակում ոգևորության մեջ և դիտակցել է տալիս իրենց մարդկային արժանապատվությունը:

«Մի կյանքի պատմություն» վեպը

Սոցիալիստական շինարարության բուռն ծավալման տարիներին Ստ. Ջորջանը հանդես եկավ «Մի կյանքի պատմություն» ընդարձակ վեպով, որտեղ մի հերոսի կյանքի պատմության վերարտադրումով ցույց են տրվում 20-րդ դարի սկզբի հայ իրականության մի շարք իրադարձությունները: Վեպի առաջին մասում հեղինակը իր հերոսի՝ Սուրենի պարզ և միամիտ հայեցակետից պատմում է ցարական կարգերում ծնված հայ ժողովրդի վիճակը, հայկական դպրոցների փակումը, որը առաջացնում է բուռն դժգոհություն, նույնիսկ տարերային ցույց ընդդեմ ցարիզմի, որը ձգտում էր խեղդել ազգային կուլտուրայի ամեն մի արտահայտություն:

Մանկության տարիներից սկսած Սուրենի հոգում ձևավորվում է սոցիալական անարդարության դառն զգացումը: Նա ատում է խանութպան հորեղբորը և պապին, որոնք բաժանքից հետո Սուրենի հորը համարյա թե զրկում են ապրուստի միջոցներից: Նա վրեժ է լուծում կապալառուից, որը Սուրենի հորը զրկել է խոստացած վարձից և ցեմենտ է չցրել աշխերը: Սուրենը հասունանում է շահագործման, ծնման և աշխատավոր մասսաների մեջ օրըստօրե աճող բողոքի պայմաններում, բայց նա միշտ էլ մնում է հեռու կանգնած բուռն պայքարից, նա միշտ էլ մնում է որպես խառնուրդ դեպքերի տարերային մասնակից կամ կողմնակի դիտող: Այս տեսակետից բնորոշ է վեպի առաջին հատորի վերջին էպիզոդներից մեկը: Դպրոցն ավարտելուց հետո Սուրենը աշխատանքի է ընդունվում երկաթուղային գծամասի գրասենյակում, շփվում է բանվորների, հետ, որոնք արդար դաստաստան են տես-

նում գծամասի դաժան պիտի հետ: Այդ պատճառով Սուրենը նույնիսկ բանտարկվում է, սակայն այդ բոլորը որևէ արձագանք չեն դնում կարիքի, չբավորության, սոցիալական ճնշման պայմաններում ապրած սպառանու հոգում: Նրա համար բացարձակապես անհասկանալի է, նույնիսկ խորթ, գծամասի բանվորների ցասումը ցարական դաժան շինովնիկների դեմ և բանվորների մտահոգությունը բանտարկված ընկերների նկատմամբ:

Սուրենի անտարբերությունը հասարակական քաղաքական դեպքերի հանդեպ ավելի ցայտուն կերպով հանդես է գալիս վեսի երկրորդ մասում: Նրկաթուղային գծամասում տեղի ունեցած դեպքից հետո Սուրենն ալատվում է աշխատանքից և տվեորվում է Ռիֆլիս՝ սովորելու նպատակով: Գնացքում նա ծանոթանում է ճեմարանից հեռացված Տիգրանի հետ: Միանգամայն տարբեր բնավորության տեր այդ պատանիները մտերմանում են, բնակվում միասին և դեպքերի բերումով մասնակից լինում քաղաքական կարևոր իրադարձությունների: Ծանոթանալով իրենց հարևան սոցիալիստ Միքայելի հետ, սպառնալիքներ մասնակից են դառնում մարքսիստական դալտնի գրականության տարածմանը, ընդհատակյա ռևոլյուցիոն խմբակներին աշխատանքին, մալիսմեկյան ցույցին և այլն: Մրբագրիչի օդնականի պաշտոնով Սուրենը աշխատում է տպարանում, շփվում ռևոլյուցիոն բանվորների հետ և նույնիսկ օգնում նրանց որոշ դեպքերում, բայց, չնայած այդ մեծին, Սուրենը մնում է ռևոլյուցիոն շարժումների ակամա ուղեկից, նրա գիտակցությանը չի հասնում շարժումների բուն էությունը:

Սուրենի կերպարը վեսյի առաջին մասում հիմնականում զարգանում է սպառնալիքային իրականությանը հարադատ: Սուրենի մանկության ձ վաղ պատանեկության մտքերի և զգացմունքների ձևավորումը տրված է նրա կյանքի տիպական հանգամանքների, սոցիալական հակադրությունների նկարագրության միջոցով: Սակայն Սուրենի կյանքի հետագա ամբողջ ընթացքը փաստորեն ներկայացնում է կերպարի բուն էությունից, հնունաբար կյանքի ճշմարտությունից հետզհետե հեռանալու պրոցես: Իր աշխատանքի առաջին օրերից մինչև վերջին օրերը Սուրենը համարյա անընդհատ շփվում է ռևոլյուցիոն բանվորների և առաջավոր մարդկանց հետ, բայց նա չի ձգտում մոտենալ ռևոլյուցիոններին, կամ հասկանալ նրանց կատարած գործը: Սոցիալական ահհավասարության, ճնշման և շահագործման դառնությունները մոռացվել են ինչպես մանկական շարժություններ, թեև այդ

մոռացության համար որևէ հիմք չկար: Ընդհակառակը, ավելի ևս վատթարացել էր և՛ ընտանիքի, և՛ իրեն՝ Սուրենի նյութական վիճակը, շատ ավելի հարստացել նրա կյանքի փորձը, բայց Սուրենը կարծիք թե հասունանում է միայն ֆիզիկապես, իսկ նրա հայացքների մեջ զարգացում չի կատարվում, մանկական տարիքից վաղուց դուրս եկած երիտասարդը կյանքի դեպքերին շարունակում է մասնակցել մանկական նախնական:

Վեպի երկրորդ մասում շատ ավելի հաջող են կերտված Տիգրանի և գրաշար բանվոր Գուրասի կերպարները: Զորյանը ճիշտ կերպով պատճառաբանել է նրանց կյանքի ուղին, նրանց անձնուրաց նվիրվածությունը ռևոլյուցիայի գործին: Բայց նույնը չի կարելի ասել սոցիալիստ Միքայելի մասին: Այդ կերպարը որևէ պատկերացում չի կարող տալ ՌՍԴԲԴ Անդրկովկասի կադմակերպության շարքերում դաստիարակված այն խիզախ ռևոլյուցիոներների մասին, որոնք պայքարում էին ռևոլյուցիայի հաղթանակի համար:

**Զորյանի ստեղծագործությունը
Հայրենական Մեծ պատերազմի
շրջանում**

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին թիկունքում գտնվող սովետական մարդկանց մասին Զորյանը գրել է մի շարք պատմվածքներ, ինչպես՝ «Մայրը», «Անիկը», «Աղափնիներ», «Սերոբը», «Տազնապի օրերին», «Կադ Կարոն» և ուրիշները: Այդ գործերում հեղինակը նկարագրում է պատերազմի տառնապալից օրերին սովետական մարդկանց դրսևորած հոգևոր և բարոյական վսեմ հատկությունները: Սովետական երկրին սպառնացող վտանգը բարձրացնում է պատասխանատվության գիտակցությունը սովետական մարդկանց մեջ, նրանք առավել խորն են ղգում իրենց կապը կոլեկտիվի հետ, ամբողջ ժողովրդի հետ: Իր երեխաների անվտանգության մասին հոգացող բժշկուհին, որը արդեն պատրաստ է էվակուացվելու, հրաժարվում է այդ մտքից, զգալով իր անհրաժեշտությունը վիրավոր զինվորների համար: Որդեկորույս մայրը իր մայրական սերը փոխադրում է որդու ընկերներին, մտահոգվում է նրանց կյանքի համար, կարոտում նրանց, որոնց իր կյանքի գնով փրկել էր նրա որդին: Կադ Կարոն օգնում է ռադմաճակատ մեկնած իր ընկերների ընտանիքներին, մտահոգվում ամեն մի ընտանիքի վիճակով: Առօրյա թեմաների միջոցով Զորյանը դրսևորում է այն մի շարք կարևոր հատկությունները, որոնք մարդիկ ձեռք են բերել և կարող էին ձեռք բերել միայն սովետական կարգերում, մարդ-

կային անհատականության ազատ և բազմակողմանի զարգացման պայմաններում:

Հայրենական պատերազմի հաղթական ավարտման շրջանում հրապարակվեց Զորյանի «Պապ թագավոր» ծավալուն պատմավեպը: Այս վեպի մեջ նկարագրվում է Հայաստանը 4-րդ դարում, երբ հայ ժողովուրդը ազատագրական պայքար էր մղում օտար նվաճողների դեմ և երբ երիտասարդ Պապ թագավորը ձգտում էր սանձել ֆեոդալական կենտրոնախույս ուժերը, սահմանափակել եկեղեցու իրավունքները և ստեղծել Բյուզանդիայից ու Իրանից անկախ ուժեղ պետականություն: Պապ թագավորի ձգտումները պատմականորեն առաջադիմական բրնույթ ունեին, և ճիշտ է վարվել հեղինակը՝ նկարագրության նյութ պարճնելով պատմական վերոհիշյալ իրադրությունները: Բայց նա գեղավեստորեն ճիշտ չի մեկնաբանել դատերի և դասակարգերի փոխհարաբերությունը, ինչպես և կենտրոնացած միապետություն ստեղծելու ձգտումները 4-րդ դարում: Այդ առաջին հերթին վերաբերում է Պապ թագավորի գործունեության վերաբրտադրմանը: Պարսկական բռնակալությունը սպառնալիքից ազատվելուց հետո, երկրի պետական իշխանությունը ամրապնդելու նպատակով, Պապ թագավորը պակսեցնում է շինականների վրա ծանրացած բազմատեսակ հարկերը, սահմանափակում է եկեղեցու իրավունքները, կրճատում վանքերի թիվը և փակում կուսանոցները: Պապի այդ ձեռնարկումները առաջացնում են հոգևորականների ղայրույթը և տաղնապի ենթարկում Բյուզանդիային, հանձին նրա դեսպան Տերենտի, որը Վաղես կայսրին ուղղած նամակներում Պապին ներկայացնում է որպես Բյուզանդիայի թշնամի: Պապը վճռական միջոցների է դիմում նաև այն ֆեոդալների նկատմամբ, որոնք հակադրվում էին կենտրոնացած պետության ստեղծմանը: Պապի այդ ձեռնարկումները նկարագրելիս Զորյանը հանդում է իր հերոսի իդեալականացմանը, այն սխալ եզրակացության, որ իբր թե Պապ թագավորը պաշտպանում էր շինականների շահերը:

«Ճշգրտություն և սեղմություն — ահա պրոդայի առաջին արժանիքները» (Պուշկին):

Իսկական արվեստի այդ կարևոր արժանիքների մշակումով ռուս կյտնիկ գրականությունը, հատկապես արձակը մեծագույն նվաճումների հասավ իրական կյանքի պարզ և ճշմարտացի վերաբրտադրության բնագավառում: Այդ նվաճումները ստեղծագործորեն յուրացվել և կենսագործվել են նաև հայ ռեալիստական գրականության մեջ: Հետևե-

լով ոռւս և հայ ռեալիստական արվեստի տրագիցիաներին, հատկապես սովետական շրջանում հաղթահարելով անցյալի թերութիւնները, Զորյանը զգալի շափով առաջ է մղել հայ արձակագրութեան զարգացումը: Զորյանի երկերը՝ լեզվի արտահայտչական միջոցներից մինչև սյուժեն, կառուցվածքը և կերպարների բնութագրութիւնը, աչքի են ընկնում ճշգրտութեամբ և սեղմութեամբ: Այս հանգամանքը սերտորեն կապված է գրողի ստեղծագործական մեթոդի և աշխարհայացքի հետ: Զորյանի համար խորթ է եղել կյանքից կտրված անպտուղ երազանքը, նրան հետաքրքրող բոլոր հարցերը սերտորեն կապված են եղել կյանքի հետ: Բնորոշ է այն, որ բացի պատմական թեմայով գրված դործերից, համարյա բոլոր երկերի նյութը գրողի ուղղակի տպավորութիւնների արդյունք են, դեպքեր և իրողութիւններ, որոնք նրան ծանոթ են եղել իրական կյանքի բոլոր մանրամասնութիւններով: Բոլոր այն դեպքերում, երբ գրողի մոտ նկարագրվող նյութի հիմքում ընկած է կյանքի խոր իմացութիւնը, նրա երկերը գեղարվեստական տեսակետից լինում են ավելի կատարյալ: Զորյանի մոտ հենց կենսական փաստերն են, որ հիմք են դառնում գեղարվեստական ընդհանրացման համար:

Զորյանը պատմում է հանդիստ ձևով, նույնիսկ այնքան հանգիստ, որ թվում է, թե գրողն անտարբեր է իր նյութի նկատմամբ: Այդ պատմեաձևը բնորոշ է կլասիկ ռեալիզմի որոշ ներկայացուցիչների համար, որը օգտագործել է նաև Զորյանը իր նախասովետական շրջանի դործերում: Գրողը առերևույթ անտարբերութեամբ, երբեմն մեղմ հումորով, պատմում էր սեփականատիրական կյանքի ողբերգական դեպքը և իր «անտարբերութեամբ» նա որոշ էմոցիոնալ աղմուկների էր հասնում, թեև այդ պատմեաձևը նրան վրկում էր սոցիալական հակասութիւնները խորութեամբ վերարտադրելու հնարավորութիւնից: Սակայն սովետական գրականութեան մեջ փոխվեց այդ պատմեաձևը:

Սովետական դրողը, թեկուզ առերևույթ, չէր կարող անտարբեր լինել իր նյութի նկատմամբ և պատահական չէ այն, որ միջ դրակոնութեան լավագոյն ներկերի ափնն մի էջի վրա զգացվում է գրողի ակտիվ վերաբերմունքը նկարագրվող իրադարձութիւնների և կերպարների նկատմամբ: Զորյանի սովետական շրջանի երկերում նույնպես փոխվեց հին պատմեաձևը, բայց նրա մի քանի դործերում նկատվում են կյանքի երևույթների վերարտադրութեան հին, «օբյեկտիվ» սկզբունքի մնացորդները, որը նշանակալից չափով թուլացնում է նկարագրվող

Սովետահայ նշանավոր արձակագիր Ստ. Զորյանի քառասնամյա գրական վաստակը արժեքավոր ներդրում է մեր գրականության մեջ: Նախասովետական շրջանում Զորյանի գրած պատմվածքները և նովելները իրենց գեղարվեստական արժեքով և գաղափարական բովանդակությամբ հայ գրականության լավագույն տրագիցիաների զարգացումն էին: Միանգամայն նոր բովանդակությամբ տոգորվեց Զորյանի ստեղծագործությունը սովետական ժամանակաշրջանում: Ակտիվորեն մասնակցելով սովետահայ գրականության ստեղծման և զարգացման գործին, կերտելով սոցիալիզմ կառուցող մարդկանց կերպարները, Զորյանը դարձավ մեր գրականության նշանավոր վարպետներից մեկը:

Սովետահայ նշանավոր արձակագիր Ստ. Զորյանի քառասնամյա գրական վաստակը արժեքավոր ներդրում է մեր գրականության մեջ, նախասովետական շրջանում Զորյանի գրած պատմվածքները և նովելները իրենց գեղարվեստական արժեքով և գաղափարական բովանդակությամբ հայ գրականության լավագույն տրագիկաների զարգացումն էին։ Միանգամայն նոր բովանդակությամբ տոգորվեց Զորյանի ստեղծագործությունը սովետական ժամանակաշրջանում։ Ակտիվորեն մասնակցելով սովետահայ գրականության ստեղծման և զարգացման գործին, կերտելով սոցիալիզմ կառուցող մարդկանց կերպարները, Զորյանը դարձավ մեր գրականության նշանավոր վարպետներից մեկը։

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1941 թ. հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիան ուխտադրուծ կերպով հարձակվեց մեր Հայրենիքի վրա: Սկսվեց սովետական ժողովուրդների Հայրենական Մեծ պատերազմը: Գերմանական ֆաշիզմը նպատակ ունեւ գրավել Սովետական Միության լայնարձակ տերիտորիաները, ստրկացնել սովետական մարդկանց, մեր երկրում վերականգնել կապիտալիստների ու կալվածատերերի իշխանությունը: Հիտլերականները մարդկային կուլտուրայի և առաջագիմության թշնամիներ էին և ուղում էին կործանել մեր երկրի ժողովուրդների ազգային կուլտուրան ու պետականությունը:

Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմը ժողովրդի բոլոր ուժերի բաղմակողմանի քննությունն էր: Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ սովետական ժողովուրդը պատվով դուրս եկավ այդ մեծ փորձությունից: Պատերազմական ծանր իրադրության մեջ, կարճ ժամանակամիջոցում մեր Կերկրի արդյունաբերությունը փոխադրվեց ռազմական ունեւերի վրա: Կոլտնտեսային գյուղացիությունը հերոսական աշխատանք կատարելով ուղիալիստական դաշտերում, ապահովեց Սովետական Բանակը պարենով, իսկ երկրի գործարանները՝ անհրաժեշտ հումքով:

Այս ամենը հնարավորություն տվեց Սովետական Բանակին մեկր մյուսի ևուից ծանր հարվածներ հասցնել գերմանական ղինված ուժերին, փշրել ֆաշիստական ռազմական մեքենան և թշնամուն դուրս քշել մեր երկրի սահմաններից:

Հայրենական պատերազմի ժամանակ ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցան Սովետական Բանակի մի շարք խոշոր մարտական գործողությունները՝ հիտլերականների ջախջախումը Մոսկվայի տակ, Ստալինգրադի հաղթական ճակատամարտը, 1944 թ. տասն ջախջախիչ հարվածները և վերջապես Բեռլինի դրավումը՝ 1945 թ. մայիսի 2-ին:

Հայրենական պատերազմը ցույց տվեց սովետական ժողովուրդների անխախտ միասնությունը: Սովետական Միության բոլոր ժողովուրդները մեկ մարդու պես ոտքի ելան պաշտպանելու իրենց հայրենիքը: Հայրենական պատերազմի ժամանակ ևս Սովետական Միության ժողովուրդներին գլխավորում էր ուս ժողովուրդը: Թե՛ ռազմաճակատում և թե՛ թիկունքում ուս ժողովուրդը հայրենասիրության, արիության, անձնագոհության շոենակններ ցույց տվեց:

Սովետական ժողովուրդների միասնական ընտանիքում Հայրենական Մեծ պատերազմի ելավ նաև հայ ժողովուրդը: Սովետական Բանակի շարքերում թշնամու դեմ կռվող հայ մարտիկները բազմաթիվ մարտական սխրագործություններ կատարեցին: Հայկական Թամանյան դիվիզիան մասնակցեց Ղրիմում, Հյուսիսային Կովկասում ծավալված մարտերին և Բեռլինի դրավմանը: Թիկունքում հայ ժողովուրդը հերոսական տոկոսնությունամբ աշխատում էր կոտրտեսային դաշտերում, երկրի հանքերում և գործարաններում: 1943 թ. հայ ժողովուրդը հայրենասիրական նամակով դիմեց «Ռազմաճակատում գտնվող իր զավակներին», կոչ անելով բազմապատկել զենքի ուժը, կանգ չառնել ոչ մի դժվարության առաջ, զբաղել ֆաշիստական ամբույթյունները, ազնվությամբ ու խիղախությամբ մարտնչել Սովետական Բանակի շարքերում՝ ողջ Սովետական Հայրենիքի ազատագրման համար: Այդ նամակում հայ ժողովուրդն իր զավակներին հիշեցնում էր, որ «հազարամյակներ շարունակ իր սուրբ պատյանը չի դրել մեր ժողովուրդը: Նա հաղթահարել է շատ տառապսւնքներ, մինչև որ հասել է այն երջանկությանը, որ Սովետական իշխանությունն է բերել նրան: Սովետական իշխանությունը տվել է մեզ ազատություն, խաղաղություն, պատականություն, որից մենք զրկված էինք մի քանի դար շարունակ»:

Հայ ժողովրդի նամակը ռազմաճակատներում ընդունվեց հայրենասիրական բարձր ոգևորությամբ: Սովետական Բանակի քաջարի ռազմիկները երգվեցին իրենց կյանքի գնով պաշտպանել Հայրենիքի և ժողովրդի պատիվը:

1945 թ. մայիսի 9-ին գերմանական բանակը ղենքը ցած դրեց, 1945 թ. սեպտեմբերին Սովետական Բանակը պարտության մատնեց նաև իմպերիալիստական Ճապոնիային: Հայրենական Մեծ պատերազմն ավարտվեց Սովետական Միության հաղթանակով:

Պատերազմը հաստատեց, որ սոցիալիզմի կառուցման տարիներին Կոմունիստական պարտիան ժողովրդին դաստիարակել է սովետական հայրենասիրության ոգով, կոփել է աշխատի ուժ, որն ընդունակ է դիմադրել և ջախջախել ամեն մի ագրեսորի: Պատերազմը հաստատեց մեր երկրի հասարակական, տնտեսական, պետական կարգի կենսունակությունն ու անխորտակելիությունը, սոցիալիստական ազգերի բարոյական-քաղաքական միասնությունը, նրանց բարեկամության մեծ ուժը:

Գերմանիայի դեմ տարած պատմական հաղթանակով սովետական ժողովուրդը մարդկության քաղաքակրթությունը փրկեց ֆաշիստական ջարդարաններից:

Հայրենական Մեծ պատերազմից Սովետական Միությունը դուրս եկավ ավելի հզորացած: Է՛լ ավելի կուռ միասնությունը համախմբվելով Սովետական կառավարության ու Կոմունիստական պարտիայի շուրջը, Սովետական Միության ժողովուրդները լծվեցին խաղաղ ստեղծագործական աշխատանքի:

Հայրենական Մեծ պատերազմը նոր խնդիրներ է դնում սովետական դրականության առաջ: Գրականության համար առաջնահերթ հարց է դառնում ճշմարտացի արտացոլել Սովետական Բանակի հերոսամարտերը, բացահայտել սովետական ռազմիկի հոգեկան բարձր հատկությունները՝ անսահման հայրենասիրությունը, քաջությունը, բոլոր զլավարությունները հաղթահարելու կարողությունը, հաղթանակի հասնելու անսասան կամքը:

Գրականության առաջ խնդիր է դրվում պատկերել թիկունքի աշխատանքային խանդավառությունը, ցույց տալ, թե մեր ժողովուրդը ինչպիսի լարվածությամբ և անձնուրաց աշխատանքով է կատարում պարտիայի և կառավարության առաջադրած «Ամեն ինչ ռազմաճակատի համար» լուրջը, ստեղծել աշխատանքի մեջ հերոսացող սովետական մարդկանց աշխատի կերպարներ, որոնք օրինակ ծառայեն միլիոնավոր մարդկանց համար:

Հայրենական պատերազմի ժամանակ նոր ուժով է դրսևորվում Սովետական Միության ժողովուրդների բարեկամությունը, է՛լ ավելի է ամրապնդվում նրանց միասնությունը: Գրականության առաջ խնդիր է դրվում գեղարվեստական մեծ ուժով արտացոլել այդ եղբայրությունը, պրոպագանդել սովետական միասնական Հայրենիքի գաղափարը:

Գրականության առաջ խնդիր է դրվում մերկացնել ֆաշիստական ջարդարարներին, բացահայտել նրանց հոգեկան սնանկությունը, դաժանությունը, վախկոտությունն ու անասնական հակումները, թշնամու նկատմամբ ատելություն բորբոքել սովետական մարդկանց սրտերում, որովհետև անհնար է հաղթել թշնամուն, առանց ատելու նրան հոգու ամբողջ ուժով:

Սովետական դրողները պատվով են կատարում առաջադրված խնդիրները: Գրականությունը կերտում է սովետական մարդկանց անմոռանալի կերպարներ, տալիս է մարտական գործողությունների և աշխատանքային սխրագործության հիանալի գեղարվեստական պատկերներ: Մերկացնելով օկուպանտներին, ցույց տալով նրանց զազանային էությունը, գրականությունը ատելություն է վառում մեր մարդկանց սրտերում, նրանց մեջ է՛լ ավելի է ամրացնում հաղթանակի հավատը: Դրանով գեղարվեստական գրականությունը կատարում է մասսաներին մոբիլիզացնողի և դաստիարակողի իր մեծ դերը:

Պատերազմի տարիներին նոր թափ է ստանում սովետահայ հրապարակախոսությունը, որոշ նվաճումների է հասնում դրամատուրգիան, լույս են տեսնում պատմական թեմատիկայով գրված երկեր: Բայց առավել չափով զարգանում են պոեզիան և միտքը կտավի արձակը՝ կարճ պատմվածքներն ու ակնարկները:

ՊՈԵԶԻԱՆ

Հայրենական պատերազմի տարիներին սովետահայ պոեզիայում տիրական կերպով հնչում է սովետական պետականության հասած և այդ պետականությունը մինչև վերջ պաշտպանելու պատրաստ ազատ և հզոր ժողովրդի ձայնը: Բանաստեղծությունը դառնում է կոմունիստական հայրենասիրական, ազատասիրական իդեալի ու ասպրամաների գեղարվեստական արտացոլումը: Հայրենասիրության գաղափարները պոեզիայում արտահայտվում են բազմաձև և տարբեր ժանրերով գրված գործերում: Պոետական երգի հերոսներն են դառնում սովետական ռազմիկն ու վրիժառու պարտիզանը, թիկունքում անձնուրաց աշխատանքով զբաղված սովետական մարդիկ: Պոետները երգեր են հյուսում թիկունքում մնացած

կանանց, մայրերի, քույրերի թափած ջանքերի, նրանց ապրումների և ձգտումների մասին: Երգում են սովետական ժողովուրդների հղբայրությանը, ուս մեծ ժողովրդի հզոր, ազատատենչ ոգին: Տարածվելով խրամատներում ու բլինդաժներիում, հանքերում, գործարաններում ու կոլտնտեսային դաշտերում՝ բանաստեղծական խոսքը հաղթանակի հավատ է կոփում միլիոնավոր սովետական մարդկանց սրտերում, ներանց մղում ռալմական ու աշխատանքային սխրագործությաններ:

Պատերազմի հենց առաջին օրերին մեծ բանաստեղծ Ա.Վ. Իսահակյանը ողբնշված խոսքով դիմում է սովետական ժողովրդին, կոչանելով հերոսաբար կռվել թշնամու դեմ: «Ռադմակոչ», «Ձաքյանի հիշատակին» և մյուս բանաստեղծություններով, ինչպես նաև հրապարակախոսական կրակոտ հոգվածներով բանաստեղծը փառաբանում է ոտքի ելած սոցիալիստական ազգերի հզորությունը, արտահայտում ժողովրդական մասսաների հավատը հաղթանակի նկատմամբ:

Վտանդի ահեղ Ժամին «էլ ավելի քաղցրացած» հայրենի հողին է նվիրում բանաստեղծ Ն. Ջարյանն իր մարտաշունչ քնարը: Նրա երգերը, ինչպես ինքը բանաստեղծն է ասում, թռչում են «որպես արկի շառաչ» և ումբի պես պայթում մարտադաշտում: Նրա «Ձայն հայրենական»-ը հնչում է որպես հայ ժողովրդի ուղերձն իր մարտնչող զավակներին:

Լիրիկական հուղիչ բանաստեղծություններում ու բալլադներում Գ. Սարյանը զրսեորում է պատերազմի տարիներին բաղմապատիկ ուժով և եռանդով աշխատող և կովող սովետական մարդկանց հայրենասիրական դործերն ու մտքերը, հույզերն ու ապրումները («Երեք կոմբայնավար», «Լուսանկարը», «Հետախույզը» և այլն):

Աղավնու «Հենակները» բանաստեղծության մեջ դեղարվեստական մեծ ուժով արտացոլվում է սովետական մարդկանց սերը Հայրենիքի համար մարտնչող խիզախ մարտիկների նկատմամբ: Այդ սիրո և սովետական բարձր հումանիզմի ավարտուն ընդհանրացում է բանաստեղծության վերջին քառատողը, ուր հեղինակը ռադմաճակատից վերադարձած վիրավոր մարտիկին ասում է.

Չբնաղ պատուհի, իմ դինվոր եղբայր,
Ոտք ունցողին դու մի նախանձիր,
Իմ սերը ահա նեցուկ քեզ համար,
Սրտիս հենվելով դու հպարտ անցիր:

Վահան Գրիգորյանը «Դեպի Բեռլին» բանաստեղծության մեջ պա-
թոսով դրսևորում է սովետական մարդկանց հայրենասիրական իղձը.

Երազում եմ ես շարունակ օրն այն վսեմ,
Ինչպես ճամփորդ մի անանուն լույս արևի,
Որ լուսաշող մի առավոտ ուրախ լսեմ՝
«Մեր զորքերը արշավում են դեպի Բեռլին»:

Լիրիկայի բնագավառում թարմ է հնչում երիտասարդ պոետ Համո Սահյանի ձայնը: Սահյանի «Նաիրյան դալար բարդի» բանաստեղծու-
թյունը ընթերցողի առաջ բացում է հայրենասեր ռազմիկի կարոտած,
քնքուշ, բայց և միաժամանակ հզոր, առնական, հերոսական սիրտը:
Կանաչ բարդու պոետական կերպարի մեջ սիմվոլացնելով Հայրենիքի
զաղափարը, պոետն ընդգծում է մեր ռազմիկներին՝ Հայրենիքի համար
կյանքը զոհելու պատրաստակամությունը.

Ես երգիչ հրի, սրի, շահ չունեմ քո սիրուց զատ,
Քեզ նման կանաչ կյանքով, քեզ համար ելած մարտի,
Կմեռնեմ, միայն թե դու դարբերում ազատ խշշաս,
Իմ հեռու՞, հեռու՞, հեռու՞ նաիրյան դալար բարդի՝

Բանաստեղծական ապրումը Սահյանն արտահայտում է ինքնա-
տիպ, թարմ հնարանքներով: Այդ բանաստեղծությանն առանձին հմայք
է տալիս կրկնվող տողը, որը եզրափակելով յուրաքանչյուր տունը,
միաժամանակ դրանք կապում է միմյանց՝ որպես մեկ լիրիկական ամ-
բողջություն:

Հայրենական պատերազմի շրջանի պոեզիայի մեջ նշանակալից
երևույթ է Սովետական Հայաստանի Հիմնի ստեղծումը 1944 թվակա-
նին: Հիմնի տեքստը գրում է բանաստեղծ Սարմենը, իսկ երաժշտու-
թյունը՝ կոմպոզիտոր Արամ Նաչատրյանը: Սովետական Հայաստանի
Հիմնի մեջ նշվում է այն դժվար ուղին, որ անցել է մեր ժողովուրդը
մինչև մեր երկրում սովետական կարգերի հաստատումը, փառաբան-
վում է Հայաստանի վերածնունդը, այն աննախընթաց զարգացումը,
որին հայ ժողովուրդը հասել է Սովետական կարգերի շնորհիվ, ուս-
մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ:

**ԹԻՄՈՒԼ ՀՈՒՐՅԱՆԻ
«ՍԽԱՍՏՈՒԿՈՂՅԱՆ
ԲԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ-
ՐԵՎՈՐԱՆԵՐ»-Ը**

Թաթուլ Հուրյանը (հաշատրյան) ծնվել է 1912 թվականին Սուրմալիի դավառի Թեջրիու գյուղում: Սովետական կարգերի հաստատումից հետո նրանց ընտանիքը, որ այդ ժամանակ լեջմիաձնի գավառի էլջիլար գյուղում էր, տեղափոխվում է Բաքու և հաստատվում այնտեղ: Հուրյանը սովորում է Բաքվի Հովհ. Բուռնյանի անվան միջնակարգ դպրոցում:

1932 թ. Բաքվում լույս է տեսնում երիտասարդ պոետի առաջին գրքույկը՝ «Հողի արշունք» վերնագրով: 1933 թ. նա հրատարակում է «Դենեպը» մեծ պոեմը, իսկ 1934 թ.՝ «Հասակ» ժողովածուն: Այս ժողովածուն արդեն վկայում է Հուրյանի պոետական տաղանդի մասին, չայն է պոետի թեմատիկան: Հուրյանը երգում է բանվոր դասակարգի աշխատանքը, քաղաքացիական կռիվների հերոսներին, հիացած նկարագրում է Կրեմլի վեհաժողովը, փառաբանում է վերածնված Ուկրաինայի զավակներին, երաղում է Ղրիմի վարդերի մասին:

Հուրյանի «Երկրի ձայնը» լիրիկական պոեմը սովետական ժողովրդի բուռն սիրո խոսքն է՝ նվիրված պարտիայի պանծալի զավակ Սերգեյ Միրոնովիչ Կիրովի հիշատակին:

Ոգևորվելով անցյալի հայ առաջավոր գրողների ստեղծագործությանմբ ու կյանքով, Հուրյանը գրում է «Սայաթ-Նովա» լիրիկական պոեմը և «Փրիկ» դրամատիկական երկը:

Հուրյանի ստեղծագործության ոգին սովետական հայրենասիրությանն է: Պոետի սրբազան պարտքը համարելով Հայրենիքի պաշտպանությունը, պատերազմի նախօրյակին Հուրյանն իր բանաստեղծ ընկերոջն զգուշացնում է, որ Արևմուտքից «սպառնում են աղետով մեր Հայրենիքի փառքին մեծ» և պահանջում է՝

Ոգի, ոգի ներշնչիր քո երգերին, բանաստեղծ,
Ու երգերով մարտ գնա, ու հավատով մարտ գնա,
Որ հայրենի փառքը քո հպարտ ու վեհ միշտ մնա...

Երիտասարդ պոետը հենց այդպիսի պայծառ հավատով էլ մեկնում է ռազմաճակատ և հերոսաբար մարտնչում Հայրենիքի աղատության վեհ գործի համար: 1942 թ. հունիսի 20-ին, Սխաստուկուի պաշտպանության դիրքերում Թաթուլ Հուրյանն ընկնում է հերոսի մահով:

Հուրյանի «Սևաստոպոլյան բանաստեղծություններ»-ը («Սևաստոպոլ», «Նրկու մանուկ», «Մեկենդեյան լեռներում», «Վերադարձ», «Մխում և նորից») նրա ստեղծագործության պսակն են կազմում: Դրանք ռազմիկ պոետի անձնազոհ հայրենասիրության զեղեցիկ դրսևորումն են: Սևաստոպոլյան բանաստեղծությունները գերծ են կեղծ պաթետիկայից. դրանց մեջ հուլզն արտահայտված է պարզ, իմաստալից պատկերներով:

Ֆաշիստական հորդաներն իրենց թվական և տեխնիկական գերազանցության վրա հենված խուժել են Սովետական Ղրիմ, բայց նրանք անզոր են ընկճելու մեր Սոցիալիստական Հայրենիքի զավակների կամքը — այս է սևաստոպոլյան բանաստեղծությունների լեյտմոտիվը:

Բանաստեղծը դրում է.

Ահեղ են զեմքերը ընկերների իմ քաջ,—
Ընկնում են, բայց ելնում արնաթաթախ նորից,
Եվ ելնում են նորից թշնամու դեմ, առաջ՝
Սրբազան վրեժով կախարդված ու սնբիծ:

Այս հակիրճ բանաստեղծական տողերում Հուրյանը կերտել է սովետական ռազմիկի կերպարը: Մեր աչքի առաջ կանգնում է Սովետական Բանակի մարտիկը, որը Հայրենիքի շահը բարձր է դասում անձնական երջանկությանից ու կյանքից և իր մահով իսկ հաղթում է թեշնամուն: Դա կոմունիզմի գաղափարներով զինված մարդն է, Հայրենիքի սիրո ուժով մահվան ահը հաղթահարած դյուցազունը:

1942 թ. հունիսի 19-ին, զոհվելուց մեկ օր առաջ, Հուրյանը դրում է «Մեկենդեյան լեռներում» բանաստեղծությունը: Նրիտասարդ պոետի վերջին երգն ամբողջովին համակված է հավատով և պայծառ լավատեսությամբ: Այստեղ նա հույս է հայտնում, որ

Հաղթանակի արևը կվառվի հրով,
Ազատության անխառն ու սուրբ լուսաբացին,
Եվ լեռներն ու ծովը միշտ կհիշեն սիրով
Գանգրագիսակ ու քաջ այն հայ բանաստեղծին:

Սովետական երկրում միշտ կկարդան Հուրյանի բանաստեղծությունները և սիրով կհիշեն ջերմ հայրենասեր «գանգրագիսակ ու քաջ հայ բանաստեղծին»:

Սողոմոն Սահակի Տարոնցին ծնվել է 1904 թ.,
Արևմտյան Հայաստանի Կոփ գյուղում: 1915 թ.
Տարոնցին ընտանիքի հետ գաղթում է Կովկաս:

Շուտով նա բնակություն է հաստատում Երևանում, ուր 1930 թ. ավարտում է Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական Համալսարանի պատմագրական ֆակուլտետը:

Սովետական Հայաստանի վերականգնման և վերակառուցման հերոսական աշխատանքները ստեղծադործական լիցք են տալիս բանաստեղծական շնորհքով օժտված երիտասարդ Տարոնցուն: 1920-ական թվականներից նա սկսում է ակտիվորեն մասնակցել մեր գրական կյանքին: Մեկը մյուսի ետևից տպագրվում են Տարոնցու բանաստեղծությունների, փոքրիկ պոեմների, բալլադների ժողովածուները, որոնք չերմուծյամբ են ընդունվում ընթերցողների կողմից: Դեռևս 1926 թ. Լենինականում հրատարակվում է Տարոնցու ժողովածուն՝ «Անաստատաններ» վերնագրով: Այս գրքով Տարոնցին արձագանքում է անուրախ անցյալից ժառանգություն մնացած անաստատանության վերացման համար մղվող պայքարին:

Երեսնական թվականների սկզբներին Տարոնցին հանդես է գալիս բանաստեղծությունների մի շարք ժողովածուներով («Առավոտ» 1930 թ., «Սերունդների երգը» 1933 թ., «Դարերի լեզունդը» 1934 թ. և այլն):

Այս ժողովածուներում վետեղված բանաստեղծությունների մեջ Տարոնցին փորձում է վերարտադրել մեր երկրի վերակառուցման ու զարգացման աշխատանքով ոգևորված ժողովրդի հույզերն ու ասպրումները, երգում է սովետական մարդու անձնուրաց սերը իր հայրենիքի նկատմամբ, սոցիալիստական շինարարությունը:

Նոր կյանքի և պայծառ գալիքի պատկերները տալով, պոետը չի մոռանում ժողովրդի մոռյալ անցյալը, ցույց տալով, թե ինչպիսի ծանր վիճակից է ազատագրվել հայ ժողովուրդը սովետական կարգերի հաղթանակի շնորհիվ:

Այս տարիներին Սողոմոն Տարոնցին խոհանարանային կարճ բանաստեղծությունների հետ միասին գրում է մի շարք բալլադներ, ամենաբազմապիսի թեմաներով: Եթե բալլադներից մի քանիսի մեջ՝ «Կարմիր ձիավորը», «Փոքրիկ ռադիոյի», «Բալլադ չիբուխի մասին» և այլն, պոետը նկարագրում է հերոս ուղղությիտներ մարտիկների անձնադոժ պայքարը հանուն ժողովրդի ազատագրության, տալիս քաղաքացիական

պատերազմի դրվագներ, ապա բալլադները մի այլ շարքում նա նկարագրում է աշխատավորական խավերի շարքաշ և անուրախ կյանքը մասնավոր սեփականատիրական հասարակարգում: Այսպիսի բալլադների թվին են պատկանում «Բալլադ ձկնորս Ռաշաբի և միսիս Ռանկինի մատանու մասին», «Բալլադ աքաղաղների մասին», «Բալլադ ձկնորս Մեչիտի, ծովի աղջկա և Ալտար թափավորի մասին» և մի քանի այլ երկեր:

Հայրենական պատերազմի տարիներին Սոդոմոն Տարոնցին տասնյակ բանաստեղծություններ է գրում, որոնց մեջ Սովետական Բանակի ռազմիկներին կոչ է անում անձնվիրաբար կռվելու հանուն Հայրենիքի ազատության և անկախության: Պետեն ընդգծում է, որ վտանգի ահեղ ժամին սովետական մարդկանց սրտելում Հայրենիքի սերը ավելի է ուժեղանում, Հայրենիքը դառնում նրանց առօրյա հույզերի ու մտորումների առարկան: Սովետական հայրենասեր մարտիկի սրտի խոսքն է ասում Տարոնցին իր «Հայրենիք» բանաստեղծության մեջ, գրելով.

Չկա այսօր ինձ համար
Աշխարհում այլ հույզ ու միտք.
Դո՛ւ ես հոգուս մե՛ջ հիմա
Իմ սրբազան հայրենիք:

Հայրենիքի պաշտպանության վառ զգացումով տոգորված մարտիկի կերպարը Տարոնցին աշխատում է գծել նաև սյուժետավոր բանաստեղծությունների մեջ: Այդպիսի բանաստեղծությունների թվին է պատկանում «Լեզա Ժուկ»-ը (1941 թ.):

Պարտիայի և կառավարության կոչով կազակուհի Լեզա Ժուկը մեկնում է ռազմաճակատ: Լեզայի հայրը, որ ժամանակին եղել է քաջ սուսերակիր» և նույնպես պայքարել էր կրի թշնամիների դեմ, նրան պատվիրում է կռվել ինչպես վայել է սովետական ռազմիկին: Լեզան արդարացնում է հոր հույսերը, նա կռվում է որպես գնդացրորդ և թշնամու գերակշիռ ուժերի դեմ կարողանում է ամուր պահել իր գիրքը:

Պատերազմի տարիներին Տարոնցու գրած բանաստեղծությունների մեջ բավական մեծ տեղ են գրավում այնպիսիները, որոնց մեջ նա լիրիկական հուզիչ տողերով տալիս է սովետական բազմազգ բանակի մարտիկների և թիկունքի աշխատանքային էնտուզիաստների միասնության պատկերը: Այդպիսին է «Հրաժեշտի խոսքերից» բանաստեղծությունը:

Սովետական հայրենասերի լիրիկական կերպարը ներկայացնելով, Տարոնցին միաժամանակ նկարագրում է ֆաշիստների գազանությունները, նրանց վախկոտությունը, հոգեկան աղքատությունը: Նրա այս կարգի երկերից են «Բալլադ եֆրեյտոր Կուրտի և մի զույգ կոշիկի մասին», «Բալլադ շատակեր Շրեյդերի, զինվոր Պիկի և մի աքլորի մասին» և մի քանի այլ դործեր:

Տարոնցին բեղմնավոր բանաստեղծ է, նա հրատարակել է բանաստեղծությունների և բալլադների բազմաթիվ ժողովածուներ, ինչպես նաև մշակել է ժողովրդական բանահյուսության առանձին մոտիվներ (խաղիկներ, հատվածներ «Սասունցի Դավիթ» էպոսից և այլն):

Ս. Տարոնցու ստեղծագործության մեջ դրսևորվել են նաև լուրջ թերություններ. մասնավորապես պատերազմի շրջանում գրած մի շարք բանաստեղծություններում և պատմական սոնետներում նա սխալ է մեկնաբանել մեր անցյալը, տուրք տալով անցյալի իդեալականացմանը: Նրա յուր զարծերի մեջ զգալի են գրքայնությունը, մանվածապատ դատողությունները և ոխաորիկան: Այս թերությունները արտահայտվել են նաև «Ստալինգրադ» գրքի (1951 թ.) մի շարք բանաստեղծություններում:

Սուրեն Վահունին (Խաչիկյան) ծնվել է 1910 թ.

ՍՈՒՐԵՆ ՎԱՀՈՒՆԻ Փաշալվում (այժմ Ազիզբեկով): Միջնակարգ կրթությունն ստացել է Երևանում: Վահունու բանաստեղծությունների առաջին ժողովածուն («Նրկու երգ») հրատարակվում է 1930 թ.: Այնուհետև նա մի շարք բանաստեղծություններ է տպագրում պարբերական մամուլում: 1938 թ. «Ռազմի երգեր» խոթագրով լույս է տեսնում Վահունու նոր ժողովածուն, որն արժանանում է ջերմ ընդունելության: Սովետական Բանակի 20-րդ տարեդարձին նվիրված այս գրքում Վահունին պատկերում է քաղաքացիական կռիվների հերոսներին, ոգեշնչված ներբողներ է ձոնում Լենինին և Ստալինին, դավերգում է սոցիալիզմի համար մարտնչող էնտուզիաստներին: Առանձնապես մեծ հուզականությամբ են շնչում «Բալլադ պարտիզանի, նրա կնոջ և ձիու մասին», «Բալլադ կապուտաշյա մանկուն և արևի մասին» երկերը՝ երկուսն էլ գրված քաղաքացիական կռիվների թեմայով:

1943 թ. Վահունին լույս է քնծայում իր բանաստեղծությունների նոր գիրքը՝ «Դեպի Արևմուտք» վերնագրով: Այս վերնագրով բանաստեղծը նշում է այն բեկումը, որ սկսվել էր Հայրենական պատերազմի ուղիմահակատներում ստալինգրադյան հաղթական մարտերից հետո:

Գրքում ղետեղված «Երգ զինվորի կոշիկների մասին», «Վոլգան», «Պարծանք», «Լենինգրադին», «Ղրիմի վարդերը», «Եղևնիները», «Սովետական Հայաստան» բանաստեղծությունները հարստատրեն արտահայտում են այն հույզերն ու ասպրամենները, որ համակել էին սովետական մարդկանց Հայրենական պատերազմի օրերին: Պոետը երգում է քաջաբար ընկածների, փառք, մեր անառիկ Հայրենիքի հզորությունը: Թըշնամու կողմից ժամանակավորապես դրավված Սովետական Ղրիմին դիմելով, պոետն ասում է.

Ու մենք կզանք, կզանք Ղրիմ,—
Մոտ է այդ օրն արեավոր:

«Սովետական Հայաստան» բանաստեղծության մեջ Վահունին բարձր արվեստով վերարտադրում է մեր ժողովրդի ջանքերը Սովետական Միության եղբայրական ժողովուրդների հետ միասին հաղթանակը կոփելու գործում:

Սովետական հայրենասիրության ուժը պոետը գրսեորում է «Լենինգրադին» բանաստեղծության մեջ: Այստեղ ընդգծվում է Լենինի քաղաքի պատմական նշանակությունը սովետական պետության պատմության մեջ: Սովետական ժողովրդի համար Լենինգրադը «լույս ու լուսամուտ» է, այնտեղ են կոփվել ռևոլյուցիոն պրոլետարիատի մարտական ջոկատները, այնտեղ է, որ փառապանծ «Ավրորան» իր համազարկով ազդարարել է «նոր դարաշրջանի սկիզբը»: Ֆաշիստական դրքերը օղակել են քաղաքը, բայց պոետը համոզված է, որ Լենինգրադն անառիկ է:

Այս շարքի բանաստեղծությունների մեջ ուրույն տեղ է զբաղում «Մոսկվա» ներբողը: Նապոլեոններն ու հիտլերները եկել և անցել են, իսկ Մոսկվան — ռուս մեծ ժողովուրդը կանգուն է, հավերժական, ոչ մի ուժ չի կարող ստրկացնել նրան—այս է բանաստեղծության հիմնական պաղափարը: Բանաստեղծությունը եզրափակվում է ընդհանրացման մեծ ուժ ունեցող տողերով: Նկատի ունենալով ողջ աշխարհի կոմունիստական ապագան և Մոսկվայի դերը այդ պայծառ գալիքի հաղթանակի գործում, պոետը գրում է.

Որպես փրկության փարոս լուսավոր,
Շողում ես նորից քո հեռաստանում,
Եվ ինչպես առաջ՝ աշխարհի բոլոր
Ճանապարհները Մոսկվա են տանում...

1949 թ. լույս է տեսնում Վահուհու «Երգերի գիրք»-ը, ուր զետեղված են նրա ընտիր բանաստեղծություններն ու բալլադները: Դրանց մեջ հին երգերի կադրին քիչ չեն նոր բանաստեղծությունները, որոնցում պոետն արձագանքում է հետպատերազմյան շրջանի հարցերին: «Խաղաղության աղափնիները», «Հայրենի ջրերը», «Սևան», «Միժեռնակը», «Օրացույցը» լիրիկական բանաստեղծությունները պոետի ամփան սուլացույցներն են:

«Սպիտակ տունը» բանաստեղծության մեջ սատիրայի զենքով Վահուհին մերկացնում է նոր պատերազմի հրձիգներին:

Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտի ռեզիդենցիան կրում է «Սպիտակ տուն» անունը: Ընդգծելով այն սուր հակասությունը, որ կա այդ անվան և այդ տանը կատարվող սև գործերի միջև, բանաստեղծը մերկացնում է ժամանակակից իմպերիալիզմը: Թվելով այն ռժրագործությունները, որ կատարվում են աշխարհում «Սպիտակ տան» կարգադրությամբ, պոետը հարցնում է.

Ինչո՞ւ ըսպիտակ կոչիլի այն տունը,
Ուր սև են բոլոր դորժերն անխորի:

«Սպիտակ տունը» բանաստեղծության մեջ հաջողությամբ օգտագործված են սատիրական արվեստի հնարանքները և հակադրության մեթոդը:

Վահուհին ընթերցողներին հայտնի է նաև իր թարգմանություններով: Առանձնապես հաջող են «Ասք Իգորի ճակատամարտի մասին» սուսական ժողովրդական ստեղծագործության, Պուշկինի մի քանի սյուեմների. և Բոկաչիովի «Դեկամերոն»-ի թարգմանությունները:

Հովհաննես Շիրազը (Կարապետյան) ծնվել է 1914 թ. Ալեքսանդրապոլում (Լենինական), հուլիզործի ընտանիքում: 1920 թ. մեռնում է Շիրազի հայրը՝ օրվա հացի կարոտ ընտանիքը թողնելով կնոջ խնամքին:

Յոթնամյա դպրոցն ավարտելուց հետո, 1932 թ. պատանի Հովհաննեսը աշխատանքի է ընդունվում Լենինականի տեքստիլ գործարանում:

1935 թ. լույս է տեսնում Շիրազի լիրիկական բանաստեղծությունների առաջին գիրքը՝ «Գարնանամուտ» վերնագրով: 1937 թ. Շի-

րազը գրում է «Արևի երկիր» պոեմը, փորձելով մեծ կտավի վրա վերարտադրել քաղաքացիական կռիվները Հայաստանում:

1936—1941 թթ. Շիրազը սովորում է Երևանի Վ. Մ. Մուստովի անվան Պետական Համալսարանի ֆիլոլոգիական ֆակուլտետում:

1940 թ. լույս է տեսնում Շիրազի «Երգ Հայաստանի» գիրքը: Հայրենական Մեծ պատերազմի տարիներին պոետը հրատարակում է «Երգերի գիրք» և «Բանաստեղծի ձայնը» ժողովածուները:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում լույս են տեսնում Շիրազի «Լիրիկա», «Հատընտիր» և «Գիրք սիրո և խաղաղության» ժողովածուները:

Առաջին իսկ ժողովածուով Շիրազը սովետահայ գրականության մեջ է մտնում որպես տաղանդավոր պոետ, որը կարողանում է բանաստեղծական զգացմունքն արտահայտել թարմ պատկերներով:

«Գարնանամուտ» գրքում Շիրազն արտահայտում է սովետական երիտասարդի կենսախիռու ապրումները, մտքի սլացումները, երգում հին աշխարհի ավերակների վրա բարձրացած Սովետական Հայրենիքի ծաղկումը: Այդ կարգի սրտաբուխ երգերից է «Հին աշխարհը» բանաստեղծությունը.

Հին աշխարհը չեմ տեսել
Ու ոչ մի բան չեմ հիշում,
Բայց թողել է նա մի թել
Մորս աչքի մշուշում:

«Մոր աչքի մշուշում» մնացած այդ թելը — հայ ժողովրդի ողբերգական անցյալի հիշողությունը — բանաստեղծին լիցք է տալիս ցրնծալի տողեր նվիրելու սովետական երջանիկ կյանքին:

«Երգ Հայաստանի» գրքում Շիրազը ջերմ զգացմունքներով երգում է Լենինին և Ստալինին: Ոգևորված փառաբանում է վերածնված երկիրը, սովետական ժողովուրդների անխորտակելի բարեկամությունը, սրտառուչ տողեր է նվիրում ռուս մեծ ժողովրդին, վրաց և ադրբեջանական եղբայրական ժողովուրդներին:

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Շիրազի ստեղծագործության մեջ առավել ուժգնությամբ են հնչում հայրենասիրական մոտիվները: Հայրենիքի ազատությանը, Կոմունիստական պարտիային, Սովետական Բանակին ու նրա քաջ զորավարներին նվիրված, հաղթանակի պայծառ հավատով ներթափանցված երգերը երկրորդ

սլան են մղում բանաստեղծի անհատական, ինտիմ ապրումների զրահորումները:

Որպես բանաստեղծական բնորոշ պատկերներով Սովետական Հայրենիքի անխորտակելիությունն ու խաղաղությունն արտահայտող երկ, «Երգերի գրքում» աչքի է ընկնում «Էքսպրոմտ»-ը.

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,
Դուք՝ հողմերի պես խոժեցիք վայրագ:
Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,
Դուք՝ հողմերի պես ոռնացիք վայրագ:
Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես
Դուք հողմերի պես կկորլեր վայրագ:

«Էքսպրոմտ»-ի բանաստեղծական ուժը. մեծ դադափարը պարզ և սեղմ արտահայտելու մեջ է: Ընդամենը վեց տողի մեջ Շիրազը բնութագրում է մի կողմից Սովետական Միության խաղաղասեր, հզոր և անմահ ժողովրդին, մյուս կողմից վայրագ, արյունոտ և անհեռակար ֆաշիզմը:

«Գիրք սիրո և խաղաղության» ժողովածուի մեջ թեմայի ակտուալությամբ և գեղարվեստական արժանիքներով աչքի են ընկնում «Իմ ընկեր Լորիկը», «Հրազդան» և «Մեր գյուղերի անունները» պոեմները:

«Իմ ընկեր Լորիկը» վոնկրհոտ փաստի հիման վրա գրված լիրիկական սյուեմ է:

Բարեգործների դիմակ հագած ամերիկյան իմպերիալիզմի գործակալները գործակցելով հայ ժողովրդի թշնամիների հետ, տասնամյակներ շարունակ աշխատել են շահ ձեռք բերել հայկական կոտորածներից և ավերումներից: Իմպերիալիզմի դարդացման հետ մեկտեղ ավելի ու ավելի են ուժեղացել անդլո-ամերիկյան դադոթարարների դավադրությունները հայ ժողովրդի դեմ: Համերաշխ լինելով թյուրք փաշաների և հայ աղաների հետ, 1914—1918 թթ. հայ-թյուրքական կոտորածների ժամանակ նրանք աշխատանքի ընդունակ որք պատանիներին խաբել և Ամերիկա են քշել սարկական աշխատանքի, իսկ հիվանդներին կիսաքաղց վիճակում պահել որբանոցներում՝ այդ բանն օգտագործելով իրենց զիվանադիտական խաղերի համար:

Այդ որբանոցների մասին է պոեմը վշտաբեկ ասում.

Հե՛յ որբանոց, որբանոց,
Հուշերդ անգամ սրտախոց:

Պոեմի սյուժեն պարզ է: Բանաստեղծը պատմում է այդ որբանոցներից մեկում ամերիկյան գործակալի կատարած չարագործության մասին: Ամերիկացի Վորլդը Արփաշայ գետում խեղդում է պատանի Լորիկին:

Թեև սյուժեը ծանրաբեռնված է երկարաշունչ դատողություններով և բնության վերացական նկարագրություններով, սակայն Շիրազին հաջողվել է մի քանի տիպական գծերով ստեղծել Լորիկի ողբերգական կերպարը և մերկացնել ամերիկացի «կուլտուրական գործչին», ցույց տալ նրա «հումանիզմի» ամբողջ կեղծությունը, երկերեսանիությունն ու դաժանությունը:

Միմյանց հետ օրգանապես կապված են «Հրապարակ» և «Մեր գյուղերի անունները» պոեմները:

«Մեր գյուղերի անունները» պոեմի հիմնական դադափարն այն է, որ Հայաստանը սովետական ռեսպուբլիկաների ընտանիքում վերածնվել, դարձել է լուսավոր ու հարուստ ռեսպուբլիկա: Ծաղկել է ժողովրդի կյանքը, վերացել են անցյալի խավար ու աղքատ օրերի հետքերը: Զինված հայրենասիրության և ազգային արժանապատվության բարձր գաղափարներով, մարդիկ կոմունիզմ են կառուցում, մինչդեռ բնակելի վայրերից շատերը դեռևս կրում են անցյալի նվաստացնող անունները: Բանաստեղծը սիրով նշում է, որ մեր գյուղերին այժմ տրվում են ժողովրդի ազատության համար զոհված հերոսների անունները: Քավթապուրն դարձել է Փանիկ՝ քաղաքացիական կռիվներում հերոսաբար ընկած Փանյանի հիշատակին, Շլխոսան՝ Բենյամին, Հայրենական Մեծ պատերազմի հերոս Բենյամին Գալստյանի հիշատակին և այլն: Վերածնված ժողովուրդը սրբում է անցյալի արչունքոտ սլաղաթևյան հետքերը: Մեր գյուղերին օտար բռնակալների տված անունները փոխվելով նոր, լուսավոր, հայրենաբառ անուններով (Հացտովան, Բերքառատ, Բամբակաշատ, Կաքավաձոր և այլն), ժողովուրդը հրճվանքով շեշտում է իր ազգային վերածնունդը, խաղաղ, հարուստ և երջանիկ կյանքը:

Շիրազի ստեղծած պատկերներն աչքի են ընկնում իրենց գեղեցկությամբ: Պատկերների և համեմատությունների համար պոետը լայնորեն օգտագործում է բնության երևույթները: Վերը նշված բանաստեղծություններում ու պոեմներում, ինչպես նաև «Սիամանթո և Խաջեգար»-ի մեջ, որը ֆոլկլորային նյութի տաղանդավոր մշակում է, Շիրազը տալիս է գեղեցիկ բանկաշներ, տասնյակ անմոռանալի

պատկերները Սակայն Շիրազի ստեղծագործության մեջ մերթ ընդ մերթ նկատվում է պատկերների անհարկի խճողում, որը վնասում է բանաստեղծության ամբողջականությանն ու նպատակասլացությանը:

Պատեիրազմի տարիներին Շիրազը դրել է մի քանի ոտանավորներ, որոնցում նկատվում են անցյալի իդեալականացման և նեղ, անձնական մոտիվներով տարվելու տրամադրություններ: Բայց Հովհաննես Շիրազի պոեզիայում գերակշռողը սովետական կենարար հայրենասիրությունն է, հայ ժողովրդի մասնակցությունը կոմունիզմի շինարարությանը, Այս դադափարները Շիրազն արտահայտում է ինքնաբուխ, անկեղծ պոետական խոսքով:

ԳՈՒՐԳԵՆ ԲՈՐՅԱՆ

Գուրգեն Բորյանը ծնվել է 1915 թ. Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում:

1937 թ. լույս է տեսնում Բորյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն: 1939 թ. նա գրում է «Արևի համբույր» պոեմը, իսկ 1940 թ. «Ճանապարհ դեպի ծով» լիրիկայի գիրքը:

Հայրենական Մեծ պատերազմի սկզբին Բորյանը մտնում է Սովետական Բանակի շտրեքերը և մինչև ֆաշիստական Գերմանիայի ջախջախումը աշխատում «Боец РККА» թերթում, իբրև հատուկ զինվորական թղթակից:

Պատերազմի ժամանակ Բորյանի դրած բանաստեղծությունները հրատարակվում են պարբերական մամուլում, ապա առանձին ժողովածուներով՝ «Մարտիկի երգումը» (1941 թ.), «Կրակե լեզվով» (1942 թ.), «Հրացուկ» (1945 թ.):

Պատերազմից առաջ պոետը գրում էր «ուրախության տաղեր», երգում էր «խաղաղ աշխատանք», «գարնան զարթոնք», «բիրքառատ աշուն»: Իսկ երբ թշնամին ներխուժում է մեր Հայրենիքի սահմանները, բանաստեղծը «որպես կարմիր զինվոր» իր երգի հետ մարտի է գնում: Բորյանը լավ է հասկանում, որ հայրենասեր պոետի տեղը մարտադաշտն է: Պոետին դիմելով, նա գրում է.

Նետվիր, ինչպես գոռ, ահարկու
Թնդանոթի արկի շառաչ
Եվ մեր կարմիր, մեր զորավոր
Գնդերի հետ գնա առաջ.
Եզիր արթուն գիշեր ու ղօր
Եվ մարտերում այս արնահեղ
Խոսիր միայն կրակե լեզվով...

«Աղջկան, որի մազերը ճերմակել են...» բանաստեղծության մեջ պոետը պատկերում է ֆաշիստական ղալթիչները զոհերից մեկին:

Այս աղջիկը երեկ մայիս էր մի գարուն
Եվ վիշտը չէր անցնում նրա տան դռներով.
Այս աղջիկը երեկ եղնիկ էր թուլուն,
Արևից զոդացած ոսկեհեր մազերով,
Իսկ այսօր մազերը ճերմակել են վշտից...
Եվ ձյունը մազել է մազերին աղջկա
Տանջանքի ու ցավի ձմեռը խոտափրոտ.
Չկա տուն... չկա մայր, չկան քույր ու եղբայր:

Թշնամու նկատմամբ ատելության և վրեժի ղգացումով են առգորված «Այս աղբին կծաղկի...» և «Երկու կաթիլ արցունք» բանաստեղծությունները: Սովետական դադմիկը գերմանական զավթիչներից աղատագրում է հայրենի դուռը ու տեսնում, որ թշնամին ստրկության է քշել իր հարադատներին և ավերել իր տունը: Մարտիկի հոգին լրջվում է ատելությամբ, նա երգվում է վրեժ լուծել իր «հրդեհված մանկության» համար:

«Պարտումսը» բանաստեղծության մեջ, որը նրա ամենահաջող գործերից մեկն է, բանաստեղծը պատկերում է հերոսի մահը: Պարտիայի պանծալի զավակը՝ գնդի կոմիսարը, սպանվում է մարտում՝ ձեռքը սեղմած կրծքի ձախ դրպանին, որտեղ դրված է պարտիական ստմար:

Պոետը կենդանի պատկեր է ստեղծել, ցույց տալով վշտահար, բայց հաղթանակի հրով բորբոքված մարտիկների երդումը զոհված կոմիսարի արնաթաթախ պարտումսի առաջ:

Ընկեր կոմիսար, ննջիր դու խաղաղ,
Փառք է շիրմիդ ծաղկել հավիտյան,
Քանզի քո կարմիր դրքույկից ահա
Աստղն է մեզ նայում քո անմահության...

Հետպատերազմյան շրջանում Բորյանը գրում է «Բարձունքներում» դրաման, «Ծաղկեփունջ» և «Ես, դու, նա» մանկական բանաստեղծությունների գրքերը, հրապարակում է «Երևանյան լուսաբաց» ժողովածուն, ուր զետեղում է նաև պատերազմի տարիներին գրած բանաստեղծությունների մի մասը:

«Երևանյան լուսաբաց» ժողովածուի բանաստեղծություններում Բորյանը գովերգում է մեր ժողովրդի խաղաղ և երջանիկ կյանքը:

«Երևանյան լուսաբաց», «Աբովյանի ծառերը», «Մոսկվա», «Գարունն իմ քաղաքում», «Նորհրդածություն 1947 թ. նախադասնը» և այլ գործեր լրին գարնան, սիրտ, երջանակության և խնդովյան մտախմբություն:

ԱՐՁԱՆԻ

Պատերազմի տարիներին սովետահայ արձակի բնագավառում առավելապես իշխում են պատմվածքի և ակնարկի ժանրերը: Կարճ պատմվածքներում և ակնարկներում դրողները պատկերում են ինչպես թիկունքի մարդկանց անձնվեր աշխատանքը դործարաններում, հանքերում, կոլտնտեսային գաղտերում, այնպես էլ մեր ռադիկներին հերոսական սխարագործությունները ռադամակատում, օկուպացված մարզերում գործող ժողովրդական վրիժառուների խիղախ կռիվները ֆաշիստական զավթիչների դեմ:

Ռադամակատային կյանքի մասին, բնականաբար, ավելի շատ գրում են մեր այն գրողները, որոնք անմիջականորեն մասնակցել են ռադական գործողություններին: Այս հեղինակների ստեղծագործության մեջ առավել կենդանի է պատկերվել Սովետական Բանակի ռադմիկի կերպարը: Այդ տեսակետից հաջողված երկեր են Հր. Բոչարի «Տարիելի որդին», «Մեր քույրերը», «Բարեկամություն», Վ. Անանյանի «Ծարավը», Հ. Մկրտչյանի «Խարտյաշ աղջիկը» պատմվածքներն ու ակնարկները:

Ժամանակավորապես օկուպացված շրջաններում գործող խիզախ պարտիզանների մասին գրված երկերից ուշագրավ են Դ. Դեմիրճյանի «Անխուսափելին», «Նոշտանգվածի ավանդը», «Օտտո Վեյմանի վերջին արկածները», Հր. Բոչարի «Վերադարձ», «Մի կնոջ պատմածից», Գ. Բեսի «Կրակ» և ուրիշների մի շարք պատմվածքները: Սրանցում ընդգծվում են սովետական մարդկանց բարձր հատկությունները, միաժամանակ բացահայտվում ու մերկացվում է ֆաշիստների հոգեկան աղքատությունը, նրանց «նոր կարգի» հակամարդկային էությունը:

Թիկունքի մարդկանց հայրենասիրական աշխատանքը, նրանց հոգեկան ապրումներն ու մտորումները արտացոլում են Ստ. Զորյանը, Արագին, Ծ. Բորչոմյանը և ուրիշները:

Պատերազմի օրերին բոլոր սովետական մարդկանց աշխատանքն ուղղված էր մի նպատակի — որքան կարելի է ավելի մեծ օգնություն ցույց տալ ռադամակատին, արագացնել հաղթանակը: «Պետք է մի աչնպիսի դուռ անել, որ մեր հաղթանակների շարքն ընկնի», — մտածում է Արագու պատմվածքներից մեկի հերոսը՝ մեքենավար Ալեքը:

Գործարանը ռազմաճակատի պատվերներն է կատարում: Ալեքը լավ է հասկանում, թե ինչ խոշոր նշանակություն ունի հաղթանակի համար մեքենաների արտադրողականության բարձրացումը: Նա օր ու գիշեր սշխատում է այդ ուղղությամբ, և նրա անքուն գիշերների աշխատանքը պսակվում է հաղթանակով:

Բիկուների մարդկանց հայրենասիրության արտահայտություններին մեկն էլ այն էր, որ նրանք հոգատարությամբ էին շրջապատում ռազմաճակատում կռիվող մարտիկների ընտանիքներին: Ստ. Զորյանի պատմվածքներից մեկի հերոս Կարոն, որը ֆիզիկական պակասությունն ապահովում էր իր հայրենասիրական պարտքը՝ օգնելով մարտիկների ընտանիքներին:

Արաքսն իր «Ուսուցչուհին» պատմվածքում պատկերում է միակ որդուն պատերազմի դաշտը ուղարկած մոր հոգեբանությունը, նրա սպորտմեններն աշխատանքի մեջ և տանը: Արաքսի հերոսուհին իր մեջ կրում է սովետական կնոջ բնորոշ գծերը՝ աշխատասիրությունը, հումանիզմը, ամեն ինչ հաղթանակի գործին նվիրաբերելու կարողությունը: Նույնպիսի մարդիկ են Մ. Թորգոմյանի և Հ. Մկրտչյանի մի շարք տղամարկների ու պատմվածքների հերոսուհիները, կոլտնտեսային պաշտերի աշխատավորները:

Երիտասարդ գրող Բ. Սեյրանյանը «Ծիրանաքարի անտառապահը» պատմվածքում պատկերում է մեր մարդկանց բարձր բարոյականությունը: Հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես կոլտնտեսականները պաշտպան են կանգնում ճակատային զինվորի հարսնացվին, այդ համարելով իրենց պատվի գործը: Սեյրանյանը կենդանի կերպով պատկերում է գյուղի առօրյան և թիկունքի մարդկանց կապը ռազմաճակատի հետ:

Նորը հումանիզմով է շնչում Գ. Բեսի «Փոստատարը» պատմվածքը: Մի քանի գծերով հեղինակը ծանոթացնում է ծեր փոստատար Իգնատ Պետրովիչի կյանքին: Դա ռուս աշխատավորի ազնիվ կյանքի պատմություն է: Պետրովիչի հոգու վեհությունն ամբողջովին դրսևորվում է ծանր փորձության օրերին: Փոստատարն անսահման բավականություն է զգում իր համագյուղացիներին ռազմաճակատից եկած նամակներ բաժանելիս: Նա ապրում է յուրաքանչյուրի հետ, հուսադրում ընկճվածներին, հաղթանակի հավատ ներշնչում շրջապատի մարդկանց: Պետրովիչի կարծիքով մարդկային երջանկությունն ու հանգիստը հանրօգուտ աշխատանքի մեջ է: Առանձնապես հուղիչ է այն մոմենտը,

երբ ծեր փոստատարը տեղեկություն է ստանում իր որդու ղոհման մասին: Որդու կորուստը խորապես ցնցում է ծեր փոստատարին, բայց նա գիտե, որ առանց ղոհների կոխվ չի լինում. «հողը միայն արյունով է պաշտպանվում»: Նա թաքցնում է արցունքը և զաժան ցավի մոմենտին անդամ չի ներանձնանում, չի ապրում միայն իր անսահման վշտով, այլ մտածում է նաև իրեն շրջապատողների մասին:

— «Մեր վիշտը ծանր է,— ասում է նա կնոջը,— բայց դիմանալ է պետք, ես հիմա մտածում եմ, թե վաղն ու՞մ եմ նամակ բերելու: Լսողում եմ, որ ոչ ոք վատ լուր չստանա...»:

Հայրենական պատերազմի շրջանի սովետահայ արձակի մեջ առանձնակի տեղ են զբաղում Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» և Ստ. Զորյանի «Պապ թաղավոր» պատմավեպերը: Այդ վեպերի ստեղծումը հատկապես Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, միանգամայն օրինաչափ երևույթ էր: 1941 թ. նոյեմբերի 7-ին, Սովետական Բանակի մարտիկներին դիմելով, Ի. Վ. Ստալինն ասաց. «Թող ձեզ այս պատերազմում ուղևորեն մեր մեծ նախնիքների՝ Ալեքսանդր Նևսկու, Դիմիտրի Դոնսկոյի, Կուլումա Մինինի, Դիմիտրի Պոժարսկու, Ալեքսանդր Սուվորովի, Միխայիլ Կուտուզովի քաջարի վերապրները: Թող ձեզ հովանի լինի մեծ Լենինի հաղթական դրոշմը»:

Սովետահայ դրողները պատմության էին դիմում, որպեսզի անցյալի խորքերից վեր հանեին օտար զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի դրվագները և դրանցով ոգեշնչեին սովետական մարդկանց:

ՀՄՍՑՍ-Ն ՍԻՐՍՍ

Հմայակ Սիրասը (Ոսկանյան) ծնվել է 1902 թ. Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի հովտի Կարա-Քիլիսե ավանում: 1909—1914 թթ. սովորել է Կարա-Քիլիսեի դպրոցում: 1915 թ. առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Ոսկանյանների ընտանիքը գաղթում է Բիֆլիս. Հոր մահից հետո պատանի Հմայակն աշխատում է որպես դրաշար բանվոր: 1912 թ. տեղափոխվում է Երևան: 1922—1924 թթ. սովորում է Երևանի համալսարանում:

Սիրասի առաջին պատմվածքը՝ «Նուացող կաթսան» տպագրվում է 1922 թ., 1931 թ. լույս է տեսնում «Հարցրեք նրանց» վեպը, 1934 թ. «Կյանքի կարոտը» պատմվածքների ժողովածուն, 1940 թ. «Անահիտ» վեպը, որ 1936 թ. լույս տեսած «Չգրված օրենք»-ի վերամշակված վարիանտն է:

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Սիրասը գրում է «Հայր և որդի» վիպակը և «Երգը» պատմվածքը, իսկ պատերազմի ավարտից հետո՝ «Արարատ» վեպը:

«Հարցրեք նրանց» վեպում Սիրասը տալիս է բուրժուական քաղաքի տիրապետող դասակարգերի նեխած կյանքի, բանվորների ծանր դրովթյան ու նրանց պործադուլային պայքարի մի քանի հաջող պատկերներ: Սակայն նա դեռևս չի կարողանում ստեղծել լիարյուն կերպարներ:

«Անահիտ» վեպում Սիրասը շոշափում է սոցիալիստական շինարարության, նոր մարդկանց աճման, նոր ընտանիքի և կենցաղի խնդիրները: Վեպի սյուժեն սովետական շարքային աշխատավորի՝ հաշվապահ Հանեսի ընտանիքի կյանքն է: Չի կարելի ասել, թե հեղինակը կարողանում է գեղարվեստորեն համոզիչ կերպով լուծել ընտանեկան մորալի հարցերը: Անահիտի կերպարի մեջ Սիրասն ընդգծում է բիւլդոզիական հակումները, իսկ Մուշեղն ու խառն, որոնք հեղինակի մտադրովյամբ հումանիստական բարձր մորալի կրողները պետք է լինեին, դուրս չեն գալիս ընտանեկան ոլորտից, սխեմատիկ են: Սակայն վեպի արժանիքը կենցաղային նկարագրովթյունների մեջ չէ: Վեպի ամենահաջող էջերը ջրանցքի կառուցման նկարագրովթյուններն են: Դրանց մեջ հեղինակը կարողացել է ռեալիստորեն պատկերել շինարարովյան հերոսների աշխատանքային սխրագործովթյունը: Իրենց աշխատանքային ֆնտուզիալմով համոզիչ են հատկապես Ավագի և Ռեհանի կերպարները: Այդ նրանց և հարյուրավոր նրանց նմանների խանդավառ աշխատանքի շնորհիվ են ծաղկում անապատները, Չորագյուղը դառնում է Ջրագյուղ: Վեպում մերկացվում է ծպտյալ սպիտակգլխադրիական, դիվերսանտ Ռաֆայելը, որը վնաս է հասցնում պետությանը, ճգնում է քայքայել Հանեսի ընտանիքը:

Հայրենական պատերազմը նոր թեմա և ստեղծագործական լիցք է տալիս Սիրասին:

«Հայր և որդի» վիպակը Հայրենական պատերազմի թեմայով գրված սովետահայ առաջին համեմատաբար ծավալուն երկերից մեկն է, որի մեջ մարտական գործողովթյունների ֆոնի վրա բնութագրվում է սովետական հայրենասերը իր հոգեկան բարձր հատկովթյուններով: Սովետական Միության ժողովուրդների եղբայրովթյունը, որ ռազմաճակատում արտահայտվում էր մարտական բարեկամովթյան ձևով, վիպակի հիմնական գաղափարն է: Վիպակի կենտրոնական հերոսնե-

րը շորսն են՝ Սովետական Բանակի մարտիկներ Սմիրնովն ու Սուրեն Նահապետյանը, բժշկական ջուլը Վերան և դնդի կոմիսար, հետագայում հրամանատար, Կոլոսովը:

Սմիրնովն ու Նահապետյանը աչքի են ընկնում իրենց հոգեկան հարուստ ներաշխարհով: Սմիրնովն իր քաջությանը միահյուսում է անձնազոհությունը, որին նա դիմում է Կոլոսովի կյանքը փրկելու համար: Քաջ մարտիկ լինելով, նա միաժամանակ սիրող և երազող հայր ու ամուսին է: Հուզիչ է արված նրա հոգու տառապանքը, երբ կորցնում է ընտանիքը: Ծանր վիշտը Սմիրնովի սրտում չի առաջացնում նկուն մտորումներ, ընդհակառակը, նա ավելի է ղինավառվում առեւելյամբ ու վրեժխնդրություններ:

Գնդի կոմիսարը Սուրեն Նահապետյանի մեջ տեսնում է հայ ժողովրդի ներկայացուցչին: Սուրենը ոչ մի ջանք չի խնայում հայ ժողովրդի անունն ու պատվը բարձր պահելու համար: Նահապետյանը անմիջական է, անկեղծ և բարոյապես մաքուր: Կոմիսարի ժամանակ խիզախություն հանդես բերելով, նա կարող է երեսայի նման շփոթվել սիրած աղջկա առաջ: Սուրենին հատուկ է նաև ընկերական ջերմ սերն ու անձնազոհության պատրաստակամությունը: Նա իր և Վերայի ամուսնության առաջին նախապայմանն է համարում զոհված ընկերոջ վավակին որդեգրելը:

Կոլոսովը ներկայացված է որպես Սովետական Բանակի կադրային սպայի կերպար: Նահապետյանի և Սմիրնովի նման, Կոլոսովը ևս օժտված է հայրենասերի և հոմանիստի գծերով: Նա ոչ միայն քաջ հրամանատար է, այլև հավասարակշռված, խելոք մարդ: Քաջությունն ու մարտավարական հմտությունը նա միացնում է անսահման հոգատարությունը զնդի յուրաքանչյուր մարտիկի նկատմամբ:

Վերան սովետական «հասարակ ու սովորական» կին է: Նրա խառնվածքի մեջ միահյուսված են աղնվությունը, հումանիզմը, երիտասարդական կորովը: Կյանքի բոլոր խնդիրներում Վերան անմիջական է, սեփեթանքն ամենևին հատուկ չէ նրան: Այս հանդամանքն, առանձնակի հրապույր է տալիս Վերային: Հատկապես հուզիչ է այն բույրական հոգատարությունը, որով նա շրջապատում է ծանր վիրավոր Գուդնիկին:

Սիրասը լավ է կերտել գլխավոր հերոսների կերպարները: Վերայի հիմնական արժանիքն էլ հենց դրա մեջ է:

«Ծրգը» պատմվածքի հերոսը նույն Սուրեն Նահապետյանն է:

Պատմվածքում Սուրենի կերպարի մեջ հեղինակը շեշտում է սովետական մարզուն հասուն բարձր հումանիզմը: Կռիվներում կոպտացել է Սուրենի դեմքը, բայց հողին մնացել է կարեկցող ու քնքուշ:

Գաժան մարտերի փորձությունների միջով անցած Նահապետյանն իր պարտականությունն է համարում սփռվել զերմանացի անօգնական երեխային, փարատել նրան տիրող սարսափը:

«Արարատ» լեպում Սիրասը տվել է մարտական մի քանի գործողությունների հաջողված նկարագրություններ (օրինակ՝ զիլիզիայից կտրված գումարտակի գործողությունները): Վեպի հերոսներից մի քանիսն ընդհանուր առմամբ հաջողված կերպարներ են: Սակայն հիմնականում հեղինակին չի հաջողվել տալ Հայրենական Մեծ պատերազմի լիարժեք զեղարվեստական արտացոլումը, որը նրա նպատակն է եղել:

ԼՐԱՁՅՄ. ՔՈՉՈՐ

Հրաչյա Քոչարը (Գաբրիելյան) ծնվել է 1910 թ. Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի շրջանում: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ նրանց ընտանիքը գաղթում է Էջմիածնի գավառը: Քոչարը սովորում է Հոկտեմբերյանի շրջանի բամբակագործական տեխնիկումում, ապա ավարտում է Նրեանի բանֆակը և հաճախում Գրողների Միության կից բացված Գրական համալսարանը:

Դեռևս բանֆակում սովորելիս Քոչարը պարբերական մամուլում տպագրում է մի շարք ակնարկներ ու պատկերներ:

1934 թ. լույս է տեսնում Հր. Քոչարի «Վահան Վարդյան» վիպակը, իսկ 1937 թ. «Օգսեն Վասպուրի ճանապարհորդությունը» երգիծական երկը: 1941 թ. Քոչարը հրատարակում է «Ժամանակներ» վերնագրով պատմվածքների և վիպակների ժողովածուն: Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Հր. Քոչարը գրում է բազմաթիվ պատմվածքներ և ակնարկներ, որոնք տպագրվում են թերթերում և ժուռնալներում, ապա և հրատարակվում առանձին ժողովածուներով («Նախօրյակին», «Արբազան ուխտ»): Պատերազմի թեման ավելի լայն կտավի վրա Քոչարն արտացոլում է Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո «Մեծ տան ղավակները» վեպում:

«Վահան Վարդյան» վիպակը Քոչարի առաջին ծավալուն գործն է և սովետահայ դրականովյան մեջ առաջիններից մեկը, ուր պատկերվում է սովետական բանակային կյանքը նախապատերազմյան տարիներին: Քոչարը ցույց է տալիս իր հերոսի քաղքենիական տրամադրու-

թյունների աստիճանական հաղթահարումը, նրա ձեռնարկումը Սովետական Բանակում, որպես նոր մարդ: Վիպական հաջող է պատկերված բանակային առօրյան:

«Օգտեն Վասպուրի ճանապարհորդությունը» երկում խառաղանվում են անցյալի մնացուկները մարդկանց հոգեբանության մեջ:

Օգտենի երդիծական կերպարի մեջ Քոչարը խտացրել է կյանքից կտրված, անցյալի հիշատակներով, հին գերեզմանների մամուռած քարերով ասլորող մարդու գծերը: Դեռևս «Վահան Վարդյան» վիպակում գլխավորվում է Քոչարի երդիծական դուրծեր ստեղծելու կարողությունը: «Օգտեն Վասպուրի ճանապարհորդությունն» այդ տեսակետից հեղինակի աճի ապացույցն է:

«Ժամանակներ» ժողովածուի մեջ ղետելված են սովետական երիտասարդ ինտելիգենցիայի կյանքին նվիրված «Ամուսնություն» վիպակը, քաղաքացիական կռիվների թեմայով դրված «Բուրում են ծաղիկները» պատմվածքը, պարսկական բռնության դեմ Սյունիքի ազատասեր գյուղացիության պայքարը վերաբրտադրող «Սյունեցիները» պատմվածքը, մի շարք ավանդությունների գեղարվեստական մշակումներ:

«Ամուսնություն» վիպակում Քոչարը փորձել է սալ ժամանակակից ինտելիգենտների սպրումներն ու մտորումները, վերաբերմունքը սիրո և ամուսնության հարցերին: Վիպակի սյուժեն գիտնական Արարատ Սուրենի և օգաչու Նվարդի սերն է: Սուրենը իր մի շարք դրական գծերի հետ միասին ունի նաև թերություններ, շատախոս է, երբեմն կնամեծար: Վիպակում Քոչարը ցույց է տալիս, թե ինչպես շրջապատի սովետական մարդկանց և հատկապես Նվարդի ազդեցությամբ Սուրենը հաղթահարում է իր թուլությունները:

Քոչարի գրիչն առանձնապես լավ է դառնում Հայրենական Մեծ պատերազմի տարիներին: Պատերազմական իրադրությունը, մարտական գործողությունները, ռազմաճակատում հերոսացող սովետական ռազմիկը — սրանք են եղել Հայրենական պատերազմի ժամանակ Քոչարին հետաքրքրող թեմաները: Աշխատելով որպես ռազմաճակատային թերթի ղինվորական թղթակից, Քոչարը հնարավորություն է ունեցել մոտիկից ծանոթանալու ռազմական ադործողություններին, տեսնելու հաղթանակի «նախօրյակը», ողևորվելու բազմազգ Սովետական Բանակի մարտիկների «սրբազան ուխտով»:

«Բարեկամություն», «Նախօրյակին», «Ռուս մարդու տունը», «Ստա-

լինգրադի հայ պաշտպանները», «Եղբայրական արյուն», «Սրբազան ուխտ» պատմվածքների և ակնարկների հիմնական գաղափարը Սովետական բազմազգ բանակի մարտիկների փոխադարձ նվիրվածությանն է: Փոխվել է Հայրենիքի հասկացողությունը: Հայրենիքը սովետական մարդու համար լուրջ ծննդավայրը չէ, այլ Սովետական ողջ Միությունը: Քոչարի յուրաքանչյուր հերոս իրեն զգում է մեծ Միության զավակը և պատրաստ է անձնվիրաբար կռվել մեր երկրի ամբողջ տերիտորիայի սեղատագրման համար: Ահա, թե ինչ է ասում «Բարեկամություն» պատմվածքի հերոսը՝ պարտիզան Շչ-ն.

«...Ձե՛ եղբայր, ներեցե՛ք, ես փոքրիկ մի շրջանի բնակիչ չեմ, այլ Ուկրաինական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի քաղաքացի, ոչ է՛սլոպես, ես զավակն եմ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության: Քանի՜ ազատ չէ Միությունն ամբողջովին, ինչո՞ւ պիտի վտանգի մեջ լինեն ուրիշները, իսկ ես թիկունքում»:

Հայրենասիրությունը Քոչարի պատկերած հերոսների բոլոր վեհ գործերի աղբյուրն է: Հայրենասիրությունը նրանց մեջ ծնում է մահն արհամարհելու, անձնական վիշտը մոռանալու և Հայրենիքի համար անձնազոհություն կատարելու վսեմ զգացում:

«Որդու վերադարձը» պատմվածքի հերոս տանկիստ լեյտենանտ Ստեփան Վասիլևը չի վարանում հրանոթով ավերել հայրենի տունը, որի մեջ տեղավորված ֆաշիստները խանգարում են մեր զորամասի առաջխաղացմանը, իսկ հերոսի հայրը՝ Լև Վասիլևը իր մեջ ուժ է գրտնում զոհված որդու մասին ասելու. «...Նա մեռավ, որպեսզի ապրի Ռուսիան»:

Քոչարը պատկերում է սովետական մարդկանց անսահման ատելությունը դեպի հիտլերականները: Այդ ատելությունը մարմնացումն է «Մի կնոջ պատմածից» երկի հերոս ծերունի կոլտնտեսական Նիկոլայ Կոշկարյովը, որին ֆաշիստներն աչրում են իր տնակի մեջ: Կոշկարյովի նման մարդկանց կամքի անընկճելիությունը սարսափեցնում է ֆաշիստներին: Քոչարի պատկերած հիտլերականների կերպարները բնութագրվում են իրենց դաժանությամբ, երկշոտությամբ և առաջին հերթին իրենց «զազանի բնական վախով»:

«Գնե՛րալի քույրը» պատմվածքում ցուցադրված է արտասահմանի աշխատավորության ջերմ սերն ու համակրանքը Սովետական Բանակի նկատմամբ:

Ամերիկայում ապրող հայուհին Հայրենական Մեծ պատերազմի ռազմադաշտերում հռչակված հայ զորավարի անվան ու աղբանվան մեջ գտնում է կոստուածի ժամանակ կորցրած եղբորը: Հոգ չէ, թե հերոս դեներալը կարող է բռնությանմբ Ամերիկա տարված հայուհու իսկական եղբայրը չլինել: Նա սովետական հայ զորավար է, որ ազնվությունմբ և քաջությունմբ կովում է մարդակեր ֆաշիստների դեմ: Այդքանը բավական է, որ հայրենասեր հայուհին նրան իր հարազատ եղբայրը համարի:

Հրաշյա Քոչարի պատերազմական ակնարկներն ու պատմվածքները աչքի են ընկնում իրենց ճշմարտացիությունմբ, լիրիզմով և պատմեկածեկ բազմազանությունմբ:

Քոչարի լեզուն հարուստ է, ոճը ձկուն: Պատերազմական իրադրությունը լավ արտացոլելու համար, Քոչարը կատարում է բառերի հատուկ ընտրություն: Նույնիսկ բնության նկարագրությունների մեջ նա օգտագործում է այնպիսի արտահայտություններ, որոնք անմիջականորեն առնչվում են մարտական գործողությունների հետ:

Սովետահայ արձակի վերջին տարիների արտադրանքի մեջ նշանակալից երևույթ է Քոչարի «Մեծ տան զավակները» վեպի առաջին գիրքը: «Մեծ տունը» Սովետական Միությունն է, որի ազատության և անկախության համար ոտքի են ելել նրա զավակները՝ ռուսները, ուկրաինացիները, բելոռուսները, հայերը, վրացիները, ադրբեջանցիները և մյուս եղբայրական ժողովուրդները: Ոչ մի ուժ չի կարող բաժանել նրանց, խախտել նրանց միասնությունը: Այդ միասնությամբ է պայմանավորված Սովետական Բանակի անպարտելիությունը — այս է վեպի գաղափարը:

Վեպի առաջին գրքի բովանդակությունը Սովետական Բանակի մեկ դիվիզիայի մարտական կյանքն է Հայրենական պատերազմի առաջին էտապում: Ռեալիստորեն նկարագրելով դիվիզիայի մշած պաշտպանողական մարտերը, Քոչարն ստեղծում է այն տիպական հանգամանքները, որոնց մեջ կռվում, ապրում, գործում են վեպի բազմաթիվ հերոսները՝ Սովետական Միության տարբեր ծայրերից եկած, տարբեր բնավորության, տարբեր խառնվածքի տեղ մարդիկ, որոնց միմյանց հետ կապում է հայրենասիրության վեհ զգացումը:

Վեպի բոլոր հերոսները չեն պծված գեղարվեստական նույն ուժով ու վարպետությամբ: Շարքային մարտիկներից հաջողված կերպարները Լևոն Տոնոյանն ու ուկրաինացի Բուրդենկոն են:

Տոնոյանը Արարատյան դաշտի կոլտնտեսական է, նա իր կյանքն անց է կացրել ստեղծագործ աշխատանքի մեջ: «Բարեկամություն» պատմվածքի հերոս Շչ-ի նման կապված է հայրենի հողին: Սովետական Միության բոլոր ծայրերում գլուղատնտեսութեան մեջ ձեռք բերված նվաճումները հուզում, ոգևորում են նրան, նա պատանեկան հափշտակութեամբ է լսում ուղբեկ Մուսրայիլովի գրույցները Ֆերգանայի հովտի, Ուզբեկիստանի բամբակի մասին: Տոնոյանի ամենաշնչոված գիծը հայրենիքին օգտակար լինելու ձգտումն է, իսկ ամենաբարձր գաղափարը՝ կոլեկտիվիզմի գաղափարը: Ահա թե ինչու է նա միանգամից բռնկվում, երբ մի առիթով նրան ասում են. «Մենատնտեսի հողի ունենա»: Բնականից աաքարյուն լինելով, նա պատրաստ է վիճել ամենքի հետ, սակայն նրա վեճերը երբեք անհատական շահ չեն հետապնդում: Պատերազմի առաջին ամիսներին Տոնոյանը չի կարողանում միանգամից ընկալել պատերազմական գործողությունների բարդությունը: Նրա համար տարօրինակ և վիրավորական է նահանջը, նա զայրույթով է դիտում կործանված բնակավայրերը, ամառում է նախել նահանջի ճանապարհին: Սակայն Տոնոյանը լիտիվում է մարտական իրադրության պայմաններում, նա քայլ առ քայլ խորամուխ է լինում երևույթների մեջ, ըմբռնում է մարտական գործողությունների էությունը: Նրա հոգում ամրանում է հավատը, հաղթանակի հեռանդկարը դառնում շողափնի: Տոնոյանի այս աստիճանական դարգացումը Քոչարի նվաճումներից է կերպարի կերտման գործում:

Բուրգենկոյի կերպարի մեջ ամենացայտունը կենսունակության և կենսասիրության գիծն է: Անսահմանորեն սիրելով կյանքը, նա ոչ մի վայրկյան չի կասկածում կյանքի հաղթանակի նկատմամբ: Ընկերներին ցույց տալով կտրված ծառի ոստից ձգված ծիլը, նա ասում է. «Այ թե ինչի մասին պետք է բանաստեղծություն գրել: Կացինով կտորել են նրան անտառից, պոկել արմատից, կտոր-կտոր են արել, բայց կյանքը, ախպերս, կյանքը նրա մեջ սպանել չեն կարողացել»: Կյանքի այս պարզ փրկիստպայութեամբ Բուրգենկոն հաստատում է ժողովրդի անմահության գաղափարը:

Տոնոյանի և Բուրգենկոյի նման մյուս շարքային հերոսները ևս՝ Մուսրայիլովը, Սլավինը, Խաչիկյանը, Համիդովը, Իվնուկը քաջ և համարձակ մարտիկներ են, զգում են իրենց գործի արդարությունը, հավատում են հաղթանակին:

Հրամանատարներից Յասնոպոլյանսկին ու Դեմենտևը որոշ չա-

փող լրացնում են միմյանց: Երկուսի մեջ էլ ընդգծված են ուսմամբ, գուն հատուկ հոգեկան բարձր հատկությունները՝ պարզությունը, համբերատարությունը, արտաքին հանգստության տակ հոգու խռովքը թաքցնելու կարողությունը: Հայրենի Սարատով քաղաքով, Վոլգայի աննման բնակարաններով հիացած Վլադիմիր Դեմենտևը կյանքի յուրաքանչյուր երեւոյթ չափում է յուրահատուկ պոետիկական չափանիշով՝ «տգեղ է», «գեղեցիկ է»: Դեմենտևի չափանիշով ամենաուգեղն, իհարկե, Փաշխտական հորդանների հարձակումն է, իսկ ամենագեղեցիկը Հայրենիքի պաշտպանության գործը: Այդ գործի համար նա պատրաստ է կրակի բերանը նետվել: Հայրենիքի համար մղվող պայքարը նրա կյանքն է, նրա ալեկոծված հոգու բովանդակությունը: Սակայն միաժամանակ Դեմենտևը լրջմիտ, հավասարակշռված հրամանատար է, նրան խորթ է պատերազմական «կտրիճությունը», իզուր չէ, որ պիլիպիսյում նրան «Վլադիմիր անվրդով» են կոչում:

Տիգրան Արշակյանի բախտը շատ ընդհանրություններ ունի հայ ժողովրդի բախտի հետ: Ծնվելով Մալխյան ապստամբության հերոսներից մեկի ընտանիքում, հոր զոհվելուց հետո, շնորհիվ Հայաստանում սովետական կարգերի հաստատման, Տիգրանը որբություն չի զղացել: Նրան և հաղարավոր հայ սրբերին փրկել, խնամել ու աճեցրել են Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը: Ռեպուցիտների որդին դառնում է պատմաբան և իր առաջին գործն է համարում ուսումնասիրել ուս և հայ ժողովուրդների պատմական կապերը: Պատմաբանի իր պրակտիկայում նա որեցոր ավելի է համոզվում, որ միայն Կոմունիստական պարտիայի ազգային քաղաքականության շնորհիվ, ուս ժողովրդի օգնությամբ է հայ ժողովուրդն ստացել ազգային վերածննդի հնարավորություն: Նա անսահման երախտագիտությամբ է լցված ուս մեծ ժողովրդի նկատմամբ: Հենց այդ զգացումով էլ մեկնում է ռադմաճակատ: Ռադմաճակատում Տոնոյանի նման Արշակյանը ևս աճում է, ունենալով սովետական քաղաքացու լավագույն հատկություններ՝ սկզբունքայնություն, շիտակություն, հումանիզմ, ռադմաճակատում այս ամենը նա միացնում է մարտական խիզախության հետ:

Սակայն Արշակյանի կերպարի ոչ բոլոր կողմերն են հստակությամբ տրված: Նրա դատողությունների ու անհարկի խորհրդածությունների առատությունը որոշ չափով գունատ են դարձնում կերպարը:

Եթե վերը հիշած հերոսների բոլոր գործողությունների աղբյուրը

ջերմ հայրենասիրությունն է, ապա վեպի բացասական կերպարներին՝ Գրիգոր Մաղիսին, Պարթև Սարխտշովին, Բենո Շառոյանին, մայր և աղջիկ Գլուշկոներին լեկավարողը էգոիստական կեղտոտ ձգտումներն են։ «Ուզում ես ապրել, ամեն ինչ կանես» — ահա նրանց սկզբունքը։ Նրանք Մեծ տան զավակները չեն։ Եսասիրությունը նրանց մեջ ծնում է վախկոտություն, ամեն ինչ անհատական շահին զոհաբերելու անասնական ձգտում — և բնականաբար նրանք դառնում են Հայրենիքի դավաճաններ։

Քոչարի «Մեծ տան զավակները» վեպն ունի թերություններ։ Մերթ ընդ մերթ շեղվելով ստեղծագործական ճիշտ սկզբունքներից, հեղինակն ավելի շատ պատմում է իր այս կամ այն հերոսի մասին, քան թե բացահայտում նրա կերպարի գծերը կոնկրետ գործողութային մեջ։ Անհարկի երկար դատողությունները, որոշ մասերի ձգձգվածությունը վնասում են երկի գեղարվեստական ամբողջությունը։

Հրաչյա Քոչարը զրականության մեջ մտավ հարուստ կենսափորձով։ Հայրենական Մեծ պատերազմի տարիներին դրած նրա ականարկներն ու պատմվածքները և «Մեծ տան զավակները» վեպը Հայրենական պատերազմի ժամանակաշրջանի սովետահայ արձակի լավագույն էջերից են։

ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՆ

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին որոշ աշխուժացում է նկատվում սովետահայ դրամատուրգիայի բնագավառում։ Դրամատիկական երկերի հիմնական մոտիվն է դառնում սովետական մարդկանց պայքարն ընդդեմ գերմանա-ֆաշիստական զավթիչների։ Պատերազմի հենց առաջին շրջանում Ն. Զարյանը գրում է «Վրեժ» դրամատիկական պոեմը, ուր ընդգծելով սովետական մարդկանց ջերմ հայրենասիրությունը և այն հակադրելով ֆաշիստական ջարդարարների ստորությանն ու անասնական էգոիզմին, սովետական մարդկանց սրտերում վրեժի և ատելության հուր է բորբոքում Հայրենիքի թշնամիների նկատմամբ։ Երկի գլխավոր կերպարները՝ Վասիլի Գերասիմովը, Մուշեղ Արամյանը և Ռաիսա Լիֆշիցը սովետական Բանակի խիզախ մարտիկներ են։ Հեղինակը ցուցադրել է նրանց սովետական մարդկանց հատուկ հոգեկան բարձր հատկություններով։

Դրամատուրգ Ալ. Արաքսմանյանը գրում է «Հրաբխի վրա» դրաման, որը պատկերում է ժողովրդական վրիժառուների անձնազոհ

սլաշքարը թշնամու կողմից ժամանակավորապես օկուպացված շրջաններինց մեկում:

Գ. Դեմիրճյանը հանդես է գալիս «Բժիշկ Բադրատունու ընտանիքը» պիեսով: Հայրենիքի վրա կախված ահեղ վտանգի պահին Բադրատունու ընտանիքի յուրաքանչյուր անդամը գտնում է իր տեղը ընդհանուր սլաշքարի մեջ և անհատական ապրումների ձայնը խլացնելով, պատրաստ է հայրենասիրական անձնազոհ արարքների:

Գերմանական ֆաշիզմի դեմ սովետական մարդկանց մղած հերոսական սլաշքարի արտացոլմանն են նվիրված Ն. Զարյանի «Այրող դիմակ», Գ. Սարյանի «Անտառի խորքում» և այլ հեղինակների դրամատիկական երկերը:

Նշված գործերը, իրենց թերություններով հանդերձ, որոշ դեր են կատարել սովետահայ դրամատուրգիայի զարգացման գործում:



Հայրենական Մեծ պատերազմի ժամանակաշրջանում սովետահայ դրականությունն է՛լ ավելի մեծ ուժով դրսևորեց սովետական մարդկանց հայրենասիրությունը և ժողովուրդների եղբայրությունը, դրանով իսկ նոր ավանդ մտցնելով դրականության պատմության մեջ: Հայրենիքի ազատության և անկախության համար մարտնչող ոսգմիրը, թիկունքում անձնվեր աշխատանքի մեջ հերոսացող սովետական բազմաքանի իրենց բարձր հոգեկան հատկություններով, հարուստ ներքնաշխարհով դարձան դրականության հիմնական հերոսները: Մեծ նվաճումների հասավ հատկապես պոեզիան: Արձակը հարստացավ արժեքավոր պատմվածքներով: Պատերազմի տարիներին ստեղծված «Վարդանանք» և «Պապ Ռազավոր» պատմական վեպերը հանդիսացան սովետական պատմավիպագրության նվաճումները:



ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆ

Նաիրի Զարյանը սովետահայ գրականության նշանավոր դեմքերից մեկն է։ Նա անցել է ավելի քան 30 տարվա ստեղծագործական ճանապարհ։ Այդ տարիների ընթացքում բանաստեղծի տաղանդը բացահայտվել է այնպիսի հատկություններով, որոնք բնութագրում են նրան՝ որպես սովետական դարաշրջանի խանդավառ երդչի։

Գրական գործունեության հենց սկզբից Զարյանն իր գրելը ի սպաս դրեց ժողովրդին, Հայրենիքին, պարտիային, արտացոլելով սովետական կյանքի կարևորագույն երևույթները՝ քաղաքացիական կրոնիկների հերոսական դրվագները, սոցիալիզմի կառուցման առաջին րայլերը, կոլեկտիվացիան շրջանո. Հայաստանի նվաճումները տնտեսական և կուլտուրական շինարարության բնագավառում, Հայրենական պատերազմի դեպքերը, մեր մարդկանց պայքարը կոմունիզմի կառուցման և խաղաղության համար։ Զարյանը մշտապես եղել է կրթակի առաջին զգույն, արտահայտելով մեր ժամանակը՝ մեծ գաղափարներով ու վարարուն հույզերով, բոցավառ զգացմունքը միացնե-

լով քաղաքական հասակ մտքի, հորդաբուխ լիրիզմը՝ հրապարակա-
խոսական պաթոսի հետ:

Զարյանի ստեղծագործությունը տոգորված է սովետական մար-
դու լավատեսական հավատով, ժողովրդական վանգվածների մտքերով
ու զգացմունքներով, կոմունիստական պարտիականությունը:

Նրա տաղանդի դարգացման գործում բարերար մեծ դեր են խա-
ղացել ռուսական սովետական գրականության առաջավոր ներկայա-
ցուցիչները, առաջին հերթին մեր ժամանակի մեծ բանաստեղծ Վլ.
Մայակովսկին և ախանավոր գրող Մ. Շոլոխովը: Զարյանն օգտագոր-
ծել է նաև հայ գրականության ժողովրդական-դեմոկրատական (Հովհ.
Թումանյան) և ռեվոլյուցիոն պրոլետարական գրականության (Հ. Հա-
կոբյան) տրադիցիաները:

Կյանքը

Նաիրի Զարյանը ծնվել է 1900 թ. դեկտեմբերի
31-ին, Արևմտյան Հայաստանի Վանի նահան-
գի Խառակոնիս գյուղում, գյուղացու ընտանիքում: Աչք բացելով գյու-
ղական աղքատ հարկի տակ՝ նա մանկությունից ճաշակում է ընչա-
զուրկ կյանքի բոլոր դառնությունները:

Բանաստեղծի ծնողները համաշխարհային առաջին պատերազմի
տարիներին զոհ գնացին թյուրքական արյունոտ յաթաղանին: Զրկվե-
լով ծնողներից և թողնելով ծննդավայրը, 1915 թվականին Զարյանն իր
հավաքավոր տառապած հայրենակիցների հետ բռնում է գաղթի
ուղին: 1915 թ. նա գալիս է Անդրկովկաս և «ապաստան» գտնում
ամերիկյան «բարերարների» որբանոցներում, մի կերպ քարշ տալով
որբության ծանր լուծը:

«Մինչև Հայաստանում սովետական կարգեր հաստատվելը,—
պատմում է Զարյանը,— աշնտեղ գործում էր այսպես կոչված «Մեր-
ձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտեն»: Ես հիշում եմ այդ
կոմիտեի պարագլուխներին: Նրանք մեզ հետ վարվում էին որպես ոչ
լիարժեք մարդկանց հետ, նրանք շահագործում էին հայ պատանինե-
րի ու աղջիկների աշխատանքը, Հայաստանում ոսկի էին դիզում և վե-
րադառնում տուն՝ ամերիկյան «ապրելակերպին»:

Հայաստանում Սովետական կարգեր հաստատվելուց հետո հա-
զարավոր հայ պատանիների համար բացվեցին իրենց ստեղծագոր-
ծական տաղանդն ու ուժերը լայնորեն դրսևորելու հնարավորույն-
ներ: Դրանց մեջ էր նաև Նաիրի Զարյանը: Նա 1923—27 թթ. սովորում
է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետում:

Համալսարանն ավարտելուց հետո նա գիտական աշխատանք է կատարում Ռեուլյուցիայի թանգարանում, միաժամանակ աշխատակցելով «Աշխատանք», «Անաստված», «Նոր Ակոս» և ուրիշ պարբերականների: 1931 թվականին նա ընդունվում է Արվեստագիտության պետական Ակադեմիայի (Լենինգրադ) դրական բաժնի ասպիրանտուրան, որն ավարտում է 1933 թվականին:

Ն. Զարյանը բանաստեղծություններ գրելու փորձեր կատարել է վաղ հասակից, 1916 թվականից: Նրա գրական առաջին փորձերը իրենց անորոշ թախծի տրամադրություններով առնչվում են սուբյեկտիվ լիրիկայի հետ:

1923—26 թթ. Զարյանի բանաստեղծությունները տպագրվում են ինչպես տեղական, այնպես էլ կենտրոնական թերթերում: 1926 թ. լույս է տեսնում նրա բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Ջրանցքի կապույտ երկրում» խորագրով: Այնուհետև մեկը մյուսի ետևից լույս են տեսնում «Հրանուշ» (1926 թ.), «Նոյեմբերյան օրերին» (1926 թ.), «Չին աղջիկը» (1929 թ.) պոեմները և բանաստեղծությունների ու պոեմների նոր ժողովածուն՝ «Հարվածները» (1932 թ.):

1930-ական թվականները Ն. Զարյանի համար հանդիսացան ստեղծագործության հասունացման տարիներ: 1930 թ. պարտիական կազմակերպությունների հանձնարարությամբ նա ակտիվ մասնակցություն է ունենում գյուղացիներին կոլտնտեսություններում միավորելու աշխատանքին: Դա միաժամանակ քաղաքական դաստիարակության դպրոց էր Զարյանի համար, որի նշանակությունը արդյունավետ եղավ նրա հետագա ստեղծագործական կյանքում: Այդ շրջանում նա գրում է «Ռուշանի քարափը» պոեմը, գյուղական ականարիներ, բաղմամբիվ բանաստեղծություններ ու պոեմներ:

30-ական թվականներն ընդգրկող տասնամյակում, բացի վերոհիշյալ գործերից, նա հրատարակում է բանաստեղծությունների «Ամրոց» (1935 թ.), «Հավերժական գաղաթներ» (1937 թ.) ժողովածուները, «Ստալին» նշանավոր բանաստեղծությունը, «Դուլցուգնա-գիրք» էպոպեան (1939 թ.), «Հացավան» վեպի առաջին հատորը (1937 թ.) և մի շարք ուրիշ երկեր:

Հայրենական Մեծ պատերազմի օրերին Նաիրի Զարյանը գրականության առաջին դիրքերում էր: Պատերազմի տարիներին նա ակտիվ հասարակական ու զրական գործունեություն է ծավալում՝ Հայաստանի գրողների հետ այցելում է Ղրիմի և Կուրսանի ռադամականներին

հայկական զորամասերը, խանդավառ ճառերով հանդես է գալիս թիկունքի աշխատավորներին միտինդներում, գրում է բազմաթիվ բանաստեղծություններ, պոեմներ, պիեսներ, ուղեգրություններ, ակնարկներ, հրապարակախոսական հոդվածներ։ Մեկը մյուսի ետևից լույս են տեսնում նրա «Մարտակոչ» (1941 թ.), «Շիկացած հոգով» (1943 թ.)։ «Լսե՛ք դարեր» (1943 թ.) ժողովածուները, «Զայն հայրենական» և «Ան՝ մահուության պարը» պոեմները, «Վրեժ» (1942 թ.) և «Ալըվող դիմակ» (1942 թ.) դրամատիկական երկերը, «Արա Գեղեցիկ» (1944 թ.) դիցապատմական ողբերգությունը և ուրիշ գործեր։

Հետպատերազմյան շրջանում Զարյանն ավարտում է «Հացավան» վեպի 2-րդ հատորը և երկու հատորը միասին հրատարակում է 1947 թվականին։

Բացի այդ, գրում է նոր բանաստեղծություններ, «Տնամերձ ալ. գին» (1946 թ.), «Աղբյուրի մոտ» (1948 թ.), «Փորձադաշտ» (1953 թ.) կոմեդիաները, «Արմենուհի» պոեմը (1950 թ.)։

Ն. Զարյանի ստեղծագործությունները թարգմանվել են ռուսերեն և Սովետական Միության մի շարք ժողովուրդների լեզուներով։ Նա թարգմանություններ է կատարել ռուս և հեբրայական ժողովուրդների գրողներից՝ Պուշկինից և Մայակովսկուց, Յանկա Կուպալսկից և Սամեդ Վուրզուներից, Պետրոս Բրովկայից և է. Բագրիցկուց։

Սովետական կառավարությունը Ն. Զարյանին պարգևատրել է լենինի, «Պատվո նշան», Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշաններով ու մեդալներով։ 1951 թ. փետրվարի 25-ին Ն. Զարյանը ընտրվում է Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի գեպուտատ։

1950 թ. Սովետական Հայաստանի աշխատավորները նշեցին նախրի Զարյանի ծննդյան 50-ամյակը։

Ն. Զարյանի առաջին երգերը

Զարյանի ստեղծագործության առաջին շրջանն սկսվում է «Ջրանցքի կապույտ երկրում» (1926 թ.) դրբով։ Զարյանը այդ ժողովածուում տպագրված բանաստեղծություններում երգում է ծնունդ առնող նոր կյանքը, գյուղի և քաղաքի դաշինքը, ժողովրդի պայքարը ռեսպուբլիկայի էլեկտրիֆիկացման և ոռոգման համար։ Հայաստանի շինարարության առաջնեկներից մեկի՝ Շիրակի ջրանցքի կառուցումը, որ սկսվեց 1922 թվականին Կապս գետից, ոգևորության նյութ դարձավ նաև ուրիշ բանաստեղծների համար (Հ. Հակոբյան — «Բոլշեհիկ է Շիր-կանալը», Գ. Սարյան — «Շիրակի հարսանիքը», Սարմեն — «Դաշտերը

«սլտում են»); Նրանց հետ միասին Զարյանին էլ հետաքրքրողը ոչ թե Շիրակի դաշտային բնանկարներն են, այլ նորի և հնի պայքարը: «Հրաժեշտ» բանաստեղծության մեջ նա սատիրական դուլներով է ներկայացնում անհետացող հին աշխարհը՝ միայնակ ու խղճով խառն-կոնիսը, նրա խարխուլ խուղերով ու ծուլ սալերով, «տխուր զնգացող շերանդիներով», դրանց հակադրելով նորամուտ մեքենաներն ու ջրանցքների կապույտ երկրի պատկերը:

Պեսք է նշել, որ վաղ շրջանի գործերում Զարյանը չի կարողանում հաղթահարել այդ ժամանակի սոցիալիզմի համար բնորոշ վերացականությունը, որի հետևանքով հաճախ ժամանակի կոնկրետ հերոսի հոգեբանությունը փոխարինում են առարկաների, մեքենաների ու ջրանցքների պատկերները («Անրոկամք», «Անրոկարոտ» և այլն):

Բանաստեղծի գրական զարդացման մեջ մի քայլ առաջ էր «Հարվածներ» ժողովածուն, որտեղ ամփոփված են ինչպես սոցիալիստական շինարարության առանձին մոմենտները, այնպես էլ քաղաքացիական կռիւների շրջանն արտացոլող երկերը: Կոնկրետաբանում է թեմատիկան: Բանաստեղծը պատկերներ է հյուսում անցյալից և ներկայից, հաճախ է դիմում վերհուշին, սակայն միշտ նայում է առաջ:

«Զանգո» բանաստեղծության մեջ Ալիշանի երգած տրամախոս Զրազդանին հակադրվում է ազատ ընթացող զենար, որը նոր մարդկանց ջանքերով փոխում է իր հունը, որ «հազարաթև գրկի երկիրը նոր՝ նոր եզերքներ զարդարելով»: «Բաքվում՝ մերոնց մոտ» ֆրագմենտում Զարյանը մերժում է անցյալի դյուղը՝ «կարիքի անանուն լեռներով», զրկանքներով, տխուր ու հոգնած առօրյայով: Նրան ոգևորում են հարազատ ռեսպուբլիկայի վերելքն ու «զրնգուն դալիքը», արդյունաբերական տեխնիկայի զարգացումը, նոր կենցաղի երևույթները, հնգամյակի կառուցումները: Սոցիալիզմի ծավալուն հարձակման շրջանը՝ բոլոր ճակատներում, նոր կյանքի շինարարությունը բանաստեժական արձագանք է դնում Զարյանի սոցիալիզմում («Բաքո», «Քսանվեց էնտուզիաստներ», «Զանգուն», «Ավտորուս», «Աղաղակ», «Ծնվում է նոր կյանքը», դասակարգային կռիւն, հնձին, բերքահավաքին նվիրված քառյակները): Նա երգում է արդյունաբերական նոր պեյզաժը, աշխատանքի հերոսներին («Քսանվեց էնտուզիաստներ»), սոցիալիստական շինարարությունը:

Բանաստեղծը չի մոռանում նաև ժողովրդի երջանկության ճանապարհին ընկածներին, ռուլյուցիոն կռիւի նահատակներին:

Հայաստանում քաղաքացիական պատերազմի իրադարձությունների և այդ ժամանակաշրջանի յուրահասուով իրադրության մեջ գործող հերոսների պատկերմանն են նվիրված «Նույեմբերյան օրերին», «Տաթևի ժայռից», «Ապստամբություն», «Տրիբուն», մասամբ նաև «Հրանուշ» պոեմները, մի քանի բանաստեղծություններ («Դուք կգաք նորից» և այլն)։ Քաղաքացիական կռիվների մասին այդ տարիներին գրում են գրեթե մեր բոլոր գրողները և այդ թեմայով էլ փաստորեն սկզբնավորվում են սովետահայ արձակն ու պոեմը։

Զարյանի պոեմներն աչքի են ընկնում էմոցիոնալ վարակիչ ուժով, դրամատիզմով և պատմականությունից զուգացումով։ Ապագայի համար սերունդների մղած պայքարը չի մոռացվել, այս միտքը ցայտուն արտահայտվել է 1920 թ. գաղափարաբար սպանված Մայիսյան ապստամբության հերոսների՝ Մուսախելյանի, Ղարիբջանյանի և Ալավերդյանի հիշատակին նվիրված «Դուք կգաք նորից» գործում։

Դեռ ոչ մի մայիս մեր հեզ աշխարհում

Զէր բացվել աղբան վարդավառ,

Երկի՛ր, չէր բերել դեռ ոչ մի գարուն

Այդբան վառ վարդեր քեզ համար,—

գրում է բանաստեղծը, նկարագրելով հերոսների եղերական մահվան առավոտը և ավելացնում, որ իդուր չի կորչի նրանց թափած արյունը, «ամեն մայիսի» նրանք կլինեն մեղ մոտ, մեր պայքարում։

«Տաթևի ժայռից» գործի հերոսները պարտիզան բոլշևիկներ են, որոնք, չնայած դաշնակցական ավանտյուրիստ խմբապետների գազանություններին, արիաբար պայքարում են Սովետական իշխանության համար։

«Ապստամբություն» պոեմում նկարագրվում է Մայիսյան ապստամբությունը Ալեքսյուի (Լենինական) ղեկավարում։ Գյուղացիների օգնությամբ ապստամբները խորտակում են դաշնակցական ռեժիմը և պարզում ազատության դրոշմ։ Այդ պոեմների հիմնական թերությունն այն է, որ բանաստեղծը քիչ է ուշադրություն դարձնում հերոսների անհատական ապրումներին, չի տալիս նրանց հոգեբանության աստիճանական աճի պատկերը, կերպարները չեն զարգանում դեպքերի հետ զուգընթաց։

**Ն. Զարյանի ստեղծագործություններ
1930—1941
Թվականներին**

Զարյանի ստեղծագործության մեջ այս շրջանում զգալի տեղ են գրավում կյանքի և գրականության փոխհարաբերության, սոցիալիստական արվեստի հասարակական դերի և մասնավորապես պոեզիայի բնույթի ու կլասիկների ժառանգության գնահատման հարցերը: Սոցիալիզմի համար մեղվող պայքարում ի՞նչ առաջադրանք ունի դեղարվեստական գրականությունը, — այս հարցի պատասխանը Զարյանը տալիս է «Ֆիրդուսի», «Պարսք», «Բալլիթ, իմ երգ», անցյալի դրողներին ձոնված բանաստեղծություններում, ինչպես նաև մի շարք երգիծական ոտանավորներում ու «Պոեմ մեթոդի մասին» սատիրական երկում:

«Ֆիրդուսի» բանաստեղծության մեջ այն տեսակետն է արժարժվում, որ մեր ժամանակը պահանջում է խոսքի բարձր վարպետություն, դարաշրջանին արժանավայել արվեստ, որը լինի պայքարի առաջին գծում, օգնի սոցիալիզմի կառուցման հերոսներին՝ նրանց ամենօրյա պայքարում:

Այսպիսի մեծ երգ է ուզում
Կերտող հերոսը մեր դարի
Երգ, որ նրա հետ միասին
Քանդի, շինի ու պայքարի,
Երգ, որ լինի հորդ ու վարար,
Պատմությունով ու կյանքով լի,
Երգ, որ լինի կյանքի համար
Ն'վ զարգ, և՛ ղևնք, և՛ հայելի:

Անհրաժեշտ է ժողովրդական մասսաների ձգտումներն արտահայտող, նրա խնդրությանն ու պայքարին մասնակցող արվեստ: Դրա համար բանաստեղծը պետք է ոչ թե ետ նայի, շարժվի հին կածաններով, այլ լինի կյանքի հորձանքում, կրակի առաջավոր դծի վրա, արտահայտի ժամանակի շունչն ու ոգին:

Իր ստեղծագործություն այս բնույթով Զարյանը մոտենում է Վլ. Մայակովսկուն, որը հիմնովին ջախջախելով «քաղաքականությունից անկախ» արվեստի ռեակցիոն տեսությունը, գծեց սովետական պոեզիայի ճանապարհը՝ դադափարայնության, նորարարության և ժողովրդայնության նշանաբանով: «Անհրաժեշտ է լինել դասակարգի առաջամարտիկը, անհրաժեշտ է դասակարգի հետ պայքար մղել բոլոր

ճակատներում, Անհրաժեշտ է ջախջախել արվեստի ապուխտիկության մասին հեփիաթը» — գրում է Մայակովսկին իր մի հոդվածում: Զարյանը Մայակովսկու հետևողությամբ իր պոեզիայի նյութը դարձնում է ոչ թե անհատի նեղ անձնական ապրումները, այլ սովետական մեծ դարաշրջանի սոցիալական հարցերը: Առաջագրելով պոեզիայի հասարակական վերափոխիչ դերի ճշմարիտ պահանջը, Զարյանը միաժամանակ բանավեճ է մղում արվեստը իրենց «հոգու դայակը» համարող էսթետների, «վշտահար լիրիկներին» դեմ, որոնց երգերում «միակզկզացմունքը՝ անբավ ձանձրույթն է շոգի պես չոքած»: Նա ծաղրում է պոեզիայի պաշարի կրակոտ լեզուն չմբռնող ընթերցողներին («Լիրիկական ընթերցողը»), կյանքից կտրված գրողներին («Պոեմ մեթոդի մասին»), գրական էպիգոններին, հին ավերակների ու «բուրջան աթարի» սիրահարներին: Վաչագան Հատորունին՝ «Պոեմ մեթոդի մասին» սատիրիկոնի հերոսը, գրական գործամուլ է, որն ուզած ժամանակ, առանց ներշնչման ու կյանքի ճանաչության կարող է գրել ցանկացած ստեղծագործություն՝ վեպ, թատերական ռեցենզիա, դրամա, ակնարկ և այլն՝ պատահական թեմայով, աղավաղելով կյանքը, հերոսներին վերագրելով անիրական հատկություններ: Ծաղրելով Հատորունու նման գրական գործամուլներին, Զարյանը առաջ է քաշում մեր ժամանակի հերոսին արժանի, նպատակասլաց, մեծ առօրյայի հետ կապված պոեզիայի լարդացման պահանջը: Գեղարվեստական պատկերի նյութն ու բովանդակությունը պետք է դառնա մեր օրերի կառուցող մարդն ու նրա աշխատանքը, նրա պաշարը սոցիալիզմի համար: Սա է Զարյանի էսթետիկական ելակետը, որը նաև սևիական ստեղծագործության ծրագիր էր:

«Ռուշանի քարափը»

«Ռուշանի քարափը» պոեմը իր հարուստ բովանդակությամբ և գեղարվեստական բարձր արժանիքներով սովետահայ պոեզիայի լավագույն երկերից է:

«Ռուշանի քարափը» նոր շրջան է Զարյանի ստեղծագործական կյանքում և բնորոշ երևույթ է սովետահայ պոեզիայի համար: Առաջին անգամ մեր գրականության մեջ էպիկական խոշոր կտավի վրա պատկերվեց վերակառուցվող հայ գյուղը:

Պոեմում Զարյանը նկարագրում է կոլտնտեսային շարժման առջև ծառացած դժվարությունները, կոլակոլթյան կատաղի դիմադրությունը, նոր մարդկանց աճման պրոցեսները, պարտիայի քաղաքականու-

թյան հաղթանակը՝ գյուղացիության լայն զանգվածներին կոլեկտիվ տնտեսության մեջ համախմբելու գործում:

Պոեմի նյութը կոլտնտեսության կազմակերպման, նրա ծնունդի պատմությունն է հայ գյուղերից մեկում՝ Քարաշամբում:

Պոեմի գլխավոր հերոսը՝ Ալեքսանը բանակից գյուղ է վերադառնում սոցիալիստական շինարարությանը մասնակցելու վառ ձգտումներով: Այդ նույն ժամանակ Քարաշամբում Գարսեանը դնում է ապագա կոլեկտիվ տնտեսության հիմքերը: Կոլտնտեսության ստեղծման շուրջն էլ հյուսվում են բոլոր գործողություններն ու անցքերը պոեմում: Գարսեանը, Ալեքսանը և գյուղի մյուս առաջավոր մարդիկ պայքարում են գյուղացիության մասնավոր սեփականատիրական ձգտումների դեմ, սակայն նրանց պայքարը բախվում է դասակարգային թշնամու՝ կոլակոլթյան (Սանթրոսն իր արբանյակներով) դիմադրությանը: Այդ պայքարը բարդանում է նրանով, որ պարտիական կազմակերպությունը սխալներ է թույլ տալիս միջակի և գյուղատնտեսական արտելի հարցերում: Պարտիայի ցուցումներով զինված, գյուղի առաջավոր մարդիկ շտկում են թույլ տված սխալները: Քարաշամբում հաղթականորեն ավարտվում է բոլշևիկյան առաջին դարնանացանը: Գյուղը փոխում է իր դարավոր ընթացքը:

Արմատախիլ շուռ եկավ մի դարավոր անտառ,
Հազար տարվա կյանքը իր ճանապարհը շեղեց:

Պոեմի երկրորդ սյուժետային դիժը Ալեքսանի և Արուսի սիրո պատմությունն է, որը զարգանում է առաջինին ղուզահեռ:

Զարյանի պոեմում շոշափված հարցերից ամենահիմնականն այն է, թե ինչպես է «Մեծ բեկում»-ը անդրադառնում գյուղացիության տարբեր շերտերի հոգեբանության վրա: Սա ամենակարևոր հարցն էր կոլտնտեսային շինարարության մեջ: Հայտնի է, թե պարտիան ինչպիսի վիթխարի աշխատանք է կատարել գյուղացիության մասնավոր սեփականատիրական հոգեբանությունը վերափոխելու ուղղությամբ: Վ. Ի. Լենինը նշել է, որ միջակ գյուղացու մեջ մշտապես կռվել են երկու սկզբունք — «սեփականատիրոջ հոգին» և «աշխատավորի հոգին»: Լենինն ասել է նաև, որ միջակ գյուղացիությունն «ալիսի դասակարգ է, որը տառապնվում է»: Ահա գյուղացիության այդ պահպանողական տենդենցների հաղթահարման, մասնավոր սեփականությունից բաժանվելու պրոցեսն է՝ ռեալիստական արվեստով, տիպական

քնափորություններով և հոգեբանական ճշմարիտ վիճակներով արտացոլված «Ռուշանի քարափ»-ում: Պոեմի հերոսները՝ Լաչինը, Մուրսն, Հովասը դժվարությամբ, մեծ տառապանքով են բաժանվում իրենց սեփականատիրական անցյալից, դժվարությամբ են մտնում կոլանտեսություն՝ վախենալով այնտեղ կորցնել իրենց տնտեսական ինքնուրույնությունը: Երկու սկզբունքների պայքարը այնքան խորն է գյուղացիների մեջ, որ յուրաքանչյուր առիթով նրանք պատրաստ են խղնել կոլանտեսությունը և վերադառնալ իրենց պապենական շտաբ ու արորին: Լաչինը և մյուս միջակ գյուղացիները տատանվում են երկու սկզբունքների միջև, և միայն սերտ շփվելով նոր կյանքի հետ, մեծ ապրումներից հետո, ընտրում են իսկական երջանկության ճանապարհը՝ կոլանտեսային կյանքի ճանապարհը:

Գյուղացիության պահպանողականության հաղթահարումը կատարվում է ոչ թե տարերային ձևով, այլ կոմունիստական պարտիայի պատիարակչական վիթխարի աշխատանքի շնորհիվ: «Ռուշանի քարափ»-ում ցույց է տրված նաև պարտիական կազմակերպության կատարած աշխատանքը: Գյուղացին փորձով համոզվում է սոցիալիզմի ճշմարտությանը, գալիս է այն դիտակցության, որ «մի աչառ, թեկուզ մի եզ, արտը մենակ չի վարի»: «Ռուշանի քարափ»-ում կերտվում է նոր գյուղացին, որի մեջ, կոլեկտիվ աշխատանքի պայմաններում, մշակվում են հոգեբանության նոր գծեր:

Մյուս կարևոր մոմենտը, որ արտացոլված է «Ռուշանի քարափ»-ում, դասակարգային սրված պայքարն է: Կոլանտեսության կազմակերպմանը համառ դիմադրություն է ցույց տալիս կոլակոլությունը, որը զգում է իր անխոտափելի կործանումը և ցանկանում է բոլոր միջոցներով վիժեցնել կոլեկտիվացումը: Զարչանը վերարտադրում է դասակարգային պայքարի պրոցեսները կոնկրետ արտահայտությունները: Մի կողմում սոցիալիզմի դործին նվիրված հերոսներն են՝ Գարսևանը, Ալեքսանը, Կարոն, մյուս ծայրում՝ հին աշխարհի ներկայացուցիչները: Երկու կողմերի պայքարի շիկացած մթնոլորտում «հավաքում են միաժամանակ, իրենց ուժերը թշնամի՝ երկու աշխարհ, երկու բանակ»:

Դասակարգային սուր բաժանումը արվեստի միջոցներով պատկերելու համար Զարչանը պոեմի կառուցվածքի մեջ զանազան էպիզոդները դասավորել է այնպես, որ դրանցից առաջին խումբն արտահայտում է նոր, սովետական իրականությունը, իսկ երկրորդը՝ հին աշխարհի

մութ ուժերը: Պոեմի կառուցման այս սկզբունքը հնարավորություն է տվել վերարտադրել պայքարի արոցեսաների անմիջական մասնակիցներին՝ իրենց կապերով, հարաբերություններով ու հակասական տրամադրություններով:

Զաթնանց հարուստ գերդաստանը «անհուշ օրերից» ծծել է գյուղական կյանքի բոլոր հյուսիսները և այժմ էլ ամեն կերպ դիմադրում է նոր կյանքին: Անխուսափելի խորտակման դատապարտված կուլակովյան համար հենարան են հանդիսանում միջակ գյուղացիության տատանումները, նրա հոգեբանական թուլությունը և կուլակները փորձում են, օգտագործելով այս փաստը, մահվան հոգեվարքի մեջ անգամ, սլահպանել իրենց գոյությունը: Ընդհանուր գոմ կառուցելու խնդիրը դառնում է փորձաքար, որի շուրջը սրվում է երկու բանակների բախումը, կողմերը բացահայտվում են իրենց սոցիալական ներքին էությունը:

Նախորդ գործերի համեմատությամբ Զարյանը «Ռուշանի քարափ»-ում ավելի խոր ու բաղմակողմանի է արտահայտում կյանքի պրոցեսները, առաջնորդվելով սոցիալիստական ռեալիզմի մեթոդով:

Տալով կուլտնտեսային շարժման առաջին տարիների գեղարվեստական պատմությունը, Զարյանը ցույց է տվել ժողովրդի կենցաղի, դրացմունքների, գիտակցության փոփոխությունը, ճշմարտացի է արտացոլել վերակառուցվող գյուղի զարգացման հիմնական տենդենցները:

«Ռուշանի քարափ»-ը արժեքավոր երևույթ էր պոեզիայի մեջ նաև նրանով, որ այնտեղ պատմականորեն ճշմարտացի գծվում էր բուլքեիկի կերպարը: Պոեմի հերոսները՝ Գարսեանը, Ալեքսանը պայքար են մղում իրական երջանկության համար, իրենց մեջ խտացնում են նոր մարդու լավագույն հատկանիշները՝ սկզբունքայնություն, ուղղամտություն, ազնվություն, հավատ՝ սկսած մեծ դործի նկատմամբ:

Այդ կերպարների մեջ ամենից հաջողվածը Ալեքսանի կերպարն է, որի կուլեկտիվիստական հոգեբանության բախումը իր ծնողների մանր սեփականատիրական հոգեբանության հետ՝ տրված է դրամատիկ մեծ ուժով:

Ի՞նչ թերություններ ունի պոեմը: Հեղինակը բավարար չափով չի արտացոլել քաղաքի դերը գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում: Պոեմում կանայք մեծ մասամբ հանդես են գալիս կենցաղային հարաբերություններում, թույլ են կապված գյուղում տեղի ունեցող քաղաքական անցուղարձեքին: Քիչ են աշխատանքային պրոցեսները

լիարշուն նկարագրությունները, որոշ հերոսների (Արուս և այլն) հոգեբանական անցումները համոզիչ չեն:

«Մուշանի քարավոր» բարդ կառուցվածք ունի: Պոեմի 16 գլուխներինց յուրաքանչյուրը նվիրված է մի դեպքի և հոգեբանական վիճակի նկարագրության, որոնք բոլորը լրացնում են միմյանց և հյուսվում մի հիմնական խնդրի՝ կոլտնտեսության ստեղծման ու ամրապնդման համար գյուղի առաջավոր մարդկանց պայքարի շուրջը: Պոեմում լինֆլիկտը ստացել է հասարակական կոնկրետ արտահայտություն: Ալեքսանի պայքարը վարդանում է մի քանի դժուր, նախ՝ դասակարգային թշնամու դեմ, երկրորդ՝ իր ծնողների մասնավոր սեփականատիրական հոգեբանության դեմ և վերջապես՝ Արուսի ծնողների պահպանողական, նահապետական սովորությունների դեմ: Ալեքսանի համար ստեղծվում է դրամատիկական բարդ վիճակ, որն ուժեղանում է Սողոյի և Բեյբուլի սիրային ինտրիգներով: Այստեղ է, որ սիրային սյուժեն շարժառիթ է դառնում սոցիալական երկու հակադիր ուժերի բախման համար: Պոեմի կառուցվածքի մեջ Զարյանը օգտագործել է լիրիկական զեղումները, պատմական զրույցն ու կենցաղի պատկերները: Պոեմի նկարագրական ուժեղ հատվածներից կարելի է հիշել Ալեքսանի վերադարձի տեսարանը, «Կծիկները խճճվում են» գլուխն ամբողջությամբ և այլն:

Նրեանական թթ. հայ գյուղի կյանքը, կենցաղը, նոր երևույթները, հնի և նորի պայքարը Զարյանի պոեմում ներկայացվում է ռեալիստական պատկերներով: Բերենք մասնավոր սեփականությունից բաժանվելու հոգեբանությունը ցուցադրող գեղեցիկ պատկերներից մի օրինակ.

Նա պարզապես սիրտ չէր անում
Սերմը դտել ու միացնել,
Կարծես թե նա մի անանուն
Մաղն կամուրջ պիտի անցներ:

Կամ հին և նոր կենցաղի հակադրության համար որքան ինքնատիպ է այն մոմենտի պատկերումը, երբ սերմադատիչը մուտք է գործում գյուղացու տուն.

Մի կարասի ուշքը դնաց,
Հողն թմրից վար գլորվեց,
Կարասի մոտ կանգնած թզուկ
Այն պրիմուսն էլ ուրախ խնդաց:

Ընդհանուր առմամբ «Ռուշանի քարափը» գեղարվեստական վարպետության նոր աստիճան էր Ն. Զարյանի ստեղծագործության մեջ։ Զարյանը գտել է երկի գաղափարական հարուստ բովանդակությանը ներդաշնակ ռեալիստական, ժողովրդային պոեմի ձևը, օգտագործելով հայ կլասիկ պոեզիայի, մասնավորապես Հովհ. Թումանյանի պոեմի տրադիցիան։

1935 թ. լույս տեսավ «Սաքո Միկինյան» պոեմը։ Այստեղ կոնֆլիկտը տրված է մի անձնավորության մեջ՝ հասարակական ու անձնական սկզբունքների բախման միջոցով։ Սաքոն, որ ամբողջ կյանքում հոտաղ է եղել և սեփական կով է երազել, կոլտնտեսության շնորհիվ հասել է բարեկեցիկ վիճակի։ Պոեմում նա դրված է հոգեբանական ծանր, դրամատիկ դրության մեջ։ Սաքոն պահակ է կապնած կոլտնտեսության հսկա դեզի մոտ, որի շուրջը պտտվում են կուլակները՝ դեզը հրդեհելու համար։ Հանկարծ մթության մեջ Սաքոն նկատում է, որ «հանդ հասակով ծովս է բարձրանում իր նորակառույց տնից»։ Փորձում է հեռանալ, փրկել սեփական տունը.

Բայց կանգ է առնում քսան քալ շարած,

Լսելով ներքին երկաթե մի ձայն։

— Սպասի՛ր... Լսի՛ր... լքում ես, Սաքո,

Դավաճանում ես քո բրիգադին։

Սաքոն տատանվում է երկու սկզբունքների պայքարում՝ թողնի՞ հեռանա՝ փրկելու իր սեփականը, թե՞ մնա տեղում՝ պաշտպանելու հսկա դեզը, «ընկերների և իր ապագան»։ Ի վերջո, ներքին ահալոր տառապանքից հետո, նրա մեջ հաղթում է այն գիտակցությունը, որ պաշտպանելով կոլտնտեսության սեփականությունը, պաշտպանում է իրենը։ Նրա հոգու մեջ բուն դրած մասնավոր սեփականատիրական սկզբունքը «նետվեց կրակ ու այրվեց նրա տան բոցերով»։

Սաքոյի հոգեբանության մեջ, ինչպես մի կաթիլ ջրում, անդրադարձել է դասակարգային պայքարի բարդությունը։ Զարյանը ճշմարտացի է գծել հերոսի հոգեբանության զարգացումը, որն իր լարված աստիճանին է հասնում հրդեհի պատկերում։ Պոեմի համար բընաբան ընտրելով Հովհ. Թումանյանի «Բռնեցե՛ք, փախավ Սաքոն խելագար» տողերը, Զարյանը նոր միջավայրը հակադրում է Հովհ. Թումանյանի նկարագրած միջավայրին։ «Սաքո Միկինյան» պոեմը ժողովրդային շնչով գրված երկ է և ունի ճանաչողական նշանակալից արժեք։

**Վ. Ի. ԼԵՆԻՆԻ և
Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ
ԿԵՐԱՐԱՐՆԵՐԸ ԶԱՐ-
ԵԱՆԻ ԱՏԵՂԾԱԳՈՐ-
ԾՈՒՅԱՆ ԱՆՋ**

Երեսնական թվականների Զարյանի բանաստեղծություններում ու պոեմներում խորապես դիտակցվում է Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեվոլյուցիայի առաջնորդներ Լենինի ու Ստալինի դերի պատմական նշանակությունը մարդկության բախտի համար: «Լինին» բանաստեղծության մեջ Զարյանը բացահայտում է լինինյան դադափարների անմահությունը կոմունիզմի համար՝ սովետական մարդկանց մղած պայքարում և ամբողջ աշխարհի աշխատավոր մարդկության ազատագրական կռիվում:

Դու կառ Կրեմլից մինչև Մադրիդ,
Ու Բեռլինից մինչև Տոկիո:
Քո անունով են գրոհում
Կոմունիզմի գնդերն անթիվ,
Գլխադարձի ճակատներում
Զավոդներում Լենինգրադի:

Վերածնված ազատ Հայաստանի օրինակով բանաստեղծը տեսնում է Կոմունիստական պարտիայի դադափարների ռեալ իրագործումը: Ռեսպուբլիկայի տնտեսական և կոլտուրական շինարարության մեջ կատարված մեծ փոփոխությունների սուր զգացողությունը բանաստեղծին մղումներ է տալիս շքեղ ձևերով երգելու հայ Ժողովրդի խանդավառ մասնակցությունը սոցիալիզմի շինարարությանը:

«Վերածնունդ» բանաստեղծության մեջ Զարյանը վառ պատկերներով ներբռնում է Հայաստանը, որ օտար ու ներքին թշնամիներից առպատակված անցյալ դարերի փորձությունների միջով, պահեց իր հոգու ամրությունը, զկամացավ բոլոր հողմերին՝ նման այն ծաղկին, որի ալլարանական-մետաֆորիկ պատկերով Զարյանը բացել է հայ Ժողովրդի բազմադարյան պատմության կեղևը ու նայել նրա խորքը:

Մի թուփ տեսա ճամփամիջին, սպրեմ-չալրեմ սպիտակ,
Նա կոխոտվել էր, կուացել — անցորդների ոտքի տակ,
Կաթում էր հյութն, ինչպես արյուն ցողուններից նրա ցած,
Երբ տերևներն էին բոլոր փոշաթաթախ, ձվատված:
Բայց նա պահել էր լուսեղեն իր ծաղիկներն անաղաղտ,
Եվ արևով էր բողբոջված նրա հայացքը հպարտ,
Ես ցանկացա պոկել ծաղիկը արմատից ու նետել,

Ամենօրյա դանդաղ մահից նրան ընդմիջտ ազատել:
Բայց նա ցողունը լոկ դիջեց՝ պայքարելով մինչև վերջ,
Ու խորամուկս արմատներով մնաց կրկին հողի մեջ:
Մնաց... նորից նա կարճակի և նոր ծիւեր, և ցողուն,
Եվ կտակա նախորդների ու հողմերի անցնելուն,
Ետ նայեցի ես մի վայրկյան մոտիկ-հեռու դարերին,
Եվ հիշեցի, իմ ժողովուրդ, հերոսական քո ուղին:

Հավերժորեն կենդանի և վարմանալի կենսունակ «ապրեմ-չապրեմ» ծաղկի այս պատմությունը յուրատեսակ նախերգանքի դեր է կատարում «Վերածնունդ» բանաստեղծության մեջ, որի հաջորդ տողերը համարձակ պատկերներով ու խորունկ մետաֆորներով վերարտադրում են ժողովրդի պատմության հերոսական էջերը, նրա պայքարն ազատության և անկախության համար, մինչև պատմական այն սահմանագիծը, որով նոր առավոտ բացվեց «հայոց լեռներում»:

Ժողովրդի վերածնության թեման հիմնական մոտիվներից մեկն է իսկ «Ստալին» բանաստեղծության մեջ: Այդ բանաստեղծությունը, որն առաջին անգամ հնչեց 1935 թվականին Կրեմլի դահլիճում, Զարյանի սրետական տաղանդի ամենաուժեղ փայլատակումներից մեկն էր և լայնորեն մասսայականացավ ժողովրդական հոծ զանգվածների մեջ: Էպիկական լայն շնչով և լիրիկական ջերմությամբ Ն. Զարյանը նկարագրում է ժողովրդի ճնշված դրությունը ռեուլյուցիայից առաջ, խոսում է ճշմարտության ու սոցիալական արդարության հասնելու համար ժողովրդի մղած պայքարի ու մաքառման մասին, անդունդի եզրին կանգնած, Վ. Տերյանի արտահայտությամբ «յոթնապատիկ խոցված» Հայաստանի մասին, որին կործանումից փրկեցին ռեուլյուցիայի կենարար դադափարները:

Ի. Վ. Ստալինի կերպարին Զարյանը կրկին անդադառնում է ավելի լայն պլանով Կրեմլում «Դուցադնագիրք» պոեմում:

«Դուցադնագիրք» Զարյանի մինչև այդ գրած ամենախոշոր երկն է: Պոեմի նյութը Յարիցինի հերոսական պաշտպանությունն է ու պատմական նշանավոր դեպքերի ֆոնի վրա Ի. Վ. Ստալինի կյանքի ռեուլյուցիոն դրվագների պատկերումը:

Պոեմը բաղկացած է նախերգից, 12 դրվագներից և վերջերգից:

Յարիցինյան դուցադնամարտերի հերոսական դրվագները շարադրելուց հետո Զարյանը պոեմն ավարտում է գեղեցիկ վերջերգով,

Նկարագրում է Լենինի մահն ու Ի. Վ. Ստալինի երդումը, հասնելով գեղարվեստական խոշոր ընդհանրացման:

**Հայրենական
պատերազմի շրջանի
ստեղծագործու-
թյունը**

Նաիրի Զարյանի ստեղծագործության երրորդ շրջանը, ըստ ժամանակի, զուգադիպում է Հայրենական Մեծ պատերազմի տարիներին: Այդ ժամանակաշրջանում ավելի շեշտակի ու նպատակասլաց հնչեց Ն. Զարյանի ձայնը:

Սովետական հայրենասիրությունն առաջատար թեմա դարձավ Զարյանի պատերազմական շրջանի ստեղծագործության մեջ. այդ ռազմաշունչ օրերին նա գրեց իր հայրենասիրական լիրիկայի լավագույն էջերը:

Այս շրջանում Զարյանը գրեց լիրիկական և խոհական բանաստեղծություններ, մարտակոչեր, ուղերձ, պոեմներ, արդիական ու պատմական թեմաներով դրամատիկական երկեր, քաղաքական սատիրա («Ամենազաղան»), երդիծական ոտանավորներ, հրապարակախոսական հոդվածներ և զեղարվեստական ակնարկներ («Ցասման զավակը», «Արծվաբույն», «Մերոնը» և այլն): Գրեթե բոլոր ժանրերում էլ նա ստեղծեց բարձրարվեստ գործեր:

1941 թվականի հունիսի 22-ին, պատերազմի հենց առաջին օրը Նաիրի Զարյանը գրեց սբանչելի տողեր Հայրենիքի սիրո վսեմ զգացմունքի մասին.

Դու քաղցր ես, հող հայրենի,
Ձկա քեզնից պայծառ անուն,
Բայց վտանգի ահեղ ժամին,
Երբ սպառնում է թշնամին,
Դու ավելի ես քաղցրանում:

Հինգ տողանոց այս բանաստեղծության մեջ արտահայտված հայրենասիրական գաղափարն այնուհետև տիրապետող դարձավ պատերազմի շրջանի նրա ամբողջ ստեղծագործության մեջ: Դրանով նա սկսում էր Հայրենական Մեծ պատերազմի ռազմաշունչ օրերի պոետական ժամանակագրությունը, ձգելով շղթան «Հայրենի հողից» մինչև ֆաշիստական Գերմանիայի դեմ սովետական ժողովրդի տարած պատմական հաղթանակի մասին գրված «1945 թվականի մայիսի 9-ը» բանաստեղծությունը:

1941 թ. հունիս և հուլիս ամիսներին մամուլում տպագրվեցին Զարյանի մի շարք բանաստեղծությունները, որոնց մեջ նա հաղթա-

նակի խորին հավատով և ատելության մեծ ուժով ժողովրդին պաշար-
րի էր կոչում ֆաշիստական զավթիչների դեմ: Այս տեսակետից բնո-
րոշ է «Մարտակոչ» բանաստեղծությունը:

Խաղաղ, ստեղծագործ աշխատանքով և իր հարազատ երկրի վե-
րաշինությամբ զբաղված սովետական ժողովրդի կյանքի վրա կախ-
ված ֆաշիստական ստրկության սպառնալիքը, արյունոտված սովե-
տական հողը, ծխացող գյուղերն ու ավերակների վերածված քաղաք-
ները խոր վիշտ են պատճառում բանաստեղծին, և նա ժողովրդական
ատելության ուժով մարտի է կոչում «Պատմության ճամփի մեծ ավա-
զակների դեմ».

Զարգել արնոտ մուրձը Հիտլերի,
Ցրել նրա ցնորքը խավարչին —
Նըրա երկաթաղզեստ բանակների
Անպարտության առասպելները սին:

Զարյանն իր բանաստեղծություններում մերկացնում է գերմանա-
կան ֆաշիզմի դադանային դեմքն ու ռեակցիոն էությունը («Գերմա-
նիա», «Նա պիտի կախվի»), որն իր «դիվային ռազմի մեքենան» շար-
ժում է ժողովուրդների դեմ, ոչնչացնում է ազատասեր ազգերի կուլ-
տուրայի նշանավոր հուշարձանները («Հիտլեր և Միցկևիչ»):

Պատերազմի առաջին օրերի համար բնորոշ լիրիկայի փայլուն
նմուշներից է «Ուղերձ իմ ժողովրդին» բանաստեղծությունը: Շիրկացած
ատելությունը թշնամու նկատմամբ, անսահման սերը դեպի Հայրենի-
քը, հաղթանակի անշեշ հավատը բանաստեղծին մղումներ են տալիս
ժողովրդի և իր անունից պատգամ տալու Հայաստանի զավակներին՝
ջախջախելու թշնամուն, իրենց ուժգին հարվածները միացնելու «վիշա-
պաքաղ Կարմիր Բանակի» ուժին և եղբայրական ժողովուրդների միա-
ձույլ կամքին:

Ֆաշիստական գազանի նկատմամբ ժողովրդական ցասման աչ-
րող զգացմունքներ են դրոշմված Զարյանի տողերում.

Իմ հայ ժողովուրդ, դու ազատության անմահ նահառակ,
Որտեղ էլ որ կաս այս հողմազալար երկրի երեսին,
Որ կիսաբնդում, որ ծովի ափին, որ երկնքի տակ,
Լսիր քո որդուն... զարկ այս հրեշին:

Բանաստեղծը ցուցադրում է հայ ժողովրդի ազգային բնավորու-
թյան լավագույն հատկությունները, հիշեցնում է նրա հերոսական

սլաքարի տրադիցիաները, նրա անցած ծանր ուղին, մինչև այն ժամանակ, երբ միացավ «Կոմունիստական Ժողովուրդների մեծ ընտանիքին».

Եվ լենինն ասաց.— ահա ժողովուրդ, որ քաջ պայքարեց,
եվ սուրը երբեք պատյան չդրեց բռնության հանդեպ,
Ու Ստալինն ասաց.— ահա ժողովուրդ, որ արյամբ դրեց
Հանճարեղ ու մեծ մի դուռնաբացի:

Պատերազմի տարիներին Զարյանի ստեղծագործության մեջ նոր ուժով դրսևորվեց Սովետական Միության ժողովուրդների եղբայրական բարեկամության թեման: Սովետական մարդու համար այս բնորոշ զգացմունքի համակող ուժով են պրկած Զարյանի «Քեզ հետ ենք, Մոսկվա», «Կիևը մերն է», «Մենք չենք տա Մոսկվան», «ՍՍՌՄ» և մի շարք ուրիշ ստեղծեր: Հայրենիքի հասկացողությունը այստեղ չի սահմանափակվում Հայաստանի բնական-աշխարհագրական սահմաններով, այլ ավելի լայն է ու խոր: «ՍՍՌՄ» բանաստեղծության մեջ Զարյանն ասում է.

Մենք միասին ենք, երբ այսօր լուսավոր տան վրա
հոմեկ է ժանտ մեր թշնամին՝ հորդաներով ամեհի,
Մեր Միությունն է զրնգում որդես փայլուն մի զրահ՝
խորտակելով բոլոր թրերն ու մանդաղները մահի:

Բանաստեղծը հարազատություն է զգում բոլոր ժողովուրդների հետ, նա խոսում է Ուկրաինական տափաստանների և մերձմոսկովյան սլուրակների, արևաշող Վրաստանի և հինավուրց Կրեմլի, «Հերոսների երկաթաձուլ օրորոց» Ստալինգրադի և Ուրալի շոգեգտթանի մասին, ամբողջ երկրի մասին՝ Բալթիկայի ափերից մինչև Խաղաղ օվկիանոսը:

Քեզ հետ ենք Մոսկվա, Երզով ու Կրծքով ու բաղնիքներով,
Կարմիր երզումով մեր զավակների քոցակեղ արյան:

Զարյանի պոեզիայում մեծ տեղ են դրավում այն բանաստեղծությունները, որոնք նվիրված են անանուն և հայտնի ռազմիկների սրբաբարոյություններին («Գաստելլո», «Գաղաղյան», «Նրա վերջին խոսքը», «Գառնիկ Խաչատրյանին»), ինչպես նաև ռազմաճակատային լիրիկան («Բլինդաժում», «Այց ռազմաճակատին» և այլն):

Զարյանի այս շրջանի լիրիկան սոցիալիստական ռեալիզմի գրականության արժեքավոր երևույթներից է:

Զարյանի ստեղծագործությունների շարքում աչքի ընկնող տեղ են գրավում նաև «Անմահության պարը» (1941 թ.) և «Ձայն հայրենական» (1943 թ.) պոեմները: Այս երկերի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ նկարագրելով պատերազմի իրականությունը, Զարյանը ճշմարտացի բացահայտում է սովետական հասարակական կարգի, սովետական մարդկանց անպարտելի ուժը, ժողովրդի և նրա զավակների նվիրվածությունը Հայրենիքին, պարտիային, սոցիալիզմի գործին:

Անձնվեր հերոսության մի ցայտուն դեպք է պատմված «Անմահության պարը» պոեմում:

Պոեմի հերոսը՝ առաջավոր կոմբայնավար Վաչե Վոբյանը «Թիկնեղ ու սևաշյա», պատանեկան ջինջ երազներով լեցուն շնորհալի մի երիտասարդ է, որ գյուղում աչքի է ընկնում հատկապես նրանով, որ լավ պարող է: Երբ ամբողջ երկիրը ելնում է հայրենական արդար պատերազմի, գյուղը իր որդիներին, նրանց թվում և Վաչեին՝ ճանապարհ է գցում դեպի պատերազմ: Վաչեն իր կապուտաշ խարուշաշ ընկերների հետ միասին սլաշտպանում է հորդաջուր Նևայից մինչև Սևան ձրգվող հայրենիքը: Թշնամու անհավասար ուժերի դեմ մղված մարտերից մեկում ընկնում են հրետանային մարտկոցի բոլոր մարտիկները: Միայնակ մնացած Վաչեն կռվում է ավտոմատով, վերջանում են զենքակները, նա շարունակում է կռվել ձեռքի նռնակներով: Թշնամու անձնատուր լինելու հրամանին ի պատասխան Վաչեն սկսում է մոլեգին պարել: Եվ այն պահին, երբ դահիճները սեղմում են օղակը, Վաչեն գրպանի վերջին նռնակը նետում է ֆաշիստական զորքի մեջ և ինքն էլ հերոսաբար նահատակվում:

Վաչե Վոբյանի կերպարն ամբողջացնող զգացմունքը սովետական հայրենասիրությունն է, որը և նրան անձնազոհության մղող ուժն է:

Պատերազմի տարիներին սովետական դրականության մեջ բազմազան ձևերով հնչեց հայրենասիրության թեման և հրամայաբար առաջ եկավ մեր Հայրենիքի բազմադարյան պատմությունն ավելի լավ ճանաչելու, նախնիների մղած հերոսական պայքարի օրինակներով ժամանակակիցներին արիություն և խիզախություն ներշնչելու պահանջ: Այս տենդենցը ցայտուն արտահայտվեց նաև Նաիրի Զար-

չանի ստեղծագործության մեջ, մասնավորապես «Ձայն հայրենական» լիրիկական պոեմում:

«Ձայն հայրենական» պոեմում Զարյանն է՛լ ավելի է խորացնում հայրենասիրության զազափարը, արդիականությունը շաղկապելով անցյալի հետ, պատկերների լեզվով թարգմանում է այն ճշմարիտ միտքը, որ «սովետական մարդկանց համար թանկ է մեր անցյալը» («Պրավդա»), որ սովետական ժողովուրդն է իր պատմության իսկական գնահատողը:

Զարյանը փայլուն ընդհանրացումներով և շքեղ պատկերավորությամբ բացում է հայ ժողովրդի պատմության հերոսական էջերը, ցուցադրում է նրա ազդային բնավորության լավագույն գծերը՝ կայունությունը, կենսասիրությունը, ազատ ու անկախ կյանքի դարավոր բաղձանքը, պայքարը օտար հալիչտակիչների լծի և սոցիալական ճնշման դեմ: Բաղմաշարժար հայ ժողովրդին նրա պատմական բախտի ճանապարհին շատ են վիճակվել ծանր փորձություններ, սակայն ամուր ու կենդանի է մնացել սլաքարի նրա կամքը, ամրապնդվել է Հայրենիքի սերը նրա զավակների սրտում: Ժողովուրդը դարերի ընթացքում կռել է խաղաղ աշխատանքի և սլաքարի իր ղենքերը՝ մանդաղն ու սուրը, որի մեջ է նրա անմահության զաղտնիքը:

Ն. Զարյանը ցույց է տալիս, որ հայ ժողովուրդը պետականություն ձևը բերեց Կոմունիստական պարտիայի շնորհիվ, ուստի մեծ ժողովրդի օգնությամբ: Հիալերյան արյունարբու հրոսակախմբերը կրկին ուղում են հայ ժողովրդին զցել կարիքի և թշվառության մեջ, զրկել նրան իր կուլտուրայից, պատվից և ազատությունից, իր ապագան կերտելու հնարավորությունից, Բանաստեղծը մարտակոչ է ուղղում հայ ժողովրդի զավակներին՝ արյան գնով պաշտպանել նվաճված ազատությունը:

Զարյանը հայ ժողովրդի զավակներին այն մեծ հավատ է ներշնչում, որ նրանք լենինգրադում, թե Կուրսկում, Օրյոլի մոտ, թե Կուբանում, բոլոր հեղեղների վրա պաշտպանում են հարազատ Հայաստանը: Դա հայրենասիրության նոր որակ է, որ ի տարբերություն անցյալի հայրենասիրությունից, չի պարփակվում ազգային կեղևի մեջ, այլ ընդհակառակը՝ միացնում է սովետական բոլոր ազգերի միասնական շահերը:

Սակայն «Ձայն հայրենական»-ը զերծ չէ իր ընդհանուր հայրենասիրական բովանդակությանն անհարիր գաղափարական որոշ սխալնե-

րից: Մեր պատմական անցյալը գնահատելիս Զարյանը տուրք է տալիս այդ անցյալի ժառանգության չափազանցված մեծարանքին, մեր կուլտուրայի զարգացման վաղ շրջանը բնորոշելով. որպես «բազմաբեղուն ոսկեդար»: Պոեմում կան նաև անճիշտ ձևակերպումներ ու սխալ համեմատություններ (Ավարայրի ճակատամարտը համեմատվում է հոկտեմբերի հետ), պատմական անունների որոշ ծանրաբեռնվածություն և այլն:

Մինչև Հայրենական պատերազմը Ն. Զարյանը դրամաներ չէր գրել: «Վրեժ» (1942 թ.) պիեսով նա հակաֆաշիստական դրամատուրգիայի սկիզբը դրեց մեզանում: Դրան հաջորդեցին «Ամենադաղան» սատիրան, «Այրվող դիմակ» դրաման, «Արա Գեղեցիկ» ողբերգությունը: Առաջին երեք գործերը արտացոլում են ֆաշիզմի դեմ մղվող պայքարը:

Եթե «Ամենադաղան»-ում Զարյանը սատիրայի սուր զենքով ծաղրում է մարդակեր Հիտլերին և նրա միջավայրը, ապա «Վրեժ»-ի և «Այրվող դիմակ»-ի նյութը գլխավորապես թշնամու թիկունքում գործող պարտիզանների պայքարի առանձին էպիզոդներն են:

«Վրեժ» և «Այրվող դիմակ» պիեսները աչքի են ընկնում դրամատիկ սուր վիճակներով, բովանդակալից դիալոգով, թշնամուն տրված սուր բնութագրումներով: «Վրեժ»-ի հերոսները՝ ծանր վիրավորված ուսուչեստենանտ Վասիլի Գերասիմովը, բժշկական քույր հրեուհի Լարիսա Կիֆշիցը և հայ սերժանտ Մուշեղ Արամյանը գերի են վերցվում ֆաշիստների մի մեծ խմբի կողմից և չնայած անլուր տանջանքներին, իրենց պահում են որպես իսկական սովետական հայրենասերներ:

Ազգային պատկանելիությամբ տարբեր, սակայն հոգով ու նպատակներով միաձուլյալ այդ հերոսները հանդես են բերում միայն սովետական մարդուն բնորոշ կայունություն, իրենց ապագայի կառուցման ու հումանիզմի երազանքները հակադրելով ֆաշիզմի կողոպուտի և բռնության խելացնոր քաղաքականությունը:

Յյս երկերից հետո Զարյանը գրեց «Արա Գեղեցիկ» (1943 թ.) գիցապատմական ողբերգությունը: Զարյանն իբրև ստեղծագործական էյուրթ օգտագործել է Մ. Խորենացու և մյուս պատմիչների միջոցով մեզ հասած Արա Գեղեցիկի առասպելը, կատարելով հավելումներ, գիցաբանության հերոսներին տեղափոխելով պատմական հողի վրա:

Զարյանի մշակման մեջ կան գաղափարական որոշ սխալներ, որոնք արտահայտվել են խոր անցյալի ուժմանտիկ իդեալականացման և

դասակարգային հասարակության սոցիալական պայ-
քարի անտեսման մեջ:

**Հետպատերազմյան
ժամանակաշրջան.
«Հացավան» վեպը**

Սովետահայ գեղարվեստական արձակի բուն
ծաղկումը տեղի ունեցավ 30-ական թվական-
ներին, երբ ստեղծվեցին առաջին վեպերը՝ ժա-
մանակակից թեմատիկայով:

«Հացավան»-ի առաջին հատորը լույս տեսավ 1937 թ.: Երկրորդ
հատորը Ն. Զարյանը գրեց մի տասնամյակ տեղը ընդմիջումից հետո,
վեպը ամբողջացվեց 1947 թվականին:

«Հացավան» վեպը կյանքի արտացոլման խորությամբ, գաղափա-
րական նպատակադրությամբ, բարձր արվեստով սովետահայ լա-
վադույն վեպերից մեկն է: «Հացավան»-ը լրացնում ու ամբողջացնում
է այն պատմաշրջանի գեղարվեստական նկարագրությունը, որ արված
է «Ռուշանի քարափ»-ում և Զարյանի նախորդ գործերում:

Ընդամենը մի քանի տարի է բաժանում իրարից «Հացավանի» և
«Ռուշանի քարափի» գլուղերը, բայց վիթխարի փոփոխություններ են
կատարվել այդ տարիներին: «Ռուշանի քարափի» գլուղում սոցիալիս-
տական հոգեբանությանը նոր էր արմատավորվում գյուղացիության
մեջ, իսկ «Հացավանը» պատկերում է գյուղացիության կոլեկտիվաց-
ման երկրորդ փուլը, արտացոլում է գլուղում սոցիալիզմի ամրապնդ-
ման ստադիան:

Նախի Զարյանը «Հացավան»-ում խոշոր հաջողությունների է
հասել սոցիալիստական ռեալիզմի մեթոդի կիրառումով: Որո՞նք են
այնտեղ գրքահեղին սոցիալիստական ռեալիզմի արտահայտություն-
ները:

Զարյանը կոլտնտեսային դուլը պատկերել է դարդացման մեջ,
տեսել է, թե ի՞նչն է խորտակվում, ի՞նչն է հաղթանակում, ի՞նչն է
սկսում գերակշռություն ձեռք բերել հասարակության կյանքում: Կյու-
ղում սոցիալիզմի կառուցումն այն առանցքն է, որի շուրջը կենտրո-
նանում են հերոսների փոխհարաբերություններն ու սոցիալական հա-
կադիր ուժերի բախումները: Պայքարի տարբեր ծայրերումն են մի
կողմից կոլտնտեսության նախագահ Լևոն Լամբարյանը, կոմերիտա-
կան կազմակերպիչ Վասակը, Համիկ Զուրաբյանը, Շմալոսնը, Ասա-
տուր Զուրաբյանը, Լիպարիտ Լևոնյանը, Լադո Միկինյանը, մյուս
ծայրում՝ դասակարգային թշնամին՝ Մացակ Ավագյանը, Եփրեմյա-
նը, Աբել Աբելյանը, Մանուկ Վարդյանը: Առաջինները հանդես

գալիս որպէս բարոյական նոր դժերի կրողներ, ունեն հարադատ պետութեան շահերի խոր դիտակցութեան և իրենց անձնական էրջանկութեամբ տեսնում են սոցիալիզմի հաղթանակի մեջ: Նրանց խորթ է հոգի մասնատիրական պայմաններում խեղաթյուրված անհատի գոնժ բնավորութեանը, հին դուռդաքու շահամոլութեանը: Գլուղացիները աչքու աչքով տեսնում են մենատնտեսներ չեն: Այդ բանը բմբռնել է նաև ընդհատակ անցած դասակարգային թշնամին: «Ավագյանը վերջերս միայն մի բան շատ որոշակի է հասկանում, որ կյանքը սաստիկ փոխվել է և շարունակում է փոխվել զլխապստույտ արագութեամբ՝ փլելով հողը նրա ոտքի տակ»:

Գլուղում դասակարգային պայքարը ընդունել է նոր ձևեր, փոխվել է ուժերի հարաբերութեանը: Սոցիալ-տնտեսական հարաբերութեաններում տեղի ունեցած արմատական փոփոխութեաններն այն աստիճան որոշակի են, որ մարդկային թուլութեանները ճանաչելու կարողութեամբ օժտված Մացակ Ավագյանի համար այլևս անմատչելի են գլուղացիների մտքերը. «Գլուղում բանեցին մարդիկ, որոնք չեն ենթարկվում Ավագյանի այդ կարողութեանը: Նա այլևս չէր կարողանում կռահել Վասակ Զորանյանի, Հասմիկ Զուրաբյանի, Ասատուր Զուրաբյանի և ուրիշ շատ երիտասարդ մարդկանց մտքերը: Նա այլևս չէր կռահում, թե ինչ են մտածում վերջերս կոլտնտեսականները: Ավագյանը և նրա դործակիցները զգում են, որ դերերը փոխվել են, որ հիմա «նրանք են կռահում Ավագյանի մտքերը»: Թշնամին ամենատանջան առիթը բաց չի թողնում վնասելու սոցիալիզմի գործին: Դժվար է գործել այդ պայմաններում: Հացավանի բոլշևիկները հեշտութեամբ չեն նվաճում հաղթանակը:

Հացավանի բոլշևիկների ամենավտանգավոր թշնամին Մացակ Ավագյանն է, որն իր շուրջն է համախմբում մասվան դատապարտված շահագործող դասակարգի՝ կուլակութեան թափթիկներին ու նրանց միջոցով գործողութեան մեջ դնում իր սլանները: Հաշվապահ Եփրեմ-խանը խճճում է կոլտնտեսականների աշխօրերի հաշվառման գործը, դժգոհութեամբ առաջացնում նրանց մեջ: Մաթոս Գրիգորյանի հանդամառում դարնանացանն ամբողջովին վարում են խարակով, հացահատիկը փոխանակում են օդու հետ: Անասնապահական ֆերմայում առկա են անասունների կորուստի փաստեր: Մանուկ Վարսյանը փախցնում է տրակտորները, Խոռոմ Խաչոն և Պողոս Բոյաջյանը գիշերային պահակութեան ժամանակ զողանում են կոլտնտեսութեան անասնա-

կերը: Դրութիւնը լավ չէ դաշտավարական բրիգադներում. Շքրիգա-
դավարները ստիպւած էին անցյալ տարւալ պէս տնե-տուն ընկնել,
մարդկանց քնից կամ սպասի վրայից վեր կացնելու համար»:

Հացավանի կոլտնտեսութեան քաղաքական և տնտեսական ամրա-
պնդման համար գյուղական բոլշեակներէի ծավալած պայքարի բարդու-
թիւնը արտահայտուիւմ է նաեւ աչն բանով, որ գյուղացիներէից շատերը
դեռեւ թերահամատ էին կոլտնտեսային կարգի նկատմամբ (Առաքել
ամի), մի մասը ենթարկուիւմ էր կոլակոլթեան ազդեցութեանը (Պողոս,
Խաչո), ռմանք տարբերուիւմ էին իրենց եզը կոլխոզի եզից. «Վեճի ա-
ռարկա եզը անցյալ դարնան Վանոն էր բերել կոլտնտեսութեան: Մինչեւ
այս օրը նա միշտ աշխատել էր իր սեփական եզան հետ և չէր ղդում,
որ եզը հիմա այլեւ իր մասնավոր սեփականութեանը չի: Նա շարունա-
կում էր իր եզը տարբերել բրիգադի մշուս եզներէից, առանձին խնամք
էր ցուց տալիս նրան, մտնում էր դոմը և մշուս եզներէի առջեից խո-
տը հավաքում էր իր եզան առջև: Նրա աչքը շարունակ իր եզան
վրա էր»:

Չնայած մեծ դժվարութիւններին, գյուղի առաջավոր մարդիկ կա-
ռուցում են նոր Հացավան, վերափոխում կլանքը և սոցիալիզմի հետ
կապում գյուղացիական մասսաներին: Խոռոմ Խաչոն, Պողոսը, Յոթ
Սովմերանը, Առաքել ամին ձեռք են բերում մարդկային նոր հատկա-
նիշներ՝ ազնւութեան, արդարութեան ու նոր սերնդի հետ պայքարում
են ապագա Հացավանի համար: Ամենատատանւող գյուղացին՝ Առաքել
ամին համոզուիւմ է կոլտնտեսութեան առավելութեան մեջ և դառնում է
նրա ամենաանձնվեր անդամներէից մեկը:

«Հացավան»-ում Զարյանը նկարագրելով կոլտնտեսային կարգի
հաղթանակը, ցուց է տալիս նաեւ աշխատանքի նկատմամբ կոմունիս-
տական վերաբերմունքի օրինակներ, սոցիալիստական մրցութեան
կոնկրետ արտահայտութիւնները, երկրագործական աշխատանքների
(դարնանացան, բերքհավաք, հունձ և այլն) գեղեցկութեանը:

Աշխատանքը Հացավանում դարձել է ստեղծագործական ուժերի
դարդացման արտահայտութեան ձև և ցուց է տալիս մարդկանց հո-
գեկան կառուցվածքի արմատական նորութիւնը: Աշխատանքի նկատ-
մամբ փոխվել են Պողոսի, Խաչոյի, Փիլոյի հայացքները:

«Հացավան»-ում գրված են նաեւ սովետական մարդու անձնական
երջանկութեան, ընտանիքի պրոբլեմները, որոնք ավելի են խորացնում
վեպում առաջ քաշված հասարակական երևույթների լուսաբանութեան-

նը: Լեւոնի ու Արուսի ընտանեկան կյանքի միջոցով վեպում արտացոլված է ընտանեկան մորալի հարցը: Այդ ընտանիքին սպառնում է քայքայում, որովհետեւ Արուսի մեջ ուժեղ են սահմանափակ հասկացողութունները կնոջ դերի մասին: Արուսը ետ է մնացել կյանքից, սահմանափակվել իր ընտանեկան անկյունի մեջ:

Սովետական ընտանիքի հարցը Զարյանը կամբարյանի ընտանիքի միջոցով չի լուծում: Այդ հարցը նա դնում և լուծում է Հասմիկի ու Վասակի կապակցությամբ: Ճիշտ է՝ Վասակի և Հասմիկի միացումը վեպում չի բոլորվում, մնում է թերի, բայց արդեն երևում է ապագա սովետական իսկական ընտանիքի պատկերը: Այդպիսի ընտանիքի կառուցման համար վճռական գործոններ են երջանկության մասին ունեցած նրանց իդեալները, բարոյական խոր համոզվածությունը, ամուսինների մտավոր ու հոգեկան զարգացման բարձր մակարդակը:

«Հացավան»-ի կենտրոնական պրոբլեմը — նոր, սովետական մարդու ծնունդը, նոր գիտակցության, նոր հոգեբանության, բարոյական նոր հասկացությունների պատկերումն է: «Հացավան»-ի դրական հերոսները՝ Լեոն կամբարյանը, Լիպարիտ Լեոնյանը, Վասակ Զորանյանը, Հասմիկ Զուրաբյանը, Ասատուր Զուրաբյանը և մյուսները, ժամանակի հիմնական կերպարներն են, բոլշևիկյան խառնվածքի տեր մարդիկ, որոնց նկարագրելիս Զարյանը բացահայտում է ամենակարևորը՝ հասարակական պարտքի զգացողությունն ու բարձր դադափարանությունը:

Վեպի գլխավոր հերոսները

«Հացավան» վեպի գլխավոր հերոսն է կոլտնտեսության նախագահ Լեոն կամբարյանը: Կամբարյանի անցած ճանապարհը կոլտնտեսային արտադրության կազմակերպչի զարգացման ուղին է:

Պատանեկության տարիներին Լեոնը մասնակցում է քաղաքացիական կռիվներին՝ Սպիտակի լեռնանցքում և սովետական կարգեր հաստատվելուց հետո դառնում է գյուղի կոմերիտական կազմակերպության քարտուղարը: Պարտիական դպրոցն ավարտելուց հետո նա գյուղ է վերադառնում և շատ կարճ ժամանակամիջոցում շրջանում հայտնի է դառնում որպես «պոչն ընկած կոլտնտեսությունները ոտքի հանող»: Այս է կամբարյանի անցյալը համառոտ գծերով, մինչև նրա Հացավան գալը: Լեոնի գործունեության ամենափայլուն էջը սկսվում է նոր Հացավանի կառուցումով: Հացավանի քայքայված արտելային, տնտեսությունը ոտքի կանգնեցնելու աշխատանքը նա սկսում է գյու-

զում ստեղծված դրության վերլուծությունից, դասավորում է մարդկանց ուժերը, որոշում է վլխավոր գծվարությունները: Հինց սկզբից Լեոնը նկատում է, որ Հացավանդում դրությունը լավ չէ: Գարնանացանի եռուն օրերն են, բայց այստեղ դանդաղում են: «Վաղվանից պետք է դուրս գալ», մտորում է նա ու դարձնական մարդուն հասուկ եռանդով դալիս է ստուգելու հողի խոնավության աստիճանը. «Մի բուռ հող վերցրեց, ձեռքում սեղմեց ու ցած պցեց: Հողի գունդը բնկնելով դեռին, փշրվեց... պարզ է, որ ուշացել են»: Առաջին գծվարությունները չեն հուսահատեցնում Լեոնին, դժուարական բազմության միջից նրա հասցեին եղած այն թերահավատությանը, որ արագավազ ու կատաղի ձին վայր կգցի, Լեոնը մտքում պատասխանում է. «Շատերն են ուղեցել ինձ վեր պցել, բայց չեն կարողացել»:

Լամբարջանը գործի մարդ է ու միշտ գործի մեջ, նա լավ է պատկերացնում գյուղում ստեղծված բարդ իրադրությունը, վերլուծում յուրաքանչյուր երևույթ. «Շնա չեմ կարող հասկանալ, թե կոմունիստները, կոլխոզի ղեկավարներն ինչ իրավունք ունեն չիմանալու, թե որ բրդագործ յուրեղ է աշխատել, բայց այդ բանը դիտեն մինչև անգամ մեհառատեսները»:

Դասակարգային սրված պայքարի խճճված հանգույցները աստիճանաբար սկսում են բացվել և Լամբարջանը որոնում է այն լծակը, որից բռնելով հնարավոր կլինի ասած շարժվել, կոտրատեսությունը տանել տնտեսական վերելքի ճանապարհով: Դա մարդկանց նկատմամբ տածած հավատն ու վստահությունն էր և Լեոնը իր դորձնական քնավորությամբ կարողանում է հավատ ներշնչել բոլորին: Նա միայն չի կարողանում ենթադրել, որ այդ հավատը առանձին ղեկավարում կարող է շարդարանալ, ինչպես պատահեց Մացակ Ավագյանի կապակցությամբ: Բայց այդ չէ բնորոշ Լեոնի բնավորությանը, այլ այն, որ նա բոլոր վճռական հարցերում հանդես է գալիս գործելու եռանդով, դժվարությունները հաղթահարելու ներքին պահանջով ու հաստատակամությամբ: Համարձակ, նպատակասլաց, կազմակերպված գործողության մեջ է Լամբարջանի ուժը:

«Հացավանցիները կարիք են զգում հեղինակավոր նախագահի», — մտածում են գյուղում: Այդպիսին է Լամբարջանը, որի քնավորության լավագույն հատկությունները՝ գործնականությունը, որոնող միտքը, մարդկանց համոզելու ուժը, նրան հնարավորություն են տալիս համարձակ անցկացնելու պարտիայի գիծը: Լամբարջանը ձիշտ է կողմնորոշ-

վում բաղմամբով հարցերում: Բայց նա վստահում է Մացակ Ավագյանին այն պատճառաբանությամբ, որ վերջինս կոլտնտեսականների շրջանում հեղինակություն ունի: Այս քայլով Լևոնը սայթաքում է. նա Ավագյանի հետ բարեկամական կապեր է սկսում այն ժամանակ, երբ վերջինս շատերի աչքում արդեն բացահայտ թշնամի էր:

Առարկեւ ամին զգուշացնում է նրան, սակայն Լևոնը չի զգուշանում, իսկ թշնամին օգտադուրժում է նրա թուլությունները: Ի վերջո պատուվում է Ավագյանի դիմակը, Լամբարյանը գուրս է գալիս հաղթանակով և նրա կապակցությամբ սկսված դատը վեր է ածվում դատաստանի Ավագյանի նկատմամբ:

Ջարյանին հաջողվել է ստեղծել կոլտնտեսության արտադրության կազմակերպչի տիպական կերպարը, դրսևորել նրա մարդկային լավագույն հատկությունները՝ մեծ եռանդն ու ակտիվությունը, հոգեկան հարստությունը, նվիրվածությունը կոմունիստական պարտիայի գաղափարներին: Լևոնի բնավորության ամբողջությանը վեպում վնասում են այն արհեստական ինտրիգները, որ սարքվում են մեծ մասամբ հետամնաց կանանց կողմից: Դրանով որոշ չափով աղտոտնում է հասարակական գործչի կերպարը:

Իր խառնվածքով Լամբարյանից տարբերվում է Վասակ Չոբանյանը, սկզբում Հացավանի կոմերիտական, իսկ հետո պարտիական կազմակերպության քարտուղարը: Նա խտացնում է սովետական երիտասարդության լավագույն հատկությունները: Վասակը իր գործունեությունն սկսել է կոլեկտիվացման առաջին տարիներին: Սիակնարկից խմսցվում է, որ չափազանցություններ է թույլ տվել, հետո զգացել է իր սխալը: Նա, որպես բնավորություն, ավելի տնմիջական է, շուտ սպառնալից, բայց միշտ զգայուն է մարդկանց նկատմամբ, նրբանրկատ ու անաղաքտ հոգու տեր:

Վասակ Չոբանյանի համար նոր Հացավանի կառուցումը օդի և ջրի պես կենսական անհրաժեշտություն է: Լամբարյանը գծեց նրա առջև Հացավանի կառուցման ուղին, ներշնչեց հավատով և աչդ հավատը բարձրացրեց Վասակին, դարձրեց «Նոր Հացավանի կենդանի մարմնացումը»:

Վասակը հոգեկան մեծ գեղեցկության և մեծ սրտի տեր հերոս է, ունի հատակ, որոշակի վարձագիծ, միշտ գործում է զլխավոր ուղղությամբ: Նրա համար ամենաազնիվ սկզբունքը Հացավանի շահն է, որը և ուղղություն է տալիս նրա վարմունքին: Մացակ Ավագյանը, ապա

նաև Սանդարյանը օգտագործելով Լևոն Լամբարյանի հետ ունեցած Վասակի անձնական մասնակի տարածաշրջաններ, ցանկանում են «վարկաբեկել և չեղոքացնել կոլխոզի նախագահին, Վասակի ամենալավ ընկերոջը»։ Այդ մտքից փշաքաղվում են Վասակի մաշկերը, նա կռահում է, որ դա սարքված սրողայթ է. «Ուզում են մեկ-մեկ վարկաբեկել և շարքից հանել կոմունիզմի կառուցողներին՝ այսօր Լամբարյանին, էդույ քեզ, մյուս օրը ինձ։ Սա հին և նոր աշխարհի պայքարն է։ Վառակը կանդնած է ճակատադրական ընտրության առաջ. հրաժարվե՞լ ընկերոջից, թե՞ պաշտպանել նրան ուժեղ հակառակորդից, թեկուզ և նրա հետ սուժելու գնով»։ Վասակն ընտրում է վերջին ճանապարհը։

Վասակի և Լևոնի բարեկամությունը ընկերասիրության նոր որակ է, ստեղծված սոցիալիստական ամուր, ներդաշնակ կապերով։ Այդ կապը անհասկանալի է թվում կուլակային շահագործման մարմնացում Մացակ Ավագյանին, որն ասում է. «փոխանակ մի քաղի էլ ինքր տալու իր ընկած հակառակորդին և նրանից խլելու իր սիրած աղջկան, նա նրան պաշտպանում է։ Մացակը չի կարողանում այս մեկը հասկանալ»։

Վասակ Չոբանյանը վեպում գծված է շոշափելի մարդկային գծերով, իր գործի ու մտքերի ներդաշնակ միասնության մեջ։ Նրա կերպարը ստեղծելիս Զարյանը չի տարվում կողմնակի գծերով, այլ ընդգծում է զլխավոր, տիպական հատկությունները և ապրումների հետևողական զարգացումը։

Հացավանի անասնապահական ֆերմայի պրոտիկանտուհի Հասմիկ Զուրաբյանի կերպարը վեպի ամենահաջողված կերպարներից է։

Հասմիկը աճում է Լևոնի, Վասակի հետ միասին, նոր Հացավանի համար մղվող պայքարում։ Նա ազնիվ զգացմունքներով, ինքնատիպ բնավորություն է, երազկոտ, ամոթխած, համեստ, երբեմն պատանու պես համարձակ, բայց միշտ հմայիչ ու գերող։ Զարյանը ցույց է տվել, թե ինչպես կոլտնտեսային կարգը բացահայտում է հայ կնոջ կարողությունները, նրա ստեղծագործական ուժերը։ Հասմիկը անձնականորեն մոռանալու չափ նվիրված է ընդհանուր գործին։ Կոլտնտեսությունը այնքան սերտորեն է ձուլվել նրա հետ, որ այլևս նրանից զուրա ոչինչ չի պատկերացնում։ Նա ոգևորված է նոր Հացավանի կառուցման գաղափարով, իրեն զգում է «վարդապույն երազի» մեջ, ապրում է իր գործի ուսմանտիկայով։

Շարքային կոյտնտեսականի հաջողված գեղարվեստական ընդհանրացում է Ասատուր Զուրաբյանի կերպարը: Նա անցյալի մղձավանջում ճաշակել է կյանքի բոլոր դառնությունները, մանկության տարիներին հալածվել գյուղի հարուստներից, վախեցել է և՛ աստծուց, և՛ երաշտից: Ծիծն ու վիրավորանքը մանկության տարիների նրա անբաժան ուղեկիցն են եղել: Սովետական իշխանության հաստատումից հետո միայն վերացան անհատին նվաստացնող, նրա արժանապատվությունը ռանսհարող վիճակները: Բոլորի կողմից արհամարհված «տկլոր Ասոն», որը իր հորից ժառանգություն էր ստացել միայն գյուղի նշանավոր երկնասլաց բարդին, այլևս կարիք ու հոգս չունի: Ասատուր Զուրաբյանը այն դիտակցության է եկել, որ եթե չլիներ Սովետական իշխանությունը, չէր լինի և իր նոր, ասպհով կյանքը, աշխատանքի բերկրանքը:

Զարյանը շոշափելի գծերով ներկայացրել է Ասատուրի աշխատանքային ողևորությունը՝ դարնանացանի օրերին, աշխատավոր մարդու բնավորության դրական հատկությունները. «Սայլի վրա կանգնած նա նայում էր արտասովոր միտինդին, արևի տակ փայլիլող այդ խոփերին, կանոնավոր շարքերով կանգնած սայլերին, տրակտորների վրա կանգնած մարդկանց և մտածում էր՝ այս բոլորը մերն են: Նա տեսնում էր և իր սրտի ամբողջ զորությամբ զգում, որ կյանքում կատարված է շատ մեծ փոփոխություն, որ ինքն այլևս նոքարության մի լուծ եղ ձեռք բերած, զոռքաների կողմից ծաղրված Զուրաբի ծվծվան Ասոն չի, այլ մի ուրիշ մարդ, մի ամբողջ գովթանի ղեկավար»:

Դրական հերոսների այս շարքը լրացնում են Լիպարիտ Լևոնյանը, Շմավոն Մարությանը, տրակտորիստներ Լադո և Գևորգ Միկինյանները, Առաքել ամին, Մարիամը, Զարուհին, որոնք նորի և հնի պայքարում հանդես են գալիս որպես մարդկային գեղեցիկ հատկությունների կրողներ: Նրանց մեջ տարբեր երանգավորումներով արտահայտվել է նոր կյանքի վեհությունը:

«Հացավան»-ում ոչ միայն ցույց է տրված, թե ինչպես, ինչ պայմաններում է ձևավորվել գրական հերոսների բնավորությունը, այլև ոչ նվազ հաջողությամբ Զարյանը վերարտադրել է իր դրական հերոսների դարգացման հեռանկարը: Զարյանը առաջինը սովետահայ գրականության մեջ պատկերից սոցիալիստական գյուղի անշեղ վերելքը, որի մարդիկ խորը հավատով են նայում ապագային: «Հացավան»-ի

հերոսների երազանքն ունի կոնկրետ բովանդակություն: Այդ երազ է երջանկություն մասին, կյանքի կատարյալ ձևերի ու նոր բնտանիքի մասին:

Զարյանը պաշտպանում է նորի արտահայտությունները, մարդկային նոր ակալը, նոր կենցաղը, նոր բարոյախոսությունը: «Կա երկու Հացավան. մեկն այն Հացավանը, որ այս բոլորիս հունձ է անում, կախում և արտադրում կոխոզային բարիք և սա է նոր Հացավանը: Իսկ մյուս Հացավանն այն է, որ մնացել է դյուլում և սպառկոտյի դռան առաջ կամ բարաշեն պատերի շվաքում բամբասում է, պղտորում և թունավորում»:

Զարյանը մերկացնում է հնի և հետամնացի մնացորդները, լինի այդ դասակարգային բացահայտ թշնամին (Մացաի Ավադյանը և նրա գործակիցները), կապիտալիզմի մնացուկները կենցաղում (Յոթ Մովիմերան), դյուլացիների քաղաքական հետամնացությունը (Փիլո), սահմանափակությունն ու անշարժությունը (Քեոի Ղուկաս) և այլն:

Վեպում արտահայտված է նաև սոցիալիստական հասարակության բնույթով պայմանավորված սոցիալիստական հումանիզմի նոր որակը, որի հիմքում ընկած է լավագույն ասպպայի, մարդու մեջ հարյուրամյակներով նիրհած զգացմունքների բացահայտման համար մղվող պայքարը: Աշխատանքի ստեղծարժանական հաճույքը վերափոխել է աշխարհն ու մարդուն, վերադարձրել նրան կորցրած արժանապատվության զգացումները: Բոլորի կողմից արհամարհված ու ծաղրված Աստն կոլտնտեսային կարգի շնորհիվ դարձել է «ընկեր Ասատուր Զուրարյան», ետոում եռաշուն և շալի Գոմեշը արդեն կոչվում են իրենց իսկական անուններով — եռաշ Սուքիասյան և Պողոս Բոյաջյան: «Մեծ դաղթի ժամանակ Հացավանում ասպատան գտած ալաշկերտցի Հարութը», որին կոլտնտեսություն մտնելուց առաջ կոչում էին դաղթական Հարութ, «դարձել է ուրիշ մարդ, կոլխոզի անդամ Հարություն Միրզոյան»:

«Գաղթական Հարութից» մինչև Հարություն Միրզոյան, — այդ մի ամբողջ հասարակական ֆորմացիա ընդդրկող ժամանակաշրջան է, երբ մարդը բարձրանում է իր աչքին, հարեանի աչքին, հասնում է իսկական մարդու կոչման:

Զարյանը գտել է ճշմարիտ, ռեալիստական սյուժե, որը համապատասխանում է հասարակական կյանքի առաջընթաց պրոցեսներ-

րին: Այսօրվան զարգացման հիմքում դրված է նոր կյանքի կառուցման համար մասսաների միացման պայքարը՝ կապված առանձին հերոսների կյանքի ընթացքի հետ: Խեղճ գործողությունները սկսվելիք մինչև վերջ ծավալվում են մի գլուխում, մի քանի հերոսների ակտիվ մասնակցությամբ, սակայն զգացվում է հին աշխարհի լիակատար խորատկման և նոր կյանքի հաղթական կառուցման պայծառ: Այս մեծ արդյունքին հեղինակը հասել է հերոսներին տիպականացնելու միջոցով: Ահա թե ինչու «Հացալվան»-ը ունի գեղարվեստական խոշոր արժեք և դաստիարակչական նշանակություն: Չնայած դրան, վեպը իրականության ճանաչողության ու կերպարների գեղարվեստական մշակման տեսակետից ունի թերություններ:

Վեպում, հատկապես նրա վերջին մասերում, մեծ տեղ է դրավում հերոսների առօրյա կենցաղի նկարագրությունը, որը երբեմն աղոտացնում է նրանց հասարակական բնավորությունը, զրկում տիպականությունից: Բավական շատ են Լևոնի գեմ սարքված ինտրիգները, որը վերջին հրատարակությունում նույնպես մնում է որպես հիմնական թերություն:

Վեպի հաջողված հերոսներից մեկը՝ ՅոթՄովիմբերանը շափից ավելի է մնում դեպքերի կենտրոնում, թեև նրա հետ կապված մի շարք տեսարաններ քիչ են կապվում դրվածքի կառուցվածքի հետ:

Պարտիայի շրջիումի քարտուղար Լիսյարիտ Լևոնյանին պակասում է բազմակողմանիությունը. նա մեծ մասամբ հանդես է գալիս աչնայիսի ժամանակ, երբ արդեն որևէ իրադրություն կատարվել վերջացել է և նրան մնում է բացատրել գեպրի հետևանքները:

Վեպի վերջին մասում դեպքերը դարգանում են խրոնիկայի նման և հեղինակի գրիչն ամբանալու փոխարեն, թուլանում է: Կռտնտեսության հաշվապահ Եփրեմյանն իր գործելակերպով հիշեցնում է Պոռչյանի Տաճատ Գնթունուն: Նրա կերպարով Զարյանը նահանջել է կերպարի ստեղծման ռեալիստական սկզբունքներից և մոտեցել հին ռոմանտիզմին բնորոշ արկածային տարրերի օգտագործմանը: Վեպում շատ է ձգձգվում Մացակ Ավագյանի մերկացումը, այն դեպքում, երբ շատերին հայտնի էր նրա կուլակային անցյալը և թշնամությունը Սովետական իշխանության նկատմամբ:

«Հացալվան»-ի արժեքը որոշվում է ոչ թե նրա առանձին թերություններով, այլ նրա ընդհանուր ուղղությունը: «Հացալվանը» սովե-

տահայ գրականության մեջ սոցիալիստական ռեալիզմի մեթոդի կիրառման լավագույն արտահայտություններից է:

**«Աղբյուրի մոտ»
կոմեդիան**

Հետպատերազմյան շրջանում «Հացավան» վեպը ամբողջացնելուց հետո, Նաիրի Զարյանը հանդես եկավ նոր գործերով: Դրանց մեջ նշանակալից տեղ են գրավում գրամատիկական երկերը («Աղբյուրի մոտ», «Փորձադաշտ» կոմեդիաները, «Տնամերձ ալդին», «Պատի թերթ» մեկ գործողությամբ պիեսները): Այդ բոլոր գործերի միջով կարմիր թելի նման անցնում է մի հիմնական գաղափար, այն է՝ ինչպես է երբեմն հինը խանգարում նորի շարժմանը, ինչպես են մինչև վերջ չհաղթահարված հնի մնացուկները կանգնում նոր տրագիքիաների ճանապարհին և ինչպես է նորը հաղթանակում ու ամրապնդվում հնի դեմ մղվող պայքարում:

Այդ հարցը լուծելու համար նա հատկապես ընտրել է կոմեդիայի ժանրը, որն անսպառ հնարավորություն է տալիս արվեստագետին՝ ծիծաղի հզոր ղեկքով խաղաղանելու անցյալի մնացուկները մարդկանց հոգեբանության մեջ, այլելու այն ամենը, ինչ հետամնաց է, իր դարձն ապրած, ինչը խանգարում է մեր առաջընթացը:

«Աղբյուրի մոտ» կոմեդիայի գործողության վայրը Արարատյան դաշտի դշուղերից մեկն է: Այդգործական կոլտնտեսության առաջավոր մարդիկ խոսք են տվել հեկտարից ստանալ 300 ցիտոններ խաղող: Դա առաջ է բերել աշխատանքային մեծ ոգևորություն: Կոլտնտեսության բարձր բերքի վարպետների աշխատանքային վերելքը ցանկանում է խանգարել հնի մնացուկները կրող Բալաբեկը: Վերջինս իր աչդուն է միացնում հայրենադարձներին տրված տնամերձ հողամասերը, վարկաբեկում է առաջավոր կոլտնտեսականներին: Ի վերջո պատռվում է նրա դեմքը և Բալաբեկը վտարվում է կոլտնտեսությունից: Այն ֆոնի վրա Զարյանը ցուցադրում է մեր մարդկանց պարզ, անկաշառ հարաբերությունները, նոր վերաբերմունքը աշխատանքին, կոլտնտեսության ամրապնդման հետ կապված դժվարությունները: Պիեսի լադափարական բովանդակությունն ըստ էության կապվում է այն հարցի հետ, որ հերոսներից մեկը ձևակերպում է այսպես՝ «Աշխարհում կա երկու աղբյուր — մասնավոր սեփականության և կոմունիստական սեփականություն: Մասնավոր սեփականությունը աշխարհի դժբախտության աղբյուրն է, կոմունիստական սեփականությունը՝ երջանկության աղբյուրը: Դուք հեռանում եք հին աղբյուրից, փոխում եք նրա

ակունքները և ջուր եք խմում նոր աղբյուրից, որ մարդու հոգին մաքրում է անցյալի բոլոր կեղտերից, վեհացնում է նրան, բարեկամացնում»:

«Աղբյուրի մոտ» երկը սատիրական սուր կոմեդիա է, որտեղ մերկացվում են մեր կյանքում դեռևս հանդիպող բացասական, կեղծ մարդիկ: Սատիրայի սուր ծայրը ուղղված է հանրային տնտեսությանը հակադրույթ, ուրիշի աշխատանքով ապրող, մոլթ գործարքներով զբաղված Բալաբեկի դեմ: Մեր առաջընթացը խանգարող, բուրժուական հոգեբանության դժերը կրող աշդ հերոսը գծված է ուժեղ և ցայտուն: Նա կեղծավոր, իր գծում նպատակների մեջ համառ մարդ է, որը հմտությամբ թաքցնում է իր ներքին բովանդակությունը: Ն. Զարյանը խոշոր պլանով տալով Բալաբեկի նկարագիրը, դրանով իսկ կարողացել է տալ նաև նրա դեմ ուղղված պայքարի սրությունը: Այդ պայքարի մասնակիցները՝ Արսենը, Պայծառը, Սմբատը, Շողիկը, Գուրդենը պայքարում են հարազատ կոլտնտեսության նոր վերելքի ու բարեկեցիկ կյանք ստեղծելու համար: Նրանց մի ամբողջ պատենշ է բաժանում մասնավոր սեփականությանը ամուր կառչած Բալաբեկից: Արտահայտիչ են մի շարք էպիզոդիկ կերպարներ (Նղո, Բարեղամ): Կոմեդիան աչքի է ընկնում կենսական կոնֆլիկտով ու սրամիտ գրություններով:

Կոլտնտեսային գյուղի թեմայով Զարյանի դրած այս և նախորդ շրջանի երկերի հաջողությունը արդյունք է կյանքի խոր ուսումնասիրության, մի բան, որ զգալի չափով բացակայում է նրա վերջին խոշոր գործում՝ «Արմենուհի» պոեմում:

Այս գործում Զարյանը փորձել է նկարագրել հայ գյուղի մարդկանց աշխատանքն ու պայքարը պատերազմից հետո: Պոեմում անշուշտ կան հաջողված բանաստեղծական հատվածներ, նոր գյուղի բնակարի գեղեցիկ նկարագրություններ և մի քանի կենդանի կերպարներ (Թորոս պապիկ, փոստատար, կոմբայնավար, մասամբ նաև Նազաննա): Սակայն այն ամբողջությամբ իր վրա կրում է կյանքի անբաժարար ճանաչողության և դրա հետևանքով նաև թերամշակության ու վերամշակության կնիքը:

**Խաղաղությանը
նվիրված երկեր**

Հետպատերազմյան շրջանում Զարյանի սյուզիայում առաջնակարգ տեղ է գրավում խաղաղության թեման:

«Պատերազմի հրձիգներին», «Նապիմ Հիքմեթին», «Պատասխան Ժանիս

Զուլմալին», «Խաղաղության աղալինին», «Տոնօրյա խոհեր», «Խոսք աշխարհին» և այլ բանաստեղծություններում, հրապարակախոսական հոդվածներում, խաղաղության կողմնակիցների կոնֆերանսների ամբիոններին Զարյանը մերկացնում է խմբերի ալիստական ավանտյուրիստներին, որոնք փորձում են մարդկությունը նետել նոր արյունահեղ սպանդի մեջ։ Նա հպարտությամբ է խոսում խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի լուրերի անսլարտելիության մասին.

Խաղաղությունը պետք է մեղ, բայց չենք խնդրի,
Կնվաճենք միլիարդ մարդու կամքով անվախ։

Խաղաղությանը նվիրված բանաստեղծություններում Զարյանը գնում է Մայսիկովսկու մարտական պոեզիայի ճանապարհով, օգտագործում է նրա պոետական խոսքի արվեստը։ Զարյանը օգտագործելով Մայսկովսկու արագիցիան, ստեղծում է թարմ պատկերներ, հետաքրքիր մտահղացումներ, տմբողջական և կուռ կոմպոզիցիա։ Հռետորի շեշտակի խոսքին («Պատերազմի հրձիգներին») հաջորդում է պարզ ու իրական պոտմությունը («Խաղաղության աղալինին»), կրակոտ ներբողին («Նազիմ Հիքմեթին») հաջորդում են լիրիկական մտորումները («Տոնօրյա խոհեր», «Խոսք աշխարհին»)։ Այդ բանաստեղծություններից լայն մասնալականություն է ստացել «Խաղաղության աղալինին», որը կառուցված է հույիչ, իրական մի փաստի վրա։ Պրադայի խաղաղության կողմնակիցների կոնգրեսում ելույթ է ունենում մի փոքրիկ աղջիկ և պահանջում է խաղաղություն իր ու իր տիկնիկի համար։ Աշխարհի տարբեր ծայրերից եկած դեկդատները մեծ ուշադրությամբ հետևում են խաղաղության ավանգարդ՝ Սովետական Միության պատվիրակներին։ Փոքրիկ աղջիկն էլ բեմ բարձրանալով դիմում է Սովետական Միության Հերոս Ֆեոդորովին, ասելով.

— Քե՛սի, չունեմ ես հայր,
Սպանվել է նա Արևիկում,
Ես տիկնիկիս ու ինձ համար
Խաղաղություն եմ ուզում։

Այդ 6-ամյա աղջիկը փարվում է սովետական պատվիրակի լայն կրծքին. այս պատկերը արտացոլում է այն մեծ հավատը, որ ժողովուրդները և նրանց երեխաները տաժում են խաղաղության

պաշտպան սովետական ժողովրդի նկատմամբ: «Խաղաղության աղափնին» բանաստեղծությունը գրված է ջերմ շնչով ու վարակիչ հուզականությամբ:

Ն. Զարյանի ստեղծագործություններն ինգուռն և ոմը

Ն. Զարյանի պոեզիայում և դեղարվեստական արձակում մեր ժամանակի հարուստ բովանդակությունը դրսևորվել է ռեալիստական բարձր արվեստով, արտահայտչական թարմ ու ինքնատիպ ձևերով, հարուստ լեզվով: Ն. Զարյանն անցել է գեղարվեստական հասունացման երկարատև ուղի, հաղթահարելով իր առաջին շրջանի ստեղծագործության գեղարվեստական թերությունները՝ սխեմատիզմն ու վերացականությունը, ոճի խրթինությունն ու մանվածապատկությունը: Հմուտ և տաղանդավոր կերպով օգտագործելով մեր լեզվի ընձեռած անսպառ հնարավորությունները, Ն. Զարյանն իր լավագույն ստեղծագործություններում («Ռուշանի քարափը» պոեմը, «Հացավան» վեպը, «Ստալին» բանաստեղծությունը, Հայրենական Մեծ պատերազմի ժամանակաշրջանի իրիկյան և ալլն), հասել է ոճի բազմազանության և լեզվական բարձր կուլտուրայի: Ն. Զարյանը ամեն մի թեմայի և ամեն մի ժանրի համար գտել է լեզվա-ոճական պատկերավորման յուրահատուկ արտահայտչական միջոցներ, պատկերավոր խոսքի համապատասխան երանգներ: «Ռուշանի քարափը» պոեմում Զարյանն օգտագործել է կենդանի խոսակցական լեզվի պարզությունը, թեև պոեմում նա տեղ-տեղ տուրք է տալիս լեզվական նատուրալիզմին:

Համաժողովրդական լեզվի բառազանձի հարստությունը, ժողովրդական դարձվածքների ու առածների, նոր արտահայտությունների ու պատկերավոր խոսքի շտեմարանն օգտագործելու հաջող նմուշ է «Հացավան» վեպը, որտեղ Զարյանը հասել է գեղարվեստական խոսքի սեղմության ու կոնկրետության: «Հացավան» վեպի մի քանի հրատարակությունները ցույց են տալիս գրողի տքնաջան և համառ շախատանքը՝ վեպի լեզուն, նրա արվեստը կատարելագործելու ուղղությամբ: «Հացավան»-ի մի շարք նկարագրությունների (Լևոն Լամբարյանի ձիավարության, Մացակ Ավագյանի՝ կատվի հետ ունեցած մենամարտի, դատավարության և ալլն) տեսարաններն աչքի են ընկնում իրենց բնականությամբ, խոսքի նրբերանգներով, մակդիրների ու համեմատությունների կոնկրետությամբ: «Հացավան» վեպում Ն. Զարյանը հատկապես մեծ հաջողությունների է հասել հերոսներին

իրենց ուրույն խոսակցական լեզվով անհատականացնելու գործում։
Եթե դասակարգային թշնամին՝ Մացակ Ավագյանը խոսում է երկդիմի,
անորոշ եղանակով, ներվային ոճով, ապա նոր դշուղի հերոսների՝
Լևոն Լամբարյանի, Վասակ Չոբանյանի, Հասմիկ Ջուրաբյանի և մյուս-
ների համար բնորոշ է խոսքի գեղեցկությունը, ժողովրդական իմաս-
տություններն օգտագործելը և այլն։

Ն. Զարյանը, իր պոեզիայում ոչ միայն հասել է գեղարվեստական
պատկերի կոնկրետության, այլև պատկերների գունագեղության, հա-
մեմատությունների ու էսխիտեաների թարմության։

Հայրենական պատերազմի շրջանի պոեզիայում Զարյանն է՛լ
ավելի է հարստացնում իր պոեզիայի արտահայտչական միջոցները,
շատ հաճախ դիմելով ուղղակի խոսքի՝ կոչի, կրկնության, լողոնգի,
հրամանի ձևերին, օգտագործում է ինչպես բարբառների հյութեղ
տարրերը, այնպես էլ դրաբարյան այն բառաձևերը (սրբազան, ուխտ,
կերոն և այլն), որոնք նոր իմաստավորում են ստանում։

Սակայն Զարյանը պատերազմի շրջանում գրած «Արա Գեղեցիկ»
ողբերգության մեջ զգալիորեն օգտագործեց դրաբարյան ոճերն ու
ձևերը, թույլ տվեց շեղում մեր լեզվի պարզացման օրինաչափությու-
նից։ «Արա Գեղեցիկ»-ի առանձին հատվածների վերամբարձ ոճը ար-
տահայտվեց նաև «Արմենուհի» պոեմում։

Չնայած այս թերություններին Ն. Զարյանի ստեղծագործությու-
նների լեզուն և ոճը աչքի են ընկնում խոր ժողովրդայնությամբ և պատ-
կերավոր խոսքի ուսուցիչով։

Նախրի Զարյանը ստեղծագործական վերելքի մեջ է։ Նա չի հան-
դրատանում արդեն ձեռք բերածով, սովետական դրականության մեջ
դրած իր արժեքավոր ավանդներով։ Հավատարիմ մեր ժամանակի
«Առաջ և վեր» նշանաբանին, նա շարունակում է ստեղծել նոր
բարձրարվեստ երկեր։



ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆ

Քանաստեղծ Գեղամ Սարյանը ստեղծագործական ավելի քան հրեսնամյա ճանապարհ է անցել։ Սովետական հայրենասիրության, սոցիալիստական հումանիզմի և ժողովուրդների եղբայրության դավալարներով հագեցած իր թարմ ու ինքնատիպ լիրիկայով նա որդւն տեղ է գրավում սովետահայ պոեզիայում։

Կյանքը

Գեղամ Սարյանը ծնվել է 1902 թ. դեկտեմբերի 25-ին, Իրանի Թավրիզ քաղաքում, դերձակի ընտանիքում։ Սկզբնական կրթությունն ստացել է տեղի ծխական դպրոցում։ 1920 թ. ավարտել է Թավրիզի թեմական Կենտրոնական միջնակարգ դպրոցը։ Երկու տարի աշխատել է որպես ուսուցիչ։ Թե՛ աշակերտական, թե՛ ուսուցչության տարիներին Գ. Սարյանն Իրանում ապրել է նյութական կարիքի պայմաններում։ Նա տեսել է աշխատավոր ժողովրդի ծանր կյանքը՝ ներքին հարստահարիչների՝ խաների ու վաշխառուների և օտարերկրյա բռնակալների՝ անգլո-ամերիկյան գիշատիչ իմպերիալիստների լծի տակ։ Այդ անհրապույժ կյանքից խորապես լշտացած պատանին գրել է իր առաջին ոտանավորները։

1922 թ. Գ. Սարգյանը տեղափոխվում է Սովետական Հայաստան, Մինչև 1926 թ. նա բնակվում է Լենինականում և ղեկավարում ուսուցչությանը: Այստեղ էլ նա գրում և 1925 թ. առանձին գրքով հրատարակում է իր առաջին պոեմը՝ «Շիրակի հարսանիքը» («Հեթաթ Շիրակի մասին»): Այնուհետև նա տեղափոխվում է Երևան և ղեկավարում գրական-ստեղծագործական աշխատանքով:

Ազատագրված Հայրենիքում ստանալով ստեղծագործական աշխատանքի լայն հնարավորություններ, նա աստիճանաբար հարստացնում է իր գիտելիքները և ղարպացնում բանաստեղծական ընդունակությունները: Նա ավելի խորն է ուսումնասիրում հայ կլասիկ պոեզիան, որին ծանոթ էր դեռ աշակերտական տարիներից (Հովհ. Թումանյան, Պ. Գուրջան, Վ. Տերյան, Ավ. Իսահակյան, Հ. Հակոբյան և ուրիշներ): Գ. Սարգյանի ստեղծագործական կյանքում առանձնապես նշանակալից դեր է կատարում ռուս մեծ ժողովրդի կլասիկ և սովետական գրականությունը: Խոսելով ռուս գրականության հանճարեղ վարպետներ Պուշկինի, Լերմոնտովի, Գուրկու և ուրիշների մասին, Գ. Սարգյանը իր ինքնակենսագրության մեջ գրում է. «Նրանք ոչ միայն հարստացրին իմ հոգեկան աշխարհը, այլև հանդիսացան իմ ուսուցիչները»:

1930 թ. լույս է տեսնում Գ. Սարգյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Նրկիր Խորհրդային» վերնագրով: Ժողովածուն արժանանում է լավ գնահատականի: Այնուհետև երեսնական թվականներին իրար ետևից հրատարակվում են «Նրկաթ ռուսացներ» (1933 թ.), «Միջօրե» (1935 թ.), «Իսպանիայի պատանի հերոսները» (1937 թ.), «Բանաստեղծություններ» (1940 թ.) և մյուս ժողովածուները:

Հայրենական Մեծ պատերազմի առաջին իսկ ամիսներին Գ. Սարգյանը հրատարակում է «Հայրենիքի համար» ժողովածուն, ուր ամփոփված են նրա հայրենասիրական մի քանի բանաստեղծությունները: 1942 թ. նա մեկ ամսով լինում է ռազմաճակատում, մոտիկից ծանոթանում սովետական ռազմիկների հերոսական սխրագործություններին: Այստեղ նա գրում է մի քանի մարտական բանաստեղծություններ («Գրոհի պահին», «Խոսք մարտիկներին» և այլն), որոնք տպագրվում են ճակատային թերթերում: 1944 թ. լույս է տեսնում Սարգյանի «Բալլադներ» ժողովածուն:

Հետպատերազմյան տարիներին հրատարակվել են Գ. Սարգյանի

ընտիր բանաստեղծությունների և բալլադների երկու ժողովածուներ (Քատրնտիր»՝ 1945 և 1952 թթ.), «Բանաստեղծություններ»-ի միհատորյակը (1947 թ.), «Հրաշալի սերունդ» պոեմը (1950 թ.):

Գ. Սարյանը իր ուժերը փորձել է նաև արձակի և դրամատուրգիայի բնագավառում:

Գ. Սարյանը զգալի աշխատանք է կատարել մեր թարգմանական գրականությունը հարստացնելու ուղղությամբ: Նրա թարգմանված լույս են տեսել Պուշկինի, Լերմոնտովի մի շարք պոեմներն ու բանաստեղծությունները, Հ. Հայնեի «Երգերի գիրքը» (Վ. Նորենցի հետ միասին), Տ. Շեքսպիրի «Կոբզարը»:

Գ. Սարյանի ժողովածուները լույս են տեսել ռուսերեն, իսկ առանձին բանաստեղծություններ ու բալլադներ՝ նաև ուկրաիներեն, վրացերեն, ադրբեջաներեն, քրդերեն և ուրիշ լեզուներով:

Գ. Սարյանը ընտրվել է Երևանի Քաղսովետի (1940—1947) և ՍՍՌՄ Գերագույն Սովետի (1946—1950) դեպուտատ:

Սովետական գրականությանը մատուցած ծառայությունների համար նա պարգևատրվել է Աշխատանքային Կարմիր Դրոշի» շքանշանով և մեդալներով:

Գ. Սարյանի ստեղծագործությունը մինչև Հայրենական Մեծ պատերազմը

Գեղամ Սարյանը գրելու փորձեր է կատարել դեռևս աշակերտական տարիներին, Իրանում: Նրա վաղ շրջանի ոտանավորները արտահայտում են պատանի պոետի տխուր խոհերը, նրա դժգոհությունը Իրանի ֆեոդալական իրականությունից: Նա ռմկնդրում է «ակացու լացին», տխրում և տրտընքում է մենակության մեջ և երազում է մի նոր, աղատ ու լուսավոր կյանքի մասին:

Ոչ գիշեր լիներ հիմա, ոչ անձրև տեղար երկրին,
Ոչ զվիյուտ սուրար մեղմիկ, ոչ գիշեր լիներ հիմա,
Արթնանար հանկարծ արևն՝ աղջիկն այն ջահը ձեռքին,
Զրինի գիշեր հիմա, շտեղար անձրև երկրին:

Պատանու երազանքը իրականություն է դառնում ալատագրված Սովետական Հայաստանում, որտեղ նա տեսնում է բոլորովին նոր կյանք, ինչպես ինքն է ասում՝ «նոր գաղափարների և նոր թեմաների մի հարուստ աշխարհ»: Այդ նոր կյանքը, սովետական երկրում ազատագրված աշխատանքը և աշխատավոր մարդը դառնում են երիտա-

սարգ Սարյանի ստեղծագործական ներշնչումների աղբյուրը, նրա պոեզիայի հիմնական թեման: Դրա առաջին արտահայտությունն է «Շիրակի հարսանիքը» պոեմը, որով շրջադարձ է սկսվում Սարյանի ստեղծագործական կյանքում: Հ. Հակոբյանի, Ն. Զարյանի և մյուսների նման Սարյանը խանդավառությամբ երգում է սոցիալիզմի առաջին նորակառույցներից մեկը՝ Շիրակի ջրանցքի կառուցման աշխատանքները:

Այնուհետև Գ. Սարյանը գրում է լիրիկական մի շարք բանաստեղծություններ և «Գյուլնարու» պոեմը:

«Գյուլնարա»

Այս պոեմում Սարյանը պատկերում է կյանքը ֆեոդալական Արևելքում, մասնավորապես Իրանում, երգում իրավագույնի, բայց ազատատենչ աշխատավոր կնոջ դարթոնքը, նրա բուռն ձգտումը դեպի լույս և ազատություն: Հավ ծանոթ լինելով նկարադրվող իրականությանը, բանաստեղծը կերտում է կենսական ճշմարտությամբ և խորը դրամատիզմով հագեցած պոեմ: Նա իր ուշադրությունը, ճիշտ է, կենտրոնացնում է հերոսուհու հոգեկան ապրումների դրամորման վրա, սակայն լիակատար պաշար է տալիս և՛ միջավայրի, և՛ հերոսուհու հոգեվիճակի մասին, հաջողությամբ կերտում է Գյուլնարայի կերպարը, հոգեբանորեն պատճառաբանում նրա ամեն մի քայլը, ստիպում սկզբից մինչև վերջ լարված հետաքրքրությամբ հետևել դեպքերին:

Գյուլնարան զորգագործ է: Նա մետաքսե թելերից գորգի վրա անթառամ պարտեզներ է հյուսում: Գյուլնարան զեղեցիկ է թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես («Գյուլնարի սիրտը ոնց արև լիներ»): Սակայն նա զրկված է ազատությունից, մարդկային իրավունքներից: Բոլոր աշխատավորների նման, նա ևս շահագործվում է բռնակալ խանի և նրա խանութների կողմից: Գյուլնարան ամեն օր լսում է խանի ծանր վիրավորական խոսքերը, խանութների անհոգ ծիծաղը, տեսնում նրանց անաշխատ ու ցուրի կյանքը: Նրա սրտում կուտակվում է ատելություն զգացումը. նա ինքնագիտակցությամբ է դալիս, ձգտում է ազատություն: Սակայն դաժան օրենքները կաշկանդում են նրան: Բռնակալությունը կարիճի նման խայթում է նրա սիրտը, թունավորում է կյանքը: Գյուլնարայի ներքին տրտուռը աստիճանաբար մեծանում է, դառնում ցասկոտ ու բացահայտ բողոք՝ բռնակալ ու խավար իրավակարգի սիմվոլը հանդիսացող չադրայի դեմ: Նա գորգի վրա հյուսում է իր պատկերը՝ ազատ, առանց չադրայի ու տանում խանին նվեր:

— Գլուկնարան նվեր է բերիկ,
Գլուկնարան տրտունջ ունի, խա՞ն.
Թույլ տուր, որ բոլորի հետ մեկտեղ,
Գլուկնարան դեն գցի չաղրան:

Խանը բռնակալության մարմնացումն է: Նրա համար կինը ստորակ է, լավագույնը դեպքում՝ հարեմի ղարդ: Արևելյան տիպիկ բռնակալը չի կարող հանդուրժել ոչ մի ազատություն.

Իմ հողում առանց չաղրա
Ոչ մի կին չպետք է ասլրի:

Այս օրերը ստեղծել են հարուստ վերնախավերը և ամրապնդել կրոնական օրենքի ուժով, աշխատավորներին մշտապես խավարի և իրավազրկության մեջ պահելու համար:

Զգուշացրե՛ք զինքն չաղրան, Գլուկնարան դեմ է գնում արևելյան դեսպոտիզմին և դառնում այդ դաժան ռեժիմի դուհը.

Այդ օրը իրիկնային պահին
Արյունը հոսեց Գլուկնարի,
Մեռավ նա արևի կարոտ,
Իրանի գլուխը սաբահին:

«Գլուկնարան» ունի սյուսթետային կուռ գիծ, դինամիկ զարգացում: Տիպական կոնֆլիկտը ինքնագիտակցության եկած ազատատենչ կնոջ և բռնակալության միջև ստանում է ռեալիստական լուծում: Պետք է դատապարտում է բռնակալությունը, քննադատում այն այլանդակ օրհնքները, որոնք «մարդուն հանձնել են մարդու անգութ գերության», ինչպես ասում է նա հետագայում գրած, բայց իր ոգով «Գլուկնարա»-ի հետ սերտորեն առնչվող «Իրանի» պոեմում: «Գլուկնարա» պոեմը հագեցած է հուզականությամբ, նրանում հեղինակն ստեղծել է մի շարք գեղեցիկ և իմաստալից համեմատություններ ու մետաֆորներ, որոնք բնութագրական են տվյալ միջավայրի և հերոսների հոգեմիջակի համար:

Երեսնական թվականներին Գ. Սարգյանը թեակոխում է իր ստեղծագործական հաստնության շրջանը: Հարստանում և բազմազան է դառնում նրա պոեզիայի թեմատիկան: Սովետական կյանքի երևույթները, սոցիալիստական շինարարությունը, ռևոլյուցիոն անցյալի հերոսիկան, սովետական մարդկանց հույզերն ու խոհերը — այս բոլորն իրենց անդրադարձումն են դառնում նրա լիրիկայում:

Գ. Սարգյանի այս շրջանի լիբիկայի համար բնութագրական են «Օրացույցը» և «Կակաչը» բանաստեղծությունները:

«Օրացույց»-ում նա խոսում է մի շատ սովորական, առօրյա երևույթի մասին: Բոլորիս նման նա ևս պոկում է օրացույցի հերթական թերթիկը: Բայց բանաստեղծը այդ փոքրիկ թերթիկի մեջ տեսնում է սովետական մեծ առօրյան, մի ամբողջ աշխարհ, տեսնում է կյանքի առաջընթացը, բանաստեղծորեն դրսևորելով իր վառ հավատը նորի, առաջավորի հաղթանակի նկատմամբ:

Նա տեսնում եմ նրա մեջ ժամերի վաղըը վսեմ,
Մահացումներ եմ տեսնում, և ծնունդները բազում,
Նա տեսնում եմ նրա մեջ գալիք մեր կյանքը լուսե,
Այնքան հստակ, այնքան ջինջ, ինչպես վճիռ երազում:

Գ. Սարգյանը իր լիբիկական լավագույն բանաստեղծությունների մեջ, օգտագործելով ժողովրդական իմաստումն մտքերը, ցույց է տալիս, որ կյանքը միշտ էլ մահից ուժեղ է, որ անմահ է Հայրենիքի ու ժողովրդի համար կյանքը անխրաբերող հերոսը: Այս տեսակետից ուշագրավ է «Կակաչը» բանաստեղծությունը, որը նվիրված է 1920 թ. Մայիսյան ապստամբության ժամանակ զոհված հերոսներին: Պոետը դաշտում տեսնում է մի կարմիր ու սիրուն կակաչ: Կակաչը լեզու առած զրուցում է նրա հետ, հայտնում, որ ինքը ծնունդ է առել Հայրենիքի համար զոհված հերոսների արյունից, նրանց հայացքն իր ալ թերթերի մեջ:

Քո ընկերոջից ընդունիր բարե,
Ալ թերթերիս մեջ հայացքն է նրա,
Նրա մահով եմ սնվել, կյանք առել
Այս կանաչ, կանաչ թարմ դաշտի վրա:

Այնուհետև «մեծ կռվում ընկած» և նոր կյանք կռող հերոսներին համեմատելով «կարմիր ու սիրուն» կակաչի հետ, նրա «ալ ու վառ» թերթերի հետ, բանաստեղծը ավելի ցայտուն է արտահայտում հայրենասեր հերոսների հմայքը, մեղ համակում գեղեցիկ զգացումներով: Իհարկե, առարկան շնչավորելու, նրա հետ խոսելու, խորհրդածելու այս հնարանքը, որ գործադրում է Սարգյանը, նոր է: Սակայն միանգամայն նոր է Սարգյանի զրուցի էությունը, նրա խորհրդածության բնույթը, նրա մեջ կակաչի արթնացրած զգացողությունը: Շնչավորե-

լով կակայք, նա փառաբանում է սոցիալիզմի համար ընկած հերոս-
ների անմահության գաղափարը:

Մեր ամենօրյա ահեղ պայքարում,
Մեր կառուցման մեջ, մեր սրտերում վառ,
Ասա', որ իր պես հաղար ընկերի
Անունը պայծառ պահում ենք անմար:

Այդ գաղափարը նա տարբեր ձևերով արտահայտում է նաև «Կո-
մունարները», «Պրոխոր Իվանով» և ուրիշ ստեղծագործություններում:

**Սովետական
հայրենասիրությունը
Գեղամ Սարյանի
պոեզիայում**

Գեղամ Սարյանը իր պոեզիան իրավացիորեն
անվանում է «նայրենաշունչ»: Սովետական
Հայրենիքի կենարար շունչն է, որ ուժ է տա-
լիս նրա պոեզիային: Բանաստեղծը սովետա-
կան կենսախինդ կյանքի գեղեցիկ գույներն ու
երանգներն է դնում իր երգերի մեջ: Դիմելով Հայրենիքին, նա ասում է.

Ու վարդերիդ երանգով
Նրգեցի ներկեմ,
Սրտիս թափով ու հանգով
Նրգեմ ու երգեմ:

Սովետական հարուստ ու կենսուրախ կյանքով են պայմանա-
վորված Գ. Սարյանի պոեզիայի պայծառ գույները: Բայց և նա չի
մոռանում մեր ժողովրդի անցած ծանր ուղին: «Պատմություն՝ գրված
ժայռի վրա» և ուրիշ բանաստեղծություններում պոետը հակադրու-
թյան մեթոդով կերտում է աշխատավոր ժողովրդի անցյալի տառա-
պալից կյանքի պատկերը: Նա ցույց է տալիս, թե ինչպես ներքին
հարուստ հարիւրները և օտարերկրյա բռնակալները ծծել են ժողովրդի
արյունը, երկիրը հաճախակի ավերել ու վերածել «մոխրի, փոշու»,
կյանքը դարձրել դժոխք: Բայց միշտ էլ մոխրի ու փոշու միջից, փյու-
նիկ թռչունի պես, կյանք է առել աշխատավոր ժողովուրդը: Նա ստեղ-
ծարար աշխատանքով ու պայքարով, արյան ու քրտինքի զնով հասել
է Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեվոլյուցիային, ռեվոլյուցիա-
յի շնորհիվ դուրս եկել ազատ ու անկաշկանդ զարգացման լայն ու
լուսավոր ճանապարհ, կերտում է նոր կյանք ու ապագա: Այսպիսով,
առցյալի ֆոնի վրա բանաստեղծը ավելի ցայտուն ու որոշակի է
դարձնում մեր ժողովրդի պատմության ամենալուսավոր էջը, Սովե-
տական Հայրենիքի վեհությունն ու հմայքը:

Այս տեսակետից հատկապես աչքի է ընկնում «Խորհրդային Հայաստան» բանաստեղծությունը, որն, իրավամբ, համարվում է սովետահայ պոեզիայի զարդերից մեկը: Այստեղ բանաստեղծը ջերմ ոգեվորություններ գտնում է Սովետական Հայաստանի տասերորդ տարեդարձը, արտահայտում է ժողովրդին համակած տոնակաճ խանդավառ տրամադրությունը.

Հաղար շեփոր հնչեն թող
Այս առավոտ,
Հաղար թմբուկ խփեն թող
Այս առավոտ.
Լուսի հեղեղ, լուսի տուն է,
Խնդովյուն.
Հաղար շեփոր հնչեն թող
Այս առավոտ:

Այնուհետև բանաստեղծը պատկերում է Սովետական իշխանության տարիներին ձեռք բերված նվաճումները, ցույց է տալիս, որ մեր ռեսպուբլիկան գնալով երիտասարդանում է, դառնում «շողշողոճ մի պատանի»:

«Կոմունիզմը,— ասել է Վ. Մայակովսկին,— աշխարհի երիտասարդությունն է»: Արտահայտելով մեր դարաշրջանի լավագույն բանաստեղծի այդ միտքը՝ Սարյանն իր վերոհիշյալ բանաստեղծության մեջ ստեղծել է նպատակասլաց համեմատություններ ու մետաֆորներ՝ հաջողությամբ կերտել սովետական երիտասարդ Հայրենիքի պատկերը:

Տեսեր թովչանքը նրա՝
Հենց նոր ծաղկած նշի ծառ,
Տեսեր հայացքը նրա՝
Արեգակի պես պայծառ,
Տեսեր վարսերը նրա՝
Ծառագայթի շեկ խուրձեր,
Լուսն աչքերի վրա
Լուրժ նրկինքն է կոացել:

«Կգա նա» բանաստեղծության յուրաքանչյուր տողը շնչում է լավատեսությամբ, կոմունիզմի հաղթանակի գաղափարով: Բանաստեղծն այստեղ գեղարվեստորեն արտացոլում է այն միտքը, որ կոմունիզմ կառուցել՝ ճշանակում է նախ և առաջ էլեկտրիֆիկացնել երկիրը, ստեղ-

ծել նյութական բարիքների առատություն, որի համար պահանջվում է ստեղծարար աշխատանք և պայքար:

Կոմունիզմի հաղթանակի գաղափարը լավ է դրսևորված նաև ուրիշ բանաստեղծությունների մեջ, որոնք նվիրված են մեր երկրի էլեկտրիֆիկացիային («Ներկաթալարի երգը» և այլն):

Գ. Սարյանի «Պատգամավորը», «Լենինի նկարի առաջ», «Խոսք ընկեր Ստալինի 60-ամյակին» և ուրիշ բանաստեղծություններ քաղաքական լիրիկայի նմուշներ են՝ հազեցած սովետական կենարար հայրենասիրությամբ և խորը հուզականությամբ:

«Պատգամավորը» լիրիկական բանաստեղծության մեջ հեղինակը դրսևորում է իր հույզերն ու ապրումները՝ Լենինի դամբարանի առաջ: Այնուհետև Լենինի դամբարանին դրված ամեն մի քարի մեջ բանաստեղծը մարմնավորված է տեսնում ժողովուրդների սիրտն ու հոգին, վիշտն ու կարոտը: Նա ճանաչում է իր ժողովրդի դուռ՝ քարը և նոր ուժով է պոռթկում նրա հայրենասիրական ղեպացումը:

Այդ իմ երկրի քարն էր մտերիմ ու ծանոթ,
Որպես հուղարկավոր, արցունքների նման,
Նա իմ երկրի կողմից ցողում էր վիշտ, կարոտ
Այն մեծ ղեկավարի դամբարանի վրա:

Այստեղ, ինչպես և Լենինին ու Ստալինին նվիրված մյուս բանաստեղծություններում, Գ. Սարյանը չի պատմում նրանց կյանքի և գործունեության առանձին դրվագներ, բայց վարպետորեն դրսևորում է սովետական մարդկանց խոհերն ու մտքերը:

Գ. Սարյանի պոեզիայի լիրիկական հերոսը սովետական մարդն է՝ իր մեծագործություններով, աշխարհը հեղաշրջող սխրանքներով:

Նա է հյուսել աշխարհն այս մեծ,
Գլուխ է դարեր, դարեր,
Հիմա կանգնած հաղթողի պես
Հաղար հուլյսի ջահ է վառել:

Այդ հաղթող մարդկանց առաջին շարքերում Գ. Սարյանը պատկերում է կոմունիստներին: Էպիկական մեծ շնչով գրված «Կոմունարները» սյուժետային բանաստեղծության մեջ մենք տեսնում ենք, որ նրանք թե՛ ռևոլյուցիայի «պայքարներում վսեմ», թե՛ սոցիալիզմի կառուցման բոլոր ֆրոնտներում՝ «մետաղի ու քարի կռիվներում ահեղ»,

«Հաստուն արտերի ծփանքներում անհուն» միշտ էլ կանգնած են կրա-
կի առաջին դժուար:

Սովետական հայրենասեր մարդու բնորոշ հատկությունը՝ սերը
դեպի Հայրենիքը, աղատաբերված աշխատանքը և խաղաղ շինարարու-
թյունը իր կոնկրետ դրսևորումն է գտել «Խնդություն» բանաստեղծու-
թյան մեջ: Այստեղ հեղինակը վերարտադրում է որմնադիր բանվորի
և նրա ճարտարապետ որդու զրույցը: Որդին դիմում է հորը հետևյալ
հորդորով.

— Հայրի՛կ, պատը թեք է դնում,
Նայի՛ր, գիծը ո՛ւր մնաց,
Հայրի՛կ, արագ, ես ենք մնում,
Տե՛ս արեւ թերվեց ցած:

Երիտասարդ ճարտարապետը և որմնադիր հայրը աշխատում են
Եւրո ուժով: Նրանք երկուսն էլ ունեն նույն աղնիվ ձգտումը՝ ժամ առաջ
կառուցել Հայրենիքի շենքը: Նրանց համար աշխատանքը պատվի ու
փառքի դործ է: Մեր ժողովուրդն իր դարավոր պատմության ընթացքում
շատ է կառուցել ու վերակառուցել: Բայց նա չի ունեցել և չէր կարող
ունենալ այնպիսի վեհ զգացում իր կառուցումների առթիվ, ինչպես
սովետական իրավակարգում, երբ նա կերտում է իր հերոսական ներ-
կան ու դնում մեծ դալիքի ամուր հիմքերը: Ահա թե ինչու սովետական
շինարարը ծավալում է կենարար մրցություն՝ Հայրենիքի շենքին առա-
ջին իսկ քար դնելու օրից: Որդին հորը հիշեցնելով, որ իրենք ելել են
մրցության «կառուցման մեծ պայքարում», ասում է.

— Հայրի՛կ, սիրտս չի համբերում,
Ու՛ժ տուր, թա՛փ տուր ըո՛ր ձեռքին,
Ես առաջին քարն եմ դնում
Հայրենիքի մեծ շենքին:

Գ. Սարյանը սովետական մարդու գործերի, հույզերի ու խոհերի
վերարտադրման միջոցով երևան է հանում և բացահայտում նրա բար-
ձրը հատկությունները, ստեղծում նրա լիրիկական կերպարը, որն իրոք
նմանվելու արժանի օրինակ կարող է ծառայել մարդկանց համար: Սը-
րանումն է Գ. Սարյանի պոեզիայի ուժը:

Վերարտադրելով սովետական հայրենասիրության թեման, Սարյա-
նը միաժամանակ պրոլետարական ինտերնացիոնալիզմի դիրքերից եր-

գում է ռևոլյուցիոն շարժումները մեր երկրի սահմաններից դուրս: Նա աչրող առեւելքամբ է խոսում այն մասին, որ միջազգային իմպերիալիզմը՝ այդ «մոռաց քաղաքների տիրակալը դեղին» («Վերջալուստը»), սնվում է մարդկային արյունով՝ «և արյուն է կաթում ժանիքներից ահա»: Պետերը, մյուս կողմից ընդգծում է, որ ոտքի են հիւնում ազատատենչ ու ռևոլյուցիոն ուժերը, որոնք փորում են իմպերիալիզմի գերեզմանը:

Գեղամ Սարյանի նախապատերազմյան ստեղծագործությունները, իհարկե, հավասարաբեք չեն: Նա ունի նաև թույլ և անհաջող, գաղափարապես ցածրարեք ոտանավորներ: Միշտ չէ, որ նա բարձր գաղափարներն արտահայտում է գեղարվեստական տպավորիչ պատկերներով, երբեմն տարվում է պասսիվ, հալեցողական մոտիվներով, անհարկի շեշտում թախծի զգացումը («Իմ երգերը քեզ», «Անցորդներ» և այլն): Բայց սրանք առանձին անհաջողություններ են և չեն բնութագրում Գ. Սարյանի պոեզիայի ընդհանուր ուղղությունը:

Գեղամ Սարյանի բանաստեղծական կարողությունները նոր ուժով դրսևորվեցին և ավելի ստեղծագործություններ խորացան Հայրենական Մեծ պատերազմի տարիներին: Նա իրեն հատուկ անմիջականությունը պահպանեց իր շրջանի զգաց ժամանակի շունչը և արձագանքեց օրվա ժամանակաշրջանում հրատապ ու կենսական հարցերին:

Պատերազմի առաջին իսկ օրերին Սարյանի իր խոսքն ասաց ռազմաճակատ մեկնող մարտիկներին՝ «Նոսք բարի երթի»: Այդ խոսքը ջերմ է, անկեղծ և սրտառուչ, միաժամանակ լի վառ հավատով:

Գ. Սարյանն զգում է այն վտանգը, որ ժամանակավորապես կախվել էր մեր Հայրենիքի և նրա պանծալի մայրաքաղաք Մոսկվայի վրա, բայց նա հավատում է և արվեստի ուժով համոզում, որ «երկու հարյուր միլիոն սրտով զրահապատ» մեր Հայրենիքը անպարտ է («Մոսկվա»): Անպարտ է, որովհետև արդարացի պատերազմի ելած սովետական խաղաղասեր մարդիկ խորապես գիտակցում են, որ իրենք պաշտպանում են սոցիալիզմի Հայրենիքը, արյունով ու քրտինքով ձեռք բերած Սովետական իշխանությունը: Այդ գիտակցությունը, ինչպես ասել է մեծ լենինը, հաղթանակի գրավականն է: Այդ գիտակցությամբ էլ սովետական մարդիկ աշխատում ու կռվում էին բազմապատիկ ուժով: Այս իրողությունն է, որ գեղարվեստական ճշմարիտ պատկերում է

գտել Սարյանի «Երեք կոմբայնավար» սեղմ ու բովանդակալից բանաստեղծության մեջ:

Երեք կոմբայնավարներն իրենց հոգեբանությունում, կատարած դործերով, սովետական հայրենասեր մարդիկ են, որոնք Հայրենիքին սպառնացող վտանգի դժվարին օրերին չեն խնայում իրենց ուժերը, աշխատում և կռվում են բազմապատիկ եռանդով՝ «ամեն մեկը դարձած երեք կոմբայնավար»:

Գ. Սարյանը դիպուկ կերպով բացահայտում է սովետական ռազմիկների այրող ատելությունը թշնամու նկատմամբ և հաղթանակի անսասան հավատը: «Գրոհում» բանաստեղծության մեջ նա սովետական ռազմիկի մասին գրում է.

Նրա սրտում ամպրոպներ կան, վրեժի կայծակ,
Նրա սրտում կա հաղթության բորբ արևածաղ:

Գ. Սարյանի պոեզիայի լիրիկական հերոսը պատերազմի շրջանում ևս սովետական մարդն է, որը ձեռք է բերել նոր, ավելի բարձր հատկություններ, խորացել է նրա հայրենասիրությունը: Այդ մասին են խոսում Գ. Սարյանի այն բալլադները, որոնք գրված են պատերազմի թեմաներով:

Գեղամ Սարյանի բալլադները

Գ. Սարյանը բալլադներ է գրել գեռևս նախապատերազմյան շրջանում: Սակայն նրա ստեղծագործության մեջ բալլադը գերակշռող է դառնում Հայրենական Մեծ պատերազմի տարիներին: Բալլադը լիրիկական պոեզիայի տեսակներից մեկն է, որը միջնադարում և հետագայում արտացոլել է հիմնականում զգայացունց ու եղերական, զարմանահրաշ ու սրտաճմլիկ, մեծ մասամբ ֆանտաստիկ ու կրոնա-միստիկական երևույթներ, գեպքեր, պատմություններ: Մ. Գորկին, Վլ. Մայակովսկին, ինչպես նաև Ն. Տիխոնովը, Դ. Բեդնին և սովետական ուրիշ գրողներ ստեղծում են նոր բնույթի և նոր որակի բալլադներ: Նրանց բալլադներում մենք տեսնում ենք իրական կյանք և կենդանի մարդիկ: Սովետական բալլադներն արտացոլում են սոցիալիստական ռևոլյուցիայի և սովետական կյանքի հերոսիկան, իրական կյանքի պաթոսը: Նրանց մեջ իսպառ բացակայում է միստիկան, պասսիվ հայացողությունը: Նրանց հերոսները իրոք հրաշալի, բայց ոչ անիրական մարդիկ են, որոնց գործերը ոչ մի կապ չունեն բախտի, ճակատագրի հետ: Այսպես են նաև Գ. Սարյանի լավագույն բալլադները: Յույստուն օրինակ է

«Պրոխոր Իվանովը», որի պաթոսը ունեցուցիտն իրականության հերոսականությունն է, իսկ գլխավոր հերոսը՝ քաղաքացիական կռիվներում Սովետական Հայրենիքի համար անձնագոհ կերպով մարտնչող կենդանի մարդը:

Այս ոգով ու ոճով են գրված Գ. Սարյանի «Լուսանկարը», «Հետախույզը» և մյուս բալլադները:

«Լուսանկարը» բալլադն սկսվում է փոքրիկ նախերգանքով, որից ընթերցողն իմանում է, որ բալլադի հերոսուհին ռազմաճակատ է ուղարկել իր սիրած տղային, նրան նվիրելով իր լուսանկարը: Միաժամանակ տեսնում ենք տղայի դիմանկարը, ծանոթանում նրա խորը հավատին հաղթանակի նկատմամբ: Այսպիսով, նախերգանքի մի քանի տողում արդեն որոշ գաղափար ենք կազմում բալլադի կենտրոնական հերոսի մասին: Բուն բալլադում պատկերված կոնկրետ հանգամանքներում նա դրսևորում է իրեն որպես սոցիալիստական հասարակության գիտակից ու ազնիվ քաղաքացի: Հարազատ Հայրենիքը և սիրած աղջիկը միաձուլվ են նրա սրտում: Նա չի պատկերացնում Հայրենիքն առանց հարազատների և հարազատներին՝ առանց Հայրենիքի: Այս բարձր գիտակցություն արտահայտվելու է նրա մակագրությունը սիրած աղջկա լուսանկարի վրա.

«Հայրենիքի համար, այս աղջկա համար,
Արժի, որ մարդ կովի ու մահանա»:

Այդ գիտակցությամբ է պայմանավորված հերոս կապավորի սրխ-բազործությունը: Երկու գնդերի միջև կապը կտրվում է: Նա հրաման է ստանում վերականգնել: Առաջադրանքը կատարելիս ծանր վիրավորվում է: Կամքի մեծ ուժով նա զսպում է ցավը, արյունաքամ եղած սողում է առաջ, գտնում հեռախոսալարերը և միացնում: Գնդերը վրկին կապվում են իրար հետ: Բայց կապավորն ուշանում է: Նրան որոնում են, և

Գտան նրան: Անշունչ ընկած էր մի քարի,
Ընկած էր արնաքամ, երեսն ի վար,
Եվ զուգ ծայրերն ահա հեռախոսալարի
Ատամներով ամուր սեղմած իրար...

Սառել էր նա իբրև հանգույց մի հասարակ
Հեռախոսի կտրած լարի վրա,
Ատամների ուժով նրան տվել էր կյանք,
Եվ իր արյունն ամբողջ և շունչն իրա...

Գորկու հռչակավոր Դանկոն իր սիրտը վառած որպես ջահ՝ լուսավորում էր մարդկանց ուղին։ Հայրենասիրության այդ բարձր հատկությունը խորացրին և նոր աստիճանի բարձրացրին սովետական հերոս ռազմիկները։ Սիրելով կյանքը և հենց կյանքի համար նրա՛յք շեն խնայում իրենց ուժը, եռանդը, սերը, հարկ եղած դեպքում նաև կյանքը։

«Հետախույզը» բալլադի կենտրոնական հերոսը՝ ռուս քաջարի հետախույզը անասելի տանջանքների է ենթարկվում ֆաշիստ բարբարոսների կողմից։ Ֆաշիստական սպան դիմում է ամեն անմարդկային միջոցի, որպեսզի ստիպի նրան դավաճանել Հայրենիքին։ Ոչ մի կերպ չկարողանալով ընկճել մարտիկին, նա սպառնում է այրել նրան այն ծառի հետ միասին, որին կապված է։ Սակայն անսասան է հայրենասեր հետախույզի կամքը։

— Կորչի՛ թող խավարը, — գռչեց հետախույզը, —
Հենց այդ է մեր իղձը միակ՝
Կովել, սր աշխարհը պահի միշտ իր լույսը,
Ցրվի ձեր խավարը վայրագ։

Հիրիկական ջերմ շնչով բանաստեղծը նկարագրում է հետախույզի հոգեկան, ապրումները, ցավով պատմում նրա մահվան մասին, սակայն ուժեղ կերպով շեշտում է նրա անմահության գաղափարը։

Սի շարք այլ բալլադներում Գ. Սարյանը պատկերում է սովետական ռազմիկների հերոսական սխրագործությունների ուրիշ դրվագներ, դրսևորում կովող մարտիկների և նրանց հարազատների սիրտ և կարոտի զգացումները, վիշտն ու խնդրությունը։

Գ. Սարյանի մի այլ խումբ բալլադները հանդիսանում են անցյալում կատարված դեպքերի և զանազան ավանդությունների ու զրույցների մշակումներ։

Մ. Գորկին, Հովհ. Թումանյանը և ուրիշ կլասիկ գրողներ այս բնույթի նյութերը ռեալիստորեն են մշակում, դնում և լուծում են կենսական նշանակություն ունեցող հարցեր, սոցիալ-քաղաքական պրոբլեմներ։ Այդ նույն ուղիով է ընթացել Գ. Սարյանը ևս, օրինակ, «Դեպի կառավարան» բալլադը գրելիս, որտեղ նա մերկայացնում է արշունարբու Վիլհելմ կայսրին և նրան վաճառված սուլթանական Բյուրքիայի կառավարող շրջաններին՝ հայկական կոտորածներ կազմակերպելու համար։

Սակայն «Փղոսկրյա գեղուհի», «Կիպարիս», «Ջրահարս» և նման բալլադները գրելիս, Գ. Սարյանը շեղվել է ռեալիզմից։ Այդ բալլադ-

ներում չի ղեկավարում ժամանակի ողին, ռեալ կյանքի շունչը: Պոետը այս դեպքում չի հաղթահարել պասսիվ ռոմանտիզմի ողով գրված միջնադարյան բալլադներին հատուկ ֆանտաստիկան, վերացականությունը, հայեցողականությունը: Այս բալլադներում, ինչպես և մի քանի լիրիկական ոտանավորներում («Քո ծննդյան երկունքին» և այլն) բարձրացնող լիրիզմի փոխարեն գերշխող է դարձել անհարկի թախիծը, նրանց մեջ տեղ են գտել գաղափարական սխալներ:

Հայրենական Մեծ պատերազմի պատմական հաղթանակից հետո Գ. Սարյանը հանդես է գալիս որպես սովետական իրականություն, մեր ժողովրդի խաղաղ, ստեղծարար աշխատանքի և ժողովուրդների եղբայրության խանդավառ երդիչներին մեկը դրականության մեջ: Նա ամբողջ ձայնով փառաբանում է հարազատ Հայրենիքն ու Մեծ Հոկտեմբերը («Կենաց երդ» և այլն), «մեր նոր աշխարհը կառուցող» սովետական մարդուն («Ողջունի երգ»):

«Սերմնացանները» բանաստեղծությունն մեջ Գ. Սարյանը պարզ ու պատկերավոր ձևով վերարտադրում է սովետական մարդկանց խաղաղ շինարարական աշխատանքը հետպատերազմյան ժամանակաշրջանում: Բանաստեղծը կոնկրետ ու ընդհանուր օրինակով ցույց է տալիս, որ այն ժամանակ, երբ պատերազմի կատաղի հրձիղները ձգնում են սանձազերծել նոր արյունահեղ պատերազմ, սովետական մարդիկ իրենց ուժին վստահ, հավատարիմ խաղաղության մեծ գործին, զբաղված են ստեղծարար աշխատանքներով: Նրանք, ինչպես բանաստեղծորեն ասում է Գ. Սարյանը, Վաղ արշալույսից մինչև վերջալույս սերմանում են խաղաղություն, ուրախություն, բարօրություն:

Դաշտ դուրս եկան սերմնացաններն արշալույսին
Ու կանգնեցին սև հերկերում խոնավ հողի,
Եվ նետեցին առաջին բուռը միասին,
Նրանք շիթեր էին սփռում լույսի շողի:

Նայեց նրանց առավոտը խաղաղ ու լուռ,
Իր ծիրանին փոքց արևը դաշտերին,
Սերմնացաններն հատիկների հետ բուռ առ բուռ
Խաղաղություն էին սփռում մեր աշխարհին:

...Սերմնացանները նայեցին վերջալույսին,
Ուրախ էին սև հերկերը խոնավ հողի,
Ու նետեցին և վերջին բուռը միասին,
Նրանք շիթեր էին սփռում լույսի շողի:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում Գ. Սարյանը դրել է իր ամենածավալուն գործը՝ «Հրաշալի սերունդ» պոեմը, որտեղ նա պատկերում է հետպատերազմյան կոլտնտեսային գյուղը: Պոեմի հերոսները երիտասարդներ են: Նրանք հաղթել են Հայրենական Մեծ պատերազմում և այժմ ամբողջ ուժով նվիրված են կոմունիստական շինարարության գործին (Արսեն Շիրակունի, Նորայր և Շուշան Փանյաններ, Աշխեն և այլն):

Նրանք իրենց գյուղում կառուցում են մի նոր շենք, ավելացնում են ցանքատարածությունները՝ խոպան և անմշակ հողերի հաշվին: Նոր շենքը կառուցելու հարցում բախվում են հայրը և որդին, պապ նահապետը և Նորայր Փանյանը: Մանր սեփականատիրական հոգեբանությունից չազատագրված պապ նահապետը չի ուզում, որ իր տան և այգու տեղը նոր շենք կառուցեն: Պոեմում կան մի շարք գեղեցիկ նկարագրություններ (օրինակ՝ Ալբյուր — հուշարձանը): Բայց ընդհանուր առմամբ Սարյանին չի հաջողվել ստեղծել կենսական ճշմարտությամբ հագեցած պոեմ, վերարտադրել հետպատերազմյան կոլտնտեսային գյուղի բուռն կյանքը: Պոեմում չեն կերտված գեղարվեստական վառ կերպարներ, որոնք օրինակ ծառայեին ընթերցողի համար: Հեղինակը մեծ մասամբ ինքն է խոսում, պատմում իր հերոսների մասին, փոխանակ գեղարվեստական կոնկրետ պատկերներով ցուցադրելու նրանց գործերը, դրսևորելու նրանց զգացումները: Թույլ է պոեմի կոմպոզիցիան, կան սյուժետային դիժը ծանրաբեռնող, ավելորդ պատմություններ, ինչպես նաև լեզվական թերություններ:

**Ժողովուրդների
եղբայրության գազա-
փարը Գ. Սարյանի
պոեզիայում**

Գ. Սարյանը իր ստեղծագործական կյանքի բոլոր շրջաններում բարձրացրել է ժողովուրդների եղբայրության մշտապես թարմ ու նշանակալից թեման:

Սովետական ժողովուրդների եղբայրությունը՝ բազմազգ սոցիալիստական պետության հիմքերի հիմքը, ստեղծվել և կոմիվել է օտարերկրյա և ներքին բռնակալների դեմ մեր 'երկրի ժողովուրդների մղած պայքարում, անցել է բազմաթիվ դժվարությունների ու փորձությունների միջով, խորացել, ամրապնդվել ու դարձել է անքակտելի: Այս է ժողովուրդների եղբայրությանը նվիրված Գ. Սարյանի երգերի գաղափարական բովանդակությունը:

Բանաստեղծը խորին հպարտությամբ զգացումով է հայտարարում աշխարհին, որ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեվոլյուցիան

իրավահավասարություն և եղբայրություն է բերել մեր երկրի բոլոր մեծ ու փոքր ազգերին ու ժողովուրդներին.

Երգենք մրրկաշունչ նրա պայքարը մեծ,
Եվ հաղթանակը սուրբ մեր սրտերում գրված,
Որ ազգերին վսեմ եղբայրություն բերեց,
Եվ մութ ուղիները դարձան արշալույսված:

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի պատմական հաղթանակի շնորհիվ, դարձել են միաձուլվ եղբայրական ընտանիք: Այս ընտանիքի բոլոր մեծ ու փոքր անդամները հավասարապես հարադատ են բանաստեղծի սրտին:

«Երգ Վրաստանից» բանաստեղծության մեջ նա բուռն խանդավառությամբ երգում է եղբայրական վրաց ժողովրդի ազգային վերածընունդն ու սոցիալիստական նվաճումները, համոզիչ ձևով ցույց տալիս, որ «չքնադադեղ Վրաստանից» հնչող ուրախ ու զվարթ երգերը ցնծությանմբ են համակում մեզ: «Ադրբեջան» բանաստեղծության մեջ նա արտահայտել է հայ և ադրբեջանական ժողովուրդների հարազատությունը:

Հիշեցնելով Սովետական Ադրբեջանի համար ռևոլյուցիոն մարտերում զոհված հերոսներին, բանաստեղծը ասում է.

Եվ ամեն մի վերքը խիզախ քո հերոսի
Ես զգացել եմ իմ սրտում մտերմական:
Նրա անունն ասես թե իմ կրծքից հոսի,
Դու իմ հոգում, իմ սրտումն ես, Ադրբեջան:

Գ. Սարյանը համակող ջերմությամբ երգում է եղբայրական Ուկրաինան («Ուկրաինային»): Սրտի խորը կսկիծով խոսելով ուկրաինական ժողովրդի կրած ժամանակավոր, բայց ծանր տառապանքների մասին՝ ֆաշիստական օկուպացիայի դժվարին օրերին, նա հարազատորդունման հպարտանում է պատմական հաղթանակի առթիվ և իր լավագույն ցանկություններն է հղում Ուկրաինային.

Արդ, անսպառ թող լինի մայրությունը քո հողի,
Սևրունդներիդ երջանիկ՝ ուրախությունը առատ,
Համբուրում եմ իմ հեռվից քո ճակատը հաղթողի,
Ուկրաինա սիրելի, Ուկրաինա հարազատ...

«Գաֆուր Գուլյամին» բանաստեղծությունը գեղարվեստական կոնկրետ և ճշմարտացի դրսևորումն է այն փոխադարձ սիրո և հարազատության, որ գոյություն ունի մեր երկրի տարբեր լեզուներով խոսող, տարբեր վայրերում ապրող, բայց հասարակական նույն շահերն ունեցող մարդկանց միջև։ Ուղբեկ և հայ բանաստեղծները շրջում են Կիևում, դիտում քաղաքի կենտրոնական փողոցը՝ Կրեշչատիկը։ Նրանք ո՛չ թե սովորական այցելուներ են, այլ հանդիսանում են այն մեծ ու միասնական ընտանիքի զավակները, որի անդամն է նաև Ուկրաինան։ Ուղբեկ բանաստեղծը ջալում է ո՛չ միայն իր որդու համար, որը զոհվել է Կիևում, այլև այն աղետների համար, որ պատճառել են Կիևին թշնամիները։ Հայ պոետը լիովին բաժանում է նրա ապրումները, և երկուսը միասին հարազատ զավակների պես հալածվում են ընկալում սիրելի Ուկրաինայի հետպա ծաղկման ու բարգավաճման հետևակարները, որովհետև այն իրենց համար հայրենական տան պես մոտ է ու նվիրական։

Սովետական ժողովուրդների եղբայրության զաղափարը գեղարվեստական մեծ ուժով արտահայտված է Գ. Սարյանի «Նոսոք ռուս ժողովրդին» փայլուն բանաստեղծության մեջ, որը գրված է Հայրենական Մեծ պատերազմի առաջին տարում։ Այստեղ մարմնավորված է մեր երկրի բազմազգ ժողովուրդների համընդհանուր սերն ու նվիրվածությունը իրենց ավագ եղբոր՝ ռուս ակառավոր աղգի նկատմամբ, որի պայծառ միտքը, կայուն բնավորությունը, համբերությունը նոր ուժով դրսևորվեցին պատերազմի տարիներին։

Բանաստեղծության հիմքում դնելով այն պատմական փաստը, որ ռուս մեծ ժողովուրդը արդարացի պատերազմներում միշտ էլ հաղթել է իր հողը ներխուժած օտարերկրյա զավթիչներին, պոետը վառ հավատ է հայտնում, որ այս անգամ ևս թշնամին կպարտվի։ Բանաստեղծական հիանալի սողների մեջ Սարյանը երգում է ՍՍՌՄ ժողովուրդների բարոյական-քաղաքական միասնության, նրանց մեծ բարեկամության հղոր և անխորտակելի ուժը։ Նա մեծ պաթոսով փառաբանում է սովետական իրավահավասար ժողովուրդների անսասան միությունը, որ առհավետ կուրել է Մեծ Ռուսիան։

Գալիս են նրանք՝ Գավթի ցեղը քաջ,
Նվ Տարիելի սերունդներն արի,
Եվ Բոգդանները տոկուն, աննահանջ,
Եվ ուղբեկական քաջերն են գալի,

Կիրգիզն է դալիս տափաստաններից,
Եվ բուր-բուր ցեղերն են դալի,
Որ Մուրոմեցուց թափ առնեն նորից,
Ջարդեն թշնամու ոճմակն ահալի:

«Բաժակ եղբայրության» բանաստեղծության մեջ իմաստալից պատկերով բանաստեղծը ցույց է տալիս, որ ամեն մի ժողովուրդ առանձին վերցրած, ճիշտ է, սար է, այսինքն կայուն, դիմացկուն, տոկուն, բայց միայնակ սար է: Սովետական ժողովուրդները այլևս միայնակ սարեր չեն: Նրանք միացել և կազմել են հավերժ կանգուն «Եղբայրության լեռնաշղթան սովետական աշխարհի»:

Ահա թե ինչու նրանք հզոր են ու անպարտ.

Արդ, թող հոսի Արարատյան դաշտի առատ հին գինին,
Ուրախության բաժակ եմ ես բարձրացնում խանդավառ,
Եղբայրության հզոր ուժով, հայտնի լինի ամենքին,
Հսկարտ ենք մենք, անպարտ ենք մենք, հաստատ ենք մենք և համառ:

Որդիական սիրով ու խանդաղատանքով երգելով Մոսկվան ու Կիևը, Վրաստանն ու Ադրբեջանը, մեր երկրի բոլոր ժողովուրդների մեծ եղբայրությունը, Գ. Սարյանը ինքնուրույն արտահայտչական միջոցներով արտացոլում է ՍՍՄԴ ժողովուրդների «միասնական ընտանիքի զգացումը» (Պ. Տիշինա): Նշված բանաստեղծությունները սովետական քաղաքական լիրիկայի ցայտուն օրինակ են և իրենց հերթին դալիս են ասպացուցելու, որ քաղաքական նպատակասլաց միտքը և խորը էմոցիան ոչ թե բացառում, այլ լրացնում են միմյանց. նրանց սերտ ներդաշնակությունը երկը դարձնում է լիարյուն, ներգործոն ու մնացուն:

* * *



Գեղամ Սարյանն ունի բանաստեղծական իր ուրույն ձայնը և սեփական ոճը: Նրա պոեզիայի համար բնորոշ է խոր հուզականությունը, պարզ, անմիջական և համակիչ խոսքը: Նրա բանաստեղծությունները սահուն են, ռիթմիկ և երաժշտական: Պատահական չէ, որ նրա բազմաթիվ բանաստեղծություններ ձայնագրվել են և դարձել լայն ժողովրդականություն վայելող երգեր («Ողջույնի երգ», «Մարտիկի

հրդը», «Արարատյան դաշտի երգերը» և այլն): Նա վարպետորեն կարողանում է պատկերել հոգեվիճակներ, մարդկային սրտի տարբեր ելևէջներ, ինչպես նաև տարբեր իրադրություններ: Սովետական կյանքի երևույթները բացահայտելիս նա դիմում է պայծառ ու լուսավոր գույներին («Խորհրդային Հայաստան» և այլն), մոայլ գույներով է նկարագրում իմպերիալիզմը, որը լույսի թշնամին է («Հենակները» և այլն), բանաստեղծական գույները միանգամայն փոխվում են, երբ նա պատկերում է կյանքը Սրենքում («Գյուլնարա», «Իրանի»):

Սարյանի լիրիկան սովետահայ պոեզիայի նշանակալից էջերից է: Նա շարունակում է իր փորձն ու տաղանդը նվիրել հայրենի գրականությանը հարստացնելու գործին:

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1945 թվականը մարդկության պատմության մեջ մտավ որպես ֆաշիզմի և ագրեսիայի ուժերի դեմ սովետական ժողովրդի ու մյուս ազատասեր ժողովուրդների մեծ հաղթանակի տարի:

Հաղթականորեն ավարտելով Հայրենական Մեծ պատերազմը, սովետական ժողովուրդը թևակոխեց տնտեսական և կուլտուրական զարգացման հետպատերազմյան խաղաղ շրջանը: Հիկվիդացնելով պատերազմի ծանր հետևանքները, սովետական ժողովուրդը պայքար ծավալեց Սոցիալիստական Հայրենիքի հետագա հզորացման ու ծաղկման համար:

Մեր ժողովուրդը, որ անօրինակ հերոսություն ցույց տվեց պատերազմի տարիներին, նույնպիսի հերոսությամբ լծվեց Կոմունիստական պարտիայի նշած մեծ նախագծումների կենսագործմանը:

Հենվելով ժողովրդի հրաշագործ ուժի վրա, Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը կազմակերպեցին սոցիալիստական տնտեսության նոր, հզոր վերելքը:

ՍՍՍՐ ժողովրդական տնտեսության վերելքը տեղի է ունենում միջազգային աֆիսիսի իրադրության մեջ, երբ իմպերիալիստական լագերը, ԱՄՆ-ի գլխավորությամբ, նոր պատերազմի է նախապատրաստվում Սովետական Միության և ժողովրդական դեմոկրատիայի երկրներին դեմ:

Սոցիալիստական և կապիտալիստական սիստեմների ուժերի փոխհարաբերությունը հետպատերազմյան տարիներին լուրջ փոփո-

խություններ կրեց, հօգուտ սոցիալիզմի ուժերի: Կապիտալիստական սիստեմի շղթայից դուրս ընկան և սոցիալիզմի ուղին բռնեցին Կենտրոնական և Հարավ-արևելյան Եվրոպայի մի շարք երկրներ (Լեհաստան, Չեխոսլովակիա, Հունգարիա, Ռումինիա, Բուլղարիա, Սլովանիա), կազմակերպվեցին Գերմանական և Կորեական դեմոկրատական ռեսպուբլիկաները, պատմական հաղթանակ տարավ չին մեծ ժողովուրդը:

Հետպատերազմյան տարիներին անշեղորեն աճեցին դեմոկրատիայի, խաղաղության և սոցիալիզմի ուժերը: Սովետական Միությունը հանդես եկավ որպես ամբողջ աշխարհում ծավալված խաղաղության մեծագույն շարժման գրոշակակիրը:

Սովետական Միության խաղաղասիրական հետևողական քաղաքականությունը խորապես թափանցել է ամբողջ աշխարհի հասարակ մարդկանց գիտակցության մեջ, ներշնչել ամուր հավատ և նրանց հանել ակտիվ պայքարի՝ ընդդեմ պատերազմի, հանում խաղաղության:

Սովետական կյանքի զարգացման տարբեր էտապներում Կոմունիստական պարտիան հետևողականորեն զբաղվել է աշխատավորության կոմունիստական դաստիարակության հզոր դորժմով՝ սոցիալիստական կուլտուրայի խնդիրներով, ելնելով առաջավոր դադավարների, արվեստի ու գրականության հասարակական վերափոխիչ դերի մասին մարքսիստական ուսմունքից:

Պարտիայի որոշումները գրականության և արվեստի հարցերի մասին

Հետպատերազմյան շրջանում պարտիան կայացրեց մի շարք որոշումներ դրականության, թատրոնի և դրամատուրգիայի, կինոարվեստի, երաժշտության մասին, որոշելով գրականության ու արվեստի նոր խնդիրները ժողովրդի հասարակական կյանքում ու պայքարում, աշխատավորության կոմունիստական դաստիարակության գործում: Համկ(բ)Պ Կենտկոմի որոշումները «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին (1946 թ. օգոստոսի 14), «Դրամատիկական թատրոնների ռեպերտուարի և նրա բարելավման միջոցառումների մասին» (1946 թ. օգոստոսի 26), «Մեծ կյանք» կինոֆիլմի մասին» (1946 թ. սեպտեմբերի 4), «Վ. Մուրադելու «Մեծ բարեկամություն» օպերայի մասին» (1943 թ. փետրվարի 10) հանդիսացան սոցիալիստական կուլտուրայի զարգացման ծրագիր տեղական ժամանակաշրջանի համար:

Սոցիալիզմի արվեստի գլխավոր խնդիրները պարտիան միշտ համարել է ժողովրդին ծառայելը, մշտապես ժողովրդի շահերով ապ-

րելը: «Սովետական դրականության, աշխարհում ամենաառաջավոր գրականության ուժն այն բանի մեջ է,— ասված է Կենտկոմի որոշման մեջ,— որ նա աջնպիսի գրականություն է, որ չունի և չի կարող ունենալ ուրիշ շահեր, բացի ժողովրդի շահերից: Սովետական գրականություն խնդիրն է օգնել պետությանը, ճիշտ դաստիարակել երիտասարդությանը, պատասխանել նրա պահանջմունքներին, նոր սերունդը դաստիարակել առույգ, իր գործին հավատացող, դժվարություններից չվախեցող, դժվարությունները հաղթահարելու պատրաստ»:

Պարտիայի Կենտկոմը դատապարտեց գաղափարալրկության, անկոմայնության, պեսիմիզմի, ֆորմալիզմի, բուրժուական աշխարհի բայթայլով արվեստի նկատմամբ ստորաքարշության արտահայտությունները:

ՀամԿ(բ)Պ Կենտկոմը վճռականորեն դատապարտեց այսպես կոչված «մաքուր արվեստի», «արվեստը արվեստի համար» բուրժուական ռեալիզմի թեորիան, որ քարոզում է արվեստի անկախությունը քաղաքականությունից, ժողովրդի կյանքից: «...Գաղափարալրկության, ապոլիտիկոնության, «արվեստը արվեստի համար» ամեն քարոզ խորթ է սովետական գրականությանը, վնասակար է սովետական ժողովրդի և պետության շահերի տեսակետից»,— ասված է «Զվեզդա» և «Լենին-դրադ» ամսագրերի մասին որոշման մեջ:

Մերկացնելով Զոռչենկոյի և Ախմատովայի գաղափարալրկ, հակաքաղաքական ստեղծագործությունները, պարտիան սովետական գրականության գործիչների առջև դրեց բարձր գաղափարայնության, սոցիալիստական իրականության հետ ավելի սերտորեն կապվելու, ժողովրդայնության հարցերը, գրողների ուշադրությունը բեկեց մեր ժողովրդի կյանքի արմատական հարցերի վրա: Պարտիան խնդիր դրեց ստեղծել դաստիարակչական մեծ ուժ ունեցող այնպիսի ստեղծագործություններ, որոնք մարդկանց հարստացնեն նոր գաղափարներով և զգացմունքներով, վերարտադրեն սովետական մարդկանց հայրենասիրությունն ու ինտերնացիոնալիզմը, վարպետներն կոմունիստական բարոյականության գծերը:

Ռեալիստիկական թատրոնների ռեպերտուարի և նրա բարելավման միջոցառումների մասին» որոշման մեջ դրվեց սովետական մարդկանց լավագույն գծերն ու հատկությունները արտացոլելու անհրաժեշտությունը, արդիական կյանքի արմատական հարցերին արձագանքելու խնդիրը:

Պարտիայի որոշումներում առանձնապես ընդգծվում է, որ սովետական գրականության և արվեստի բարձր զեղարվեստականությանը կարելի է հասնել կյանքի խորը ուսումնասիրությանը, բարձր զաղափարայնության և զեղարվեստական վարպետության զուգորդումով:

Վ. Մուրադեյու «Մեծ բարեկամություն» օպերայի մասին» որոշումը սովետական ամբողջ արվեստի համար բացառիկ կարևորություն ունեցավ այն խմաստով, որ նրանում սպառնիչ պարզությամբ որոշվեցին անցյալի կուլտուրական ժառանգության քննադատական օգտագործման, անցյալի ռեալիստական տրագիգիաների զարգացման հարցերը:

Պարտիան սովետական կուլտուրայի գործիչներին պահանջեց խակական նորարարություն, իրականության խոր ուսումնասիրություն, հարուստ բովանդակությունը զեղարվեստական բարձր ձևի հետ գույակցելու հմտություն:

Սովետական գրականության նոր վերելքը

Համկ(բ)Պ Կենտկոմի որոշումները յուրաքանչյուր սովետական գրողի համար դարձան բարձր զաղափարայնության զենք՝ ընդգեմ սովետական գրականության ոգուն խորթ տենդենցների, ընդգեմ ապոլիտիկության, զաղափարազրկության, անկուսականության, բուրժուական նացիոնալիզմի բոլոր տեսակի զրսևորումների: Պարտիայի սլատմական որոշումները հսկայական դեր խաղացին մեղանում հոգևոր կուլտուրայի տուստություն ստեղծելու գործում:

Առանձնապես ճշանակալից են սովետական ռուս գրականության նվաճումները: Սովետական ռուս գրողները ստեղծեցին մեր ժամանակաշրջանի վեհությունն արտայուղ այնպիսի բարձրարժեք ստեղծագործություններ, ինչպես Ա. Ֆադեևի «Ներտասարդ գվարդիա» (նոր, հիմնովին վերամշակված վարիտնոր), Վ. Աժաևի «Մոսկվայից հեռու», Մ. Բուբեննովի «Սպիտակ կեչի», Ս. Բաբաևսկու «Ոսկի աստղի կավալերը», Գ. Նիկոլաևայի «Հունձ», Բ. Գորբատովի «Դոնբաս», Վ. Կոչետովի «Ժուրբիններ» վեպերը, Ա. Տվարդովսկու, Մ. Իսակովսկու, Կ. Սիմոնովի, Ա. Սուրկովի պոեմներն ու բանաստեղծությունները:

Սովետական գրողներն իրենց ստեղծագործություններում արտայուղ են մեր կյանքի կարևորագույն թեման՝ սովետական մարդկանց ստեղծագործ աշխատանքի թեման, բացահայտում են սովետական մարդկանց նոր բարոյականությունը:

**Հայաստանի
գրողների երկրորդ
համագումարը**

1946 թ. սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 2-ը տեղի ունեցավ Հայաստանի սովետական գրողների երկրորդ համագումարը, արտասահմանյան հայ գրականության պրոգրեսիվ հատվածի մի շարք ներկայացուցիչների մասնակցությամբ:

Համկ(բ)Պ Կենտկոմի որոշումները ուղեցույց հանդիսացան համագումարի ամբողջ աշխատանքի, նրա դադափարական ուղղության համար, արձագանք գտնելով ինչպես հիմնական և հարակից ղեկուցումներում, այնպես էլ համագումարի մասնակիցների ելույթներում:

Ամփոփելով վերջին 12 տարիների (1-ին և 2-րդ համագումարների միջև ընկած ժամանակաշրջանի) սովետահայ գրականության անցած ուղու արդյունքները, համագումարը միաժամանակ բացահայտեց դադափարական թերություններ ու սխալներ, որոշ գրողների երկերում հանդես եկած ապոլիտիզմի արտահայտությունները, պատմական անցյալը իդեալականացնելու առանձին տենդենցները:

Համագումարը սովետահայ գրողների ուշադրությունը բևեռեց դադափարական սխալների դեմ անհաշտ պայքար մղելու անհրաժեշտության, կյանքի հետ սերտորեն կապվելու: Սոցիալիստական ռեալիզմի մեթոդով զեղարվեստական բարձրարվեստ երկեր ստեղծելու հարցերի վրա, երկեր, որոնք բավարարեն ժողովրդի աճող պահանջներին:

**Հետպատերազմյան
շրջանի սովետահայ
պոեզիան**

Հետպատերազմյան ժամանակաշրջանի պոեզիայի առաջատար մոտիվները դարձան հայ ժողովրդի մասնակցությունը մեր երկրի շինարարական մեծ պրոցեսներին, սովետական կենարար հայրենասիրությունը, միասնական ընտանիքում ապրող ժողովուրդների բարեկամությունը, խաղաղության համար մղվող պայքարը, սովետական մարդու հոգեկան և դադափարական աճման պրոցեսը: Ավագ և երիտասարդ սերնդի բանաստեղծները ստեղծեցին դադափարական ակտիվությամբ տոգորված, ժողովրդին հարկավոր պոետական արժեքավոր երկեր: Պոեզիան աչքի ընկավ ոչ միայն թեմաների ու մոտիվների, այլև պոետական ժանրերի բազմազանությամբ. գրվեցին մեծ թվով պոեմներ, բալլադներ, չափածո ակնարկներ, լիրիկական, խոհական բանաստեղծություններ, առակներ և այլն:

Բանաստեղծական խոշոր կտավով՝ պոեմով հանդես եկան Ն. Զարյանը («Արմենուհի»), Գ. Սարյանը («Հրաշալի սերունդ»), Հ. Շիրազը

(«Մեր գյուղերի անունները»), Ալավինին («Սակրավոր Սաքոն») և մի շարք երիտասարդ գրողներ:

Ստեղծված պոեմների մեծ մասը նվիրված են գյուղական իրականության պատկերմանը. բանաստեղծների միտքը բավարար չափով չի թափանցել մեր կյանքի մյուս բնագավառները:

Հայրենական պատերազմում հաղթանակ տարած սովետական ղեկավորի վերադարձը խաղաղ շինարարական աշխատանքի, կոլտնտեսային գյուղացիության աշխատանքային սխրագործություններն են կազմում «Սակրավոր Սաքոն» երկի բովանդակությունը: Բնութեւսով կյանքի որոշ անպակաս երեւոյթներ, Ալավինին պատկերել է կոլտնտեսային գյուղի մարդկանց աշխատանքային հարաբերություններն ու նոր հույզերը:

Պոեզիայի մեջ իր դեղսովեստական բարձր արժանիքներով աչքի է ընկնում Հ. Շիրազի «Մեր գյուղերի անունները» լիրիկական պոեմը:

Սոցիալական-քաղաքական ծանր պայմանները իրենց կնիքն են դրել մեր գյուղերի անունների վրա, որոնք հիշեցնում են պապերի ու հայրերի դառն, ստրկական անցյալը, կարիքի ու հողի տակ կքած հայ գյուղի դրությունը: Գյուղերի անունները, ինչպես ճիշտ բնութագրում է բանաստեղծը «վերքերն են մեր պատմության»:

Անցյալում հայ գյուղին տրված անունները նրա խեղճության ու աղքատության իսկական դնահատականն են: Յուրյ տալով գյուղերի անունների փոփոխությունը Մեծ Հովտեմբերից հետո, Շիրազը այդ պատմական փաստով ընդգծում է գյուղացու զգացմունքների և դիտակցության մեջ կատարված հեղաբեկումը:

Այս շրջանում մի քանի պոեմով հանդես եկավ երիտասարդ բանաստեղծ Վահագն Դավթյանը: Մտահղացման թարմությամբ ու պատկերավորությամբ աչքի է ընկնում նրա «Տուրուխանյան երկրում» պատմա-նեոլուցիոն պոեմը, որի նյութը Ի. Վ. Ստալինի և Սուրեն Սպանդարյանի կյանքն ու պայքարն է Տուրուխանյան արքայազնի դեմ՝ 1915 թ.: Պոեմի նախերգի մեջ պատմվում է, թե ինչպես Ստալինն ու զիշերին, Կրեմլի իր առանձնասենյակում, «Հազար փոփոց, հազար մաքից» հետո, հիշում է անցյալը՝ 1915 թ. արքայի տարիները, իր բարեկամ Սուրեն Սպանդարյանին: Ապա բանաստեղծը ռեալիստական մի շարք պատկերներով նկարագրում է արքայականների կյանքը, Սուրեն Սպանդարյանի հանդիպումը Ստալինին, նրանց համատեղ ռեոլուցիոն աշխատանքը:

Այնուհետև Վ. Դավթյանը դրեց «Ճանապարհ սրտի միջով» պոեմը, որը նվիրված է հայ ժողովրդի խիզախ զավակ, Սովետական Միության Հերոս Հունան Ավետիսյանի սխրագործությունը:

«Ճանապարհ սրտի միջով» պոեմի բուն առանցքը կազմող դրվագը՝ ավագ սերժանտ Հունան Ավետիսյանի կողմից թշնամու հրակնատին հասնելը, մարմնով դնդաքրի փողը ծածկելը և մեր հարձակման համար ճանապարհ բացելը, արդեն ինքնին ղեղեցիկ հերոսապատում է, որտեղ մեծ ուժով բացահայտվում են սովետական մարդու հոգին, նրա հայրենասիրական զգացմունքները, արիության և անսպառ լավատեսության գծերը:

Հիմք ունենալով այս ճշմարիտ, իրական հերոսությունը, հեղինակն այն դիտել է որպես մեր սոցիալիստական մեծ Հայրենիքով, նրա խաղաղ կյանքով ու բնաշխարհով, այսօրով ու ապագայով իմաստավորված հերոսություն և դրսևորել սովետական մարդկանց բարձր հատկությունները:

Գրվածքում բանաստեղծը պատմությունն առաջ է տանում հետաքրքիր ձևով. «Նախերգանքը» ընթերցողին տանում է Զանգլիի ափը, ուր հեղինակը մի մանուկի պատմում է Հայրենական Մեծ պատերազմի հերոսների անմահության և փառքի, նրանց վեհ ու անբժի կյանքի մասին: Հերոսների հիշատակին կառուցված աղբյուր-հուշարձանների շարքում, Մատրոսովի կողքին կանգնած է նաև հայ ժողովրդի դուցազուն զավակը՝ Հունան Ավետիսյանը, որ «Ճամփան է մահվան փակել իր լայն կրծքով և իր սրտի միջով ճանապարհ է բացել ղեպի հաղթանակ ու խաղաղություն»:

Հունանը՝ Զանգեզուրի Մավ գյուղացի ազնիվ հողագործը, մանկության տարիներին «փոքրիկ, բատրակ տղան» դիտակցում է, որ իր երջանկությունը նվաճվել է արյունով, որ բազմաթիվ մարդկանց կյանքի գնով նվաճված խաղաղ կյանքը պետք է պաշտպանել անձնազոհությամբ, մեռնել՝ եթե այդ պահանջում են Հայրենիքի շահերը: Սովետական կյանքը լայնացնում, ընդարձակում է Հունանի աշխարհը, բացում նաև առջև լայն ճամփաներ:

Դու իմացար, որ մեծ, մեծ է աշխարհն արար,
նվ աշխարհում այդ մեծ ճամփաներ կան այնքան,
Որոնք փովեն պիտի քո ոտքերի առաջ:
Որ աշխարհը միայն ձեր ձորը չի կապույտ,

Ձեր անտառը փարթամ ու դեառակը ձորի,
Որ քեզ, Մավում ծնված դեղջուկի պարզ որդուդ,
Ժառանգված է ամբողջ մեկ վեցերորդն հողի:

Մեծ Հայրենիքի այս զգացողությունը, սովետական մարդու պատմական դերի դիտակցումն ու նոր հողերանութիւնը, — ահա Հունանի հերոսութեան իսկական նախադրյալները:

Բանաստեղծի մտապատկերներում հերոսը պատկերանում է մանկութեան տարիներին՝ լծափայտին նստած, աշնան թաց հողերը ակօսելիս, իր հասակակից պատանիների հետ Զաքար պապի պատմած հեքիաթներն ոնկնդրելիս, հետո արդեն հասուն տարիքում՝ դպրոցում, գյուղական աշխատանքում՝ կոլանտեսային դաշտերը հերկելիս:

Հունան Ավետիսյանի կյանքի պատմութեան թելը հեղինակը հասցնում է մինչև Հայրենական պատերազմի շրջանը: Հակառակորդի պաշտպանական «Կապույտ գծի» դեմ դիմաց կանգնած է հերոսն իր ընկերների հետ, լցված ատելութեամբ դեպի հարազատ Հայրենիքն ավերող թշնամին: Բանաստեղծն այստեղ չի տալիս հողագործից զինվոր դառնալու բարդ պրոցեսը: Նա կանգ է առնում միայն Դուգայա լեռան լանջին Հունանի կատարած սխրագործութեան վրա, ցույց տալով, թե փորձութիւնների ժամին ինչպես է հերոսը տիրապետում ատելութեան գիտութեանը, ինչպես է հասունանում նրա միտքը և ընդարձակվում փորձը:

Բանաստեղծի գրչի տակ պատմական իրողութեան հերոսական մեծ էպիզոդը՝ Հունանի անմահ սխրագործութիւնը, վերականգնանում է որպես սովետական ժողովրդի երիտասարդ սերնդի գործերի ընդհանրացում:

Սովետահայ լիրիկան աչքի ընկալ մեր իրականութեան, մեր մարդկանց ստեղծարար աշխատանքին ակտիվորեն արձագանքելու հատկութեամբ: Միաժամանակ բանաստեղծները անդրադարձան նաև Հայրենական պատերազմի իրագործութիւններին, արտահայտեցին պատերազմող զինվորի ապրումները, դպրոցական պայուսակը ռազմերթային պայուսակով փոխարինած և պատերազմի բուցերի մեջ մտած սերնդի հոգեբանութիւնն ու բարոյական ուժը: Պատերազմի փոթորկոտ ուղիներով անցած, հոգեպես ու բարոյապես ամրացած, հաղթանակը ճաշակած այդ սերնդի գեղարվեստական պատկերն է տրված Հր. Հովհաննիսյանի «Մեր սերնդի դիմանկարը» բանաստեղծութեան տողերում:

Նա խորհում եմ. կանցնեն էսլուսի պես
Մեր պայքարի, ջանքի տարիները,
Եվ գալիքի մարդը պայծառատես
Նրկար կզննի մեր պատկերները:

Կտեսնի մեր դեմքը թղթի վրա,
Մարմարիոնի ճերմակ բարեկյեֆին,
Մեղալիոնի վրա ոսկեզրահ,
Պաստառների վրա, գրքերում հին:

Իսկ մեր դեմքը այնտեղ զուսպ է ու քաջ,
Անգամ ունի անխոս մի խստություն,
Մի դեմք, որ տեսել է բախտից առաջ,
Ամեն տեսակ տարափ, կրակ ու ձյուն:

Հր. Հովհաննիսյանն իր հրկու ժողովածուներում («Իմ կյանքի երգը» — 1948 թ., «Նրկրորդ հանդիպում» — 1951 թ.) արտացոլում է իր սերնդի կյանքում տեղի ունեցած բեկման ժամանակաշրջանը, երբ պատանու ձեռքն առաջին անգամ զգաց մարտական ավտոմատի ձգանի սառնությունը, իսկ սրտում հասունացավ այն զինվորի արիությունը, որը թողած հարազատ վայրերը, միացած եղբայրական ժողովուրդների դավակներին, պաշտպանեց իր սոցիալիստական Մեծ Հայքները, նրա նվաճումները, երջանիկ մանկությունը, բնության գեղեցկությունները:

«Բալլադ պատանու և ձիու մասին», «Թիթեռ», «Երգը», «Սոնետ հիշատակի», «Գեներալը», «Վերադարձ» և ուրիշ բանաստեղծությունների գլխավոր հերոսներն են՝ զինվորը, գեներալը, դթություն քույրը, թիկունքում նրանց սպասող մայրը, հարեանը, սիրած աղջիկը, որոնց պատկերման մեջ արտացոլվել է սովետական հայրենասիրության կենդարար զգացմունքը:

Սովետական մարտիկի ապրումները, պատերազմի կենցաղն ու պեյզաժներն են ցուցադրում Հ. Սահյանի, Վ. Դավթյանի, Ս. Հարությունյանի, Պ. Սևակի մի շարք լիրիկական բանաստեղծությունները:

Իրականության շունչը կրող բանաստեղծական հաջող էջեր կան Ս. Տարոնցու «Ստալինգրադ» գրքի (1951 թ.) համանուն շարքում: Ս. Տարոնցին հուզիչ տողեր է նվիրել հերոս քաղաք Ստալինգրադին, արտացոլելով նրա ռազմական սխրագործության մի քանի կողմերը, խիզախ ստալինգրադցիների հերոսությունն ու աննկուն ոգին:

Ս. Տարսնցու «Հերոսի կտակը», «Ստալինդրագյան մականգրության», «Ռուբեն Ռուիս Իբարրուրի», «Մայրիկ» բանաստեղծությունները արտացոլում են հայրենասիրական ճշմարիտ զգացմունքները:

Խաղաղության սյուզիան

Սովետական բազմազգ պոեզիան մեր սոցիալ-լիստական Հայրենիքի անցած փառահեղ ուղևորության ընթացքում լինելով, ինչպես իր սկզբնավորման առաջին շրջանում, այնպես էլ հետագա զարգացման բոլոր փուլերում առաջադիմել է ու ամրապնդվել խաղաղության գաղափարով: Հայ բանաստեղծները արձագանքում են խաղաղության համար մղվող պայքարին, ավելի հաճախ անդրադառնալով Մայսիկովսկու պոետական գանձարանին, «Պրիշը սվինին հավասարեցնելու» պատգամի լույսի տակ ղնահատում պոեզիայի դերն ու նշանակությունը կայուն և երկարատև խաղաղության պաշտպանության գործում: Խաղաղության երգը հնչում է որպես սովետական ժողովրդի նվիրական ցանկությունների հզոր արձագանք: Ն. Զարյանի և Գ. Էմինի, Հ. Շիրազի և Ս. Կապուտիկյանի, Հր. Հովհաննիսյանի և Վ. Դավթյանի, Հ. Սահյանի և Սարմենի խաղաղակույր լիրիկան աչքի է ընկնում մարտական ավշումով: Այդ լիրիկայի միջից խրոխտ լսվում են Վլ. Մայսիկովսկու ծանոթ խոսքերը.

Բուլկիի աղերս չէ խաղաղության մեր հրավերը,
Մենք կառուցել ենք ուղում կրկնակի ուժով:

Կառուցման ու աշխատանքի հերոսիկան, մեր ծաղկող ու հզորացող երկիրը, նրա հողն ու բնությունը հայ բանաստեղծների ստեղծագործության հիմնական տրամադրությունն է: Հր. Հովհաննիսյանը «Մայր» բալլադում ստեղծել է խաղաղության համար պայքարող սովետական կնոջ դեղարվեստական կերպարը: Մայրը պատերազմում կորցրել է երեք որդիներին, սակայն կարողանում է դիմանալ բոլոր ցավերին, իր հոգու ամրությամբ և լայնախոհ մտքով հաղթում է վիշտը, դառնում խաղաղության մարտիկ.

Ուրախ ուժեղ է կյանքը ցավից,
Ցրում է նա վիշտ ու թախիծ,
Հաղթում անգամ մահին.
Նվ մայրն ապրեց երկրի վրա,
Երեք ջահ են վառվում նրա
Կյանքի ճառագայտահին:

Սովետական պոեզիան մեր կառուցման շինջ երազանքը հակադրում է կապիտալիստական նեխվող աշխարհին, մերկացնում խաղաղության դեմ միջազգային ռեակցիայի կազմակերպած դավադրությունը: Աշոտ Գրաշին «Լույսը սահմանի վրա» շարքում մերկացնում է «գորշ մզկիթներ», «խուլ խրճիթներ», «երկանիվ սալերի» Թյուրքիայի ժամանակակից կառավարողներին, որոնք երկիրը դարձրել են Ուղ-Ստրիտի կավածքը, վաճառում են ժողովրդի ազգային ինքնությունը: խուլ, աշխատավորությանը դատապարտել են ծալրահեղ թշվառության և կարիքի:

«Լույսը սահմանի վրա» գործում պատմվում է, թե ինչպես խավար գիշերին Արփաշայի ասիով երեք հովիվներ ճամփա են փնտրում և չեն դտնում այն:

Այդ պահին հանկարծ մշուշի միջից,
Ինչպես կենդանի աստղեր անհամար,
Լենինականի լույսերը վճիտ
Վառվում են կարծես թե նրանց համար:

Մեր հայրենիքն է լուսավորում բոլոր ժողովուրդների ճանապարհը,— այս միտքը Գրաշու բանաստեղծության հիմնական գաղափարն է:

Մարտ Մարդարյանի «Մոր ձայնը» ժողովածուում զետեղված բանաստեղծությունները աչքի են ընկնում զգացմունքների անմիջականությամբ ու անկեղծությամբ: Այդ անկեղծությունն էլ պայմանավորել է խոսքի այն բնականությունն ու գեղարվեստական պատկերի կոնկրետությունը, որոնց բանաստեղծուհին հասել է 1945 թ. հրատարակած ժողովածուից հետո:

Մի ժամանակ մանկության հիշողությունները ռոմանտիկորեն իդեալականացնող, անցյալի հեքիաթներին դերված, կյանքի հրատապ խնդիրներից մի կողմ քաշված ու առաջին սիրո «սպիտակ շուշանաթերթը» անրջող բանաստեղծուհին շրջադարձ է կատարում սովետական ընթերցողին հարկավոր արվեստի ուղղությամբ:

«Մոր ձայնը» ժողովածուն դրա վկայությունն է: Ինչի մասին էլ դրի բանաստեղծուհին, ինչ թեմա էլ շոշափի, բոլոր դեպքերում էլ նա հանդես է գալիս մոր անունից, հարազատ երկրի բովանդակ առօրյա-յով ապրող ու շնչող սովետական կնոջ անունից:

Ժողովածուի հիմքը հանդիսացող «Մոր ձայնը» բաժինը նվիրված է խաղաղության թեմային: Այստեղ նա հանդես է գալիս աշխարհի

ամենաբարի արարածներին՝ մայրերի անունից, նրանց համար բնորոշ ու բնական ուժեղ զգացմունքներով:

Այդ մենք ենք գալիս
Ամենապայծառ մեր շքնաղ բևույթ,
Մեր մանուկների խարտյաշ խորերով,
Արարածներս ամենաբարի՝
Մայրերն աշխարհի:
Ու զնում ենք մենք ամենահեռուն
Անվերջ, անհատնում ուժով մայրական
Ու տանում ենք մենք մեր որդիներին
Դեպի աշխարհի պայծառ ապագան:

Մարդարյանի երգերում խաղաղության պաշտպանությունը պատ-
սիվ ու անզոր ցանկություն չէ, այլ ամենից առաջ՝ ակտիվ պայքար
ընդդեմ պատերազմի հրձիգների, որոնք աշխարհը վեր են ածել կու-
տակումների շուկայի և իրենց «վառողաբույր շնչով ցանկանում են
ավերել հողագունդը, դարձնելով այն «մոխիր ու կրակ»:

Բանաստեղծուհու լիրիկական հերոսուհին համոզված է, որ խա-
ղաղությունը կհաղթի պատերազմին և խաղաղության կողմնակիցների
դորասյան մեջ դիտի զինվորի իր տեղը: Ահա թե ինչու բանաստեղծու-
թյուններում արտահայտված բազմազան զգացմունքների՝ սիրո, ցաս-
ման, ատելության, կարոտի, հրճվանքի և այլն, շղթայում ամենևին
չկան սարսափի ու սղեքսանքի մոմենտներ:

Գ. ԷՄԻՆԸ (Կարլեն Մուրադյան) ծնվել է 1918 թ.

Աշտարակում, ուսուցչի ընտանիքում: 1936 թ.
նա ավարտում է միջնակարգ դպրոցը, իսկ 1940 թ. Երևանի պոլիտեխ-
նիկական ինստիտուտի հիդրոտեխնիկական ֆակուլտետը, ստանալով
ինժեների կոչում: Նույն 1940 թ. լույս է տեսնում Էմինի առաջին ժո-
ղովածուն՝ «Նախաշալիղը»:

1942 թ. լույս է տեսնում Էմինի «խաղաղության ծխամորճը» ժո-
ղովածուն, որն ամփոփում է գերազանցապես պատերազմական թե-
մաներով գրված բանաստեղծությունները:

1946 թ. Էմինը հրատարակում է «Նորք» ստվար ժողովածուն:
1949—1950 թթ. Էմինը սովորում է Մոսկվայի գրական ինստիտուտին
կից հայ գրողների ստուդիայում:

«Նոր ճանապարհ» գրքի համար (1951 թ.) Էմինն արժանանում է
երրորդ աստիճանի Ստալինյան մրցանակի:

Գ. Էմինի առաջին գիրքը՝ «Նախաշավիղը» վկայում է նրա պոետական տվյալների մասին, թեև շատ բանաստեղծություններ հիշեցնում էին սովետահայ պոեզիայի արդեն հայտնի դործերի մտահղացումները: «Խաղաղության ծխամորճը» և «Նորք» ժողովածուները նույնպես իրենց վրա կրում են դրական ազդեցությունների շմարսված հետքերը: Մասնավորապես «Նորք»-ում արտահայտվում են նեղ անձնական, ապոլիտիկ մոտիվներ, անկազմակերպ զգացմունքներ: Այս գրքում, չնայած մի շարք թարմ բանաստեղծություններին, գերակշռում են ոչ թե կյանքից, այլ գրքերից եկող մոտիվները և քաղքենիական տրամադրությունները:

Գևորգ Էմինի «Նոր ճանապարհ» ժողովածուն որոշ չափով ամփոփում է այն ուղին, որով անցել է բանաստեղծը, հաղթահարելով նախորդ գրքերի գաղափարական-գեղարվեստական լուրջ թերությունները և միաժամանակ ցույց է տալիս, որ Էմինը գտել է իր ճանապարհը սովետահայ պոեզիայում: Դա հասարակական-քաղաքական հնչելություն ունեցող, կյանքում ակտիվ դեր կատարող լիրիկայի ճանապարհն է: Այդ լիրիկայի գաղափարական էություն գեղագիտական հաջող ձևակերպումը բանաստեղծը տվել է «Խմ գործը», «Հինթերցողը», «Ճարտարապետ ընկերս», «Էսթեթին» գործերում: Նա սուր քննադատության է ենթարկում կյանքից կտրված, պոեզիան իրենց «հոգու դաշակը» համարող էսթետներին, հնությունների և արևելյան էկզոտիկայի սիրահարներին, գրելով.

Հեռագրի նման պիտի երգը լինի,
Նրա նման կտրուկ, կարճ ու ազդու,
Որ բերի մի ցնցող ուրախություն կամ վիշտ
Նվ շեշտակի խրվի սիրտը մարդու:

Կյանքում, ինչպես նաև պոեզիայում սուր պայքար է մղվում հնի և նորի արտահայտությունների միջև և մշակվում են բոլորովին նոր հասկացողությունների ժողովրդի խոհերով ու զգացմունքներով հարստացվող իսկական գեղեցիկի մասին: Բանաստեղծին համարելով «ապագայի թղթակիցը սեփական» և դնելով նոր երգի պահանջը, Գ. Էմինը միաժամանակ փորձել է լուծել բանաստեղծական տրադիցիոն պատկերների վերանայման ու վերախմաստավորման հարցը: Գեղեցիկ են Զվարթնոցն ու Գեղարդը, Սևանա կապույտ լիճն ու Արարտի գագաթները, գրավիչ են մեր պատմական հնությունները, մեր

Հայրերի ստեղծած կոթողները: Սակայն անցյալի հետ հաղթական մրցման մեջ են Սեանդէսի ստորերկրյա հիդրոկայանը, Սովետական Հայաստանի մայրաքաղաքի լուսավոր, լայն պողոտաներն ու նոր գեղեցկությունները, սոցիալիստական կյանքի ձևերն ու սովետական մարդկանց ստեղծագործական աշխատանքը:

Գ. Էմինի ժողովածուն աչքի է ընկնում թեմաների բազմադանու-թյամբ, կոնկրետություններ և թարմություններ: Նրան հետաքրքրում են մեր ժողովրդի կյանքի էական հարցերը՝ կոմունիզմի շինարարությունն ու պատմական հեռանկարները, սոցիալիստական աշխատանքն ու բնության վերափոխումը, սովետական մարդու հայրենասիրությունն ու խաղաղության համար մղվող պայքարը:

Գ. Էմինը երգում է «30 դար ապրած, բայց տակավին 30 տարեկան» Հայաստանի ջահելությունը, ռուսական տրակտորային գործարանը, ուկրաինական բնությունն ու Դնեպրը, Ղրիմի պիոներների խաբույկը, Կարմիր հրապարակի շքերթը, որով անցնում են բոլոր ժողովուրդների ճանապարհները, սովետական ծաղկող կյանքն ու մոտիկ ապագան:

Նա գովերգում է այն ուղին, որով սովետական ժողովուրդը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ դնում է դեպի կոմունիզմ: «Նոր տարվա բաժակաճառ», «Չեչաբինսկի տրակտորային գործարանում» և մի շարք ուրիշ գործերում Էմինը կոնկրետ, իրական փաստերի միջոցով արտահայտում է մեր կյանքի առաջընթացի գաղափարը:

Դեպի կոմունիզմ են ձգտում ոչ միայն սովետական մարդիկ, այլև աշխարհի ամբողջ աշխատավոր մարդկությունը: Պոետական սքանչելի վավերաթուղթ է Էմինի «Կարմիր հրապարակում» երկը, որտեղ նա վարպետորեն ու ինքնատիպ պատկերներով նկարագրում է ժողովուրդների երթը դեպի կոմունիզմ: Կարմիր հրապարակի տոնակատարու-թյանն առաջին անգամ մասնակցում է ազատագրված չին ժողովրդի ներկայացուցիչը: Նա այն վայրում է, որտեղ երեսուն տարի առաջ շքերթին մասնակցեց հայ ժողովուրդը, որտեղով անցել և անցնելու են աշխարհի բոլոր ազգերը: Ամբողջ բանաստեղծություն միաբեր գեղեցիկ կերպով եզրափակվում է այս տողերով.

Բոլոր ազգերը աշխարհի հերթի են գրված

Այս շքերթին,

եվ այս հրապարակներն արդեն նեղ են մեր

երթի համար հաղթական:

«Ծաղկիր, իմ Հայաստան» ենթաբաժնի գործերում էմինը Սովետական Միության ժողովուրդների ընդհանուր պայքարի ֆոնի վրա իմաստավորում է Հայաստանի պատմության թեման, նրա անցյալով, ներկայով ու ապագայով: Այսօրվա Հայաստանը էմինի ստեղծագործության մեջ վերածնված նոր աշխարհն է, որն իր աղբյուրի սոցիալիստական վերածնունդին հասավ Կոմունիստական պարտիայի շնորհիվ, ուստի ժողովրդի օգնությամբ: Հոկտեմբերի արևն է շողում Հայաստանի բախտի երկնքում, Հոկտեմբերը ազատության բերեց հայ ժողովրդին («Հոկտեմբերին»), Կոմունիստական պարտիան փրկեց նրան ֆիզիկական բնաջնջման վտանգից: «Բալլադ ձկնորսի մասին» երկում էմինը դժագործ է Լենինի անմոռանալի կերպարը: Հեռավոր Կապրիում Վ. Ի. Լենինը մտերմաբար զրուցում է թյուրքական յաթաղանից հաղթված փրկված հայ ձկնորսի հետ, լսում է նրա տխուր երգը և հավատ ներշնչում լավագույն ապագայի նկատմամբ:

Հայ ձկնորսը վշտացած է իր ժողովրդի դառն ճակատագրով, երազում է հայրենիք վերադառնալու մասին: Մեծ Լենինը ասում է, որ մոտեցող ռեոլյուցիան լուծելու է նաև «Հայկական հարցը».

Մենք քեզ հետ կիոխենք այս աշխարհը հիմքից,
Եվ ևս հյուր կգամ քո նոր տունը:
Նրբ վերջին սինյորի հետ չքվեն կյանքում այս
Պատերազմը,
Գաղթն
Ու ավարը,
Բոլորի հետ դու էլ կդառնաս քո տունը:

Գ. էմինի ստեղծագործության դադափարակա՞ն աճը բարերար ազդեցություն է թողել նրա արվեստի վրա: էմինի գրական աճին զգալի չափով նպաստել է ռուսական ժամանակակից պոեզիան, որից նա սովորել է խոսել մեր կյանքի էական հարցերի մասին, շտաբվել կողմնակի թեմաներով, իրեն միշտ զգալ կյանքի հորձանուտի մեջ:

Նս այնպես եմ ելնում իմ տնից՝
Կարծես թե մտնում եմ իմ տունը,
Մեր երկրում ամեն ինչ մոտ է ինձ,
Ամեն ինչ ինձ սիրով ժպտում է:

Այս ճշմարիտ զգացողությունը սովետական ամբողջ պոեզիայի հատկությունն է, որն իր նյութը, իր թեմաները քաղում է կյանքից,

խմաստավորելով երևույթները, բացատրում է դրանց ներքին բովանդակությունը: Այս զգացողությունն օգնում է բանաստեղծին կոնկրետ երևույթից դնալ դեպի ընդհանրացումը: «Խարույկ» բանաստեղծության մեջ նկարագրվում է երեխաների ուրախությունը Ղրիմի մի ավերված գյուղոցական շենքի առաջ, խարույկի շուրջը: Ամեն մի երեխա լավ գիտի, որ բոցն այս խարույկի «պատերազմի թեժ բոցից է խլված»:

Խարույկի պատկերը բանաստեղծության մեջ դառնում է խաղաղության սիմվոլը: Դեպքը առիթ է դառնում բանաստեղծական այսպիսի ընդհանրացման.

Լսում եք, հենց դուք, որ այս աշխարհում
Ուղում եք նորից պատերազմ սերել,
Ինչ զենքեր էլ որ ստեղծեք մահու
Նվ ինչ աղետ էլ փորձեք մեղ բերել,
Չեք երկնի ոչինչ՝ ավելի զորեղ,
Քան բոցն այս՝ խաղաղ հզորությամբ լի:

Պետք է ասել, սակայն, որ Գ. Էմինը իր վերջին շրջանի գործերում տուրք է տալիս ֆորմալիստական «դյուտարարություններին», գրում է չոր, անհույս, վարակիչ ուժից զուրկ ոտանավորներ: Մասնավորապես շատ են նրա մոտ իսկական խոհերին խառնված անկիրք դատողությունները, որոնք ազդում են բանաստեղծության էմոցիոնալ կողմի վրա: Հաճախ էլ նրա գործերում կյանքի էական երևույթները փոխարինվում են երկրորդական, ոչ էական մանրուքներով:

ՍԻՆԿԼԱ ԿԱՊՈՒՏԻԿՅՈՒՆ

Սիլվա Կապուտիկյանը ծնվել է 1919 թ. Նրեվանոմ: Սկսել է գրել 1934 թ., առաջին բանաստեղծությունները տպագրելով «Պիոներ կանչ» թերթում: Սովորել է Երևանի Կրուպսկայայի սնվան միջնակարգ դպրոցում, իսկ աչնուհետև Պետական համալսարանի ֆիլոլոգիական ֆակուլտետում, որն ավարտել է 1941 թ.: 1949—50 թվականներին Ս. Կապուտիկյանը սովորել է Մոսկվայի Մ. Գորկու անվան գրական ինստիտուտին կից հայ գրողների ստուդիայում:

Ս. Կապուտիկյանի առաջին գրքույկը՝ «Օրերի հետ» խորագրով լույս տեսավ 1945 թ.: Այդ ժողովածուի բոլոր գործերում չէր, որ բանաստեղծուհին «Օրերի հետ» էր՝ մեր կյանքի հետ: Կապուտիկյանի շատ բանաստեղծությունների վրա զգացվում էր գրական

խորթ տրադիցիաների բեռը: Զիշտ է, այն ժամանակ նույնպես նա գրել է կենսական ճշմարտությամբ հագեցված դործեր Հայրենիքի, մանկության, պատերազմող մարտիկների ապրումների մասին («Ռազմի օրեր» բաժինը), սակայն զգալի տարր էին կազմում անկումային տրամադրությունները, հոգեկան ճնշվածության մոտիվները, անորոշ, մշուշապատ խոհները: Պետք էր այս բոլորը հաղթահարել՝ իսկապես կյանքի հետ լինելու համար: Հաջորդ՝ «Ձանգվի ափին» (1947 թ.) գրքում դրվում է գաղափարական ու գեղարվեստական բեկման սկիզբը: Բանաստեղծուհին ըմբռնում է, որ երգը մարդու համար պետք է լինի ճանապարհ բացող դրոշ («Խոհ զնացքի մեջ»): Լսելով քննադատությանը, Ս. Կապուտիկյանն իր ստեղծագործության առողջ կողմերն ավելի է խորացնում «Այս իմ երկիրն է» (1949 թ.) գրքում:

1951 թ. հայերեն և ռուսերեն լեզուներով լույս տեսավ Ս. Կապուտիկյանի «Իմ հարազատները» գիրքը, որի համար բանաստեղծուհին արժանացավ երկրորդ աստիճանի Ստալինյան մրցանակի: Ս. Կապուտիկյանն այս գրքով հաստատապես վանգնեց սոցիալիստական ռեալիզմի ճանապարհի վրա, գտավ իր սեփական պոետական ձայնը:

Ս. Կապուտիկյանի բանաստեղծությունները տողերված են հարազատության զգացմունքով դեպի մեր երկրի տարբեր ծայրերում ապրող ու աշխատող մարդիկ, դեպի նրանց կյանքն ու պայքարը: Բանաստեղծուհին երգեր է գրում Սովետական Հայաստանի գեղեցկության ու հարստության մասին, սիրո ու երեխաների, խաղաղության ու ստեղծարար աշխատանքի մասին, միաժամանակ հարազատի ջերմ զգացմունքով է նայում բոլոր ժողովուրդներին: Այս ժողովածուն յուրատեսակ բանաստեղծական ճանապարհորդություն է մեր Հայրենիքի տարբեր վայրերում՝ Խրալում և Ղաղախստանում, Լատվիայում և Մոսկվայում, Ուկրաինայում և Լենինգրադում. ուրիշ ժողովուրդների կյանքը նա չի դիտել տուրիստի նման, այլ գտել է սովետական ժողովուրդների եղբայրության զգացմունքի արտահայտման համար իրական, բանաստեղծական փաստեր: Ժողովածուն փակվում է «Իմ հարազատները» բանաստեղծության հետևյալ տողերով.

Ու դարձել եմ հիմա ու ապրում եմ նորից

Իմ հարազատ, իմ լավ Երևանում,

Ես սիրում եմ նրան, տուն է եղել նա ինձ,

Բայց ինձ համար նա լայնանում,
Նա ձգվում է, դառնում երկիր մի աննկուն...
Ապրում են ինձ, մորս, մանկանս հետ մեկտեղ
Իմ հարկի տակ հաղար-հաղարավոր մարդիկ,
Իմ տունը, նա մեծ է, նա փովում է շքեղ
Մինչև խաղաղական, մինչև Բալթիկ:

Ս. Կապուտիկյանի բանաստեղծությունների հիմքում դրված է այն ճշմարիտ, առողջ գաղափարը, որ սովետական հայ մարդու հայրենասիրությունը լայնախոհ է ու լիարժեք, որովհետև նա իր մեջ պարունակում է սոցիալիստական մեծ Հայրենիքի հղորդությունն ու ժողովուրդների եղբայրական համագործակցությունը:

Բանաստեղծուհին իր հայրենասիրական հարուստ ապրումներն արտահայտելու համար ընտրում է կենսական ճշմարտության ուժով հաղեցած փաստերի և այդ փաստերի մեջ տեսնում է մեր կյանքի օրինալատիվությունները:

«Ռայնիսի շիրմաքարը Ռիպայում» բանաստեղծությունը կառուցված է այն փաստի վրա, որ Լատվիայում նշանավոր բանաստեղծ Ռայնիսի շիրմաքարի կողքին է Ռիպայի ազատագրության համար զոհված հայ մարտիկ Մանվելյանի գերեզմանը: Այս փաստը Կապուտիկյանն օգտագործում է իբրև նյութ՝ տալու ժողովուրդների բարեկամության հուզիչ պատկերը:

Մոսկվայի, ռուս ժողովրդի մասին շատերն են գրել, Կապուտիկյանը ոչ թե կրկնում է ուրիշներին, այլ որոնում ու գտնում է թեմայի բացահայտման սեփական եղանակներ: Նա նկարագրում է իր հանգիստում մի խումբ հայրենադարձ հայերի հետ, որոնց ռուս բանվորը ցույց է տալիս Կարմիր հրապարակի ճանապարհը: Այս դեպքին հետևում է իմաստալից ընդհանրացումը.

— Իմ Բանկագիներ, գեղերի հարազատ,
Ինչ լավ է տեսնել ձեզ Մոսկվայում,
Դուք որ շրջել եք քաղաքներ հաղար,
Մոլորվել նրանց խուռն փողոցներում.
Տեսնել ձեզ այստեղ, երթերում այս ծով
Ունկնդիր խոսքին մի առաջ բանվորի,
Գնացեք նրա ցույց տված ճամփով,
Իմ հարապատներ, և չեք մոլորվի:

Երկրի ճամփաներով շրջող բանաստեղծուհին ամենուրեք զգում է իր մեծ Հայրենիքում, միաժամանակ հպարտ է այն բանով, որ իր

ժողովուրդը նույնպէս մասնակցում է կոմունիզմի կառուցման մեծ գործին: «Չեկլաբինսկի տրակտորային դորժարանում» բանաստեղծության մեջ նա պատմում է այն մասին, թե ինչպէս ռադիոյից հանկարծ հոսում են հայկական երգի հնչյունները, որ անցնելով լեռներն հայրենի, «եկել հասել են Ուրալ»: Դա առիթ է դառնում հիշելու այն մասին, որ հենց նույն ժամին.

Հայաստանի դաշտերում
Այս ցիւրում կանգ առած
Տրակտորներն են վարում:
Իմ դեմ փովնց, լայնացավ
Հայաստանը իմ փոքրիկ,
Հասավ մինչև Չեկլաբինսկ
Ճամփաներով լայնարձակ:

Բանաստեղծուհու վարպետությունն այն է, որ կարողանում է փոքրի մեջ տեսնել մեծը և դրանով արտահայտել մարդկանց հոգեկան աշխարհի դեղեցկությունը: Այս տեսակետից բանաստեղծական հաջող կտավ է «Պելագեյա մայրիկը»: Բանաստեղծուհին նկարագրում է իր զրուցը Կախովկայում մի հասարակ ռուս կնոջ՝ Պելագեյա Դանիլովնայի հետ, որը հիշում է իրենց քաղաքի անցյալը՝ «Լուռ ու խաղաղ», և միաժամանակ համեմատում է դա արագորեն փոխվող կայարանի հետ: Զրուցի նկարագրությունն ինքնանպատակ չէ. ձեր կինը սլատմում է, որ Մոսկվայում սովորող իր թոռնիկին նամակ է գրել, թե Մոլդավիայից իրենց մոտ մի դրող է եկել: Պելագեյա մայրիկը շփոթում է Հայաստանն ու Մոլդավիան: Օգտագործելով այս առիթը, Կապուտիկյանը բանաստեղծությունն ավարտում է ամբողջ պատմության հետ ներդաշն այսպիսի ընդհանրացումով.

Պելագեյա Դանիլովնա, դու պառավ իմ բարի,
Ուղում եմ քեզ էլ ասել Պելագեյա մայրիկ,
Ոչինչ, որ դու իմ անունը դեռ չես հիշում, իրավ,
Որ Հայաստանն ու Մոլդավիան դու խառնում ես իրար,
Սակայն գիտես, գիտես անշուշտ, որտեղից էլ լինեմ,—
Հայաստանից, Մոլդավիայից, երբ էլ ծնունդ առնեմ
Միևնույն է, ծնվել եմ ես տասներկու թվին,
Այդ թվից է արև ծագել և իմ ժողովրդին,
Այդ թվից է դարուն ծաղկել և իմ հողի վրա,
Դու քո կյանքով ես հասկացել, դու լավ գիտես սրանք:
Գիտես նաև, որ ամեն տեղ կա փուշ ու անապատ,

Մի տեղ Զանկոյ է նա կոչւում, մի տեղ Սարգսարաբադ,
Մոլդավիայում նա երեկ ունի տարբեր անուն,
Սակայն նույնն է այն ուժը, որ այնտեղ ջուր է տանում,
Սակայն նույնն է այն կյանքը մեծ, որ ծաղկում է այնտեղ,
Նույնն է ներկան ու գալիքը, որ գալիս է շրեղ:

Ժողովուրդների բարեկամութիւնը ամբողջական թեմա է Կապուտիկյանի ստեղծագործութեան մեջ: Նա ղգում է այդ թեմայի ամբողջ վեհութիւնը, նրա ներքին հարստութիւնը, և բազմազան նյութերի ու ուսուցողական կենդանի պատկերների միջոցով արտահայտում է մեր մարդկանց իսկական զգացմունքները: «Ջամբուլի հոբելյանը Ալմա-Աթայում», «Հյուր Տաղիլի լեռնագործների մոտ», «Մերձ-կիւկան ազգինքում», «Մետրոյի քարտեղի առաջ», «Մայիսմեկյան դրոշ», «Խոհ դալինեճյուղի մասին» և շատ ուրիշ բանաստեղծութիւններ աչքի են ընկնում ոչ միայն գաղափարական նպատակասլացութեամբ, այլև արվեստի ինքնատիպ ձևերով, ոչ միայն հոգեբանական խորութեամբ, այլև գեղարվեստական վարպետութեամբ: Ս. Կապուտիկյանը հանդես է բերում սեփական մոտեցում թեմային, և ամեն անգամ գտնում է նոր երանդներ ու արտահայտչական ինքնատիպ միջոցներ թեմայի բացահայտման համար: Նրա ստեղծագործութեան մեջ մեծ տեղ են դրաւում սցեփետաւոր բանաստեղծութիւնները («Պատմվածք Լենինի, եղևնու և անտառապահի մասին», «Բալլադ Կրեմլի ժամացույցի մասին», «Հանդստի տունը», «Հավատ»), որոնց մեջ նա վերցնում է մի ուրեք իրական դրվագ կյանքի բազմապիսի երևույթներից և դրա նկարագրման միջոցով հասնում գեղարվեստական ընդհանրացման: Ս. Կապուտիկյանի լավագույն բանաստեղծութիւններին բնորոշ է պոետական խոր միտքը: Ահա «Պատասխան» բանաստեղծութիւնը, որը բովանդակութեան և ձևի ներդաշնակութեան իսկական նմուշ է:

Ինձ ասում են.— Մասիսի վրա
Փնտրում են Նոյան տապանը.
Կուտակում են զենքեր ու զրահ,
Ուզում են տրորել Հայաստանը:

Ես ասում եմ.— Նայեք Կրեմլին,
Ինչ վստահ են կանգնած պարիսպները,
Աշխարհում մրրիկ է մոլեգին,
Իսկ նա լեռան պես անեբեր է:

Ինձ ասում են.— Բայց մոտ է այնպես
Քո հողին թյուրքական սահմանը,
Բավական է Արաքսը անցնես
Եվ արդեն կերևա Երևանը:
Ես ասում եմ.— Արաքսը հինը չէ,
Ուրիշ են Արաքսը, աշխարհը,
Այն ավից այս ավի մինչև
Մոսկվայով է անցնում ճանապարհը...

Սիւլվա Կասյուտիկյանի «Իմ հարազատները» գիրքը արժեքավոր
ներդրում է սովետահայ պոեզիայի մեջ և նշում է նրա ստեղծագոր-
ծական հետագա վերելքի ուղին:

ՍՈՎԵՏՍՆԱՅ ԱՐՁԱԿԸ
ՀԵՏՊԱՏԵՐԱՋՄՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ
ՆՈՒՄ

Ձարդանալով սոցիալիստական ուսուցիչի ըս-
տեղծագործական մեթոդով, հետպատերազմ-
յան ժամանակաշրջանում սովետական, առա-
ջին հերթին ռուսական արձակը հասավ սովե-
տական հայրենասերների կերպարների խոր
բացահայտմանը, մեր կյանքի բաղմալուծմանի
ցուցադրմանը՝ նրա բաղմազան դրսևորումներով: Հետպատերազմյան սովետական արձա-
կում վառ և խորությամբ ցուցադրվեց պարտիայի ղեկավար դերը, մա-
նավանդ այն բանից հետո, երբ պարտիական քննադատությունը
(«Պրավդա») հանդես եկավ Ա. Ֆադեևի «Երիտասարդ գվարդիա» վեպի
այն սխալների նշումով, որոնք վերաբերում էին պարտիայի ղեկավա-
րող և կազմակերպող դերի, որպես պատմական գլխավոր ուժի, թերի
բացահայտմանը: «Երիտասարդ գվարդիա»-ի առթիվ եղած քննադա-
տությունը բարերար նշանակություն ունեցավ ամբողջ սովետական
գրականության համար:

Ռուսական արձակ գրականությունը զգալի ազդեցություն ունեցավ
ազգային ռեսպուբլիկանների գրականությունների, այդ թվում նաև սո-
վետահայ արձակի զարգացման վրա:

Սովետահայ արձակի զարգացումն առաջ է ընթանում կյանքի
հրատապ պրոբլեմների և նոր թեմաների արծարծման ուղղությամբ:

Արձակագիրներն ավելի մեծ չափով, քան նախորդ շրջանում,
սկսեցին անդադառնալ մեր երկրի կոմունիստական շինարարության
հարցերին (գրվեցին վեպեր արդյունաբերության և գյուղատնտեսու-
թյան մեջ աշխատող մարդկանց մասին): Առաջ եկան նոր հերոսներ,
գաղափարական և հոգեբանական նոր գծերով: Հրատարակվեցին
Հայրենական Մեծ պատերազմում սովետական ժողովրդի պատմա-

կան սխրագործութիւնը արտացոլող երկեր: Ստեղծվեցին արտասահմանում ղեկավարի դեմ դեմոկրատիայի մղած պայքարի առանձին պրովագները վերարտադրող գրվածքներ: Սովետահայ մի շարք արձակագիրներ իրենց հայացքը կենտրոնացրին հայ ժողովրդի մոտիկ անցյալի պատմա-ռեուլյուցիոն դեպքերի ու գործիչների վրա:

Այս շրջանում առանձնապես աչքի է ընկնում սովետական հայրենասիրութեան մոտիվները օժեղացումը, որը լայնորեն ղրսեւորվել էր մեր գրականութեան մեջ դեռ Հայրենական պատերազմի օրերին:

Զնայած այն բանին, որ հետպատերազմյան ժամանակաշրջանում առաջին պլան մղվեց սովետական մարդկանց ստեղծագործ, խաղաղ աշխատանքի պատկերումը, այնուամենայնիվ նկատելի տեսակարար կշիռ պահպանեց նաև Հայրենական Մեծ պատերազմի թեման:

Ա. Ա. Ժգանովն ասել է, որ սովետական դրողների առաջնահերթ խնդիրներից մեկն է՝ «խմաստավորել և ընդհանրացնել այն վիթխարի փորձը, որ ժողովուրդը ձեռք բերեց Հայրենական Մեծ պատերազմում»:

Եթե պատերազմի օրերին սովետահայ արձակը այդ թեմային դեռաւանցապես անդրադառնում էր փոքր կտավի գործերով՝ ակնարկներով, պատմվածքներով, և սահմանափակվում էր մարտական առանձին էպիզոդների նկարագրութեամբ, ապա պատերազմից հետո գրվում են վիպական ծավալուն ստեղծագործութիւններ, որոնք փորձում են լայնորեն վերարտադրել հայ ժողովրդի հերոսական, ակտիվ մասնակցութիւնը Հայրենական Մեծ պատերազմին:

Դրա առաջին արտահայտութիւնը հանդիսացավ Հմ. Սիրասի «Հայր և որդի» վիպակը:

Դրանից հետո գրվեցին նաև ուրիշ երկեր՝ Հր. Քոչարի, Վ. Անանյանի մի քանի պատմվածքները, Ան. Ստեփանյանի «Քույրերը», Հմ. Սիրասի «Արարատ», Քր. Բափալցյանի «Պատերազմ» վեպերը:

Իր գրական կյանքը մեծ կտավով՝ վեպով սկսեց Հայրենական պատերազմի մասնակից Սերո Խանդադանը:

Ս. Խանդադանի «Մեր դնդի մարդիկ» վեպը նվիրված է պաշարված Լենինգրադի համար մարտնչող ռազմական միավորումների և պարտիզանական ջոկատների գործողութիւններին: Հեղինակը իր գրվածքի ծանրութեան կենտրոնն է դարձրել Լենինգրադի առանձնահատուկ վիճակը Հայրենական պատերազմի պատմութեան մեջ: Յույց

է տրված իննինգրադի պաշտպաններին՝ հերոս քաղաքի մատուցներում
կուլտուր բազմազգ ժողովուրդների զավակներից կազմված դասակի (Կա-
լոս, Յուխարե, Բելի, Կոլյա) բարեկամութունն ու հայրենասիրութունը:

Սերո խանդաղդանի վեսում լավ է գծված դնդի հրամանատար
Սաֆոնովը, որը գտնում է մարտավարութեան նոր ձևեր, հակադրվե-
լով հնացած, քարացած ձևերի կողմնակից դեներալ Գրեցկուն: Հա-
մախրելի հատկութուններով են օժտված շատ շարքային զինվորներ:
Պարտիզանական պայքարն ու ընդհատակի աշխատանքը համեմա-
տաբար սխեմատիկ ու անգույն են ցուցադրված:

Հայրենական Մեծ պատերազմի առաջին ժամանակաշրջանի՝
նահանջի ծանր օրերի մասին նշանակալից երկ է Հր. Քոչարի «Մեծ
տան զավակները» վեպի առաջին հատորը, ուր ջերմ ընդունելության
արժանացավ ընթերցողների կողմից:

Եթե նախապատերազմյան վաղ տարիներին գրականության մեջ
սոցիալիստական շինարարության պատկերմանն ուղեկցում էր դա-
սակարգային սուր և ուժգին պայքարի պրոցեսի արտացոլումը, ապա
այս էությունը գրողների ուղարկությունը գրավում են կյանքում խոր
արմատներ գցած և մասսայաբար ծավալվող աշխարհի երևույթներ,
ինչպես արդյունաբերության և գյուղատնտեսության առաջավորների
նորարարությունն ու ստեղծագործական խիզախումները, անշարժու-
թյան և տեխնիկական հետամնացության դեմ մղվող պայքարը, աշ-
խատանքի նկատմամբ սովետական մարդկանց կոմունիստական վե-
րաբերմունքը:

Սովետական գրականությունը, կատարելով Մ. Գորկու պահանջ-
ները, իր լավագույն ստեղծագործություններում պատկերում է «աշ-
խատանքային պրոցեսներով կազմակերպվող մարդուն, որը մեղ մոտ
զինվում է արդի տեխնիկայի ամբողջ կարողությամբ, այն մարդուն,
որն իր հերթին կազմակերպում է աշխատանքը, դարձնելով վերջինս
ավելի հեշտ, արդյունավետ, հասցնելով նրան արվեստի աստիճա-
նին»:

Սովետական ռուս գրականության մեջ հետպատերազմյան շրջ-
անում բանավոր դասակարգի աշխատանքային գործունեության մա-
սին գրվել են աշխարհի նշանակալից, նորարարական երկեր, ինչպես
Վ. Աժակի «Մոսկվայից հեռու», Ա. Ռիբակովի «Մեքենավարներ», Բ.

Գորբատովի «Ռոմբասը» վեպերը, որոնք բացահայտելով բանվոր դասակարգի ստեղծարար աշխատանքի վեհությունը, ցույց են տալիս, որ մեր երկրում աշխատանքը սովետական մարդու համար իսկական երջանկություն է, հոգեբանական ակտիվ, խոր սլոտցես։ Նույնը չի կարելի ասել սովետահայ արձակի մասին, որտեղ բանվորի հերոսական աշխատանքը, նրա մեծագույն սլոտցեսը մեր Հայրենիքի վերափոխման դործում անհրաժեշտ խորությունը ու գեղարվեստականությունը չի պատկերված։ Ստեղծվել են բավականաչափ վեպեր և վիպակներ, սակայն նրանցում չկան ուժեղ կամքի և համառ մտքի տեք առաջավոր բանվորների, ինժեներների, նորարարների կերպարներ, որոնք դառնալին ընդօրինակման առարկա։

Կոլտոստեսային գյուղի յուրականությունն արտացոլող գրվածքները շատ կողմերով շարունակում և լրացնում են հայ գյուղի սոցիալիստական առաջընթացի տարեգրությունը, որ սովետահայ արձակը սկսել էր գերազանցապես 30-ական թվականներին, կոլտոստեսային շինարարության առաջին տարիներից։ Ն. Զարյանի «Հացավան», Քր. Ռափալյանի «Կյանքի արշալույսին» վեպերը, մի շարք ուրիշ արձակագիրների պատմվածքներն ու ակնարկները նկարագրում էին կոլտոստեսությունների առաջացման շրջանը։

Պատերազմից հետո գյուղի թեման ծավալուն և բազմակողմանի սեղ գրավեց արձակում։ Նթե առաջ գյուղը ներկայացվում էր սոցիալական անհավասարությունից, մարդկանց կաշկանդող նախապաշարումներից և դաժան սովորություններից ազատագրվելու պրոցեսում, ապա այս նոր էտապում, սոցիալիստական ձեավորված և հասունացած հարաբերությունների բովում աճած նոր կյանքով ապրող հերոսներն են դարձել գրականության յոթթը։ Այստեղ համեմատաբար ավելի են արձակի հաջողությունները, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ այս շրջանում ավարտվեց և ամբողջացվեց Ն. Զարյանի «Հացավան» վեպը (1947 թ.)։

«Հացավանը» թեև ավելի վաղ ժամանակներ է ընդգրկում, բայց իր հիմնական գաղափարական նպատակաւացությունը, հերոսների զարգացման հեռանկարով առնչվում է մեր օրերին, արձագանքում է ժամանակակից հարցերին։

Մյուս գրվածքներից արժեքավոր են Հ. Մկրտչյանի և Զ. Դարյանի մի շարք պատմվածքները, Ս. Խանդաղյանի «Հողը» վեպը։

Այս վեպում Ս. Խանդավոյանը պատմում է պատերազմից հետո աշխատանքի խաղաղ պայմաններին անցնող լեռնաչին հայ գյուղի մարդկանց աշխատանքի, կենցաղի ու բնության մասին: Հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես են պատերազմում հաղթողները լծվում խաղաղ կյանքի խնդիրների լուծմանը, ինչպես են հաղթահարում հետպատերազմյան կյանքի իսկական դժվարությունները: Վեպում գեղարվեստական ուժով են կերտված մի շարք կերպարներ (Գարեգին Մովսիսյան, Մանուշ, Մանասար), կոլորիտային թարմ պատկերներով է տրված հայ գյուղի տրույն կենցաղը, մասնավորապես մեծ տավոտություն են թողնում Զանգեզուրի բնության նկարագրությունները:

Սովետահայ գրականության մեջ առաջին անգամ Մ. Արմենը լի-րիկական շնչով գրված «Յասվա» վիպակում նկարագրել է գյուղական Ուրալը պատերազմի տարիներին, և ցույց է տվել, որ երկրի ամենախոր թիկունքը, նրա հեռավոր մասը ապրում ու շնչում է նույն կյանքով, ինչով որ ապրում էր ամբողջ երկիրը: Վիպակում պոետական ուժով են պատկերված ուրալցիների՝ Անտոնինայի, ծերունիներ Արսենտի, Լուկիչի և Գավրիլայի, պարտիական աշխատող Յարկինի կերպարները:

Մ. Արմենը «Յասվա» վիպակում զարմանալի նուրբ պատկերներով ցույց է տալիս ուրալյան բնության յուրահատուկ կոլորիտը, մարդկանց պայքարը բնությունը նվաճելու համար: «Յասվա»-ն հեղինակի մի շարք ուրիշ երկերի հետ միասին («Հեղնար աղբյուր» պատմվածքը, պատանիների համար գրված վիպակները) սովետահայ արձակի լավագույն էջերից է, և ասպցուցում է Արմենի գրական վարպետությունը:

Հետպատերազմյան շրջանի սովետահայ արձակագրության մեջ նորություն են իմպերիալիստական ռեակցիայի դեմ արտասահմանյան երկրների, մասնավորապես Իրանի և Մերձավոր Արևելքի դեմոկրատական ուժերի պայքարը վերարտադրող գրվածքները: Այս տեսակետից սովետահայ գրականության մեջ նշանակալից երևույթ է Գ. Սևունցի «Թեհրան» վեպը:

**Գ.Ս.ՐԵԳԻՆ
ՍԵՎՈՒՆՑ**

Գ. Սևունցը (Գրիգորյան) ծնվել է 1911 թ. Գորիսի շրջանի Խնձորենկ գյուղում: Ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի գրական ֆակուլտետը: Բաքվի բանվորական միջավայրում անցկացրած

տարիներին ստացած հարուստ տպավորությունները Սևունցի օգտագործել է իր առաջին խոշոր արձակ գրվածքում՝ «Ծովախորշում» վիպակում (1937 թ.), որով նա մտավ գրականության մեջ: Այնուհետև նա գրեց պատմվածքներ, ակնարկներ, մանկական հեքիաթներ: Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Սևունցը Սովետական Բանակի զորքերի հետ միասին գտնվում էր Իրանում: Իրանական կյանքից ստացած տպավորությունների հիման վրա ստեղծվեցին նրա «Իրանական նոթեր» ակնարկաշարը և «Ազատության պողոտա» վեպը (1947 թ.): Այս գրվածքները, այսպես կոչված «նյութի կուտակման» աստիճան էին ապագա խոշոր գեղարվեստական կտավի համար: «Թեհրան» վեպը արագորեն իր վրա դրավից ընթերցողների լայն շերտերի ուշադրությունը:

«Թեհրանը» սոցիալական-քաղաքական վեպ է: Այնտեղ նկարագրված են Իրանի հասարակական կյանքի կարևոր իրադարձությունները Ռեզա շահ Փեհլևի արյունոտ տիրապետության ժամանակաշրջանում՝ համաշխարհային երկրորդ պատերազմի նախօրեից մինչև երեք տերությունների Թեհրանի կոնֆերենցիան (1943 թ. վերջը):

Հետամուտ լինելով կյանքի երևույթների լայն ընդդրմանը, պատկերելով երկրի քաղաքական և տնտեսական դահալիժող փլուզումը, աշխատավորական լայն մասսաների ստրկացումը՝ ազդային ռեակցիոն ուժերի և ամերիկյան, անգլիական, ֆաշիստական դադութարարների ծանր լծի տակ, Գ. Սևունցը միաժամանակ ցուցադրում է Իրանի առաջադիմական ուժերի պայքարը ազդային անկախության և ազատության համար, երջանկության և լուսավոր ապագայի համար: Բուրժուական հասարակության ընդերքում հասունացող ու հետզհետե քաղաքական ակտիվ պայքարի մեջ ներգրավվող ժողովրդական շերտերի պայքարի պատկերումը պատճառաբանում են վեպում հանդես բերված առաջադիմական ուժերի դործողություններն ու վարմունքները, մերկացնելով կրկնակի ճնշման տակ գտնվող երկրի հասարակական-քաղաքական սիստեմը՝ մինչև նրա արմատները: Սա ղգալիորեն մեծացնում է «Թեհրան» վեպի արժեքն ու պայմանավորում նրա դադափարական նպատակաւացությունը:

«Թեհրան» վեպում ներկայացված են իրանական հասարակության գրեթե բոլոր շերտերը. ռեակցիոն վերնախավի՝ կալվածատերերի ու կապիտալիստների, պալատական մինիստրների, սետական ու ռազմական ապարատի պաշտոնյաների հետ միասին հանդես են

գալիս նաև բանվորներին, գյուղացիներին, առաջավոր խնտելիզենցի-
քի, ուսանողների ներկայացուցիչները: Ուժերի այսպիսի բեռնացու-
մով էլ պայմանավորվում է վեպի քաղաքական սրույթունն ու լար-
ված, սրընթաց սյուժետային ընթացքը:

Վեպը սկսվում է Թեհրանի պոլիտեխնիկական ինստիտուտում
տեղի ունեցող դեպքերի պատկերումով: Ինստիտուտի առաջավոր ու-
սանողները պահանջում են դադարեցնել հալածանքները առաջավոր
դիտնական, իր երկրի լուսավոր ասպագայով խանդավառված, ռե-
լյուցիոներ դոկտոր Շամս Ազադիի նկատմամբ: Պոլիտեխնիկական
ինստիտուտի իրադարձությունները հիմք են ծառայում առաջին բա-
խումներին համար. խավարամիտ ռեակցիոն դասախոսներ Աբաս Ղո-
րանին, Վսուդին և նրանց արժանյակները ամեն կերպ աշխատում են
թուլացնել Ազադիի ազդեցությունը ուսանողների շրջանում: Շուտով
պայքարը ինստիտուտից դուրս է գալիս և աստիճանաբար ավելի լայն
մասշտաբներ ընդունում:

Գ. Սևունցը ցույց է տալիս, որ չնայած այն դաժան հալածանքնե-
րին, որոնք գործադրվում են Շամս Ազադիի նկատմամբ, այնուամենայ-
նիվ նա կարողանում է իր շուրջը համախմբել ժողովրդի ազատության
գործին նվիրված, երկրի անկախության համար պայքարող ազնիվ
մարդկանց: Ազադին դառնում է ռեկլյուցիոն ընդհատակի կազմակեր-
պիչներից ու ղեկավարներից մեկը, ընդհատակ, որը լայն ցանց է ստեղ-
ծում Իրանի տարբեր գավառներում ու շրջաններում:

Շամս Ազադին վեպի ամենահաջողված կերպարներից մեկն է:
Նա ռեկլյուցիոն մարտիկ է, որը քաղաքական կոփվածք է ստացել
ժողովրդական պայքարի մեջ, անսահմանորեն սիրում է իր երկիրը և
խոր ապրումներ է ունենում, տեսնելով, թե ինչպես ամենուրեք ազ-
գային ռեակցիայի և օտարերկրյա գաղութարարների կողմից կողոպ-
տվում է ժողովուրդը:

Ազադին իրանական միջավայրում աճած նոր հերոսն է, ժողո-
վրդի քաղաքական ինքնագիտակցության արթնացման նոր աստի-
ճանը: Նա միշտ ժողովրդի հետ է և իր կյանքը նվիրում է աշխատա-
վորության գործին:

Գ. Սևունցը կարողացել է ցույց տալ, թե ինչպիսի բարդ, դժվա-
րին պրոցեսներ են տեղի ունենում քաղաքական տարբեր համոզ-
մունքների և հասարակական տարբեր դիրքի տեղ մարդկանց շրջա-
նում, սոցիալական ի՛նչ պատճառներ են պայմանավորում դեմոկրա-

տական տրամադրությունների արձնացումը երկրում: Բաղմաթիվ ազ-
նիվ մարդիկ, որոնք նախկինում իրենց հեռու էին պահել քաղաքա-
կանությունից, դառնում են ասպլային անկախության մարտիկներ:
Անողորմարար կողոպտվում է գյուղացիությունը, տանջալից մահ-
վան պրոցեսներ է ապրում իրանական գյուղը. գյուղացիական մաս-
սաների ատելությունը այնքան արագորեն է աճում, որքան արագո-
րեն ավելանում են ֆեոդալական կամայականություններն ու ճնշում-
ները: Գյուղացի Հասանի և մյուսների միջոցով արտահայտվում է ժո-
ղովրդական անհուն վիշտը, գյուղացիության տառապալից կյանքի
ուղին, և մենք վեպում տեսնում ենք, թե ինչպես շահագործման և
անլուր կամայականությունների տակ հեծող գյուղի միջավայրից
բարձրանում են նոր ուժեր, ներգրավվում պայքարի մեջ:

Վեպում հանդես են բերված բանվորական միջավայրից աճած
նոր հերոսներ՝ Աքպերը, Ամինը, Իրաջը և մյուսները, որոնք ռեուլու-
ցիոն փորձված մարտիկների՝ Աղադիի, Շովքաթի, Տիլբաանի ղեկավա-
րությամբ ընդհատակյա լայն աշխատանք են ծավալում երկրի տար-
բեր դավառներում, լայնացնում են ընդհատակյա կազմակերպության
ցանցը:

Գ. Սևանցի «Թեհրան» վեպում ցույց է տրված, որ ռեուլուցիոն
մարտիկների պայքարն ուղղված է երկրի ռեակցիայի և օտարերկրյա
զաղութարարների դեմ: Հեղինակը բաղմախողմանիորեն նկարագրում
է Ռզա շահ Փեհլևիի կառավարության ամբողջ կեղծիքն ու վնասա-
կար քաղաքականությունը: Ռզա շահի շուրջն համախմբված պետա-
կան գործիչներն ու մինիստրները քաղաքական ավանտյուրիստներ
են, որոնք զաղտնի կապերի մեջ են անգլիական, ամերիկյան, գեր-
մանական զիշատիչ իմպերիալիստների հետ, բացահայտորեն վա-
ճառում են երկրի ու ժողովրդի շահերը: Փոխադարձ դավաճանությու-
նները, քաղաքական ավանտյուրաներն ու արկածախնդրություններն են
նրանց պայքարի մեթոդները: Ազգային արժանապատվությունից և
պատվից զուրկ այդ բոլոր բարձրաստիճան մարդիկ ոչ միայն ժողովրդի
դեմ են, այլև իրար դեմ են: Այս մոմենտը վարպետորեն է վերարտա-
դրված վեպում: Հեղինակը ցույց է տալիս, որ կառավարող շրջանների
ամեն մի նոր պորժաբք օտար զաղութարարների հետ՝ նոր շղթաներ է
բերում ժողովրդի համար: Իգեական այս հարցադրումը վեպում լայն
լուսաբանություն է ստացել բաղմաթիվ տեսարանների միջոցով: Կա-
ռավարող շրջանների մի մասը, Ռզա շահի գլխավորությամբ, կապված

է գերմանական դադութարարների հետ: Դրանց մեջ են ղլխավոր դատախազ Նամվարը, Պոլիտեխնիկական ինստիտուտի դիրեկտոր Վսուլին և ուրիշներ, որոնք գործունեության լայն ասպարեզ են ստեղծում Իրան ներթափանցած հիտլերյան գործակալներին համար: Այս վերջինները՝ Մեերը, Վոլֆը, Շուլցը և մյուսները, «մասնագետների» դիմակի տակ գալով Իրան, նպատակ ունեն քաղաքականապես և տնտեսապես ստրկացնել երկիրը, ուղիներ բացել ֆաշիստական Գերմանիայի էքսպանսիոնիստական նպատակների համար, սակայն նրանց բոլոր ջանքերը տապալվում են, հանդիպելով ժողովրդի դիմադրությանը:

Իրանի նավթային հարստություններին տիրելու համար սուր բախումներ ու դժվարուցներ են տեղի ունենում անգլո-ամերիկյան իմպերիալիստների միջև:

Անգլիական, ամերիկյան, գերմանական դադութարարներ Կրիստի, Բենտոնի, Մեերի գործակալությունների գործունեությունն Իրանում՝ դա հանցագործությունների մի դաժան շղթա է, որի ընթացքում զոհվում են բազմաթիվ մարդիկ, կատարվում են բազմաթիվ գործարքներ, ավանադուրաներ՝ երկրի հարստությունը կողոպտելու, ավելի մեծ շահույթ ստանալու համար:

Հեղինակը ցույց է տվել ռեակցիոն ուժերի սոցիալական թուլությունն ու անխուսափելի դատապարտվածությունը:

«Թեհրան» վեպին բնորոշ է գեղարվեստական այն լիարժեքությունն ու ավարտվածությունը, որը որոշվում է ոչ միայն զրոդի վերարտադրած թեմայի սրությամբ և հրատապությամբ, այլ և մեծ չափով նրա վարպետությամբ՝ ուժերի պայքարը, բախումները ցույց տալ կենդանի կերպարների մեջ, հերոսների ձևավորման ու աճման մեջ:

«Թեհրան» վեպում Սևունցը հանդես է բերել արձակագրի իսկական տվյալներ՝ սուր դիտողականություն, արտահայտիչ լեզու, նրկարագրելու հմտություն:

Գեղարվեստական, քաղաքական և ճանաչողական զգալի արժեքներ կայացնելով հանդերձ՝ Գ. Սևունցի «Թեհրան» վեպն ունի նաև թերություններ:

Եթե շատ դեպքերում արկածային վեպի տարրերը չեն վնասում վեպի ռեալիստական հնչեղությանը, ապա երբեմն այդ տարրերը ըստանալով մերկ արկածախնդրության բնույթ, իրենցում ծածկում են վեպի շատ կարևոր իդեաներ: Զինվորական զինանոցի վրա հարձակվելու պատմությունը դրա արտահայտություններից մեկն է: Ֆաթիի

կերպարի մեջ հեղինակը մտցրել է որոշ խորհրդավորություն (հետապնդումը Սև Դերվիշի կողմից), որը դարձյալ գալիս է արկածային վեպի սկզբունքներից:

Գ. Սևունցը «Բեհհրան» վեպով ցույց է տալիս, որ խորագրեւոյ յուրացրել է սովետական գրականութեան առաջավոր փորձն ու տրագիցիան, զրել է մի երկ, որը նվաճում է սովետահայ արձակագրութեան համար:

Արտասահմանյան իրականութեանն է պատկերում նաեւ երիտասարդ արձակագիր Սահիան Ալաջաջյանը «Անապատում» վիպակում: Դեպքերը տեղի են ունենում պատերազմի տարիներին. «հաշնակիցները» դավաճանաբար թշնամուն են հանձնում Տոբրուկ ամրոցը: Զինվորների մի վաշտ, որը թողնված է բախտի քմահաճութիւն, բրիտանական մայոր Զեֆի առաջնորդութեամբ քայլում է Լիվիական անապատի տոթակեղ փոթորիկների միջով, փորձելով դուրս գալ տառապանքի, քաղցի, անտանելի ծարավի աշխարհից, ուր իրենք նետված են «ինչ որ հեռավոր տեղ» նշույթված դավաճանութեան պատճառով: Նկարագրելով տարբեր ազգերի ներկայացուցիչներից կազմված վաշտի մի քանի օրվա «երթը» անապատում, հեղինակը մերկայացնում է բրիտանական բանակի բարոյալքումն ու քայքայումը, ռասսայական խտրականութեանը և միաժամանակ նկարագրում է գաղութներից եկած զինվորների դասակարգային ինքնագիտակցութեան դաւու խոր պրոցեսները:

Այս վիպակով երիտասարդ հեղինակը դրսևորեց մարդկային հոգեբանութեան և միջավայր, կենցաղ ու բնութեան պատկերելու ազնւհայտ ընդունակութեան:

Սովետահայ արձակի թեմատիկ ուղղութեան պատկերն ամբողջացնում են այն ծավալուն վիպական կտաւները, որոնք վերարտադրում են պատմական հեռավոր անցյալի հերոսական իրադարձութեաները (Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի երկրորդ, վերամշակված հրատարակութեանը), հայ ժողովրդի ռեզիստանտ հայտնի գործիչների կյանքը:

Սովետական նշանավոր պատմավեպերում (Ալ. Տոլստոյ — «Պետրոս 1-ին», Մ. Առեղով — «Աբաջ», Ստ. Զլոբին — «Ստեփան Ռադին»)

արմատացել է իսկական պատմագիտական մեթոդը՝ պատմական պրոցեսի էություն գիտական ճանաչությունը հյուսվել է բարձր արվեստին, պատմական փաստն ու եղելությունը զուգորդվել են ուսուցիչական կենդանի, վարպետ նկարագրություններին:

Նույնը կարելի է ասել նաև Դ. Դեմիրճյանի «Վարդանանք»-ի մասին, որը ստեղծվեց Հայրենական պատերազմի օրերին, սկզբնավորելով սովետահայ պատմավեպի ժանրն ու տրագիցիան:

Հեղինակի գաղափարական մտահղացումը ոչ թե մեր օրերի և հեռավոր անցյալի միջև պատմական մեխանիկական զուգահեռներ անդեհացնելն էր, այլ մեր ռամանակի հասարակական-քաղաքական առաջավոր ժողովրդության դիրքերից հայ ժողովրդի պատմական անցյալի հայրենասիրական տենդենցների վերհանումը, որ հաջողությամբ իրագործված է վեպի երկրորդ վերամշակված հրատարակության մեջ:

Մաքսիմ Գորկին իր նամակներից մեկում պահանջում էր գրքեր ստեղծել նշանավոր հայերի մասին, հայ ժողովրդի ծոցից դուրս եկած ռեուլյուցիոն մարտիկների մասին: Այդպիսի փորձեր են Բ. Ստաֆֆու «Ստեփան Շահումյան»-ը և Մ. Կորյունի «Կամո»-ն:

Ստեփան Շահումյանի պայծառ կյանքը Կոմունիստական պարտիայի պատմության հրաշալի էջերից մեկն է, որ վեպում միայն գեղարվեստական մասնակի հաջողությամբ է պատկերվել: Վեպի վավերագրական-դոկումենտալ հիմքը բարձրացնում է նրա ճանաչողական արժեքը, մանավանդ եթե նկատի ունենանք մի շարք ոչ կենտրոնական հերոսների (Ափղահակ, Հակասար) հաջող գծագրությունը և ընդարձակ մեջբերումները պատմական աղբյուրներից: Ամենահիմնական թերությունն այն է, որ մասսաների ղեկավար և քաղաքական բացառունչ գործիչ Շահումյանը չի երևում իրականության բարդ երևույթների հետ սերտ կապակցված, հասարակական կյանքի հորձանուտի մեջ: Շահումյանը և Բաքվի կոմունայի մյուս ղեկավար գործիչները չեն բացահայտվել իրենց մտավոր և կազմակերպչական բարձր հատկություններով, հոգու հարստությամբ, պայքարողի կրքոտությամբ:

«Կամո» վիպակում գլխավոր հերոսի՝ Կամոյի ներքնաշխարհի բացահայտմանը փոխարինել են արկածային դեպքերը: Ամեն ինչ այնքան հեշտ է կատարվում, որ թվում է, թե Կամոյի գործունեությանը խանգարող ոչ մի արգելք չկար: Վեպում ցույց չի տրված, թե ինչպես բուլժևիկյան հին սերնդի հայտնի գործիչներից մեկը՝ Կամոն դառնում

է Լեռնային Սիկախ, անվեհեր ժամապահը. խոր կերպով չի բա-
ցահատվում պարտիաչի գաղափարների ազդեցությունը Կամոյի վրա:

Հայ մեծ Լեռնային-դեմոկրատ, ռուս 60-ականների գաղափա-
րական զինակից Մ. Նալբանդյանի կյանքի դեղարվեստական պատ-
կերմանն է նվիրված Ա. Արաքսամանյանի «Ճանապարհ դեպի Կամի-
շին» վեպի առաջին մասը: Արաքսամանյանը վերաբնակվել է Նալ-
բանդյանի կյանքի Նոր Նախիջևանյան շրջանը, նրա պայքարը տեղի
աղայական խավի դեմ, գավառական քաղաքի հասարակական-քա-
ղաքական հակամարտ ուժերի բախումները:

Հայաստանում Մայիսյան ապստամբությունը և Ղուկաս Ղուկաս-
յանի կյանքին ու գործունեությանն է նվիրված Ան. Հովսեփյանի
«Սիրտ» վեպը:

Վ. ԱՆՍԱՆՅԱՆ Հետպատերազմյան շրջանում սովետահայ
գրողները ստեղծեցին բազմաթիվ հաջողված
մանկա-պատանեկան գրվածքներ՝ պատմվածքներ (Զ. Դարյան —
«Իմ առաքիլներ»), վիպակներ (Անժ. Ստեփանյան «Ոսկի մեղալ»), գի-
տա-ֆանտաստիկական երկեր (Ա. Շալբոն — «Սովետական սովետների
աշխարհում») և այլն: Մանկական գրականության մեջ ճանաչված
անուն է Վախտանգ Անանյանը՝ իր որսորդական ու բնասիրական
պատմվածքներով:

Վախտանգ Անանյանը ծնվել է 1905 թ. Շամախյան գյուղում: Ման-
կության տարիներն անցել են ծանր կարիքի մեջ: Հայաստանում
սովետական կարգեր հաստատվելուց հետո Անանյանը մտնում է Կոմ-
երիտմիության շարքերը, 1923 թ. դառնում է «Մաճկալ» թերթի թղթա-
կիցը, իսկ որոշ ժամանակ անց՝ խմբագիրը: 1931 թ. լույս է տեսնում
Վ. Անանյանի առաջին գիրքը՝ «Կրակի օղակում» վիպակը: Այնուհետև
հրատարակվում են նրա պատմվածքների մի քանի ժողովածուները:
Հայրենական Մեծ պատերազմի տարիներին պարբերական մամուլում
տպագրվում են զինվորական թղթակից Անանյանի ակնարկներն ու
պատմվածքները: Պատերազմից հետո նա հրատարակում է որսորդա-
կան պատմվածքների երեք պրակները, և «Սևանի ափին» վիպակը:
Անանյանի պատմվածքների մի շարք ժողովածուները լույս են տեսել
Երևանում, իսկ «Սևանի ափին» արկածային վիպակը թարգ-
մանվել է բազմաթիվ լեզուներով:

Վ. Անանյանն ունի իր ստեղծագործության ուրույն աշխարհը, իր
նախասիրությունները: Նա գրում է գերազանցապես բնովյան, կեն-

դանական աշխարհի, որսի, երբեմն նաև գյուղական իրականության հետ կապված մանկական հիշողությունների ու տպավորությունների մասին:

Վ. Անանյանը հայրենի բնության տաղանդավոր երգիչ է. ոչ միայն սիրում է Հայաստանի բնությունը, ոչ միայն ճանաչում է այն իր բոլոր մանրամասնություններով, այլև կարողանում է այդ սերն ու ճանաչողությունը փոխանցել ընթերցողին, դաստիարակել նրա մեջ բնասիրության առողջ զգացողություն: Նա հատկապես շատ է գրում որսի մասին: Որսորդական թեմայով Անանյանը գեղեցիկ պատմվածքներ է գրել («Մի դեպք եղևնուտում», «Մուղանի վարաղները», «Անտառին անսովոր մարդը», «Սրտոտ մարդիկ» և այլն), որոնք ընթերցողի սուշև բացում են որսորդական սպորտի գրավչությունը, հայ որսորդների արվածներով լի կյանքը, հայրենի բնության գեղեցկությունները:

Վ. Անանյանի ամենաաչքի ընկնող երկը «Սևանի ափին» արկածային վիպակն է:

Արկածային գրվածքի ժանրը հարուստ տրագիցիաներ ունի սովետական ռուս գրականության մեջ (Բ. Ժիտկովի, Ա. Գալդաբի, Վ. Կատաևի, Վ. Կավերինի և ուրիշների գործերը): Վ. Անանյանը «Սևանի ափին» վիպակը գրելիս օգտագործել է սովետական արկածային վիպակի լավագույն տրագիցիաները, հենվել է կուտակված փորձի վրա: Այդ տրագիցիաները օգնել են նրան՝ չզնալու կեղծ արկածայնության ճանապարհով:

Սևանի ավազանի լեռնային գյուղերից մեկը, որը կոչվում է Լճավան, թեև շատ մոտ է լճին, բայց սակավաջուր է: Գյուղացիների դարավոր երազանքն է եղել ոռոգված տեսնել իրենց արտն ու հանդը, շենթարկվել երաշտի ավերածություններին, բնությունը ծառայեցնել իրենց կարիքներին: Գյուղացիները հորինել են բազմաթիվ հեքիաթներ ու ավանդություններ զանազան վիշապների, շար ու բարի ուժերի մասին, խորհրդավորության քող հագցրել բնության երևույթներին և, չկարողանալով բացատրել այդ երևույթները, ստեղծել են նախապաշարմունքներ: Բնությունը նրանց համար մնացել է անմատչելի, փակ գիրք: Սա հին օրերի ժառանգությունն է, որ ծանրացել է հողագործի վրա, կաշկանդել նրա միտքն ու ուժերը:

Լճավանը, որտեղ ծավալվում են վիպակի գործողությունները, չի մնացել անշարժ վիճակում: Սովետական իշխանության շնորհիվ

նա առաջադրմի է, կարիքն ու թշվառությունը վերացել են, գյուղն ապրում է կոլանտեսային բարեկեցիկ, առատ կյանքով: Գյուղի ընդհանուր առաջադիմությանը մասնակցում են նաև պատանիները: Լճավանի պատանի բնասերների մի խմբի մասին էլ պատմում է Վ. Անանյանն իր գրքում: Կամոն, Արմենը, Գրիգորը, Համիկը՝ վիպակի պատանի հերոսները՝ ծերունի որսորդ Ասատուր պապի և ուսուցիչ Արամ Հակոբյանի ղեկավարությամբ զանազան ճանապարհորդություններ են կատարում դուռլի մոտակա վայրերում, հանդիպում են բազմաթիվ արկածների, ուսումնասիրում են բնությունը, կուեկտիվի մեջ նրանք ձեռք են բերում հոգեբանության նոր գծեր ու հատկություններ: Այդ պատանիներն ունեն բնադիտական հարուստ գիտելիքներ, իրենց պատանեկան վառ երևակայությամբ ձգտում են պարզաբանել բնության երևույթները, ծանոթանալ նրա գտնաբերելուն:

«Մարդս պետք է կարողանա բնության գիրքն էլ կարդալ», — ասում է պատանիներին որսորդ Ասատուր պապը: Վերջինս ամբողջ կյանքն անց է կացրել բնության դրվում, սակայն չի կարողանում ճիշտ բացատրել բազմաթիվ փաստեր: «Բնությունը խելացի է դասավորել իր բնակիչների կյանքը», — Ասատուր պապի այս տեսակետին Արմենը հակադրում է դպրոցում սովորած այն ճշմարիտ հարցադրումը, ըստ որի կենդանիների ժառանգական հատկություններն անփոփոխ չեն, որ գոյություն կռվում կենդանիները ձեռք են բերում նոր հատկություններ, որ մարդը ազդելով բույսերի և կենդանիների վրա, ստեղծում է նոր միջավայր և դրանով փոխում բույսերի ու կենդանիների հավիտենական թվացող հատկությունները: Վիպակի պատանի հերոսները ուսումնասիրում են բնությունը, հարստացնում իրենց գիտելիքները և բնության տվյալներից հլենելով, առաջադրում են մի շարք գործնական պլաններ, որոնք կարող են օգտակար լինել հայրենի գյուղի կոլանտեսությանը:

«Սևանի ափին» վիպակը ճանաչողական հարուստ նյութ է տալիս Հայաստանի բնության, նրա լեռների, ձորերի, լճերի ու ջրվեժների, կենդանական ու բուսական աշխարհի մասին:

ԳՐԱՄԱՏՈՒԳԻԱՆ Հետպատերազմյան շրջանում սովետահայ դրամատուրգիան հարստանում է նոր ուշագրավ երկերով, որոնք բեմական արվեստի նյութ են դարձնում սովետական իրականության կենսական հարցերը: Վճռական բեկում է կատարվում թեմատիկայի մեջ. դրամատուրգները ստեղծում են մի շարք հաջող-

ված կերպարներ, փորձում են արտացոլել մեր իրականության կոնֆ-
լիկտները:

Սովետահայ դրամատուրգիայում պատկերվում են Հայրենական Մեծ պատերազմի հերոսական իրադարձությունները (Գ. Բորյան — «Բարձունքներում») կոտնտեսային գյուղի պայքարը բարձր բերքի համար (Ն. Զարյան — «Աղբյուրի մոտ»), արհեստագործական ուսում-նարաններում բանվոր դասակարգի ղեկավարի պատրաստումը (Ա. Շալբոն — «Հրաշալի սերունդ»), հետամնաց քաղաքացիների գիտակ-ցության մեջ եղած կասկածալիզմի մնացուկների դեմ պայքարը (Մ. Բոչարյան — «Հին հիվանդություն»), ուսանողական միջավայրը և պայքարը Արևմուտքի հանդեպ ստորաբարձրության արտահայտու-թյունների դեմ (Գ. Տեր-Գրիգորյան և Լ. Ղարապետյան — «Այս աստ-ղերը մերն են») և այլն: Պիեսներ գրվեցին հայ մեծ լուսավորիչ, հայ նոր գրականության հիմնադիր Խ. Աբովյանի և ռեուլյուցիոն-դեմոկրատ Մ. Նալբանդյանի մասին:

Գ. Բորյանի «Բարձունքներում» պիեսը պատմում է Կովկասի պաշտպանությանը մասնակցող մայր Թրվիլի գումարտակին բաժին ընկած ծանր փորձությունների, տարբեր ժողովուրդների ռազմիկ զա-վակների մարտական ամուր բարեկամության, նրանց հայրենասիրա-կան սխրագործությունների մասին:

Մ. Բոչարյանի «Հին հիվանդություն» կոմեդիան ցուցադրելով արտադրական ձեռնարկության աշխատողների ներքին կյանքը, ա-ռողջ ծիծաղով ծաղրում է հին աշխարհի հոգեբանությունը կրող մարդկանց (Արշակ Բեգլարիչ):

«Այս աստղերը մերն են» պիեսի նյութը վերցված է ուսանողա-կան միջավայրից. ցույց է տրված մի կողմից գիտության մեջ խիզա-խումների, նորարությունների և մյուս կողմից պահպանողական հա-յացքների միջև եղած սուր պայքարը:

Ա. Արաքսմանյանի և Զ. Վարդանյանի «Միքայել Նալբանդյան» պիեսը ցուցադրում է հայ մեծ ռեուլյուցիոն-դեմոկրատի պայքարը ժողովրդի ազատագրության, հայ ժողովրդին համառուսական ռեուլյու-ցիոն շարժումներին մասնակից դարձնելու համար:

Այս ժամանակաշրջանում գրված կոմեդիաների մեջ իր սատիրա-կան ուժով առանձնանում է Ն. Զարյանի «Փորձադաշտը»: Այս կոմե-դիան շոշափում է կեղծ, բացասական մարդու պրոբլեմը: Դրամա-տուրգը ցույց է տալիս, որ մեր հասարակության մեջ դեռևս պատա-

հում են այնպիսի մարդիկ, որոնք թաքցնում են իրենց իսկական դեմքը, հանուն իրենց անձնական բարեկեցության ոտնահարում են հասարակության շահերը: Ն. Զարյանը իր պիեսով ասում է, որ պետք է մեր կյանքից արմատախիլ անել այդ օտարոտի, նեխած երևույթները, պետք է դատապարտել դրանք: Կոմկոյիստում անիծյալ հին աշխարհից պահպանված բացասական երևույթների դատապարտող ուժը դրական հերոսներն են՝ գիտնական Մեսրոպ Կարսեցյանը, սեկեցիոներ Ռուզան Հալաբջանը, որոնք հանդես են գալիս որպես նոր բարոյականության կրողներ:

ՍՄԿՊ XIX համագումարը և գրական-նուրբան հարցերը

Սովետական գրականությունը՝ աշխարհի ամենաառաջավոր և ամենադադափարական գրականությունը նշանակալից դեր է կատարել սովետական մարդկանց կոմունիստական դաստիարակության գործում: Նա լեր է հանել սովետական ժողովրդի ձեռք բերած նվաճումների պատմական ամբողջ նշանակությունը սոցիալիստական ուղուցիայի, տնտեսական շինարարության և Հայրենական Մեծ պատերազմի էտապներում:

Կոմունիստական պարտիան մեծ նշանակություն է տալիս սովետական գրականությանը ժողովրդի դադափարական դաստիարակության գործում և շարունակ հետևել ու ուղղություն է տվել նրա զարգացմանը:

ՍՄԿՊ XIX համագումարը, որը տեղի ունեցավ 1952 թ. հոկտեմբերին, հատուկ ուշադրություն դարձրեց սովետական կուլտուրայի, այդ թվում նաև սովետական գրականության ու արվեստի հարցերին:

Համագումարի նախօրյակին լույս տեսած Ի. Վ. Ստալինի «Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» աշխատությունը, Գ. Մ. Մալենկովի հաշվետու զեկուցումը և Կենտկոմի այլ ղեկավար ընկերների ելույթները, բացառիկ մեծ նշանակություն ունեն սովետական ամբողջ հասարակության, այդ թվում նաև գրողների ու դրականագետների համար:

Այդ նյութերը օգնում են գրողներին ճանաչելու մեր սովետական կյանքը, տեսնելու մեր զարգացման հեռանկարները, ղեկավարվածորեն ցույց տալու սոցիալիզմից կոմունիզմին անցնելու այն պայմանները, որով հատկանշվում է մեր կյանքի տվյալ էտապը:

ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին հաշվետու զեկուցման մեջ ընկեր Գ. Մ. Մալենկովը հատուկ ուշադրություն դարձ-

րեց սովետական գրականության ու արվեստի հարցերին և նշեց նրանց Փեժ դերը սովետական ժողովրդին կոմունիստական ոգով դաստիարակելու գործում:

Ընկեր Մալենկովը նշեց, որ սովետական գրականությունը, չնայած իր ձևեր բերած մեծ հաջողություններին, դեռևս ունի լուրջ թերություններ. «շատ ստեղծագործությունների զաղափարական-զեղարվեստական մակարդակը դեռևս բավարար բարձրության վրա չի գտնվում: Գրականության և արվեստի մեջ դեռ երևան են դալիս միջակ, անգույն, խսկ երբեմն էլ պարզապես խալտուրային շատ ստեղծագործություններ, որոնք աղավաղում են սովետական իրականությունը: Սովետական հասարակության բազմակողմանի և եռուն կյանքը որոշ գրողների ու զեղարվեստագետների ստեղծագործության մեջ պատկերվում է դժգույն ու տաղտկալի»¹:

Այսպիսով, պարտիայի* XIX համագումարը պատասխանատու խնդիր դրեց մեր գրողների առաջ՝ բարձրացնել գրականության զաղափարական-զեղարվեստական մակարդակը:

Համագումարը խնդիր դրեց մեր գրողների առաջ, որ նրանք արտացոլեն իրականությունը ճշմարտապես, համարձակորեն ցույց տան հնի և նորի պայքարը, խարաղանեն հասարակության մեջ գոյություն ունեցող արատներն ու թերությունները, միաժամանակ զեղարվեստական կերպարներում բացահայտեն սովետական մարդկանց՝ նրանց մարդկային արժանապատվության ամբողջ վեհությունը:

Մեր գրողները իրենց զեղարվեստական երկերով օգնում են մեր հասարակության կյանքում նորը, լուսավորը աճեցնելու և խարխվածք արմատախիլ անելու մեծ գործին, մեր հասարակության մարդկանց մեջ կապիտալիզմի ծնունդ հանդիսացող խոցերից ու արատներից զերծ բնավորություններ, սովորություններ դաստիարակելու գործին:

Մեր գրողները նկարագրում են սովետական շարքային մարդու բարոյա-քաղաքական և հոգեկոր բարձր հատկանիշները, անձնվեր հայրենասիրությունը, որոնք փայլուն կերպով դրսևորվում են կոմունիզմի կառուցման համար մղվող պայքարի պրոցեսում:

Ռեալիստական արվեստի ուժն ու նշանակությունն այն է,— ասում է ընկեր Մալենկովը,— որ նա կարող է և պետք է երևան հանի

¹ Պ. Մ. Մալենկով, Հաշվետու զեկուցում պարտիայի XIX համագումարին, ՀամԿ(Բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, Հայպետհրատ, 1952:

ու բացահայտի շարքային մարդու հոգևոր բարձր հատկությունները և նրա բնավորության տիպական դրական գծերը, ստեղծի նրա գեղարվեստական վառ կերպարը, որը նմանվելու արժանի օրինակ աւ առարկա ծառայի մարդկանց համար»¹:

Պարտիան խորապես սխալ է համարում այն տեսակետը, թե սովետական գրականության ու արվեստի մեջ տեղ չեն կարող ունենալ գեղարվեստական ստեղծագործության այնպիսի տեսակներ, ինչպիսին երգիծանքն է: Պետք է սովետական գեղարվեստական գրականության մեջ, դրամատուրգիայում ու կինեմատոգրաֆիայում օգտագործվի երգիծանքը, որը կօգնի մեր հասարակության մեջ արտահայտվող հին կենցաղի ու սովորությունների մնացորդները քննադատելու ու վերացնելու գործին:

«Սխալ կլինի կարծել, — ասում է ընկեր Մալենկովը, — թե մեր սովետական իրականությունը նյութ չի նույնիսկ երգիծանքի համար: Մեզ հարկավոր են սովետական գողոններ ու շշեգրիներ, որոնք երգիծանքի կրակով կյանքից իսպառ այրեն այն ամենը, ինչ բացասական, նեխած, մահացած երևույթ է, այն ամենը, ինչ արգելակում է առաջընթացը»²:

Սովետական գրականության զարգացման համար սկզբունքային հսկայական նշանակություն ունի տիպականի մարքսիստական-լենինյան բնորոշումը, որ տվեց ընկեր Մալենկովը.

«Մեր նկարիչները, գրողները, արվեստի աշխատողները գեղարվեստական կերպարներ ստեղծելու իրենց ստեղծագործական աշխատանքում պետք է մշտապես հիշեն, որ տիպական է ոչ միայն այն, ինչ ամենից հաճախ է հանդիպում, այլև այն, ինչ առավելագույն լիակատարությամբ ու սրությամբ է արտահայտում տվյալ սոցիալական ուժի էությունը: Մարքսիստական-լենինյան հասկացողությամբ տիպականը ամենևին էլ չի նշանակում ինչ-որ վիճակագրական միջին: Տիպականությունը համապատասխանում է տվյալ սոցիալ-պատմական երևույթի էությանը, այլ ոչ թե պարզապես հանդիսանում է ամենից ավելի տարածված, հաճախ կրկնվող, սովորական երևույթ: Կերպարը գիտակցաբար չափազանցելը՝ սրելը, չի բացառում տիպականությունը, այլ ավելի լրիվ է բացահայտում և ընդգծում այն: Տիպականը ռեալիստական արվեստի մեջ պարտիականության դրսևոր-

¹ Գ. Մ. Մալենկով, Հաշվետու զեկուցում պարտիայի XIX համագումարին:

² Նույն տեղում:

ժան հիմնական ոլորտն է: Տիպականության պրոբլեմը միշտ էլ քաղաքական պրոբլեմ է»:

Մեր ժողովրդի կոմունիստական դաստիարակության բարձր ու պատվավոր խնդիրը պարտավորեցնում է մեր գրողներին է՛լ ավելի խորը ուսումնասիրել սովետական հասարակության կյանքը, որովհետև միայն կյանքի խորը ճանաչողությամբ կարելի է ստեղծել սովետական ժողովրդին արժանի գեղարվեստական խոշոր ստեղծագործություններ:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Ք Յ ՈՒՆ

Ներածութիւն. Սովետական դրականութեան հիմնական գծերը	3
Հակոբ Հակոբյան	28
Սովետական դրականութիւնը ժողովրդական տնտեսութեան վերականգնման և ինդուստրացման տարիներին (1920—1929)	58
Մովսէս Արագի	77
Եղիշե Զարենց	92
Սովետահայ դրականութիւնը առաջին հնդաժպտկներէ տարիներին . . .	122
Դերենիկ Դեմիրճյան	141
Ստեփան Զորյան	164
Սովետահայ դրականութիւնը հայրենական Մեծ պատերազմի տարիներին	184
Նաիրի Զարյան	215
Գեղամ Սարյան	251
Սովետահայ դրականութիւնը հետպատերազմյան շրջանում	271

Հրատարակչության խմբագիր

Էմ. ՊԻՎԱՆՅԱՆ

Տեխնիկական խմբագիր

Պ. ՍԱՐՈՅԱՆ

Կոնտրոլ սրբագրել

Ա. ԱՐՁԱՐԱՆՅԱՆ

ՎՖ 12440:

Պատվեր 767:

Տիրաժ 20.000:

Հանձնված է արտադրության 9/VII 1954 թ.:

Ստորագրված է տպագրության 17/IX 1954 թ.:

Թուղթ՝ 60×84¹/₁₆, տպագր. 19¹/₂ մամ., հրատ. 15,5 մամ.:

Խհխ Ձ 720 — հրատ. 1090:

Գինը 4 ռ. 90 կ.:

ՀՍՍՖ Կուլտուրայի մինիստրության Գլխահրատի Պոլիգրաֆիկոմբինատ,
Երևան, Տեղյան 91:

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
80	1 վեր.	հատակ	հատակ
267	7—8 վեր.	շնորհիվ դարձել է	շնորհիվ սովորական ժողովուրդն էր դարձել են
267	12 ներք.	անուշն	արյունն

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220031310

(199)

4.4.4. 4 0. 99 4.

A II
22.10

31810